

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ԱՆԻ



Ա. ԶԱՐԻԱՆԻ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**Ա Ն Ի**

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
1997

**ԴՏՀ 941(479.25)**

**ԳՄԴ 63.3(2Հ)**

**Մ 151 ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Կ. Ա.**

ԱՆԻ (Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը). -Էջմիածին,  
Մայր Աթոռ

Աշխատությունը նվիրված է միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Անիի պատմության մինչ այժմ շատ քիչ ուսումնասիրված բնագավառներին՝ հոգևոր եկեղեցական կյանքին և ձեռագրական ժառանգությանը: Այստեղ առաջին անգամ, ըստ ամենայնի, ներկայացվում է ԱՆԻԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ: Աշխատության առաջին մասում առանձին բաժիններ նվիրված են Հայոց կաթողիկոսության անիական շրջանին, Անիի եպիսկոպոսությանը, հոգևորականությանը, եկեղեցիներին, կրոնական փոքրամասնություններին, իսկ երկրորդ մասը ներկայացնում է Անիի հոգևոր մշակույթի կարևոր բնագավառներից մեկը՝ ձեռագրական ժառանգությանը, քաղաքի վանական գրչատներում ստեղծված ձեռագրերը, նրանց գրիչներին ու ծաղկողներին:

Գիրքը նախատեսված է Հայոց պատմությանը, միջնադարյան մշակույթով ու արվեստով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

© Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, 1997

## ՆԱԽԱԲԱՆ

*Բայց եւ զքեզ յայս հրաւիրեմ  
Արեւելեան քաղաքդ Անի...  
Մերձաւորաց յոյժ ցանկալի  
Յեռաւորաց՝ փափագելի:*

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմության մեջ Հայոց միջնադարյան մայրաքաղաք Անին մշակակալից դեր է կատարել որպէս կաթողիկոսական աթոռանիստ, եպիսկոպոսանիստ, հոգևոր-եկեղեցական կյանքի կենտրոն, ազգային-եկեղեցական ժողովների գումարման վայր: Անին հայ իրականության մեջ ամենից մեծաթիվ եկեղեցիներ ու առավել բազմաճյուղ հոգևորականություն ունեցած քաղաքն է եղել, իսկ նրա շրջակայքում ժամանակին բարգավաճել են Արգինայի, Հռոռնոսի, Բազմայրի, Արջո Առիճի, Խծկոնքի վանքերը՝ հանդիսանալով հոգևոր ու մշակութային առաջնակարգ կենտրոններ: Թե՛ քաղաքում և թե՛ նրա մերձակա վանքերում ծաղկել է հայ քրիստոնեական մշակույթը, գործել են դպրոցներ, ստեղծվել մատենագրական երկեր, ընդօրինակվել բազմապիսի ձեռագրեր: Հայոց եկեղեցու գերակշիռ համայնքի կողքին, ժԱ դարի կեսերից սկսած, քաղաքում երևան են եկել կրոնական փոքրամասնություններ: Ընդհանուր առմամբ, Անին ապրել է ինքնատիպ ու հետաքրքրական եկեղեցական կյանքով, սակայն նրա պատմության ուսումնասիրությամբ զբաղվողները, մինչև այժմ, սովորաբար այս հարցերին անդրադարձել են սոսկ հպանցիկ կերպով:

Պատճառներից մեկն այն է, որ Անիի պատմության գիտական ուսումնասիրության սկզբնավորումը համընկավ անցյալ դարի վերջերին քաղաքում Ն. Մառի ծավալած պեղումների հետ և պայմանավորված քաղաքի ճարտարապետական հուշարձանների ու պեղածո նյութերի առաջացրած մեծ հետաքրքրությամբ, սկզբից ի վեր ընթացավ նյութական մշակույթի ուսումնասիրության ճանապարհով:

Անիի քաղաքական և հասարակական-տնտեսական հարաբերությունների պատմությանը զուգընթաց, հետազոտվեցին քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, վիճագրությունը, արհեստագործությունը, հնագիտական նյութերը և այլն, ստեղծվեց անհագիտական պատկառելի գրականություն: Այս ամենի շնորհիվ Անին հայագիտությանը ներկայացավ իր ողջ հմայքով, որպես աշխարհական կյանքի բարգավաճման, առևտրական ընդարձակ կապերի, արհեստների ու արվեստների, ընդհանրապես միջնադարյան քաղաքային հախուռն կյանքի կենտրոն, և պատահական չէ, որ հետագա հետազոտողներն ավելի շատ ուշադրություն բևեռեցին հենց այդ խնդիրների վրա: Իսկ մշակութային ժառանգությանն անդրադարձողները հետամուտ եղան հատկապես Անիի մշակույթի ամենատարբեր ասպարեզներում ի հայտ եկած աշխարհիկ միտումների ուսումնասիրությանը: Չպետք է նաև մոռանալ, որ անցած 70 տարիներին անհագիտությունը հիմնականում զարգանում էր Խորհրդային Հայաստանում, ուր, թեկուզ միջնադարի վերաբերյալ, չէր խրախուսվում կրոնական, եկեղեցական պատմության հարցերի արծարծումը: Բնական է, որ այս խորքի վրա Անիի եկեղեցական կյանքի և հոգևոր մշակույթի խնդիրները մնացին ստվերում: Ասվածի լավագույն վկայությունն է 1980 և 1982 թթ. Թ. Հակոբյանի հրատարակած երկհատոր «Անիի պատմությունը», որտեղ ներկայացվում են Անիի քաղաքական պատմությունն ըստ առանձին պատմաչրջանների, Անիին վերաբերող մատենագիտական տեղեկությունները՝ սկսած հնագույն ժամանակներից, քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, արհեստները և այլն, բայց միևնույն ժամանակ, չենք կարող գտնել քաղաքի եկեղեցական կյանքի պատմությանը վերաբերող թեկուզ համառոտ մի հատված: Իսկ երկհատորյակի «Մշակույթ» բաժիններում Անիի հոգևոր մշակույթը զարմանալիորեն աղքատիկ է ներկայացված:

Անիի կաթողիկոսարանին, եպիսկոպոսարանին, եկեղեցական կյանքին, կրոնական փոքրամասնություններին ու հոգևոր մշակույթին վերաբերող հարցերը մեծ մասամբ անտեսված կամ թերի են ներկայացված քաղաքի պատմությանն անդրադարձած այլ հեղինակների մոտ ևս: Անգամ Անիի այնքան մեծ համարում ունեցող եպիսկոպոսների, նրանց հաջորդականության մասին

անհնար է որևէ հավաք տեղեկություն գտնել առկա ուսումնասիրությունների մեջ: Այս տեսանկյունից, թերևս միակ բացառությունն է Ղևոնդ Ալիշանը, որն իր «Շիրակ» (1881թ.) համապատումի մեջ, ըստ ժամանակին հայտնի ու իրեն մատչելի նյութերի, անդրադառնում է մեզ հետաքրքրող խնդիրներին: Սակայն այդ շրջանում Անին դեռևս անհրաժեշտ չափով չէր ուսումնասիրված, հրապարակված չէին բազմաթիվ սկզբնաղբյուրներ և վաստակաշատ հայագետին շատ բան անծանոթ էր, իսկ հետագայում, նրա որդեգրած ուսումնասիրության եղանակն այլևայլ պատճառներով զարգացում չունեցավ:

Եկեղեցական կյանքի պատմությունից բացի համակարգված ուսումնասիրության չի արժանացել նաև քաղաքի հոգևոր մշակույթը: Լավագույն դեպքում կարելի է գտնել Անիի մշակույթի այս կամ այն գործչին վերաբերող հոդվածներ: Դրանցից մեկում, որը նվիրված է Վարդան վարդապետ Անեցուն ու նրա բարձրարվեստներբողին, Աս. Մնացականյանը գրում է. «Ու՞ր են Անիի մանրանկարիչները, բանաստեղծները, գրիչները, մտավորականության այլ ներկայացուցիչները: Անշուշտ, նրանց մի զգալի մասի հիշատակն ու հետքը մոռացության է մատնվել ժամանակի ու օտար բռնակալների ավերածությունների պատճառով. բայց մի մասինն էլ պահպանվել ու հասել է մեզ՝ սպասելով ամբողջացման...» (Մնացականյան, 1971, 261): Ցավոք, նման համապարփակ ամբողջացումը դեռ հեռու է իրականություն լինելուց, բայց մեր ուսումնասիրությունը, կարծում ենք, մի քայլ է այդ ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ Անիի հոգևոր մշակույթի պատկերը չի կարող ամբողջական լինել առանց քաղաքի բուն եկեղեցական կյանքի պատմության հետազոտման: Բանն այն է, որ անեցի մշակութային գործիչները մեծ մասամբ հոգևորականներ, եկեղեցու սպասավորներ էին, իսկ միջնադարյան ուսումը, գիտությունը, մատենագրությունը, գրականությունն ու արվեստը զարգանում էին հենց եկեղեցու հովանու ներքո: Բնականաբար եկեղեցական կյանքի իրողություններն անմիջական ազդեցություն էին ունենում թե՛ հասարակական գիտակցության և թե՛ մշակույթի գրեթե բոլոր բնագավառների վրա:

Հարկ է նաև նշել, որ միջնադարում եկեղեցին ոչ միայն հոգևոր մշակույթի, այլև, իր ավանդապահության շնորհիվ, ընդհանրապես ազգային մշակույթի պահպանման պատվարն էր: Անին, գտնվելով


միջազգային առևտրական ուղիների հատույթում, նաև Արևելքի ու Արևմուտքի քաղաքակրթությունների խաչմերուկում, անխուսափելիորեն ամենատարբեր մշակութային ազդեցություններ էր կրում, որոնց հետքերն ավելի պարզորոշ երևում են նյութական մշակույթի հուշարձաններում: Այս առնչությամբ հետաքրքիր դիտարկում է կատարել Ն. Մառը, որը գրում է, թե Անիի եկեղեցական շրջանակներից դուրս այստեղ շատ դժվար է հայկական ոճի նյութական մշակույթի հուշարձաններ գտնել (Մառ, 1934, ծան. 165ա): Թեև հմուտ անիագետի բնութագրումն առաջին հայացքից կտրուկ է թվում, սակայն այն հիմնված է հնագիտական տվյալների վրա: Հիրավի, անեցիների օգտագործած կենցաղային առարկաները, տարազը և այլն, անգամ ԺԳ դարի աշխարհիկ շինությունները, ակնհայտորեն կրում են դրսի՝ հատկապես Արևելքի ազդեցությունը, մինչդեռ եկեղեցական սպասքը, եկեղեցական ճարտարապետությունը և ընդհանրապես ողջ **եկեղեցական մշակույթն** իր կանոնականության ու պահպանողականության շնորհիվ համեմատաբար ավելի փակ լինելով ամեն տեսակի նորամուծությունների առաջ՝ ինքնըստինքյան հանդիսանում էր ազգային ավանդույթների պահպանման գրավական: Եթե ասվածը ճշմարիտ է նյութական մշակույթի համար, ապա առավել ևս պատշաճում է հոգևոր մշակույթին, որը գրեթե ամբողջովին գտնվում էր եկեղեցու վերահսկողության տակ:

Ահա այս ամենը նկատի ունենալով՝ մենք ձեռնարկեցինք **Անիի եկեղեցական կյանքի պատմության** և հոգևոր մշակույթի սակավ ուսումնասիրված բնագավառներից մեկի՝ **ձեռագրական մշակույթի** ուսումնասիրման գործը: Ստորև նախ կներկայացնենք Հայոց կաթողիկոսական Աթոռի անիական շրջանի, ապա՝ Անիի եպիսկոպոսության պատմությունը, կժամոթանանք քաղաքի հոգևորականության և եկեղեցիների մասին պահպանված տեղեկություններին, կրոնական փոքրամասնություններին, Անիի գրչատներին ու դրանցում ստեղծված մատյաններին, քննության կառնենք Անիի եկեղեցական կյանքի ու հոգևոր մշակույթի առանձնահատկություններին վերաբերող զանազան հարցեր:

Ուսումնասիրության արդյունքում մենք առաջին անգամ կազմել ենք նաև Անիի եպիսկոպոսների գավազանագիրքը, քաղաքի և մերձակա վանքերի հոգևորականության անվանացանկը, Անիի եկեղեցիների ցուցակն ու քարտեզ-ուղեցույցը,

որոնք ևս կներկայացվեն համապատասխան տեղում: Սակայն, մինչ այդ, ուզում ենք մի համառոտ ակնարկով ցույց տալ Աճիի դերը միջնադարյան հայ իրականության մեջ, հատկապես, որպես համերկրային գլխավոր և սրբագործված հոգևոր կենտրոն, քանի որ հենց այդպիսին էին ուզում այն տեսնել ժամանակի աշխարհիկ ու կրոնական այն գործիչները, ովքեր Շիրակի հնամյա բերդավանը դարձրեցին Հայոց վերականգնված պետության մշտական արքայանիստ և Հայոց Եկեղեցու կաթողիկոսանիստ, այսինքն՝ թե՛ քաղաքական, թե՛ հոգևոր մայրաքաղաք:





0 5 10 կմ

# ԱՆԻՆ ՀՈԳԵՎՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

*«Տէր Աստուած, տուր զՔո խաղաղութիւնս  
ամէնայն աշխարհի...»*

Արձանագրութիւն Անիի պարսպի վրա

885 թ. Բագրատունիների գլխավորությամբ վերականգնված Հայոց անկախ պետության առաջին չորս թագավորները հաջորդաբար գահանիստ դարձրեցին Բագարանը, Երագավորսը (Շիրակավան), Կարսը: Այս անհաստատ կացութիւնը, որը հիմնականում պայմանավորված էր ժամանակի հողատիրոջ բնույթով<sup>1</sup> և պետական կառույցի տակավին անկատար լինելով, արմատապես փոխվեց 961թ., երբ Աշոտ Գ Ողորմածը (953-977) Կարսից փոխադրվեց Անի, այստեղ էլ թագադրվեց ու այն հռչակեց երկրի մշտական մայրաքաղաք: Աշոտը, որը հորից՝ Աբաս Բագրատունուց (928-953), գահը ժառանգել էր ավելի վաղ, մտահոգված էր անփոփոխ մայրաքաղաք ունենալու խնդրով, ուստի նախ փորձեց գրավել Հայոց նախկին մայրաքաղաք Դվինը, բայց ռազմական անհաջողութիւն կրելով՝ նոր որոշում կայացրեց՝ ընտրելով թագավորության կենտրոնական մասում գտնվող Անին: Հենց այստեղ էլ 961թ. Հայոց Անանիա Ա Մոկացի (946-968) կաթողիկոսի ձեռքով, մեծ հանդեսով, բազմաթիվ հյուրերի ու Հայոց ողջ բանակի ներկայությամբ տեղի է ունենում Աշոտի թագադրումը: Այս մասին մանրամասնորեն պատմում է Մատթեոս Ուռհայեցին<sup>2</sup>:

Աշոտ թագավորը ոչ միայն հեռատես քաղաքական գործիչ էր, այլև խորապես բարեպաշտ մի այր, որն իր բազմաթիվ բարեգործութիւնների ու գթասրտության համար դեռևս ժամանակակիցների կողմից **Ողորմած** մականունն էր ստացել: Վերջինիս ուշագրավ բնութագիր է տվել կաթողիկոս Անանիա Մոկացին, որը նրա իշխանության գալու մասին հետևյալն է գրում. «Եւ յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին (Աբասի - Կ. Մ.) որդի տէր Աշոտ

Հայոց իշխանաց իշխան, հանճարեղ և իմաստուն, այր գեղեցկատեսիլ, կրօնաւորասէր և ուղղադատ, ահարկու աւագակաց և չարագործաց, և **սիրիչ սրբոց, և թագ պարծանաց Սրբոյ Լուսաւորչի Աթոռոյս...**» (Մոկացի, 1897, 140, Այս և հաջորդ մեջբերումներուն կատարված բոլոր ընդգծումները մերն են՝ Կ. Մ.): Հատկանշական է նաև, որ մահից հետո Աշոտ Ողորմածի վարքը մուծվել է Հայսմավուրք և նա դասվել է Հայ Եկեղեցու սրբերի շարքը (նրանից հետո, որևէ հայ թագավոր նման պատվի չի արժանացել):

Այս շրջանում կաթողիկոսական Աթոռը գտնվում էր Անիից ոչ հեռու՝ Շիրակի Արգինա բնակավայրում<sup>3</sup>: Աշոտ Ողորմածի նպատակը Անին ոչ միայն թագավորանիստ, այլև կաթողիկոսանիստ դարձնելն էր և այդ ուղղությամբ նա որոշ քայլեր ձեռնարկեց: Սակայն Աշոտի ծրագիրն իրականություն դարձավ ավելի ուշ, նրա որդի Գագիկ Ա-ի (990-1020) ժամանակ, երբ 992թ. կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992-1019) Աթոռը փոխադրեց Անի: Այսպիսով, երկրի գահանիստ կենտրոնը դարձավ նաև **հոգևոր մայրաքաղաք**: (Միջնադարում «մայրաքաղաք» էին կոչվում ոչ միայն թագավորանիստ քաղաքները, այլև եպիսկոպոսանիստ նշանավոր վանքերը, իսկ «մայրաքաղաքացի» բառը սովորաբար օգտագործվում էր հենց մայրավանք-մայրաքաղաք կենտրոնների հոգևորականներին նշելու համար: Նոր բառգիրք, 1837, 202): Այսպիսով **Անին ստացավ այնպիսի դեր, ինչպիսին ունեին քրիստոնեական Հայաստանի առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատն ու Դվինը, որոնք և՛ թագավորանիստ, և՛ կաթողիկոսանիստ էին**:

Սակայն ժամանակի աշխարհիկ և հոգևոր իշխանության առաջին դեմքերը սոսկ Ս. Աթոռի փոխադրությամբ չբավարարվեցին: Անիում մեկը մյուսի ետևից վեր խոյացան հրաշագեղ եկեղեցիներ, որոնք և՛ ճարտարապետական ձևերով, և՛ հարդարանքի տարրերով անդրադարձն էին դասական շրջանի հայ ճարտարապետության (Զարյան, 1996, 137, Իզմայլովա, 1959, 80): Անգամ կատարվեցին անմիջական ընդօրինակություններ, մի բան, որը հատուկ չէ հայ ճարտարապետությանը: Գագիկ Ա-ի հիմնադրած Ս. Գրիգոր (Գագկաշեն) տաճարը է դարում կառուցված Ներսեսաշեն Ջվարթնոցի (Ս. Գրիգոր) կրկնօրինակությունն էր: Այս նասին շեշտում են անգամ մատենագիրները: Գագիկի

ժամանակակիցը՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, գրում է, որ թագավորն Անիի Ս. Գրիգորը կառուցել տվեց Վաղարշապատի Ս. Գրիգորի «**ՈՆՅՆԱԾԵԼ ԶԱՓՈՎ և յՅՐԻՆՈՒԼԱԾՈՎ**» (Ասողիկ, 1885, 282), Սամուել Անեցին էլ իր հերթին ավելացնում է, թե՛ «Սուրբ Գրիգորն ... ի յԱնի» Գագիկը շինել տվեց «**գաղափար առեալ** զլուսազարդ գիրաշալի Սուրբ Գրիգորն՝ զշինեալն ի Ներսիսէ հայրապետէ» (Անեցի, 1893, 104): Իսկ Անիի՝ հետագայում եպիսկոպոսանիստ դարձած Ս. Առաքելոց եկեղեցին, Թ. Թորամանյանի բնորոշմամբ, աննշան տարբերություններով կրկնում է Էջմիածնի Մայր տաճարի հատակագիծն ու համաչափությունները (Թորամանյան, 1942, 224):

Անիի Բագրատունի գահակալների առնչությամբ հարկ է ավելացնել, որ եկեղեցանպաստ բազմազան ձեռնարկումներից բացի, նրանք թե՛ հերալդիկայուն և թե՛ արքայական տարազում, մեծ տեղ էին հատկացնում քրիստոնեական գլխավոր խորհրդանշան խաչին: Քաղաքի պարսպի վրա պահպանված Բագրատունյաց հովազապատկեր զինանշանը (նկ. 1), որը նաև ժամանակի ողջ Հայոց պետականության խորհրդանշանն էր, պսակված է վերասլաց խաչապատկերով (որոշ ուսումնասիրողներ այն համարում են միայն Անիի զինանշանը): Այս բարձրարվեստ զինանշանին անդրադարձած հետազոտողներից ոմանք նրա ընդհանուր հորինվածքից հաճախ առանձնացրել են սոսկ կենդանու (առյուծ, կամ հովազ) քանդակապատկերը, մինչդեռ ակնհայտ է, որ վերնամասում գտնվող շեղադիր քառակուսիներից կազմված հավասարաթև խաչը զինանշանի անբաժանելի մասն է (Մաթևոսյան, 1994, 34-37): Կարելի է անգամ ենթադրել, որ **հովազն ու խաչը համապատասխանաբար խորհրդանշում են աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, որոնք երկուսն էլ կենտրոնացած էին Անի մայրաքաղաքում:** Պակաս հետաքրքրական չէ խաչի առկայությունը պեղումների շնորհիվ հայտնաբերված Գագիկ Ա թագավորի քանդակում (պատրաստված մոտ 1001թ.): Այստեղ արքայի ընդհանուր առմամբ անպաճույճ հանդերձանքի մեջ (հակադարձ համեմատական է Գագիկ Արծրունու աղթամարյան քանդակին), առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում նրա պարանոցից ցած իջնող կապից կախված բավական մեծ հավասարաթև խաչը, որը հասնում է մինչև գոտին (նկ. 2): Հայ միջնադարյան քանդա-

կազործության և մանրանկարչության մեջ պահպանվել են Հայոց այլ թագավորների բազմաթիվ պատկերներ, բայց նրանցից և ոչ մեկում արքան նման խաչ չունի:

Ժ դարի վերջերին, մինչ մայրաքաղաքում ավարտին էր մոտենում թագավորաշեն երկու հսկա եկեղեցիների՝ Մայր տաճարի (Մեծ կաթողիկե, Ս. Աստվածածին) և Գագկաշեն Ս. Գրիգորի կառուցումը, Սարգիս Սևանցի կաթողիկոսն Անիում ձեռնարկեց Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու հիմնումը: Բայց դա սովորական եկեղեցու կառուցում չէր. շինարարության ավարտից հետո կաթողիկոսը մեծ շուքով Վաղարշապատի վկայարաններից այստեղ փոխադրեց սուրբ կույսերի մասունքների մի մասը և Անիում հատուկ տոն հաստատեց: Վարդան Արևելցին այդ մասին գրում է. «**Տէր Սարգիս ... շինեաց վկայարան Սրբոց Հռիփսիմեանց առընթեր կաթողիկէին Անույ և փոխեաց անդ զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդեսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ**» (Վարդան, 1861, 123): Այս արժեքավոր վկայությունը ցույց է տալիս կաթողիկոսի՝ Անին ոչ միայն կաթողիկոսարանի ներկայությամբ հաստատված եկեղեցական կենտրոն տեսնելու, այլև Հայոց եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող համազգային **սրբավայր** դարձնելու ձգտումը: Փաստորեն, ինչպես որ Հայոց եկեղեցու բնօրրան Վաղարշապատում է Մայր տաճարը (Ս. Աստվածածին) գտնվում՝ Հռիփսիմեանց կույսերի վկայարանների հարևանությամբ, այնպես էլ կաթողիկոսն Անիի Մայր տաճարի (Ս. Աստվածածին) մոտ կառուցել է Հռիփսիմեանց կույսերի վկայարան, սրբերի մասունքները տեղափոխել այստեղ և «մեծ տոն» սահմանել «...**Վաղարշապատի Կաթողիկէին հին սովորութեան հետեւողութեամբ**» (Օրմանյան, 1959, 1178):

Անին իր վաղ շրջանի պատմության մեջ արդեն իսկ ուներ մի էջ՝ կապված Հայոց ազգային եկեղեցու հիմնադիր Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Թեև այդ մասին վկայող երկու սկզբնաղբյուրները ԺԳ դարից են, բայց վաղ պատմական կամ ավանդական հիմք ունեն: Անի քաղաքի հնագույն մասը միջնաբերդից հարավ՝ ժայռային հրվանդանի վրա կառուցված Ներքին բերդն է (հետագայում այն ըստ ժողովրդական ավանդության կոչվել է Աղջկաբերդ: Տես՝ Յուզբաշյան, 1971, 88-93, Կ. Ս., 1984ա, 112-113): Հնագիտական տվյալները հաստատում են, որ այն հնում մեհենա-

կան սրբավայր-ամրոց է եղել: Ինչպես տեղեկացնում է Վարդան Արևելցին, ժամանակին Գրիգոր Լուսավորիչը մկրտել է այս «հին ժամանակաւ շինեալ» Ներքին բերդի համառ իշխանին (Վարդան, 1861, 118): Բնական է, որ իշխանին մկրտելով՝ Լուսավորիչն, իր սովորության համաձայն, պետք է կործաներ տեղի հեթանոսական մեհյանը և խաչ կանգնեցներ, որն էլ հիմք էր դառնալու կառուցվելիք քրիստոնեական եկեղեցու համար: ԺԳ դարի սկզբներին Անիի տերը՝ Ջաքարե ամիրսպասալարը Ներքին բերդում կառուցում է մի եկեղեցի՝ իր և իր ընտանիքի անդամների հոգու փրկության համար և շինարարական արձանագրության մեջ նշում, որ այն հիմնել է. **«մերձ առ էկեղեցաւն շինեալ ի Լուսաւորչէն մերմէ Սրբոյն Գրիգորի...»** (Դիվան, Ա, 58): Այսպիսով, պատմիչի և վիճաբիր արձանագրության տեղեկությունները միմյանց լրացնելով վկայում են, որ իր քարոզչական շրջապայթյունների ընթացքում Գրիգոր Լուսավորիչը եղել է Անիում և այստեղ հիմնադրել Հայաստանի քրիստոնեական առաջին եկեղեցիներից մեկը: Ավանդություն է սա, թե՛ իրականություն՝ տվյալ դեպքում էական չէ, կարևորն այն է, որ անեցիների շրջանում այն կասկած չէր հարուցում:

Ինչպես տեսնում ենք, Սարգիս Սևանցու կողմից Հռիփսիմյանց կույսերի մասունքների փոխադրությունն Անի՝ գալիս է ամրապնդելու արդեն իսկ Գրիգոր Լուսավորչի գործունեությամբ իմաստավորված բնակավայրի դերը որպես համահայկական հոգևոր կենտրոն ու սրբավայր: Այս նույն միտումի խիստ հատկանշական զարգացմանը հանդիպում ենք Հայոց եկեղեցու խոշորագույն գործիչներից մեկի՝ կաթողիկոս Ներսես Շնորհալու մոտ: «Ողբ Եղեսիոյ» հայտնի ստեղծագործության մեջ փառաբանելով Անին՝ նա քաղաքի անվան եռատառ լինելը կապում է Սուրբ Երրորդության խորհրդի հետ.

«Արևելեան քաղաքդ Անի...

Գեղեցկանուն գարմանալի,

**Որ երրակի տառիւ բերի**

**յերրորդութեանն խորհրդի,**

Որ միշտ ի քէն երկրպագի...» (Շնորհալի, 1973, 37):

Տարբեր ժամանակ Անիում են պահվել եկեղեցու և ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցող բազմաթիվ սրբություններ:

Անիի հոգևոր դերի շեշտումը միայն Բագրատունյաց դարաշրջանին չէր բնորոշ: Այն շարունակվում էր անգամ սելջուկյան տիրապետության ժամանակ: Մասնավորապես հայտնի է, որ Մանուչեի ամիրայության և Բարսեղ Ա Անեցու աթոռակալության շրջանում՝ 1094 թ., Անի է բերվել Նունեի (Նինո, Վրաստանում քրիստոնեություն տարածած, սրբերի շարքը դասված կույս) հրաշագործ խաչը: Այն Հայաստան է տեղափոխվել դեռևս Սահակ Պարթևի ժամանակ, դարձել Մամիկոնյանների տոհմական սրբություններից մեկը, պահվել Կապույտ բերդում, ապա Վանանդում և ահա հանդիսավորապես բերվել է Անի, ուր սահմանվել է նրա տոնը. «Առ այսու ժամանակաւք **եմուտ սուրբ խաչն Նունեայ ի յԱնի...** և կանգնեցաւ նմա տօն կիրակէն, որ զկնի ութօրէիցն խաչավերաց տօն» (Վարդան, 1861, 147): Անիում է պահվել նաև «**Հագարափրկիչ**» կոչվող նշանավոր խաչը, որը հետագայում տարվել է Գեղարդ (Սմբատեանց, 1906, 78): Անիի վիմագրերից մեկում պատմվում է մեկ այլ նշանավոր խաչի գերեվարման, և ապա պատվախնդիր անեցիների կողմից այն թավրիզում փրկագնելու և քաղաք վերադարձնելու մասին (Դիվան, Ա, 52): Իսկ Յոռոմոսի վանքում բազմաթիվ այլ սրբությունների կողքին պահվել է **Գետարգել Ա. Նշան** կոչված հրաշագործ խաչը (Ալիշան, 1881, 28):

Անին կառուցողներն ու շենացնողներն այն կառուցապատել, հարդարել են որպես քրիստոնեական միջնաբերդ և պատահական չէ, որ անգամ նրա պաշտպանական շինարարությունների՝ պարիսպների բուրգերի մեջ ներսի կողմից մատուռներ կամ խորաններ են կառուցել: Ինչպես պատմիչն է վկայում և պեղումները հաստատում են այդ, դեռևս Աշոտ Ողորմածը պարսպաբուրգերի մեջ եկեղեցիներ է հիմնել. «**...գամենայն բրգունս եկեղեցիս յօրինեաց**» (Վարդան, 1863, 122): Իսկ Սմբատաշեն պարիսպները մատուռներից բացի արտաքինից ունեն տարբեր գույնի քարերից կամ սովորականից տարբերվող շարվածքով կազմված խոշոր խաչեր, տասնյակ խաչքարեր և խորհրդանշական այլ քանդակապատկերներ (նկ. 3-4): Դրանց մի մասն արվել է հենց Սմբատի ժամանակ, ինչպես երևում է Ստեփանոս Տարոնեցու վկայությունից (Ասողիկ, 1885, 187): Անիում պարսպի բուրգ կառուցելը համարվում էր աստվածաճո գործ, որի դիմաց կառուցողը հոգու փրկություն էր ակնկալում (Դիվան, Ա, 2, 5):

Հատկանշական է Սամուել Անեցու ժամանակագրությունն ընդօրինակող գրիչներից մեկի կատարած հավելումը, որը Անիի պաշարումն անօգուտ համարած ու հեռացած մահմեդական ասպատակիչի մասին հեղինակի խոսքն արտագրելուց հետո (Անեցի, 1893, 137) ավելացրել է՝ «և յետ սակաւ աւուրց դարձաւ յաշխարհի իւր, **ոչինչ կարացեալ ստանալ նմա, զի Տէր պահպանէր և ինքն հովանի Աջովն իւրով, որ օրհնեալ յաւիտեանս, ամէն**» (Ալիշան, 1881, 100): Իր հերթին բուն Անին էլ բառացիորեն ողողված էր եկեղեցիներով, որոնց բազմաթիվ վերասլաց, խաչազարդ գմբեթները ժամանակակիցների վրա շլացուցիչ տպավորություն են թողել: Եկեղեցիներ, մատուռներ և անգամ վանական համալիրներ կային նաև Անիի ձորերի քարայրներում, ինչպես և քաղաքային պարսպից դուրս գտնվող ընդարձակ արվարձաններում: Իսկ արվարձանների շուրջ մի մեծ «եռանկյունի» էին կազմում Հռոռնոսի, Բագնայրի և Արջո Առիճի վանքերը, որոնք սերտորեն կապված էին մայրաքաղաքի հետ, և ըստ որոշ ուսումնասիրողների՝ նրա հեռավոր արվարձաններն էին:

Անիի եկեղեցական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավել Հռոռնոսի վանքը: Բավական է նշել, որ մահից հետո այստեղ էին հողին հանձնվում Բագրատունի թագավորները, սկսած Աշոտ Ողորմածից մինչև Հովհաննես Սմբատ: Վերջինս վանքի Ս. Գևորգ եկեղեցու արձանագրության մեջ այն կոչում է՝ «...մեր **հանգստարանս թագաւորաց... տիեզերահռչակ վանս Հռոռնոսի**» (Սարգիսեան, 1864, 166): Իսկ հիշյալ եկեղեցին կառուցող Գագիկ Ա-ը նրա պատին թողել է մի ինքնատիպ արձանագրություն, որը բարեխոսություն հայցող մի ոգելից աղոթք է՝ ուղղված սուրբ Գևորգին<sup>4</sup>:

Հռոռնոսում է թաղվել նաև կաթողիկոս Սարգիս Սևանցին: Վանքը, որ գոյացել էր մինչև Անիի մայրաքաղաք դառնալը, հռչակված էր իր դպրոցով, գրչատնով, հոգևոր-բարեպաշտական ավանդներով: Քանի որ վանքը մշտապես թագավորների ուշադրության կենտրոնում էր, ապա միջնաբերդից՝ պալատից, քաղաքի Ավագ դռնով անցնող ու մինչև Հռոռնոս ձգվող ճանապարհը հաճախ էր վկա լինում արքունական շքեղ երթերի: Անի-Հռոռնոս ճանապարհին, որը Ա. Ջարյանը կոչում է «արարողությունների ու ծիսակատարությունների պողոտա» (Ջարյան,



1986, 125), վանքից ոչ հեռու, բարձունքի վրա պահպանվել է մի ինքնատիպ շինություն՝ զույգ եռահարկ աշտարակավոր կամար (նկ. 16): Այն գրականության մեջ կոչվել է տարբեր կերպ. հաղթականար, զանգակատուն, մուտքի կամար (օտար անվանմամբ՝ «դոշեր»), բայց նշանակությունը ճշտորեն չի որոշվել, որի հետևանքով երբեմն նրան առեղծվածային դեր է վերագրվել<sup>5</sup>: Նման կարծիքը պատահականորեն չի ծագել, որովհետև իրոք կառույցը մուտք է՝ առանց պատնեշի (կից պատեր չկան), նման է զանգակատան, բայց մոտերքում եկեղեցի չկա, հաղթականար լինելն էլ փաստական հիմնավորում չունի: Ա. Ջարյանը հուշարձանը համարում է «...աշխարհիկ Անին և հոգևոր կենտրոն Յոռոմոսը, այսինքն՝ երկու «քաղաքները» իրար հաղորդակից դարձնող դուռ» (Ջարյան, 1986, 125): 1211թ. նկարիչ Մարգարեն Սահակ Անեցու պատվերով քաղաքի Բեխենց վանքում պատկերագարդած «Չաղբատի Ավետարանի»՝ «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» մանրանկարում, որպես սուրբ քաղաքի մուտքի նախատիպ օգտագործել է հենց անհական հիշյալ հուշարձանը (նկ. 17): Յիրավի, նրա աշտարակը և մանրանկարում պատկերված աշտարակը հարկերի համաչափային համադրությամբ, ընդհանուր հորինվածքով, անգամ փոքր լուսամուտի ձևով միանգամայն նման են, և ակնհայտ է, որ անեցի արվեստագետը որպես Երուսաղեմի մուտք պատկերել է Անիի մուտքը: Այս կարծիքն ավելի է հիմնավորվում, երբ մանրանկարի բովանդակության ու կերպարների հանգամանալից քննությամբ տեսնում ենք, որ նկարիչը հանձինս Քրիստոսին դիմավորող Երուսաղեմցիների՝ պատկերել է ձեռագրի պատվիրատու Սահակ Անեցու ընտանիքի բոլոր անդամներին՝ բնորոշ քաղաքային տարազով (այս մասին հանգամանորեն կխոսվի ստորև՝ Բեխենց վանքի գրչատանը նվիրված բաժնում, տես Կ. Ս., 1982ա, 52-63):

Այսպիսով, անեցի նկարիչը «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ» ավետարանական հայտնի թեմային հաղորդել է «Քրիստոսի մուտքը Անի» ենթատեքստը: Ընդ որում, դա աստվածաշնչյան իրողությունների տեղայնացման՝ հայկականացման եզակի ու արտառոց դեպք է: Յիշենք, որ մեծն Գրիգոր Նարեկացին Չարության տաղում գրում էր, որ Աստվածության կառքը երկնքից երկիր է իջնում Մասիս լեռան աջ լանջով և նոր մտնում Երուսաղեմ.

«Սայլն այն իջաներ ի լեռնէն ի Մասեաց...

Ի Մասեաց յաջ կողմանէն...

Եւ ճռնչալով գայր մտաներ յերուսաղէմ» (ՉԴՔ, 1986, 161-162):

Ինչ վերաբերում է Յոռնոնու-Անի ճանապարհին կառուցված զույգ աշտարակավոր կամարին, ապա, վկայակոչված հանամանքները մեզ համոզում են, որ այն ունեցել է ոչ այնքան գործնական, որքան խորհրդաբանական նշանակություն:

Անին սրբազան քաղաք համարելու մի հատկանշական օրինակ է պահպանվել «Պատմութիւն քաղաքին յԱնուոյ» արժեքավոր բնագրում: Անանուն հեղինակը, խոսելով Վրաց թագավորի Անի արշավելու մասին, գրում է. «թագաւորի Վրաց... եկն... ի վերայ յԱնուոյ թագաւորաբնակ քաղաքին, նաև **աստուածաբնակ ասեմ և ոչ ամաչեմ**» (Մխիթար, 1983, 109): Հայ մատենագիրներն ու գրիչները «աստվածաբնակ» են կոչում միայն խոշոր վանքերը, նշանավոր սրբավայրերը, բայց ոչ երբևէ որևէ քաղաք, բացի Երուսաղէմից: Եվ ահա հիշյալ բնագրի հեղինակը նույնն է ասում Անիի մասին: Վերն արդեն տեսանք, որ Անին Հայոց ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր մայրաքաղաքն էր: Իր ամբարած բազում սրբությունների շնորհիվ այն նաև սրբազան քաղաքի խորհուրդ էր ստացել: Պատահական չէ, որ նրա ավերումն էլ համարվել է աստվածային պատժի արժանի գործ: 1364թ. Երևան գաղթած մի անեցի տեղի Կաթողիկէ եկեղեցու պատին թողել է իր բնույթով եզակի մի արձանագրություն. **«Աստուած զԱնու ավիրողն ավիրէ»** (Ղաֆադարյան, 1975, 141):

Հնարավոր է, որ «աստվածաշնչային» զուգահեռների ոլորտում պետք է որոնել Անիի անվան մասին Վարդան Արևելցու հայտնած վկայության բանալին՝ **«...զքաղաքն Անի, որ կոչի խնամք»** (Վարդան, 1861, 117-118, Այրիվանեցի, 1860, 56), որը մինչ այժմ համարվել է անբացատրելի (Ալիշան, 1881, 37, Հակոբյան, 1980, 22, Անի տեղանվան ստուգաբանության մասին տե՛ս Մուրադյան, 1992, 18-19): Խնամքը նաև «պահպանություն» և «հովանավորություն» է աստվածային նախախնամության կողմից, քանզի, ինչպես Ս. Գիրքն է վկայում՝ **«Որ յուսացեալ է ի Տէր, ընդ խնամով կեցցէ»** (Առակաց, ԻԸ, 25): Կարո՞ղ էր Անին կապ ունենալ «աստվածային խնամքի» հասկացության հետ: Իսկ ի՞նչ հոգևոր մայրաքաղաք, առանց աստվածային հովանավորության կամ որ նույնն է՝ **խնամքի**: ԺԳ դարի վերջերին երզնկացի գրասեր Ահարոն վարդապետը մահմեդականների հարձակումից «մազապուրծ եղեալ» հասնելով Անի, այստեղ գրած հիշատակարանում նշում է

թե «խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդեալ հասոյց զմեզ յԱնի քաղաքս» (ԺԳ, 672): Բանիմաց վարդապետն արդո՞ք նաև նկատի չուներ Վարդանի հայտնած բացատրությունը:

Այստեղ հարկ է նշել, որ Անիի հետագա տխուր ճակատագրի մեկնաբանությունը հայ միջնադարյան մատենագրության մեջ, նույնպես սովորաբար կապվել է աստվածային նախախնամության հետ և քաղաքի բազմակի ավերումները պատճառաբանվել են որպես քաղաքացիների կատարած մեղքերի դիմաց ստացված աստվածային պատիժ: Նման մոտեցման վաղ շրջանի առավել ցայտուն գաղափարակիրն Արիստակես Լաստիվերցին է, որն Անիի սելջուկյան զավթման ու ավերման մասին պատմելիս ավելի մեծ տեղ է հատկացնում բարոյախրատական դատողություններին, քան բուն պատմական անցքերին, ռազմական գործողությունների նկարագրությանը: Ընդ որում, Լաստիվերցին Անիի ճակատագրի զուգահեռները շարունակ որոնում է հենց Ս. Գրքում՝ սկսած Բաբելոնյան աշտարակաշինությունից մինչև Երիքովի կործանումն ու Երուսաղեմի ավերումը (Լաստիվերցի, 1963, 60-61, 133-136): Անիի թագավորության անկման, մայրաքաղաքից կաթողիկոսական Աթոռի հեռացման և հաջորդ վերահաս դժբախտությունների կապակցությամբ Լաստիվերցին հիշում է Երեմիա մարգարեի Ողբը և գրում՝ «այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ... հայրապետական Աթոռն ամայացեալ ի բնակողէն... **ժամ է ինձ յերեմիայի ողբոցն խառնել ընդ մեր հառաչանս.** «ճանապարհք Սիովնի, - ասէ, \_ սգան, զի ոչ ոք է, որ մտանէ» (Ողբ, Ա, 4): **«Այսօրիկ ասացան յայնժամ յաւերն Երուսաղեմի, բայց կատարեցաւ այժմ** (Անիում - Կ.Ս.)» (Լաստիվերցի, 1963, 61): Քաղաքի սելջուկյան ավերածության մասին գրելիս պատմիչը նշում է, որ ոչ մի ուժ ու ամրություն չի կարող դիմակայել Աստծո զայրույթին, «Զի Տէր է, որ շինէ և քակէ...», ապա զգուշացնում. «մի՛ սակաւ կամ փոքր համարել մեղս՝ որք ոչ զղջանան կամ ապաշխարեն» (Լաստիվերցի, 1963, 133-134): Տերն է, որ պարզևում է բարիքներ, իսկ մեղքերի դիմաց պատժում է (մնացած պատմությունն արդեն վկայակոչվում է, որպես ասվածի ապացույց): Հիմնականում նույնպիսի տեսակետով են Անիի պատմության ողբերգական էջերին անդրադառնում նաև Սամուել Անեցին, Մատթեոս Ուռհայեցին և ուրիշները, իսկ այդ միտումի առավելագույն զարգացումը գտնում ենք Աբրահամ Կրետացու

մոտ, որի՝ ժԸ դարի սկզբներին գրած «Պատմութիւն Անի քաղաքին» վերնագրված գործը, բառիս բուն իմաստով, կրոնաբարոյախոսական երկ է՝:

Բայց արդյո՞ք այստեղ հակասություն չկա. մի կողմից Անին սրբազան «աստվածապահ» քաղաք է, մյուս կողմից, նրա բնակիչներն իրենց մեղսասիրությամբ շարժում են Աստծո զայրույթը: Պատասխանը տալիս են մեր նույն մատենագիրները: Նրանք քաջ գիտեին, որ առաջին ու գլխավոր սրբազան քաղաքը Երուսաղեմն է, բայց այն ևս չխուսափեց Աստծո պատժից: Սամուել Անեցու դիպուկ գնահատմամբ՝ **«...ետես Արարիչն զհպարտութիւն մեր և հակառակ կալով կսկծեցոյց զմեզ, որպէս ի հնումն զԻսրայէլ, զի թէ յանդրանիկն ոչ խնայեց, զհա՞րդ ի կրտսերս խնայէր...»** (Անեցի, 1893, 110):

Այնուամենայնիվ, որքան էլ մարդկային մեղքերը պարսավելու գործում սկզբունքային էին հայ հոգևորականները, որոնց գրչին է պատկանում մեր միջնադարյան մատենագրությունը, նրանք անտարբեր չէին Անիի ճակատագրի նկատմամբ, ընդհակառակը, դառնորեն ողբում էին՝ հիշելով նրա նախկին փառքը: Անիի գրավումը սելջուկների, մոնղոլների ու այլոց կողմից, այլագգիներից կրած բազում տառապանքները, կործանիչ երկրաշարժերը, անեցիների աշխարհասփյուռ արտագաղթը և, վերջապես, այս ամենի հետևանքով երբեմնի չքնաղ քաղաքի անմարդաբնակ ու ավերակ դառնալը, այն հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ ամրագրեցին ոչ միայն որպէս պետականության ու անկախության խորհրդանիշ, այլև պարուրեցին տառապայալի ու մարտիրոսի լուսապսակով, և Անին, թեկուզ հաճախ ենթագիտակցորեն, համարվեց Հայոց ազգային գլխավոր սրբություններից մեկը:

Անիի գաղթականությունն ու նրանց սերունդներն ուր էլ որ գնացին (Հայաստանում՝ Ջուղա, Վան, Կիլիկիա, Հայաստանից դուրս՝ Վոլգայի ափերը, Ղրիմ, Լեհաստան և այլուր), իրենց հետ տարան գեղաշեն Անիի հուշը, նաև իրական հիշատակներ ու սրբություններ, անգամ մեծաբեկոր խաչքարեր (Փեշտմալջյան, 1987, 165, նկ. 283) և ամենուր իրենց ծննդավայրի ստեղծագործ ոգուն ու ավանդներին հավատարիմ մնացին: Իսկ Անին ինքը շարունակեց հայրենասիրական ոգևորության աղբյուր մնալ: 1722թ. տեղեկանալով Դավիթ Բեկի գլխավորած ապստամբու-

թյան մասին՝ 285 ղրիմահայ երիտասարդներ երկու արիասիրտ քահանաների՝ տեր Բարդուղիմեոսի և տեր Մարկոսի գլխավորությամբ շտապում են Սյունիք՝ իրենց ազգակիցներին օգնության: Նրանք, որ այս մասին պատմող բնագրում կոչվում են «**ղրիմաբնակ անեցի հայեր**», Տրապիզոնից Սյունիք մեկնելու ճանապարհին, անտեսելով բոլոր դժվարությունները, նախ այցելում են Անիի ավերակները, ազգասիրական իրենց երդումն այդտեղ տալու և կենաց մահու պատերազմից առաջ, ասես, սրբազան քաղաքի օրհնությունը ստանալու համար (Միքայելյան, 1964, 183-184): Խորհրդանշական է նաև, որ հայերին այնքան շատ հույսեր ներշնչած 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կստանդնուպոլսի Չայոց Ներսես Վարժապետյան խիզախ պատրիարքն իր պաշտոնական «պատրիարք օսմանյան Չայոց» կոչումից առաջ սկսել էր կրել «**արքեպիսկոպոս Անույ**» պատվանունը (Աղաբեգյան, 1878, 1), իսկ դրանից դեռ շուրջ մեկ դար առաջ Ռուսաց արքունիքին Չայաստանի ազատագրության ծրագիր ներկայացրած ռուսահայոց առաջնորդ Յովսեփ արքեպիսկոպոս Արղությանը որպես ինքնիշխան Չայաստանի մայրաքաղաք էր առաջարկում Վաղարշապատը կամ Անին (ՅԺՊ, 1972, 224-225):

Մեր դարասկզբին քաղաքի ավերակներն այցելած հայ բանաստեղծի բացականչությունը, թե՛ «**Անին ոգի է**» (Ավ. Իսահակյան), իր ժամանակի ողջ մտավորական սերնդի մտայնությունն է բնորոշում: Այսօր իսկ անհնար է գտնել ազգային ինքնագիտակցության տեր որևէ հայի, որին չհուզի երբեմնի ծաղկուն քաղաքամայր Անիի ճակատագիրը: Եվ դա լավագույնն ապացույցն է այն բանի, որ հոգևոր Անին հարատևում է մինչև այժմ ու այսուհետև էլ շարունակելու է անբաժան մնալ իր կորովի ժողովրդից՝ ոչ միայն որպես կարոտի կիզակետ, այլև ավանդական ու փառավոր «հոգևոր մայրաքաղաք»:

# ՄԱՍՆ Ա

## ԱՆԻ ԶՈԳԵՎՈՐ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

#### ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՆԻՆ

**Ա**մենայն Հայոց կաթողիկոսական Աթոռի պատմության ամիսական շրջանը թեև ժամանակագրական առումով շատ մեծ է, բայց նշանակալից է և հարուստ բազմապիսի իրադարձություններով:

Ինչպես վերը տեսանք, Անին մայրաքաղաք հռչակող Աշոտ Ողորմածի ժամանակ Հայոց կաթողիկոսարանը գտնվում էր Արգինա ավանում: Անանիա Մոկացու մահից հետո Շիրակավանում գումարված եկեղեցական ժողովում նոր կաթողիկոս ընտրվեց Վահան Ա Սյունեցին (968-969): Սակայն վերջինիս աթոռակալությունը շատ կարճ տևեց, քանի որ նա քաղկեդոնականների՝ մասնավորապես վրացիների հետ մերձեցման փորձեր կատարեց և հայ ավանդապահ հոգևորականությունը չհանդուրժեց այդ: Վահանի գործերը քննելու և նրան պարսավելու համար **969 թ. եկեղեցական ժողով գումարվեց նորահաստատ Անի մայրաքաղաքում:** Ժողովի հանգամանքների, արդյունքի, մասնակիցների մասին դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը գրում է. «Կաթողիկոս Վահանիկն... ընդ քաղկեդոնականսն սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ առնել թղթովք: Յորոյ վերայ ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի քաղաքն Անւոյ՝ Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս եւ հայր Պողիկարպոս առաջնորդ Կամրջաձորոյ եւ հայր Սարգիս՝ Զոռոմոսի վանաց վանական եւ հայր Ստեփանոս՝ Սեւանայ վանաց վանական եւ այլ եպիսկոպոսունք եւ հարք բազումք: Իսկ Վահանիկն փախստեայ անկանի ի Վասպուրական... Իսկ ժողովն

կամակցութեամբ Աշոտոյ Շահնշահի կաթողիկոս հաստատեաց Յայոց զՍտեփանոս վանական Սեւանայ» (Ասողիկ, 1885, 181):

Փաստորեն, **Ստեփանոս Գ Սևանցի (969-972)**, որը **ժողովականներից մեկն էր, կաթողիկոս է ընտրվել և ձեռնադրվել հենց Անիում**: Բայց նրա կարճատև աթոռակալությունն ամբողջովին անցել է Վասպուրականի Աբուսահլ թագավորի հովանավորությունը ստացած և տեղի Ձորավանքում հաստատված Վահան Սյունեցու դեմ մղված պայքարում: Վերջինս մտադիր չէր հրաժարվել կաթողիկոսությունից, որի պատճառով, փաստորեն, իշխում էին երկու կաթողիկոս՝ «Ստեփանոս՝ յԱնի եւ Վահան՝ ի Վասպուրական» (Օրբելյան, 1910, 290): Այս իրավիճակը Ստեփանոսին ստիպում է գումարել **Անիի երկրորդ եկեղեցական ժողովը**: Մ. Օրմանյանը գրում է. «Ստեփանոս փութաց երկրորդ ժողով մը գումարել կնճռոտ խնդիրը լուծելու համար, որ անշուշտ Անիի մէջ հաւաքուեցաւ, եւ որուն մասնակցեցան Արարատի եւ Սիւնիքի կողմերուն եպիսկոպոսներէն եւ վարդապետներէն զատ նաեւ բազմութիւն կրօնաւորաց ի Տարօնոյ, ի Յաշտենից, ի Ծոփաց եւ ի Խործենոյ (Ասողիկ), այսինքն է Տաճկաց եւ Յունաց ենթարկեալ գաւառներուն եպիսկոպոսները եւ վարդապետները, որոնք մրցակից հայ թագաւորներուն ենթակայ չ'ըլլալով իրաւախոհ հաշտարարի դերը պիտի վարէին: Ժողովին... իբր հետեւեանք կը ցուցուի բանակցութեան մը պէտքը, զայն անձամբ կատարել յանձն կառնու նոյնիսկ Ստեփանոս կաթողիկոս» (Օրմանյան, 1959, 1119-1120): Անիի երկրորդ եկեղեցական ժողովն, ըստ Մ. Օրմանյանի, տեղի է ունեցել 971թ., որից հետո Ստեփանոսը մեկնել է Վասպուրական: Նրա կարծիքով, այդ ընթացքում կաթողիկոսն գահակալել է Անիում, որը միանգամայն ընդունելի է:

Այս շրջանում Արգինան կաթողիկոսանիստ լինելու համար ավելի ընդարձակ հնարավորություններ չուներ քան Անին, իսկ Ստեփանոսը, որպես Աշոտ Ողորմածի հովանավորյալ, պետք է ավելի մոտ լիներ նրան: Այդ ժամանակ մայրաքաղաքում կար կաթողիկոսարանի համար համապատասխանող եկեղեցի: Ասողիկի պատմության ձեռագրերից մեկում Աշոտի հոր՝ Աբաս Բագրատունու գործունեությանը վերաբերող հատվածում հետևյալ լրացումն է արված՝ «սա շինէ եւ **զՓոքր Կաթողիկէն Անույ...**» (Ասողիկ, 1885, 172): Ինչպես ստորև կտեսնենք, Աշոտն ինքը, հավանորեն, հենց այդ եկեղեցուն էր թագավոր օծվել: Անիի՝

եկեղեցական ժողովների գումարման վայր լինելը և Ստեփանոս Օրբելյանի վկայությունը Ստեփանոսի երկու տարի Անիում գտնվելու մասին (Օրբելյան, 1910, 290) նույնպես հաստատում են, որ կաթողիկոսն աթոռակալում էր մայրաքաղաքում: Ճիշտ է, սույն դեպքերի գլխավոր աղբյուրը՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, շատ համառոտաբան է, մասնավորապես Անիի երկրորդ ժողովի մասին խոսում է հպանցիկ, սակայն բնական պետք է համարել, որ Տարոնի, Ծոփքի և այլ վայրերի երևելի հոգևորականները կաթողիկոսի մոտ են եկել, հավաքվել մայրաքաղաքում:

**Այսպիսով, կարելի է ասել, որ Աշոտ Ողորմածը կարողացավ մի կարճ ժամանակահատված (969-971) հասնել իր նպատակին՝ քաղաքական և հոգևոր իշխանությունը կենտրոնացնել Անիում, իրողություն, որը պատմագրության մեջ գրեթե անտեսվել է: Սակայն հետագա դեպքերը իրավիճակի որոշ փոփոխության հանգեցրին: Արծրունի թագավորն ու Վահան կաթողիկոսն, առանց իսկ ունկընդդեմելու բանակցության մեկնած Ստեփանոսին ու նրա երկու ուղեկիցներին, կալանեցին նրանց և արգելափակեցին Աղթամարում: Քիչ անց Ստեփանոսի հետ եկած երկու վարդապետներին ազատ արձակեցին, իսկ նրան փոխադրեցին այլ վայր, ուր և մեկ տարի անց մահացավ: Նույն 972թ. մահացավ նաև Վահան Սյունեցին:**

Դրանից հետո կաթողիկոս ձեռնադրվեց Անանիա Մոկացու քրոջ որդին՝ Արշարունիքի եպիսկոպոս Խաչիկ Ա-ը (973-992), որը մինչ այդ էլ նշանակալից դեր ուներ Անիի թագավորության մեջ: Ասողիկի բնորոշմամբ նա «միապետեալ խաղաղեցոյց զաշխարհ Յայոց» և որպես խոհեմ գործիչ, մեղմեց Բագրատունիների և Արծրունիների միջև առկա հակամարտությունը: Թվում է, որ հենց այս նպատակով նա չմնաց Անիում, այլ, Մոկացու օրինակով, հաստատվեց Արգինայում և «ուզեց հայրապետական աթոռին հաստատուն ձեւ մը տալ» (Օրմանյան, 1959, 1125): Ասողիկը հանգամանորեն է ներկայացնում նորընտիր կաթողիկոսի Արգինայում կատարած գործերը. «...զկնի Վահանայ եւ Ստեփանոսի եկաց կաթողիկոս Յայոց տէր Խաչիկ... եւ նորոգեաց զտուն կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ... եւ ի նմին գեօղ շինեաց զսուրբ Կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք... հանդերձ եւս երիւք եկեղեցեօք՝ նոյնաձեւ... յօրինուածովք, եւ զարդարեաց... ոսկէթել անկուա-



ծովք ի զարդ ոսկւոյ եւ արծաթոյ... այլ եւ զաստուածախօս կտակս յոլովակի ստացեալ, զԳիրս Սուրբս զառաքելասացս եւ զմարգարէաքարոզ պատգամս, հանդերձ ամենայն վարդապետացն ձայնիւք (Ասողիկ, 1885, 184-185): Ինչպես տեսնում ենք, Խաչիկ Արշարունու գործունեությունն Արգինայում ավելի շատ կաթողիկոսարանի հիմնադրությունն է հիշեցնում, քան թե պարզապես նորոգում: Այն միաժամանակ ենթադրել է տալիս, թե նրա նախորդները՝ Անանիա Մոկացին և հատկապես Ստեփանոսը, Արգինան չեն դիտել որպես հաստատուն նստավայր՝ համոզված լինելով, որ Աթոռը վաղ թե ուշ մայրաքաղաք է փոխադրվելու (մի բան, որ իրոք կատարվեց Արշարունուց հետո): Սակայն Խաչիկ Ան Արգինան շենացնելու և կայուն աթոռանիստ դարձնելու համար նվազագույնը երկու կարևոր պատճառ ուներ. առաջինը՝ վասպուրականցիներին հանդարտացնելու ցանկությունն էր, երկրորդը՝ կաթողիկոսությունը քաղաքական իշխանության ազդեցությունից հնարավորին չափ անկախ պահելու ձգտումը:

Մինչև կաթողիկոս ընտրվելը Խաչիկն արդեն իսկ մեծ հեղինակություն ուներ, իսկ աթոռակալության տարիներին հանդես է գալիս որպես խորագետ, ձեռներեց ու հեռատես գործիչ՝ մեծապես բարձրացնելով կաթողիկոսության վարկը թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում: Նրա օրոք ծաղկում է Արգինայի վարդապետարանը, որի բանիմաց սաների թվում կային նաև ազնվագարմ աշխարհականներ:

977 թ. Բագրատունյաց գահը ժառանգած Սմբատ Բ Տիեզերակալը (977-990) ընդարձակում է մայրաքաղաքի պարսպապատ մասը և սկսում Մայր տաճարի՝ Անիի Մեծ կաթողիկեի շինարարությունը. «Սմբատ... արկանէ հիմն եւ մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայ» (Ասողիկ, 1885, 187): Պարզ է, որ այդ արվում էր կաթողիկոսարանը վերջնականապես Անի փոխադրելու նպատակով: Սմբատը, սակայն, չտեսավ իր ձեռնարկի ավարտը: Մահացած արքային փոխարինեց նրա եղբայր Գագիկ Ա Բագրատունին (990-1020), որի կինը՝ Կատրամիդե թագուհին ստանձնեց Կաթողիկեի շինարարության հովանավորությունը (նկ. 5): Տաճարի կառուցումն ավարտվեց 1001թ. (սույն թվականի հարցում կան տարբեր կարծիքներ): Սակայն Խաչիկ Արշարունու հաջորդը՝ Սարգիս Ա

Սևանցին (992-1019) արդեն իր աթոռակալության սկզբում Արգինայից փոխադրվեց Անի՝ մայրաքաղաքը դարձնելով նաև կաթողիկոսական աթոռանիստ: Դրանով, փաստորեն, վերջնականապես իրագործվեց դեռևս Աշոտ Ողորմածի ժամանակ նախանշված ծրագիրը և քրիստոնեական Հայաստանի առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատի ու Դվինի օրինակով Անին ևս դարձավ կաթողիկոսանիստ:

### ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ. ԱՆԻԻ ԱԹՈՌԻ ԱՄՐԱՊԵՂՈՒՄԸ

Գագիկ Բագրատունին Սարգսին ճանաչում էր դեռ պատանեկան հասակից: Թագադրվելուց հետո նրան էր տվել Սևանի վանքի առաջնորդությունը, իսկ Խաչիկ Արշարունու մահից հետո առաջադրել էր կաթողիկոս: Ասողիկը գրում է. «Ձկնի տեառն Խաչկայ՝ Գագիկ արքայ Հայոց ժողով եպիսկոպոսաց արարեալ, որ յաշխարհէս Հայոց եւ որ ի Յունաց կողմանէն... եւ նստուցանեն զնա (Սարգսին - Կ. Մ.) յԱթոռ կաթողիկոսութեանն մեծաշուք պատուով... զի ոչ ինքն զկնի պատուոյն՝ այլ պատիւն զկնի ինքեան ընթացաւ» (Ասողիկ, 1885, 259-260):

Գագիկ Ա-ի տիրապետությունը համարվում է Անիի թագավորության առավելագույն վերելքի շրջանը: Նրա ժամանակ երկրի զորության և միասնության ապահովման գործում կարևորագույն դեր ուներ նաև Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Սարգիս Սևանցին թեև ըստ Ասողիկի «անապատասեր կենաց» սիրահար էր, բայց 27-ամյա աթոռակալության ընթացքում կարողացավ հմտորեն կազմակերպել Հայոց եկեղեցական կյանքը, կաթողիկոսարանի բազմաճյուղ գործունեությունը:

Աթոռի՝ Արգինայից Անի փոխադրության մասին Մ. Օրմանյանը գրում է. «Սարգսի... առաջին գործն եղաւ աթոռանիստ տեղւոյն փոխադրութիւնը: Ընտրողական ժողովը գումարուած էր Անիի մէջ... Սարգիս կրցած է ընտրութենէ եւ օծումէ ետքը այլևս Արգինա չդառնալ եւ մնալ Անի, Գագիկի մօտ» (Օրմանյան, 1959, 1162-1163): Սակայն, երբեմն Աթոռի փոխադրման ժամանակ է համարվում 1001 թվականը (Պետրոսյան, 1990, 113), երբ ավարտվեց Մայր տաճարի կառուցումը: Սկզբնաղբյուրներն այս հարցում որոշակի թվական չեն նշում: Գագիկ թագավորը շատ մեծ

նշանակություն էր տալիս կաթողիկոսությանը՝ այն համարելով առանձին թագավորությունների մասնատված երկրի համախմբման և Անիի գերակա դերի ընդգծման կարևոր միջոց: Ինչպես ստորև կտեսնենք, բազմաթիվ հարցերում թագավորն ու կաթողիկոսը հանդես են գալիս միասնաբար: Թագավորն իր բարեպաշտ վարքով ու կենցաղով առիթ չէր տալիս հոգևորականությանը պարսավելու իրեն (մի բան, որ արվում էր Սմբատի ժամանակ), կաթողիկոսն էլ սրբակյաց վարքով ու խոհեմ գործելակերպով նպաստում էր եկեղեցու զորացմանն ու Անիի թագավորության ավագության ամրապնդմանը: Նման պայմաններում, բնական է ենթադրել, որ Սարգիսը Անիում է հաստատվել օծումից անմիջապես հետո: Հիշենք Աբասի հիմնած Փոքր կաթողիկեի գոյությունը, որը Սարգսի ժամանակ կարող էր ծառայել իբրև կաթողիկոսարանի եկեղեցի, մինչ կավարտվեր Մայր տաճարի՝ Մեծ կաթողիկեի շինարարությունը: Այսպիսով, Մ. Օրմանյանի հայտնած տեսակետն ավելի տրամաբանական է թվում, և կարծում ենք **կաթողիկոսական Աթոռի՝ Արգինայից Անի տեղափոխման ժամանակը պետք է համարել 992թ<sup>7</sup>**: (Այս կարծիքին է նաև Ն. Գարսոյանը, տես Հայոց պատմություն, 1982, 229):

Սարգիս Սևանցին նպաստում է նաև երկրի ներքին տարածայնությունները հարթելուն: Հայտնի է, որ 1001թ. Գագիկի և Տաշիրի թագավոր Դավիթ Անհողինի ռազմական բախումը կանխվել է «միջնորդութեամբ հայրապետին՝ Տեառն Սարգսի» (Ասողիկ, 1885, 271) և Դավիթը հնազանդության է եկել: 1006թ. Կատրամիդե թագուհու հոր՝ Սյունիքի Վասակ թագավորի խնդրանքով և Գագիկ Ա-ի միջնորդությամբ Սարգիս Սևանցին Անիում Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Հովհաննեսին: Միաժամանակ Սյունիքի աթոռին են վերադարձվում Անանիա Մոկացու ժամանակ՝ Հակոբ եպիսկոպոսի խռովության պատճառով նրանից խլված մետրոպոլիտոսության պատիվն ու արտոնությունները, ինչպես և Անիի կաթողիկոսարանի «սրբարանի սենեակում» պահվող սրբությունները՝ «Սիւնեաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժէք գաւազանը եւ պատուական գահաւորակը» (Օրբելյան, 1910, 304): Կաթողիկոսի սույն ձեռնարկը մեծապես ամրացրեց Հայաստանյայց եկեղեցու ներքին միասնությունը: Հովհաննեսի ձեռնադրության կապակցությամբ Սարգիսը մի շրջաբերական է ուղարկում Սյունիք: Այն իր «Պատմության» մեջ ամբողջովին մեջ է

բերում Ստեփանոս Օրբելյանը (Օրբելյան, 1910, 308-311): ժամանակին կաթողիկոսական մատանիով կնքված և գեղեցիկ ոճով շարադրված այդ շրջաբերականը Անիի կաթողիկոսարանում ստեղծված պաշտոնական գրության մի եզակի ու արժեքավոր նմուշ է<sup>8</sup>:

Սարգիս Ա-ի աթոռակալության ժամանակ շարունակվում են բյուզանդական եկեղեցու հետ եղած դավանաբանական հակադրությունները, որոնց գագաթնակետը դարձավ 1007թ. ծռագատիկը: Իսկ երկրի ներսում գլուխ էր բարձրացրել թոնդրակեցիների աղանդը և կաթողիկոսն անհրաժեշտ ու անզիջում պայքար էր մղում նրանց դեմ: Ինչպես Լաստիվերցին է հաղորդում, Սարգիսը Անիի կաթողիկոսարան բերված, հայոց եկեղեցական կարգերն ու դավանությունն անտեսած և թոնդրակեցիներին հարած Հարքի Հակոբոս եպիսկոպոսին կարգալույծ անելով ու աղվեսադրոշմով պատժելով՝ «քարոզն առ նմին աղաղակէր, թէ՛ «Որ ի սրբոյ Լուսաւորչին հաւատոյ սողոսկեալ յանօրէն Թոնդրակեցեացն ի մարդադէմ գազանաց փարախն մտեալ միաբանի...» (Լաստիվերցի, 1963, 124):

Անիի կաթողիկոսարանում շարունակվել են Արգինայի հայրապետարանի գիտակրթական բարի ավանդույթները: Մասնավորապես, Աթոռի հետ միասին պետք է որ մայրաքաղաք փոխադրվեին նաև կաթողիկոսական դիվանը, հարուստ գրադարանը և հոգևոր դպրոցը՝ վարդապետարանը<sup>9</sup>, մանավանդ, որ այդ շրջանում ևս Հայոց եկեղեցին կարիքն ուներ բանիմաց վարդապետների և ուսուցիչների: Արիստակես Լաստիվերցին նշում է Սարգիս Ա-ի ժամանակ Անիի կաթողիկոսարանում գտնվող երեք նշանավոր վարդապետներին՝ գրելով. **«Եւ էին յայն ժամանակի վարդապետք՝ Սարգիս եւ Տիրանուն եւ Յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք»**, այնուհետև նշում է ևս մի քանիսին (Սամուել Կամրջաձորեցի, Ստեփանոս Տարոնեցի և այլք) ու ավելացնում՝ «յորոց աւուրս բարձրանայր յոյժ եղջիր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ» (Լաստիվերցի, 1963, 126):

Ինքը՝ Սարգիսը, որպես անաղարտ վարքի տեր հոգևորական, լավագույն օրինակ էր իրեն շրջապատողների համար, քանզի կաթողիկոս օծվելուց ի վեր «ոչ փոխեաց զվարս իւր...» (Ասողիկ, 1885, 260): Դրա հետ մեկտեղ կաթողիկոսը զբաղվում էր հիմնարար

խնդիրներով: Հայտնի է, որ նրա օրոք և հավանորեն նրա ցուցումով համակարգվել ու «ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու մղումով» դասակարգվել են Հայոց եկեղեցական իրավունքի և ընդհանրապես հոգևոր-եկեղեցական կյանքը կարգավորող գլխավոր վավերագրի՝ Հայոց Կանոնագրքի (Կանոնագիրք Հայոց) նյութերը՝ 40 կանոնախմբերով, իսկ նրանց վերջում ավելացվել է Հայոց կաթողիկոսների գավազանագիրքը (անվանացանկը), որի վերջին նշումը վերաբերում է հենց Սևանցու ձեռնադրությանը (Կանոնագիրք, 1971, XXIII-XXV): Սարգիս կաթողիկոսի պատվերով է իր «Տիեզերական պատմությունը» շարադրել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, որը կաթողիկոսարանի սպասավորներից մեկն էր՝ բանիբուն վարդապետ, որ զբաղվում էր նաև եկեղեցու բազմապիսի գործերով: Այդ երևում է նրա պատմագրքի հիշատակարանից, ուր հեղինակը դիմելով պատվիրատու կաթողիկոսին՝ գրում է. «...յարածուխի շրջանք եւ **հանապազորդեան հոգք եկեղեցւոյ, որ ըստ հրամանի Չեր,** ոչ թողացուցանէին մտաց իմոց զետեղել ի պատշաճ յօրինուած բանիս» (Ասողիկ, 1885, 285):

Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ «երկոտասան եպիսկոպոսք եւ չորս վարդապետք ի տան հայրապետին անպակաս լինէր եւ վաթսուն երեց կրօնաւորաց...» (Ուռհայեցի, 1869, 184): Անի քաղաքի պեղումների ժամանակ հետազոտողները կաթողիկոսարանի ավերակները չեն հայտնաբերել, թեև իրավացիորեն ենթադրվել է, որ այն պետք է Մայր տաճարի մոտակայքում գտնվելիս լիներ<sup>10</sup>: Բուն Մայր տաճարը, որը, համաձայն շինարարական արձանագրության, կառուցվել է «ի ՆԾ (1001) թուին Հայոց ... ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Սարգսի Հայոց կաթաղիկոսի», վերջինիս ձեռքով էլ օծվել է: Կատրամիդեի սույն արձանագրության երկրորդ մասում կաթողիկոսը պարտավորեցնում է եկեղեցու սպասավորներին համապատասխան պատարագներ մատուցել բարերար թագուհու համար. «հրամանալ են ես տէր Սարգիս սպասաւորաց եկեղէցոյս, յետ էլից բարեպաշտ թագուհոյս զՎարդավարին յիսնեակսն միով քառասնիւ կատարել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի» (Դիվան, Ա, 35):

Սարգիս Սևանցու՝ Անիում կատարած շինարարական գործերից մեկի մասին է վկայում պատմիչ Վարդան Արևելցին:



Պետրոս Ա Գետադարձը (1019-1058): Գրիգոր Լուսավորչի օրոք կաթողիկոս ձեռնադրված նրա որդի Արիստակեսից հետո, այս երկրորդ դեպքն էր, երբ կաթողիկոսի կենդանության ժամանակ նրա համաձայնությամբ ձեռնադրվում էր իր հաջորդը: Հնարավոր է, որ կաթողիկոսարանի գործունեության ոլորտն այդ շրջանում այնքան էր ընդարձակվել, որ անհրաժեշտ էր մշտապես գործուն, եռանդուն հայրապետ ունենալ: Ինչևէ, Սարգիսը դրանից հետո տեղափոխվում է Անիի մերձակա Հռոռնոսի վանք, ապրում ևս երեք տարի և 1022թ. մահանում ու թաղվում այդտեղ. «Ի սոյն ժամանակս փոխի յաշխարհէ սուրբ եւ արժանաւոր հայրապետն տեր Սարգիս, եւ է գերեզման նորա ի Հռոռնոսի վանքն» (Լաստիվերցի, 1963, 32):

Սարգիս Սևանցու գործունեությունը համընկնում է Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի շրջանին և այս առումով Անիի Աթոռի պատմությունը լրացնում ու հարստացնում է այդ պատմաշրջանի իրական պատկերը: Ցավոք, խորհրդահայ պատմագրության մեջ այս իրողությունն իսպառ անտեսվել է: Բավական է վկայակոչել հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատորյակը, ուր տեղ գտած «Բագրատունյաց թագավորության հետագա զորեղացումը» ենթաբաժնում (որը նվիրված է Գագիկ Ա-ի կառավարման շրջանին՝ 990-1020թթ.) ոչ մի խոսք չի ասվում կաթողիկոսական Աթոռի մասին, Սարգիս Սևանցու անունն իսկ չկա, որի հետևանքով թերի է ներկայացվում երկրի պատմությունը: Ըստ հեղինակների՝ «տեղեկությունները Գագիկի թագավորության վերջին ժամանակաշրջանի մասին սակավ են և վերաբերում են առավելապես առաջին 10-13 տարիներին»: Կաթողիկոսարանի գործունեությունն անտեսելով՝ նրանք, ականա հանգում են այն մտքին, թե Գագիկ Ա-ի թագավորության վերջին շրջանը «համարյա մնում է մթության մեջ» (ՀԺՊ, 1976, 134-140): Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, Գագիկ թագավորն ու Սարգիս կաթողիկոսը, որպես համախոհներ, շատ դեպքերում միասնաբար են գործել: Եվ այն, ինչ վերաբերում է կաթողիկոսի ու կաթողիկոսարանի գործունեությանը, ուղղակիորեն առնչվում է Բագրատունյաց պետության պատմությանը: Այս տեսակետից պետք է ասել, որ Գագիկ Ա-ի տիրապետության վերջին շրջանը ոչ միայն «մթության մեջ» չէ, այլև բնորոշվում է երկրի համընդհանուր վերելքով,

եկեղեցական ու մշակութային կյանքի ծաղկմամբ: Իսկ կաթողիկոսն իր ձեռնարկներն իրականացնելիս (օրինակ, 1006թ. Սյունյաց մետրոպոլիտությունը վերականգնելիս) ելնում էր նաև Բագրատունյաց պետության և հենց Գագիկ Ա-ի շահերից:

## ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ. ԱՆԻԻ ԱԹՈՌԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

Պետրոս Գետադարծի ձեռնադրության հանդեսի մասին ժամանակով ավելի մոտ պատմիչները լռում են, միայն Վարդան Արևելցին (ԺԳդ.) գրում է, որ նրան «տէր Սարգիս ի կենդանութեան իւրում օծեալ էր իւրով ձեռօք յԱնի, մեծ հանդիսիւ» (Վարդան, 1861, 126): Դրանից մեկ տարի անց՝ 1020թ. մահանում է Գագիկ Ա Բագրատունին և սկիզբ է առնում Հայոց պետության ճգնաժամը, որը քառորդ դար հետո ավարտվում է թագավորության անկումով: Պատմական այս բախտորոշ ժամանակաշրջանում հայրապետական Աթոռը զբաղեցնող Պետրոս կաթողիկոսը, ցավոք, չի կարողանում պահպանել եկեղեցու ու ժողովրդի միասնականությունը, տարվում է քաղաքական հարցերով և ի վերջո ինքն էլ դառնում այդ գործելակերպի զոհը:

Պետրոս Գետադարծի գործունեության մասին հանգամանորեն խոսել, նշանակում է մանրամասնորեն անդրադառնալ Բագրատունյաց թագավորության վերջին շրջանի ողջ պատմությանը, մի բան, որ դուրս է մեր նպատակից: Հետևաբար, նախ համառոտ կերպով կթվարկենք կաթողիկոսի մասնակցությամբ կատարված դեպքերը, ապա կանդրադառնանք կաթողիկոսարանի գործունեությանը, եկեղեցական կյանքի իրավիճակին:

Գագիկ Ա-ի մահից հետո գահը ժառանգած Հովհաննես Սմբատի (1020-1041) և նրա կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև գահակալական եղբայրասպան կռիվներ են տեղի ունենում, որոնք ավարտվում են 1021թ. վերջերին՝ կաթողիկոսի և իշխանների միջնորդությամբ, բայց հանգեցնում են երկրի նոր մասնատմանը՝ «Հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ զԱշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն Տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն Անի» (Ուռհայեցի, 1991, 14):



1022 թ. հունվարի 6-ին աստվածահայտնության տոնի օրը Պետրոս կաթողիկոսը Տրապիզոնում Վասիլ Բ կայսեր ներկայությամբ կատարում է ջրօրհնեքի ծեսը, որի հանդիսավորության չափազանցված արձագանքները հետագայում ծնունդ են տալիս կաթողիկոսի «Գետադարձ» մականվանը (Օրմանյան, 1959, 1203): Ջրօրհնեքի ծեսը կատարող հայ հոգևորականները կաթողիկոսի գլխավորությամբ կանգնած էին գետի հոսանքի վերին մասում, իսկ հույն հոգևորականները՝ ստորին, որպեսզի, ըստ կազմակերպիչների մտահղացման, վերստին օրհնեն հայերի օրհնած ջուրը: Այս է պատճառը, որ դրանից քիչ անց, հույների հետ բորբոքված դավանաբանական վեճերի ու անթաքույց թշնամության մթնոլորտում ծնունդ առավ այն ավանդությունը, թե Պետրոսի կատարած ջրօրհնեքից հետո գետի հոսանքը կանգ է առել (Բաղդասար Դպիրի ժամանակագրության մեջ Պետրոսը կոչվում է «Պետրոս Գետարգել» (Հակոբյան, 1954, 342), ապա ետ դարձել, այստեղից էլ՝ «Գետադարձ»:

Այս նույն հանդիպման ժամանակ կաթողիկոսը Վասիլ կայսրին է հանձնում Հովհաննես Սմբատի չարաբաստիկ կտակը՝ «քանզի Յովհաննես պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ գրէ գիր եւ տուր կտակ թագաւորին (Վասիլ) զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս եւ զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն» (Լաստիվերցի, 1963, 32): Պետրոսը Տրապիզոն էր ուղարկվել հենց այս նպատակով, քանզի, ինչպես Հակոբ Սամահնեցին է վկայում՝ «ի թուականութեանս Հայոց ՆՅ (1021) ելանէր Վասիլ թագաւորն յԱրեւելս անթիւ բազմութեամբ զաւրօք խուժադուժ ազգաւ եւ խնդրեաց զԱնի եւ զամենայն Տունն Շիրակայ ի Յոհանիսէ՝ որդւոյ Գագկայ: Իսկ նա յաղագս թուլութեան եւ տկարութեան մարմնոյ խոստացաւ տալ զԱնի ի Հռոմնս զկնի մահուան իւրոյ» (Խաչիկյան, 1971, 40): Թուլական գահակալի այս քայլի պատճառն այն էր, որ նա մինչ այդ աջակցել էր կայսեր դեմ ընդվզած Վրաց թագավորին և վախենում էր հույների վրեժխնդրությունից: Այս մասին որոշակիորեն վկայում է Հովհաննես Սկիլիցեսը (Սկիլիցես, 1979, 146-147): Դրանից հետո կաթողիկոսն անմիջապես Անի չի վերադառնում, այլ կայսեր ցուցումով տեղափոխվում է Սեբաստիա: Ենթադրվում է, որ Վասիլի մահից հետո՝ 1026-ին նոր միայն Պետրոսը վերադառնում է մայրաքաղաք, ուր նրան այնքան էլ ջերմորեն չեն ընդունում:

1033թ. տեղի է ունենում արևի խավարում, որով նշանավորվում է Քրիստոսի խաչելության հազարամյակը, և որը մեծ ազդեցություն է ունենում ժամանակակիցների վրա: Թագավորն ու կաթողիկոսը Անիից հատուկ պատվիրակություն են ուղարկում Յովհաննես Կոզեռն վարդապետի մոտ՝ կատարվածի մեկնաբանությունն իմանալու համար: Վերջինս կանխատեսում է մոտալուտ բազում դժբախտություններ, որպես հետևանք բարքերի հանընդհանուր անկման ու անբարեպաշտության՝ քննադատելով անգամ եկեղեցու առաջնորդներին («Եւ ասիայսմ հետէ բազում հերձուած մտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծուլութենէ հայրապետաց, վասն զի թուլամորթին եւ տկարանան եւ հաւատոյ քննութիւն ոչ առնեն եւ կան յիմարեալք: Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն եւ պակասին օրհներգութիւնք ի տանէն Աստուծոյ» (Ուռհայեցի, 1869, 79): Դրանից հետո, նույն թվականին, Պետրոսը ծածուկ կերպով թողնում է Անիի իր Աթոռը և տեղափոխվում կայսրության տիրապետության տակ անցած Վասպուրականի Ջորավանք՝ այստեղ մնալով շուրջ չորս տարի: Թագավորն ու ավագանին վերադարձի պահանջով բազմիցս դիմում են նրան, բայց ապարդյուն: Միայն 1036թ., Վասպուրականի բյուզանդական կուսակալի միջամտությամբ, Պետրոսը վերադառնում է Անի, բայց քաղաք գալուց հետո, կարճ ժամանակ անց<sup>11</sup>, թագավորի հրամանով ձերբակալվում, ուղարկվում է Բջնի: Նույն տարվա վերջերին մայրաքաղաքում գումարվում է **եկեղեցական ժողով**, որը Պետրոսին համարում է աթոռանկ և կաթողիկոս է ձեռնադրում Սանահինի վանքի առաջնորդ Դեոսկորոսին: Այս որոշման կայացման համար Պետրոսի դեմ արված մեղադրանքները պետք է որ զորավոր եղած լինեն (թեև ստույգ հայտնի չէ, թե որոնք էին այդ մեղադրանքները), բայց վճռորոշ էր նաև Յովհաննես Սմբատի դիրքորոշումը, որը գժտված լինելով կաթողիկոսի հետ, փորձեց նման ձևով հաշվեհարդար տեսնել: Սակայն հայ ավանդապահ հոգևորականությունը չհանդուրժեց աշխարհիկ իշխանության նմանօրինակ միջամտությունը եկեղեցու գործերին և ընթոստացավ Անիում կայացված որոշման դեմ, ինչպես պատմիչն է գրում՝ «եպիսկոպոսքն եւ վարդապետքն Յայոց աշխարհին՝ նզովիւք փակեցին զթագաւորն եւ զամենայն նախարարսն Յայոց՝ վասն հակառակութեանն, որ եղել ի մէջ եկեղեցւոյ» (Ուռհայեցի,

1869, 88-89): Նման պայմաններում արքունիքը ստիպված է լինում տեղի տալ: Մեկ տարի և երկու ամիս աթոռակալելուց հետո Պետրոսը աթոռանկ է արվում, վերադարձվում Սանահին<sup>12</sup> և կաթողիկոսական Աթոռին 1038թ. վերջերին վերականգնվում է Պետրոս Գետադարձը: Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ Պետրոսին վերահաստատելու, նրա և արքունիքի գծադրությունը հարթելու համար Անի է հրավիրվում Աղվանքի Յովսեփ կաթողիկոսը, գումարվում է պատկառելի ժողով. «ի թուականութանս Հայոց ՆՁԷ (1038) լինէր մեծ ժողով ի քաղաքն յԱնի եպիսկոպոսաց, կրօնաւորաց եւ վարդապետաց, ազատաց եւ իշխանաց՝ իբրեւ չորս հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յովսեփ՝ կաթողիկոսն Աղուանից» (Ուռհայեցի, 1991, 87):

1041 թ. մեկը մյուսի ետևից մահանում են անհաշտ եղբայրները՝ Աշոտն ու Յովհաննես Սմբատը, և երկրում տիրում է անհաստատ կացություն, քանի որ թագավորն անզավակ էր: Որոշ քաղաքական պայքարից հետո 1043թ. Անիում Բագրատունյաց գահին է նստում Աշոտի երիտասարդ որդին՝ Գագիկ Բ-ը (1043-1045): Օժումը մեծ հանդեսով կատարվում է Մայր տաճարում, Պետրոս կաթողիկոսի ձեռքով: Սակայն երկու տարի անց Գագիկը խաբեությանը կանչվում է Կոստանդնուպոլիս և այլևս չի վերադառնում: Բյուզանդացիները հասնում են իրենց տևականորեն հետապնդած նպատակին. զավթում են Հայոց մայրաքաղաք Անին՝ այդ արարքը ձևականորեն հիմնավորելով Յովհաննես Սմբատի կտակով: Թագավորության անկումից հետո հույները կատարում են զավթողական հաջորդ քայլը՝ 1046թ. Անիից հեռացնում են Հայոց կաթողիկոսին և իրենց հետագա տիրապետության ընթացքում երբեք թույլ չեն տալիս նրա վերադարձը նախկին մայրաքաղաք, փաստորեն, լուծարում Անիի կաթողիկոսարանը:

Այժմ տեսնենք, թե իրենից ինչ էր ներկայացնում Անիի Աթոռը Պետրոսի ժամանակ: Նախ նշենք, որ այս կաթողիկոսը շուրջ քառասնամյա աթոռակալության ընթացքում (1019-1058) Անիում է եղել ընդամենը 19 տարի (1019-22, 1026-33, 1036, 1038-46թթ.): Սակայն Անիի կաթողիկոսարանը գործունեության ընդարձակ ոլորտ և մեծ հնարավորություն ունեցող հաստատություն էր, որը գործում էր նաև կաթողիկոսի ժամանակավոր բացակայության շրջանում: Մատթեոս Ուռհայեցին, որի համար Անիի շրջանի

պատմության կարևոր սկզբնաղբյուր է ծառայել Հակոբ Սանահնեցի պատմիչի (մահացել է 1085թ.) մեզ չհասած երկը, հավանաբար հենց վերջինից օգտվելով հետևյալ կերպ է ներկայացնում Հայոց կաթողիկոսությունը Պետրոսի ժամանակ. «Յորժամ էր տէր Պետրոս յԱթոռ հայրապետութեանն եւ ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց տուեալ ի թագաւորացն Հայոց հինգ հարիւր գեղ անուանի եւ մեծանիք... նոյնպէս եւ եպիսկոպոսք հինգ հարիւր փառաւորք եւ գաւառատեսուչս ի վերայ հինգ հարիւր թեմի հանապազ. երկոտասան եպիսկոպոսք եւ չորս վարդապետք ի տան հայրապետին անպակաս լինէր եւ վաթսուն երէց ի կրօնաւորաց եւ յաշխարհականաց՝ հինգ հարիւր. եւ չէր նուաստ Աթոռ հայրապետութեանն, քան զթագաւորութեանն Հայոց: Նաեւ զարդարանք եկեղեցեացն եւ տան հայրապետութեանն բազում եւ անհամար եւ հրաշալի մեծութեամբ լցեալ, զոր յառաջին թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն, որ գայր հասանէր մինչեւ ի տէր Պետրոսն...» (Ուռհայեցի, 1869, 184-185):

Ուսումնասիրողներն այս նկարագրության մեջ չափազանցություն են տեսնում, մանավանդ հինգ հարյուր գյուղի ու թեմերի հարցում, սակայն, եթե անգամ կա չափազանցություն, ապա միևնույն է, այն չի փոխում ընդհանուր պատկերը: Բազրատույնաց վերջին շրջանում Հայոց կաթողիկոսությունն իրոք փառավոր կացության մեջ է գտնվել, տեր եղել հսկայական միջոցների ու հնարավորությունների: Սակայն, ցավոք, հայրապետի չափից ավելի մասնակցությունը քաղաքական կյանքին, հանգեցրել է ներքին տարածայնությունների հենց եկեղեցու ներսում: Դրա ակնառու արտահայտությունը Դեոսկորոսի հետ կապված դեպքերն են: Վերջինիս մասին պատմիչները սովորաբար գովեստով են խոսում, միայն թե չեն ներում նրան Պետրոսի կենդանության օրոք Աթոռին տեր դառնալու համար:

Ուռհայեցին Դեոսկորոսին կոչում է «մեծ հռետոր», Վարդան Արևելցին՝ «այր սուրբ և առաքինի», իսկ նրա աշակերտ Անանիա Սանահնեցին ուսուցչին մեծարում է «երկրորդ Լուսավորիչ» կոչելով (Ե-ԺԲ, 99): Իր կարծատն աթոռակալության ժամանակ Դեոսկորոսը Անիում բազմաթիվ նոր եպիսկոպոսներ է ձեռնադրում, առաջ քաշում Պետրոսի կողմից մերժվածներին (Ուռհայեցի, 1869, 88): Իսկ երբ Անի է վերադառնում Պետրոսը՝

կարգալույծ է անուն Դեոսկորոսի կողմից ձեռնադրվածներին: Եկեղեցու ներքին դժվարությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում աղանդավորության համար, որի ծավալման մասին են վկայում Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս կաթողիկոսին, Սարգիս Անեցի վարդապետին և այլոց հասցեագրված նամակներում պահպանված տեղեկությունները: Բյուզանդացիները, թերևս, բավարարված կաթողիկոսի՝ քաղաքական հարցերում ունեցած բացահայտ հունական կողմորոշմամբ, առժամանակ դավանաբանական խնդիրներ չեն ներկայացնում, սակայն Հայաստանից գրաված տարածքներում հիմնում են քաղկեդոնական եպիսկոպոսություններ (Սկիլիցես, 1979, LXVIII):

Այնուհանդերձ, մինչև Հայոց թագավորության անկումն ու Անիի զավթումը կաթողիկոսությունը գտնվում էր բարվոք կացության մեջ: Սայրաքաղաքում ծաղկում էր հոգևոր, մշակութային կյանքը, կառուցվում էին եկեղեցիներ, հիմնվում գրատներ: Կաթողիկոսարանում քիչ չէին բանիբուն վարդապետները, գիտնական ուսուցիչները, ինչպես, օրինակ, Մագիստրոսի դասընկեր Սարգիս վարդապետ Անեցին, Խաչատուր դպրապետը, Տիրանուն Կապանեցին, «անպարտելի» գրիչ Թադեոսը և ուրիշներ: Գրիգոր Մագիստրոսի աշակերտներ Եղիսե և Բարսեղ եղբայրները Անի էին եկել կաթողիկոսի հրավերով: Այս կապակցությամբ Պետրոսին հասցեագրված թղթում Մագիստրոսը գրում է. «... կարի յոյժ ուրախ եղէ վասն զի գառնիքս այս ի քաջ հովիւ վստահեացայ եւ ի ներքս ի գաւիթ քո մտցեն» (Մագիստրոս, 1910, 18), միաժամանակ կաթողիկոսի հետ խորհրդակցում է ուսումնական խնդիրների շուրջ՝ մասնավորապես անդրադառնալով Անանիա Շիրակացու Քննիկոնին, որի բնագիրը պահվում էր կաթողիկոսարանում:

Պետրոսն է հիմնել Բջնիի եպիսկոպոսական աթոռը, որը հետագայում մեծ դեր է կատարել Արարատյան երկրամասում: Դատելով Վահրամ Պահլավունու 1026թ. Ամբերդի նորաշեն եկեղեցուն թողած արձանագրությունից, այդ ժամանակ է ստեղծվել նաև Ամբերդի եպիսկոպոսությունը, որի ենթակայության տակ էր հիմնականում Նիզ գավառը:

Իր նախորդի օրինակով Պետրոս կաթողիկոսը պատվիրել է պատմագրական երկ՝ Բագրատունյաց պատմությունը («Յովհաննէս վարդապետ Տարօնեցի արար պատմութիւն Բագրա-

տունեացն հրամանաւ տէր Պետրոսի», Այրիվանեցի, 1860, 59-60), որը, ցավոք, չի պահպանվել: Մեզ է հասել Պետրոսի պատվերով 1046թ. Անիում ընդօրինակված մի մատյան, որը պարունակում է Հովհաննես Ոսկեբերանի ճամբերը (ՄՄ., թիվ 988):

Ուռնայեցին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Անիի կաթողիկոսարանի պաշտոնեության մի մասի վերաբերյալ, երբ հանգամանորեն նկարագրում է Պետրոսի վերջին մեկնումը քաղաքից (ըստ պատմիչի՝ կաթողիկոսը մեկնում էր Կոստանդնուպոլիս, բայց ինչպես ստորև կտեսնենք, այդ ժամանակ նա գնում էր Արծն, որը տեղի է ունեցել Բագրատունյաց անկումից և բյուզանդացիների գալուց հետո): Պատմիչը նշում է, որ Պետրոսը ճանապարհ է ելել «տանեցի ազատօքն փառաւոր **արամբք երեք հարիւր՝ վառեալ զինուք**, եւ վարդապետս եւ եպիսկոպոսունս եւ երաժիշտս եւ կրօնաւոր քահանայս հարիւր եւ քսան՝ հեծեալս ի ջորոց, հետեւակ պաշտօնեայս՝ երկերիւրս» (Ուռնայեցի, 1991, 114-115, Հովսեփյան, 1951, 418):

Ինչպես երևում է, Անիի կաթողիկոսարանն ունեցել է 300 հեծյալներից կազմված մշտական պահակախումբ, որն ուղեկցել է կաթողիկոսին նրա ճամփորդությունների ժամանակ: Մասնավորապես այդ է վկայում նաև Պետրոսի 1021թ. ուղևորությունը Տրապիզոն, երբ նրան ուղեկցում էին «հեծեալք ԳՃ(300) ի փառաւորացն» (Թովմեան, 1962, 402): Տրապիզոնի շքախմբի մասին տեղեկություններ կան Հովհաննես Կոզեռնի տեսիլքի բնագրում և Հակոբ Սանահնեցու երկում: Դրանք հետևյալն են. «...եկն տէր Պետրոս կաթողիկոսն... հանդերձ երկոտասան եպիսկոպոսաւք եւ Հ(70) կրանաւոր քահանայիւք եւ վարդապետաւք Յովսէփ Ընծուց եւ ս. վարդապետ Յովհաննէս Կոզեռն եւ **հեծեալք ԳՃ(300) ի փառաւորացն**» (Թովմեան, 1962, 402), «Յայնժամ գայր առ Վասիլ թագաւորն տէր Պետրոս կաթողիկոսն հանդերձ երկոտասան եպիսկոպոսօք եւ ութանասուն կրօնաւոր քահանայիւք եւ վարդապետօք Յովսէփ Ընծուց եւ Կոզեռն Յովհաննէս եւ այլ **ԳՃ(300) ձիաւորս ընդ նմա ի փառաւորացն**» (Խաչիկյան, 1971, 42): Ինչպես տեսնում ենք, միակ համընկնող մանրամասնը, Տրապիզոն, ապա Արծն (ըստ Ուռնայեցու՝ Կոստանդնուպոլիս) կատարած ուղևորության նկարագրություններում 300 զինված հեծյալների առկայությունն է, իսկ ամենաէական հանգամանքը երկու դեպքում կաթողիկոսին

ուղեկցած վարդապետների միանգամայն տարբեր լինելն է: Բացի այդ Տրապիզոն գնալիս Պետրոսին չէին կարող ուղեկցել Մագիստրոսի աշակերտներ Բարսեղն ու Եղիսեն, որոնք 1021թ. դեռ Աճի չէին եկել, մինչդեռ 1046թ. նրանք, ըստ Ուռհայեցու, կաթողիկոսի հետ էին (Ուռհայեցի, 1991, 114):

Սակայն Ուռհայեցու մոտ, այնուամենայնիվ, կա մի շփոթություն: Բանն այն է, որ Պետրոսը բյուզանդական տիրապետության տակ անցած Աճիից դուրս գալով վերը նշված բազմամարդ շքախմբով՝ ոչ թե անմիջապես ուղևորվել է Կոստանդնուպոլիս, այլ Արծն: Ինչպես ստորև կտեսնենք, նա կայսրության մայրաքաղաք է տարվել միանգամայն այլ հանգամանքներում:

Այսպիսով, Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում Աճիի կաթողիկոսարանն առաջվա պես շարունակում էր կատարել իր հոգևոր-եկեղեցական առաջատար դերը, միաժամանակ երկրի մասնատվածության ու թուլացման պայմաններում ունենալով համահայկական նշանակություն և ազդեցության ավելի մեծ ոլորտ քան որևէ քաղաքական ուժ, հանդիսանում էր հայ ժողովրդին համախմբող գլխավոր կենտրոնն ու նրա միասնականության խորհրդանիշը: Հենց դրանով էլ պայմանավորված էր բյուզանդական զավթողական քաղաքականության անհանդուրժողական վերաբերմունքը Հայաստանեայց եկեղեցու և նրա կենտրոնի՝ կաթողիկոսության նկատմամբ: Դիպուկ է Մատթեոս Ուռհայեցու տված բնութագրումը, ըստ որի Հայաստանը գրավելուց հետո հույները «հնարեցին» մի նոր տեսակի պատերազմ՝ ուղղված Հայոց եկեղեցու դավանության դեմ. «Եւ յորժամ առաւ Հայք ի Յունաց... զկնի այսորիկ հնարեցան այլ կերպիւ պատերազմ յարուցանել ընդ ազգն Հայոց. նստան ի քննութիւն (հաւատոյ) Հայոց եւ այսու ատեալ զհանդէս պատերազմին, զմարտ եւ զկռիւս եւ զաղմուկ՝ յեկեղեցի Աստուծոյ կարգեալ հաստատեցին: Ի Պարսից պատերազմէն յօժարութեամբ փախչին եւ զամենայն ճշմարիտ հաւատացեալք Քրիստոսի ի հաւատոյն ջանային խափանել...» (Ուռհայեցի, 1991, 148):

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ ԱՆԻՒՑ.  
ԽԱԶԻԿ Բ ԱՆԵՑԻ

1045թ. Գագիկ Բագրատունուն գահից հեռացնելուց և մայրաքաղաք Անին գավթելուց հետո բյուզանդացիները ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսությունը թուլացնելու ու կազմալուծելու գործը: Վարդան Արևելցու բնորոշմամբ՝ «Յոյնք... կատապան եղին ինքեանք քաղաքին (Անի) եւ վերացուցին ի նմանէ զերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկուսեանս առ ինքեանս՝ եւ անդրէն ոչ դարձուցին» (Վարդան, 1861, 133): Քրիստոնյա հզոր հարևանի հովանու տակ ապահովաբար ապրելու մասին որոշ հայ գործիչների՝ այդ թվում Պետրոս Ա-ի երազանքը խաբկանք դուրս եկավ: Արդեն 1046թ. վերջերին Անի ժամանած բյուզանդական երկրորդ կուսակալը՝ Կատակալոն Կեկավնենոսը քաղաքից հեռացրեց կաթողիկոսին՝ «...խաբանօք հանէ զնա ի քաղաքէն, ասելով եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի» (Լաստիվերցի, 1963, 63):

Հուսախաբ եղած կաթողիկոսն այդ ժամանակից ի վեր սկսում է լրջորեն անհանգստանալ կաթողիկոսության հետագա ճակատագրի համար: Մինչև Անիից հեռանալը նա կանխագուժ է, որ կարող է այլևս իրեն չթուլլատրվի ետ վերադառնալ և որոշ նախապատրաստություն է տեսնում. «Տէր Պետրոս... խորհեցաւ ի միտս իւր եւ ասէ. «գուցէ այլ ոչ թողուն զիս Հոռոմք ելանել յարեւելք». անուանեաց յԱթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին զտէր Խաչիկ: Նոյն օրինակաւս խորհեցաւ եւ յաղագս միւռոնին օրհնեալ ձիթոյն՝ օծմանն հաւատոյ Հայաստանեայցն. պահեաց ի յԱհուրեան գետն երկաթի ամանօք իբրեւ լիտր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հոռոմոց» (Ուռհայեցի, 1869, 122):

Այս ամենից հետո է, որ Պետրոսը վերը նկարագրված հանդիսավոր շքախմբով, կաթողիկոսարանի կարևոր պաշտոնյաների և մեծաթիվ հոգևորականների ուղեկցությամբ թողնում է Անին և ուղևորվում Արծն: Սակայն արդեն մայրաքաղաքից հեռացած կաթողիկոսի հետ հույները սկսում են վարվել առանց այլևայլությունների: Ըստ Լաստիվերցու՝ Արծնում Աստվածահայտնության տոնի օրը (1047թ. հունվ. 6) «հասին կալանաւորք» և Պետրոսին տարան Կարինի բերդերից մեկը, իսկ նրա քրոջ որդի



Խաչիկին Անիից բերեցին Սև քար կոչվող բերդը և նրանց արգելափակված պահեցին մինչև ապրիլ ամիսը, որից հետո տարան Կոստանդնուպոլիս:

4. Կոստանյանցի կարծիքով կաթողիկոսին Արծնում կալանել են 1051թ. հունվարի 6-ին, ըստ այդմ՝ Կոստանդնուպոլիս են տարել նույն թվականին (Կոստայանց, 1897, 38-42): Այլ հեղինակներ ևս կարծում են, թե Պետրոսը կայսրության մայրաքաղաք է գնացել 1050 կամ 1051թ., մինչդեռ միանգամայն որոշակի է, որ նա Արծնում է եղել մինչև 1048 թ., երբ սելջուկները գրավեցին ու ավերեցին այդ ծաղկուն քաղաքը: Դեպքերի ժամանակագրությունը միանգամայն ճիշտ է ներկայացնում Մ. Օրմանյանը՝ կաթողիկոսի ձերբակալումը նշելով 1047թ. հունվարի 6-ին, իսկ Կոստանդնուպոլիս տարվելը՝ նույն թվականի ապրիլի կեսերին (Օրմանյան, 1959, 1234):

Ուշագրավ է Խաչիկի՝ որպես աթոռակցի ձեռնադրությունը, որը հիշյալ հանգամանքներում բնական էր ու պատճառաբանված: Սակայն ինչպես երևում է, Խաչիկը Պետրոսի տեղապահն է եղել մինչև բյուզանդական նվաճումը, դեռևս Գագիկ Բ-ի օրոք: Մրենի վիճագիր արձանագրություններից մեկը (որը Գագիկ Բ-ի կողմից վանքի որոշ հարկերը թողնելու մասին է), սկսվում է հետևյալ կերպ. «ՆՂ (1041) թուականութեանս Յայոց ի հայրապետութեան տէր Պետրոսի եւ Խաչկա Յայոց կաթողիկոսաց այս իմ հրամանք են Գագկա Շահանշահի որդոյ Աշոտո, ազատեալ են զՄրենոյ զհարկն...» (Սարգիսեան, 1864, 197): Հավանաբար նկատի ունենալով նախընթաց շրջանի խռովահույզ դեպքերի փորձը (Հովհաննես Սմբատի հետ ունեցած գժտությունը, Դեոսկորոսի ձեռնադրությունը և այլն) Պետրոսը Հովհաննես Սմբատի մահից հետո Խաչիկին տեղապահ է հաստատել: Իսկ երբ 1046-ի վերջերին բյուզանդացիների հարկադրանքով ստիպված էր հեռանալ Անիից, նրան աթոռակից կաթողիկոս է օժել: Իհարկե Պետրոսի այս փոքր խորամանկությունը ոչ մի դեր չէր կարող խաղալ բյուզանդացիների համար, որոնք Արծնում նրան կալանելով՝ անմիջապես ձերբակալում են նաև Անիում մնացած Խաչիկին. «...հասին կալանաւորք եւ առին զնա (Պետրոսին) տարան եդին ի բերդին, որ կոչի Խաղտոյ Առիճ: Եւ ապա ածեալ ի Յայոց զքեռորդի նորին զԽաչիկ անուն եւ եդին ի բերդին, որ կոչի Սեաւ Քար, եւ մնացին անդ մինչեւ մերձ ի զատիկն: Եւ ապա

հանեալ զնոսա անտի տարան ի Կոստանդնուպօլիս...» (Լաստիվերցի, 1963, 64):

Բնական է, որ այս ուղևորության ժամանակ Պետրոս կաթողիկոսը չէր կարող ունենալ այն բազմամարդ ու փառավոր շքախումբը, որը նրա հետ էր Անիից դուրս գալու ժամանակ: Այնուամենայնիվ, կայսրության մայրաքաղաքում նրան պատշաճ ընդունելության են արժանացնում: Պետրոսն այստեղ «պատվավոր արքայականի» վիճակում մնում է երեք կամ չորս տարի, ինչպես պատմիչն է վկայում՝ կայսրը «բազում պատուով եւ մեծարանօք ընկալաւ եւ առատ ռոճկօք հրամայեաց պաշտել զնա. բայց առ իւր պահեաց զնա ամս երիս, քանզի **կասկածէր թողուլ ի Չայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի**» (Լաստիվերցի, 1963, 82): Վերջին վկայությունը ևս հաստատում է, որ երբեմնի հունասեր հայրապետը արդեն վտանգ էր ներկայացնում հենց հույների համար:

Ի վերջո, Ատոմ Արծրունու միջնորդությամբ, Պետրոսը տեղափոխվում է Սեբաստիայի Ս. Նշան վանքը: Ուռհայեցին գրում է, թե կաթողիկոսը «ի քաղաքն Անի ոչ ժամանեաց, այլ երթար բնակէր ի Սեբաստիա քաղաք» (Ուռհայեցի, 1862, 125), իսկ Կիրակոս Գանձակեցին ավելի է ճշգրտում՝ «հրամայեաց կայսրն հայրապետին դնել զվթռ իւր Սեբաստիա եւ անտի հովուել զհօտ իւր: Եւ անդ եկաց հայրապետն մինչեւ զվախճան իւր» (Գանձակեցի, 1961, 95):

Պետրոսի աթոռակալության վերջին շրջանի մասին քիչ բան է հայտնի: 1055թ. Անանիա վարդապետ Սանահնեցին նրա պատվերով ավարտել է Պողոսի թղթերի մեկնությունը՝ համառոտելով հին հեղինակների երկերը, և թերևս այդ ժամանակ էլ սկսել է գրել իր հայտնի «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» երկը, դարձյալ «հրամանաւ տեառն Պետրոսի Չայոց վերադիտողի» (Ե-ԺԲ, 99, 101): Սակայն, մինչև վարդապետը կավարտեր գործը, մահացել է պատվիրատուն, և հեղինակն ավարտելով այն ներկայացրել է Խաչիկ Անեցուն, որովհետև աշխատության վերջում գետեղված հիշատակարանում արդեն դիմում է նրան. «...արդ... զաղքատ իմոց մտաց ընկալցի պտուղ, ով գերակատարդ... տէր Խաչիկ, վերադիտող Չայոց Մեծաց, փոխանորդ Մեծի Լուսաւորչին...» (Ե-ԺԲ, 101): Պետրոսի՝ սույն աշխատության պատվիրումը ցույց է տալիս, որ նա ոչ միայն կայսրության նկատմամբ ընդդիմադիր դիրք էր զբաղվել, այլև յուրովի նախապատրաստվում

եր հույների դավանաբանական պահանջներին, որովհետև, ինչպես Յ. Քյոսեյանն է նշում, «դավանաբանական այս աշխատության շարադրումը նպատակ ուներ զորացնել հայ եկեղեցու գաղափարական դիմագրավման ոգին՝ ընդդեմ Բյուզանդիայի հոգևոր, քաղաքական նկրտումներին» (Քյոսեյան, 1992, 197-198):

Սեբաստիայում եղած ժամանակ Պետրոսը գրել է մի շարք շարականներ, որոնցով կարելի է մոտավոր պատկերացում կազմել կաթողիկոսի այդ շրջանում ունեցած հոգեվիճակի մասին<sup>13</sup>: Պետրոս կաթողիկոսը մահացել է 1057 կամ 1058թ. (Հակոբյան, 1951, 202-203, Ե-ԺԲ, 100), որից հետո միանձնյա աթոռակալ է դարձել Խաչիկ Բ Անեցին, քանի որ «զձեռնադրութիւն հայրապետութեանն վաղնջուց ընկալեալ էր» (Լաստիվերցի, 1963, 82): Սակայն «Անեցի» մականունն ունեցող այս առաջին կաթողիկոսին բյուզանդացիներն այդպես էլ թույլ չեն տալիս այլևս ոտք դնել հայրենի քաղաք և անցնում են բացահայտ հալածանքների: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայսմ ժամանակիս թագաւորն Տուկիժ խորհեցաւ խորհուրդ չար եւ կամեցաւ բառնալ եւ խափանել զԱթոռ հայրապետութեան Սրբոյն Գրիգորի ի Տանէն Հայոց. եւ... յարուցանէր հալածանս եւ առնէր քննութիւնս պէսպէս յաղագս հաւատոյ Հայաստանեայց ազգիս: Մանաւանդ յորժամ մեռաւ տէր Պետրոսն, յայնժամ յարեան Հռոմք ի վերայ սուրբ Աթոռոյն եւ կամեցան եղծանել զնա եւ կամեցան առ հասարակ դարձուցանել զՀայք ի հաւատն անօրէն Քաղկեդոնի» (Ուռհայեցի, 1991, 150):

Բյուզանդացիները նախ անմիջապես Սեբաստիայից Կոստանդնուպոլիս են տանում Խաչիկին, ապա կողոպտում այստեղ և Անիում պահված կաթողիկոսարանի գանձերը: Հույներն աննախադեպ ճնշում են գործադրում Հայոց կաթողիկոսի վրա՝ «ընդ հարկիւ կամէին արկանել զնա... Եւ ապա ի հարց եւ ի փորձ արկեալ, եւ սպառնալիս եւս յաւելուին՝ եթէ ոչ ելանիցես աստի, եթէ ոչ զիրամայեալսն ի մէնջ յանձն առնուցուս» (Լաստիվերցի, 1963, 83): Սակայն Խաչիկ Անեցին անդրդվելի է մնում: Հաստատական կաթողիկոսի եռամյա տառապանքներն ավարտվում են 1061 կամ 1062թ., երբ նախկին գահակալ Գագիկ Բ-ի, Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի և ուրիշների միջնորդությամբ հաջողվում է նրան դուրս բերել կայսրության մայրա-

քաղաքից և բնակության տեղ ապահովել Փոքր Հայքում՝ Թավրուրում: Մի քանի տարի այստեղ բնակվելուց և 1064թ. Անիի՝ սելջուկների կողմից գրավման ու ավերման կսկիծն ապրելուց հետո, Խաչիկ Անեցին վախճանվում է 1065թ.:

Այն, որ հույներն Անին գրավելուց ի վեր ամեն ինչ անում էին կաթողիկոսական Աթոռն այստեղից արմատախիլ անելու համար, միանգամայն որոշակի է: Այդ են հաստատում Պետրոսի աթոռակալության վերջին և Խաչիկի կաթողիկոսության բոլոր տարիները, Անիում ու մերձակա վանքերում այդ շրջանում գրված բազմաթիվ վիճագիր արձանագրությունների մեջ Հայոց կաթողիկոսի հիշատակման իսպառ բացակայությունը, որը բյուզանդական խիստ «գրաքննության» արդյունքն էր, և այլն: Հույների կողմից Անիի կաթողիկոսարանի կազմալուծման մասին վկայող մի անուղղակի փաստ է այն, որ Պետրոսի ու Խաչիկի կալանումից հետո Անին թողել ու Սևանի վանք է քաշվել կաթողիկոսարանի մատենադարանապետ Սարգիս վարդապետ Անեցին (Կ. Մ., 1992, 40-46): Հույներն ամեն կերպ աշխատում էին սահմանափակել Հայոց եկեղեցու իրավասությունների շրջանակը՝ զանազան միջոցներով փորձելով տարածել քաղկեդոնականությունը (Սկիլիցես, 1979, *LXIV-LXXII*): Հավանաբար հենց այդ շրջանում նրանք որոշ թվով հույն կամ հայ քաղկեդոնական եկեղեցականներ են հաստատել նաև Անիում:

Սակայն, հայ ժողովրդի գիտակցության մեջ Անին շարունակում էր երկրի օրինական կաթողիկոսանիստ համարվել: Արիստակես Լաստիվերցին, խոսելով բյուզանդական տիրապետման մասին, գրում է. «Այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրեւ զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս եւ **հայրապետական Աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրեւ զկին նորահարսն՝ մնացեալ ի յայրիութեան**» (Լաստիվերցի, 1963, 60): Այսինքն՝ հայրապետական աթոռանիստն Անին էր, միայն թե այնտեղ չէր աթոռակալը: Իսկ Ուռհայեցու հայտնածից երևում է, որ Անիի սելջուկյան զավթումից հետո Թավրուրում գտնվող Խաչիկ կաթողիկոսը ողբում է նույն այդ Աթոռի ավերումը՝ «սուգ ունէր ի սրտի իւրում տէր Խաչիկ... յիշեալ **զաւերումն հայրապետական Աթոռոյն Տանն Հայոց**» (Ուռհայեցի, 1869, 184):

Ինքը՝ Խաչիկը՝ Թավրլուրում օտարության մեջ էր. «Տէր Խաչիկ կաթողիկոսն... կեցեալ յԱթոռ հայրապետութեան զամս վեց յօտար աշխարհի, պանդխտեալ յիշխանութիւնն Յունաց» (Ուռհայեցի, 1991, 166): Մեկ այլ աղբյուր այդ մասին հաղորդում է. «կացեալ անդ... պանդխտութեամբ յօտար երկրի» (Հովսեփյան, 1951, 419): Այս խորքի վրա, թվում է, թե վերանայման կարիք ունի **Թավրլուրը**՝ Հայոց կաթողիկոսական նստավայրերից մեկը համարելու կարծիքը: Խաչիկը հարկադրաբար Թավրլուրում է մնացել 3-4 տարի, որից հետո հաջորդ կաթողիկոսն այդ բնակավայրը չի եկել: Եթե Թավրլուրը Հայոց կաթողիկոսանիստ կենտրոններից մեկը համարենք, ապա նույն տրամաբանությամբ Հայոց կաթողիկոսանիստ վայրերից պետք է համարենք նաև Կոստանդնուպոլիսը, ուր, ինչպես վերը տեսանք, Պետրոս Գետադարձը մնաց 3-4 տարի և նույնքան ժամանակ էլ պահվեց Խաչիկ Անեցին: Առաջ անցնելով ասենք, որ ԺԱ դ. վերջերին Անիում կաթողիկոսական Աթոռը վերականգնվում է կարճ ժամանակով (Բարսեղ Ա), սակայն դրանից հետո էլ քաղաքը շարունակում է Մեծ Հայքի հոգևոր կենտրոն համարվել բավական երկար ժամանակ: Ղ. Ալիշանը, գրելով Անիի թագավորության և կաթողիկոսական Աթոռի անկման մասին, այնուհետև ավելացնում է, թե՛ «...ցվերջ ԺԲ դարու՝ Անի Հայոց մայրաքաղաք կը համարէր եւ բնակավայր կաթողիկոսաց, որք եւ յոյս ունէին վերադառնալ հոն, որոյ եւ եպիսկոպոսն իբրեւ իրենց աթոռակալ էր, սկսեալ Մեծի Վկայասիրէն դրուած Բարսղէ եւ հարիւր տարի ետեւ ալ Հռոմկլայի ժողովոյն մէջ (1177) յետ երկուց կաթողիկոսացն՝ Հայոց եւ Աղուանից՝ ամենուն նախաթոռ բազմեցաւ Անոյ արքեպիսկոպոսն Բարսեղ» (Ալիշան, 1873, 125):

Խաչիկ Անեցու մահից հետո բյուզանդացիները դիմեցին ծայրահեղ քայլի՝ Հայոց կաթողիկոսությունն ընդհանրապես վերացնելու համար արգելեցին նոր կաթողիկոսի ընտրությունը: Բայց կայսրությունն այլևս նախկին ուժը չուներ. արևելքում նրա բանակները խայտառակ պարտություններ էին կրում սելջուկներից: Զարմանալիորեն, անգամ նման պայմաններում, հույները շարունակում են հակահայ կրոնական քաղաքականություն վարել: Մեծ ճիգերի գնով միայն հայ ազնվականությանը հաջողվում է 1066 թ. իրականացնել նոր կաթողիկոսի՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգորի (Վկայասեր) ընտրությունը:

Հայտնի է, որ Գագիկ Կարսեցին սելջուկյան նվաճումներից ահաբեկված, 1065թ. իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային՝ փոխարենն այլ կալվածքներ ստանալով: Սակայն, որոշ աղբյուրներում վկայություն է պահպանվել այն մասին, որ Գագիկի այդ քայլը կայսրությանը սիրաշահելու միտումով էր արված, որպեսզի հույները թույլատրեն նոր կաթողիկոսի ընտրությունը. «արքայն Գագիկ մեծաւ ջանիւ գուն գործեալ եւ բազում ինչս ծախեաց եւ զԿարս քաղաք իւր գաւառաւն Յունաց տուեալ... եւ ապա կարաց խափանել զկամս նոցա եւ էառ ի նոցանէ հրաման հաստատել հայրապետ Յայոց» (Յովսէփյան, 1951, 419, Յակոբյան, 1956, 339, Մագսուտյան, 1995, 72):

Այդքան դժվարությունների հաղթահարման գնով կաթողիկոս ձեռնադրված Գրիգոր Վկայասերը, սակայն, հեռու էր կաթողիկոսության վարչական գործերից և ամբողջովին տարված լինելով սուրբգրական և վարքագրական թարգմանական աշխատանքով, փաստորեն, եկեղեցական-կազմակերպական գործերը թողել էր ուրիշ մեկի՝ Գէորգ Լոռեցու տնօրինությանը: Ընդհանրապես, դժվար է միանշանակ գնահատական տալ Վկայասերի կաթողիկոսական գործունեությանը, քանի որ նրա կերպարը շատ կողմերով մնում է հակասական (Մագսուտյան, 1995, 73): Այս շրջանում կաթողիկոսն ու կաթողիկոսարանը, գտնվում էին Կիլիկիայի սահմաններում՝ Սև լեռներում կամ Ծամնդավում:

Սելջուկներից նվաճված Անին այդ նույն ժամանակ աստիճանաբար բուժում էր Ալփասլանի հրոսակների ավերումից ստացած վերքերը: Անեցիների համար ծանրագույն հարված էր սելջուկների կողմից Մայր տաճարը մզկիթի վերածելը: Բայց քաղաքի երիտասարդ ամիրա Մանուչեն (մոր կողմից ծագումով հայ էր) փորձում էր սիրաշահել հայերին (Վարդան, 1861, 138):

Ահա այս պայմաններում, 1072 թ. Անի է գալիս կաթողիկոս Գրիգոր Վկայասերը: Պետրոսի հեռանալուց 26 տարի անց Յայոց կաթողիկոսը կրկին ոտք է դնում նախկին աթոռանիստ կենտրոնի նվիրական հողին: Վկայասերի այցելության շարժառիթը զուտ անձնական էր. նա եկել էր ծերացած մորը տեսության: Սակայն անեցիներն այս այցելությունից նշանակալից արդյունք քաղեցին, քանի որ կաթողիկոսն այստեղ եպիսկոպոս ձեռնադրեց իր քրոջ որդի Բարսեղին՝ նրան օժտելով «ընդարձակ իշխանութեամբ հսկողութեան Հայաստանի գաւառներու վրա իբր կաթողիկո-

սական փոխանորդ...» (Օրմանյան, 1959, 1289): Դրանից շատ չանցած՝ 1081 թ. Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Չաղբատուն հանդիսավորապես ձեռնադրվում է Չայոց կաթողիկոս ու փառավոր երթով ուղևորվում Անի: Պատմիչն ուրախությամբ է արձանագրում այս իրադարձությունը. **«Յայսմ ժամանակի նորոգեալ եղև Աթոռ Սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի, որ ի վաղուց ժամանակաց հետէ խափանեալ էր մախանօք եւ նենգութեամբ չար եւ դառնացեալ ազգին Յռռոմոց»** (Ուռնայեցի, 1991, 238): Ողջ հայությունը ցնծությամբ է ընդունում այս լուրը:

### ԱՆԻԻ ԱԹՈՌԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ

1081 թ. Բարսեղ Անեցու կաթողիկոսական ձեռնադրմանը նախորդել էր ծավալուն նախապատրաստական աշխատանք, քանի որ այն տեղի ունեցավ ոչ միայն Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ և հրամանով («Նստաւ տէր Բարսեղն յԱթոռն հայրապետական յԱնի, հրամանաւ քեռոյն իւրոյ տէր Գրիգորիսի Վկայասիրի» (Յովսեփյան, 1951, 420), այլև Տաշիր-Չորագետի Բագրատունի թագավոր Կյուրիկեի հովանավորությամբ, Անիի ամիրա Մանուչեի կամակցությամբ, իսկ օծումը կատարելու համար հրավիրվեց Աղվանքի կաթողիկոս Ստեփանոսը: Չաղպատի վանքում մեծաշուք հանդեսով կատարված ձեռնադրությունից հետո Բարսեղն ուղևորվեց Անի, որի բնակչությունը ցնծությամբ դուրս եկավ նրան ընդառաջ:

Կաթողիկոսին դիմավորողների մեջ առաջինն էին նրա հայրն ու եղբայրները՝ Ապիրատյան իշխանական տան կորովի ներկայացուցիչները: Անիի հետագա պատմության ընթացքում մեծ դեր կատարած և հատկապես քաղաքի հոգևոր իշխանությունը տևականորեն տնօրինած այս ազնվականական տան առաջին խոշոր գործիչը Չասանի որդի Ապիրատն էր (Գրիգոր-Ապիրատ), որը «յաննշանից մեծացեալ եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչ լինէր տէր երկոտասան հազար հեծելոց...» (Վարդան, 1861, 131): Գագիկ Ա-ի թագավորության տարիներին նա հիմնում է Կեչառիսի եկեղեցին (Յովսեփյան, 1969, 157-159): Ավելի ուշ նա, հրաժարվելով մասնակցել Յովհաննես Սմբատի ու Աշոտ Դ-ի եղբայրադավ պայքարին, իր գերդաստանով անցնում է Դվինի ամիրայի մոտ,

բայց վերջինիս կողմից դավադրաբար սպանվում է, որից հետո նրա որդիները վերադառնում են Անի (Ուռհայեցի, 1991, 16-17): Նրանցից մեկը՝ Վասակը, ամուսնանում է Գրիգոր Մագիստրոսի դստեր հետ: Վերջիններիս զավակն էր Բարսեղ Անեցին, որն, այսպիսով, մոր կողմից Պահլավունի էր:

Բարսեղի կաթողիկոսական ձեռնադրության և Անիում հաստատվելու մասին բավական հանգամանորեն ու ոգեշնչված պատմում է Մատթեոս Ուռհայեցին. «...ի յամի ՇԼ (1081) արքեպիսկոպոսն Շիրակայ, որ էր ի քաղաքն Անի, որոյ անուն ասէին տէր Բարսեղ, յարուցեալ գնաց յաշխարհն Յայոց ի յԱղուան գաւառի՝ ի Լօռէ քաղաք առ թագաւորն Յայոց Կիւրիկէ... Եւ խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Յայոց: Չոր ժողովեալ թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին, Եւ բերեալ զտէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Յաղբաթ, **ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յԱթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Յայոց, հրամանաւ Կիւրիկէ թագաւորին...: Յայսմ ժամանակի նորոգեալ եղեւ Աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի... Եւ ելեալ զայր Բարսեղ կաթուղիկոսն Յայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, Եւ ելեալ ամենայն Տունն Շիրակայ գնալ ընդ առաջ նորա, Եւ ահա զայր Վասակ՝ հայրն տէր Բարսղի Եւ եղբարք նորա՝ Յասան Եւ Գրիգոր Եւ Ապլջահապ, արք քաջք Եւ հզօրք՝ հանդերձ եպիսկոպոսօք, Եւ **նստուցին զտէր Բարսեղ յԱթոռ տեառն Պետրոսի: Եւ եղեւ օրն այն օր մեծ Եւ ուրախութիւն ամենայն Տանն Յայոց, վասն զի տեսին նորոգեալ զԱթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»** (Ուռհայեցի, 1991, 236-238):**

Վարդան Արևելցին լրացնելով Ուռհայեցուն՝ հաղորդում է դեպքերին Մանուչեի բերած մասնակցության մասին (Վարդան, 1861, 138): 1081-ից մինչև 1105թ.՝ Գրիգոր Վկայասերի մահը, Բարսեղ Անեցին համարվում է որպես աթոռակից, իսկ մինչև 1113թ.՝ միանձնյա կաթողիկոս:

Յայաստանեայց եկեղեցու ընդհանուր վիճակն այդ ժամանակ աննախադեպ էր: Ազգային պետականության անկման և Գրիգոր Վկայասերի թույլ կառավարման հետևանքով առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ, որոնց դեմ ոչ մի քայլ չէր ձեռնարկվում: Այսպես, 1076թ. Փիլարտոս Վարաժնունին իր հիմնած իշխանության մեջ եկեղեցական ժողով գումարելով՝



կաթողիկոս է օծել տալիս Պետրոս Գետադարձի քրոջ որդի Սարգսին, որը հաստատվում է Մարաշի մոտ գտնվող Յոնի քաղաքում, իսկ Վկայասերը նրան է ուղարկում «...գքօղն եւ զգաւագանն եւ սուրբ նշանն տէր Պետրոսին» (Ուռհայեցի, 1991, 226): 1077թ. Սարգսին հաջորդում է Թեոդորոս Ալախոսիկը, իսկ 1083թ. Փիլարտոսը տեղափոխվում է Մարաշ, Թեոդորոսը հրաժարվում է նրան հետևել եւ իշխանն այստեղ նոր կաթողիկոս է ձեռնադրել տալիս Վարագավանեցի Պողոսին: Այս երկուսից բացի Գրիգոր Վկայասերի աթոռակալության սկզբում ձեռնադրված Գեորգ Լոռեցին էլ շարունակում է կաթողիկոսություն վարել Տարսոնում: Այսպիսով, Հայոց կաթողիկոսական Աթոռն անկայուն վիճակում էր, ժողովուրդը՝ տարաբաժան, իսկ բուն երկիրը՝ սելջուկներից նվաճված ու բազում զրկանքների ենթակա:

Ահա նման պայմաններում է հրապարակ գալիս գործունյա ու խոհեմ Բարսեղ Անեցին: Մ. Օրմանյանն իրավացիորեն գրում է. «Այս շփոթ կացութեան մէջ Բարսեղն էր միայն, որ իրաւ հայրապետական պաշտօն կը վարէր, իր հօտին հոգածութիւնն ունէր եւ անոր ներքին եւ արտաքին պէտքերը լրացնելու կ'աշխատէր: Որչափ ալ շատ ընդարձակ չէր իր իրաւասութեան սահմանը, սակայն իր մօրեղբօր (Գրիգոր Վկայասերի՝ Կ.Ս.) բարեացակամութենէն օգտուելով եւ անոր ձեռնքափ վիճակին դատարկը լրացնել փափաքելով, համարձակ կընդլայնէր իր ձեռնարկները, այնպէս որ իրականութենէ հեռու չեն անոնք, որոնք Բարսեղը իբր բուն կաթողիկոս կը նկատեն» (Օրմանյան, 1959, 1314): Նկատի ունի Սամուել Անեցուն, Մխիթար Անեցուն, որոնք Բարսեղի աթոռակալության տարիները 31 են նշում (Անեցի, 1893, 117, Մխիթար, 1983, 69, Հովսեփյան, 1951, 421, Այրիվանեցի, 1860, 17):

Կաթողիկոսական իշխանությունն ամրապնդելու և եկեղեցու դրությունը բարվոքելու համար Բարսեղ Անեցին 1090 թ. անձամբ ուղևորվում է սելջուկյան պետության տիրակալ Մելիքշահի մոտ՝ նախապես հոգալով ժամանակի դիվանագիտության պահանջները՝ «առեալ ընդ իւր նուէրս սուլտանին՝ իբրեւ բիւրս ոսկւոյ եւ արծաթոյ եւ դիպակաց» (Ուռհայեցի, 1991, 256): Բարսեղին ուղեկցում են եպիսկոպոսներ, քահանաներ, իշխանագույններ: Նա ինքը Մելիքշահի նստավայրն է մտնում ձի հեծած, իսկ առջևից տանում են բարձր ձողին ամրացված խաչվառ (Անեցի, 1893, 117-118):

Անեցի կաթողիկոսի այս համարձակ ձեռնարկի դրդապատճառների և նշանակալից արդյունքի մասին ավելի հանգամանորեն է պատմում Մատթեոս Ուռհայեցին՝ գրելով. «...հայրապետն Յայոց տէր Բարսեղ... տեսանէր, որ նեղէին զհաւատացեալսն Քրիստոսի ի տեղիս տեղիս եւ հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ եւ յամենայն ժառանգաւորացն նորա, եւ զվանորայսն եւ զեպիսկոպոսունսն հարկիւ չարչարէին. եւ յայնժամ կաթողիկոսն... խորհեցաւ զնալ առ բարի եւ քաղցր թագաւորն Պարսից... առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. եւ առեալ ընդ իւր նուէրս սուլտանին... հանդերձ ազատօք եւ եպիսկոպոսօք եւ քահանայիւք՝ առեալ վարդապետ զհետ իւր եւ զնաց ի Պարսիկս առ աստուածասէր սուլտանն: Եւ տեսեալ սուլտանին զտէր Բարսեղ՝ յոյժ մեծարեաց զնա, եւ կատարեաց զամենայն խնդրուածս նորա. եւ արարեալ զամենայն կամս տէր Բարսղին, եւ ազատեաց զամենայն եկեղեցիս եւ զվանորայսն եւ զքահանայսն. եւ առեալ գիր ազատութեան, եւ հրովարտակօք եւ մեծարանօք արծակեաց զհայրապետն Յայոց» (Ուռհայեցի, 1991, 256-258):

Այսպիսով, Բարսեղը դիվանագիտության հմտությամբ ոչ միայն հարկատվությունից ազատում է Յայոց եկեղեցին ու հոգևորականությանը, այլև ստանում անհրաժեշտ արտոնություններ, որոնք շուտով գործադրում է հակաթոռ կաթողիկոսությունների դեմ: Մ. Օրմանյանի կարծիքով կաթողիկոսը նախ վերադառնում է Անի, իր նստավայրը՝ «այնտեղէն սկսելով իր ստացած հրամանները գործադրել տալ» (Օրմանյան, 1959, 1315), ապա ուղևորվում Յոնի և վճռականորեն աթոռանկ անում Թեոդորոս Ալախոսիկին՝ «առեալ ի նմանէ զքօղն եւ զգաւազանն եւ սուրբ նշանն տեսան Պետրոսի...» (Ուռհայեցի, 1991, 258): Մարաշում աթոռակալող Պողոսն ինքնական հրաժարվում է կաթողիկոսությունից, իսկ Տարսնում նստող Գեորգ Լոռեցին արդեն մահացել էր: Այսպիսով Բարսեղը վերականգնում է Ամենայն Յայոց կաթողիկոսության ամբողջականությունն ու միասնությունը: Ինչպես Վարդան Արևելցին է գրում. «**եղեւ միահեծան Սուրբ Աթոռն**» (Վարդան, 1861, 143):

Թեև Բարսեղն էր, որ հնազանդեցրեց «զամենայն հակառակսն» (Անեցի, 1893, 117) և ոմանց աչքում «արար միահեծան զհայրապետութիւն իւր» (Ուռհայեցի, 1991, 258), բայց ժամանակի

գերագահ կաթողիկոս էր ճանաչվում Գրիգոր Վկայասերը, իսկ Անեցին համարվում էր աթոռակից, չնայած որ հենց նա էր իրականացնում կաթողիկոսության հիմնական իշխանությունը: Կիլիկիայի սահմանները հասած Բարսեղը Հոնիից անցնում է Ուռհա, ապա՝ Կեսարիա, Անտիոք և կրկին Ուռհա՝ ամենուր կատարելով իր հայրապետական առաքելությունը և ցնծությամբ ընդունվելով հայության կողմից: Ուռհայեցու վկայությամբ «լինէր ուրախութիւն մեծ ամենայն աշխարհի՝ որք տեսանէին զնա» (Ուռհայեցի, 1991, 258), իսկ Սմբատ Սպարապետն ավելացնում է. «...շրջէր սուրբ հայրապետն տէր Բարսեղ ընդ ամենայն երկիր եւ առնէր խաղաղութիւն ամենայն եկեղեցեաց եւ հովուէր զամենեւեսեան ըստ կամացն Աստուծոյ» (Սմբատ, 1956, 96):

1093 թ. մահանում է Մելիքշահը, սելջուկյան հսկայածավալ տերության մեջ սկսվում են ներքին կռիվներ, խառնաշփոթություն, և Բարսեղ Անեցին ստիպված է լինում շտապ վերադառնալ Անի: Կաթողիկոսն Անիում է մնում շուրջ տաս տարի՝ այստեղից իրականացնելով իր համահայկական հոգևոր իշխանությունը: Այն, որ նա իսկապես օժտված էր նման բարձրագույն իշխանությամբ, երևում է Աղվանքի կաթողիկոսության գործերին նրա ունեցած վճռորոշ միջամտության օրինակից: Ստեփանոս կաթողիկոսի մահից հետո Աղվանքում Բարսեղի գիտությամբ նոր կաթողիկոս էր ձեռնադրվել հանգուցյալի եղբայրը: Որոշ ժամանակ անց վերջինս անարժան է համարվում «վասն խտտոր վարուց իւրոց» (Ուռհայեցի, 1991, 321) և Անեցին նրան աթոռանկ է հռչակում<sup>14</sup>:

Բարսեղը նշանակալից գործունեություն էր ծավալել բուն Անիում: Կաթողիկոսը քաղաքում ամուր հենարան ուներ հանձին իր համբավավոր ազգատոհմի և եղբայրների: Նրանցից հատկապես նշանավոր էր Գրիգոր իշխանը, որին ժամանակին Անի էր հրավիրել Մանուչեն. «Մեծաւ հանդէսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս (քաղաքին) զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին, զոր ասեն ունէր ի գլուխ ազատականացն հինգ հարիւր թագս երեւելիս, զի տէր էր մեծ զօրաց եւ բազում ազատաց» (Վարդան, 1861, 138): 1099 թ. Գրիգոր իշխանն իր զորքով օտար ասպատակիչների դեմ մղված մի կռվում փրկում է Մանուչեի կյանքը, իսկ ինքը զոհվում. «Նահատակեցաւ (Գրիգորը - Կ.Մ.) ... ի Կաղզուան՝ գերծուցեալ զամիրայն Անույ ի մահուանէ՝

Մանուչէի. եւ տարեալ թաղեցին զնա ի Կեչառուս, եղբայր տէր Բարսղի կաթողիկոսի. եւ Մանուչէ եւ ամենայն զօր բանակին Յայոց երթայր զկնի դիոյն» (Վարդան, 1861, 138):

Բարսեղի աթոռակալութեան տարիներին հավանորեն կաթողիկոսարանի եկեղեցու դեր է կատարել Անիի Ս. Առաքելոցը, որը քաղաքի եպիսկոպոսարանի եկեղեցին էր (նկ. 7): Հիշենք, որ 1064 թ. Ալփ Ասլանի կողմից Անիի գրավումից անմիջապէս հետո սելջուկները մզկիթի էին վերածել Մայր տաճարը: Սակայն, ինչպէս երևում է, հայերի հետ լավ հարաբերությունների մեջ գտնվող Մանուչէն, ինքն էլ այդ վիճակը բնական չէր համարում, այլապէս չէր հիմնի մեկ այլ մզկիթ՝ դրա համար օգտագործելով Բագրատունյաց շրջանի մի աշխարհիկ բնույթի շենք՝ կից կառուցելով մինարե: Քաղաքի մահմեդականների համար պետք է որ կրոնական գլխավոր կենտրոն հանդիսանար հենց ամիրայի հիմնած «Մանուչէի մզկիթը»:

Բարսեղի Անիում կատարած կարևորագույն գործերից մեկը կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացումն էր: Դռնա Արգինայից սկզբնավորվող, ապա Սարգիս Սևանցու և Պետրոսի ժամանակ մայրաքաղաքում գործող բարձրագույն հոգևոր դպրոցն էր, որ կրկին կյանք առավ Բարսեղի հոգածությամբ և ժամանակի նշանավոր վարդապետ Յովհաննես Սարկավազի ուսուցչապետությամբ: Վերջինիս կենսագրության մեջ բազմաթիվ արժեքավոր վկայություններ կան դպրոցի գործունեության, ուսումնական ծրագրի, կրթական գործընթացի մասին: Կենսագրի պատկերավոր արտահայտությամբ՝ Յովհաննես Սարկավազը, «իբրեւ զիմաստուն մեղու, բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց զունոց, եւ հոտոց եւ համոց, բերէր ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի եւ լի առնէր ըզտունն ի փարթամութենն անտի... Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեալ՝ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին եւ զխորին իրս... Եւ գետք յորվայնէ նորա բղխեալ՝ արբուցին զտուն տէրունական եւ զնորատունկ մանկունս յարկաց Աստուծոյ... Ելին յարմատոյ եւ ի շառաւիղէ նորին... ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով... եւ լցին զտիեզերս բանիւն կենաց...» (Աբրահամյան, 1956, 120-121):

Ցավոք, Յովհաննես Սարկավազի գլխավորած դպրոցին անդրադարձող ուսումնասիրողները, որպէս կանոն, չեն խորացել

նրա հիմնադրման հանգամանքների մեջ, որի պատճառով անտեսել են Անիում կաթողիկոսական Աթոռի վերահաստատման և Բարսեղ Անեցու կատարած դերը՝ կարծելով, թե Սարկավազը քաղաքում մի մասնավոր դպրոց է ստեղծել, իսկ ոմանք էլ այն պարզապես աշխարհիկ դպրոց են համարել<sup>15</sup>: Մինչդեռ, ամիրայական իշխանության տակ գտնվող Անիում համահայկական նշանակություն ունեցող վարդապետարան կարող էր բացվել միայն կաթողիկոսական հովանավորության պայմաններում: Հաղբատում ձեռնադրված Բարսեղը հավանաբար հենց այդ ժամանակ էլ իր հետ Անի է բերել տեղի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավազին՝ նրան հանձնարարելով վարդապետարանի վերաբացումը: Այս էր պատճառը, որ հոգևոր բարձրագույն կրթություն ստանալու համար ուսուցչապետի մոտ էին գալիս Հայոց երկրի տարբեր ծայրերից, որպես «իմաստութեան գանձուց վաճառականք», Անիում ուսանելով դառնում «ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով», և վերադառնալով իրենց գավառները՝ վարդապետի պատգամները տարածում ողջ Հայաստանում՝ **«...նորայն առասացութիւնք լցին զոլորտս Հայաստանեայց»** (Աբրահամյան, 1956, 120):

Բարսեղ Անեցու և Հովհաննես Սարկավազի անհական շրջանի համագործակցության մեկ այլ դրվագ կապված է եկեղեցական կյանքի մի այնպիսի կարևոր բնագավառի հետ, ինչպիսին էր տոմարը: Խոսքը վերաբերում է 1084 թ. հաստատված՝ այսպես կոչված «Սարկավազադիր տոմարին»: Այդ թվականին է լրանում Աթանաս Տարոնացու կազմած շարժական տոմարի առաջին հինգհարյուրամյակը և ակնհայտ դառնում Հայոց և Հուլյան տոմարի միջև առկա տարբերությունը: Վերստին առաջանում է Հայոց անշարժ տոմար ունենալու խնդիրը, որը և յուրովի լուծում է Հովհաննես Սարկավազը: Ցավոք, սկզբնաղբյուրները որոշակի վկայություն չեն պահպանել Սարկավազադիր տոմարի ստեղծման մանրամասների վերաբերյալ, սակայն ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Օրմանյանը. «անհնար է, որ Բարսեղ որեւէ գործակցութիւն ունեցած չըլլայ» (Օրմանյան, 1959, 1309): Իսկապես, պատմության նախընթաց շրջանի փորձը ցույց է տալիս, որ տոմարի հետ կապված խնդիրները միշտ էլ լուծվել են կաթողիկոսի և ժամանակի նշանավոր վարդապետներից մեկի համագործակցությամբ: **Ձ** դարում նման համագործակցության

մեջ ենք տեսնում Մովսես Բ Եղիվարդեցուն և Աթանաս Տարոնացուն, Է դարում կաթողիկոս Անաստաս Ակոռեցուն և Անանիա Շիրակացուն, ուստի ԺԱ դարում Հովհաննես Սարկավագ վարդապետի կողքին չպետք է մոռանանք Բարսեղ Ա Անեցուն:

Բարսեղի ժամանակ լուծվում են թեմական, վարչատարածքային որոշ հարցեր: Մասնավորապես, հենց կաթողիկոսի օժան ժամանակ, նրա և Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է ձեռնադրվում Կյուրիկեի արքունիքի ավագերեց Սարգիսը և ստեղծվում է Հաղբատի եպիսկոպոսությունը, որին տարածքներ են հատկացվում Տաշիրից և Արցախից (Վարդան, 1861, 139):

Անիի այս շրջանի եկեղեցական կյանքի կացությանն անդրադառնալիս պետք է նկատի ունենալ, որ թեև կաթողիկոսի Մելիքշահից ստացած արտոնություններով և հոգևորականության հարկատվությունից ազատվելով որոշ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել, սակայն երկիրը գտնվում էր անհաստատ, անկայուն վիճակում: Ամիրայական տիրապետության պայմաններում Անիում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հոգևոր կյանքի բոլոր երևույթները: Վարդան Արևելցու վկայությամբ 1094 թ. մեծ հանդիսավորությամբ Անի է բերվում Նունեի խաչը, որը Հայաստան էր տեղափոխվել դեռևս Սահակ Պարթևի ժամանակ, պահվել տարբեր տեղերում: Եվ ահա այն շուքով բերվում է Անի, և Բարսեղ կաթողիկոսն այստեղ նրա համար հատուկ տոն է սահմանում: «Առ այսու ժամանակաւք եմուտ սուրբ խաչն Նունեայ ի յԱնի... ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ կանգնեցաւ նմա տօն կիրակէն, որ զկնի ութօրէիցն խաչվերաց տօն» (Վարդան, 1861, 147): Ինչպես տեսնում ենք, Անեցի կաթողիկոսն ամեն ջանք թափել է կաթողիկոսական Աթոռի և իշխանության ամրապնդման համար, հոգ տարել ինչպես վարդապետարանի, այնպես էլ Ժողովրդի հոգևոր կորովը պահպանելու մասին:

Հայոց եկեղեցու ընդհանուր շահերով մտահոգ կաթողիկոսը 1103 թ. դուրս է գալիս մի նոր ուղևորության՝ դեպի հարավային թեմերը (Ուռհայեցի, 1991, 320): Նա նախ գալիս է Ուռհա, ուր տեղի լատին կոմսը հարկադրված է լինում վերադարձնել Հայոց եկեղեցու հնուց ունեցած կալվածքները (Օրմանյան, 1959, 1327): Ապա անցնում է Քեսուն, Հայոց Վասիլ (Գող Վասիլ) իշխանի մոտ,

այցելում Կարմիր վանք, Քեսունի գավառի եպիսկոպոս ձեռնադրում շնորհաշատ Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցուն (Ե-ԺԲ, 171-172), հանդիպում է նաև Գրիգոր Վկայասերին: Այս երկամյա ուղևորության ընթացքում հավանաբար այցելում է նաև Կիլիկիայի հայ իշխաններին, իսկ 1105թ. վերադառնում Անի, մանավանդ, որ կրկին քաղաքական խառնակ իրավիճակ էր ստեղծվել<sup>16</sup> («...Բարսեղ նեղեալ ազգի ազգի շփոթմանէն գնայ յԱթոռն իւր յԱնի», Վարդան, 1861, 150):

Բարսեղ Անեցին նոր էր աթոռանիստ հասել, երբ Անի է գալիս նաև Գրիգոր Վկայասերի նամակաբերը, որի միջոցով նա Բարսեղին տեղեկացնում է, թե մահամերձ է: Անեցին «ոչ յապաղեալ» ճանապարհ է ընկնում և չնայած խառն ժամանակների պատճառով ճանապարհին ավազակների հարձակմանն է ենթարկվում, բայց «քաջասրտաբար արիացեալ», այդ խոչընդոտն էլ հաղթահարելով, հասնում է Վկայասերին (Վարդան, 1861, 151): Քեսունի Կարմիր վանքում Բարսեղ Անեցու և Վասիլ իշխանի ներկայությամբ Գրիգոր Վկայասերը հայտնում է իր վերջին կամքը, որ Բարսեղից հետո Յայոց կաթողիկոս ձեռնադրվի իր քրոջ թոռը՝ Գրիգորը (Գրիգորիս), որն այն ժամանակ պատանի էր: Ուռհայեցին գրում է, թե «տէր Բարսեղ հնազանդ լեալ ամենայն հրամանաց տեառն Գրիգորիսի եւ յայնմ օրէ էառ առ ինքն զանուանեալն կաթողիկոս զԳրիգորիս» (Ուռհայեցի, 1991, 326): Դրանից քիչ անց Վկայասերը մահանում է և թաղվում Կարմիր վանքում: Անեցին Գրիգորի ու նրա եղբայր Ներսեսի (ապագա Շնորհալու) կրթության գործը հանձնարարում է համբավաշատ Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցուն:

Վկայասերից հետո՝ 1105թ. հունիսից Բարսեղը դառնում է միանձնյա աթոռակալ: Այդ ժամանակ նրա առաջ բնականաբար բարձրանում է աթոռանիստ տեղի խնդիրը. վերադառնալ Անի<sup>17</sup>, թե՞ մնալ Քեսունի շրջանում, ուր գտնվում էր ժամանակի Յայոց ամենագործող ու անկախ իշխանությունը: Ինչպես երևում է, սկզբում Բարսեղը մտադիր է եղել վերադառնալ, որովհետև Վասիլ իշխանն ու հայ մեծամեծերը Վկայասերի մահը ողբալիս մտածում էին, թե մնալու են առանց հայրապետի՝ «...լային զանտիրանալն իւրեանց ի յօտար աշխարհի...» (Ուռհայեցի, 1991, 326): Բայց հետո, թերևս, նկատի ունենալով, որ Յայոց քաղաքական իշխանության կենտրոնը փոխադրվել էր Կիլիկիայի սահմանները և այստեղ

անհրաժեշտ էր նաև հոգևոր բարձրագույն իշխանության ներկայությունը, Բարսեղը «գտեփականն Աթոռ թողեալ ի Շիրականն Անի» (Շնորհալի, 1830, 550) որոշում է մնալ:

Գրիգոր Դարանաղեցու հայտնած մի տեղեկության համաձայն Բարսեղի որոշումից դժգոհում են Հայաստանի «մեծամեծ հռչակաւոր վանորէից եպիսկոպոսքն», անգամ՝ «եղեն ապստամբք ի կաթողիկոսէն Բարսեղէ եւ եղեն հակառակ կաթողիկոսք, որպէս Յովհաննավանացն եւ Կեչառուն եւ Հաղարծուն եւ Հաւուց Թառին եւ Աղթամարին եւ այլք բազումք» (տե՛ս Աշճեան, 1994, 27): Նման թվով հակաթոռների մասին ասվածն անկասկած չափազանցություն պիտի համարել, սակայն միանգամայն բնական է, որ Բարսեղի Անի չվերադառնալու որոշումը դժգոհություն առաջացրած լինի:

Շուտով Անիում իրավիճակը փոխվում է, քանի որ 1110թ. մահացած հորը՝ Մանուչեին փոխարինած որդին՝ Աբուլասվար ամիրան, բարյացակամ չէր հայերի նկատմամբ:

Այս շրջանում ռազմատենչ հարևանների նկրտումների հետևանքով Քեսունի իշխանության համար ևս անհանգիստ վիճակ է ստեղծվում, բայց Վասիլ իշխանն ու Կիլիկիայի Հայոց իշխան Թորոսը հաջողությամբ են վարում ռազմաքաղաքական գործերը, «իսկ Բարսեղ կաթողիկոս անոնց խորհրդատուն և խրատատուն էր և իր միջնորդութեամբ կը ջանար փորձանքները հեռացնել Հայոց գլխէն» (Օրմանյան, 1959, 1339): 1112թ. մահանում է զորեղ Վասիլ իշխանը, որի խոստովանահայրն ու հոգաբարձուն էր Բարսեղ Անեցին: Քեսունի Հայոց իշխանությունն անցնում է հանգուցյալ իշխանի հոգեզավակ Տղա Վասիլին: Սակայն դրանից մեկ տարի անց՝ 1113թ. մայիսին, մի դժբախտ պատահարի զոհ է դառնում նաև ինքը՝ Բարսեղ Անեցին, փուլ է գալիս մի նորաշեն տուն և մահացու վիրավորում այդտեղ գտնվող հայրապետին (աղբյուրները նշում են պատահարի երկու տարբերակ, տե՛ս Օրմանյան, 1959, 1345-1346): Մահամերձ կաթողիկոսը հասցնում է երիտասարդ Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել և դեպքից երեք օր անց մահանում է:

Ահա այսպես անակնկալ ավարտ է ունենում բազմերախտ հայրապետի անհանգիստ կյանքը, որն անմնացորդ նվիրված էր Հայաստանեաց Եկեղեցու բարօրությանը, կաթողիկոսական իշխանության ամրապնդման ու ազգային միասնության գործին:



Բարսեղ Անեցու դին հողին է հանձնվում Կարմիր վանքում՝ Գրիգոր Վկայասերի և Վասիլ իշխանի շիրիմների կողքին: Նույն 1113 թ. Գրիգոր Վկայասերի, ապա և Բարսեղ Անեցու վերջին պատգամի համաձայն Յայոց կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166):

### ԱԹՈՌԸ ԱՆԻՈՒՄ ՎԵՐԱՅԱՍՏԱՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ. ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՅԼԱՎՈՒՆԻ, ԲԱՐՍԵՂ Բ ԱՆԵՑԻ

Բարսեղ Ա Անեցու մահից հետո՝ 1114թ. Վասպուրականում Դավիթ եպիսկոպոսն իրեն կաթողիկոս է հռչակում՝ հիմք դնելով Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությանը, որը գոյատևում է մինչև 1895 թ.: Կարմիր վանքում գումարվում է եկեղեցական ժողով, որը բանադրանքի է ենթարկում Դավթին, որն իր դիրքն ամրապնդելու համար փորձում է անեցիների աջակցությունն ստանալ, բայց մերժվում է. «Դավթ... սակայն ոչ եղև ընկալեալ, թէև շատից եղև աշխատ ընծայիւք եւ աղաչանաւք՝ մանաւանդ ի յԱնույ գլխաւորացն» (Վարդան, 1861, 153): Ուշագրավ է, որ Դավիթը հատկապես **անեցիներին** է դիմել՝ գիտակցելով այս հարցում նրանց ունեցած կշիռը: Բայց վերջիններիս մերժողական դիրքորոշումը ևս միանգամայն բնական էր, քանի որ նրանք դեռևս չէին հրաժարվել կաթողիկոսական Աթոռն Անի վերադարձնելու մտքից: Ինչպես ստորև կտեսնենք, Գրիգոր Գ Պահլավունին ևս մտադիր է եղել Անիում հաստատվել:

Դավիթն Աղթամարում իր կաթողիկոսության հռչակումը պատճառաբանում էր նաև նրանով, որ աթոռակալում է մայր հայրենիքում, մի վայրում, ուր ժամանակին Յայոց թագավորական իշխանություն է եղել («ասեն՝ Աթոռ է եւ այս թագաւորացն Արծրունեաց՝ վայել է լինել եւ պատրիարգութեան», Վարդան, 1861, 153): Հասկանալի է, որ այս տեսանկյունից Անիի առավելությունն ավելի ակնհայտ էր: Միևնույն ժամանակ, Քեսունի Կարմիր վանքն այլևս ապահով հանգրվան չէր Յայոց կաթողիկոսի համար: 1115 թ. Ուռհայի լատին կոմսը գրավում ու վերցնում է տեղի հայկական իշխանությունը, իսկ Գրիգոր Գ Պահլավունին մեկ տարի անց թողնում է նշանավոր վանքն ու տեղափոխվում Ծովք ամրոց, ուր իշխում էր նրա եղբայր Վասիլը:

Ահա նման պայմաններում Գրիգորը բանակցություններ է սկսում Անիի նոր ամիրա Աբուլասվարի հետ: 1120-ական թվականների սկզբներին կաթողիկոսի և ամիրայի միջև նախնական համաձայնություն է կայացվում Աթոռը Անի փոխադրման համար: Սամուել Անեցու վկայությամբ՝ «**Հայրապետն... տէր Գրիգորիս... ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար, վասն իւր սեփական Աթոռոյս՝ գալ այսրէն նորա յօժար կամակցութեամբ...**» (Անեցի, 1893, 126, Յմտ. ՄՍ, թիվ 5619, 104բ): Սակայն Անիում արագորեն ծավալվող քաղաքական անցքերն ականա խափանում են այս կարևոր ձեռնարկի իրականացումը:

Հարկ է նշել, որ Անիի պատմության մեջ ողջ ժԲ դարը բնորոշվում է որպես մի հարյուրամյա պայքարի շրջան, որը մղում էին Շեղադայան ամիրաները՝ Մանուչեից հետո մնացած ժառանգությունը պահպանելու, զորացող վրաց թագավորության գահակալները՝ քաղաքին ու նրա շրջակայքին տիրելու համար, և վերջապես, ազատասեր անեցիները, որոնք աստիճանաբար սկսում են հանդես գալ որպես ինքնուրույն ուժ՝ փորձելով ստեղծել հնարավորին չափ ինքնիշխան գոյավիճակ: Այդ անհաշտ պայքարի ընթացքում երեք անգամ՝ 1124-26, 1161-64, 1174-76 թվականներին քաղաքն անցնում է վրացիներին և կրկին վերադարձվում Շեղադայաններին, մինչև որ 1198թ. Ջաքարե ամիրսպասալարը վերջնականապես Անին ազատագրում է ամիրայական տիրապետությունից: Այդ ընթացքում անեցիները հաճախ հանդես են գալիս որպես ինքնուրույն քաղաքական ուժ, ինքնուրույնաբար որոշում, թե ում իշխանությունն է տվյալ ժամանակամիջոցում նախընտրելի: 1155-ին նրանք սեփական հայեցողությամբ փոխում են քաղաքի ամիրային, 1186-ին արշավում ու գրավում ավազակային որջ դարձած Ծառաքար ամրոցը և այլն (Մարգարյան, 1980, 87-147):

Ահա այս բազմամյա հակամարտության սկիզբն էր, որ ժամանակով համընկավ Գրիգոր Գ Պահլավունու՝ Անիում հաստատվելու ցանկության հետ: Պատմիչների վկայությամբ Անիի ամիրա Աբուլասվարը ոչ միայն չէր կարողանում ապահովել քաղաքի անվտանգությունը (որի շրջակայքն անընդհատ ասպատակում էին մերթ քոչվոր ավազակները, մերթ վրացիները), այլև հայերի նկատմամբ անբարյացակամություն դրսևորելով՝ ոտնահարում էր նրանց կրոնական զգացումները: Այս խորքի վրա, Գրիգոր կաթողիկոսի հետ նրա ունեցած պայմանավորվածությունը թվում է սոսկ մի քաղաքական քայլ, որով ամիրան թերևս փորձում էր բարձրացնել իր իշխանության դերը: Ինչևէ, փաստն այն է, որ նա հսլաթում

պատրաստել է տալիս, Անի բերում ու կաթողիկեի գմբեթին բարձրացնում մի մեծ մահիկ, որով լցնում է անեցիների համբերության բաժակը: 1224թ. նրանք կանչում են Վրաց Դավիթ Շինարար թագավորին և քաղաքի դարպասները բացում նրա առաջ: Վերջինս Աբուլասվարին ընտանիքով հանդերձ գերևարում, ուղարկում է Վրաստան (ուր բոլորը մահանում են), կրկին օծել է տալիս կաթողիկեն և քաղաքի պաշտպանության համար անհրաժեշտ զորք թողնելով՝ վերադառնում (Վարդան, 1861, 156, Ուռհայեցի, 1869, 451-452, Մելիքսեթ Բեկ, 1955, 42-43):

Բայց դրանով խնդիրը չի ավարտվում: Աբուլասվարի որդիներից մեկը՝ Փատլունը, որը Խորասանում էր գտնվում, համախմբելով համակիր մահմեդական ուժեր, մեծ վնասներ է հասցնում Անիին և ի վերջո կարողանում է երկու տարի անց Դավթի որդի Դեմետրեից ետ ստանալ քաղաքը, սակայն՝ ընդունելով Վրաց գերիշխանությունը: Երկամյա պատերազմից ու ավերածություններից հետո անեցիները հասնում են այն բանին, որ նոր ամիրան երդվում է այլևս Կաթողիկեի նկատմամբ ոտնձգություն չանել. «Իսկ որդիքն Մանուչէի արարին սաստիկ երդումն, վասն զի Սուրբ Կաթուղիկէն, որ էր յԱնի, հանապազ Յայոց կացցէ եւ մի մտցէ ի նա տաճիկ եւ ոչ մտուրման ազգ» (Ուռհայեցի, 1869, 459):

Կարող է թվալ, թե Գրիգոր Գ Պահլավունու Անի գալու համար նպաստավոր պայմաններ էին առաջացել, բայց ինչպես երևում է, անեցիների ապստամբական կեցվածքը և վրացական միջամտությունը մթազնել էին կաթողիկոսի և Շեդդադյանների հարաբերությունները: Գրիգոր կաթողիկոսի պատվերով իր ժամանակագրությունը շարադրած Սամուել Անեցին, խոսելով 1124-26թթ. դեպքերի մասին, թեև հիմնավորապես պատճառաբանում է անեցիների վարքագիծը, բայց հետո, փաստորեն, պարսավում է իր համաքաղաքացիներին, որոնց ընդվզման հետևանքով երկիրը մատնվեց կատարյալ թշվառության, իսկ կաթողիկոսն էլ չկարողացավ Անիում հաստատվել: Նա գրում է. «...յաղագս վերոյգրեալ նեղութեանց եւ վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն եւ տառապանք անհնարինք... բայց սրբազան հայրապետն... տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար, վասն իւր սեփական Աթոռոյս՝ գալ այսրէն նորա յօժար կամակցութեամբ, յորժամ լուաւ զհամբաւս զայս՝ առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին: Եւ այս ամենայն լինի... ի յառաւելութենէ մեղաց, զի իբրեւ տուն դառնացողաց արարաք զանձինս մեր...» (Անեցի, 1893, 127):

Այսպիսով 1120-ական թվականներին Գրիգոր Գ Պահլավունու՝ Անիում հաստատվելու ծրագիրը խափանվում է, սակայն կաթողիկոսը մշտական կապ է պահպանում քաղաքի հետ (պատահական չէ, որ ժամանակագրություն է պատվիրում հենց քաղաքի Մայր տաճարի ավագերեց Սամուել Անեցուն):

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին: Ինչպես նշվեց, կաթողիկոսն այդ ժամանակ գտնվում էր Ծովք ամրոցում: Սմբատ Սպարապետն այս մասին գրում է. «Ջայսու ժամանակաւ սուրբ կաթողիկոսն Յայոց տէր Գրիգորիս կայր **ի փոքրագոյն դղեակն Ծովք** ... եւ անդ բնակէր հանդերձ եղբարբն տէր Ներսիսի, եւ աշակերտօքն, եւ ամենայն կահիւ սրբոյ աթոռոյն...» (Սմբատ, 1956, 161): Նույն պատմիչը կարևոր տեղեկություն է հայտնում այն մասին, որ Իկոնիայի սուլթանի արշավանքի հետևանքով քրիստոնյա իշխանների ձեռքին գտնվող մի շարք բերդերի գրավման և ստեղծված խիստ վտանգավոր իրավիճակի պատճառով Գրիգոր Գ կաթողիկոսը որոշում է դիմել Վրաց թագավորներին և տեղափոխվել Անի (ըստ պատմիչի՝ քաղաքն այդ ժամանակ նրանց տիրապետության տակ էր):

Կաթողիկոսը ճանապարհ է ելնում, սակայն նախ հյուրընկալվում է Թլպաշար ամրոցում, որի տիրուհին տեղեկանալով նրա մտադրության մասին, խոստանում է Յայոց կաթողիկոսին հատկացնել Յռոմկլա անառիկ ամրոցը: Գրիգոր Գ-ն ուրախությամբ ընդունում է այդ առաջարկը և կարճ ժամանակ անց Յայրապետական աթոռով հանդերձ տեղափոխվում Յռոմկլա: Սմբատ Սպարապետն այս մասին գրում է. «Ջայս տեսեալ սուրբ հայրապետն Յայոց տէր Գրիգորիս, զի այնքան տկարացաւ զօրութիւն քրիստոնէից, եւ ինքեանք ոչ ունէին ամրոց ապաստանի, եւ ի Ծովք բերդն իւրեանց երկնչէին դադարել. ապա **խորհեցան զնալ յԱրեւելս առ թագաւորն Վրաց, զի Անի ի ձեռն նորա էր, թերեւս անդ գտանիցեն անդորրութիւն եւ տեղի ապաստանի անկասկած ի թշնամեաց:** Եւ թողեալ զեղբայրն իւր զտէր Ներսէս անդ, մինչեւ ինքն զնասցէ եւ դարձցի, եւ ապա ամենայն տոհմիւքն եւ ընչիւք զնասցեն: Իսկ ի զնալն տէր Գրիգորի՝ պատահեաց զի զնաց ի Թլպաշար եւ տիկինն ճօսլնին անդ էր, եւ հարցանէր ընդ սուրբ հայրապետն զպատճառս զնալոյ նորա յԱրեւելս եւ նա պատմեաց նմա. եւ տիկինն այն արգել զնա ի ճանապարհէն՝ տալով նմա զամնատչելի բերդն Յռոմկլայն ի բնակութիւն...» (Սմբատ, 1956, 168):

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Գ-ը բառացիորեն հարկադրված էր թողնել Ծովք անապահով փոքր ամրոցը: Կարծում ենք, որ պատմիչի խոսքերը Անիի՝ Վրաց տիրապետության տակ լինելու վերաբերյալ, պետք է հասկանալ որպես արձագանք Շեղդադյանների՝ Վրաց թագավորներից ունեցած որոշ կախվածության (Սմբատ, 1956, 158): Իրականում 1150 թվականին Անին Վրաց տիրապետության տակ չէր: Այդ շատ լավ գիտեր նաև Գրիգոր Գ Պահլավունին, այդ պատճառով էլ Յոննկա տեղափոխվելու առաջարկը ստանալուն պես «յոյժ ուրախացաւ» և գալով Ծովք եղբոր հետ «առեալ զամենայ ինչս իւրեանց եւ զազգ, զմացին ի Յոննկայն եւ ամրացան յահէ անօրինացն» (Սմբատ, 1956, 169): Այնուամենայնիվ, Անի գալու հեռանկարը ևս իրական էր: Պատմիչն ուղակիորեն վկայում է ոչ միայն կաթողիկոսի մտադրության, այլև ճանապարհ ելնելու մասին: Միաժամանակ երևում է, որ Գրիգոր Գ-ը որոշ մտավախություն ուներ, այդ պատճառով էլ որոշել էր նախ անձամբ գնալ Վրաց թագավորի մոտ, ճշտել իրավիճակը, Աթոռի փոխադրման հնարավորությունը, նոր միայն հիմնավորապես տեղափոխվել: Անին այդ ժամանակ թեև Շեղդադյանների տիրապետության տակ էր, բայց հայերը քաղաքում կրոնական առումով ազատություն էին վայելում: Նրանց էր վերադարձված Մայր տաճարը, քաղաքում ազատորեն պաշտոնավարում էր հայ եպիսկոպոսը և այլն: Այս պայմաններում Շեղդադյանների՝ Վրաց թագավորին և Յայոց կաթողիկոսին տված երաշխիքների դեպքում, Անին կարող էր կրկին դառնալ Յայոց կաթողիկոսական աթոռանիստ: Սակայն, ինչպես տեսանք, դեպքերն այլ ընթացք ունեցան:

Այսպիսով 1150թ. Գրիգոր Գ Պահլավունին Ծովքից տեղափոխվում է Յոննկա՝ սեփականացնում այն (վճարում է 15 000 դահեկան), հիմք դնելով մի կայուն կաթողիկոսանիստ կենտրոնի, ուր Աթոռը մնում է մինչև 1292թ.:

Այժմ վերադառնանք Անիի կացությանը:

1124 թվականից հետո քաղաքի հոգևոր կյանքում կրկին կարևորագույն տեղ է գրավում Կաթողիկեն: Վերստին օծված եկեղեցու առաջին սպասավորներից մեկն է դառնում Յովհաննես Սարկավազը (Ե-ԺԲ, 157, 282): Նրանից հետո հիշվում է Կաթողիկեի Գրիգոր անունով համարձակ ավագերեցը (Վարդան, 1861, 158-159), որին հաջորդում է Սամուել Անեցին, իսկ դարավերջին Կաթողիկեի

փակակալն է դառնում պատմիչ և թարգմանիչ Մխիթար Անեցին: Փաստորեն, Անիի կաթողիկոսության շրջանի ավանդույթով, Մայր տաճարը դառնում է հոգևոր, մշակութային, գիտական կենտրոն: Անիի հոգևորականությունն աստիճանաբար մեծ կշիռ է ձեռք բերում և անգամ գլխավորում քաղաքական շարժումներ (այս մասին հանգամանորեն կխոսվի «Անիի հոգևորականությունը» բաժնում): Անիի վիճագիր արձանագրություններում քաղաքի «երեցանին» ներկայանում է որպես սեփական շահերը պաշտպանող հասարակական-տնտեսական որոշակի ուժ, որը գլխավորում էր Անիի արքեպիսկոպոսը: Վերջինս հատուկ հեղինակություն էր վայելում նաև համահայկական եկեղեցական գործերում: Ինչպես Ս. Օրմանյանն է գրում. «Անույ արքեպիսկոպոսները լիազոր իշխանութեամբ գլխաւորութիւնը կը պահէին բոլոր Յայաստանի մէջ **Եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ** կոչմամբ եւ միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունէին Ղռոմկլայի աթոռին հետ» (Օրմանյան, 1959, 1525):

Ահա նման պայմաններում է, որ անեցիները կաթողիկոսական Աթոռը վերադարձնելու ուղղությամբ մի նոր փորձ են կատարում: Նրանց մտադրության իրականացմանը խոչընդոտող գլխավոր պատճառը Անիի շուրջ ծավալված ռազմա-քաղաքական վիճակն էր, որը մնում էր անկայուն: Սակայն կային նաև գործին նպաստող հանգամանքներ, որոնցից մեկը կաթողիկոսի անհրաժեշտ թեկնածուի առկայությունն էր՝ հանձին քաղաքի Բարսեղ արքեպիսկոպոսի, որը պատմության մեջ հայտնի է **Բարսեղ Բ Անեցի** անունով: Այս եռանդուն գործիչը Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխանի որդի Ջասան Մագիստրոսի որդին էր: Նա առաջին անգամ հիշվում է Անիի պարսպի բուրգերից մեկի 1160թ. շինարարական արձանագրության մեջ: Քանի որ Անիի արքեպիսկոպոսը Յուսիսային Յայաստանի եպիսկոպոսական մյուս աթոռների նկատմամբ առաջնություն ուներ, Բարսեղն այդ հանգամանքն ընդգծելու համար արձանագրություններում երբեմն կոչվում է «հայրապետ»: Նշված արձանագրության մեջ ևս նա հիշվում է այդ կոչումով՝ «Ի ՈԹ (1160) թին ի թագաւորութեանն Փատլնոյ ի հայրապետութեան տեառն Բարսղի...» (Դիվան, Ա, 2): Այս արձանագրության մեջ նշված Փաղուն Բ-ը 1155-ին գահ էր բարձրացել հայերի աջակցությամբ: Ուշագրավ է,

որ նրա եղբայրներից մեկը քրիստոնեություն էր ընդունել (Վարդան, 1861, 161):

Այս շրջանում Անիի արքեպիսկոպոսն ու նրա եղբայրները, որոնցից նշանավոր էր հատկապես մեծ իշխան Ապիրատը, երբեմն ուղղակիորեն տնօրինում էին քաղաքի բախտը: Մասնավորապես հայտնի է, որ 1161թ. նրանք Անիից վտարել են քաղաքի ամիրային: Բարսեղը քաղաքական նկատառումներով հիմնականում բնականոն հարաբերություններ էր պահպանում ինչպես Վրաց թագավորների, այնպես էլ Անիի Շեղադյան ամիրաների ու տեղի մահմեդականների հետ: Հայտնի է, որ 1174թ. Բարսեղը Վրաց Գեորգի Գ-ի օգնությամբ գերությունից փրկագնել ու Կարսից Անի է վերադարձրել եղբորը՝ Ապիրատին: Բարսեղը լավ հարաբերություններ ուներ նաև Անիի մահմեդական իշխանավորների հետ, որի համար նրան պարսավում է Ներսես Լամբրոնացին՝ Լևոն Բ-ին գրած թղթում: 1186 թ. թեև քաղաքը գտնվում էր ամիրայական տիրապետության տակ, բայց անեցիները համախմբվելով հարձակվում են մերձակա Ծառաքար բերդի վրա, որը Բարսեղի ժառանգությունն էր եղել, և գրավելով կոտորում են այնտեղ հավաքված մահմեդական ավազակներին («...առին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի...», Վարդան, 1861, 171, 174): Բնական է ենթադրել, որ իր հայրենի ժառանգության ազատագրման ու վերադարձման գործը հենց Բարսեղն է կազմակերպել:

Հիշյալ ժամանակաշրջանի բազմապիսի քաղաքական անցքերի պատմության մեջ չխորանալով՝ նշենք, որ Բարսեղ Բ Անեցին, փաստորեն, ամեն կերպ ջանում էր անհրաժեշտ հող նախապատրաստել կաթողիկոսական Աթոռին տիրելու համար: Նրա օրոք Անիում ու նրա շրջակայքում վերելք է ապրում հոգևոր եկեղեցական կյանքը, կառուցվում ու նորոգվում են բազմաթիվ եկեղեցիներ (Ե-ԺԲ, 207): Անիում նորոգվում է Ս. Փրկչի եկեղեցին, վեր է հառնում եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու շքեղ զավիթը, ուր 1184թ. իր և ծնողների հիշատակին նվիրված խաչքար է կանգնեցնում Բարսեղը (Դիվան, Ա, 31), նա հետևում է նաև Շիրակի մյուս վանքերի կացությանը՝ հատկապես հովանավորելով Հռոմոսի նշանավոր վանքը, որի վիճագիր արձանագրություններում ու տեղի գրչատան ձեռագրերի հիշատակարաններում երախտագիտությամբ է հիշվում (Սարգիսեան, 1864, 149-150, Ե-ԺԲ, 233, 251): 1191թ. Բարսեղ Բ Անեցին այլազգիներից ազատում,

գնում է Լմբատավանքը (Արթիկի մոտ) և կալվածքներ նվիրում. «Ուտ (1191) կամաւ Աստուծոյ եւ տէր Բարսեղ, որ գնեցի զվանքս յանաւրինաց եւ ետու զՑիցքն վանացս եւ զջուրն որ իւրեանցն էր ի հնուց եղեալ: Յիշատակ ինձ եւ բարեխաւս առ Քրիստոս» (Ալիշան, 1881, 164): Նույն շրջանում ոմն Գնել նորոգում է Երազգավորսի (Շիրակավան) Ս. Աստվածածին եկեղեցին «միջնորդութեամբ տեառն Բարսղի եպիսկոպոսի» (Սարգիսեան, 1864, 170):

Իսկ ի՞նչ հարաբերությունների մեջ էր Բարսեղը Հռոմկլայի Աթոռի հետ: Վերջինս Գրիգոր Գ Պահլավունուց հետո անցնում է նրա եղբորը՝ Ներսես Դ Կլայեցուն (1166-1173), իսկ նրանից հետո Գրիգոր Դ Տղային (1173-1193): Այս կաթողիկոսի օրոք՝ 1177թ. բյուզանդական Մանուել Ա Կոմնենոս կայսրից հույն և հայ եկեղեցիների միության խնդիրն արծարծող նամակ է ստացվում (եկեղեցիների միավորման խնդրի քննարկումը սկսվել էր ավելի վաղ, տե՛ս Օրմանյան, 1959, 1383-1459, Բոզոյան, 1995, 5-191): Գրիգոր Տղան այս մասին նամակով ծանուցում է Հայաստանի եպիսկոպոսներին ու հոգևորականությանը, որոնցից մերժողական պատասխան է ստանում: Այդ գրությունը ստորագրած հոգևորականության անվանացանկը սկսվում է Բարսեղ Բ Անեցու անունով՝ «**Բասիլ եպիսկոպոս՝ որ յարեւելս հիւսիսոյ...**» (Անասյան, 1976, 266): Այնուհետև նշվում են Սանահինի վանահայր Գրիգոր Տուղեորդին, որը Բարսեղի գաղափարակիցն ու գլխավոր աջակիցներից էր, և հայաստանցի այլ հոգևորականներ:

1178թ. ապրիլին Հռոմկլայում գումարվում է եկեղեցական մեծ ժողով, որի հայաստանցի մասնակիցներից առաջինը դարձյալ հիշվում է Բարսեղը՝ «**Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անուոյ**» (Շնորհալի, 1871, 198, Բոզոյան, 1995, 88, 185), որը Մ. Օրմանյանի բնորոշմամբ՝ «ընդդիմադիրներուն պետն էր» (Օրմանյան, 1959, 1467): Ժողովը բավական երկար է տևում (1180-ին մահանում է Մանուել կայսրը) և ի վերջո ավարտվում է անհետևանք, քանի որ հոգևորականության ավանդապահ մասը դավանաբանական գլխավոր հարցերում մնում է անզիջում, իսկ ժողովի արդյունքում ստորագրված փաստաթուղթն այդպես էլ չի հասնում Կոստանդնուպոլիս (Բոզոյան, 1995, 184-185): Հատկանշական է, որ փաստաթղթի տակ Բարսեղի ստորագրությունը Հայոց և Աղվանից կաթողիկոսների ստորագրություններից հետո երրորդն է (այնուհետև գալիս են Անտիոքի, Երուսաղեմի, Տարսոնի, Եդեսիայի, Տփղիսի, Սյունիքի, Կեսարիայի արքեպիսկոպոսների ստորագրությունները (Բոզոյան, 1995, 88): Այս



փաստն ակներևորեն ցույց է տալիս Անիի արքեպիսկոպոսի գրաված բացառիկ դիրքը: Ժողովից հետո Բարսեղը վերադառնում է Անի, իսկ Յոնան Աթոռը հետագայում ևս չարունակում է քայլեր ձեռնարկել եկեղեցիների միավորման ուղղությամբ՝ այս անգամ արդեն կապեր ստեղծելով լատինական կաթոլիկ եկեղեցու հետ, որի ջատագովներից էր Ժամանակի նշանավոր գործիչներից մեկը՝ եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին:

Յյուսիսային Յայաստանի հոգևորականության շրջանում աստիճանաբար խորանում է այն համոզումը, որ անհրաժեշտ է սեփական կաթողիկոսական Աթոռ ունենալ՝ հեռու մնալով զանազան ազդեցություններից ու դավանաբանական վեճերից: Այս խնդրի իրականացման համար լավագույն թեկնածու է համարվում Անիի արքեպիսկոպոսը: Երբ 1193թ. մահանում է Գրիգոր Տղան, Յայաստանում առաջ է քաշվում Բարսեղ Անեցու թեկնածությունը, բայց այն ընդունելություն չի գտնում կիլիկեցիների մոտ: Յոնան Աթոռը կաթողիկոս է ձեռնադրվում երիտասարդ եպիսկոպոս Գրիգոր Ե-ը:

Անի քաղաքի Ս. Փրկչի եկեղեցու 1193թ. Տրդատ քահանայի արձանագրության սկզբում նշվում է. «Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն **Բարսղի Յայոց կաթողիկոսի** եւ յամիրապետութեանն բարիանուն Սուլդանին... յամի ՈԽԲ (1193) թուականին...» (Դիվան, Ա, 47): իսկ Յոնանի վանահայր Պետրոսի 1195թ. արձանագրության մեջ կարդում ենք՝ «**Ի թւ ՈԽԴ (1195) յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի...**» (Սարգիսյան, 1864, 150): Բարսեղի կաթողիկոս դառնալու թվականի վերաբերյալ այս երկու սկզբնաղբյուրներում նշված տարեթվերի թվացյալ անհամապատասխանությունը պարզվում է, երբ ծանոթանում ենք Յոնան Աթոռի ծավալված դեպքերին: Ինչպես երևում է, Գրիգոր Տղայի մահվան լուրն առնելուց հետո անեցիները Բարսեղին արդեն կաթողիկոս են համարել, բայց նրա ձեռնադրությունը տեղի է ունեցել ավելի ուշ՝ Գրիգոր Ե-ի մահից (1194) հետո՝ 1195թ.:

Բանն այն է, որ Յոնան Աթոռի աթոռակալը զոհ է գնում կիլիկյան արքունիքում և բարձրաստիճան հոգևորականության շրջանում նյութված խարդավանքներին, ձերբակալվում ու տարվում է Կոպիտառի բերդ: Եվ մինչ Սսուն պատրաստվում էին կաթողիկոսին մեղադրող ժողով գումարել, մի առավոտ նրա դին գտնում են բերդի պարիսպների տակ, ժայռերի վրա ընկած (այստեղից էլ առաջացել է դժբախտ կաթողիկոսի Քարավեժ մականունը): Լուր են տարածում, թե կաթողիկոսը մահացել է

փախուստի փորձ կատարելիս, սակայն Չայաստանում ավելի շատ հակված են լինում կարծելու, որ Գրիգոր Ե-ը բռնի մահվան զոհ է (Գանձակեցի, 1961, 148): Ինչպես էլ որ եղած լինի իրականում, փաստն այն է, որ կիլիկյան գորացած արքունիքը, Լևոն Բ-ի գլխավորությամբ (1198-ից՝ թագավոր), ուղղակիորեն միջամտում է կաթողիկոսության գործերին: 1194թ. վերջերին Սսուն գումարվում է եկեղեցական ժողով, որը Լևոն Բ-ի ցուցումով կաթողիկոս է ձեռնադրում Գրիգոր Զ Ապիրատին (1194-1203): Ձեռնադրությունը կատարվում է առանց Չայաստանի հոգևորականության կարծիքը հաշվի առնելու:

Այսպիսով Կիլիկիայում դեպքերը զարգանում են եկեղեցական կյանքի համար անբնական ընթացքով, և Չայաստանի հոգևորականությունն իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար գործելու: Տեղի եպիսկոպոսներն ու վարդապետները նախ հանդիմանական մամակ են հղում Լևոնին՝ նշելով, որ չեն ճանաչում նոր կաթողիկոսի իշխանությունը, առաջարկում են նոր ընտրություն՝ առաջադրելով Բարսեղի թեկնածությունը և պահանջում են արքունիքից հեռացնել Ներսես Լամբրոնացուն, որին կատարված դեպքերի գլխավոր մեղավորն են համարում:

Լևոնը փորձում է խուսանավել, Լամբրոնացուն հեռացնում է, բայց Գրիգոր Ապիրատին թողնում է Աթոռի վրա: Միայն դրանից հետո է, որ **1195թ. Չայաստանի հոգևորականության միակամությամբ կաթողիկոս է ձեռնադրվում Բարսեղ Բ Անեցին**: Այս է պատճառը, որ կիլիկեցիները չեն փորձում դատապարտել Բարսեղին և նրա ձեռնադրությունն անօրինական չեն համարում: Այս կապակցությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Բարսեղ Անեցիի կաթողիկոս հռչակուիլը տիրող կացութիւնը իրապէս եւ զգալապէս չէր փոխեր: Գալով Ապիրատի ընտրութեան, անտարակոյս էր, որ Արեւելեաց մասնակցութիւնը եւ համաձայնութիւնը կը պակսէր անոր մէջ եւ Լեւոնի բացարձակ կամքին հետեւանք էր... Չարկաւ այս պարագան էր, որ Կիլիկիոյ իշխանապետն ու կաթողիկոսը... չհամարձակեցան Բարսեղի դէմ վճիռ արձակել... եւ մտադրութիւն իսկ չդարձուցին Չայաստանի մէջ կատարուած իրողութեան: Այսպէս երկու կաթողիկոսներ, իրարու հակառակ, բայց հակառակութիւննին ծածկելով, կրցան միասին ապրիլ ու գործել...: Բարսեղ, սովորաբար Բարսեղ Բ Անեցի ճանչցուած, ոչ հակաթոռ, այլ աթոռակից մը պէտք է ըսուի, քանի որ իր տիտղոսն ու

պաշտօնը կանոնապես չմերժեցան ու չդատապարտեցան» (Օրմանյան, 1959, 1525):

Ն. Ակինյանը Բարսեղի կաթողիկոսանալու մասին գրում է. «1173-ին, երբ վախճանեցաւ Ներսէս Շնորհալի, Յիւսիսային Հայաստան (Հաղբատ) Բարսեղ «կաթողիկոս» կը հռչակուի, եւ ապա երբ Գրիգորիս Տղայ կաթողիկոս կ'ընտրուի, Բարսեղ «հայրապետ» յորջորջումը կ'ընդունի: Նոյնպէս նաեւ 1194-5-ին, երբ Գրիգորիս Ե քարավէժ կ'ըլլայ, Բարսեղ «կաթողիկոս» կը յորջորջուի երկրորդ անգամ» (Ակինյան, 1956, 397): Բայց այստեղ ակնհայտ շփոթմունք կա: Նախ Բարսեղ Բ Անեցու Հաղբատում ձեռնադրվելու մասին ոչ մի վկայություն չկա (հավանաբար Բարսեղը շփոթված է Հաղբատի համանուն եպիսկոպոսի հետ. տե՛ս Հովսեփյան, 1951, 407-410, Ղաֆաղարյան, 1963, 275): 1173 թ. Բարսեղը որպէս կաթողիկոս չի հիշվում, Ն. Ակինյանը նկատի է ունեցել Անիի մի արձանագրությունը, քաղելով Ալիշանի «Շիրակից» (էջ 85), ուր նշված է ՌԻԲ (1173), մինչդեռ իրականում եղել է ՌԽԲ (1193), (Դիվան, Ա, 47): Բարսեղը հայրապետ է կոչվել ոչ թե Գրիգոր Տղայի ձեռնադրությունից հետո (1173-ից), այլ այդ «հորջորջումով» է հիշվում առաջին իսկ վկայության մեջ՝ 1160թ. (որ տվյալ դեպքում չէր նշանակում կաթողիկոս): Վերջապէս սխալ է Բարսեղի՝ Գրիգոր Ե-ի մահից անմիջապէս հետո կաթողիկոս դառնալու մասին արված պնդումը: Բարսեղը ձեռնադրվել է Գրիգոր Զ Ապիրատի՝ Հայաստանի հոգևորականության կողմից չճանաչված ձեռնադրությունից հետո՝ 1195 թ.:

**Այսպիսով Բարսեղ Ա Անեցու 1105թ. Անիից հեռանալուց ուղիղ 90 տարի անց անեցիները մի վերջին անգամ վերականգնում են Անիի կաթողիկոսական Աթոռը:**

Գործունյա Բարսեղն այս շրջանում ևս հմտորեն է տնօրինել եկեղեցական գործերը, անհրաժեշտ հող նախապատրաստել նաև երկրի քաղաքական զարթոնքի համար: Անիի վերջին ամիրան՝ Սուլթանը, որն իշխում էր Բարսեղի կաթողիկոսության շրջանում, ինչպէս երևում է, շատ սերտ հարաբերությունների մեջ էր հայերի հետ: Պատահական չէ, որ 1193թ. Ս. Փրկչի եկեղեցու արձանագրության մեջ անվանվում է բարիանուն՝ «...յամիրապետութեանն բարիանուն Սուլթանի» (Դիվան, Ա, 47), իսկ Երազգավորսի արձանագրության մեջ նրա վարած իշխանությունն անգամ ամիրապետություն չի կոչվում, այլ միայն ավագություն՝ «յաւագութեանս Անույ Սուլտանին...» (Սարգիսյան, 1864, 170): Նման պայմաններում ավելի է ընդգծվում կաթողիկոսական ձեռնադրությանը հավելյալ իրավասություններ ու բարձր հեղինակություն ստացած

Բարսեղի դերը: Սյուս կողմից, զորացած Վրաց պետության մեջ առաջատար դիրք են գրավում Ջաքարե ամիրսպասալարն ու նրա եղբայր Իվանեն՝ ձեռնարկելով Հայաստանի ազատագրման գործը:

Հաջողությունները սպասել չեն տալիս, շուտով Անին վերջնականապես ազատվում է ամիրայական տիրապետությունից և դատելով Հռոռնոսուն գրված 1199թ. մի հիշատակարանից՝ 1198թ. առանց դիմադրության դռները բացում Ջաքարե և Իվանե Ջաքարյանների գլխավորած հայ-վրացական զորքերի առաջ: Հիշատակարանում, ուր խոսվում է ձեռագիրը կազմելու մասին, մասնավորապես նաև ասվում է՝ «...կազմեցաւ ի դրան Սուրբ Կարապետիս ի վանքս Հռոռնոսի ի նշանաւոր տարւոջ, քանզի ամաւ մի յառաջ փոխեցաւ Սուլտանն յԱնւոյ եւ տիրեցին քրիստոսասէր զօրաւարքն Հայոց եւ Վրաց՝ Ջաքարէ եւ Իվանէ, որոց աւզնեա Քրիստոս Աստուած» (Պողարյան, 1990, 289): Այս դեպքերի թարմ շունչն է զգացվում նաև Հռոռնոսի վանահայր Մխիթարի 1198թ. արձանագրության մեջ՝ «**Եղեւ այս ի հայրապետութեան տէր Բարսղի եւ... ի տէրութեանս քաղաքիս եւ երկրիս Մեծ Հայոց Քրիստոսի մեծ զաւրականացս Ջաքարէի եւ Իւանէի, որոց հովանի լիցի Սուրբ Երրորդութիւնն**» (Սարգիսյան, 1864, 149): Սուլթան ամիրայի Անիում թողած հիջրի 595թ. պարսկերեն մի արձանագրության և Հռոռնոսից ծագող վերը նշված երկու սկզբնաղբյուրների համադրմամբ հնարավոր է լինում ճշտել, որ ամիրայի մահն ու դրան հաջորդած՝ քաղաքի անցումը Ջաքարյաններին տեղի է ունեցել 1198թ. նոյեմբեր, դեկտեմբեր - 1199թ. հունվար եռամսյա ժամանակաշրջանում (Կ. Մ., 1997, 280-283):

Այսպիսով, Անիում վերականգնվում է թե՛ կաթողիկոսական Աթոռը, թե՛ քրիստոնեական իշխանապետությունը, և քաղաքը թևակոխում է իր ծաղկման երկրորդ շրջանը:

Բարսեղի մահվան մասին որոշակի տեղեկություն չի պահպանվել, բայց հավանաբար ծերունագարդ հայրապետը մահացել է մինչև 1203թ.՝ Գրիգոր Ապիրատի մահը, քանի որ նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ նրա թեկնածությունը որևէ կերպ չի արժարժվում: (Զգիտենք թե ինչ փաստ ունի Գ. Մագսուտյանը, երբ գրում է, թե Բարսեղը «պաշտոնավարեց արևելքում մինչև 1206թ.» (Մագսուտյան, 1995, 84):

Բարսեղից հետո Անիում նոր կաթողիկոս չի ձեռնադրվել, այլ միայն եպիսկոպոս՝ նույն Ապիրատյան տնից: Թվում է, որ այս հարցում որոշիչ դեր է խաղացել Անիի նորահաստատ քաղաքական իշխանությունը: Մեր կարծիքով Անիի նոր տերը՝ Ջաքարե ամիրսպասալարը, Չայոց եկեղեցական միասնությունը չխախտելու, թերևս նաև վրացիների հետ դավանաբանական հարցերը չսրելու մտահոգությամբ, որոշել է Բարսեղից հետո քաղաքում պահպանել միայն եպիսկոպոսական աթոռը:

Անիի եպիսկոպոս է ձեռնադրվում Բարսեղ Բ Անեցու եղբոր՝ Ապիրատ իշխանի որդի Սարգիսը, որին դեռ երիտասարդ տարիքից որպես իրեն փոխարինող էր պատրաստել Անիի վերջին կաթողիկոսը (Ե-ԺԲ, 251):

Բարսեղ Բ Անեցու աթոռակալությամբ ավարտվում է Անիի կաթողիկոսական Աթոռի պատմությունը, որը սկսվել էր դրանից երկու դար առաջ: Այնուհետև Չայաստանի եկեղեցական կյանքում ժանրակշիռ դեր է կատարում Անիի եպիսկոպոսությունը: Իսկ Չայոց կաթողիկոսական Աթոռը դեռ երկար ժամանակ շարունակում է գործել Չայոց բնաշխարհի սահմաններից դուրս՝ Կիլիկիայում, մինչև որ 1441թ. կրկին վերադառնում է մայր հայրենիք, իր նախնական ու սրբազան վայրը՝ **Լուսավորչահիմն Ս. Էջմիածին:**



# ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

## ԱԹՈՒՆ

**Ա**նիի եպիսկոպոսական Աթոռի պատմության ուսումնասիրությունը մեծապես լրացնում ու հարստացնում է քաղաքի՝ հատկապես ԺԳ-ԺԴ դարերի ընդհանուր պատմությունը, բացահայտում Անիի հասարակական և եկեղեցական կյանքի որոշ յուրահատկությունները, աթոռակալների տոհմական ծագումը և այլն: Նյութը հետազոտելիս մեր հիմնական սկզբնաղբյուրներն են եղել քաղաքի և մերձակա վանքերի վիճագիր արձանագրություններն ու ձեռագրերի հիշատակարանները, քանի որ պատմիչների մոտ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Այդ աղբյուրների հիման վրա մենք կազմել ենք նաև Անիի եպիսկոպոսների գավազանագիրքը:

961թ. մայրաքաղաք դառնալուց հետո Անին անկասկած ունեցել է եպիսկոպոս՝ քաղաքի հոգևոր պետ: Հարկ է նշել, որ դեռևս Արշակունիների ժամանակ գոյություն ուներ «արքայական դրան եպիսկոպոսի» պաշտոնը (Մոկացի, 1897, 284), որը պետք է պահպանված լիներ նաև Բագրատունիների ժամանակ: Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի հաղորդած որոշ տեղեկություններից դատելով, կարելի է ենթադրել, որ Աշոտ Գ-ի ժամանակ այդ պաշտոնն ստանձնել է Հռոմոսի վանահայր Սարգիսը<sup>17</sup>: Իսկ երբ որոշ ժամանակ անց (992թ.) մայրաքաղաքը դարձել է նաև կաթողիկոսանիստ, ուր, ըստ Մատթեոս Ուռհայեցու, «երկոտասան եպիսկոպոսք... ի տան հայրապետին անպակաս լինէր» (Ուռհայեցի, 1869, 184), հավանաբար այդ տասներկուսից մեկին է հանձնարարվել քաղաքի եկեղեցական ներքին կյանքի տնօրինությունը: Սակայն **Անիի և Շիրակի եպիսկոպոսությունը**, որպես Հայաստանյայց եկեղեցու առանձին հոգևոր և վարչատարածքային միավոր, ինչպես երևում է, կազմավորվել է 1072թ.՝ Բարսեղ Ա Անեցու ձեռնադրության ժամանակ<sup>18</sup>:

ԺԱ դարի վերջերին բյուզանդական կարճատև տիրապետությունից (որի հենց սկզբում, փաստորեն, վերացվեց Անիի կաթողիկոսական Աթոռը) և 1064թ. սելջուկյան ավերածությունից հետո,

Մանուշե ամիրայի իշխանության տակ անցած քաղաքն աստիճանաբար սկսում էր ոտքի կանգնել՝ վերականգնելով նաև եկեղեցական կյանքի բնականոն վիճակը:

Ինչպես վերը նշվեց, 1072թ. Անի եկած կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերն այստեղ Անի քաղաքի ու Շիրակ գավառի արքեպիսկոպոս է ձեռնադրում իր քրոջ որդի Բարսեղին: Այդ մասին հնագույն Հայսմավուրքներից մեկում կարդում ենք. «...Գրիգորիս եկն յԱրեւելս... եւ օրհնեաց զմիւս քուրերորդին իւր զտէր Բարսեղ՝ **արքեպիսկոպոս Անոյ եւ Տանն Շիրականոյ**» (Հովսեփյան, 1951, 420): Նույն դեպքի մասին պատմում է նաև Ուռհայեցին. «Տէր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց՝ որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքրեռորդին իւր» (Ուռհայեցի, 1991, 226), իսկ քիչ անց Բարսեղին կոչում է **«արքեպիսկոպոս Շիրակայ»**: Բարսեղը, որը բավական լայն լիազորություններով էր օժտվել, 1081թ. Վկայասերի համաձայնությամբ Հաղբատում կաթողիկոս է ձեռնադրվում, գալիս Անի և մի կարճ ժամանակահատված՝ մինչև 1105թ., վերականգնում տեղի կաթողիկոսությունը, ապա հաստատվում է Քեսունի Կարմիր վանքում, ուր և մահանում է 1113թ.:

Հայտնի չէ, թե Բարսեղի մահից հետո, մինչև նրա եղբոր՝ Գրիգոր իշխանի թոռ Բարսեղ Բ Անեցու ձեռնադրությունը (առաջին հիշատակութ.՝ 1160 թ.), ով է Անիի եպիսկոպոսը եղել<sup>19</sup>:

Այս շրջանում Հայոց եկեղեցում Անիի եպիսկոպոսական աթոռին կարևորագույն տեղ էր հատկացվում: Անիի եպիսկոպոսությունը գլխավորում էր հյուսիսային Հայաստանի հոգևորականությանը, հատկապես Հռոմկլայի Աթոռի հետ եղած հարաբերություններում (Օրմանյան, 1959, 1525): Ըստ Մ. Չամչյանի, Ղ. Ալիշանի, Մ. Օրմանյանի՝ 1114թ. Կարմիր վանքի եկեղեցական ժողովի ժամանակ ընդունված մի հատուկ որոշման համաձայն Հայոց կաթողիկոսների ձեռնադրությունը պետք է օրինական համարվեր Հայաստանի չորս գլխավոր եպիսկոպոսական աթոռների (Հաղբատ, Բջնի, Տաթև, Արտագ) համաձայնության դեպքում, որոնցից մեկը, Մ. Օրմանյանի կարծիքով, սկզբնապես Անիի եպիսկոպոսությունն էր, և որի այդ իրավունքը հետագայում փոխանցվել է Բջնիին (Օրմանյան, 1959, 1354): Սակայն Լ. Խաչիկյանը, ելնելով չորս աթոռների թվում 1247թ. հիմնված Արտագի աթոռի գոյության փաստից, մերժում է այս ենթադրու-

թյունը, հիշյալ կանոնական որոշումը վերագրելով 1293թ. ժողովին (Խաչիկյան, 1973, 136): Այդ շրջանում արդեն Անիի աթոռը նախկին դերը չունեի: Սակայն անկախ չորս իրավասու աթոռների վերաբերյալ որոշման գոյությունից, ԺԲ դարում Անիի եպիսկոպոսական աթոռն առաջնակարգ դեր էր կատարում:

1187թ. Յոթնոսուն գրված մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ Բարսեղը հոգացել էր իր եղբայր Ապիրատի որդու՝ Սարգսի՝ որպես իր հաջորդի նախապատրաստման մասին: Յովհաննես գրիչը հիշատակարանում նշում է. «...գծագրեցի զսա... ի տիեզերահռչակ ուխտիս՝ Յոթնոսուսի կոչեցեալ վանք... **ի հայրապետութեան մեծարգոյ եւ հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն Բարսղի եւ եղբաւորորոյ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի**, զորս պահեսցէ Տէր Աստուած ամենազաւր Աջովն իւրով, հանդերձ եղբարքք եւ ազգաւ...» (Ե-ԺԲ, 251): Եվ իրոք, Բարսեղից հետո որպես Անիի եպիսկոպոս է հիշվում Ապիրատի որդի Սարգիսը:

Բարսեղ Ա Անեցուց՝ 1072 թվականից մինչև Սարգսի աթոռակալությունը (վերջին անգամ հիշվում է 1220թ.) Անիի Աթոռը գտնվել է Պահլավունիների հետ խնամհացած Ապիրատյան զորեղ տոհմի ներկայացուցիչների ձեռքին (Բարսեղ Ա Անեցու հայրը՝ Վասակը, մեծ իշխան Ապիրատի որդին էր, իսկ մայրը՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դուստրը): Սարգսի աթոռակալության ժամանակ Անին անցել էր Ջաքարյանների տիրապետության տակ:

1206թ. Ջաքարե ամիրսպասալարը Լոռիում գումարում է եկեղեցական ժողով Յայոց և Վրաց եկեղեցիների ծիսական որոշ հարցերի համապատասխանեցման նպատակով՝ նախապես խնդիրը համաձայնեցնելով Յոթնկլայի Յովհաննես Ջ Սսեցի կաթողիկոսի և Կիլիկիայի Լևոն Բ թագավորի հետ: Ժողովի բարձրաստիճան մասնակիցների թվում էր Անիի եպիսկոպոսը՝ «Սարգիս՝ աթոռակալ Անույ» (Գանձակեցի, 1961, 172): Ջաքարեն Յովհաննես Սսեցի կաթողիկոսի ուղարկած վրանում պատարագ է մատուցել տալիս (այն պետք է իր հետ ունենար ռազմական երթերի ժամանակ, որպեսզի հնարավոր լիներ մարտից առաջ պատարագ մատուցել ու զինվորներին հաղորդություն տալ, ինչպես այդ անում էին վրացիները), որից ներկա հայ ավանդապահ հոգևորականության մի մասը դժգոհ է մնում ու լքում ժողովը: Ամիրսպասալարը ստիպված է լինում հաջորդ տարվա սկզբներին հրավիրել մի նոր ժողով, այս անգամ Անիում<sup>20</sup>:



Ներկաների թվում էին Դվինի ու Բջնիի Վրթանես եպիսկոպոսը, Կարսի Յովհաննես եպիսկոպոսը, վանահայրեր, վարդապետներ ու քահանաներ Ջաղբատի, Սանահինի, Կեչառիսի, Թեղենյաց, Յավուց Թառի, Սևանի և այլ վանքերից, բնականաբար՝ նաև Անիից ու նրա մերձակայքից (Գանձակեցի, 1961, 171-172, 174) <sup>21</sup>: Սակայն ժողովը կանոնավոր ընթացք չի ունենում, քանի որ նախ ձգձգվում է Ջաղբատի խոստովանահայր Մխիթար Գոշի ուշանալու (նա Ջաղբատի համառ պահանջից հետո է միայն Անի ճանապարհվում և քաղաք հասնում Աստվածհայտնության տոնի նախօրեին), ապա ժողովականների անմիաբանության պատճառով: Ջաղբատեն Մխիթար Գոշի գալուց հետո հայտարարում է, թե ժողովի կարծիքն այլևս իր համար նշանակություն չունի, իսկ նրբանկատ վարդապետը ստիպված է լինում մի կողմից ամիրսպասալարին մեղմել, մյուս կողմից՝ իր հոգևոր եղբայրներին հորդորել, որ խնդիրը չսրեն: Ի վերջո ժողովն ավարտվում է առանց վերջնական համաձայնության կայացման. Ջաղբատեն վարվում է իր ուզածի պես, որոշ ծիսական նորամուծություններ կիրառելով, իսկ Յայոց եկեղեցիները պահպանում են հնավանդ ծեսը («Ջաղբատիայ գժամանակս կենաց իւրոց նոյնպէս վարեցաւ, որպէս կամէր, բայց եկեղեցիքն ամենայն՝ առաջին պաշտմամբ վարեցան», Գանձակեցի, 1861, 177-178, Վարդան, 1861, 183):

Անիի եպիսկոպոսի դիրքորոշման մասին կարելի է դատել Գանձակեցու մի վկայությունից, ուր նա հայտնում է, թե մինչև Գոշի գալը ժողովականների կեսը համաձայնել էին Ջաղբատի պահանջներին՝ «կէսք հաւանեալ էին առնել զխնդիրն, **այնոքիկ, որ եպիսկոպոսք էին յիշխանութեանն, զի մի՛ անկցին յաթոռոյն, և կէսք՝ ոչ**» (Գանձակեցի, 1961, 176): Պարզ է, որ Անիի եպիսկոպոս Սարգիսն առաջին կեսում պետք է լիներ որպես Ջաղբատի անմիջական իշխանության ներքո և նրա «իշխանութեան» մեջ գտնվող:

Այդուհետև Սարգիսը հիշվում է Անիի մերձակա Բագնայրի վանքի երեք՝ 1209, 1210, 1211թթ. նվիրատվական արձանագրություններում: Դրանցից երկրորդը, որը պատկանում է Օշականի Պարսիմո անունով ռաիսին, սկսվում է հետևյալ կերպ. «ՈԾԹ (1210) ի **յամի աստուածարեալ եւ մեծարգոյ տեառն Սարգսի վերադիտողի մայրաքաղաքին Անոյ** եւ ի պետական իշխանութեան շահնշահ Ջաղբատիայի...» (Սարգիսյան, 1864, 180): Մյուս երկու արձանագրություններում նշվում է նաև Սարգսի հոր անունը՝ «**ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի, որդոյ Ապիրատին...**» (Սարգիսեան, 1864, 179, 181): Սարգիս եպիսկոպոսի

անվանը վերջին անգամ հանդիպում ենք Անիում, եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու 1220թ. կանոնագիր արձանագրության մեջ, ուր նա թողնում է քաղաքում երեցկնոջ մահվան ժամանակ աթոռին տրվող մեծ ու փոքր «մուտքը» հարկը:

Արձանագրությունը մասնավորապես տեղեկացնում է. «Ի թուխ ՈԿԹ (1220) շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս, որդի Ապիրատին, **առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ** եւ կամակցկութեամբ ամիրիս Երկաթա, յաղագս բարեպաշտ եւ աստուածասէր պատրոնաց մերոց աթաբակ Իւանէի եւ ամիրսպասալար Շահնշահ Սարգսի եւ Աւագի երկարկենդանութեան եւ յիշատակի մեծ սպարապետին Յաոց Ջաքարէի ազատեցաք զամենայն քաղաքիս քահանայիցս զիրիցակնոջ մուտք՝ զմահու եւ զկենաց եւ զմատղաց, զփարթամաց եւ զաղքատաց, զեկաց եւ զբնակաց, թէ լաւ եւ թէ վաթար իրիցակին վախճանի ոչ մեծ մուտք եւ ոչ փոքր ի յաթոռս չտայ, այլ ազատ են մինչ ի գալուստ Բանին Աստուծոյ. եւ զայս եւս հաստատեցաք, որ չունի հրաման ի Բանէ Աստուծոյ եպիսկոպոս, որ այժմ, եւ կամ զկնի մեր, յաւզնութիւն յուզէ յիրիցանոյս, մինչեւ զայն փողն կամաւ կամ ակամա. եւ քահանա, որ պատառիչ լինի ուխտիս եւ աւզնութիւն տա, ի կարգեն լուծեալ լիցի...» (Դիվան, Ա, 17):

Արձանագրությունը ուշագրավ է մի քանի առումով. նախ տեղեկացնում է Անիում երեցկնոջ մահվան ժամանակ եպիսկոպոսական աթոռի օգտին զանձվող յուրօրինակ հարկի մասին, որը հավանաբար տրվում էր նվիրատվության ձևով («կամաւ կամ ակամա»): Արձանագրությունը կարևոր ակնարկ է պարունակում այդ ժամանակաշրջանի քաղաքի բազմանդամ քահանայական դասի՝ երեցանու մասին, որն արդեն պայմանականորեն բաժանվում էր եկվորների ու բնիկների՝ «զեկաց եւ զբնակաց» (այդ մասին վկայություններ կան նաև հետագայի արձանագրություններում), ինչպես նաև՝ ունևորների և չունևորների՝ «զփարթամաց եւ զաղքատաց»: Հետաքրքիր է, որ հարկը թողնելը նվիրվել է Ջաքարե ամիրսպասալարի հիշատակին: Այս արձանագրության մեջ առաջին անգամ հիշվում է Անիի ամիրա Երկաթը, որի որդի Բարսեղը հետագայում քաղաքի եպիսկոպոսը դարձավ:

Սակայն առաջին հայացքից տարակուսանք է հարուցում սույն արձանագրության 1220 թվականը, քանի որ այդ թվականից

առաջ ու հետո քաղաքի ու մերձակա վանքերի արձանագրություններում, որպես ԱՆԻի ու Շիրակի արքեպիսկոպոս է հիշվում Աբուղամրի որդի Գրիգորը (հետագայում կոչվել է նաև Գրիգոր Մագիստրոս): Նա, համաձայն Մարմաշենի ընդարձակ արձանագրության, ներկայացնում էր Պահլավունյաց տան մի ճյուղը, որը ծագում էր իշխանաց իշխան Վահրամից (1045թ. նահատակված նշանավոր Վահրամ սպարապետից), որդին էր Աբուղամր Մագիստրոսի և ուներ մեկ աշխարհական եղբայր Ղարիբ (Խարիփ) անունով:

Ն. Ակինյանն այն ենթադրությունն է արել, թե Աբուղամր Մագիստրոսը որդին էր Բարսեղ Բ-ի եղբայր Ապիրատի, թեև Ապիրատի (Գրիգոր-Ապիրատ) մասին խոսելիս նշում է, որ «իր զաւակներէն կը յիշուի միայն Սարգիս քահանայ» (Ակինյան, 1956, 395): Վերջինս, ինչպես տեսանք, Ջաքարեի ժամանակ ԱՆԻի եպիսկոպոսն էր՝ «Սարգիս որդի Ապիրատի», բայց Ակինյանն այս մասին չի հայտնում: Իսկ քիչ հետո անդրադառնալով ԱՆԻի Պահլավունիների վերջին շառավիղներին և տեղեկացնելով, որ Աբուղամր Մագիստրոսն ու իր որդիները Մարմաշենի արձանագրության մեջ իրենց կոչում են Վահրամ իշխանաց իշխանի թոռներ՝ այնուամենայնիվ, Աբուղամրին համարում է Ապիրատի որդին՝ գրելով. «Ժամանակը կը պահանջէ, որ իր որդին եղած ըլլայ Աբուղամր» (Ակինյան, 1956, 398): Սակայն այս դեպքում ԱՆԻի եպիսկոպոս Սարգիս Ա-ը և Աբուղամր Մագիստրոսը պետք է հարազատ եղբայրներ լինեին, մի բան, որ ոչ մի սկզբնաղբյուրով չի հաստատվում: Մյուս կողմից, Աբուղամրը և նրա որդիները Ապիրատյան տան ժառանգները լինելու դեպքում իրենց Վահրամ իշխանաց իշխանի սերունդ չէին կարող համարել, ինչպես որ այդ չի արել Ապիրատյաններից որևէ մեկը:

Ն. Ակինյանը ելնում է միայն ժամանակի համապատասխանությունից, որը տվյալ դեպքում որոշիչ չի կարող լինել: ԺԱ դարում այնքան մեծ հռչակ ու ճյուղավորում ստացած Պահլավունյաց տունը թեև Շեղադյանների տիրապետության շրջանում ԱՆԻում մեծ դեր չէր խաղում (այդպիսի դեր ունեին Ապիրատյանները), բայց ոչ բնաջնջվել էր, ոչ էլ հիմնովին տեղահանվել: Ինչպես երևում է, նրանք կրկին զորացել են Ջաքարյանների օրոք և մասամբ վերականգնել իրենց ժառանգական իրավունքները: Այդ անելու համար նրանք

առաջին հերթին պետք է հիշեին իրենց համբավավոր նախնիներին, պատահական չէ, որ Մարմաշենի արձանագրության սկզբում գրում են. «...նորոգումն եղել... ի ձեռն որդուց Ապուղամրի Մագիստրոսի տէր Գրիգորոյ արհիեպիսկոպոսի եւ հարազատի ինոյ Խարփին, **Թոռանց Վարհամա իշխանաց իշխանի եւ զարմից եւ շառաւեղի սրբոյն Գրիգորի...**», իսկ վերջում Ղարիբի մահվան մասին ծանուցումից հետո տեղեկացվում է, թե նա թաղվել է «առ դրան սրբոյ կաթողիկէիս **մերձ առ նշխարս հաւուն մերոյ Վարհամա իշխանի**» (Օրբելի, 1963, 443, Ալիշան, 1881, 150-151): Տեղին է հիշել, որ Վահրամ Պահլավունին (մրա պապի անունը Աբուղամր էր) ուներ երկու որդի՝ Աբուղամր և Գրիգոր: Հնարավոր է, որ սրանցից մեկի, թերևս Աբուղամրի սերնդից էր Աբուղամր Մագիստրոսը (նկատենք, որ Ապիրատյանների տոհմաբանության մեջ Աբուղամր անուն ընդհանրապես չկա):

Գրիգոր Ա-ն առաջին անգամ հիշվում է Անիի մերձակա Արջո Առիճում 1213թ., երբ Հռոմեանց Կոստանդի որդի Հովհաննես քահանան միաբանելով այդ վանքին՝ նվիրատվություն է կատարում՝ «ի սուրբ Աստուածածինս, ի ձեռն տէր Գրիգորի, որդոյ Ապուղամրի» (Սարգիսյան, 1864, 190): Երկրորդ անգամ Գրիգորը հիշվում է Անիի մերձակա մեկ այլ նշանավոր վանքում՝ Բազմայրում, որը նա կոչում է «մեր սեփական ուխտս», և որտեղ 1215թ. մի կանոնագիր-արձանագրություն է թողել՝ սահմանելով մահացած հոգևորականների համար մատուցվող պատարագների քանակը (Սարգիսեան, 1864, 283): Նույնիմաստ արձանագրություն գրվել է նաև Արջո Առիճում «հրամանաւ Գրիգոր/րոյ եպ/իսկոպոսի, որ էր ժառանգորդ Սուրբ Ուխտիս...» (Սարգիսեան, 1864, 191): Բազմայրի 1215թ. մեկ այլ արձանագրություն վկայում է, որ Գրիգորն ինչ-որ բան է վաճառել Հռոմեանց Կոստանդի որդի Հովհաննեսին, որն իր հերթին այն նվիրել է վանքին. «ՈՒԿ (1215) ի յամս աստուածապատիւ հոգեւոր տեառն Գրիգորոյ, որդոյ Ապուղամրին, ես Յոհանէս քահանայ... զնեցի... ի կէսն ի տէր Գրիգորոյ, որդոյ Ապուղամրին եւ ետու ի Սուրբ Աստուածածինս...» (Սարգիսյան, 1864, 183): Ինչպես երևում է հաջորդ՝ 1216թ. արձանագրությունից, այդ ժամանակ Գրիգորն արդեն Անիի ու Շիրակի եպիսկոպոսն էր: Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի պատին գրված այդ արձանագրությամբ նա վերացնում է

մահացածների համար գանձվող «հոգու հարկը», որը 11 դրամ էր կազմում:

**«Թուականին ՈԿԵ (1216) շնորհիւն Աստուծոյ ես տէր Գրիգոր որդի Ապուղլամրի ժառանգորդ սեփական հայրենի Աթոռոյս մայրաքաղաքիս Անիո, արհիէպիսկոպոս այսմ նահանգի, թողի զհարկն հոգոյս զոր ի սկզբանէ սահման էր յամենայն մեռելէ ԺԱ (11) դրամ տալ ի փարթամաց եւ աղքատաց առհասարակ միապէս արնլով մինչեւ ի գալն Քրիստոսի: Արդ ես յաղագս Աստուծոյ ընտրեալ պարոնին մերո տեառն քաղաքիս ամիրսպասաւար շահնշահ Ջաքարիաի փոխեցելոյն առ Քրիստոս, եւ վասն յերկարկենդանութեան հարազատի իւրո Իւանէի, եւ որդո նորա Շահնշահ Սարգսին, աստուածասէր իշխանացս Յառց ազգատոհմիս եւ վասն հոգոց ննջեցելոց մերոց, բարձի զայս հարկս յամենուստ մինչեւ ի կատարած յաւիտենիս...»** (Դիվան, Ա, 14):

Այս արձանագրության մեջ Գրիգորը պարզորոշ ընդգծում է, որ հանդիսանում է Անիի աթոռի «ժառանգորդը», որը կոչում է «սեփական» և «հայրենի»: Նա մի շարք արձանագրություններում ևս նման ձևակերպում է օգտագործում:

Լմբատավանքի մի անթվական արձանագրության մեջ գրում է. «Այս մեր արձան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր տեառն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի մայրաքաղաքին Անույ եւ նահանգին Շիրակայ, **ժառանգորդ եւ սեփական մերոյ աթոռոյս...**» (Ալիշան, 1881, 165), իսկ 1227թ. Անիում գրում է. «Ես տէր Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անո եւ **ժառանգորդ սեփական հայրենի աթոռոյս մերո...**» (Դիվան, Ա, 18): Ոչ Բարսեղ Ա-ը կամ Բարսեղ Բ-ը, ոչ էլ Ապիրատի որդի Սարգիսը երբևէ այդպես հանգամանորեն չեն շեշտում իրենց «ժառանգական իրավունքը»:

1217թ. Գրիգորը թողնում է Ջատկի տոնին եպիսկոպոսական աթոռին տրվող ևս երկու հարկ. մեկը յուրաքանչյուր գյուղից վերցվող երկու գրիվ (17,28 կգ) հացն էր, մյուսը՝ քաղաքի յուրաքանչյուր եկեղեցուց (մատաղից) տրվող մեկական մորթին: «Ես տէր Գրիգոր, որդի Ապուղամրի, արհիեպիսկոպոս, կամեցաք առնուլ զեղեալ հարկ ի մեր գաւառէս Շիրակա եւ ի քաղաքիս եկեղեցեացս ի յԱնոյ, զի սահման էր ի սկզբանէ յամենայն գեղէ երկու գրիւ հաց յաթոռս տալ, եւ ի քաղաքիս ամենայն եկեղեցիս մորթի մին՝ Ջատկին տաին: Արդ ես... թողի զայս հացս ամենայն գեղի մեծի եւ փոքու եւ Ջատկի մորթին ամենայն եկեղեցոյ...» (Դիվան, Ա, 16):

1218թ. Անիի «Վրացական» եկեղեցու պատին մի ընդարձակ վրացերեն արձանագրություն է թողել Վրաց Ետիփան (Եպիփանոս) կաթողիկոսը՝ որոշ հարկեր կարգավորելով քաղաքի քաղկեդոնական համայնքի համար: Արձանագրության վերջում հայերեն կարճ մակագրությամբ այն հաստատել են Անիի Վահրամ ամիրան և Գրիգոր եպիսկոպոսը՝ «Թվին ՈԿԷ (1218) ես տէր Գրիգոր **իրիցապետ եպիսկոպոս**, ես՝ Վահրամ ամիրա քաղաքիս, վկայեմք, որ կաթողիկոսին հրամանք է զայս» (Անիի վիմագրերի ժողովածուում արձանագրության թվականը նշված է ՈԿԷ (1216) (Դիվան, Ա, 61), սակայն Պ. Մուրադյանը ճշտում է՝ ՈԿԷ (1218) (Մուրադյան, 1977, 43): Այստեղ հետաքրքիր է, որ Գրիգորը կոչվում է **երեցապետ եպիսկոպոս**: Մինչև 1220 թվականը պետք է գրված համարել նաև Գրիգորի Լմբատավանքում և Հոռոմոսում թողած արձանագրությունները (Ալիշան, 1881, 165, Սարգիսյան, 1864, 151):

Այժմ վերադառնանք Սարգիս Ա-ի արձանագրությանը, որի գրության 1220 թվականը, ինչպես տեսնում ենք, համընկնում է

Գրիգորի եպիսկոպոսության շրջանին: Այստեղ հնարավոր է երկու ենթադրություն. կամ արձանագրության ՈԿԹ թվականի միավորը սխալ է, և այն ավելի վաղ է գրվել, կամ էլ, եթե թվականը ճիշտ է, Անիում միաժամանակ գոյություն է ունեցել հոգևոր իշխանության երկու բարձրագույն պաշտոն՝ **առաջնորդ և երեցապետ եպիսկոպոս:**

Երկրորդ ենթադրության օգտին եղած փաստարկներն ավելի համոզիչ են թվում, ուստի փորձենք պարզաբանել այս հարցը: Սակայն մինչև Սարգսի ու Գրիգորի խնդրին անդրադառնալը ծանոթանանք Անիի մեկ այլ արձանագրության, որը գտնվում է նույն Ս. Առաքելոցի պատին և վերաբերում է 1270-ական թվականներին (քաղաքի մելիքն էր Փախրադինը, որը հիշվում է նաև 1277թ.): «Ելլանին: Շնորհիւն Աստուծոյ ի տէրութեան քաղաքիս եւ յառաջնորդութեան տէր Սարգսի եւ ի մելիքութեան Փախրադինին, ես Մխիթար եպիսկոպոս Տեղերեցի ի ցասմանէ շարժի աւուրքս, բարձաք զկիրակէի վաճառն ի փողոցէ. որ այս գրիս հակառակ կայ թէ մեծ թէ փոքր, քաղաքիս մեղացն տէր է» (Դիվան, Ա, 24): Ինչպես տեսնում ենք շարժի (երկրաշարժի) հնարավոր հետևանքները կանխելու համար Մխիթար Տեղերցի եպիսկոպոսը, որը բնական է՝ Անիի եպիսկոպոսն էր, արգելել է փողոցում կիրակնօրյա վաճառահանությունը, բայց նույն արձանագրության սկզբում հիշվում է նաև Սարգիս Բ եպիսկոպոսը որպես առաջնորդ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ **Սարգիսը քաղաքի հոգևոր առաջնորդն էր, իսկ Մխիթարը՝ եպիսկոպոսը:**

Վերադառնանք Սարգիս Ա-ի 1220թ. արձանագրությանը: Նրա սկզբում հեղինակը հայտնում է. «Ես տէր Սարգիս, որդի Ապիրատի, **առաջնորդ մայրաքաղաքիս Անույ**», ապա հարկը թողնելու մասին նշելուց հետո գրում՝ «զայս եւս հաստատեցաք, որ **չունի հրաման ի Բանէ Աստուծոյ եպիսկոպոս որ այժմ, եւ կամ զվնի մեր**, յաւզնութիւն յուզէ...» (Դիվան, Ա, 17): Սարգիսը, որպես առաջնորդ, խոսում է մեկ ուրիշի՝ իր ժամանակի եպիսկոպոսի մասին՝ շեշտելով, որ նա իրավունք չունի հարկն ուզել: Մեր կարծիքով, այդ եպիսկոպոսը հենց երեցապետ եպիսկոպոսն է՝ Աբուղամրի որդի Գրիգորը:

Չնայած իր գրած արձանագրություններում Գրիգորը, որպես կանոն խոսում է վերամբարձ ոճով («Ես տէր Գրիգոր, որդի

Ապուղամրի, ժառանգորդ սեփական հայրենի Աթոռոյս մայրաքաղաքիս Անու, արհիէպիսկոպոս այսմ նահանգի...»), բայց Վրաց Ետիփան կաթողիկոսի արձանագրության տակ (1218թ.), որը ոչ թե Անիի աթոռի ներքին գործերին վերաբերող, այլ պաշտոնական, եթե կարելի է ասել՝ միջեկեղեցական բնույթի գրություն է, գրում է. **«Ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս...»** (Դիվան, Ա, 61): Մեր կարծիքով հենց սա է Գրիգորի գրաված պաշտոնի իրական անվանումը՝ **«երեցապետ եպիսկոպոս»**: Իսկ Սարգիս Ա-ը նույն շրջանում հանդիսանում էր քաղաքի հոգևոր առաջնորդը: Միակ մութ կետն այստեղ այն է, որ Գրիգորն իր արձանագրություններում երբեք չի հիշում Սարգսին, իսկ վերջինս 1220թ. արձանագրության մեջ թեև ակնարկում, բայց անվանապես չի նշում Գրիգորին: Բայց այդ կարող է բացատրվել երկու հոգևոր պետերի անձնական հարաբերություններով: Սարգիսը, որպես Ապիրատյան տան շառավիղ, որը սկսած 1072 թվականից վարում էր Անիի հոգևոր իշխանությունը, թվում է այնքան էլ բարյացակամորեն չի ընդունել Պահլավունյաց տոհմաճյուղից սերող Գրիգորի առաջխաղացումը, մանավանդ, որ վերջինս էլ ամեն առիթով շարունակ նշում է, թե հանդիսանում է Անիի Աթոռի ժառանգորդը, ասես իր գրաված դիրքի օրինականությունը և տոհմական իրավունքը ցույց տալու համար: Անիի մերձակա Բագմայրի ու Արջո Առիճի վանքերը, Շիրակի նշանավոր Մարմաշենն ու Լնբատավանքը Գրիգորը համարում է «սեփական», «հայրենի», այսինքն՝ արդեն իսկ բավական ընդարձակ իշխանություն ունեւր Անիի շրջակայքում: Իսկ Սարգսի երբեմնի գորեղ տոհմն արդեն թուլացել էր, պատահական չէ, որ ժԳ դարում Ապիրատյան պայազատներ ընդհանրապես չեն հիշատակվում: Հնարավոր է, որ Սարգսի մահից հետո Գրիգորը վերջապես ամբողջովին «ժառանգել» է Անիի աթոռը՝ համատեղելով առաջնորդությունն ու եպիսկոպոսությունը:

Այսպիսով, վերը նշված փաստարկները մեզ բերում են այն եզրակացության, որ ժԳ դարում Անիի բարձրագույն հոգևոր իշխանությունը եղել է երկաստիճան (կարելի է նաև ասել՝ երկիշխան)՝ ունենալով **հոգևոր առաջնորդ և երեցապետ եպիսկոպոս**: Այն չի հակասում եկեղեցական կանոններին, եթե նկատի ունենանք քորեպիսկոպոսության աստիճանի գոյությունը, որը հայտնի է դեռ վաղ միջնադարից: Ուշագրավ է, որ **«երեցա-**



**պետ»** բառի դիմաց Հայկազյան բառարանը տալիս է նաև «փոխանորդ եպիսկոպոսի» բացատրությունը (Նոր բառգիրք, 1836, 685):

Քորեպիսկոպոսի գործունեությանն էական տեղ է հատկացվում Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին Սսում գումարած ժողովի արդյունքում կազմված՝ 1245թ. Հայաստանի եկեղեցիներ ու նաև Անի ուղարկած շրջաբերականում եպիսկոպոսների պարտականությունների մասին ասում է. «Եպիսկոպոսը տարեկան երկու անգամ պետք է շրջի իր թեմում, ժողով անի իր հոտին և սուրբ ու գիտուն քորեպիսկոպոս պետք է նշանակի, որ եկեղեցու դատաստանն ըստ կանոնների անել կարողանա, լինի երկյուղած, ոչ ազահ» (Գանձակեցի, 1982, 219): Այսինքն՝ եպիսկոպոսական փոխանորդի՝ քորեպիսկոպոսի, կամ երեցապետի գոյությունը, հիշյալ ժամանակաշրջանում, միանգամայն բնական ու անգամ անհրաժեշտ էր: Անիում տեսնում ենք գրեթե նման երևույթ, սակայն տեղական, քաղաքային իրականությունից բխող առանձնահատկություններով:

Հետաքրքիր է, որ Կոստանդին կաթողիկոսի հիշյալ շրջաբերականը Հայաստան բերած Վարդան Արևելցուն ընդունած եպիսկոպոսների թվում հիշվում են նաև «եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանական և Գրիգոր» (Գանձակեցի, 1961, 313), այսինքն՝ այս շրջանում, Անիից անհամեմատ փոքր բնակավայր Բջնին ուներ երկու եպիսկոպոս: Այս դարաշրջանում զույգ եպիսկոպոսների համատեղ աթոռակալության հանդիպում ենք նաև Սյունյաց հնավանդ աթոռում: Այս խնդրին անդրադարձած Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանը գրում է. «Տաթևում երկու եպիսկոպոսների միաժամանակյա աթոռակալությունը ... բնական երևույթ էր դարձել: Այդ երկու եպիսկոպոսներից մեկը հանդես էր գալիս առաջնորդի, իսկ մյուսը՝ փոխանորդի կամ տեղապահի դերում: Վերջինս սովորաբար հաջորդ առաջնորդն էր դառնում» (Սկրտչյան, 1988, 53):

Եթե ընդունենք, որ Անին ևս երկու եպիսկոպոս ուներ, ապա կարող ենք նոր մեկնաբանություն տալ Ստեփանոս Օրբելյանի մոտ պահպանված այն տեղեկությանը, ուր խոսվում է Իվանե աթաբեկի Դվինում գումարած մի դատավարության մասին, և որի մասնակիցների թվում նշվում է նաև **«զմեծ եպիսկոպոսն Անույ»** (Օրբելյան, 1910, 355): Թվում է, որ պատմիչը ոչ թե փորձել է մեծարել Անիի եպիսկոպոսին, այլ ընդգծել է նրա պաշտոնը՝ «մեծ եպիսկոպոս»:

Կարելի է ենթադրել, որ երկու եպիսկոպոսների գոյությունն Անիում սկիզբ է առել Բարսեղ Բ Անեցու ժամանակ, այն բանից հետո, երբ նա 1195 թ. Անիում կաթողիկոս օծվեց: Նորընծա հայրապետը, գոնե արտաք-

նապես, իրեն ավելի լայն իրավունքներ պետք է վերապահեր և քաղաքի «երեցապետությունը» թողներ որևէ եպիսկոպոսի: Բարսեղի մահից հետո նրա եղբորորդի Սարգիսն այլևս կաթողիկոս չձեռնադրվեց, այլ միայն՝ եպիսկոպոս՝ պահպանելով ավագության նշանները (պատահական չէ, որ Քանծակեցին Լոռիի ժողովի մասնակիցների թվում միայն նրան է կոչում **աթռակալ**, իսկ Բագնայրի 1210թ. արձանագրության մեջ նա անվանվում է «**վերադիտող** մայրաքաղաքին Անո»): Բայց ինչպես երևում է, Բարսեղից հետո Անիում պահպանվեց նաև երեցապետ եպիսկոպոսի պաշտոնը, որն անցավ վերագործնք ապրող Պահլավունիներին: (Նշենք, որ հիշյալ ժամանակաշրջանում Անիում քաղկեդոնական համայնքը ևս իր եպիսկոպոսն ուներ):

Անիի հոգևոր առաջնորդը և երեցապետ եպիսկոպոսը ունեցել են իրավասությունների որոշակի բաժանում, սակայն առաջմ առկա տվյալներով անհնար է դրանց անջրպետը հստակ որոշել: Կարելի է ենթադրել, որ առաջնորդի կոչումն ու իրավասությունների մի մասը (մասնավորապես դատական իրավունքը) ԺԴ դարում անցել է աշխարհականներին<sup>22</sup>: Որոշ հանգամանքներ խոսում են այն մասին, որ առաջնորդի և երեցապետի իրավասությունների ընդարձակության առումով շատ բան կախված է եղել այս կամ այն կոչումը կրող եպիսկոպոսի անձից, նրա տոհմական ծագումից ու հնարավորություններից: Անիում զուգահեռաբար երկու եպիսկոպոսների գոյության վերաբերյալ կան նաև այլ փաստարկներ, որոնց մասին կխոսվի ստորև:

Այժմ անդրադառնանք Աբուղամրի որդի Գրիգոր Ա-ի գործունեության վերջին շրջանին: Նրա անվամբ հայտնի թվակիր հաջորդ արձանագրությունները վերաբերում են 1225, 1226, 1227 թվականներին և այս կամ այն կերպ կապված են նրա եղբոր՝ իշխան Ղարիբի նահատակության փաստի հետ:

Առաջինը Մարմաշենի ընդարձակ արձանագրությունն է, որը տեղեկացնում է եկեղեցու հիմնավոր նորոգման, նրան տրված բազում նվիրատվությունների մասին, որ կատարել են Գրիգորն ու Ղարիբը. «Ի ժամանակս... պատրոնաց մերոց աթաբակ Իւանէ եւ մանտատորթուխուցես Շահնշահի, հրամանաւ սոցին վերստին նորոգումն եղել հրաշափառ տաճարի... կաթողիկէի Մարմաշինոյ ի ձեռն որդւոց Ապուղամր Մագիստրոսի՝ տէր Գրիգորոյ արհիէպիսկոպոսի եւ հարազատի իմոյ Խարփին՝ թռանց Վարհամա իշխանաց իշխանին...» (Օրբելի, 1963, 443, Ալիշան, 1881, 150-151): Այնուհետև թվարկվում են վանքին տրված ընծաները՝ ոսկե ու արծաթե սպասք, Հին ու Նոր

Կտակարաններ, Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով, ամբողջ գյուղեր, այգիներ և այլն: Մինչ այդ Ս. Ստեփանոս եկեղեցին պատկանել է Անիի եպիսկոպոսական աթոռին, որին էլ վերադարձվել է 1288թ. (Դիվան, Ա, 29): Արձանագրության երկրորդ մասում նշվում է Ղարիբի մահվան ու Մարմաշենում թաղվելու մասին («...գեղեցկագեղ եղբայրն իմ **Խարիբի Մագիստրոսն...** մարտիրոսացաւ ի պատերազմի անաւրիմաց... զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ Վարհամա իշխանի»), իսկ վերջում Գրիգոր եպիսկոպոսը պարտավորեցնում է Մարմաշենի սպասավորներին այդուհետև տարվա բոլոր կիրակիներին Ավագ խորանում պատարագել եղբոր հոգու համար՝ «յանուն նահատակին Քրիստոսի՝ Խարիբին... մինչ ի ծագումն Որդոյն Աստուծոյ...» (Օրբելի, 1963, 443, Ալիշան, 1881, 150-151):

Հաջորդ երկու արձանագրություններն Անիից են և հիմնական բովանդակությամբ գրեթե կրկնում են միմյանց: Առաջինը՝ փորագրված Սիթի Պահլավունու և նրա ամուսին Գրիգորի նորոգած Ս. Սարգիս եկեղեցու պատին, վկայում է, որ Գրիգոր եպիսկոպոսը թողել է Անիի քահանաների թաղման հարկը. «Ի ՌՅԵ (1226) ես տէր Գրիգոր թողի զհարկ թաղման քահանայիցս Անոյ...» (Դիվան, Ա, 55):

1227թ. արձանագրությունն արդեն գրված է եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի պատին և ունի լրացուցիչ մանրամասներ. «Ի ՌՅԶ (1227) կանանն Աստուծոյ ես տէր Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անո եւ ժառանգորդ սեփական հայրենի աթոռոյս մերո, թողի զհարկ քահանայից քաղաքացեաց, զոր ի մահուան արն տաին եւ փոխարէն հատուցէն մեզ զաւագ հինգշաբթին պատարագ յամենայն եկեղեցիս յանուն հարազատ եղբաւր իմո Ղարիբին, կատարելոյ ի պատերազմի խորագմեցեաց ի ՌՅԴ (1225) թուականին. եւ չունի ոք իշխանութիւն յիրիցո հարկս առնուլ...» (Դիվան, Ա, 18):

Այսպիսով Գրիգորը Անիի քահանաների մահվան ժամանակ գանձվող հարկը վերացրել է ի հիշատակ իր Ղարիբ եղբոր, որն, ամենայն հավանականությամբ, զոհվել էր 1225թ. օգոստոսին Խորեզմի շահ Ջալալ ադ-Դինի զորքերի դեմ տեղի ունեցած Գառնիի ճակատամարտում, ուր Իվանե աթաբեկի գլխավորած հայ-վրացական զորքը պարտություն կրեց: Ինչպես երևում է, հարկը թողնելու մասին որոշումը կայացվել է նույն՝ 1225թ., այդ պատճառով էլ մինչև Ս. Առաքելոցի պատին արձանագրվելը տեղ է գտել նաև Սիթի իշխանուհու նորոգած Ս. Սարգիս եկեղեցուն:

Ուշագրավ է, որ այդ եկեղեցու մեկ այլ արձանագրության մեջ Սիթին, նշելով, որ նորոգել, վերաշինել է եկեղեցին իր անուսնու միջոցներով, նրա հոգու փրկության համար, նաև ավելացնում է, որ տեղի քահանաները պետք է պատարագ մատուցեն պատերազմում զոհված իր հարազատի՝ Ղարիբի համար («սպասաւորք սորա հատուցին էրկու ար պատարագ... յանուն հարազատին իմոյ կատարել Ղարիբին, սպանելոյն ի պատերազմի» (Դիվան, Ա, 55): Արձանագրության սկզբում նշված է ՌԾԹ (1210) թվականը, որը հավանորեն եկեղեցու վերանորոգման սկզբի տարին է, մինչդեռ, ինչպես տեսանք, Ղարիբը զոհվել է 1225-ին, ուստի արձանագրությունն էլ գրվել է այդ թվականից հետո, թերևս Գրիգոր եպիսկոպոսի արձանագրության գրության ժամանակ:

Գրիգոր եպիսկոպոսի անվան թվակիր վերջին հիշատակությունները 1232, 1233 և 1239 թվականներին (վերջինի ժամանակ նա արդեն մահացած էր), ցույց են տալիս, որ եղբոր մահից որոշ ժամանակ անց նա իր անվանն է կցել ժամանակին հոր, իսկ հետո նաև եղբոր կրած **մագիստրոս** պատվանունը: Այս երեք թվականների հիշատակարաններում նա կոչվում է **Գրիգոր Մագիստրոս**, որը ոմանց ենթադրել է տվել, թե եղել է այդպիսի մեկը որպես «իշխան Շիրակի» (Աճառյան, 1942, 574, Հովսեփյան, 1969, 8): Կ. Բասմաջյանը Գրիգոր Ա-ին կոչում է «փոքր Գրիգոր Մագիստրոս» (Բասմաջյան, 1931, 216, 225): Ն. Ակինյանը, որը Անիի Պահլավունիների վերջին շառավիղներին առավել հանգամանորեն անդրադարձած հեղինակն է, Գրիգորին նշում է միայն նրա Մագիստրոս մականունով՝ «Ապուղամր եւ որդիք Գրիգոր Մագիստրոս եւ Ղարիբ» (Ակինյան, 1956, 398) ենթավերնագրի տակ՝ վկայաբերելով Մարմաշենի վերը հիշված արձանագրությունը, Բազմայրի մի քանի արձանագրությունները, ինչպես և «Բազմայրի Ավետարանի» 1232թ. հիշատակարանը, բայց զանց առնելով Անիի բազմաթիվ արձանագրությունները, որոնցից ակնհայտորեն երևում է, թե Անիի արքեպիսկոպոս Աբուղամրի որդի Գրիգորը նույն Գրիգոր Մագիստրոսն է: Պարզապես նա Մագիստրոս է կոչվել եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի (վերջինս այդպես է անվանվում Մարմաշենի արձանագրության մեջ) մահից հետո:

1232թ. Ջաքարյանների քեռորդի Խոռասի պատվերով գրված «Բազմայրի Ավետարանի» գլխավոր հիշատակարանում նշվում է, որ մատյանը նվիրվել է Բազմայրի վանքին՝ «...ի Բազմայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյ **Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի, վերադիտող աթոռոյս Անւոյ...**» (ԺԳ, 179):

1233թ. Բագնայրի մի նվիրատվական արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թուխ ՈՉԲ (1233) շնորհիւն Քրիստոսի, ի տէրութեան տեղւոյս **Գրիգոր Մագիստրոսի, որդոյ Ապուղամրի...**» (Սարգիսյան, 1864, 185): Իսկ 1239թ. Անիի նոր եպիսկոպոս Ամիր Երկաթի որդի Բարսեղի արձանագրության մեջ ասվում է, որ քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցին իր համայնքով այնուհետև ևս պետք է պատկանի Մարմաշենին, ինչպես որ ժամանակին տնօրինել էր **Գրիգոր Մագիստրոսը, որն իր Ղարիբ եղբոր հետ միասին թաղված է այնտեղ.** «...ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ **առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ,** հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութենէս զՍուրբ Ստեփանոս՝ հայրենիք սուրբ ուխտին Մարմաշինոյ վանիցն, սխրատեսիլ Սուրբ Կաթողիկէին, **զոր Մագիստրոսն Գրիգոր շնորհեալ եւ հաստատեալ էր, ընդ որոյ հովանեաւ ինքն եւ եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի,** որպէս եւ իւր գրեալքն բացայայտեն» (Դիվան, Ա, 17):

Այսպիսով, ոչ մի կասկած չի մնում, որ **Աբուղամրի որդի և Ղարիբի եղբայր Գրիգոր Մագիստրոսը նույն Գրիգոր Ա եպիսկոպոսն է,** որն ինչպես Սարգիս Ա-ի մահից հետո Անիի աթոռն էր ժառանգել, այդպես էլ եղբոր մահից հետո «ժառանգել է» նրա **մագիստրոս** պատվանունը, թերևս նաև աշխարհական իրավասությունները: Ուշագրավ է, որ Գրիգորի որդիները արձանագրություններում հաճախ իրենց պարզապես կոչում են «Մագիստրոսի որդի», ուստի պետք է կարծել, որ **մագիստրոսը,** թեև այդ ժամանակ սկզբնական նշանակությամբ տիտղոսը չէր, բայց սոսկ պատվանուն էլ չէր, այլ ավելի շուտ ազնվական մեծատոհմության բարձր չափանիշ էր արտահայտում՝ ենթադրելով համապատասխան արտոնություններ:

Վերը նշված թվակիր արձանագրություններից բացի Գրիգոր Ա եպիսկոպոսն ունի նաև անթվական արձանագրություններ Զոռոմոսում և Լմբատավանքում: Առաջինը նվիրատվական բնույթ ունի և վկայում է, որ Գրիգորը Զոռոմոսի Ս. Զովհաննեսին է տվել, հավանաբար նախկինում վանքին պատկանած երեք գյուղ՝ «...ետու ի Սուրբ Յովանէս ընծա զիւր գեղջէիցն՝ զԱկնաց եւ զՇավթաի եւ զԱղբնագեղի զժողովրդութիւնն՝ յառաջնորդութեան Անդրեաս վարդապետին...» (Սարգիսեան, 1864, 151): Լմբատավանքում Գրիգորն ունի երկու արձանագրություն: Ավելի վաղ գրվածում

վանքը կոչում է իր «հայրենիքը», այսինքն՝ սեփականությունը և նշում նվիրատվությունները՝ «...ես տեր Գրիգոր, որդի Ապուղամրի Անույ եպիսկոպոս, տուհի զԱրդիք եւ զԲուենոյ զերիցութիւնն Լնբատա՝ իմ հայրենեաց, եւ նոքա տարին Ա(1) պատարագ ինձ տուին...» (Ալիշան, 1881, 165, Եղիազարյան, 1960, 50-57): Երկրորդ, ավելի ընդարձակ արձանագրությունը վկայում է, որ Լնբատավանքն արդեն անցել է Գրիգորի հորեղբայր տեր Բարսեղի իշխանության ներքո, վանքին է տրվել վերջինիս գանձագին Հայրենյաց Թաղք կոչվող գյուղը: Արձանագրությունը գրվել է մինչև 1225թ., քանի որ Գրիգորի եղբայր Ղարիբն այդ ժամանակ ողջ էր: Նրա անունից գատ այստեղ պահպանվել են Գրիգորի մոր (Աբուղամրի կնոջ)՝ Մահմլիքի, ինչպես և Լնբատավանքի վանահայր Առաքելի ու տանուտեր Ռուբենի անունները<sup>23</sup>:

Անիի անթվակիր արձանագրություններից մեկը (Ս. Առաքելոցի գավիթ), որը վերաբերում է քաղաքում քարոզելու եկած ու այստեղ մահացած «Գանձակեցի» միայնակյացի հիշատակին կատարվելիք պատարագին, նույնպես գրված է Գրիգոր եպիսկոպոսի կողմից («ես տեր Գրիգոր...», Դիվան, Ա, 26), բայց դժվար է որոշել՝ նա Աբուղամրի որդի Գրիգոր Ա-ն է, թե նրա թոռը՝ Գրիգոր Բ-ը:

Այսպիսով, վերը բերված նյութերը ներկայացնում են Գրիգոր Ա-ի բավականին լայն գործունեությունը՝ սկսած Արջո Առիճի վանահայրությունից (1213) մինչև Անիի ու Շիրակի արքեպիսկոպոսի պաշտոնում հանդես գալը (1215-1233): Ինչպես տեսանք, 1239-ին նա արդեն մահացել էր և թաղվել Մարմաշենում, իր սիրելի եղբոր՝ Ղարիբի շիրմի մոտ (ի միջի այլոց, Գրիգոր Ա-ի և նրա եղբոր՝ Ղարիբի մասին ուսումնասիրության բացակայության պատճառով Անիի վիմագրերի ժողովածուի անվանացանկում նույն Գրիգորը ներկայացված է որպես հինգ, իսկ Ղարիբը՝ երեք տարբեր մարդ (Դիվան, Ա, 132-133): Մարմաշենում պահպանվել է նաև Գրիգորի հիշատակը հավերժացնող հետևյալ անթվակիր արձանագրությունը. «Շնորհիւն Աստուծոյ այս արձան մշտընջենաւոր [Գրիգ]որոյ որդոյ Աբուղամրի, թոռին Վահրամա, որ հաստատեալ ի սկզբանէ զկաթողիկէ եկեղեցի: Յիշեսցի: Ամէն» (Օրբելի, 1963, 447):

Բարձրաստիճան հոգևորական արքեպիսկոպոս լինելով հանդերձ Գրիգորն ամուսնացած է եղել, մի բան, որն այն ժամանակ արտառոց չէր (Գոշ, 1975, 50, 320, Վավերագրեր, 1994, 253): Իսկ Գրիգորի որդի Աբու-

ղամրի 1262 թ. արձանագրության մեջ պահպանվել է նրա մոր (Գրիգոր Ա-ի կնոջ) անունը՝ Մամքան (Ակինյան, 1956, 402, տե՛ս նաև հաջորդ էջի ներդիրը): Գրիգորն ունեցել է երեք զավակ՝ Սարգիս, Աբուղամր, Վահրամ անուններով, որոնցից առաջինը դարձել է Անիի եպիսկոպոս, բայց թե որ թվականին է հորը հաջորդել, անհայտ է: Համենայն դեպս 1239-ին որպես Անիի եպիսկոպոս՝ առաջնորդ, հիշվում է Ամիր Երկաթի որդի Բարսեղը (Բարսեղ Գ): Երկաթը Անիի ամիրայի պաշտոնում հիշվում է միայն մեկ անգամ՝ 1220թ. Սարգիս Ա-ի արձանագրության մեջ: Պաշտոնի անվանումը հետագայում այնքան է կապվել նրա անվանը, որ երբ այլևս ամիրա չէր, դարձյալ հիշվում է Ամիր Երկաթ ձևով (ուստի պահպանում ենք գրության այդ կերպը):

Բարսեղը միաժամանակ եղել է Հռոմոսի վանքի վանահայրը և որպես այդպիսին տեղի արձանագրություններում հիշվում է 1229-1253 թվականներին, սակայն այդ ամբողջ ժամանակ Անիի եպիսկոպոսը չէր: Մասնավորապես, մինչև 1233 թ., ինչպես վերը տեսանք, հիշվում է Գրիգոր Ա-ն, իսկ 1245 թ., երբ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի շրջաբերականով Հայաստան է գալիս Վարդան Արևելցին, նրան ընդունած եպիսկոպոսների թվում հիշվում է Սարգիս Բ-ը՝ «եպիսկոպոսն Անույ» (Գանձակեցի, 1961, 310):

Եթե առաջին արձանագրության մեջ՝ 1229 թ. Բարսեղը հանդես է գալիս միայն որպես Հռոմոսի վանահայր, ապա 1231-ին հիշվում է արքեպիսկոպոսի կոչումով (Սարգիսյան, 1864, 153): Սուկ Հռոմոսի վանահայրը լինելու դեպքում դժվար թե Բարսեղին արքեպիսկոպոսության պատիվ տրվեր: Հնարավոր է, որ այդ ժամանակից սկսած նա Անիի երկու եպիսկոպոսներից մեկն էր: Ուշագրավ է, որ Բարսեղի՝ Անիում պահպանված 1239 թ. միակ արձանագրության մեջ (որը նաև միակ արձանագրությունն է, ուր նա Անիի եպիսկոպոս է համարվում), նա կոչվում է **առաջնորդ**. «...Ես Բարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ, առաջնորդ մայրաքաղաքիս Անույ...» (Դիվան, Ա, 17): Դրանից հետո Բարսեղի անվանը հանդիպում ենք միայն Հռոմոսի արձանագրություններում որպես վանահոր:

Այդ ընթացքում տեղի է ունենում Անիի պատմության ճակատագրական իրադարձություններից մեկը՝ 1236 թ. քաղաքը գրավվում ու ավերվում է մոնղոլների կողմից: Ինչպես Կիրակոս Գանձակեցին է վկայում, բարբարոսները կողոպտում են բոլոր եկեղեցիները, կոտորում մեծ թվով քաղաքացիների, այդ թվում հոգևորականների. «...մտեալ ի քաղաքն... կողոպտեցին եւ զամենայն

եկեղեցիս, աւերեցին ու քանդեցին զամենայն քաղաքն...: Անդ էր տեսանել տեսիլ ողորմագին... քահանայն եւ սարկաւագունք եւ պաշտօնեայք եկեղեցականք... ցիր ու ցան անկեալք ընդ երեսս դաշտացն...» (Պանծակեցի, 1961, 258-259):

Մոնղոլների գերիշխանությունն ընդունած Ջաքարյանները թեև որոշ ընդհատումներով քաղաքում պահպանում են իրենց իշխանությունը, սակայն այդ ժամանակից սկսած ծաղկուն Անին աստիճանաբար վայրէջք է ապրում: Քաղաքի եպիսկոպոսությունը ևս կորցնում է իր նախկին առաջատար դերը, իսկ այդ դարավերջին Հայոց եպիսկոպոսական աթոռների մեջ կրկին իր ավագությունն է վերականգնում Սյունյաց հնավանդ աթոռը, բարգավաճում են նաև Հաղբատի, իսկ ավելի ուշ՝ Բջնիի եպիսկոպոսությունները: Այս առնչությամբ Մ. Օրմանյանը գրում է. «Ժամանակ է մը ի վեր Անիի եպիսկոպոսներն էին, որ գերագոյն դիրք ստացած էին Հայաստանի մէջ, մինչ հնաւանդ սովորութեամբ Սիւնեաց եպիսկոպոսն էր, որ նախաթոռ դիրք ուներ Հայ եպիսկոպոսութեան մէջ: Բայց Անին հետզհետէ կորուսած էր իր կարեւորութիւնը, եւ Սիւնիքի դիրքը նորէն բարձրացած էր Օրբելեաններուն՝ Սմբատի եւ Տարսայիճի շնորհիւ» (Օրմանյան, 1959, 1701):

Անիի ու նրա շրջակայքի մոնղոլներից կրած ավերածության հետևանքները բավական խորն են եղել: Մասնավորապես, նրանց ներխուժումից տաս տարի անց Հռոմոսուն Աշոտ Դսեղեցու նվիրատվական արձանագրության մեջ կարդում ենք. «ՈՂԵ (1246)... ի թագաւորութեան Հայոց եւ Վրաց Դաւթի եւ ի սպասաւարութեան Շահնշահի որդո մեծին Ջաքարիայի եւ յառաջնորդութեան տեառն Բարսղի արքեպիսկոպոսի որդո Ամիր Երկաթա. ես Աշոտ Դսեղեցի... միաբանեցա Սուրբ Յովանիսի ի նեղ եւ ի չար ժամանակիս, յետ կործանման տաթարին, մինչ էր վանքս ի նեղութեան, ետու զամենագոյ վւետարան... եւ այլ զինչ Աստուած պատրաստէ: Ես տէր Բարսեղ եւ Սարգիս վարդապետս եւ այլ եղբարքս ընգալաք զնա իբրեւ զմի ի պատրոնաց մերոց...» (Սարգիսյան, 1864, 154):

Բարսեղը հիշվում է նաև Հռոմոսի 1247, 1250, 1251, 1253 թթ. նվիրատվական արձանագրություններում (Սարգիսյան, 1864, 146, 154, 156, 157): Սակայն նրա տոհմական ճյուղը Անիի հոգևոր իշխանության մեջ այլևս չի շարունակվում, մինչդեռ Աբուլղամբենց (Մագիստրոսենց) ճյուղն ունեցել է անմիջական շարունակություն՝ հանձնիս Գրիգոր Ա-ի որդի Սարգիս Բ եպիսկոպոսի («տէր Սարգիս, որդի Մաքիստոսին», Դիվան, Ա, 19): Նրա եղբայր



Աբուղամրը («որդի Մագիստրոսին») հիշվում է Բագնայրի 1261, 1262 թթ. արձանագրություններում (Սարգիսյան, 1864, 186, 188): Սրա որդին էր ԺԳ դարի վերջերին Անիի եպիսկոպոս դարձած Յովհաննեսը: Մարնաշենի մի արձանագրությունից երևում է, որ Սարգիս Բ-ի և Աբուղամրի «իշխան Վահրամ» եղբայրը վաղ է մահացել՝ «կիսարեայ ժամանակաւ փոխ[եցաւ առ Աստուած]» (Օրբելի, 1963, 447, Ակինյան, 1956, 401):

Սարգիսը, որպես Անիի եպիսկոպոս, ինչպես վերը նշեցինք, առաջին անգամ հիշատակվում է 1245 թ., երբ այլ եպիսկոպոսների պես ընդունել է կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու շրջաբերականը բերող Վարդան վարդապետին: Սակայն մինչև այս եպիսկոպոսի գործունեությանն անդրադառնալը հարկ է մի քանի խոսք ասել վերոհիշյալ շրջաբերականի մասին, մանավանդ, որ այն իր ուղղակի արտացոլումն է գտել Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի արձանագրություններից մեկում:

Յոռնկլայուն աթոռակալող Կոստանդին Բարձրբերդցին, անհանգստացած Յայոց եկեղեցիների զգալի մասում տիրող անկանոն իրավիճակից, հոգևորականության մի մասի թերացումներից, 1243-ին Յեթում Ա թագավորի կամակցությամբ Սսում գումարում է եկեղեցական ժողով՝ Կիլիկիայի բարձրաստիճան հոգևորականության մասնակցությամբ: Քանի որ հայաստանցիներին հրավիրելու հնարավորություն չկար, ժողովն ընդունում է եկեղեցական կյանքը կարգավորող 25 կետից բաղկացած մի որոշում՝ «Սահմանք կանոնականք», որի սկզբում կաթողիկոսը զետեղում է Յայաստանի եկեղեցիներին ու հոգևորականությանը հասցեագրված իր ուղերձը: Այստեղ նա նշում է, որ մտադիր էր անձամբ այցելել գավառները, բայց չի կարողացել, ուստի ուղարկում է շրջաբերականը, որպեսզի տեղում հոգևոր պետերը ստորագրությամբ հաստատեն ժողովի ընդունած կանոնները և դրանցով առաջնորդվեն (Գանձակեցի, 1961, 303):

Կաթողիկոսի պատգամաբեր Վարդան Արևելցին Յայաստան է գալիս 1245թ., շրջում է անհրաժեշտ տեղերը և եպիսկոպոսների ու վանահայրերի հավանության ստորագրություններ հավաքում. «Եւ եկեալ վարդապետն Վարդան... շրջել ընդ գաւառս Յայոց, յեպիսկոպոսս եւ ի վանորայս եւ յիշխանս եւ տուեալ ամենեցուն զՅրամանս կանոնականս եւ պահանջել յամենեցունց ձեռագիր հաւանութեան սահմանին եղելոյ: ...ետուն ձեռագիր եղմամբ... եպիսկոպոսն Կարնոյ քաղաքիս Սարգիս, **եւ եպիսկոպոսն Անւոյ միւս Սարգիս**, եւ եպիսկոպոսն Կարուց Յակոբ, եւ

եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանական եւ Գրիգոր, եւ եպիսկոպոսն Անբերդոյ՝ Մկրտիչ, եւ եպիսկոպոսն Յաղբատայ Յամագասպ եւ այլ եպիսկոպոսքն... եւ գլխաւոր վանորայքն՝ Սանահինն, եւ Գետիկ, եւ Յաղարծինն, եւ Կեչառուս, եւ Յաւուց Թառ, եւ Այրի վանք, եւ Յովհաննու վանք եւ Սաղմոսայ վանք, եւ **Յոռոմոսի վանք, եւ որ շուրջ գնորօք**» (Գանձակեցի, 1961, 310):

Բուն կանոնները, որոնց 25 կետերը Ս. Օրմանյանը բաժանում է հինգ հիմնական խմբի (կանոնական, բարեկարգական, բարոյական, քահանայից, զիջողական, տես Օրմանյան, 1959, 1627-1633) նպատակ ունեին եկեղեցին ու նրա սպասավորներին զերծ պահել անօրինականություններից ու չարաշահումներից, վերականգնել եկեղեցական կյանքի կանոնականությունն ու բարոյական չափանիշները:

Անհում խնդիրը միայն եպիսկոպոսի տված ստորագրությամբ չի ավարտվում, այլ Շահնշահ Ա-ի ցուցումով Ս. Առաքելոցի պատին փորագրվում է հետևյալ արձանագրությունը. «Թուականին Զ (1251) շնորհին Աստուծոյ եւ հրամանաւ տեառն Կոստանդեայ Յայոց կաթողիկոսի եւ մեծին ամիրսպասալար Շահնշահի արձանագրեցաւ Առաքելական կանոնքս, որ թէ որ յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երեց առնէ, կամ առանց ճշդիւ եւ յոյժ ընտրութեան, դատի յԱստուծոյ, եւ ընդ նզովաւք լինի յերիս սուրբ ժողովոյն...» (Դիվան Ա, 15): Այստեղ իրենց արտահայտությունն են գտել Կոստանդինի շրջաբերականի առաջին և չորրորդ կետերը, որոնցից մեկում ասվում է, թե միայն արժանավորները պետք է ձեռնադրվեն և «առանց արձաթոյ», իսկ մյուսում պահանջվում է, որ նրանք համապատասխան պատրաստություն ունենան «ուսմամբ եւ սրբութեամբ», ձեռնադրվելիս քահանաները քսանհինգ և սարկավագները՝ քսան տարեկանից պակաս չլինեն (Գանձակեցի, 1961, 303-304): Անիի արձանագրության հեղինակները տարիքային մանրամասներ չեն շեշտում, այլ բավարարվում են «անմիրու» ձևակերպմամբ:

Սակայն ավելի ուշագրավ է, որ **ոչ արձանագրության սկզբում, ոչ էլ վերջում չի նշվում քաղաքի եպիսկոպոսի անունը**, որը, թվում է, թե պետք է միանար կաթողիկոսի հորդորին: Կոստանդինի շրջաբերականի հիման վրա 1251 թ. համանման արձանագրություններ են գրվել նաև Մրենում ու Բջնիում. առաջինում հիշվում է վանահայր Գրիգորը, երկրորդում՝ տեղի եպիսկոպոսներ Վանականն ու Գրիգորը (Կոստանյանց, 1913, 95-96): Իսկ Անիում, ինչպես տեսնում ենք, շեշտվում է միայն Շահնշահ Ա-ի

անունը: Այստեղ տեղին է հիշել Գանձակեցու այն վկայությունը, թե կաթողիկոսի նվիրակ Վարդան Արևելցուն այնքան էլ ջերմորեն չընդունեցին վարքի մեջ թերացած եպիսկոպոսները, բայց և չհամարձակվեցին նրա պահանջը մերժել, այլ առերես ընդունեցին. «Եւ զի ամենայն ոք խոտորեալ էր ի ճշմարտութենէն՝ ըմբռնեալք ախտիւ ազահութեան եւ արծաթսիրութեան, ծանր թուեցաւ Յրամանն (կաթողիկոսին), բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ ի վերին երեսս մեծարեցին...» (Գանձակեցի, 1961, 310): Անիում, ուր առևտրատնտեսական ու վաշխառուական հարաբերությունների խորացմանը զուգահեռ տեղի էր ունենում բարքերի անկում և դրամը դառնում էր ամենագոր, բնական է, ավելի շատ պետք է լինեին թերացումները եկեղեցու կանոնների նկատմամբ և այստեղ առավել դժկամությամբ պետք է ընդունեին կանոնական պահանջների ամեն մի խստացում ու բարոյախոսություն<sup>24</sup>:

Ս. Առաքելոցի վերոհիշյալ արձանագրությունը, մեր կարծիքով, մի նոր ակնարկ է պարունակում Անիում երկու եպիսկոպոսների գոյության մասին, այն հատվածում, ուր ասվում է. «...որ թէ ոք **յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց** կաշառաւք կամ անմիրու երեց առնէ...»: Առաջին հայացքից կարող է թվալ, թե որպես առաջնորդներ նկատի են առնված վանահայրերը՝ վանական միաբանությունների առաջնորդները, բայց այդ ժամանակ Անիի ու նրա մերձակա վանքերի մեծագույն մասում վանահայրեր էին վարդապետները կամ ավագերեցները, որոնք, ըստ կարգի, քահանա ձեռնադրելու իրավունք չունեին, մի իրավունք, որը պատկանում է եպիսկոպոսին (Գոշ, 1975 292-293): Բացի այդ, արձանագրությունն Անիում է գրվել և առաջին հերթին նկատի ունի քաղաքը, նրա **եպիսկոպոսին ու առաջնորդին**, որոնց էլ վերապահված էր երեց ձեռնադրելու իրավունքը: Հատկանշական է, որ Կոստանդին կաթողիկոսի շրջաբերականի հիման վրա 1251 թ. Մրենում գրված նույնիմաստ արձանագրության մեջ եպիսկոպոսի հետ առաջնորդ չի նշվում. «Եթէ ոք **յեպիսկոպոսաց** կաշառաւք ե[րեց] առնէ, կամ անմիրու, կամ առանց ընտրութեան, մասն Յուդային առցէ...» (Օրբելի, 1974, 40, Կոստանյանց, 1913, 95):

Այժմ վերադառնանք Սարգիս Բ-ի գործունեությանը, որի անվան հաջորդ թվակիր հիշատակությունները գտնում ենք Բագնայրում՝ 1262 թ. երկու արձանագրություններում: Դրանցից մեկը Գարեգին երեցի, մյուսը՝ Խոռաս կրտսերի նվիրատվական արձանագրությունն է: Առաջինը

սկսվում է հետևյալ կերպ. «ԶԺԱ (1262) ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղոյս...» (Սարգիսյան, 1864, 187), իսկ երկրորդում Սարգիսը («Ես տէր Սարգիս...») Բագնայրի վանահայր Աբրահամի և Զովսեփ փակակալի հետ պարտավորվում է նվիրատուի համար համապատասխան պատարագներ մատուցել (Սարգիսյան, 1864, 187):

Սարգիս Բ-ը մի շարք անթվական արձանագրություններ ունի Անիում: Դրանցից մեկում նա խոսում է «պսակի թույլտվությունն ստանալու պարտավորությունը հարսի հարազատներից վերցնելու և փեսայի հարազատների վրա դնելու մասին» (Ավագյան, 1978, 162)՝ սահմանելով նոր կարգ. «...Ես տէր Սարգիս, որդի Մաքիստոռոսին զայս հաստատեցի. սահման էր ի սկզբանէ, որ հարսն առնուր զհրամանն. շատ խեղճ եւ անպատեհ բան լինէր. զայս հաստատեցի, որ կտրիճն առնու զհրամանն եւ այլ բռնապսակ առնել ոչ ունի որ իշխանութիւն...» (Դիվան, Ա, 19): Արձանագրությունը տարբեր կերպ են մեկնաբանել Դ. Օրբելին (Դիվան, Ա, VII) և Ս. Բարխուդարյանը (Բարխուդարյան, 1971, 90-92):

Հաջորդ արձանագրությունը, ուր Սարգիսը հիշվում է որպէս Անիի **առաջնորդ**, վերը քննված՝ երկրաշարժի վտանգի պատճառով փողոցում կիրակնօրյա վաճառքն արգելող արձանագրությունն է՝ գրված Մխիթար Տեղեբցի եպիսկոպոսի անունից, որը փաստորեն հանդես է գալիս որպէս քաղաքի երկրորդ եպիսկոպոս: Արձանագրությունը գրվել է ԺԳ դարի 70-ական թվականներին, Փախրադիցի մելիքության ժամանակ, բայց հետաքրքիր է, որ այստեղ Սարգիսը համարվում է նաև քաղաքի իրավական իշխողը. «... ի տէրութեան եւ յառաջնորդութեան տէր Սարգսի եւ ի մելիքութեան Փախրադիցին...» (Դիվան, Ա, 24): Ցավոք, Անիի այս շրջանի քաղաքական պատմությունը թերի է ուսումնասիրված, ուստի դժվար է ասել, թե ինչ հանգամանքներում և ինչ չափով է Սարգիսը մասնակցել քաղաքի վարչական կառավարմանը, կամ ինչպիսի դիրք գրավել աշխարհական կառավարման համակարգում: Կարելի է միայն ենթադրել, որ լինելով «որդի Մագիստրոսի» Սարգիսը ունեցել է նաև տոհմական իրավունքներ ու որոշ աշխարհական լիազորություններ, որոնք էլ հիմք են տվել նրան ինչ-ինչ հանգամանքներում իր «տէրութեան» տակ առնել քաղաքը: Այս հարցը կարոտ է ավելի մանրակրկիտ քննության:

Անմիջապէս վերոհիշյալ արձանագրության տակ Սարգիսը թողել է մեկ այլ արձանագրություն, ուր նա կոչվում է եպիսկոպոս՝ «Շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս եպիսկոպոս...»:

Արձանագրությունը վնասված է, բայց պահպանված հատվածներից երևում է, որ այն վերաբերում է ամուսնական հարցերի կարգավորմանը (Դիվան, Ա, 25):

Սարգիսը հիշվում է նաև Ս. Առաքելոց եկեղեցու զավթի սալահատակմանը վերաբերող արձանագրության մեջ՝ «...**ի յառաջնորդութեան քաղաքիս** Անո տէր Սարգսի ես Առիւծս Յոզեւորեանց... սալեցի զժամատունս» (Դիվան, Ա, 20): Թեև արձանագրության թվականը չկա, բայց համոզված կարելի է ասել, որ այստեղ Սարգիս Բ-ն է հիշված (և ոչ Սարգիս Ա-ը), քանի որ Յոզեւորեանց Առիւծը հիշատակվում է նաև Յոռոմոսի 1251 թ. մի արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 156): Իսկ Անիի Ս. Գրիգոր (Խաչուտի կամ Բախտաղեկի) եկեղեցու բեմի ճակատին գրված ԺԳ դարի արձանագրության մեջ հիշվող Սարգսի անձը դժվար է ճշտել, քանի որ գրությունը թերի է («[յառաջնորդութեան քաղաքիս Անո տէր Սարգսի...» (Դիվան Ա, 61), բայց առաջնորդի անվան հիշատակման ձևը նույնն է նախորդի հետ, ուստի կարելի է կարծել, որ այստեղ ևս հիշված է Սարգիս Երկրորդը (մանավանդ՝ բուն արձանագրությունն էլ ԺԳ դարի կեսերի արձանագրություններին բնորոշ ոճ ունի):

Սարգիս Բ-ի մահվան թվականն անհայտ է: Նրանից հետո 1277թ. Անիում հիշվում է Գրիգոր Բ եպիսկոպոսը, որը, ինչպես պարզվում է Մարմաշենի մի անթվական արձանագրությունից, Սարգսի եղբոր որդին էր՝ «ես տէր Գրիգորս եղբարորդի տեառն Սարգսի ետու զիմ սուրբ մշանս ի սուրբ ուխտս Մարմաշինի եւ փոխարէն հատուցման զՎարդեաւարին քառասունքն եւ զԽաչ ութարէքն մինչ ես կենդանի եմ տեառն Սարգսի. եւ յետ վախճանին՝ ինձ» (Օրբելի, 1963, 445): Ն. Ակինյանը, արձանագրության թերի վերծանությանը ծանոթ լինելով, կարծել է, թե Գրիգորը Սարգսի որդին է (Ակինյան, 1956, 401): Հայտնի է, որ Սարգսի եղբայրներից մեկի՝ Աբուղամրի որդի Յովհաննեսը հետագայում Անիի եպիսկոպոսը դարձավ, հավանական է թվում, որ Գրիգորը Սարգսի մյուս եղբոր՝ իշխան Վահրամի որդին է:

Գրիգոր Բ-ի Անիում թողած միակ արձանագրությունը (Ս. Առաքելոց եկեղեցի) գրված է Փախրադինի պարոնության շրջանում՝ 1277 թ. և վերաբերում է ամուսնալուծության դեպքում կողմերից յուրաքանչյուրին տրվող ունեցվածքի չափին: Նշելի է, որ Գրիգորն իր որոշումը կայացրել է ոչ միայն Փախրադինի, այլև քաղաքի քահանաների «կամակցությամբ»: «Թվին ԶԻԶ (1277) Շնորհիւն Աստուծոյ **ես տէր Գրիգոր արքեպիսկոպոս մայրաքաղաքիս Անույ, կամակցութեամբ պատրոն Փախրադինին եւ**

**քահանայից քաղաքացեացս** արձանագրեցաւ ի վերա եկեղեցոյս. եթէ այր զկին թողու Դ (4)-իցն Ա (1) զինչ բաժինք լինի տա նմա. եւ թէ կին՝ զայրն՝ Դ (4)-իցն Ա (1) տա յերկն: Եթէ ոք հակառակ կա գրոյս, դատի յԱստուծոյ» (Դիվան, Ա, 15): Ինչպէս տեսնում ենք, իր նախորդի՝ Սարգիս Բ-ի պէս Գրիգորը ևս լրջորեն մտահոգված է եղել ամուսնական հարցերի կարգավորման խնդրով և օրինակարգող ձեռնարկների դիմել: Գրիգոր Բ եպիսկոպոսի վերաբերյալ այլ տեղեկություններ չեն պահպանվել:

ԺԳ դարի վերջերին և ԺԴ դարի սկզբներին Անիի եպիսկոպոսն է եղել Սարգիս Բ-ի եղբայր Աբուղամրի որդի Յովհաննես Ա-ը: Նրա անվան առաջին հիշատակությունը պահպանվել է 1298 թ. Անիի Ներքին բերդում Եղբայրիկ գրչի ձեռքով ընդօրինակված և Արջո Առիճի վանքին ընծայաբերված մի Ավետարանի հիշատակարանում, որի վերջում կարդում ենք. «...գրեցաւ սա ի քաղաքիս Անո, ի բերդս Ներքի կոչեցեալ... ի պարոնութեան ամիրսպասաւար Շահնշահի (Շահնշահ Բ, Կ. Ս.) եւ **եպիսկոպոսութեան տեառն Յոհաննիսի**, ի տէրութեան Արջեւառճո Մագիստրոսենց տէր Յոհաննիսի եւ Ամիրին՝ որդո Փախրադինին» (ԺԳ, 817-818): Այստեղ նշված Արջո Առիճի հոգևոր առաջնորդ «Մագիստրոսենց տէր Յոհաննէսը» հավանաբար Յովհաննես եպիսկոպոսի տոհմակիցն էր:

Երկրորդ անգամ Յովհաննես եպիսկոպոսը հիշվում է «Բագնայրի Ավետարանում» Գեորգ Ներսիսանցի պատվերով Գելանի որդի Ստեփանոսի Բագնայրում 1308 թ. գրած արժեքավոր հիշատակարանում՝ «...գրեցաւ յիշատակարանս... ԶԾԷ (1308) ամիս, ի **հայրապետութեանս մերոյ նահանգիս Շիրակ գաւառիս՝ հեզի եւ մարդասիրի տէր Յոհաննիսի որդոյ Ապուղամրի՝ իշխեցող տեղոյս...**» (Յովսեփյան, 1951, 891): Յովհաննեսն առանձնակի գովեստով է հիշվում նաև 1313 թ. մեկ այլ Ավետարանի հիշատակարանում, գրված Յակոբ գրչի ձեռքով Շիրակի Մագվոյս կոչված բնակավայրում. «...գրեցաւ... ի **հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Յոհաննիսի մեծի, որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցոյ եւ ի յազգէ Լուսաւորչին Յայաստանեայց**» (Կ. Ս., 1985, 110): Ուշագրավ է, որ վերջին երկու հիշատակարաններում Յովհաննեսի վարած հոգևոր իշխանությունն անվանվում է «**հայրապետություն**», իսկ նա ներկայացվում է որպէս եռանդուն գործիչ:

Յովհաննեսի եպիսկոպոսության շրջանում տեղի ունեցած Յայոց եկեղեցական կյանքի կարևոր իրադարձություններից էր 1307 թ. Սսի ժողովը: Այն հրավիրել էին Կիլիկիայի Յեթում Բ լատինամետ թագավորահայրը և տասնութամյա Լևոն Դ-ը, Գրիգոր Զ Անավարզեցի կաթողիկոսի հորդորով (վերջինս մահացավ մինչև ժողովի գումարումը)՝ նպատակ ունենալով պապական Արևմուտքին դավանաբանական զիջումներ կատարել՝ ռազմաքաղաքական օժանդակություն ստանալու ակնկալությամբ: Մեկ օրում ավարտված այդ ժողովը թագավորի ու Յեթումի ճնշմամբ ընդունում է Յայաստանյայց եկեղեցու դավանաբանությունը մերժող որոշումներ (անգամ՝ Քրիստոսի՝ «զերկու բնութիւնս եւ զկանս եւ զներգործութիւնս» և այլն): Ժողովի ու ժողովականների մասին պատմող Կղեմես Կալանոսը, որը նշում է, թե հին վավերագրերից է օգտվել, ներկա եղած 26 եպիսկոպոսների անունների մեջ կիլիկյան ու սահմանակից շրջանների եպիսկոպոսներից բացի հիշատակում է չորս հայաստանցիների՝ «Յովհաննէս Մարանդունեաց, Կարապետ՝ Մեծկերտի, Վարդան՝ Անիի եւ Փիլիպոս՝ Խործեանի» եպիսկոպոսներին (Օրմանյան, 1959, 1785):

Ինչպես տեսանք, Անիի Յովհաննէս Ա եպիսկոպոսը հիշվում է 1298, 1308, 1313 թթ., իսկ Վարդան անունով Անիի եպիսկոպոս այլ աղբյուրներից հայտնի չէ: Շատ հնարավոր է սակայն, որ նույն այս Վարդանն է 1320 թ. հիշատակված Մրենում, ոմն Իվանիկի արձանագրության մեջ («...պարոնութեամբն Սարգսի... եւ **ի հայրապետութեան ի տէր Վարդան**, ես Իւանիկս...», Օրբելի, 1974, 38) և որ Յովհաննէս Ա-ի աթոռակալության շրջանում նա հանդիսանում էր **Անիի երկրորդ եպիսկոպոսը**: (Վարդանը, որպես Մրենի եպիսկոպոս հիշվում է 1299-ին՝ ԺԳ, 848 - *լրացում թվայնացված տարբերակում - Կ.Մ.*): Յայաստանցի ժողովականների վերաբերյալ Մ. Օրմանյանը հետևյալ դիտողությունն է անում. «Այս չորսերը (եպիսկոպոսները, Կ. Մ.) Յայաստանի ներկայացուցիչներ պետք է համարուէին, սակայն Մարանդունի գաւառ չունինք, միայն Մարանդ գիւղ մը կը գիտցուի, իսկ Անիի արքեպիսկոպոս ըսուածը, եթէ բուն Անիի արքեպիսկոպոսն ըլլար, 25-րդ տեղը չէր թողուեր (ժողովականների ցանկում, Կ. Մ.)» (Օրմանյան, 1959, 1785): Ինչպես ասացինք, հնարավոր է, որ Վարդանը Անիի երկրորդ եպիսկոպոսն էր՝ երեցապետը: Երկրորդ

ենթադրությունն անհավանական է, քանի որ 1317 թ. Ադանայի ժողովում հիշվում է Մարանդունյաց մեկ այլ եպիսկոպոս (նշանակում է, այսպիսի թեմ եղել է՝ հավանաբար ընդգրկելով Վասպուրականի Մարանդ գավառը), իսկ Վարդանի՝ Անիի երկրորդ եպիսկոպոս և ժողովին ուղարկված պատվիրակ լինելը միանգամայն հնարավոր է:

Սակայն ավելի էական է, որ ոչ նշված Յովհաննեսը, ոչ էլ Անիի Վարդանը ժողովի որոշման տակ չեն ստորագրել՝ բոլոր ժողովականների մեջ բացառություն կազմելով: Կալանոսը, որը սկզբում նշում է, թե ժողովին մասնակցել է 26 եպիսկոպոս, այնուհետև գրում է, որ նրա որոշումները հաստատել են 36 եպիսկոպոսներ՝ դրանց թվում հիշատակելով ևս 11 հայաստանցիների (Երզնկայի, Բաբերդի, Կամախի, Բասենի, Սասունի, Օծոփի և այլ վայրերի եպիսկոպոսներին): Այս կապակցությամբ Մ. Օրմանյանն իրավացիորեն գրում է. «...աւելի մեծ տարբերութիւնը Յայաստանի եպիսկոպոսներուն մէջն է, որոնցմէ կը պակսին Մարանդունեաց եւ Անիի եպիսկոպոսները եւ աւելցուած են 11 նոր անուններ... քանի որ ստոյգ բացատրութիւն չկայ, կրնանք ըսել, թէ պակաս եղողները չհաւնելով մեկնողներն են, իսկ աւելցուածներ՝ վերջէն հասնելով կամ ձեռնադրուելու գալով ստորագրելու պարտաւորուեր են» (Օրմանյան, 1959, 1786):

Այն փաստը, որ ժողովի որոշման դեմ, չնայած թագավորական ճնշմանը, հենց տեղում ընդդիմացողներ են եղել, երևում է նաև Մովսես Երզնկացի վարդապետի վկայությունից, որը գրում է. «Նոյն ինքն ի տեղին բազումք հակառակեցան եւ դեռ տակաւին եւս հակառակին...» (Անեցի, 1893, 298 ծանոթագրություն): Այսպիսով, անեցիներն այս անգամ ևս հավատարիմ են մնացել իրենց նախնյաց որդեգրած ավանդապահության սկզբունքին (հիշենք Բարսեղ Բ Անեցու անհաշտ ընդդիմությունը Յռոմկլայի դավանական գիշողականության նկատմամբ): Իսկ Սսի ժողովը, որ Մ. Օրմանյանի դիպուկ բնութագրմամբ՝ թագավորական պարտադրանքով կայացած «անգլուխ ու անկանոն համախմբում էր» (Օրմանյան, 1959, 1791), մեծ վրդովմունք առաջացրեց Յայաստանում: Գուցե այս է պատճառը, որ Անիի Յովհաննես եպիսկոպոսը 1308 և 1313 թվականներին հիշատակվում է որպես «հայրապետ»՝ ընդգծելով իր ինքնիշխանությունը Սսի Աթոռի նկատմամբ, մանավանդ, որ նորընծա կաթողիկոս Կոստանդին Դ Կեսարացին Սսի ժողովի որոշումները տարածելու հանձնառուն դարձավ, իսկ ընդդիմացողների շարքերը ստվարացան հանձին Սյունյաց աթոռի,



Գլաձորի վարդապետարանի ու ժամանակի Հայոց նշանավոր վարդապետների:

Հովհաննես Եպիսկոպոսի անվանը վերջին անգամ հանդիպում ենք Անիում, քաղաքի ավագ դռան մուտքից վեր տեղադրված մեծ արձանագրության մեջ: Այն թվական չունի, բայց տեղեկացնում է, որ այդ ժամանակ Անին դարձել է մոնղոլական տերության «խաս ինջու» (արքունի սեփականություն): Անին «խաս ինջու» է դարձել Աբու Սայիդ խանի (1319-1335) ժամանակ, հետևաբար արձանագրությունն էլ այդ շրջանից պետք է համարել (Ժամկոչյան, 1955, 109): Ցավոք, Անիի «խաս ինջու» դառնալու որոշակի թվականը չի ճշտված: Աբու Սայիդի Անիում թողած 1330 թ. հրովարտակ-արձանագրությունը, որով փորձ է արվում սանձել հարկահավաքների կամայականությունները, կանխելու համար բնակչության լայնածավալ արտագաղթը, որևէ ուղղակի նշում չի պարունակում այն մասին, որ հենց այդ ժամանակ է քաղաքն արքունի սեփականություն դարձել (Մուրադյան, 1977, 58-59): Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հատորում այս մասին ասվում է. «1319 թ. Անին տուժել էր երկրաշարժից. Շահնշահ Բ-ը քաղաքի վիճակը թեթևացնելու նպատակով դիմում է Աբու Սայիդ խանին, իսկ վերջինս հավանաբար նույն՝ 1319 թ.՝ այն դարձնում է «խաս-ինջու» (ՀԺՊ, 1976, 642):

Արձանագրությունը հետևյալն է. «Գթութեամբ մարդասիրին եւ անմահ Բանին Աստուծոյ եւ վասն յերկարկենդանութեան արքայից արքային աստուածադիր փաթշահին... որ եղեւ մայրաքաղաք Անի խասինջու, եւ ի տերութեան քաղաքիս աստուածասէր պատրոնացն Գրիգոր աղին եւ Յովհաննիսի եւ յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի ողորմածն Աստուած հայեցաւ ի դժուարութիւն քաղաքիս եւ խորհուրդ բարի ծագեաց ի սրտիս պարոնացն Գրիգորի եւ Յովաննիսի, որ զքաղաքս մեր նորոգեալ շինեցին եւ զամենայն հարկապահանջութիւն եբարձին... եւ զԱթռռին հարկն, որ յետոյ ի չարաց դրած էր զկապալն յեպիսկոպոսէն բարձին, եւ յառաջին սահմանս դարձուցին» (Դիվան, Ա, 1, հմմտ. Ավագյան, 1978, 15): Սույն արձանագրությունից ելնելով՝ որոշ ուսումնասիրողներ ենթադրել են, թե բազմաթիվ այլ հարկերի թվում Անիում արհեստականորեն ուռճացված է եղել նաև եպիսկոպոսական աթոռին տրվող հարկը, որը և վերադարձվել է նախկին չափին, սակայն Ս. Ավագյանը համապատասխան քննությամբ ցույց է տալիս, որ խոսքը

վերաբերում է Անիի աթոռի՝ մոնղոլական տերությանը տրված հարկի նվազեցմանը (Ավագյան, 1978, 14-18):

Այստեղ հարկ է որոշ անդրադարձ կատարելով պարզաբանել եպիսկոպոսական աթոռի հարկատվության խնդիրը, որը ծագել է մոնղոլական տերության շրջանում: 1269թ. Անիի տաղմաճիները (հարկահավաքները) հավանորեն իրենց պարոնի՝ Սահիպ Դիվանի ցուցումով Անիի քահանայական դասը՝ երեցանին, ազատել են բաժ հարկից՝ Ս. Առաքելոցի պատին արձանագրելով. «...բարձաք ի յԱնու իրիցանուս զբաժն, զոր ի սկզբանէ ազատ էր» (Դիվան, Ա, 24): 1269թ. Սահիպ Դիվանը կնության է առել աթաբեկ Իվանեի որդի Ավագի դուստր Խոշաքին, ուստի շատ հավանական է, որ հենց այդ կապակցությամբ էլ նույն թվականին Անիի երեցանին ազատվել է բաժ հարկից: Եթե այս և Ս. Առաքելոցի պատին 1280թ. Նուրայդին Քոթիթի համանման արձանագրության մեջ, ուր արդեն խոսվում է բաժի ու տաղմայի մասին (Դիվան, Ա, 23), նշվում է միայն երեցանու հարկատվությունը, ապա Ս. Առաքելոցի 1289 թ. արձանագրությունը տեղեկացնում է նաև եպիսկոպոսական աթոռի վրա դրված հարկի մասին:

Այդ շրջանում քաղաքը կրկին անցել էր Ջաքարյանների տիրապետության տակ, և քրիստոնյա նոր պարոնների առաջին գործերից մեկն էր դարձել երեցանու և եպիսկոպոսական աթոռի հարկատվության վերանայումը: «Ես պարոն Աղբուղայս որդի ամիրսպասալար Շահնշահի, թոռն մեծին Ջաքարիայի, եւ ես պարոն Թամարս, դուստր իշխանաց իշխանի պարոն Բուղտային, **տեսաք զԱնու աթոռս եւ զիրիցանիս, որ հարկ կէր ի վերէնին, զոր մենք նախ...**» (Դիվան, Ա, 22): Թեև արձանագրության շարունակությունը չի պահպանվել, բայց ակնհայտ է, որ այնտեղ խոսվելու էր հարկի վերացման կամ առնվազն նվազեցման մասին: Եվ ահա եպիսկոպոսական աթոռի տնտեսական անկախության համար մղված պայքարի հայտնի վերջին վկայությունը տեսնում ենք Յովհաննես Ա եպիսկոպոսի ժամանակ գրված արձանագրության մեջ, ուր նշվում է, որ «յետո ի չարաց դրած» հարկը չափավորվում է՝ բերվելով «յառաջին սահմանս»:

Յովհաննես Ա-ից հետո մինչև ԺԴ դարի վերջ Անիի եպիսկոպոսների մասին այլևս տեղեկությունների չենք հանդիպում<sup>25</sup>: Դա իհարկե չի նշանակում, թե եպիսկոպոսությունը դադարել էր գոյություն ունենալուց, պարզապես աղբյուրներն են սակավ ու աղքատիկ, իսկ քաղաքն ինքը անասելի հարկերի տակ կքված և

օտար իշխողների կամայականություններին ենթակա՝ անկասելիորեն դեպի անկում էր գնում:

Սակայն բարեբախտաբար պահպանվել է Անիի վերջին եպիսկոպոսի՝ Յովհաննես Բ Ոսկեփորիկի անունը, թերևս շնորհիվ այն բանի, որ վերջինս եղել է նաև շնորհալի ու բազմարդյուն գրիչ: Հայտնի է, որ Յովհաննես Ոսկեփորիկը ժե դարի սկզբներին մի Աստվածաշունչ է ընդօրինակել Անիում (Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, թիվ 55), որի հիշատակարանում իրեն կոչում է «Յովհաննես եպիսկոպոս, անպետ գրիչ **Անոյ Նահանգիս**», իսկ մինչ այդ, ԺԴ դարի 80-ական թվականներին մեկ այլ Աստվածաշունչ է ընդօրինակել Սիմեոն րաբունապետի համար (Կ. Մ. 1985, 38-44): Բայց Անիի այս վերջին եպիսկոպոսին վիճակված չէր անխռով ու հանգիստ պաշտոնավարել իր աթոռանիստում: Ժե դարի սկզբներին արդեն հիմնական բնակչությունից դատարկված Անին ապահով բնակատեղ չէր անգամ նրա եպիսկոպոսի համար: 1423թ. Յովհաննես Ոսկեփորիկին տեսնում ենք Սանահինի վանքում Յովհաննես Սանահնեցու պատվերով մի Շարակնոց ընդօրինակելիս (ՄՄ, թիվ 1587), իսկ 1426-ին՝ Գուգարքում՝ Թմոք (Թմկաբերդ, Թմոզվի) ամրոցում մեկ այլ ձեռագիր գրելիս: Այդ մատյանների հիշատակարաններում Յովհաննեսը շարունակում է իրեն կոչել «եպիսկոպոս Անոյ», բայց այդ ժամանակ արդեն նա Անիի եպիսկոպոսի կոչումը կրում էր ավելի շուտ որպես պատվանուն:

Յովհաննես Ոսկեփորիկի մահվան ստույգ թվականը հայտնի չէ, թեև ենթադրվել է 1432 թվականը: Լ. Խաչիկյանն այն Յովհաննեսի մահվան տարին է համարում՝ ելնելով Կարապետ Աղթամարցու՝ Տփղիսում գրած հիշատակարանից, ուր նշվում է, որ այդ ժամանակ մահացել են պարոն Փաշի որդիներ պարոն Չալաբեն և «արհեպիսկոպոսն տէր Յովանես» (Ժե. Ա, 420-421, 756): Բայց Յովհաննեսի սան Օհաննէ Թմոքեցու 1443 թ. Արագածոտնում (Սերկկիլի գյուղ) գրած հիշատակարանից կարելի է ենթադրել, թե նա դեռ ողջ էր՝ «...Յովանես եպիսկոպոս՝ մականուն Ոսկեփոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոց» (Ժե. Ա, 534, ժողովածուում հիշատակարանը զետեղված է 1442 թ. տակ, բայց գրվել է մեկ տարի անց: Տե՛ս Կ. Մ., 1991, 14): Մյուս կողմից՝ Կարապետ Աղթամարցու հիշատակարանում նշված պարոն Փաշն ու նրա Չալաբե ու Յովհաննես որդիները, ինչպես երևում է հարակից

փաստերից, հենց Տփղիսի հայ միջավայրի երևելի ներկայացուցիչներից էին (Մուրադյան, 1988, 51-53):

Յովհաննես Ոսկեփորիկից հետո աղբյուրներում այլևս չենք հանդիպում Անիի եպիսկոպոսի որևէ հիշատակություն: Ըստ Ղ. Ալիշանի՝ ժԵ դարի կեսերին՝ 1653թ., Յոռոմոսի վանահայր Յովհաննեսը հիշատակարաններից մեկում իրեն կոչում է «եպիսկոպոս Անոյ վիճակիս», որից նա ենթադրում է, թե քաղաքի անկումից հետո Անիի եպիսկոպոսի կոչումը անցել է Յոռոմոսի վանքի առաջնորդներին (Ալիշան, 1881, 96): Սակայն 1485 թ. Յոռոմոսի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը, 1585-ին՝ վանահայր Յովհաննես եպիսկոպոսը, 1685-ին՝ Դանիել Տիգրանակերտցին, 1751-ին՝ Ավետիք եպիսկոպոսը, 1751-1755 թթ. Եղիա Ալաշկերտցին, 1788-ին՝ Յովհաննես Շամբեցին և ուրիշներն իրենց Անիի եպիսկոպոս չեն կոչում: ԺԵ դարում Յակոբ Կարնեցին նկարագրելով 1620-ական թթ. թուրքերի կատարած նվաճումները՝ գրում է, որ նրանք գրավեցին Թիֆլիսը, Ախլցխան, «...Շիրակվանա երկիրն, **յԱնի քաղաքն իւր թէնովն**, մինչև ի դուռն Էրեւանայ...» (Յակոբյան, 1956, 562): Այդ ժամանակ Անին, իհարկե, միայն ամայացած քաղաք էր, բայց նրա **թեմի** մասին հիշատակությունը մտածել է տալիս, որ, հնարավոր է, նախկին մայրաքաղաքի շուրջ դեռևս պահպանվել էր եկեղեցական տարածքային միավոր, որի կենտրոնը թերևս հենց Յոռոմոսն էր: Ինչևէ, այս ժամանակաշրջանի Շիրակի եկեղեցական կյանքի պատմությունը դեռ կարոտ է ուսումնասիրության, որից հետո, հավանաբար, հնարավոր կլինի այս հարցին ավելի որոշակի պատասխան տալ:

Այսպիսով, **Անիի և Շիրակի եպիսկոպոսությունը** հիմնվել է 1072 թ. Բարսեղ Ա Անեցու ձեռնադրությամբ և հարատևել մինչև ժԵ դարի սկզբները: Ծաղկման շրջանում Անիի աթոռը մեծ հեղինակություն ու կշիռ է ունեցել, կարգավորել քաղաքի ներհամայնքային կյանքը, տեր եղել նյութական մեծ միջոցների: Սելջուկյան և մոնղոլական տիրապետության շրջանում, երբ անկայուն ու փոփոխական քաղաքական, աշխարհիկ իշխանությունն օտարների ձեռքին էր, Անիի եպիսկոպոսությունը կարևոր դեր է կատարել քաղաքի ուրույն դեմքը պահպանելու, նրա ներքին կյանքը կազմակերպելու գործում, հաճախ դարձել ողջ քաղաքային դասի պահանջների ու կանքի արտահայտիչը (այս առումով առավել հատկանշական են ԺԲ դարի դեպքերը):

Անիի եպիսկոպոսները քաղաքի եկեղեցիներից բացի ուշադրության կենտրոնում են պահել մերձակա վանքերը,

օժանդակել նրանց, միաժամանակ պարբերաբար զբաղվել օրինաստեղծ աշխատանքով՝ զանազան կանոնական արձանագրությունների միջոցով կարգավորելով հասարակական կյանքի խնդիրները՝ ըստ նպատակահարմարության ու ժամանակի պահանջի: Սկզբնական շրջանում Անիի եպիսկոպոսներ են եղել Պահլավունիների հետ խնամհացած Ապիրատյան տան ներկայացուցիչները (Բարսեղ Ա, Բարսեղ Բ, Սարգիս Ա), այնուհետև եպիսկոպոսությունը վարել են Պահլավունյաց տան Վահրամ սպարապետի տոհմաճյուղից սերող հոգևորականները (Գրիգոր Ա (Մագիստրոս), Սարգիս Բ, Գրիգոր Բ, Յովհաննես Ա): Նշված մեծահամբավ տոհմերի ներկայացուցիչներից բացի Անիի եպիսկոպոս են եղել Ամիր Երկաթի որդի Բարսեղ Գ-ը, Մխիթար Տեղերցին, Վարդանը, Յովհաննես Բ Ոսկեփորիկը: Առկա փաստերը ցույց են տալիս, որ Անիում միաժամանակ գոյություն են ունեցել քաղաքի հոգևոր առաջնորդ և քաղաքի ու գավառի երեսպետ եպիսկոպոս, այսինքն՝ բարձրագույն հոգևոր իշխանությունն ունեցել է երկու զլխավոր օղակ:

Անիի եպիսկոպոսությունը քաղաքի պատմության մեջ պակաս դեր չի կատարել, քան նրա աշխարհիկ իշխանությունը: Ավելին, եթե քաղաքական իշխանությունը հաճախ անցել է օտարներին և բազում չարիքների պատճառ դարձել, ապա հոգևոր իշխանությունը, թեկուզ սեփական շահերից ելնելով, փորձել է դիմակայել արտաքին ճնշմանը, բնակչությանը զերծ պահել ուժացումից ու համընդհանուր ընչազրկումից: Հատկանշական են Յովհաննես Ա-ի մասին պահպանված կցկտուր տեղեկությունները, որոնցից, այնուամենայնիվ, երևում է, որ նա փորձել է մեղմել տիրող ծանր կացությունը: Իսկ հանձին Անիի վերջին եպիսկոպոսի՝ Յովհաննես Ոսկեփորիկի, արդեն տեսնում ենք մի նվիրյալ հոգևոր գործչի, որն ամայացող քաղաքում ինքն է գրիչ վերցնում ու Սուրբ Գիրքն ընդօրինակում, նաև գրչություն ուսուցանում այլոց, որպեսզի վառ պահի իր նոսրացած հոտի հավատքը և նրան վերադարձնի ապրելու ու մաքառելու հույսը:

Վերջում, որպես Անիի եպիսկոպոսների մասին պահպանված տեղեկությունների ամփոփում ներկայացնում ենք նրանց **գավազանագիրքը**: Քանի որ Անիի աթոռի պատմության առանձին ժամանակահատվածներում գործ ունենք երկու եպիսկոպոսների

գոյության փաստի հետ, այն ավելի ակնառու դարձնելու համար ցանկն օժտում ենք լրացուցիչ տեղեկություններով. անվան արձանագրումից հետո նշում ենք յուրաքանչյուր եպիսկոպոսի հիշատակման թվականը, հիշատակման բնագրային ձևը և վայրը (եթե վիճաբար արձանագրությունից է քաղված), կամ հիշատակող հեղինակին: Անթվական հիշատակություններից բերում ենք առավել կարևորները:

Ամբողջական գավազանագրքից բացի ներկայացնում ենք նաև Անիի հիմնական եպիսկոպոսական տների՝ Ապիրատյան և Պահլավունի եպիսկոպոսների մեր կազմած տոհմածառը:

### ԳԱԻԱԶԱՆԱԳԻՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԱՆԻՈՅ

#### ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ

1072 Տէր Բարսեղ արքեպիսկոպոս Անոյ եւ Տանն Շիրակաւանոյ (Յայսմաւուրք):

1081 ...արքեպիսկոպոսն Շիրակայ... տէր Բարսեղ (Ուռհայեցի), այս թվականին Բարսեղը Հաղբատում ձեռնադրվեց կաթողիկոս (նրա կաթողիկոսական շրջանին առնչվող բազմաթիվ վկայությունները չենք զետեղում):

1113 Մեռաւ տէր Բարսեղ եւ թաղեցաւ ի Շուղրն մեծ հանդեսիւ (Ուռհայեցի):

#### ԲԱՐՍԵՂ Բ ԱՆԵՑԻ

1160 Ի հայրապետութեանն տէր Բարսղի (Անի):

1174 Ի հայրապետութեան նահանգիս մերում տէր Բարսղի (Հոռոմոս):

1177 Բասիլ եպիսկոպոս որ յարեւելս հիւսիսոյ (Թուրք... առ Գրիգոր Տղայ):

1179 Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անույ (Հռոմկլայի ժողով):

1181 Ի հայրապետութեան տէր Բարսղի (Հոռոմոս, Հովհաննես գրիչ):

1184 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Բարսեղ... (խաչքար, Անիի Ս. Առաքելոց):

- 1187 Ի հայրապետութեան մեծարգոյ եւ հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն Բարսղի (Յոռոմոս, Յովհաննէս գրիչ):
- 1191 Կամաւն Աստուծոյ եւ տէր Բարսեղ (Լմբատաւանք):
- 1193 Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Բարսղի Յայոց կաթողիկոսի (Անիի Ս. Փրկչի եկեղեցի):
- 1195 Ի... յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի (Յոռոմոս):
- 1199 Ի հայրապետութեան տէր Բարսղի... (Յոռոմոս):

#### ՍԱՐԳԻՍ Ա

- 1187 Ի հայրապետութեան տէր Բարսղի եւ եղբարորդւոյ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի (Յոռոմոս, Յովհաննէս գրիչ):
- 1187 Ի հայրապետութեան տէր Բարսղի եւ եղբարորդւոյ նորա աստուածարեալ մանկագոյն քահանայի Սարգսի (Յոռոմոս, Յովհաննէս գրիչ):
- 1206 Սարգիս աթոռակալ Անւոյ (Լոռիի ժողով, Գանձակեցի)
- 1209 Ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի՝ որդոյ Ապիրատին... (Բագնայր):
- 1210 Ի յամս աստուածարեալ եւ մեծարգո տեառն Սարգսի՝ վերադիտողի մայրաքաղաքին Անո... (Բագնայր):
- 1211 Ի յամս աստուածապատիւ տեառն Սարգսի՝ որդոյ Ապիրատին... (Բագնայր):

#### ԳՐԻԳՈՐ Ա (ՍԱԳԻՍՏՐՈՍ)

1213

...ընծայեցի յԱրջու Առճի ի

- սուրբ Աստուածածինս ի ձեռն տէր Գրիգորի՝ որդոյ Ապուղամրի... (Արջո Առիճ):
- 1215 ՈԿԴ. Ի հայրապետութեան Տեր Սարգսի (Յոռոմոս) լրացումն թվայնացված տարբերակում - Կ.Մ. Կամաւ Յոգոյն Սրբոյ ես տէր Գրիգոր ի մեր սեփական ուխտիս... (Բագնայր): Ի յամս աստուածապատիւ հոգեւոր տեառն Գրիգորոյ՝ որդոյ Ապուղամրի (Բագնայր):
- 1216 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Գրիգոր՝ որդի Ապուղամրի ժառանգորդ սեփական հայրենի Աթոռոյս մայրաքաղաքիս Անւո արհիեպիսկոպոս այսմ նահանգի... (Անիի Ս. Առաքելոց):
- 1217 Կամաւքն Աստուծոյ ես տէր Գրիգոր՝ որդի Ապուղամրի, արհիեպիսկոպոս... (Անիի Ս. Առաքելոց):
- 1218 Ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս (Անիի «Վրացական» եկեղեցի):
- 1220 Շնորհիւն Աստուծոյ ես տէր Սարգիս՝ որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անւոյ... (Անիի Ս. Առաքելոց):
- 1225 ...տէր Գրիգորոյ արհիեպիսկոպոսին... (Մարմաշեն):
- 1226 Ես տէր Գրիգոր... (Անիի Ս. Սարգիս):
- 1227 Կամաւն Աստուծոյ ես տէր Գրիգոր արհիեպիսկոպոս մայրաքաղաքիս Անո եւ ժառանգորդ սեփական հայրենի աթոռոյս մերո (Անիի Ս. Առաքելոց):



ԲԱՐՍԵՂ Գ

1229 Յառաջնորդութեան տէր  
Բարսղի որդւոյ Ամիր Երկա-  
թայ (Յոռոմոս):

1231 ...յառաջնորդութեանս  
(Յոռոմոսի) տէր Բարսղի  
արհիեպիսկոպոսի՝ որդո  
Ամիր Երկաթա (Յոռոմոս):

1232

ի տերութեան տեղւոյն (Բագ-  
նայրի) տեառն Գրիգորա որ  
Մագիստրոսն ասի, վերադիտող  
աթոռոյս Անւոյ (Յոռոմոս, Իգ-  
նատիոս գրիչ):

1233

ի տերութեան տեղւոյս Գրիգորի  
Մագիստրոսի որդոյ Ապուղամ-  
րի (Բագնայր):

**անթվականք**

մոտ. 1213-16 թթ. Յրամանաւ  
տեառն Գրիգորոյ եպիսկոպոսի,  
որ էր ժառանգորդ Սուրբ Ուխ-  
տիս (Արջո Առիճ):

Ես տէր Գրիգոր, որդի Ապու-  
ղամրի Անւոյ եպիսկոպոս...  
(Լմբատավանք):

մինչեւ 1225թ. Այս մեր արձան  
անջնջելի եւ յիշատակ մշտնջե-  
նաւոր տեառն Գրիգորոյ արհիե-  
պիսկոպոսի մայրաքաղաքին  
Անւոյ եւ նահանգին Շիրակայ,  
ժառանգորդ եւ սեփական մերոյ  
Աթոռոյս... (Լմբատավանք):

Այս արձան մշտնջենաւոր Գրի-  
գորոյ որդոյ Արուղամրի  
(Մարմաշեն):

1239 Շնորհիւն Աստուծոյ եւ Քարսեղ արքեպիսկոպոս, որդի Ամիր Երկաթայ, առաջնորդ մայրաքաղաքիս Անոյ... (Անիի Ս. Առաքելոց): Մաքիստրոսն Գրիգոր... ընդ... հովանեալ (Մարմաշինոյ) ինքն եւ եղբայր իւր Խարիփ կան հանգստարանի... (Անիի Ս. Առաքելոց):

#### ՍԱՐԳԻՍ Բ

1245 ... եպիսկոպոսն Անոյ Սարգիս (Գանձակեցի):

1246 ... յառաջնորդութեան (Յոռոմոսի) տեառն Քարսղի արքեպիսկոպոսի՝ որդո Ամիր Երկաթա (Յոռոմոս):

1247 ... յառաջնորդութեան (Յոռոմոսի) տեառն Քարսղի, որդո Ամիր Երկաթա... (Յոռոմոս):

1250 ... յառաջնորդութեան (Յոռոմոսի) տեառն Քարսղի արհեպիսկոպոսի, որդոյ Ամիր Երկաթա... (Յոռոմոս):

1251 ... յառաջնորդութեան (Յոռոմոսի) տեառն Քարսղի (Յոռոմոս):

1253 Առաջնորդ վանացս տէր Քարսեղ (Յոռոմոս):

1262

Ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղւոյս... (Բագնայր):

#### ***անթվականք***

1260-70-ական թթ.

Ես տէր Սարգիս, որդի Մաքիստոսին... (Անիի Ս. Առաքելոց):

ՄԽԻԹԱՐ ՏԵՂԵՐՑԻ

**անթվական** (ԺԳդ. 70-ական թթ.) եւ Մխիթար եպիսկոպոս Տեղեբեցի (Անիի Ս. Առաքելոց)

ԳՐԻԳՈՐ Բ

1277 Շնորհիւն Աստուծոյ եւ տէր Գրիգոր արքեպիսկոպոս մայրաքաղաքիս Անու... (Անիի Ս. Առաքելոց):

**անթվական**

Եւ տէր Գրիգորս եղբաւորորդի տեառն Սարգսի (Մարմաշեն):

Շնորհիւն Աստուծոյ եւ տէր Սարգիս եպիսկոպոս... (Անիի Ս. Առաքելոց):

Շնորհիւն Աստուծոյ ի տէրութեան քաղաքիս եւ յառաջնորդութեան տէր Սարգսի... (Անիի Ս. Առաքելոց):

ՅՈՎՅԱՆՆԵՍ Ա

1298

...ի քաղաքիս Անի եպիսկոպոսութեան տեառն Յոհաննիսի... (Անիի Ներքին բերդ, Եղբայրիկ գրիչ):

ՎԱՐԴԱՆ

1307 Վարդան եպիսկոպոս Անու (Սսի ժողով, Կալանոս):

1308

...ի հայրապետութեանս մերոյ նահանգիս Շիրակ գաւառիս՝ հեզի եւ մարդասիրի տէր Յոհաննիսի՝ որդոյ Ապուղամրի՝ իշխեցող տեղոյս... (Բագնայր):

1313

...ի հայրապետութեան մայրաքաղաքիս Անոյ տեառն Յո-

1319-ից հետո

հաննիսի մեծի, որ է ջահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ եւ ի յազգէ Լուսաւորչին Յայաստանեաց (Շիրակի Մագվոյս բնակավայր):  
...յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի... (Անիի գլխավոր մուտք):

1320 Ի հայրապետութեան ի տէր Վարդան... (Մրեն):

### ՀՈՎՅԱՆՆԵՍ Բ ՈՍԿԵՓՈՐԻԿ

ԺՂ դարի 80-ական թթ.

... զանիմաստ ծրող սորին զՅովհաննես եպիսկոպոս Անւոյ (Անի):

ԺԵ դարի սկիզբ

... զՅովհաննես եպիսկոպոս Անոյ վիճակիս... զՅովհաննես եպիսկոպոս անպէտ գրիչ Անոյ նահանգիս (Անի):

1423 ... գրիչ Յովհաննես եպիսկոպոսի Անոյ յիշեսջիք... Յովհաննես արքեպիսկոպոսի, մականուն Ոսկեփորիկ վերածայնելոյ...(Սանահին):


1426 ...գրեցաւ... ձեռամբ մեղապարտ գրչի Անոյ եպիսկոպոսի տէր Յովանիսի (Թմոք ամրոց):

1443 ...աղաչեմ յիշել ի Տէր Յովանես եպիսկոպոս՝ մականուն Ոսկեփոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոց... (Արագածոտն, Սերկկիլի գյուղ, Օհաննես Թմոքեցի):

# ԱՆԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՏՈՅՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԱՊԻՐԱՏՅԱՆՆԵՐ

## ՊԱՅԼԱԿՈՒՆԻՆԵՐ



## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց կաթողիկոսության անհական շրջանի պատմությանը, Անիի եպիսկոպոսական աթոռին անդրադառնալուց հետո, ստորև կժանոթանանք քաղաքի ընդհանուր հոգևոր դասի վերաբերյալ պահպանված պատմական տեղեկություններին: Մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Անիում բնակություն էին հաստատել բազմաթիվ հոգևորականներ, որոնց հիմնական մասը ծխական քահանաներն ու տոհմական եկեղեցիներում պաշտոնավարողներն էին, բայց այստեղ կային նաև վանական միաբանություններ, բազմաթիվ վարդապետներ, գիտնական ուսուցչապետներ, մատենագրությամբ, գրչությամբ զբաղվողներ: Անիի հոգևորականության ներկայացուցիչների անունները պահպանած հիմնական սկզբնաղբյուրները վիճաբան արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարաններն ու պատմիչների վկայություններն են: Դրանց և մի քանի օժանդակ աղբյուրների միջոցով մենք կազմել ենք Անիի ու նրա մերձակա վանքերի հոգևորականության համահավաք անվանացանկը, որը ներկայացվում է սույն բաժնի վերջում: Անվանացանկի առկայությունը թույլ է տալիս այլևս ներկա շարադրանքը չժանրաբեռնել անեցի հոգևորականներից յուրաքանչյուրին վերաբերող տեղեկությունների վկայակոչումով, այլ դրա փոխարեն ներկայացնել քաղաքի հոգևորականության ու քահանայական դասին առնչվող առավել հատկանշական, ընդհանրացնող նյութերը:

Նախ, հարկ է նշել, որ միջնադարյան Հայաստանում քաղաքների քահանայական դասն ընդհանրապես, հնուց ի վեր, ավելի նախապատվելի դիրք էր գրավում, քան գյուղական շրջանների քահանայությունը: Դա մի պայման էր, որ գալիս էր քաղաքների բնակչության վայելած արտոնություններից, բայց հետաքրքիր է, որ տարածվում էր նաև հոգևորականության վրա, թեև դժվար է

գտնել դրա կանոնական հիմնավորումը: Նման հիմնավորում իհարկե չկար, բայց փաստն այն է, որ քաղաքի քահանաները որոշ հարցերում արտոնյալ էին (Գոշ, 1975, 32, 94-95, Առաքելյան, 1958, 65-66): Քահանաներն անգամ մասնակի առավելություններ ունեին սովորական առևտրական գործարքներում (տե՛ս Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց քահանայից վաճառողաց եւ գնողաց գտուն եւ զագարակ» հոդվածը, Գոշ, 1975, 69-70), իրավաբանորեն պաշտպանված էին և նյութապես ապահովված (Գոշ, 1975, 77-78, 115, 120): Քաղաքների երեցների համեմատաբար ազատ ու անկաշկանդ վարք ու բարքի մասին կան նաև մատենագրական վկայություններ, մասնավորապես, այս փաստը ցավով է նշում կաթողիկոս Ներսես Շնորհալին իր Ընդհանրական թղթում<sup>26</sup>: Ուշագրավ է, որ քաղաքի եկեղեցիներում անգամ ծեսի որոշ տարրերը յուրահատուկ էին: Օրինակ, Հովհաննես Արքաեղբոր համար ընդօրինակված մի ձեռագրում գրիչը հետևյալ հիշատակարանն է թողել. «զայս ոչ գտի ըստ կարգի սուրբ արե՛նսդ, այլ ես՝ Ներսէս եղի, **զի յայտ լիցի, թէ այլ է քաղաքաց եկեղեցւոյ, եւ այլ՝ վանաց կարգ սաղմոսաց...**» (ԺԳ, 646):

Ինչ վերաբերում է վաճառաշահ Անիի քահանայական դասին, ապա, ինչպես ստորև կտեսնենք, այն, հատկապես պետականության անկումից հետո, իր վայելած արտոնությունների և ունեցած հնարավորությունների շնորհիվ, հոգևոր իշխանությանը զուգահեռ ստանում է նաև ժողովրդական առաջնորդի որոշակի դեր: Անիի հոգևորականության մասին խոսելիս այս պայմանն անպատճառ պիտի նկատի ունենալ ճիշտ պատկերացնելու համար նրա կատարած դերի կարևորությունը, որը չէր սահմանափակվում սոսկ առօրյա եկեղեցական գործերի շրջանակում, այլ ավելի ընդգրկում էր ու նշանակալից:

#### ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե կաթողիկոսական աթոռանիստ հռչակվելուց հետո Անին դարձավ երկրի հոգևոր մայրաքաղաքը, ապա բուն կաթողիկոսարանն էլ դարձավ նրա «միջնաբերդը»:

Սարգիս Սևանցու և Պետրոս Գետադարծի ժամանակ Անիի կաթողիկոսարանը մեծաթիվ միաբանություն ու պաշտոնություն

է ունեցել: Այդ մասին արժեքավոր վկայություններ են պահպանվել պատմիչ Մատթեոս Ուռհայեցու մոտ: Նա մասնավորապես գրում է. «Երկոտասան եպիսկոպոսք եւ չորս վարդապետք ի **տան հայրապետին** անպակաս լինէր եւ վաթսուն երէց՝ ի կրօնաւորաց եւ յաշխարհականաց՝ հինգ հարիւր» (Ուռհայեցի, 1869, 184)<sup>27</sup>: Անիի կաթողիկոսարանի չորս նշանավոր վարդապետներից երեքին անվանապես հիշատակում է պատմիչ Արիստակես Լաստիվերցին՝ գրելով. «...եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ **Սարգիս եւ Տիրանուն եւ յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք...**» (Լաստիվերցի, 1963, 26): Սարգիսն այլ աղբյուրներում Սարգիս Անեցի կոչված հայտնի վարդապետն է, Գրիգոր Մագիստրոսի ուսումնակիցն ու բարեկամը, որին նա մի շարք նամակներ է հասցեագրել (Կ. Մ. 1992, 40-47): Իսկ Տիրանուն վարդապետին հիշատակում է նաև Մատթեոս Ուռհայեցին՝ նրան կոչելով «իմաստասէր Տիրանուն Կապանեցի» (Ուռհայեցի, 1991, 114, 115, հմմտ. Ուռհայեցի, 1869, 123):

Կաթողիկոսարանի և կաթողիկոսին սպասարկող անձանց թվակազմի մասին մոտավոր պատկերացում կարելի է կազմել՝ ծանոթանալով Պետրոս Գետադարծի 1046 թ. վերջերին Անիից Արծն ուղևորվելու մասին Մատթեոս Ուռհայեցու թողած նկարագրությանը: Հիշենք, որ կաթողիկոսը գիտակցում էր, թե այդ ուղևորությունը կարող է անդառնալի լինել, ուստի իր հետ էր վերցրել Անիի կաթողիկոսարանի սպասավորներից շատերին, սովորականից ավելի մեծաթիվ ուղեկիցներ: Ուռհայեցին գրում է. «Եւ ինքն (Պետրոսը, Կ. Մ.) իւր տանեցի ազատօքն փառաւոր արամբք երեք հարիւր՝ վառեալ զինուք, եւ **վարդապետս եւ եպիսկոպոսունս եւ երաժիշտս եւ կրօնաւորս, քահանայս հարիւր եւ քսան՝ հեծեալս ի ջորոց**, հետեւակ պաշտօնեայս՝ երկերիւրս» (Ուռհայեցի, 1991, 114, հմմտ. Ուռհայեցի, 1869, 122): Այնուհետև, մանրամասնում է իր խոսքը. «Եւ էր զհետ տեառն Պետրոսի նախնականն եւ լաւն ի բնաւից **Բուլխար** վարդապետն եւ ամենագովելին **Խաչատուր** դպրապետն եւ **Թադէոս**՝ որ էր այր անպարտելի գրչութեամբ, **Գեորգ Քարնեղեցին** եւ **Յովհաննէս Քարնեղեցին** եւ **Մատթեոս Հաղբատացին** եւ **Մխիթար Բագնայրացին** եւ **Տիրանուն** իմաստասէրն **Կապանեցին**, **Մխիթարիկն**, **Վարդան Սանահնեցին**, **Բարսեղն Բաշխատեցին** եւ համավայելուչն եւ շքեղն տէր **Եղիսէն** եւ **Բարսեղն** նորին



եղբայրն, **Գեորգ**՝ ջուլիակ ձագն եւ տէր **Եփրեմն** եւ տէր **Անանէ** եւ տէր **Խաչիկն**: Արդ այս ամենայն վարդապետք եւ իմաստասէրք եւ հմուտք Յին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ» (Ուռհայեցի, 1991, 114, հմմտ. Ուռհայեցի, 1869, 122):

Կարծում ենք, որ եթե թվարկման մեջ նշվածներից ոչ բոլորը, ապա նրանց մեծագույն մասը ներկայացնում էին Անիի կաթողիկոսարանի հոգևորականությունը: Նրանցից ոմանց անվանը կից թեև նշվում է Հաղբատեցի, Բագնայրեցի, Քարնեղեցի և այլն, բայց դա բնավ չի խանգարում վերջիններիս կաթողիկոսարանի պաշտոնյա համարել, ինչպիսին էր օրինակ՝ Տիրանուն **Կապանեցին**: Բացի Տիրանունից, այստեղ ծանոթ անուններ են նաև Գրիգոր Մագիստրոսի աշակերտներ Եղիսեն ու նրա եղբայր Բարսեղը, որոնք Պետրոս Գետադարծի ցանկությամբ իրենց ուսուցչի կողմից ուղարկվել են Անի՝ կաթողիկոսարանում սպասավորելու և կաթողիկոսին աշակերտելու համար: Իր թղթերից մեկում Մագիստրոսը դիմում է կաթողիկոսին՝ գրելով. «Իսկ յաղագս մանկանցս...հրամայեալ էիք առաքել առ Ձեզ, զի ծառայեսցեն փոխանիդ Յիսուսի... Ես կարի յոյժ ուրախ եղէ. վասն զի գառնիքս այս ի քաջ հովիւ վստահացայ եւ **ի ներքս ի գաւիթ քո մտցեն...** երանեն մանկանցդ եկելոց ծառայել քեզ եւ անյամր մշտապայծառ լուսովդ լրանալ...» (Մագիստրոս, 1910, 18, 20): Բնականաբար Անիի կաթողիկոսարանից պետք է լինեին պատմիչի մեծարած Բուլխար կոչված վարդապետը, Խաչատուր դպրապետը, հմուտ գրիչ Թաղեոսը և մյուսները: Իսկ անվանաշարքի վերջում նշված Անանիան (Անանէ) և Խաչիկը, հավանորեն, Պետրոսի նույնանուն քրոջորդիներն են:

Անիի կաթողիկոսարանն այդ շրջանում բավական լայն գործունեություն էր իրականացնում, համակարգում ու ղեկավարում երկրի եկեղեցական կյանքը, պատրաստում եկեղեցու բանիմաց սպասավորներ և այլն: Կաթողիկոսարանին կից գործող հոգևոր դպրոցը, որը հայտնի էր դեռ այն ժամանակ, երբ Աթոռը գտնվում էր Արգինայում, շարունակում էր գործել Անիում: Այդ մասին ակնարկներ են պահպանվել Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարծին և Սարգիս Անեցուն հասցեագրած նամակներում: Նույն այդ թղթերում հիշատակվում են կաթողիկոսարանի արժանավոր սպասավորներից՝ **Ստեփանոս** քահանան և կաթողիկոսի քարտուղար սարկավագներից մեկը (Մագիստրոս, 1910, 17, 34):

Կաթողիկոսարանն ուներ հարուստ դիվան և մատենադարան: Հիշյալ շրջանում այդ մատենադարան-գրատան տնօրինությունն իրականացնում էր Սարգիս վարդապետ Անեցին, որը 1041 թ.

հիշատակարանում հայտնում է, թե «հայեցեալ խնամով ի գրանոցին»՝ աստվածաբանական նյութերի մի արժեքավոր ժողովածու է վերցրել արքունի գանձատնից և փոխադրել այդ գրանոց, որպեսզի մատյանն օգտագործվի ըստ նպատակի՝ և ոչ թե մնա գանձատանը՝ «անայցելու» (Կ.Մ., 1992, 40-41): Գրիգոր Մագիստրոսի՝ Սարգիս Անեցուն հասցեագրած նամակները վկայում են, որ այս գիտուն վարդապետը սերտ կապ է ունեցել Բագրատունյաց արքունիքի հետ և փորձել է հարթել Գագիկ Բ-ի և Մագիստրոսի միջև ծագած վեճը<sup>28</sup>: Պետրոսի ժամանակ կաթողիկոսարանի գրչատան նշանավոր գրիչ Թադեոսից բացի, հավանորեն, այստեղ է աշխատել նաև Գեորգ անունով գրիչն ու կազմարարը, որը 1046 թ. մի ձեռագիր է ընդօրինակել հայրապետի պատվերով և նրա թելադրությամբ գրել ստացողի հիշատակարանը (ՄՄ. թիվ 988):

ԺԱ դարի վերջերին, Բարսեղ Ա Անեցու աթոռակալության տարիներին կրկին բարգավաճեց Անիի Աթոռը, վերաբացվեց նրա հոգևոր դպրոցը՝ վարդապետարանը, որի ուսուցչապետությունը հանձնվեց Հովհաննես Սարկավազին: Վերջինիս մոտ ուսանելու էին գալիս Հայաստանի ամենատարբեր շրջաններից, սակայն դպրոցի աշակերտության մեջ քիչ չէին նաև անեցիները: Նրանցից մի քանիսին հիշատակում է Սամուել Անեցին՝ **«սուր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննես եւ Սամուել ամենքեանք սոքա անեցիք»** (Անեցի, 1893, 128): Սրանցից Գրիգորը հետագայում դառնում է Անիի Կաթողիկեի ավագերեցը, որի դեմ փորձում է ճնշում գործադրել Փատլուն ամիրան, բայց հաջողության չի հասնում (Վարդան, 1861, 158): Ավելի ուշ Գրիգորին փոխարինում է Սամուել Անեցին, իսկ դարավերջին Կաթողիկեի փակակալն է դառնում պատմիչ և թարգմանիչ Մխիթար Անեցին: Այսպիսով ուրվագծվում է մի հաջորդական կապ. Հովհաննես Սարկավազ, նրան աշակերտած Գրիգոր և Սամուել Անեցիներ և Մխիթար Անեցի, որոնք բոլորն էլ սպասավորել են Անիի Մայր տաճարում և իրենց բուն եկեղեցական պարտականությունները հաջողությամբ զուգակցել մշակութային, գիտական գործունեության հետ (Կ. Մ., 1989, 115-110): Կաթողիկոսական Աթոռի՝ Անիից հեռանալուց հետո քաղաքի հոգևոր եկեղեցական կյանքում Մայր տաճարի հետ միասին կարևոր դեր է կատարում եպիսկոպոսարանի եկեղեցին՝ Ս. Առաքելոցը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ ԵՎ ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍԸ ԺԲ ԴԱՐՈՒՄ

Անիի ժԲ դարի պատմության մեջ քաղաքի հոգևորականությունը՝ եպիսկոպոսի գլխավորությամբ, կարևորագույն դեր է կատարել, բայց այդ իրողությունը մեծ մասամբ անտեսվել է նախորդ ուսումնասիրողների կողմից: 1064 թ. սելջուկյան գրավումից ու ավերումից հետո, Մանուչե ամիրայի տիրապետության շրջանում, քաղաքն աստիճանաբար վերականգնվում է, իսկ Բարսեղ Ա Անեցու եպիսկոպոսության և կաթողիկոսության օրոք՝ ժԱ դարի 70-ական թվականներից, կարգավորվում է նաև եկեղեցական կյանքը:

ԺԲ դարը Անիի պատմության մեջ հատկանշվում է որպես գրեթե մի հարյուրամյա պայքարի շրջան, որ մղում էին մի կողմից Շեղդադյան ամիրաները՝ իրենց իշխանությունը պահպանելու, մյուս կողմից՝ զորացած Վրաց թագավորության գահակալները՝ քաղաքն ու նրա շրջակայքը գրավելու համար: Իսկ ազատասեր անեցիները, խուսանավելով այս երկու քաղաքական ուժերի միջև, փորձում էին պաշտպանել սեփական շահերը, հնարավորության դեպքում՝ դառնալով նաև իրադրության տերը: Ինչպես փաստերն են վկայում՝ Անիի քաղաքացիության այս ձգտումներն իրականացնող շարժման գլուխ կանգնած էր տեղի հայ հոգևորականությունը: Դա ուներ մի քանի պատճառ: Նախ՝ ինչպես կտեսնենք ստորև, անեցիների քաղաքական զարթոնքը պայմանավորված էր հենց կրոնական խնդրի սրումով (1124թ.): Երկրորդ՝ քաղաքում բնակվող հայ ազնվականության փոքրաթիվ ներկայացուցիչներն իրենց գոյությունը պահպանում էին միայն շնորհիվ այն բանի, որ գինավորական ծառայություն էին կատարում Անիի ամիրաների մոտ և չէին կարող ազատորեն քաղաքական գործունեությամբ զբաղվել ի շահ հայ քրիստոնյա բնակչության: Երրորդ՝ հոգևորականությունն այդ շրջանում հայ հասարակության այն խավն էր, որն ուներ որոշակի հարկային և այլ արտոնություններ (հիշենք Բարսեղ Ա-ի՝ Մելիքշահից ստացած արտոնությունները), և ժողովրդի մեջ մեծ հեղինակություն վայելելով՝ ի վիճակի էր առաջնորդել նրան: Եվ, վերջապես, հիշյալ շրջանում (նաև հետագայում) Անիի եպիսկոպոսական աթոռը զբաղեցնող անձինք, սերելով ժամանակի առավել զորեղ

ազնվականական տներից, ունեին ոչ միայն հոգևոր իշխանություն, այլև ընդարձակ ազգակցական կապեր, սեփականություն, միջոցներ ու հնարավորություններ, որոնք և օգտագործում էին ըստ անհրաժեշտության:

Այժմ ներկայացնենք ասվածը հիմնավորող փաստերը: Անիի Աբուլասավար ամիրան՝ Մանուչեի որդին, որն ի տարբերություն իր հոր, բարյացակամ չէր հայերի նկատմամբ, վիրավորում է նաև նրանց կրոնական զգացումները, երբ Խլաթում մի մեծ մահիկ պատրաստելով բերում ու բարձրացնում է Անիի Կաթողիկեի գմբեթին: Սելջուկները տաճարը մզկիթի էին վերածել դեռ 1064 թվականին, և Աբուլասավարը փաստորեն միայն հին մահիկը փոխարինում է նորով, բայց քաղաքի զորացած հայ համայնքը չի հանդուրժում այդ արարքը և օգտագործելով նոր մահիկի տեղադրման պատրվակը՝ ընդվզում է քաղաքի Շեղադյան տիրոջ դեմ: Անեցիները դիմում են Վրաց Դավիթ Շինարար թագավորին, որը պատեհ առիթն օգտագործելով՝ արշավելով Անի՝ դյուրությամբ գրավում է այն, գերում ամիրային իր ընտանիքով: Ուշագրավ է, որ Անի գալու հրավերով Դավիթ թագավորի մոտ մեկնած անեցի բանազնացները հոգևոր դասի ներկայացուցիչներ՝ դպիրներ էին (Մելիքսեթ Բեկ, 1934, 218):

Քաղաք մտած Վրաց արքայի առաջին գործերից մեկն այն է լինում, որ հանդիսավոր ծեսով վերստին օծել է տալիս Մայր տաճարը: Վարդան Արևելցին, հավանորեն օգտվելով Մխիթար Անեցու պատմությունից, այս դեպքերի մասին գրում է. «Ամիրայն Անույ Աբլսուար... ետ բերել նալ ծանրագին եւ բարձրահասակ ի Խլաթայ եւ դնել ի վերայ գմբեթի Կաթողիկէին՝ փոխարեն գեղեալն յառաջնոցն. վասն որոյ **սրտառեալ քրիստոնէիցն կոչեն զԴաւիթ եւ տան ի ձեռն նորա զքաղաքն Անի: Եւ ընկեցեալ զզէնն ասելի ի պատուական գլխոյն Կաթողիկէին, զոր ունէր զամս վաթսուն... եղին զպսակն զարդու եւ զթագն Յիսուսի... զխաչն աստուածընկալ» (Վարդան, 1861, 156): Դեպքը նկարագրող թե հայ պատմիչները (Վարդան Արևելցի, Մատթեոս Ուռհայեցի) և թե վրաց պատմագիրը շեշտում են հատկապես **Կաթողիկեի ազատագրման**՝ սրբագործման պարագան: Ուռհայեցին գրում է. «Դաւիթ Վրաց թագաւորն... էառ զթագաւորաբնակ քաղաքն Յայոց զԱնի... եւ **զմեծ եկեղեցին Անույ զՍուրբ Կաթողիկէն, զոր մաքիթ էին արարեալ, ժողովեաց զեպիսկոպոսունս եւ զքահանայս եւ զկրօնաւորս Յայոց աշխարհին եւ օրհնեաց զՍուրբ Կաթողիկէն մեծաւ հանդեսիւ եւ եղել ուրախութիւն ամենայն Տանն Յայոց, զի տեսին ազատեալ զՍուրբ Կաթողիկէն ի****

ծառայութենէ» (Ուռհայեցի, 1991, 392), իսկ վրաց հեղինակն ավելացնում է. «Դավիթ թագավորը... գրավեց քաղաքը... կալանավորեց ու **կոտորեց Ալփասլանյաններին, որոնք մզկիթի էին վերածել Անիի եկեղեցին...** ժողովեց կաթողիկոս-եպիսկոպոսներին և օծունով այն նորոգեց» (Մելիքսեթ-Քեկ, 1955, 42-43): Կարելի է ասել, որ դեպքը նկարագրող պատմիչները քաղաքի գրավման մասին գրելիս շատ ավելի համառոտաբան են, քան Կաթողիկեի ազատագրման ու օծման մասին պատմելիս:

Դրանից երկու տարի անց վրացիները ստիպված են լինում Անին վերադարձնել Շեդդադյաններին, սակայն վերջիններս երդվում են այլևս Կաթողիկեի նկատմամբ ոտնձգություն չանել. «**Իսկ որդիքն Մանուչէի արարին սաստիկ երդումն, վասն զի Սուրբ Կաթողիկէն ... հանապազ Յայոց կացցէ եւ մի՛ մտցէ ի նա տաճիկ եւ ոչ մարման ազգ**» (Ուռհայեցի, 1869, 400):

Բնականաբար այդ դեպքից հետո հայ հոգևորականության դիրքը քաղաքում ավելի է ամրապնդվում: Խոսելով 1155 թ. Անիում ծավալված իրադարձությունների մասին՝ երեք արաբ պատմիչներ՝ Իբն ալ-Ասիրը, ալ-Ֆարիկին և Այնին, գրեթե նույն բառերով հետևյալն են հաղորդում. «...**Անի քաղաքում Յայոց քահանաները ապստամբեցին, և այն գրավելով ամիր Շադդադից՝ հանձնեցին եղբորը՝ Ֆադլունին**» (Իբն ալ-Ասիր, 1981, 257, 400, Մարգարյան, 1980, 99): Բայց ինչպես երևում է, այս ամիրան ևս անեցիների սրտով չի լինում և 1161-ին նրանք վերջինիս վռնդում են քաղաքից: Ալ Ֆարիկին այս մասին գրում է. «Անա (Անի) քաղաքում **քահանաներն ապստամբեցին** նրա տիրոջ՝ Ամիր Ֆադլուն իբն Մանուչիհի ղեմ, որը պարտվեց ու զնաց Բաքրան (Բազարան) կոչված ամրոցը Սուրմարիի մոտ: **Քահանաներն Անան հանձնեցին Ափխազաց թագավոր Քարքուրին (Գեորգի):** Նրա զորքը եկավ տիրեց, մեծ հարստություն կողոպտեց...» (Մարգարյան, 1980, 101):

Այս և նախորդ վկայություններին անդրադարձած ուսումնասիրողները սովորաբար ընդգծում են, որ Անիի քահանաներ ասելով պետք է հասկանալ քաղաքի քրիստոնյաներին (Առաքելյան, 1964, 165, Մարգարյան, 1980, 99): Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ եթե այս ժողովրդական ելույթների շարժիչ ուժը Անիի քրիստոնյա հայ բնակչությունն էր, ապա նրան գլխավորողը քաղաքի **հոգևորականությունն** էր: Այդ է պատճառը,

որ արաբ հեղինակները միահամուռ շեշտում են քահանաներին («քահանաներն ապստամբեցին»): Այս իրողությունն ավելի է հիմնավորվում ու հստականում 1161 թ. դեպքերի կապակցությամբ հայ հեղինակի՝ Մխիթար Գոշի մոտ պահպանված վկայությունների շնորհիվ: Նա նշում է, որ Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսն ու Ապիրատյան ազնվականական տունը ներկայացնող նրա եղբայրները մի քանի անգամ հրավիրել են Գեորգիին՝ Անին գրավելու, բայց հետո (ինչպես երևում է, այն բանից հետո, երբ սեփական ուժերով վտարել են քաղաքի ամիրային), երբ Գեորգին արշավել է դեպի Անի, չեն ուզել քաղաքը հանձնել նրան: Վրաց թագավորը քաղաքը գրավել է բռնությամբ և ընդդիմացողներից շատերին պատժել, որոնց թվում՝ քահանաների ու կրոնավորների. «Իսկ Գիորգի իբրև թագաւորեաց... առնոյր եւ զքաղաքն Անի միանգամ եւ երկիցս կոչելով եպիսկոպոսին Բարսղի եւ եղբարաց նորա՝ որոց Մագիստրոսին Յասանայ. եւ ապա ընդդիմացեալ ոչ տային ի ձեռն նորա զքաղաքն. եւ առեալ բռնաբար զքաղաքն եւ հրամայեաց աւար հարկանել եւ մերկացուցեալ զօրացն զամենեսեան զարս եւ զկանայսն, զքահանայս եւ զկրօնաւորս՝ բազում անարգանս ցուցանէին յաղագս ընդդիմանալոյ...» (Մարգարյան, 1980, 101-102): Այստեղից միանգամայն որոշակի է դառնում, որ հիշյալ անցքերի ժամանակ, որպես անեցիների ընդհանուր շահերի արտահայտիչ հանդես է եկել քաղաքի հոգևորականությունն իր եպիսկոպոսի զլխավորությամբ: Իսկ թագավորն ընդդիմացողներին պատժելիս թեև եպիսկոպոսին հրապարակայնորեն չի դատապարտել, բայց նրա ենթականերին՝ քահանաներին ու կրոնավորներին, հասարակ քաղաքացիների հետ միասին ծաղր ու ծանակի է ենթարկել<sup>29</sup>: Ինչպես վերը տեսանք, արաբ պատմիչները 1155-ին քաղաքի մի ամիրայի փոխարինումը մյուսով և 1161-ին Անիի հանձնումը վրացիներին ներկայացնում են որպես «հայ քահանաների» ձեռքի գործ: Իսկ Մխիթար Գոշի վկայությունը գալիս է լրացնելու այդ տեղեկությունը՝ Անիի եպիսկոպոսի խաղացած էական դերը պարզաբանելով: Բնական է, որ քաղաքի քահանաներն ինքնազուխ չէին գործում, այլ ղեկավարվում էին իրենց հոգևոր պետի՝ Բարսեղի կողմից, որը լինելով Անիի այս շրջանի ամենաազդեցիկ ազնվականական տան զավակ՝ հետագայում ևս բավական

ինքնուրույն գործունեություն է ծավալել: Ինչպես վերևում նշվեց, նա իբրև «արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անույ», «եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ» համարվում էր Հյուսիսային Հայաստանի ողջ հայ հոգևորականության առաջնորդը, գլխավոր դեր կատարում Հռոմկլայի կաթողիկոսական Աթոռի հետ եղած հարաբերություններում՝ հանդես գալով դավանական անգիջողականության պաշտպանությամբ, իսկ 1195թ. Անիում կաթողիկոս է ձեռնադրվում: Հռոմկլայի Աթոռը, որ մեկ այլ դեպքում անհապաղ անօրինական կհամարեր նման ձեռնադրությունը, ձեռնպահ է մնում որևէ որոշում կայացնելուց:

Հոգևոր և եկեղեցական վերագաղթոնքի հետ միասին անեցիներն այս շրջանում ավելի համախմբված են դառնում: Հատկանշական է, որ 1186 թ. թեև քաղաքը գտնվում էր ամիրայական տիրապետության տակ, բայց անեցիները զենք վերցնելով հարձակում են գործում մահմեդականների կողմից զավթված և ավազակային որջ դարձած Ծառաքար ամրոցի վրա, գրավում այն և վերադարձնում իր օրինական տիրոջը, որն այլ ոք չէր, քան Անիի եպիսկոպոս Բարսեղը (Վարդան, 1861, 174):

Հատկանշական է, որ Ծառաքարի մահմեդականների կատարած չարագործությունների թվում ժամանակակիցների վրա հատկապես ցնցող տպավորություն է թողել յոթ հայ հոգևորականների սպանությունը: Վարդան Արևելցին գրում է, որ մոլեռանդները. «եօթն կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակաց՝ փողոտէին. որոց պատիւ տօնին խառնեսցի ի տօն մեր Լուսաւորչին Գրիգորի» (Վարդան, 1861, 171): Այս վկայությունն ուշագրավ է նաև այն առումով, որ ցույց է տալիս նահատակված հոգևորականների պատվին տոնի հաստատման իրողությունը: **Ծառաքարում նահատակված յոթ հայ հոգևորականներն անմիջապես համարվել են եկեղեցու վկաներ և Անիում նրանց հիշատակը տոնվել է Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը:**

Այսպիսով, տևական պայքարի գնով անեցիները հասնում են այն բանին, որ Շեղդադյանների տիրապետության վերջին շրջանում, ժԲ դարի վերջերին ոչ միայն լիակատար կրոնական ազատություն են վայելում, այլև ձեռք են բերում քաղաքական կշիռ ու հեղինակություն: Եվ այդ գործում կարևորագույն դեր է կատարում Անիի հոգևորականությունը:

## ԱՆԻԻ ԵՐԵՑԱՆԻՆ ԺԳ ԴԱՐՈՒՄ

1198 թ. վերջերին, երբ Անին վերջնականապես ազատագրվում է Շեղդադյանների տիրապետությունից և անցնում Ջաքարյանների իշխանության տակ, սկսվում է քաղաքի երկրորդ խոշոր ծաղկման շրջանը, որը թեև 1236 թ. ընդհատվում է մոնղոլական ներխուժման հետևանքով, բայց այդ դաժան հարվածն անգամ անմիջապես չի կասեցնում Անիի զարգացումը, և ինչպես փաստերն են վկայում, մինչև դարավերջ քաղաքը շարունակում է բնականոն վիճակով ապրել: Այս դարաշրջանում են հանդես գալիս Անիի եպիսկոպոսներ Ապիրատի որդի Սարգիսը, Աբուղամրի որդի Գրիգորը, Ամիր Երկաթի որդի Բարսեղը, Սարգիս Բ-ը, Մխիթար Տեղերցին, Գրիգոր Բ-ը, Հովհաննես Ա-ը, որոնք ձեռներեց գործիչներ էին և նպաստում էին եպիսկոպոսական աթոռի զորացմանը:

Անիի քահանայական դասը, որն, ինչպես տեսանք, ԺԲ դարում արդեն համախմբված ուժ էր ներկայացնում, ԺԳ դարի մի շարք վիճագրերում հանդես է գալիս **երեցանի** («իրիցանի») ընդհանուր անվամբ<sup>30</sup>: Արդեն նշել ենք, որ բազմաթիվ եկեղեցիների քաղաք Անիում բնականաբար նաև մեծ թվով քահանաներ կային: Քահանաներն ու նրանց ընտանիքի անդամները իրենց հովանավորության տակ գտնվող ազգականների հետ միասին բավական խոշոր սոցիալական խավ էին կազմում, ուստի պատահական չէ, որ ունեին իրենց ուրույն շահերը:

**Անիի երեցանին**, որպես մի միասնություն, առաջին անգամ այդ անվամբ հիշվում է Սարգիս Ա եպիսկոպոսի 1220 թ. արձանագրության մեջ, ուր վերջինս, վերացնելով քաղաքում երեցկնոջ մահվան ժամանակ գանձվող հարկը, նշում է, թե այլևս ոչ ոք իրավունք չունի այն պահանջել **«իրիցանուց»** (Դիվան, Ա, 17): Երեցանի (իրիցանի) բառը հանդիպում է նաև Սարգիս Բ եպիսկոպոսի՝ անուսնական հարցերի կարգավորմանը նվիրված թերի ընթերցվող արձանագրության մեջ (Դիվան, Ա, 25): 1269 թ. Անիի տաղմածիները (հարկահավաքները) եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու արձանագրության մեջ հայտնում են, որ իրենց պարոնների «երկարկենդանութեան» համար Անիի երեցանին ազատում են բաժ հարկից. «Շնորհիւն Աստուծոյ մենք տաղմածիքս... **բարձաք ի յԱնո իրիցանուս զբաժն գոր ի**



**սկզբանէ ազատ էր.** մենք վերստին այլ հաստատեցաք, չունի որ իշխանութիւն բաժ ուզել ու ոչինչ ազգ ով իցէ, որ կապելոր լինի...» (Դիվան, Ա, 24): Այստեղ կարևոր է նաև այն նշումը, որ Անիի երեցանին ի սկզբանէ ազատ է եղել բաժից: Սակայն մոնղոլ իշխողների ու նրանց կապալառուների՝ հարկահավաքությամբ հարստանալու մոլուցքը կարճ ժամանակ անց նորից է կախման մեջ դրել քաղաքի քահանաներին: Ս. Առաքելոց եկեղեցու 1280 թ. արձանագրության մեջ ասվում է. «Ես Նուրայդին Քոթիթս իմ ընկերաւքս եկի յԱնի տաղմիս վերայ, **տեսայ զԱնոյ իրիցանուս զի առլէխին հրամանքն որ ի սկզբանէ բաժ ու տամղա չէին տվել,** ես այլ հաստատեցի իմ ընկերաւքս, որ ոչ բաժ տան ոչ տամղայ» (Դիվան, Ա, 23): Որոշ ժամանակ անց Անիի երեցանու չհարկվելու իրավունքը կրկին անտեսվել է: 1280-ական թվականների վերջերին քաղաքի պարոնությունը վերստին ստանձնելով՝ Ջաքարյանները նորից են երեցանին ազատել հարկից Ս. Առաքելոցի 1289 թ. արձանագրությամբ («...տեսաք զԱնո աթոռս եւ **զիրիցանիս...**» Դիվան, Ա, 22): Անիի երեցանու ունեցած հեղինակության մասին է վկայում Գրիգոր Բ եպիսկոպոսի 1277 թ. արձանագրությունը, ուր նա սահմանելով անուսնալուծության ժամանակ կողմերից յուրաքանչյուրին տրվող գույքի չափը, հայտնում է, որ որոշումը կայացրել է քաղաքի պարոնի և քահանաների կամակցությամբ՝ «...կամակցութեամբ պատրոնին Փախրադինին եւ **քահանայից քաղաքացեացս...**» (Դիվան, Ա, 15): «Երեցանի» բառը պահպանվել է նաև Անիի պեղումներից գտնված մի արձանագրության բեկորի վրա (Դիվան, Ա, 75):

Այսպիսով, Անիի քահանայական դասը ԺԳ դարի արձանագրություններում հանդես է գալիս **երեցանի** ընդհանուր անվանման տակ որպես որոշակի արտոնություններ ու շահեր ունեցող սոցիալական խավ: Ինչպես երևում է վերը վկայակոչված արձանագրություններից, մոնղոլական տիրապետության շրջանում երեցանին թեև ամբողջովին չի կարողանում խուսափել հարկահավաքների կամայականություններից, սակայն շարունակ պայքարում է իր իրավունքների պաշտպանության համար և ժամանակ առ ժամանակ հաջողության հասնում:

Այս դարաշրջանի Անիի եկեղեցական կյանքի հետաքրքիր երևույթներից մեկն էլ նրա քահանաների պայմանական բաժանումն էր **բնիկների ու եկվորների:** Այդ մասին են վկայում մի

քանի վիճազիր արձանագրություններ: «Եկվորների» հոսքը հավանաբար սկսվել է հենց ԺԳ դ. սկզբին, երբ Ջաքարյանների տիրապետության տակ անցած քաղաքը բուռն ծաղկում է ապրում և կտրուկ մեծանում է բնակչության թիվը: Նման պայմաններում բնիկ անեցիներն ամեն կերպ աշխատում էին ընդգծել իրենց տեղացիությունը: Օրինակ՝ 1211 թ. Հաղպատում կրթություն ստացած Սահակ քահանան իր պատվիրած Ավետարանի հիշատակարանում շեշտում է, որ «ազգով և տոհմով» անեցի է («Սահակ... **ազգաւ եւ տոհմիւ ի մեծ ճայրաքաղաքէն յԱնույ...**» (ԺԳ, 71):

Անիի երեցանու՝ ըստ տեղաբնիկության սկզբունքի բաժանվածության մասին վկայող առաջին վավերագիրը Սարգիս Ա Եպիսկոպոսի վերը հիշված 1220 թ. արձանագրությունն է: Այստեղ «զամենայն քաղաքիս քահանայիցս» ընդհանուր ձևակերպումը հետագա շարադրանքում մասնավորեցվում է՝ «զփարթամաց եւ զաղքատաց, **զեկաց եւ զբնակաց...**» (Դիվան, Ա, 17): Ուշագրավ է, որ եկվոր և բնիկ (զեկաց եւ զբնակաց) քահանաներից բացի նշվում է նրանց ևս մի բաժանում՝ ըստ սոցիալական վիճակի՝ ունևորների և չուևնորների (զփարթամաց եւ զաղքատաց), ինչպես որ այդ արված է ԺԳ դարի մեկ այլ արձանագրության մեջ («...զԱնո քահանայիցս՝ զմեծի եւ զփ[ոքրաւ]որաց...» (Դիվան, Ա, 20): Սարգիս Բ Եպիսկոպոսի Ս. Առաքելոց եկեղեցում թողած մի արձանագրության մեջ նույնպես ընդգծվում է Անիի երեցների տեղացի և եկվոր լինելը. «Ես տէր Սարգիս Եպիսկոպոս... **[ի]րիցանուս զեկաց եւ զբնակաց...**» (Դիվան, Ա, 25), իսկ քաղաքի պեղումներից գտնված մի քարաբեկորի վրա ընթերցվում է՝ «զՄարկոս **երեց բնական...**» (Դիվան, Ա, 56, հմտ. Գոշ, 1975, 36):

#### ՔԱՅԱՆԱՆԵՐ ԵՎ ԿՈՒՄԱԿՐՈՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

Անիի հոգևոր դասը եկեղեցական կարգերին համապատասխան մի ներքին տարաբաժանում ևս ուներ: Խոսքը վերաբերում է քաղաքի ծխական ամուսնացյալ քահանաներին (երեցներին) և Անիի ու մերձակա վանքերի կուսակրոն հոգևորականներին:

Քաղաքի եկեղեցիներից յուրաքանչյուրն ուներ իր ժողովուրդը՝ համայնքը, կամ ինչպես հետագայում սկսեցին անվանել՝ ծուխը, իսկ եկեղեցու քահանան այդ ծխի հոգևոր հովիվն էր: Եկեղեցին ու համայնքն անբաժան էին, և եթե այս կամ այն պատճառով

եկեղեցին փոխում էր հոգևոր ենթակայությունը, ասենք՝ ուղղակիորեն քաղաքի եպիսկոպոսարանին ենթարկվելու փոխարեն «նվիրաբերվում» էր որևէ վանքի, ապա նրա համայնքը ևս դասվում էր հիշյալ վանքին ենթակա բնակչության թվին: Այս իրողությունը պարզորոշ երևում է Անիի Ս. Ստեփանոս եկեղեցու օրինակով, որը 1225թ. Գրիգոր Ա եպիսկոպոսը «ամենայն ժողովրդեամբ» ընծայել էր Մարմաշենի վանքին (Օրբելի, 1963, 443): 1288-ին եկեղեցին «իւր ժողովրդովն» կրկին վերադարձվել է Անիի եպիսկոպոսարանի տնօրինությանը (Դիվան, Ա, 29):

Անիի երեցները, բնականաբար, ենթարկվում էին քաղաքի եպիսկոպոսին (երեցապետ եպիսկոպոս): Հոգևոր սպասավորների ավելի մեծ թիվ ունեցող եկեղեցիներն ունեին նաև **ավագերեց**: Ստեփանոս Օրբելյանի հայտնած մի տեղեկությունից կարելի է ենթադրել, որ Անիում նաև եղել է **քաղաքի ավագերեց** կոչում պատվանունը: Հեղինակը, մասնավորապես, այդպես է անվանում Մայր տաճարի փակակալ Մխիթար Անեցուն («թուղթն... գրեալ էր ի հոյակապ քաղաքն Անի, ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ **աւագերիցու քաղաքին և փակակալի սուրբ Կաթողիկէին**» (Օրբելյան, 1910, 332): Հավանական է, որ քաղաքի ավագերեցի կոչումը հաջորդաբար կրում էին Մայր տաճարի ավագ հոգևորականները: 1286թ. Կաթողիկէին նվիրատվություն կատարած Դավթի որդի Ռուբենը տեղի ավագերեցին կոչում է եկեղեցու «իշխեցող» (Դիվան, Ա, 36):

Ինչպես տեսանք, Անիի քահանայական դասը բազմանդամ էր, և նրա հիմնական մասը տոհմական ու ժխական եկեղեցիների սպասավորներն էին: Քաղաքի եկեղեցականների մի պարզ միջավայրի մասին կարող ենք պատկերացում կազմել ծանոթանալով երզնկացի Գրիգոր մականունով Ահարոն վարդապետի 1292թ. հիշատակարանին: Թշնամական հարձակումից մազապուրծ, Անիում ապաստան գտած վարդապետը Երզնկայում կիսատ թողած մատյանի գրչությունը շարունակել է այստեղ, իսկ գործի վերջում գրել հիշատակարան, ուր երախտագիտությամբ նշում է իր անեցի հյուրընկալներին: Նրանցից Գրիգոր ծեր քահանան Ահարոնին տեղ է տվել իր տանն ու այն եկեղեցում, որի երեցն էր: Հիշատակարանում մասնավորապես կարդում ենք. «...խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդեալ հասոյց զմեզ յԱնի քաղաքս, և աստ եղև կատարումն գրոցս... որք յետ մեր

հանդիպիք այսն կտակի, ընթերցմամբ կամ գաղափար առնելով... (յիշէք) զմեզ և ծնողաց մերոց և վարդապետաց ... և որք ողորմութիւն են արարել մեզ և աւզնել ի ծաղք և ի պետք գրոցս, և Սարկաւազ քահանային՝ (որ) զաւրինակն շնորհեց, և Գրիգոր ծեր քահանային, որ զմեզ ժողովեր յիւր բնակութիւնն և եկեղեցին, և Սիմէոն միակեցին Սարընդունցոյն, որ առ մեզ հայրաբար բազում խնամք և սէր և գութ եցոյց և ողորմութիւն ...» (ԺԳ, 672-673): Հիշատակարանի հակիրճ տողերի ետևում ուրվագծվում է անեցի եկեղեցականների միջավայրը, որը եղբայրաբար է ընդունել երզնկացի տարագիր վարդապետին. Սարկավազ քահանան ձեռագրի նախօրինակն է տվել, Գրիգոր քահանան նրան օթևան հատկացրել ու իր եկեղեցին տարել, իսկ Սիմեոն մենակյացը այլազան աջակցություն է ցուցաբերել<sup>31</sup>:

Ինչպես վերը նշվեց, անեցի երեցները քաղաքի կյանքում մեծ կշիռ ունեին: Վիճագիր արձանագրությունները վկայում են, որ քաղաքի քահանաներից ոմանք նաև խոշոր միջոցների տեր էին և հանդես էին գալիս ոչ միայն որպես նվիրատվություններ ընդունողներ, այլև հաճախ հենց իրենք էին նշանակալից նվիրատվություններ կատարում եկեղեցիներին ու քաղաքամերձ վանքերին:

Երեցների համեմատությամբ քաղաքի կուսակրոն հոգևորականներն ու վանական միաբանությունների անդամները փոքրաթիվ էին, բայց նրանք էլ իրենց ծանրակշիռ դերն ունեին հասարակության ընդհանուր հոգևոր կյանքում ու հատկապես մշակույթի բնագավառում: Նրանք հովվական աշխատանք չէին կատարում որևէ համայնքում, այլ զբաղված էին կրոնավորականությանը հատուկ գործերով, ըստ կանոնական պահանջի. «իսկ քահանայից վանականաց ոչ է պարտ ժողովրդականաց լինել հովիւ, այլ կրանաւորութեան... պարապիցին» (Գոշ, 1975, 36): Դարձյալ կանոնական պահանջի համաձայն կուսակրոնները հատուկ հարգանքի էին արժանի՝ «ամենայն քահանայից եւ ժողովրդականաց պարտ է յարգել եւ մեծարել զվարդապետս եւ միանգամայն իսկ զամենայն պաշտօնեայս ուխտի» (Կանոնագիրք, 1964, 394):

Վանական միաբանության հիմնական կազմի մասին կարող ենք դատել տարածաշրջանի վանքերից մի քանիսում, հիմնականում ԺԳ դարում գրված այն կանոնագիր արձանագրություններից, որոնցում սահմանվում են մահացած հոգևորականների համար մատուցվող պատարագները: Այդպիսի արձանագրություններ կան Հոռոմոսում, Բազմայրում, Արջո Առիճում,

Հառիճում, Բագարանում (Սարգիսյան, 1864, 150, 183, 191, 204, Ալիշան, 1881, 160): Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից առավել տեղեկաշատ է Արջո Առիճի արձանագրությունը, որը գրվել է Գրիգոր Ա եպիսկոպոսի կողմից: Նրանում մասնավորապես ասվում է. «Որք միաբան ի սուրբ յուխտիս հանգուցեալ են՝ պատարագել զՔրիստոս... Յայտնութեան զպահքն Ը (8) աւր անխափան զամենայն եկեղեցիքս եւ միա[բ]անին, որ ի Քրիստոս փոխի՝ հաւրն եւ վարդապետին Դ (4) Խ (40) եւ իրիցոյն եւ բնաբեղին Գ (3) Խ (40) եւ աշխարհական հաբեղին եւ մանգանն Բ (2) Խ (40) եւ ամենայն եղբայր աւր Ա (1) ժամ արասցէ» (Սարգիսյան, 1864, 191): Այստեղ տեսնում ենք քառասունքների հատկացման երեք աստիճան և միաբանական կազմի վեցյակ տարաբաժանում՝ վանահայր, վարդապետ, երեց, բնաբեղա (կուսակրոն), աշխարհական արեղա, մանուկ (սարկավա՞գ):

Բուն Անիում ու նրա շուրջը մի քանի վանքեր կային: Վանքերն էին այն հիմնական կենտրոնները, ուր ծաղկում էր միջնադարյան գիտությունն ու մշակույթը, մասնավորապես նաև գրչության ու մանրանկարչության արվեստը: Սույն գրքի երկրորդ մասում, որը նվիրված է Անիի ձեռագրական ժառանգությանը, հանգամանորեն կժանոթանաք Անիի Բեխենց վանքին և հռչակավոր Հռոմոսի վանքին, դրանցում ստեղծված ձեռագրերին ու ձեռագրական մշակույթի ասպարեզում իրենց ավանդը բերած այդ վանքերի միաբաններից շատերին:

Անիում Բեխենց վանքից բացի հիշվում են Ներքին բերդի համալիրը, որը Ջաքարե ամիրսպասալարի արձանագրության մեջ կոչվում է «մենաստան» (Դիվան, Ա, 58), Տիգրան Հոնենցի հիմնած Ս. Գրիգոր եկեղեցին ամփոփող վանքը, ուր կառուցվել է նաև «բնակարան վանականաց» (Դիվան, Ա, 63), այսպես կոչված «Կուսանաց» վանքը, քաղաքի պարսպից ոչ հեռու գտնվող Կարմիր վանքը: Իսկ Անիի միջնաբերդի դիմաց, Ծաղկոցաձորի աջ ափին գտնվող այրերի ուսումնասիրության ժամանակ բացահայտվել են երկու ժայռափոր վանական համալիրներ (այս ամենի մասին հանգամանորեն կխոսվի «Անիի եկեղեցիները» բաժնում): Անին երեք կողմից օղակում էին Հռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի վանքերը, իսկ ավելի հեռու Արգինայի, Մարմաշենի, Խծկոնքի և Հառիճի վանքերն էին, Տեկորն ու Մրենը, որոնք ևս սերտ կապեր ունեին քաղաքի հետ: Այս բոլոր վանքերի վանահայրերը սովորաբար վարդապետներ էին, միայն Հռոմոսում և մեկ անգամ

Խժկոնքում հանդիպում ենք եպիսկոպոսական աստիճան ունեցող վանահայրերի:

Անիի կաթողիկոսարանի վարդապետներից բացի սկզբնաղբյուրներում հիշատակվում են Աբիսողոմ, Առաքել (Վառ), Կիրակոս, Վարդան վարդապետները, Բեխենց վանքի վանահայր Եղբայրիկը, գրիչներ Մարգարե և Եղբայրիկ արեղաները, բազմաթիվ այլ կուսակրոն հոգևորականներ, մենակյացներ (տե՛ս Անիի հոգևորականության անվանացանկը): Ծնունդով Անիից էին Սանահինի և Հաղբատի ԺԳ դարի երկու նշանավոր առաջնորդներ Ավետիսը և Համազասպ Անեցի<sup>32</sup>:

Այն հարցին, թե Անիում արդյո՞ք եղել է կուսանոց կամ եկեղեցու կին սպասավորներ՝ սարկավագուհիներ, առայժմ դժվար է միանշանակ պատասխանել<sup>33</sup>:

### ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՏՈՒՄԵՐ

Անի քաղաքի եկեղեցական կյանքի պատմության մեջ հետաքրքիր էջեր են ներկայացնում նրա քահանայական տոհմերի (տների) մասին պահպանված վկայությունները: Քահանայական տոհմերն ընդհանրապես տարածված էին միջնադարյան Հայաստանում: Օրինակ՝ Մաշտոց Ա կաթողիկոսի մասին ասվում է, թե «սա էր **ի տոհմէ քահանայական** ի գեղջէն Եղևարդայ...» (Հովսեփյան, 1951, 89), իսկ Հովհաննես Սարկավագի մասին նշվում, որ նա ծագում էր «ի գաւառէն Փառիսոսայ, **ի քահանայական ազգէ**» (Արևելցի, 1861, 159): Հայ իրականության մեջ բազմաթիվ քահանայական տների գոյության մասին ուշագրավ վկայություն կա մի վրացական բնագրում (Մելիքսեթ-Բեկ, 1934, 104): Պարզվում է, որ Անի քաղաքում ևս, ոչ միայն եպիսկոպոսական աթոռն ու մի շարք եկեղեցիներ էին տոհմական, այլև կային քահանայական տներ, որոնց ներկայացուցիչները սերնդե սերունդ սպասավորում էին այս կամ այն եկեղեցում: Այդօրինակ ժառանգականության մասին պահպանված հնագույն վկայությունը 1035 թվականից է: Անիի Ս. Փրկչի եկեղեցին կառուցող Աբլղարիբ մարզպանը շինարարական արձանագրության վերջում եկեղեցու ինչքի հափշտակության դեմ ուղղված «անեծքի բանաձևից» հետո ավելացնում է. «... եւ որ **զԳրիգոր իրիցու որդիքս յեկեղեցապանութենէ հանէ**, կրկին անիծիցդ

պարտական լիցի, իսկ կատարիչ գրիս՝ արհմեալ լիցի...» (Դիվան, Ա, 46): Այսինքն՝ Աբլղարիբը սահմանում է, որ իր կառուցած եկեղեցու եկեղեցապանությունը պատկանելու է Գրիգոր երեցի որդիներին, նրանց սերնդին: Նույն Աբլղարիբ մարզպանը երկու տարի անց իր մոր՝ Շուշան Պահլավունու կառուցած Ս. Հակոբ եկեղեցու քահանայությունը «որդոց որդի» հանձնում է Գեորգ երեցին. «...ես Ապլղարիպ մարզպան ետու զՍուրբ Յակովբ Գեորգ իրիցու՝ որդեցե յորդիս...» (Դիվան, Ա, 49):

1236 թ. Անիի Կաթողիկեին Ավետարան նվիրաբերած Նացուալը հիշատակարանում նշելով եկեղեցու երեք սպասավորներին՝ Դասապետ, Գերսամ քահանաներին և Սարգիս սարկավագին, հայտնում է, որ մատյանը տվել է նրանց **«որդիցե յորդիք»** (ԺԳ, 198), որից կարելի է ենթադրել, թե վերջիններս ազգականներ էին և այստեղ նույնպես գործ ունենք քահանայական տան հետ:

Հատկապես հետաքրքիր են ԺԲ դարի նշանավոր պատմագիր, Անիի Կաթողիկեի ավագերեց Սամուել Անեցու ժառանգների մասին պահպանված վկայությունները: 1233 թ. նրա թոռը՝ Աբրահամ երեցը, նվիրատվություն է կատարել Խծկոնքի վանքին: Արձանագրության մեջ նա հիշում է հորը՝ Սարկավագ քահանային, և համբավավոր պապին՝ վերջինիս հիշատակին նվիրելով կատարած նվիրատվության դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը: Ահա այդ արձանագրությունից մի հատված. «Ի ՈՁԲ (1233) թուխ շնորհիւն Քրիստոսի, **ես Աբրահամ երեց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի** ետու զիմ զանձագին Բ (2) տուն նորաշէն եւ ի վերէն Բ (2) կուղպակ ի սուրբ ուխտս ի Խծկաւնս... եւ փոխարէն հատուցէն մեզ յամենայն ամի Զ (6) աւր պատարագ՝ Դ (4) Աբրահամու եւ Բ (2) տէր պապ երիցու...» (Սարգիսյան, 1864, 211): Արձանագրության շնորհիվ մեզ հայտնի է դառնում, որ Սամուել Անեցու քահանա որդին Սարկավագ անունն է կրել: Տեղին է հիշել, որ Անեցին ժամանակին աշակերտել է մեծ ուսուցչապետ Հովհաննես Սարկավագին, որից հետո, բնական պետք է լինի ենթադրությունը, թե Սամուելը որդուն Սարկավագ է անվանակոչել ի պատիվ սիրելի ուսուցչի:

Միանգամայն հնարավոր է, որ Սամուելի որդի Սարկավագն է 1151 թ. նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրականության մեջ երբեմն կոչվում է նաև Սարկավագի եկեղեցի: Պահպանված արձանագրությունը վկայում է. «Ի թուին Ո (1151) ես Սարկաւագ քահանա զայս ծերացեալ տաճարս Սըրբոյն Սարգսի վերստին

նորոգեցի ի հրմանէ ի յինոց գուց. Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւդս յիշեսցիք ի Քրիստոս Յիսուս» (Դիվան, Ա, 56): Սույն արձանագրութիւնը Անիի Շեղդադայան տիրապետության շրջանից հայտնի առաջին շինարարական վկայագիրն է: Հիշենք, որ այդ ժամանակ եկեղեցաշինության համար պայմանները բնավ էլ նպաստավոր չէին և նման գործ կարող էր կատարել միայն քաղաքում ամուր դիրք ու հենարան ունեցող մեկը: Սամուել Անեցին, որը նույն այդ տարիներին Մայր տաճարի ավագերեցն էր, անմիջական կապեր ուներ ժամանակի Հայոց կաթողիկոսի՝ Գրիգոր Գ Պահլավունու հետ, որի պատվերով էր գրում իր «ժամանակագրութիւնը» և, հետևաբար, բավական ճանաչված անձնավորություն էր, կարող էր իր որդի Սարկավագի ձեռնարկի երաշխավորը հանդիսանալ՝ նրան նաև օժանդակելով նյութապես ու բարոյապես: Սարկավագի արձանագրության վերջաբանը ևս ասես հուշում է այս իրողության մասին: Այն ոչ թե ուղղված է հետագա սերունդներին, այլ «ծերացյալ» տաճարը հիմնովին նորոգված տեսնելու եկած ներկաներին՝ «Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւդս յիշեսցիք...»:

Սամուելի թոռ և Սարկավագի որդի Աբրահամ երեցից հետո այս քահանայական տոհմը շարունակվել է թե ոչ՝ հայտնի չէ: Խժկոնքի 1233 թ. արձանագրության մեջ Աբրահամը հիշատակում էր իր մի քանի ազգականներին (Խոցադեղին, Հովհաննես երեցին, Տիրանցին, Շահամին), որոնք արդեն մահացել էին և թաղվել վանքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ (Սարգիսյան, 1864, 211): Ինչևէ, Անեցի մատենագրի տոհմի երեք սերնդի մասին պահպանված վկայությունն արդեն իսկ ուշագրավ իրողություն է (այս առումով Սամուել Անեցին հայ միջնադարյան պատմիչներից թերևս ամենաբախտավորն է): Անիի Կաթողիկեի 1286 թ. մի արձանագրության մեջ հիշվում է եկեղեցու ավագերեց Սարկավագը (Դիվան, Ա, 36): Որևէ փաստական հիմք չունենք այս Սարկավագին Սամուելի տոհմի հետ առնչելու համար: Սակայն տեսականորեն չի բացառվում, որ նա իր անունը ստացած լինի պապի անունից, որպիսին կարող էր լինել Սամուելի որդի Սարկավագը:

Մեկ այլ քահանայական տան մասին տեղեկություն է պահպանվել Անիի Ս. Փրկչի եկեղեցու 1193 թ. արձանագրության մեջ: Շեղդադայանների տիրապետության վերջին շրջանում, երբ քաղաքի հայ բնակչությունն ավելի մեծ ինքնուրույնություն ուներ, վերականգնվում էին եկեղեցիներ, կառուցվում ժամատներ, կանգնեցվում խաչքարեր: Այս ժամանակ է, որ



Տրդատ քահանան ու նրա կին Խուշուշը տեր են դառնում Աբլղարիք մարզպանի կառուցած Ս. Փրկչի եկեղեցուն՝ արձանագրության մեջ այն անվանելով «զմեր գանձագին հայրենիքիս» (Դիվան, Ա, 47): Նրանք նորոգում են եկեղեցին, կառուցում ժամատուն, տալիս բազմաթիվ ընծաներ: Արձանագրության սկզբում Տրդատը նշում է իր քահանա նախնիներին՝ գրելով. «... Արդ ես **Տրդատ քահանա, որդի Սոսթենես քահանաի, թոռն Գեորգա՝ աւագերիցո Արծոյ...**» (Դիվան, Ա, 47): Դժվար է ստույգ որոշել Տրդատի պապ Գեորգը արուճեցի էր, թե անեցի, բայց ինչպես երևում է ամուսինների՝ Ս. Փրկչին տված անշարժ գույքի թվարկումից, նրանց «հայրենի ժառանգությունը» գտնվում էր Արուճում: «...Ես Տրդատ երեց եւ լծակից իմ Խուշուշս ի մեր հայրենի ժառանգութեանց ի սպաս պիտոյից հացի եւ զինոյ **տուաք չորս այգի յԱրուճ՝ զՍաղար եւ զՇլիկ եւ զԿովարածն եւ Բլար Խաչկայն եւ տուն եկեղեցւոյն դիմաց. մեծ արտ Բեխենցն...**» (Դիվան, Ա, 47): Արուճն այդ շրջանում բարգավաճ ավան էր, որը սերտ կապեր ուներ Անիի հետ<sup>34</sup>: Տրդատի հոր՝ Սոսթենես քահանայի մասին այլ տեղեկություններ չկան: Անիի շրջանին վերագրվող ԺԲ դարի վերջերի մի ձեռագրի (ՄՄ, թիվ 7635) խորաններից մեկում պահպանվել է «Ձմեղապարտ եւ անարժան գրիչ Սոսթենես յիշեսջիք ի Տէր» (ԺԳ, 252) հիշատակարանը, իսկ 1219-ին Սոսթենես անունով միաբան է հիշատակվում Յառիճում (ԺԳ, 114), բայց դժվար է ասել, թե սրանք կապ ունեն Տրդատի հետ:

Ս. Փրկչի արձանագրության մեջ, երբ նշվում են Տրդատի ու կնոջը հատկացվելիք պատարագները, հիշվում է նաև Սարգսիկ անունով մեկը՝ Սողոմոնի որդին. «...պարտին ժառանգորդք զկնի մեր կատարել ամենայն ամի Խ (40) մի Ի (20) Տրդատա, Ի (20) տիկին Խուշուշին եւ Բ (2) Սարգսկանն, որդո Սողոմոնի անխափան կատարել» (Դիվան, Ա, 47): Վերջինս հավանորեն ազգակցական կապ ուներ Տրդատի հետ (հնարավոր է, որ Սողոմոնն ու Սոսթենեսը եղբայրներ էին):

Անիի քահանայական երկու ընտանիքի հանդիպում ենք քաղաքի ԺԴ դարի գաղթականության այն հատվածի մեջ, որը հաստատվել էր Պարսկաստանի նորաշեն Սուլթանիա քաղաքում: Այս տների առավել հայտնի ներկայացուցիչներն էին նշանավոր գրիչ, ծաղկող, կազմարար Մխիթար Անեցին և նրա հոգևոր հայրը՝ գրասեր Գրիգոր քահանան: Մխիթարը, որը մի շարք ձեռագրեր է ընդօրինակել Սուլթանիայում, 1334 թ. Ավետարանի (Երուսաղեմ, թիվ 1941) հիշատակարանում նշում է, որ իրեն հորդորել են գործը սկսել նկարիչ Ավագը և Գրիգոր Անեցին՝ «բազմերախտ հոգեւոր

հայրն մեր, ստոյգ քարտուղարն եւ անհաս ընթերցողն՝ **Գրիգոր երեց Անեցին**» (Պողոթյան, 1972, 484): Ձեռագրի վերջում գրած հիշատակարանում Մխիթարը Գրիգորին կոչում է ուսուցիչ ու խրատատու՝ «յիշեսցիք... զբազմերախտսն մեր, զուսուցիչսն մեր եւ զխրատիչսն, զհոգեւոր հայրն մեր զԳրիգոր քահանայ Անեցի եւ... զԱվագ...»: Գրիչը հիշում է նաև իր մեկ այլ ուսուցչի՝ «ճան Յակոբ քահանային»: Այնուհետև Մխիթարը հիշատակում է իր ընտանիքի անդամներին՝ «... յիշել աղաչեմ... զՄխիթար մեղօք մեռեալ ոգի, անարժան գծող սորին... նաեւ զԹնօղսն իմ ըստ մարմնոյ, զհայրն իմ՝ զտէր Յակոբ քահանայ եւ զմայրն իմ՝ զՍեդա խաթուն եւ զհարազատ եղբարսն իմ՝ զԳրիգոր քահանայ եւ զԳէորգ քահանայ եւ զքոյրն իմ՝ զԶալալն...» (Պողոթյան, 1972, 484):

Այսպիսով, պարզվում է, որ անեցի Յակոբ քահանան ունեցել է երեք քահանա որդի՝ Գրիգոր, Գէորգ, Մխիթար: 1338 թ. ընդօրինակած Աստվածաշնչի (ՄՄ., թիվ 4429) չափածո հիշատակարանում Մխիթարը դարձյալ հիշատակում է իր ազգականներին՝ բայց նաև նշելով, որ նրանք արդեն մահացել են.

«Յիշեմ զգաւառն իմ հայրենին,  
 Ջմայրաքաղաք ամուր Անին,  
 Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին՝  
 Տէր Յակոբա եւ Սեդային,  
 Եւ իմ եղբարցն հարազատին՝  
 Գէորգա եւ Գրիգորին,  
 Նայ եւ քվերն իմ՝ Զալալին,  
 Որք են ննջեալ ի տապանին...» (ԺԴ, 310):

Այս հիշատակարանում Մխիթարն առանձնակի ընդգծում է իր ավագ եղբորը որպես իր ուսուցչի՝

«...Երեց եղբօրն իմ Գէորգին,  
 Ըզկնի իմ շատ աշխատողին  
 Եւ առաջին իմ ուսուցչին...» (ԺԴ, 310):

Անեցի գրիչը չի մոռանում նաև իր համերկրացուն՝ Գրիգոր Անեցուն, ու նրա որդի Պարոնին, որը հավանաբար իր երիտասարդ տարիների ընկերն է եղել:

«Սեդաւորիս գաւառակցին՝  
 Գրիգորու քահանային,  
 Սընընդակիցն իմ՝ Պարոնին» (ԺԴ, 309):

Հիշատակարանների ժողովածուում Պարոնի անունը գրված է փոքրատառով, մինչդեռ, ինչպես երևում է Գրիգոր Անեցու 1326 թ. հիշատակարանից, վերջինիս որդու անունը Պարոն էր, և Մխիթար Անեցին անկասկած հենց նրան նկատի ունի: Նույն հիշատակարանում Մխիթարը նշում է իր չորս աշակերտներին՝ Արասբուղին, Թաթոսին, Սայինբեկին, Գրիգորին:

Ինչպես պարզվում է այլ հիշատակարաններից, Գրիգոր Անեցին ևս քահանայի զավակ էր, ուներ քահանա եղբայր և որդի: 1326 թ. նա Սուլթանիայում Կարապետ գրչին պատվիրել է ընդօրինակել Իզնատիոսի Ղուկասի ավետարանի մեկնությունը (Երուսաղեմ, թիվ 453), որի հիշատակարանում նշվում են նրա ազգականները, ինչպես նաև Մխիթար Անեցին. «Աւրինեսցէ Քրիստոս Աստուած ստացող սուրբ գրոցս **գԳրիգոր քահանայ եւ զհայրն իւր զԵփրեմ քահանայ եւ զմայր իւր զԱւագ տիկին եւ զեղբայրն իւր Սարգիս քահանայ եւ զամուսին իւր Տիկնանցն** եւ զանդրանիկ որդին իւր **Մխիթար**, զփոխեալն ի Քրիստոս, եւ զսրբասնեալ շառաւիղն լուսոյ եւ զժառանգն աւրինութեան զորդեակն իւր **գՊարոն**, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: Նա եւ զհոգեւոր եղբայրն մեր՝ **զՄխիթար Անեցի՝ զերախտաւորն մեր...**» (Պողոտյան, 1967, 420):

Նույն հիշատակարանում Կարապետ գրիչը, անկասկած ստացողի պահանջով, նշում է նրա Անիից գաղթելու ու Սուլթանիա գալու պատճառը. «Եւ ունէր սա զքնակութիւնս իւր ի մայրաքաղաքն Անի: Արդ, վասն աւերման աշխարհին իւրեանց, եւս առաւել՝ վասն մայրաքաղաքին Անոյ, եկեալ բնակէր ի տեղիս յայս...» (Պողոտեան, 1967, 420): Գրասեր Գրիգոր Անեցին 1341 թ. նույն Կարապետ գրչին Սուլթանիայում պատվիրել է մի Աստվածաշունչ (Վեներտիկ, թիվ 935/8) և այն ստանալով նվիրել է որդուն՝ Եփրեմ քահանային: Ինչպես երևում է, իր այս՝ թերևս կրտսեր որդուն, Գրիգորը կոչել է քահանա հոր անվամբ: Հիշատակարանում նշվում է, որ Գրիգորը ձեռագիրը ստացել է «ի ժառանգութիւն զաւակի իւրոյ՝ պատուական քահանային Եփրեմի» (ԺԴ, 328), իսկ վերջինս 1354-ին մատյանը նվիրել է Վարազավանքին՝ թողնելով համապատասխան հիշատակարան. «Ես նուաստ Եփրեմ քահանայ, որ ունէի զգիրքս Աստուածաշունչ ի հօրէ իմմէ ի Գրիգորո թահանայէ, նուիրեցի եւ ետու զսա ուխտիս Վարազայ Սուրբ Նշանին...» (ԺԴ, 328):

Այսպիսով, բերված հիշատակարանները մեզ ծանոթացնում են Անիի հոգևորականության տարագիր մի հատվածի ներկայացուցիչներին, որոնք քաղաքացիներից շատերի պես հարկադրված էին թողնել հայրենի քաղաքը: Հատկանշական է, որ անեցիները գաղթել են տոհմերով, ընտանիքներով, և դրանց մեջ եղել են նաև քահանայական տներ:

**ԱՆԻ ԳՈՎԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ** մասին մեր խոսքն ամբողջական չի լինի, եթե չհիշատակենք նաև քաղաքի մերձակա Հռոռնոսի, Բագնայրի, Արջո Առիճի վանքերի հոգևոր սպասավորներին: Անին, կարելի է ասել, իր այս արվարձանային վանքերի հետ միասին, ներկայացնում էր նույն եպիսկոպոսի իշխանության տակ միավորված հոգևոր-եկեղեցական ու մշակութային ամբողջություն: Դրա բազմակի վկայությունները կարող ենք տեսնել Անիի ձեռագրական մշակույթին, ինչպես և հիշյալ վանքերի վիմագիր արձանագրություններին ծանոթանալիս: Այս է պատճառը, որ Անիի հոգևորականության ստորև ներկայացվող անվանացանկում ընդգրկել ենք նաև հիշյալ վանքերի, ինչպես և քաղաքի մշակութային ոլորտում գտնվող Խժկոնքի վանքի հոգևորականների անունները:

Անվանացանկն աշխատել ենք մանրամասներով չծանրաբեռնել: Հիշատակում ենք յուրաքանչյուր հոգևորականի անունը, հոգևոր կոչումը, հիշատակման հանգամանքը, վայրը, թվականը, աղբյուրը: Առավել հայտնի անհատների (Անիի եպիսկոպոսներ, հոգևոր-մշակութային նշանավոր գործիչներ) մասին նշումները կատարում ենք շատ համառոտ՝ նկատի ունենալով այն, որ նրանց վերաբերյալ հանգամանորեն խոսվում է սույն գրքի զանազան բաժիններում: Անվանացանկում նշում ենք նաև որոշ անեցի հոգևորականների, որոնք եկեղեցական սպասավորություն են կատարել քաղաքից հեռու վայրերում, բայց պահպանել «Անեցի» մականունը:

## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵՐՁԱԿԱ ՎԱՆՔԵՐԻ ՅՈՐԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԱԲԱՍ - Եպիսկոպոս, Խժկոնքի վանահայր, հիշվում է վանքի 1233 և 1240 թթ. արձանագրություններում, և 1236 թ. Խժկոնքին նվիրաբերված մի Ավետարանի հիշատակարանում ուր նաև հիշատակարան է գրվել նրա ու մյուս միաբանների անունից (Սարգիսյան, 1864, 211, ԺԳ, 194-195):

ԱԲԴԼՄՍԵՅ - Հիշվում է Խժկոնքի 1213 թ. մի արձանագրության մեջ. «Աբդլմսեհ կրաւնական...» (Ալիշան, 1890, 113):

ԱԲԻՍՈՂՈՍ - Անեցի վարդապետ, քաղաքի պալատական եկեղեցու երկու արձանագրություններում իրեն կոչում է կառուցող՝ «ես Աբիսողոմ վարդապետ շինեցի զեկեղեցիս...» (Դիվան, Ա, 8) :

ԱԲՐԱՀԱՄ - Բագնայրի վանահայր, հիշվում է վանքի 1262, 1266 թթ. և մի քանի անթվական արձանագրություններում (Սարգիսյան, 1864, 186-187):

ԱԲՐԱՀԱՄ - Անեցի երեց, որդի Սարկավագ քահանայի, թոռ Սամուել Անեցու: 1233 թ. Անիում գտնվող տուն ու կուղպակ է նվիրել Խժկոնքին (Սարգիսյան, 1864, 211):

ԱՆԱՆԵ - Պետրոս Գետադարձի քրոջ որդին, սպասավորել է Անիի կաթողիկոսարանում (Ուռհայեցի, 1991, 114) :

ԱՆԱՆԻԱ - Հռոմոնոսի վանահայր, 1013 թ. նշում է Գագիկ Ա-ի օժանդակությամբ իր կատարած գործերը (Սարգիսյան, 1864, 167) :

ԱՆԴՐԵԱՍ - Վարդապետ, Խժկոնքի միաբան, հիշվում է վանքի 1208 թ. մի արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 212):

ԱՆԴՐԵԱՍ - Արջո Առիճի վանահայր, հիշվում է 1289 թ. Որդեկ (Որդյակ) երեց Կողբացու նվիրատվական արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 192) :

ԱՆԴՐԵԱՍ - Հռոմոնոսի վանահայր, վարդապետ: Հիշվում է Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ի և Խուբլու խաթունի նվիրատվական արձանագրություններում (ԺԳ դարի 10-ական թթ.) (Սարգիսյան, 1864, 151, 160):

ԱՌԱՔԵԼ - Անեցի վարդապետ (մականունը՝ Վառ), 1222 թ. Անիի մերձակա Մաղասբերդում Մխիթարի և Շերանի գործակցությամբ արաբերենից հայերեն է թարգմանել մի Երազահան: Ենթադրվում է, որ թարգմանել է նաև այլ գործեր (ԺԳ, 131):

ԱՌԱՔԵԼ - Անեցի վարդապետ, հիշվում է 1160 թ. ոմն Աբրահամի կառուցած բուրգի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 2):

ԱՌԱՔԵԼ - Քահանա, նահատակվել է 1208 թ. Կեչրորում, հիշվում է եղբոր՝ Խժկոնքում կանգնեցված մահարձան-խաչքարի արձանագրության մեջ:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ - Արջո Առիճի վանքի քահանա, ուսանել է նույն վանքում, և 1236-37 թթ. մի Ավետարան է նվիրել վանքին: Որդու անունն է «Մանուիլ» (ԺԳ, 197):

ԱՎԵՏԻՍ - Ծնունդով անեցի, վարդապետ, Սանահինի վանահայր, հիշվում է այդ վանքի մի քանի արձանագրություններում: 1250 թ. նվիրատվություն է կատարել Յոռոմոսին («ես Աւետիս վարդապետ... ազգաւ ի մայրաքաղաքես Անո ...») (Սարգիսյան, 1864, 154) :

ԱՎԵՏԻՔ - Եպիսկոպոս, Յոռոմոսի վանահայր, հիշվում է վանքի 1751 թ. մի արձանագրության մեջ (Թիերի, 1980, 85):

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ - (որդի Վասակ իշխանի) 1072 թվականից Անիի և Շիրակի եպիսկոպոս, 1081-ից՝ աթոռակից կաթողիկոս, 1105-ից՝ Հայոց կաթողիկոս, մահացել է 1113թ.:

ԲԱՐՍԵՂ Բ ԱՆԵՑԻ - (որդի Հասան Մագիստրոսի) Անիի և Շիրակի արքեպիսկոպոս, 1195-ից՝ կաթողիկոս: Հիշվում է բազմաթիվ սկզբնաղբյուրներում 1160-1199 թթ.:

ԲԱՐՍԵՂ Գ - (որդի Ամիր Երկաթի) Անիի արքեպիսկոպոս և Յոռոմոսի վանահայր, հիշվում է Յոռոմոսի 1229-53 թթ. բազմաթիվ արձանագրություններում:

ԲԱՐՍԵՂ ԲԱՇԽԱՏԵՑԻ - Սպասավորել է Անիի կաթողիկոսարանում ԺԱ դարի առաջին կեսին (Ուռհայեցի, 1991, 114):

ԲԱՐՍԵՂ - Գրիգոր Մագիստրոսի աշակերտներից, որին եղբոր՝ Եղիսեի հետ ուղարկել է Անի Պետրոս Գետադարձի մոտ ուսանելու և կաթողիկոսարանում սպասավորելու համար (Ուռհայեցի, 1991, 114):

ԲՈՒԼԽԱՐ - Անիի կաթողիկոսարանի վարդապետ ԺԱ դարի առաջին կեսին (Ուռհայեցի, 1991, 114):

ԳԱՄԱՂԻԵԼ - Բազմայրի միաբան, վարդապետ, հիշվում է վանքի ԺԳ դարի մի արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 183):

«ԳԱՆՁԱՎԵՑԻ» - Միայնակյաց (անունը չի պահպանվել), 55 տարի ճգնավորական կյանք վարելուց հետո, եկել է Անի և որոշ ժամանակ անց այստեղ մահացել ու թաղվել (ԺԳ դար): Նրա

գերեզմանն անեցիների շրջանում ուխտավայր է դարձել: Հիշվում է Ս. Առաքելոց եկեղեցու մի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 26):

ԳԵՐՍԱՍ - Անիի Մայր տաճարի քահանա, հիշվում է 1236 թ. Նացուալի՝ եկեղեցուն նվիրած ձեռագրի հիշատակարանում (ԺԳ, 197):

ԳԵՐՍԱՍ - Առջո Առիճի վանքի միաբան (ԺԳ դարի սկիզբ), հիշվում է Գրիգոր Ա եպիսկոպոսի արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 191):

ԳԵՈՐԳ - Անեցի երեց, հիշվում է Աբլղարիք մարզպանի 1037 թ. արձանագրության մեջ: Նրան և նրա ժառանգներին է հանձնվել Անիի Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցու սպասավորության գործը (Դիվան, Ա, 49):

ԳԵՈՐԳ - Հռոմոսի միաբան (վանահորից հետո եղել է երկրորդ մարդը), հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1036 թ. արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 166):

ԳԵՈՐԳ - (Ջուլիակորդի), Անիի կաթողիկոսարանի սպասավոր ԺԱ դարի առաջին կեսին (Ուռհայեցի, 1991, 114):

ԳԵՈՐԳ - Գրիչ, կազմարար, Անիի կաթողիկոսարանի սպասավորներից: 1046 թ. ձեռագիր է ընդօրինակել Պետրոս Գետադարձի պատվերով, գրել ընդարձակ հիշատակարան, որի մի մասը՝ ստացողի անունից (Ե-ԺԲ, 94):

ԳԵՈՐԳ - Հռոմոսի միաբան, երեց (հավանաբար ծնունդով Անիից, քաղաքում գտնվող իր հայրենի տները կտակել է վանքին) (Սարգիսյան, 1864, 155):

ԳԵՈՐԳ - Վարդապետ, 1278 թ. Բագնայրում ստացել է մի ձեռագիր և գրել հիշատակարան (ԺԳ, 488):

ԳԵՈՐԳ - Անեցի քահանա, Հակոբ քահանայի որդին: Հիշվում է եղբոր՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում (Պողարյան, 1972, 484):

ԳՅՈՒՏԻԿ - «կրոնավոր», Հռոմոսի վանքին է նվիրել Անիում գտնվող իր հայրենի տունը (ԺԳ դար) (Սարգիսյան, 1864, 155):

ԳՈՐԳ - Անեցի քահանա, հիշվում է Անիում, մի արձանագրության բեկորի վրա (Դիվան, Ա, 73):

ԳՐԻԳՈՐ Ա (Մագիստրոս) - որդի Աբուղամրի, Անիի և Շիրակի արքեպիսկոպոս: Հիշվում է 1213-1233 թթ.:

ԳՐԻԳՈՐ Բ - Անիի եպիսկոպոս, հիշվում է 1277 թ.:

ԳՐԻԳՈՐ - Անեցի երեց, որի որդիներին է հանձնվել քաղաքի Ս. Փրկչի եկեղեցու եկեղեցապանությունը: Հիշվում է 1035 թ. (Դիվան, Ա, 46) :

ԳՐԻԳՈՐ - Անեցի քահանա, քաղաքի «Շախմատային» կոչված եկեղեցու երեցը (ԺԱ դար) (Դիվան, Ա, 57) :

ԳՐԻԳՈՐ - Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (Անեցի, 1893, 128):

ԳՐԻԳՈՐ - Անիի Մայր տաճարի ավագերեց (նույնը նախորդի հե՞տ), 1128 թ. քաղաքի Փատլուն ամիրան փորձել է ճնշում գործադրել նրա վրա, բայց արդյունքի չի հասել (Վարդան, 1861, 158) :

ԳՐԻԳՈՐ - Արշո Առիճի վանահայր, վարդապետ: Հիշվում է Գրիգոր Ա եպիսկոպոսի կանոնագիր արձանագրության մեջ (ԺԳ դարի սկիզբ), (Սարգիսյան, 1864, 191):

ԳՐԻԳՈՐ - Խժկոնքի վանքի միաբան, հիշվում է 1236 թ. վանքին նվիրաբերված Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 195):

ԳՐԻԳՈՐ - Քահանա, 1258 թ. Մկրտիչ աբեղայի հետ նորոգել է Հռոմոսի Արուճում և Փարպիում գտնվող հնձանները (Սարգիսյան, 1864, 157):

ԳՐԻԳՈՐ - Անեցի քահանա, 1292 թ. Անիում ապաստան է տվել Երզնկայից այստեղ եկած Ահարոն (Գրիգոր) վարդապետին, հիշվում է վերջինիս հիշատակարանում (ԺԳ, 673):

ԳՐԻԳՈՐ - Անեցի քահանա, Հակոբ քահանայի որդին: Հիշվում է եղբոր՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում (Պողարյան, 1972, 484) :

ԳՐԻԳՈՐ - Անեցի քահանա, քաղաքի Ս. Աստվածածին (Խամբուլենց) եկեղեցու սպասավոր, հիշվում է մի անթվական արձանագրության մեջ (Դիվան, Ա, 52):

ԳՐԻԳՈՐ - Անեցի քահանա, Եփրեմ քահանայի որդին, 1326 թ. ձեռագիր է ստացել Սուլթանիայում (Երուսաղեմ, թիվ 453), ուր գաղթել էր Անիից: 1334 թ. նրան հիշում է նաև Մխիթար Անեցին (ԺԴ, 309):

ԳՐԻԳՈՐ - Հռոմոսի վանքի առաջնորդ, եպիսկոպոս, հիշվում է 1485 թ. Սարգիս Գ կաթողիկոսի հիշատակարանում (ԺԵ. Գ, 70):

ԳՐԻԳՈՐ - Հռոմոսի միաբան, աբեղա (Ակնագյուղեցի), 1782 թ. այստեղ մի ձեռագիր է ընդօրինակել (Երուսաղեմ, թիվ 2025):



ԳՐԻԳՈՐ - Հռոմոսի վանահայր, 1868-71 թթ. վանքում նորոգման աշխատանքներ է կատարել (Էփրիկյան, 1907, 224):

ԳՐԻԳՈՐԻՍ - Հռոմոսի վանահայր, հիշվում է 1218 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 152):

ԴԱՆԻԵԼ - Վարդապետ Տիգրանակերտցի, 1685 թ. վերականգնել է լքված Հռոմոսի վանքը (Սարգիսյան, 1864, 163):

ԴԱՍԱՊԵՏ - Անիի Մայր տաճարի քահանա, հիշվում է 1236 թ. եկեղեցուն նվիրաբերված Ավետարանի հիշատակարանում (անունը երկրորդ անգամ նշվում է «Դասական» ձևով) (ԺԳ, 197-198):

ԴԱՎԻԹ - Անիի քաղկեդոնական համայնքի եպիսկոպոսը ԺԳ դարի սկզբին: 1223 թ. Վրաց թագավորության կողմից որպես պատվիրակ ուղարկվել է Հռոմի պապի մոտ:

ԴԱՎԻԹ - Քահանա, հիշվում է Հռոմոսի 1305 թ. արձանագրություններից մեկում («տեր Դաւիթ») (Սարգիսյան, 1864, 160):

ԵՂԲԱՅՐԻԿ - Անիի Բեխենց վանքի վանահայր, հիշվում է 1211 թ. «Հաղպատի Ավետարանում», Բեխենց գրչատան մեկ այլ ձեռագրում (ՄՄ, թիվ 6288, 5554), ինչպես նաև Անիի բուրգերից մեկի՝ 1222 թ. արձանագրության մեջ (ԺԳ, 69, 72, Դիվան, Ա, 7):

ԵՂԲԱՅՐԻԿ - Անեցի աբեղա, 1298 թ. քաղաքի Ներքին բերդում մի Ավետարան է ընդօրինակել Հակոբ քահանայի պատվերով (ԺԳ, 817):

ԵՂԻՍԵ - Գրիգոր Մագիստրոսի աշակերտներից, որին եղբոր՝ Բարսեղի հետ ուղարկել է Անի Պետրոս Գետադարծի մոտ ուսանելու և կաթողիկոսարանում սպասավորելու համար: Հետագայում դարձել է Սեբաստիայի եպիսկոպոս (Մագիստրոս, 1910, 15-18) :

ԵՆՈՔ (ՅԵՆՈՎՔ) - Անիի կաթողիկոսարանի վարդապետ ԺԱ դարի առաջին կեսին (Լաստիվերցի, 1963, 26):

ԵՓՐԵՄ - Անիի կաթողիկոսարանի քահանա ԺԱ դարի առաջին կեսին (Ուռհայեցի, 1991, 114):

ԵՓՐԵՄ - Անեցի քահանա, որը ԺԴ դարի սկզբներին գաղթել է Սուլթանիա: Հիշվում է որդու՝ Գրիգորի 1326 թ. ստացած ձեռագրի հիշատակարանում (Երուսաղեմ, թիվ 453):

ԵՓՐԵՄ - Քահանա, նախորդ եփրեմի թոռը, Գրիգոր քահանայի որդին: Հորից 1341 թ. մի Աստվածաշունչ է նվեր ստացել, որը հետագայում ընծայել է Վարազավանքին (ԺԴ, 328):

ԹԱՂԵՈՍ - Անիի կաթողիկոսարանի սպասավորներից, համբավավոր գրիչ (Ուռհայեցի, 1991, 114):

ԹՈՐՈՍ - Անեցի գրիչ, քաղաքում Ավետարան է ընդօրինակել 1379 թ. (Կ. Մ., 1985, 114):

ԻԳՆԱՏԻՈՍ - Հռոմոսի վանքի միաբան, հմուտ գրիչ և մանրանկարիչ: Ունեցել է Քրիստափոր և Խաչատուր անուններով գործընկերներ և Հովսեփ անունով աշակերտ (ԺԳ, 178-180, 192-193):

ԽԱՉԱՏՈՒՐ - Անիի կաթողիկոսարանի «դպրապետ» ԺԱ դարի առաջին կեսին (Ուռհայեցի, 1991, 114):

ԽԱՉԱՏՈՒՐ - Հռոմոսի վանահայր, հիշվում է 1174 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ և 1181 թ. Հովհաննես գրչի հիշատակարանում (Սարգիսյան, 1864, 148, Ե-ԺԲ, 233):

ԽԱՉԱՏՈՒՐ - Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (Անեցի, 1893, 128):

ԽԱՉԱՏՈՒՐ - Անեցի քահանա, հիշվում է 1212 թ. Ս. Առաքելոց եկեղեցու մի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 25):

ԽԱՉԱՏՈՒՐ - Անիի Բեխենց վանքի միաբան, հիշվում է ԺԳ դարի սկզբներին այստեղ գրված Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 72):

ԽԱՉԻԿ Բ ԱՆԵՑԻ - Հայոց կաթողիկոս՝ 1058-1065 թթ.:

ԽԱՉԻԿ - Երեց, Հռոմոսի վանքի նվիրատու (Սարգիսյան, 1864, 155):

ԽԱՉՈՒՏ - Անեցի քահանա, հիշատակային բնույթի արձանագրություն է թողել Անիի Ս. Գրիգոր (Խաչուտի) եկեղեցու բեմի զարդասալերի վրա (Դիվան, Ա, 61):

ԿԱՐԱՊԵՏ - Հռոմոսի վանքի միաբան՝ հոգևոր տեսուչ: Հիշվում է 1181 թ. Հովհաննես գրչի հիշատակարանում («... ի հոգեւոր տեսչութեան Կարապետի՝ ծերացելոյ իմաստիւք») (Ե-ԺԲ, 233):

ԿԻՐԱԿՈՍ - Անեցի երեց, Շահպատի և Նուրայ խաթունի որդին, 1342 թ. Անիում ստացել է մի ճաշոց: Կնոջ անունն է Գայանե (ԺԴ, 353):

ԿԻՐԱԿՈՍ - Անեցի վարդապետ, 1348 թ. նահատակվել է մահմեդականների ձեռքով և թաղվել քաղաքի արվարձանում (Դիվան, Ա, 67):

ԿՈՍՏԱՆԴԻՆ - Քահանա, տոհմանունը՝ Յոռոմեանց: Հիշվում է որդու՝ Հովհաննեսի 1213 և 1215 թթ. Արջո Առիճի և Բագնայրի նվիրատվական արձանագրությունների մեջ (Սարգիսյան, 1864, 183, 190):

ՀԱԿՈՐ - Անեցի քահանա, Կիրակոսի և Խելոքի որդին, ուսանել է Արջո Առիճի դպրոցում, 1298 թ. ստացել Անիի Ներքին բերդում ընդօրինակված մի Ավետարան (ԺԳ, 816):

ՀԱԿՈՐ - Անեցի քահանա, հիշվում է որդու՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում: Կնոջ անունն է Սեդա (ԺԴ, 309):

ՀԱՄԱԶԱՄՊ - Անեցի եպիսկոպոս, Հաղբատի վանահայր: Առաջին անգամ հիշվում է 1242 թ. մի արձանագրության մեջ: Հայտնի է եղել շինարարական գործերով և գրասիրությանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա - (որդի Աբուղամրի) Անիի եպիսկոպոս, հիշվում է 1298-1319 թթ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ՈՍԿԵՓՈՐԻԿ - Անիի եպիսկոպոս, գրիչ: Հիշվում է ԺԴ դարի վերջերին և ԺԵ դարի սկզբների մի շարք հիշատակարաններում (մինչև 1443):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Վարդապետ, Հռոմոսի վանքի հիմնադիր և առաջին վանահայր (Ժ դարի 30-40-ական թթ.) (Ասողիկ, 1885, 174):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Հռոմոսի վանահայր, հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1038 թ. արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 146):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Հռոմոսի վանքի միաբան, գրիչ և ծաղկող, հիշվում է 1181, 1187, 1199 թթ. հիշատակարաններում: Ավագ եղբորը՝ Վարդանին, որը նույն վանքի միաբան էր, համարում է իր ուսուցիչը, ուներ նաև աշխարհական եղբայր՝ Գրիգոր անունով (Ե-ԺԲ, 232-233, 251):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ - Անիի վարդապետարանի ուսուցչապետ, նշանավոր վարդապետ և մատենագիր: 1124 թվականից հետո մի կարճ ժամանակահատված սպասավորել է Անիի Մայր տաճարում (1129 թ. մահացել ու թաղվել է Հաղբատում):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (Անեցի, 1893, 128):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - 1211 թ. գրել է Սահակ Անեցու ստացած «Հաղբատի Ավետարանի» հիշատակարանը՝ Անիում կամ Արջո Առիճում (ԺԳ, 72):

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՄԱԳԻՍՏՐՈՍԵՆՑ) - Արջո Առիճի վանահայր, հիշվում է 1298 թ. Հակոբ Անեցու ստացած Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 818):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Քահանա, Հռոմեանց Կոստանդին քահանայի որդին, 1213 թ. մի շարք նվիրատվություններ է կատարել Արջո Առիճի վանքին, իսկ 1215-ին՝ Բագնայրին (Սարգիսյան, 1864, 183, 190):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Խծկոնքի վանահայր, հիշվում է 1211 թ. Ջաքարե ամիրսպասալարի նվիրատվական արձանագրության մեջ, ինչպես նաև 1213, 1214 և 1221 թթ. արձանագրություններում (Սարգիսյան, 1864, 210, 212):

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Խծկոնքի միաբան, երեց, հիշվում է 1233 թ. մի արձանագրության մեջ (այդ ժամանակ արդեն մահացած էր) (Սարգիսյան, 1864, 211) :

ՀՈՎՀԱՆՆԵՍ - Երեց, հիշվում է 1401 թ. մի հիշատակարանում «Անեցի» մականունով (ԺԵ. Գ, 306):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՍԲԵՑԻ - Վարդապետ, 1786 թ. նորոգել է Հռոմոնսի վանքը (Մխիթարյանց, 1870, 49):

ՀՈՎՍԵՓ - Բագնայրի վանքի փակակալ, հիշվում է 1262 թ. երկու նվիրատվական արձանագրություններում («Յուսեփ փակակալ») (Սարգիսյան, 1864, 187, 189) :

ՀՈՎՍԵՓ - Հռոմոնսի վանահայր, հիշվում է 1269 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ («հայր Յուսեփ») (Սարգիսյան, 1864, 158):

ՂԵՎՈՆԴ (ԼԼոն) \_Վարդապետ, Աշոտ Գ Ողորմածի մտերիմներից, որին նա 974թ. ուղարկել է Բյուզանդիայի Հովհաննես Չմշկիկ կայսեր հետ բանակցելու Տարոնում: Ըստ Ուռհայեցու վարդապետն այնուհետև մեկնել է Կոստանդնուպոլիս, որտեղից վերադարձել «ի Մեծ Տունն Շիրակայ», Աշոտի մոտ՝ Անի (Ուռհայեցի, 1991, 22, 23, 34):

ՄԱՐԳԱՐԵ - Աբեղա, գրիչ, մանրանկարիչ, 1209 թ. մի Ավետարան է կազմել Հառիճում, իսկ 1211 թ. Սահակ Անեցու ստացած «Հաղբատի Ավետարանը» լրացրել ու նկարազարդել է Անիի Բեխենց վանքում (ԺԳ, 69):

ՄԱՐԳԱՐԵ - Քահանա (միայնավոր), 1208 թ. նրա համար խժկոնքում մահարձան-խաչքար է կանգնեցրել իր աշակերտը (Սարգիսյան, 1864, 212):

ՄԱՐԿՈՍ - Անեցի երեց, հիշվում է քաղաքի Ս. Սարգիս (Սիթի Պահլավունու) եկեղեցու մի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 56):

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ - Վարդապետ (1851-1918<sup>o</sup>), Անիի վերջին հոգևորականը՝ «Անիի վանահայրը», որը քաղաքի պեղումների ժամանակ մեծ աջակցություն է ցուցաբերել Ն. Մառի գլխավորած հնագիտական արշավախմբին:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ - Անիի Կաթողիկեի փակակալ, մատենագիր և թարգմանիչ (ԺԲ-ԺԳ դ. սկիզբ):

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ - Անեցի քահանա, Հակոբ քահանայի և Սեդայի որդին, գրիչ, ծաղկող, կազմարար (ԺԴ դար):

ՄԽԻԹԱՐ ԲԱԳՆԱՅՐԵՑԻ - Բազմայրի վանահայր, 1046 թ. ուղեկցել է կաթողիկոս Պետրոս Գետադարձին՝ Արծն ուղևորվելիս (Ուռհայեցի, 1991, 114):

ՄԽԻԹԱՐ ՏԵՂԵՐՑԻ - Անիի եպիսկոպոս ԺԳ դ. 70-ական թթ.:

ՄԽԻԹԱՐ - Հռոմոսի վանքի միաբան, հիշվում է 1181 թ. Հովհաննես գրչի հիշատակարանում (Ե-ԺԲ, 233):

ՄԽԻԹԱՐ - Հռոմոսի վանահայր (նույնը նախորդի հետ<sup>o</sup>), 1198 թ. նորոգել է վանքի ջրատարը, վանական այգի է տնկել Փարպիում: Հիշվում է նաև 1201 և 1211 թթ. (Սարգիսյան, 1864, 149-151, ԺԳ, 72):

ՄԽԻԹԱՐԻԿ - Անիի կաթողիկոսարանի սպասավորներից՝ ԺԱ դ. կեսեր (Ուռհայեցի, 1991, 114):

ՄԿՐՏԻՉ - Աբեղա, որդի Ռատի, 1258 թ. իր հոգևոր եղբայր Գրիգորի հետ նորոգել է Հռոմոսի վանքի՝ Արուճում և Փարպիում գտնվող հնձանները (Սարգիսյան, 1864, 157):

ՄՈՎՍԵՍ - Անիի Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու քահանա, հիշվում է 1054 թ. մի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 51):

ՆԵՐՍԵՍ - Անեցի եպիսկոպոս, հիշվում է 1156 թ. Տիգրան Հոնենցի կառուցած Ս.Գրիգոր Լուսավորչի եկեղեցու արձանագրություններից մեկում, որի քարը պատկանել է ավելի հին կառույցի (Դիվան, Ա, 64):

ՆԵՐՍԵՍ - Կուսակրոն քահանա, Հակոբ և Ստեփանոս անեցի քահանաների հոգևոր եղբայրը: Հիշվում է 1298թ. Հակոբի ստացած Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 817):

ՆԵՐՍԵՍ - Անեցի գրիչ «քարտուղար», 1357 թ. Անիում գրել է պարոն Ասիլի հիշատակարանը՝ Ս. Առաքելոցին նվիրաբերված «Կեռան թագուհու և Յեթում արքայորդու Ավետարանում» (Կ. Մ., 1985, 113):

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ - Հայոց կաթողիկոս 1019-1058թթ.

ՊԵՏՐՈՍ - Երեց, 1174 թ. նվիրատվություն է կատարել Հռոռնոսի վանքին (Սարգիսյան, 1864, 148):

ՊԵՏՐՈՍ - Հռոռնոսի վանահայր, 1195 թ. մահացած միաբանների համար մատուցվող պատարագների քանակը սահմանող արձանագրություն է թողել (Սարգիսյան, 1864, 150):

ՊԵՏՐՈՍ - Հռոռնոսի վանահայր, վարդապետ, հիշվում է 1851 թ. (Մխիթարյանց, 1870, 53):

ՊՈՂՈՍ - Խժկոնքի վանահայր, վարդապետ, հիշվում է տեղի 1208, 1221, 1233 թթ. արձանագրություններում և 1236 թ. վանքին նվիրված մի Ավետարանի հիշատակարանում (Սարգիսյան, 1864, 210-211, ԺԳ, 194-195):

ՍԱՀԱԿ - Անիի Աբուխանմի եկեղեցու քահանա, հիշվում է տեղի անթվական արձանագրություններից մեկում (Դիվան, Ա, 34):

ՍԱՀԱԿ - Անեցի քահանա, Ռիմանոսի և Կատայի որդին, ուսանել է Հաղբատում, 1211 թ. ստացել է մի մեծարժեք Ավետարան (ՄՄ, թիվ 6288), (ԺԳ, 71):

ՍԱՍՈՒԵԼ ԱՆԵՑԻ - Անիի Կաթողիկեի ավագերեց, մատենագիր, տոմարագետ (ԺԲ դար):

ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՎԱՆՑԻ - Հայոց կաթողիկոս 992-1019 թթ.:

ՍԱՐԳԻՍ Ա - (որդի Ապիրատի) Անիի եպիսկոպոս, հիշվում է 1187-ին որպես քահանա, 1208-1220 թթ. որպես եպիսկոպոս:

ՍԱՐԳԻՍ Բ - (որդի Մագիստրոսի) Անիի եպիսկոպոս, հիշվում է 1245-1262 թթ.:

ՍԱՐԳԻՍ - Հռոռնոսի վանահայր, 969 թ. մասնակցել է Անիի առաջին եկեղեցական ժողովին, հիմնադրել է Անիի մերձակա Կարմիր վանքի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, բայց մինչև կառույցի ավարտը՝ 980 թ. մահացել է (Ասողկ, 1885, 181):

ՍԱՐԳԻՍ - Հռոռնոսի վանահայր, հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1036թ. արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 166):

ՍԱՐԳԻՍ - Անեցի, կաթողիկոսարանի նշանավոր վարդապետ: Նամակագրական կապ է ունեցել Գրիգոր Մագիստրոսի հետ, որի ուսումնակիցն է եղել Ժամանակին: Պահպանվել է Սարգսի մի

ինքնագիր հիշատակարանը 1041 թ., ինչպես նաև նրա հեղինակած մի քանի գանձ (Ե-ԺԲ, 87, Մագիստրոս, 1910, 52-69) :

ՍԱՐԳԻՍ - Անիի Ս. Առաքելոց եկեղեցու քահանա, հիշվում է այդ եկեղեցուն նվիրաբերված մի գրակալի 1164 թ. արձանագրության մեջ (Անի, առարկ., 1982, 107):

ՍԱՐԳԻՍ - Յոռոմոսի միաբան, 1198 թ. օժանդակել է Մխիթար վանահորը վանքի ջրատարի նորոգման գործում, Յոռոմոսի համար հողակտոր է գնել Փարպիում (Սարգիսյան, 1864, 149):

ՍԱՐԳԻՍ - Անեցի կուսակրոն քահանա, հիշվում է 1211 թ. Մարգարե գրչի «Հաղթատի Ավետարանում» գրած հիշատակարանում: Եղբոր անունն է Շահեր (ԺԳ, 69) :

ՍԱՐԳԻՍ - Խծկոնքի միաբան, հիշվում է 1236 թ. վանքին ընծայված Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 194):

ՍԱՐԳԻՍ - Անիի մերձակա Ծմակ գյուղի ավագերեց (որդի Գրիգոր քահանայի), 1233 թ. նվիրատվություն է կատարել Բագնայրին (Սարգիսյան, 1864, 185):

ՍԱՐԳԻՍ - Սարկավագ, Անիի Կաթողիկեի սպասավոր, հիշվում է 1236 թ. Նացուալ նվիրատուի հիշատակարանում (ԺԳ, 197):

ՍԱՐԳԻՍ - Յոռոմոսի միաբան, վարդապետ, հիշվում է 1246 թ. արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 154):

ՍԱՐԳԻՍ - Անեցի քահանա (որդի Եփրեմ քահանայի), որը գաղթել է Սուլթանիա: 1326 թ. հիշվում է եղբոր՝ Գրիգոր քահանայի ստացած ձեռագրի հիշատակարանում (Երուսաղեմ, թիվ 453):

ՍԱՐԳԻՍ - Անիի մերձակա Կարմիր վանքի վանահայր, հիշվում է 1274 թ.:

ՍԱՐԳԻՍ - Կրոնավոր, Յոռոմոսի միաբան, հիշվում է 1347 թ. վանքին նվիրաբերված արձաթակագն Ավետարանի կազմի դրվագագիր հիշատակագրության մեջ (Կ. Ս., 1986ա, 67):

ՍԱՐԳԻՍ - Անեցի երեց, քաղաքի Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու սպասավոր: Հիշվում է ոմն Արքայի անթվական արձանագրության մեջ (Դիվան, Ա, 50):

ՍԱՐԳԻՍ - Անեցի քահանա, հիշվում է քաղաքի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցու մի անթվական արձանագրության մեջ: Կնոջ անունն է Գոհար խաթուն (Դիվան, Ա, 56):

ՍԱՐԳԻՍ - Վարդապետ: Անունն արձանագրված է Անիի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցու որմին (Դիվան, Ա, 57):

ՍԱՐԿԱՎԱԳ - Անեցի քահանա (Սամուել Անեցու որդին), 1151 թ. հիմնովին նորոգել է քաղաքի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցին (Դիվան, Ա, 56):

ՍԱՐԿԱՎԱԳ - Անեցի քահանա, 1292 թ. քաղաքում մի ձեռագրի օրինակ է շնորհել Երզնկայից այստեղ ապաստանած Ահարոն վարդապետին (ԺԳ, 673):

ՍԱՐԿԱՎԱԳ - Անիի Կաթողիկեի ավագերեց, հիշվում է 1286 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ (Դիվան, Ա, 36):

ՍԻՄԵՈՆ - Անեցի քահանա, հիշվում է ԺԳ դարի սկզբին Բելսենց վանքում գրված ձեռագրի հիշատակարանում, որպես միջնորդ ստացողի և տեղի գրչատան միջև (ԺԳ, 673):

ՍԻՄԵՈՆ (Մարնդունեցի) - Անեցի հոգևորական՝ մենակյաց, 1292 թ. օգնություն է ցուցաբերել Երզնկայից Անի եկած Ահարոն վարդապետին և հիշվում է վերջինիս գրած հիշատակարանում (ԺԳ, 673):

ՍԻՄԵՈՆ - Յոռնոսի վանքի փակակալ, հիշվում է 1269 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 158):

ՍԻՄԵՎՈՆ - Բագնայրի վանահայր, վարդապետ: Հիշվում է վանքի 1206, 1209, 1229, 1233, 1234 թթ. արձանագրություններում և «Բագնայրի Ավետարանի» 1232 թ. հիշատակարանում (Սարգիսյան, 1864, 179, 181-188):

ՍՈՂՈՍՈՆ - Յոռնոսի վանահայր, հիշվում է վանքի 986 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ, ինչպես նաև Անիի մերձակա Կարմիր վանքի 985 թ. շինարարական արձանագրության մեջ, ըստ որի հենց նա է այդ վանքի շինարարությունն ավարտել (Սարգիսյան, 1864, 167):

ՍՏԵՓԱՆՈՍ Գ ՍԵՎԱՆՑԻ - Հայոց կաթողիկոս 969-972:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ - Վարդապետ, պատմագիր, որը սերտորեն կապված էր Անիի կաթողիկոսարանի հետ (Ժ դարի վերջ ԺԱ դարի սկիզբ):

ՍՏԵՓԱՆՈՍ - Բագնայրի վանահայր, հիշվում է 1042 թ. մի արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 178):

ՍՏԵՓԱՆՈՍ - Քահանա, Անիի կաթողիկոսարանի սպասավոր, հիշվում է Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարծին հղած նամակներից մեկում (Մագիստրոս, 1910, 17):



ՄՏԵՓԱՆՈՍ - Անեցի քահանա, Կիրակոսի և Խելոքի որդին, հիշվում է 1298 թ. եղբոր՝ Չակոբի ստացած Ավետարանի հիշատակարանում (ԺԳ, 816):

ՄՏԵՓԱՆՈՍ - Գրիչ (որդի Գելանի), 1308 թ. հիշատակարան է գրել «Բագնայրի Ավետարանում» (Յովսեփյան, 1951, 891):

ՄՏԵՓԱՆՈՍ - Յոռոմոսի վանահայր, հիշվում է 1336 թ. արձանագրության և 1347 թ. վանքին նվիրաբերված Ավետարանի կազմի հիշատակագրության մեջ (Սարգիսյան, 1864, 159, Կ. Ս., 1986ա, 67):

ՄՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱԽԱԼՅԱՆ - որպես Յոռոմոսի վանահայր հիշվում է 1825թ. (Էփրիկյան, 1907, 225):

ՎԱՅԱՆ - Յոռոմոսի վանահայր, հիշվում է 1326 թ. արձանագրության մեջ (Մխիթարյանց, 1870, 47):

ՎԱՆԱԿԱՆ - Անիի Բեխենց վանքի միաբան, ԺԳ դարի սկզբներին այստեղ կազմել է մի Ավետարան (ԺԳ, 73):

ՎԱՐԴԱՆ - Անիի եպիսկոպոս, մասնակցել է 1307 թ. Սսի ժողովին, հիշվում է նաև 1320 թ. Մրենի մի արձանագրության մեջ:

ՎԱՐԴԱՆ ԱՆԵՑԻ - Վարդապետ, բանաստեղծ: Յեղիմյակ է մի բարձրարվեստ ներբողի (հավանաբար Ժ- ԺԱ դդ.):

ՎԱՐԴԱՆ ՍԱՆԱՅՆԵՑԻ - Անիի կաթողիկոսարանի սպասավոր ԺԱ դ. առաջին կեսին (Ուռնայեցի, 1991, 114):

ՎԱՐԴԱՆ - Յոռոմոսի միաբան (միայնավոր), հիշվում է 1181 և 1187 թթ. կրտսեր եղբոր՝ Յովհաննեսի գրած հիշատակարաններում (վերջինիս ուսուցիչն էր), նաև 1199 թ. իր կազմած մի ձեռագրի հիշատակարանում (Ե-ԺԲ, 233, 251):

ՎԱՐԴԱՆ - Արջո Առիճի վանահայր, հիշվում է ոմն Առյուծի և նրա կին Շուշիկի անթվական նվիրատվական արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 191):

ՎԱՐԴԱՆ - Վարդապետ, Յոռոմոսում նորոգման աշխատանքներ է կատարել 1825թ. (Էփրիկյան, 1907, 224):

ՏԻՐԱՆՈՒՆ - Անիի կաթողիկոսարանի վարդապետ ԺԱ դ. սկզբներին: Մատթեոս Ուռնայեցին նրան կոչում է «իմաստասեր Տիրանուն Կապանեցի» (Լաստիվերցի, 1963, 26, Ուռնայեցի, 1991, 114):

ՏԻՐԱՑՈՒ - Անիի Բեխենց վանքի միաբան, գրիչ, ծաղկող: ԺԳ դարի սկզբներին մասնակցել է մի Ավետարանի ստեղծման

աշխատանքին (ՄՄ, թիվ 5554), ենթադրվում է, որ նա է ընդօրինակել նաև «Թարգմանչաց Ավետարանը» (ՄՄ., թիվ 2743) (ԺԳ, 72) :

**ՏՐԴԱՏ** - Անեցի քահանա (որդի Սոսթենես քահանայի), 1193 թ. կնոջ՝ Խուշուշի հետ նորոգել է Անիի Ս. Փրկչի եկեղեցին, կառուցել ժամատուն և բազմաթիվ նվիրատվություններ կատարել (Դիվան, Ա, 47) :

**ՔԱՅԱՆԱ** - Անեցի հոգևորական<sup>35</sup>, հիշվում է 1307 թ. Անիի Ներքին Բերդի Ս. Հովհաննես եկեղեցու պատին թողած արձանագրության մեջ (Դիվան, Ա, 70):

**ՔՐԻՍՏԱՓՈՐ** - Բազմայրի միաբան (վանահայր<sup>6</sup>), հիշվում է ԺԳ դարի մի անթվական արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 183):



# ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

*«... Էր Անի բազմամբոխ քաղաքն լցեալ  
բիր բիրուց արանց եւ կանանց, ծերոց եւ  
տղայոց, որ հիացունն արկանէր տեսողացն ...  
եւ յայնմ աւուր հազար ու մէկ եկեղեցի  
ի պատարագի կայր ի յԱնի»*

ՍԱՏԹԵՈՍ ՈՒՌՅԱՅԵՑԻ

**Ա**նիագիտական ծավալուն գրականության մեջ նշանակալից մաս են կազմում հատկապես քաղաքի ճարտարապետությանը, այդ թվում՝ առաջին հերթին եկեղեցական ճարտարապետությանը նվիրված հետազոտությունները: Դեռևս քաղաքի պեղումներից առաջ, բայց առավել՝ պեղումների շրջանում (1892-1917) և հետագայում, Անիի եկեղեցիները դարձան գիտական համակողմանի ուսումնասիրության առարկա: Քաղաքի համայնապատկերի վրա երևացող մի քանի կանգուն կառույցներից բացի, Ն. Մառի գլխավորած պեղումները երևան հանեցին բազմաթիվ նոր ուշագրավ եկեղեցական շինությունների ավերակներ: Այս ամենի հետազոտումն ու նյութի ընդհանրացումն, ավելի ուշ, թույլ տվեցին խոսելու **Անիի ճարտարապետական դպրոցի** գոյության մասին, որն իրավամբ համարվում է հայ միջնադարի մշակութային նվաճումներից մեկը:

Մեր նպատակը, սակայն, Անիի եկեղեցական ճարտարապետության քննությունը չէ: Ստորև ի մի բերելով Անիի բոլոր հայտնի մեծ ու փոքր եկեղեցիների մասին առկա տեղեկությունները՝ մենք կազմել ենք քաղաքի և նրա մերձակայքի **եկեղեցիների ցուցակը** և դրան համապատասխան՝ **Անիի եկեղեցիների քարտեզ-ուղեցույցը**՝ միաժամանակ անդրադառնալով նյութին առնչվող որոշ հարակից հարցերի:

Հանրահայտ է, որ քաղաքամայր Անին բազմաթիվ եկեղեցիներ ուներ: Սակայն անհնար է գտնել մի աշխատություն, ուր թեկուզ

միայն թվարկված լինեն այդ եկեղեցիները: Այդ առումով թերևս առավել հանգամանալից գործը Հ. Օրբելու 1910 թ. հրատարակած «Անի քաղաքի համառոտ ուղեցույցն» է, բայց այնտեղ հեղինակը նպատակ չի ունեցել կանգ առնել հատկապես եկեղեցիների խնդրի վրա: Ուղեցույցից դուրս են մնացել մի շարք եկեղեցիներ ու մատուռներ (ժայռափոր եկեղեցիները, որ ուսումնասիրվել են 1915-ին, բնականաբար, նույնպես չեն նշված): Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ «համառոտ ուղեցույցը» կազմվել է դարասկզբին, երբ անհագիտությունը, եթե կարելի է ասել, դեռևս իր «պատանեկության» շրջանում էր: Իսկ հետագա ուսումնասիրողներն արդեն անդրադարձել են գլխավորապես ճարտարապետական առումով հետաքրքրական կառույցներին:

Վերջին շրջանում «Անիի եկեղեցիներն ըստ վիմագիր արձանագրությունների» վերնագրով հոդված է հրատարակել Գ. Ուլուհոջյանը՝ վերջում կցելով նաև մի ցուցակ, որը չնայած անվանվում է «Անիի եկեղեցիների համահավաք ցուցակ», բայց ընդգրկում է ընդամենը 24 եկեղեցի (ընդ որում եկեղեցիներից մեկն էլ՝ Ս. Գրիգոր, Խաչուտի կամ Բախտաղեկի եկեղեցին, նշված է երկու անգամ (Ուլուհոջյան, 1992, 393-417): Իրականում Անիում պահպանված եկեղեցիներն ու դրանց ավերակները շատ ավելի բազմաքանակ են: Սակայն մինչև թվարկմանն անցնելը համառոտակի ծանոթանանք Անիի եկեղեցիների կառուցմանն առնչվող որոշ հարցերի:

Նախ տեսնենք, թե ովքեր էին **Անիի եկեղեցաշինարարները**:

Քաղաքի բազում եկեղեցիների կառուցման գործում իրենց ավանդն են բերել թե՛ թագավորական ընտանիքը, ազնվականությունն ու հոգևորականությունը, և թե՛ քաղաքային դասն ու ողջ քրիստոնյա բնակչությունը: Անիի **թագավորաշեն** եկեղեցիներից են Փոքր Կաթողիկեն, որն, ըստ որոշ տվյալների, կառուցել է Աբաս Բագրատունին, Սմբատ Բ-ի հիմնադրած և Գագիկ Ա-ի կնոջ՝ Կատրամիդե թագուհու ավարտած փառահեղ Մայր տաճարը (Մեծ Կաթողիկեն), Գագիկ Ա-ի հիմնած Ս.Գրիգոր (Գագկաշեն) հսկա եկեղեցին և Ս. Գևորգ վկայարանը՝ Հռոմնոսում, Հովհաննես Սմբատի կառուցած Ս. Հովհաննես եկեղեցին՝ ընդարձակ գավիթով, դարձյալ Հռոմնոսում:

**Եկեղեցաշինարար ազնվականության** մեջ հատկապես մեծ է Պահլավունյաց տան ներդրումը: Աբուղամրի որդի Գրիգոր Պահլավունին (Ժ դար) կառուցել է հետագայում Աբուղամրենց Ս. Գրիգոր անվանված եկեղեցին (նկ. 9), նրա տիկնոջն է վերագրվում Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցու կառուցումը: Այս բարեպաշտ ամուսինների բազում առաքինությունների ու նաև եկեղեցաշինական գործունեության մասին ուշագրավ վկայություն է պահպանվել նրանց համբավավոր թռռան Գրիգոր Մագիստրոսի թղթերում: Վերջինս Գրիգորի ու նրա Շուշան տիկնոջ մասին գրում է. «Նոքա իսկ կենդանի վկայք Բանին Աստուծոյ... որ եւ յիրեանց իսկ կենցաղավարութեանն ամենայն բարեգործութեամբ կատարեալ եւ մաքրական վարուք... մինչ ընդ նոսա ոչ վանս այսպիսի եւ մայրաքաղաքս եւ ոչ ուսումնասիրութիւնս եւ ոչ ազատութիւնս քահանայական եւ ոչ շինութիւնս եկեղեցեաց. քանզի սոքա արծարծեցին զկարգ եւ զօրէնսդրութիւնս մեծին Սահակայ... եւ **զվանս նորագոյնս շինեալ բազումս եւ զաւերեալսն նորոգեալ եւ այս անթիւս...**»: (Մագիստրոս, 1910, 42-43):

Պակաս գործունյա չէր Գրիգոր Պահլավունու որդին Աբլղարիբ մարգապանը, որը 1036 թ. Անիում հիմնել է Ս. Փրկիչ եկեղեցին (նկ. 10), իսկ հոր կառուցած եկեղեցու մոտ՝ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռները (1040թ), նվիրատվություններ կատարել Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցուն և այլն (Դիվան Ա, 33, 49): Ս. Փրկիչ և Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցիների երկու արծանագրություններ վկայում են, որ Աբլղարիբն էր տնօրինում Պահլավունյաց տան եկեղեցիներն այս կամ այն քահանայական տան հոգածությանը հանձնելու գործը (Կ. Մ., 1994, 56): Աբլղարիբը երախտագիտությամբ է հիշվում Արթիկի մոտ գտնվող Պենզաշեն (Մահմուդջուղ) գյուղի եկեղեցու մոտերքում Սարգիս կրոնավորի 1036 թ. կանգնեցրած խաչքարի արծանագրության մեջ, որից Թ. Թորամանյանը ենթադրում է, թե հավանաբար հենց նա էր եկեղեցու կառուցողը (Թորամանյան, 1942, 224): Գրիգորի որդիներից մյուսը՝ քաջակորով Վահրամ սպարապետը, հիմնադրել է Մարմաշենի վանքը և Ամբերդի եկեղեցին: Պահլավունիներին է վերագրվում նաև Անիի Ս. Առաքելոց եկեղեցու կառուցումը: Այս ազնվականական տնից էր Սիթի իշխանուհին, որը նորոգել է քաղաքի Ս. Սարգիս (Սիթի Պահլավունու) եկեղեցին ԺԳ դարի սկզբներին:

Բագրատունյաց Անիում ազնվականական տոհմական եկեղեցիներ են կառուցել նաև ուրիշները, բայց ցավոք սկզբնաղբյուրները չեն պահպանել նրանց անունները: Օրինակ,

այսպես կոչված «Շախմատային» եկեղեցու պատի մեջ օգտագործված ավելի հին եկեղեցու քարերի վրա եղած շինարարական արձանագրության մեջ չի պահպանվել կառուցողի անունը, բայց դատելով արձանագրության ոճից ու մանրամասներից, վերջինս ազնվական ծագում ունեցող մեկն էր (Դիվան, Ա, 57):

ԺԳ դարի սկզբներին Անիի Ներքին բերդում Աստվածածնին նվիրված եկեղեցի է կառուցել Ջաքարե ամիրսպասալարը: Նա, ընդհանրապես, շատ մեծ նպաստ է բերել հայ եկեղեցաշինությանը, պատահական չէ, որ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» երկի անանուն հեղինակը գրում է, թե Ջաքարեն «...որ աշխարհ որ տիրեաց՝ ելից զայն եկեղեցեօք Քրիստոսի Աստուծոյ...» (Մխիթար, 1983, 119): Ջաքարեն բազմաթիվ նվիրատվություններ է կատարել Անիի եկեղեցիներին, քաղաքամերձ վանքերին, փառահեղ եկեղեցի կառուցել Հառիճում (նկ. 13) և այլն:

Անիում եկեղեցիներ են հիմնել ու նորոգել նաև **հոգևորականները**: «Պալատական» եկեղեցու երկու վիմագրեր հավաստում են, որ այն կառուցել է Աբխտղոմ վարդապետը (Դիվան, Ա, 8), իսկ Վարդան Արևելցու վկայությամբ՝ մայրաքաղաքում աթոռակալելուց հետո Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը «առընթեր Կաթողիկէին Անույ» հիմնադրել է «վկայարան սրբոց Հռիփսիմեանց» (Վարդան, 1861, 123): 1151 թ. անցի Սարկավազ քահանան հիմնովին («ի հրմանէ») նորոգել է քաղաքի Ս. Սարգիս (Սարկավազի) եկեղեցին, 1193-ին Տրդատ քահանան ու նրա կին Խուշուշը նորոգել են 1131թ. երկրաշարժից մեծապես տուժած Ս. Փրկչի եկեղեցին, կառուցել ժամատուն (Դիվան, Ա, 47, 56):

Անիի եկեղեցաշինարարների մեջ թերևս ամենից մեծ թիվ են կազմել ունևոր և միջին եկամուտի տեր **քաղաքային դասի ներկայացուցիչները**: 1215 թ. նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցը Ս. Աստվածածին հին մատուռի տեղում կառուցել է Գրիգոր Լուսավորչի գեղաշեն եկեղեցին և վանական համալիր: Եկեղեցու ընդարձակ շինարարական արձանագրության մեջ Հոնենցը հայտնում է, որ նորոգել է նաև քաղաքի Բելխենց վանքը (Դիվան, Ա, 63): Ծաղկոցածորի այրերից մեկում պահպանվել է նրա տոհմական տապանատունը՝ զարդարված որմնանկարներով: Տիգրան Հոնենցին է վերագրվում Անիի՝ այսպես կոչված «Կուսանաց վանքի» շինարարությունը (նկ. 12): Բարեգործ անեցին

նվիրատվություններ է կատարել նաև Մայր տաճարին (նորոգել է աստիճանները, ձեռագրեր նվիրել 1213 թ.), Յոռոնոսի ու Խծկոնքի վանքերին:

Շեղդադյանների օրոք 1165թ. քաղաքի Ս. Աստվածածին (Խամբուլենց) եկեղեցին նորոգել է Հայրապետ անունով անեցին (Դիվան, Ա, 54): 1217-ին Հովհաննեսի դուստր Հոռոն տիկինը, որդու՝ Ջարիշահի հետ նորոգել է քաղաքի Ս. Աստվածածին (Հոռոն տիկնոջ) եկեղեցին (Դիվան, Ա, 66): ԺԳ դարի կեսերին Հոգևորենց (Հոգեւորեանց) Առյուծը սալահատակել է Ս. Առաքելոց եկեղեցու գավիթը (Դիվան, Ա, 20), բարեգործությամբ հիշվում է նաև Հոռոնոսում 1251 թ.: Նույն դարի 70-ական թվականներին Ուքան Քարինադինը, Պապքան Վախրադինը և Դապտա Խաթունը կառուցել են քաղաքի այսպես կոչված «Քարինադինի» եկեղեցու զանգակատունը (Դիվան, Ա, 65), հիմնովին նորոգել Անիի արվարձանում գտնվող Կարմիր վանքը, նվիրատվություններ կատարել (օժանդակել են նաև Հոռոնոսի վանքին):

1342 թ. անեցի պարոն Ասիլը աթաբեկ Վահրամի հրամանով վերականգնել է Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթը (Դիվան, Ա, 44), նորոգել նաև այլ եկեղեցիներ Անիում ու Շիրակում (Կ. Մ., 1985, 111-113): Քաղաքային դասի ներկայացուցիչներին է պատկանել Անիի տոհմական եկեղեցիների մի մասը, որոնք երբեմն հիշվում են այդ տոհմերի անուններով (Խամբուլենց, Բեխենց, Գոգոնց): Անեցիներն են իրենց անդուլ աշխատանքով կերտել քաղաքի հարակից ձորերում եղած բազմաթիվ ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները:

Մեզ են հասել անեցի եկեղեցաշինարարների միայն մի փոքր մասի անունները: Անհամեմատ ավելի շատ են եկեղեցիներին կատարած նվիրատվությունների հիշատակություններն ու նվիրատուների անունները, որոնք պահպանվել են վիմագիր արձանագրություններում և մասամբ՝ ձեռագրերի հիշատակարաններում<sup>36</sup>:

Անիի եկեղեցաշինարար պատվիրատուների, հովանավորների ու նվիրատուների հետ մեկտեղ մոռանալու չէ նաև անեցի **ճարտարապետների** աստղաբույլը տաղանդավոր **Տրդատի** նահապետությամբ, որոնց արգասավոր ստեղծագործական աշխատանքի պտուղն են քաղաքի եկեղեցական ճարտարապետության գոհարները: Ցավոք ճարտարապետներից քչերի անուններն են պահպանվել: Անիի արձանագրություններում հիշատակվում են «վարդպետ» ճարտարապետներ **Շահերի, Ֆրերի, Զունդիկի** անունները (Բարխուդարյան, 1963, 46, 75-77),

սակայն հատկանշական է, որ անեցի ճարտարապետների հանդիպում ենք նաև Հայաստանի այլ շրջաններում: Այդպիսին էին, օրինակ, Նոր Վարազավանքի կառուցող, նաև Կարսում հիշատակվող **Գագան Անեցին** և Արցախում աշխատած **Խաչենիկ Անեցին**: Առաջինն արձանագրության մեջ իրեն կոչում է «Անեցի վարդապետ Գագան», իսկ երկրորդը՝ «Խաչենիկ Անեցի վարդապետ... որդի Վարհամա...» (Քարտաշյան, 1984, 69, Հասրաթյան, 1992, 49-50):

Այժմ տեսնենք, թե որոնք են **Անիի առաջին եկեղեցիները**:

Հնագիտական տվյալները վկայում են, որ բնակավայրի հնագույն մասը միջնաբերդն է ու նրանից հարավ՝ ժայռային հրվանդանի վրա գտնվող Ներքին բերդը (հետագայում կոչվել է Աղջկաբերդ): Հենց այս տարածքում են Անիի ամենավաղ եկեղեցիները: Դրանցից առաջինի հիմնադրումը ավանդաբար կապվել է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Վարդան Արևելցու մոտ պահպանված մի վկայություն ցույց է տալիս, որ Լուսավորչի անունն առնչվել է հատկապես Ներքին բերդի հետ, ուր, ըստ պատմիչի «ասում են, թե» նա մկրտել է տեղի համառ իշխանին (Վարդան, 1861 118): Ներքին բերդում գտնում ենք այս մասին եղած երկրորդ վկայությունը, Ջաքարե ամիրսպասալարի այստեղ հիմնադրած Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը, ուր Անիի նոր տերը հայտնում է. «...կանգնեցի զարձանս վիմարդեան զմայրս լուսո զՍուրբ Կաթող[[իկեն]...**ի մենաստանիս մերձ առ էկեղեցե[լան] շինեալ ի Լուսաւորչէն մերմէ Սրբոյն Գրիգ[որի]...**» (Դիվան, Ա, 58):

Կ. Բասմաջյանը հիշյալ հատվածի թերի մասում վերականգնում է՝ «...մերձ առ էկեղեցե[ացս]...» (Բասմաջյան, 1931, 42): Ներքին բերդում Ս. Աստվածածին եկեղեցուց բացի եղել է նաև Ս. Հովհաննես եկեղեցին (երբեմն այս երկուսը նույնացվում են: Տե՛ս Ուլուհոջյան, 1992, 412): Այն, որ Ջաքարեի հիմնած եկեղեցին կոչվել է Ս. Աստվածածին, երևում է շինարարական արձանագրության «զմայրս լուսո» արտահայտությունից («Մայր Լուսոյ Սուրբ Կոյս» (շարական), հմմտ. Բազմայրի Ս. Աստվածածնի արձանագրությունները, Սարգիսյան, 1864, 184-185 և այլուր): Եկեղեցուն կից հավանորեն եղել են մատուռներ, այլ շինություններ, և այս ամենը, դատելով Ջաքարեի արձանագրությունից, կազմել է մի մենաստան՝ վանք: Դժվար է ասել, Լուսավորչի եկեղեցի ասելով՝ արձանագրողը որոշակիորեն ո՞ր եկեղեցին է նկատի ունեցել, բայց փաստն այն է, որ Ջաքարեի ժամանակ Անիի այս հնագույն



քաղաքամասում Լուսավորչի ձեռքով հիմնված եկեղեցու գոյությունը կասկած չի հարուցել:

Ինչ խոսք, որ Գրիգոր Լուսավորիչն իր քարոզչական, հայրապետական շրջագայությունների ժամանակ կարող էր լինել նաև Անիում (մասնավորապես այդ է հաղորդում Վարդան պատմիչը), որտեղ, դատելով հնագիտական նշաններից, հեթանոսական սրբավայր կար: Չի բացառվում, որ այն ավերվել է հենց Լուսավորչի կողմից և տեղում խաչ է կանգնեցվել, որն էլ հիմք է դարձել ապագա եկեղեցու համար: Սակայն, մյուս կողմից, այս ամենը կարող է ժողովրդական ավանդության ծնունդ լինել՝ առաջացած հատկապես այն ժամանակ, երբ Անին դարձավ մայրաքաղաք՝ թագավորանիստ (961) և կաթողիկոսանիստ (992): Ամեն դեպքում, մի բան պարզ է, որ Անիում առանձնահատուկ վերաբերմունք է եղել Հայոց ազգային եկեղեցու հիմնադիր Ս. Գրիգոր Լուսավորչի նկատմամբ: Պատահական չէ, որ քաղաքի մեր օրերը հասած եկեղեցիների մեջ ամենից շատ հանդիպում է Ս. Գրիգոր անունը (այդպես են կոչվում թագավորակառույց «Գագկաշենը», իշխանաշեն «Աբուղամրենցը», մեծատուն քաղաքացիության հիմնած «Խաչուտի» ու «Տիգրան Հոնենցի» շքեղ եկեղեցիները): Լուսավորչի նկատմամբ ակնածանքը մեծ է եղել նաև քաղաքի քաղկեդոնական համայնքի մոտ (դրա վկայությունն են Տիգրան Հոնենցի եկեղեցու՝ Լուսավորչի վարքագրական պատկերաշարը ներկայացնող որմնանկարները):

Սակայն Ներքին բերդի մենաստանը որևէ սկզբնաղբյուրում Լուսավորչի կամ Ս. Գրիգոր վանք չի կոչվում (այն «Ս. Գրիգոր վանք» է կոչում Հ. Օրբելին՝ Օրբելի, 1910, III): Ջաքարեի արձանագրության մեջ խոսվում է Լուսավորչի **հիմնած** և ոչ թե Լուսավորչի անունը կրող մենաստանի մասին: ԺԳ դարում Անիում «Ս. Գրիգոր վանք» է կոչվել Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած եկեղեցին շրջակա կառույցներով: Հոնենցը շինարարական արձանագրության մեջ նշում է. «Շինեցի զվանքս Սուրբ Գրիգորոյ» (Դիվան, Ա, 63), իսկ քաղաքի հարավային գլխավոր դարպասի (Բագրատ Արքայունու կամ Սարգիս Ծիլենցի դուռ) մուտքից վեր գրված է. «Ես Բագրատ... շինեցի զդուռնս, **որ տանի ի վանս Սրբոյն Գրիգորի...**» (Դիվան, Ա, 8): Դարպասից անցնող ճանապարհն իրոք ուղղվում է դեպի հյուսիս-արևելք՝ հասնելով մինչև Հոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի վանքը:

Պեղումների շրջանում ուսումնասիրված Անիի եկեղեցիների մեջ իրավամբ հնագույն է համարվել «**Պալատական**» կոչված եկեղեցին, որի ճարտարապետական առանձնահատկություններն

այն մերձեցնում են **է** դարի կառույցներին (նկ. 6): Միանգամայն հնարավոր է, որ այդ եկեղեցին գոյություն ուներ դեռ Կամսարականների ժամանակ, իսկ հետագայում, երբ Անին անցավ Բագրատունիներին, վերջիններս, միջնաբերդում կառուցելով իրենց ապարանքը, եկեղեցին ներառան պալատական համալիրի մեջ:

Իսկ ո՞րն էր քաղաքում **Բագրատունիների հիմնած առաջին եկեղեցին**: 961 թ. Անին մայրաքաղաք հռչակող և նրա առաջին քաղաքային պարիսպը կառուցող Աշոտ Գ Ողորմածը, նորահաստատ մայրաքաղաքում պետք է որ հենց ինքն առաջին խոշոր եկեղեցին կառուցեր: Բայց որքան էլ տարօրինակ է, սկզբնաղբյուրներում ոչ մի նման վկայություն չենք գտնում: Արքայի կինը՝ Խոսրովանույշ թագուհին էր, որ կառուցեց Հաղբատի և Սանահինի նշանավոր վանքերը: Ինքը՝ Աշոտը, լինելով ջերմեռանդ քրիստոնյա, հայտնի էր բազմաթիվ բարեգործություններով, որի շնորհիվ Ողորմած մականունն է ստացել: Նա հիմնովին նորոգել է Անիից այնքան հեռու գտնվող Ստեփանոս Նախավկայի (Մաղարդա) վանքը (Հովսեփյան, 1951, 139, 654): Հիշենք նաև, որ Աշոտին հաջորդած երեք թագավորները Անիում կամ Հոռոմոսում եկեղեցիներ են կառուցել (եկեղեցաշինարարներ էին նաև Աշոտի նախնիները): Նման պայմաններում Աշոտի համար միայն ասվում է, թե նա Անիի պարիսպների բուրգերի մեջ եկեղեցիներ կառուցեց (Վարդան, 1861, 122), սակայն պարզ է, որ բուրգերի եկեղեցի-մատուռները չէին կարող մայրաքաղաքի եկեղեցական դեմքը բնորոշել:

Մեր կարծիքով այս հարցի պարզաբանմանը մեծապես նպաստում է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի պատմության օրինակներից մեկում պահպանված մի վկայություն: Այստեղ Աշոտի հոր՝ Աբաս թագավորի (928-953) գործունեությանը նվիրված մասում, ուր խոսվում է Կարսի եկեղեցու կառուցման մասին, ավելացված է. «սա (Աբասը, Կ. Մ.) **շինե եւ գփոքր Կաթողիկէն Անույ եւ գՍուրբն Գրիգոր ի քաղաքոյ դաշտին**» (Ասողիկ, 1885, 172): Թե Անիի և թե Ջվարթնոցի (Քաղաքաղաշտի Ս. Գրիգոր) ուսումնասիրողները, ցավոք, չեն անդրադարձել այս արժեքավոր վկայությանը: Նույն տեղեկությունը, փոքր-ինչ համառոտված, տեղ է գտել «Թագաւորք վերջին ի վերայ Հայոց որ կոչին Բագրատունիք...» բնագրում՝ «Թագաւորէ Աբաս ամս ԻԴ

(24): Սա շինեաց վանս՝ կաթողիկեն զԿարուց մեծ եկեղեցին, զՍուրբն Գրիգորն ի Քաղաքուղաշտին» (Յովսեփյան, 1951, 87): Թեև այստեղ Անիի հատվածը չկա, բայց Ջվարթնոցի մասին վկայությունը ցույց է տալիս, որ Ասողիկի երկուն արված հավելումը գուրկ չէ իրական հիմքից: Տեղին է այստեղ վկայակոչել ժամանակի կաթողիկոս Անանիա Մոկացու՝ Աբասի մասին ասածը, թե նա «...**եկեղեցեաց զշինութեան տայր զհրաման»** (Մոկացի, 1897, 132-133):

Քաղաքաղաշտի Ներսեսաշեն Ս. Գրիգորը՝ Ջվարթնոցը, «շինելը» պետք է հասկանալ որպես նրա նորոգում<sup>37</sup>: Իսկ Անիի եկեղեցու **Փոքր Կաթողիկե** կոչվելն ինքնին ուշագրավ է, քանի որ որոշ ժամանակ անց քաղաքում որպես կաթողիկոսարանի եկեղեցի կառուցված Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է **Մեծ Կաթողիկե** (Ե-ԺԲ, 1988, 282, Յակոբյան, 1951, 384, Վարդան, 1861, 122, Օրբելյան, 1910, 300, Մխիթար, 1983, 56, Այրիվանեցի, 1860, 56, Սմբատ, 1956, 158 և այլն):

Նկատենք, որ Անին բավական բարգավաճ ավան էր մինչև մայրաքաղաք դառնալը (հատկանշական փաստ է, որ Սյունյաց Սուփան իշխանը Մաքենյաց վանքի թ դարի վերջերին գրված արձանագրության մեջ նշում է վանքին նվիրաբերված հինգ կուղպակ Անիում (Դիվան, Դ, 1973, 290): Այն, որ Անին ընդարձակ տարածք էր ընդգրկում մինչև մայրաքաղաք դառնալը, հաստատվում է նաև հնագիտական նյութերով, որի մասին վկայում է Ն. Սառը (Սառ, 1934, 79), բացի այդ, 953 թվականից հորը փոխարինած Աշոտը 961-ին ոչ միայն Անին մայրաքաղաք հռչակեց, այլև այդտեղ թագադրվեց՝ այդ առիթով հրավիրելով մեծաթիվ հյուրերի, այդ թվում երկու կաթողիկոսների և բարձրաստիճան եկեղեցականների. «...ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց Տանն Յայոց առ **սուրբ հայրապետն Անանիա** վասն զի տացեն զօծումն թագաւորութեան... հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զտէր **Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհի եւ քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա... Եւ յայնմ աւուր եղել ժողով ահագին եւ մեծ ի քաղաքն յԱնի, որ եղել այնմիկ թագաւորանիստ քաղաք Յայոց»** (Ուռհայեցի, 1991, 8): Բնական է, որ թագադրությունը պետք է կատարվեր կաթողիկոսների ձեռքով եկեղեցում: Դրանից հետո միայն Աշոտը ձեռնարկեց քաղաքի պարսպի կառուցումը և Վարդան Արևելցու վկայությամբ՝ «**յամենայն բրգունս յեկեղեցիս յորինեաց»** (Վարդան, 1861, 122): Հիշենք նաև, որ մայրաքաղաք դառնալուց

ընդամենը ութ տարի անց (969թ.) Անին հյուրընկալեց համահայկական եկեղեցական ժողովի մասնակիցներին, որոնք քննելու էին կաթողիկոս Վահան Սյունեցու հարցը, իսկ եկեղեցական ժողովները հնուց ի վեր անց էին կացվում եկեղեցում (եկեղեցու ներսում), հետևաբար քաղաքում կար նման հավաքի պահանջներին բավարարող եկեղեցի:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, թե Աշոտ Ողորմածը, որն անգամ պաշտպանական կառույցների՝ պարսպի բուրգերի ներսում եկեղեցիներ ու մատուռներ էր հիմնում (դրանց գոյությունը հաստատվել է պեղումների շնորհիվ), նորահաստատ մայրաքաղաքում մեծ եկեղեցի չի կառուցել, քանի որ իր հոր՝ **Աբասի հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկեն**, արդեն կար և ինքն էլ այդտեղ էր թագադրվել:

Չնարավոր է արդյոք որոշել այդ եկեղեցու տեղը քաղաքի ավերակներում: Կարծում ենք կարելի է միայն մեծ հավանականությամբ ենթադրել, որ այն «հին քաղաքի» երկու խոշոր եկեղեցիներից մեկն է եղել: Երկուսն էլ գտնվում են միջնաբերդից մինչև Աշոտյան պարիսպներն ընկած տարածքի մոտավոր կենտրոնում և աչքի են ընկնում ճարտարապետական հնավանդ ձևերով: Առաջինը հայտնի է Խամբուշենց Ս. Աստվածածին անունով: Եկեղեցին բավական հարուստ է արձանագրություններով (հնագույնը՝ 1042 թ.), որոնցից դատելով, այն նշանավոր է եղել, բազմաթիվ նվիրատվություններ ստացել, նորոգվել է 1165 թ.: Լրացուցիչ անունը՝ «Խամբուշենց», պահպանվել է 1054 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ («Ես Յովաննես ... ետու ի Սուրբ Աստվածածինս Խամբուշինց դահեկանք Ի(20) ...» (Դիվան, Ա, 51), որից ուսումնասիրողները ենթադրել են, թե այն եղել է Խամբուշենց տոհմական եկեղեցին: Բազմաթիվ այլ արձանագրություններում այդ անունն այլևս չի հանդիպում: Ն. Մառը գրում է, որ եկեղեցու պեղումները «նյութ տվեցին թագավորների ժամանակի իսկական անիական համեմատաբար պարզ կառույցների մասին» (Ն. Մառ, 1934, 54): Քաղաքի հնագույն մասում այս միակ եկեղեցին է, որ կոչվում է Ս. Աստվածածին. դիտելի է, որ այդ անունն էր կրում նաև հետագայում կառուցված Մեծ Կաթողիկեն՝ Մայր տաճարը:

Երկրորդ կառույցը, որը կարող է ենթադրաբար «Փոքր Կաթողիկեն» համարվել, պայմանականորեն կոչվել է «Քարինդիինի» կամ «Աշոտի քաղաքի եկեղեցի»: Ի տարբերություն Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու՝ «Քարինդիինի» եկեղեցուն արձանագրությունները չափազանց քիչ են, որի հետևանքով նրա ճիշտ անունն անհայտ է: ԺԳ դարի երկրորդ

կեսից պահպանված քիչ թե շատ ամբողջական արձանագրություններ վկայում է, որ Ուքան Քարիմադինը, Պապան Վախրադինը և Դապտա Խաթունն այստեղ կառուցել են զանգակատուն, նվիրատվություններ կատարել (Դիվան, Ա, 65): Եկեղեցուց հարավ-արևմուտք եղել է փոքր գերեզմանոց: Ըստ Ն. Մառի՝ եկեղեցին կառուցվել է Անիի մայրաքաղաք դառնալուց առաջ և սկզբնապես գմբեթ չի ունեցել: Նրա կարծիքով գմբեթն ու մի քանի այլ մանրամասներ ավելացվել են հետագայում՝ Ժ դարի վերջերին (Մառ, 1934, 101): Վերջին շրջանում գրականության մեջ այս եկեղեցու համար օգտագործվում է «Աշոտի քաղաքի եկեղեցի» կամ պարզապես՝ «**Աշոտի եկեղեցի**» անվանումը (Ուլուհոջյան, 1992, 406, 413): Փաստորեն այս երկու եկեղեցիներն էլ ունեն որոշ հատկանիշներ, որոնց շնորհիվ կարող են նույնացվել Աբասի հիմնած եկեղեցու հետ, սակայն այս հարցն առայժմ չենք կարող վերջնականապես պարզել: Չի բացառվում նաև, որ Փոքր Կաթողիկեն այս երկուսից տարբեր մեկ այլ եկեղեցի եղած լինի: Ամեն դեպքում, մեր կարծիքով, այդ եկեղեցու առկայությունն էր պատճառը, որ Աշոտը քաղաքում չկառուցեց մի նոր խոշոր եկեղեցի: Նրա ավագ որդու՝ Սմբատ Բ-ի ժամանակ, երբ մի քանի անգամ ընդարձակվեց պարսպապատ քաղաքը, բնականաբար նոր գլխավոր եկեղեցու կառուցման կարիքն առաջացավ (այն անհրաժեշտ էր նաև Արգինայից կաթողիկոսական Աթոռը վերջնականապես մայրաքաղաք տեղափոխելու համար): Հենց այդ ժամանակ էլ միջնաբերդից մինչև Սմբատաշեն, պարիսպներն ընկած տարածքի միջնամասում հիմնադրվեց **Մեծ Կաթողիկեն**՝ Մայր տաճարը:

Անիի եկեղեցիների ուղեցույց քարտեզին ծանոթանալուց առաջ, հարկ է անդրադառնալ ևս մի հարցի՝ եկեղեցիների անվանումների խնդրին: Անիի եկեղեցիները հաճախ ըստ տոհմանունների են կոչվել դեռևս միջնադարում: Օրինակ՝ Բագնայրի արձանագրություններից մեկում նվիրատու Խաչոտը գրում է, թե վանքին նվիրել է իր գանձագին տունը՝ «մաւտ ի **յԱպուղամրենց** Սուրբ Գրիգոր» (Սարգիսյան, 1864, 180): Մեկ այլ նվիրատու, դարձյալ Խաչոտ անունով (նույնանուն անեցիները տարբեր մարդիկ են՝ առաջինի կնոջ անունը Տիրանց է, երկրորդինը՝ Ավագտիկին), 1221-ին Խծկոնքի վանքին է նվիրել Անիում գտնվող իր տները. «...որ ընդդէմ **Գոգոնց** Սուրբ Սարգսի է» (Սարգիսյան, 1864, 201):

Անիի պեղումների ժամանակ, երբ հայտնաբերված վիմագրերում որևէ եկեղեցու անունը պահպանված չի եղել, ուսումնասիրողները երբեմն պայմանական անուններ են օգտագործել (օրինակ՝ «Շախմատային» եկեղեցի՝ ելնելով պատերի շարվածքի շախմատաձևությունից)՝ ավելի հաճախ կիրառելով վիմագրերում եղած անձնանուններից մեկը (օրինակ՝ «Քարինադինի», «Աբուխաննի», «Յոռոմ տիկնոջ» և այլն), երբեմն էլ նույնանուն եկեղեցիները զանազանելու համար օգտագործել են լրացուցիչ անուններ՝ «Գազկաշեն», «Տիգրան Յոնենցի» և այլն: Դա որոշ դեպքերում շփոթությունների պատճառ է դարձել:

Այս առումով հատկանշական է Ս. Գրիգոր (Խաչուտի կամ Բախտաղեկի) եկեղեցին: 1892 թ. պեղումներից հայտնաբերված այդ որմնանկարազարդ ու քանդակազարդ եկեղեցին (նկ. 14, 15) ճարտարապետության պատմաբանները սովորաբար կոչում են Բախտաղեկի եկեղեցի: Այդ անունը (իզական անձնանուն է. հմմտ. Սարգիսյան, 1864, 173) պահպանվել է եկեղեցու բեմի ճակատի մի անավարտ արձանագրության մեջ, որը հետևյալն է. «...աստուածաջան խորանիս յիշեսջիք ի սուրբ յաղաթս ձեր **զԽաչուտ** քահանա, ծնողսն մեր, եւ զԱլքանն եւ զհարազատ եղբարքս **զՅայրապետս եւ զԺոսան** եւս եւ **զԲախտաղեկ** եւ զ...» (Դիվան, Ա, 61): Ինչպես տեսնում ենք Բախտաղեկն այստեղ շատ պատահական անուն է: Եկեղեցու բուն անվանումը՝ Ս. Գրիգոր, պահպանվել է Շահեր վարդապետի 1271 թ. նվիրատվական արձանագրության մեջ (Դիվան, Ա, 60), իսկ որպես լրացուցիչ անուն (քաղաքի մյուս Ս. Գրիգոր կոչվող եկեղեցիներից տարբերելու համար) թերևս ավելի տեղին է Խաչուտի անվան օգտագործումը (այսպես է արված վիմագրերի ժողովածուում): Բայց ցավոք, երկու լրացուցիչ անունների կիրառումն արդեն թյուրիմացությունների պատճառ է դարձել: Գ. Ուլուհոջյանն, օրինակ, իր կազմած «Անիի եկեղեցիների համահավաք ցուցակում», նշելով ընդամենը 24 եկեղեցի, միևնույն Ս. Գրիգորը ներկայացնում է որպես երկու եկեղեցի՝ Բախտաղեկի և Խաչուտի անուններով (Ուլուհոջյան, 1992, 414), իսկ Թ. Յակոբյանը «անվանակոչության» շուրջ կամայական դատողություններ է անում (Յակոբյան, 1982, 246-265): Ռուսերեն գրականությունից օգտված որոշ հեղինակներ էլ եկեղեցին կոչում են «Բախտագեկի»:

Անիի մի քանի այլ եկեղեցիների համար բազմաթիվ չհիմնավորված անվանումներ են գործածել նաև քաղաքի առաջին հետազոտողներից ոմանք (տե՛ս Ուլուհոջյան, 1992, 410-414, Անի, 1984, 84-95):

Ստորև, մեր կազմած ցուցակում, եկեղեցիների թվարկման մեջ նշում ենք ամեն մի եկեղեցու բուն անունը, փակագծում՝ լրացուցիչ անունը (ըստ տոհմանվան կամ այլ հատկանիշի), ինչպես նաև այն անվանումը, որով կոչվում է կառույցը Հ. Օրբելու կազմած Աճի քաղաքի համառոտ ուղեցույցի մեջ: Եթե եկեղեցու բուն անունը հայտնի չէ, ապա նշում ենք առավել տարածված պայմանական անունը:

Աճի եկեղեցիների քարտեզ-ուղեցույցի ստեղծման ընթացքում որոշ դժվարություն էր ներկայացնում մի քանի եկեղեցիների տեղորոշումը, քանի որ Հ. Օրբելու հատակագծում բացակայում են դրանց նշումները (հիշենք, որ Հ. Օրբելու ուղեցույցը հրատարակվել է 1910-ին, իսկ պեղումներն Աճիում շարունակվեցին ևս հինգ տարի): Օրբելու մոտ չկան նաև այնպիսի մատուռներ ու եկեղեցիներ, որոնք հայտնի էին հեղինակին: Օրինակ՝ Ս. Գրիգոր (Աբուղամրենց) եկեղեցու մոտ եղած Ս.Քրիստափոր և Ս. Ստեփանոս մատուռները (Օրբելի, 1910, 24), կամ Ս. Առաքելոցի մոտ եղած փոքր եկեղեցին, որն ըստ Ն. Մառի, հնությանը կարող է համեմատվել «Պալատական» եկեղեցու հետ: Մի շարք մատուռների մասին հիշատակում է Թ. Թորամանյանը:

Ընդհանրապես Աճի պեղումների շատ վաղ ու անակնկալ ավարտը հետազոտման կարոտ շատ հարցեր թերի թողեց: Օրինակ՝ քաղաքի մի շարք եկեղեցիների հատակագծերն անգամ չկան: Իսկ Աճի վիմագրերի ժողովածուում, ցավոք, չկան եկեղեցիների տեղանշումները, որը ևս որոշակի դժվարություններ է հարուցում: Այնուամենայնիվ, մենք մի փորձ ենք անում առկա և մատչելի նյութերի ի մի բերումով կազմել **Աճի քաղաքի եկեղեցիների ցուցակը և ուղեցույց քարտեզը:**

Նշումները կատարվում են հետևյալ տարաբաժանմամբ՝ ա. Բուն քաղաքի եկեղեցիները (Սմբատաշեն պարիսպներից ներս ընկած տարածք), բ. Արվարձանային եկեղեցիներ (Սմբատաշեն պարսպից դուրս եղած տարածք), գ. Ժայռափոր եկեղեցիներ և մատուռներ: Վերջում նշում ենք նաև միայն վիմագիր և մատենագրական աղբյուրներում հիշատակվող եկեղեցիները՝ առանձին համարակալմամբ: Յուրաքանչյուր եկեղեցու համար նախ նշում ենք մեր ցուցակի և քարտեզ ուղեցույցի թվահամարը, ապա փակագծում այն թվահամարը, որով կառույցը նշված է Հ. Օրբելու ուղեցույցի մեջ: Ամեն մի եկեղեցու վերաբերյալ, հատկապես առավել նշանավորների մասին, բերում ենք շատ հակիրճ տեղեկություններ (ծանոթագրությունները ևս աշխատել ենք չձանրաբեռնել): Եթե եկեղեցու հատակագիծը հայտնի է, ապա տեղեկությունների վերջում արվում է «Հտ.» նշումը:


# ԱՆԻ ԸԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ՈՐՈՇԹՈՒՅՑ ԸԱՐՏԵԶ

ՇեյխՄանկ-Կազմող՝

Կարեն Մաթևոսյան

Երևան - 1994





## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

(Բու՛ն քաղաքի եկեղեցիները. Սմբատաշեն պարիսպներից ներս)

1. (109 ա) «ՊԱԼԱՏԱԿԱՆ» ԵԿԵՂԵՑԻ - Շինարարական արձանագրության համաձայն կառուցել է Աբիսողոմ վարդապետը: Միանավ բազիլիկ է: Դատելով ճարտարապետությունից՝ կառուցվել է Է դարում: Ստույգ անունը հայտնի չէ, թեև ուսումնասիրողները հաճախ Ս. Գևորգ կամ Ս. Սարգիս են կոչում<sup>38</sup>: Հտ.:

2. (109 ա) ՄԱՏՈՒՌ - Կառուցված է «Պալատական» եկեղեցու հյուսիսային պատին կից, երկհարկանի է (նկ. 6): Ուշ շրջանի (հավանաբար՝ ԺԳ դ.) կառույց է: Հ. Օրբելին գրում է. «Պատերին կան ծեփի մնացորդներ, որմնանկարների հետքերով» (Օրբելի, 1910, 16): Հտ.:

3. (110) ՄԻՋՆԱԲԵՐՂԻ ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է պալատական համալիրից հարավ-արևելք (նկ. 8): Հավանորեն կառուցվել է Բագրատունյաց շրջանում, արձանագրություններ չունի: Հտ.:

4. (112) Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ - («արձանագրությամբ եկեղեցի» Օրբ.) - Գտնվում է պալատական համալիրից հարավ-արևմուտք: Թվակիր երկու հնագույն արձանագրությունները 1201 թվականից են (Դիվան, Ա, 10-11): Հտ.:

5. (113) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցի պարսպի մոտ», Օրբ.) - Գտնվում է պալատից հարավ, արձանագրություն չունի: Հտ.:

6. «ԱԲՈՒԽՍԱՆՄԻ» ԵԿԵՂԵՑԻ (114) («պարսպամերձ վանք», Օրբ.) - Եկեղեցին ունի «Ապուխանմ» իշխանի և Սահակ քահանայի անունով անթվական արձանագրություն (Դիվան, Ա, 34)<sup>39</sup>: Ըստ Հ. Օրբելու՝ «եկեղեցին ոչ մեծ վանքի մաս է կազմել» (Օրբելի, 1910, 17): Բու՛ն կառույցը հատակագծում բոլորածն է, ունի վեց խորան: Հտ.:

7. (107) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.) - Գտնվում է միջնաբերդի տարածքում, պալատից արևմուտք:

8. (117) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ՁԱՔԱՐԵԻ») ԵԿԵՂԵՑԻ («Ս. Գրիգոր վանք», Օրբ.) - Անիի ներքին բերդում (Աղջկաբերդ) կառուցել է Ձաքարե ամիրսպասալարը ԺԳ դ. սկզբներին: Ըստ Հ. Օրբելու՝ եկեղեցու մոտ երևում են «մի քանի սենյակների մնացորդներ, վանքի հետքեր» (Օրբելի, 1910, 18): Հտ.:

9. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ - Գտնվել է Ներքին բերդում, կառուցման ժամանակն անհայտ է: 1298 թ. այստեղ մի Ավետարան է

ընդօրինակել գրիչ Եղբայրիկը: Ունի ԺԴ դարի վիմագրեր (Դիվան, Ա, 70):

10. (105) Ս. ՍԱՐԳԻՍ («ՍԻԹԻ ՊԱՅԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Գայլի հուշակոթողը մատուռի մոտ», Օրբ.) - Գտնվում է պալատից հյուսիս, 1210-1226 թթ. նորոգել է Սիթի իշխանուհին: Եկեղեցուն կից եղել է Ագատշահի որդի, քսանամյա Գայլի տապանաքարը և խաչքար (Դիվան, Ա, 55-56):

11. (104) Ս. ՅԱԿՈՒՔ («ՇՈՒՇԱՆ ՊԱՅԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Աբղղարիբի փոքրիկ եկեղեցի», Օրբ.) - 1037 թ. կառուցել է Գրիգոր Պահլավունու կինը՝ Շուշանը, կամ նրա որդին՝ Աբղղարիբը (Դիվան, Ա, 49):

12. (102) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ԽԱՄԲՈՒՇԵՆՑ») ԵԿԵՂԵՑԻ - Կառուցվել է Բագրատունյաց շրջանում, հնագույն արձանագրությունը՝ 1042 թ.: Եկեղեցին «Սուրբ Աստուածածինս Խամբուշինց» է կոչվում 1054 թ. մի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 51-53):

13. (101) «ՔԱՐԻՄԱԴԻՆԻ» ԵԿԵՂԵՑԻ («գեղեցիկ տաճարի ավերակներ», Օրբ.) - 1912 թ. պեղված այս եկեղեցին Ն. Մառը կոչում է «մեծ եկեղեցի»՝ համարելով քաղաքի հնագույն կառույցներից մեկը: ԺԳ դարում Ուքան Քարիմադինի և այլոց կողմից նորոգվել է, կից կառուցվել է զանգակատուն: Հտ.:

14. (100) «ԱՂԲԵՐԻԿԻ» ԵԿԵՂԵՑԻ («ծիթհանք շենքի ավերակներով», Օրբ.) - Աշոտյան պարիսպներից ներս գտնվող տարածքում 1912 թ. պեղված այս եկեղեցին Ն. Մառը կոչում է «փոքր եկեղեցի» (ի տարբերություն «Քարիմադինի» «մեծ եկեղեցու»): Ըստ նրա՝ վիմագրական բեկորներից մեկի վրա պահպանվել է 1042 թվականը: Եկեղեցին, կառուցված լինելով Բագրատունյաց շրջանում, զմբեթավորվել է ավելի ուշ՝ ԺԳ դարում (Մառ, 1934, 98): Եկեղեցուն կից գտնված խաչքարերից մեկի վրա պահպանվել է ոմն Աղբերիկի անունը, որից էլ վիմագրերի ժողովածուում եկեղեցին կոչվում է «Աղբերիկի եկեղեցի», բայց գրքի վերջում՝ ցանկում, այն անվանված է նաև Ս. Աստվածածին (Դիվան, Ա, 138): Թե ինչի վրա է հիմնված այս անունը՝ անհայտ է: Վիմագրերում նման տեղեկություն չկա: Հտ.:

15. (98) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.):

16. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Աշոտյան պարսպի անկյունային բուրգի մեջ: Հ. Օրբելին գրում է. «Համաձայն պատմիչների՝ բուրգ բուրգերում փոքր եկեղեցիներ էին կառուցված: Եվ իրոք, եզրերի

երկու բուրգերում, որոնք մինչև այժմ միակ ուսումնասիրվածներն են, ճարտարապետ Թ. Թորամանյանը պարզեց մատուռների գոյությունը» (Օրբելի, 1910, 4):

17. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Աշոտյան պարսպի անկյունային բուրգի մեջ (տե՛ս նախորդ բացատրությունը):

18. (60) Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ («ՅՈՒՌՍ ՏԻԿՆՈՋ») ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Աշոտյան պարսպից ոչ հեռու, դեպի հյուսիս: 1217 թ. նորոգել է Յովհաննեսի դուստր Յոռոմ տիկինը՝ թողնելով համապատասխան արձանագրություն:

19. (56) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ. սյուն, խարիսխ և խաչքար», Օրբ.):

20. (53) Ս. ԳՐԻԳՈՐ («ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ» կամ «ԳՐԻԳՈՐ ՊԱՅԼԱՎՈՒՆՈՒ») ԵԿԵՂԵՑԻ («Ապլղարիպի եկեղեցի», Օրբ.) - Կառուցել է Աբուղամրի որդի Գրիգոր Պահլավունին (Գրիգոր Ա Յամգե) Ժ դարի վերջերին (նկ. 9): Յնագույն թվակիր արձանագրությունը (994) պատկանում է Գրիգորի կնոջը՝ Շուշանին (Դիվան, Ա, 31-32): Արձանագրություն ունի նաև Գրիգորի որդին՝ Աբլղարիբը: Յտ.:

21. Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԱՏՈՒՌ - 1040 թ. կառուցել է Աբլղարիբ մարզպանը Ս. Գրիգոր («Աբուղամրենց») եկեղեցուն կից, որպես հանգստարան հանգուցյալ եղբոր՝ Յամգեի և քրոջ՝ Սեդայի համար: Յտ.:

22. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՏՈՒՌ - 1040 թ. կառուցել է Աբլղարիբ մարզպանը Ս. Գրիգոր («Աբուղամրենց») եկեղեցու մոտ, որպես հանգստարան հոր՝ Գրիգորի և մոր՝ Շուշանի համար: (Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռների մասին տե՛ս Դիվան, Ա, 33, Թորամանյան, 1942, 165, ծան. 1, 219):

23. (67) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ», Օրբ.) - Գտնվում է քաղաքի կենտրոնական մասում:

24. (73) ՄԱՅՐ ՏԱՃԱՐ (ԿԱԹՈՂԻԿԵ) - Անիի գլխավոր եկեղեցին, 989 թ. հիմնադրել է Սմբատ Բ Տիեզերակալը, շինարարությունն ավարտել է Գագիկ Ա-ի կինը՝ Կատրամիդե թագուհին, 1001 թ.<sup>40</sup>, ճարտարապետն է Տրդատը (նկ. 5):

25. (75) ԿԱՏՐԱՄԻԴԵ ԹԱԳՈՒՅՈՒ ՄԱՏՈՒՌ - ՏԱՊԱՆԱՏՈՒՆԸ («Կատրամիդե թագուհու դամբարանը», Օրբ.) - Գտնվում է Մայր տաճարից արևելք: Պեղումների ժամանակ պարզվել է, որ թագուհու գերեզմանը ավելի վաղ կողոպտված է եղել (Օրբելի, 1910, 40):

26. ՄԱՏՈՒՌ - Գտնվել է Մայր տաճարից արևելք (Օրբելի, 1910, 40, Թորամանյան, 1942, 153):

27. (74) «ՈՒԹԱՆԿՅՈՒՄ» ՄԱՏՈՒՌ («մկրտարան», Օրբ.) - Գտնվում է Մայր տաճարից հարավ-արևելք: Կառույցի բնույթի վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ<sup>41</sup>:

28. (38) Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ - Կառուցվել է Ժ դ. վերջերին կամ ԺԱ դ. սկզբներին (հնագույն արձանագրությունը 1031 թվականից է): Շինարարությունը վերագրվում է Պահլավունիներին (նկ. 7): Եղել է Անիի եպիսկոպոսարանի եկեղեցին, ունեցել է երեք գավիթ և կից կառույցներ<sup>42</sup>: Հտ.:

29. ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՄ - Գտնվում է Ս. Առաքելոց եկեղեցու մոտ, դեպի արևելք (Օրբելի, 1910, 27): Հավանաբար ԺԳ դարի կառույց է, որը թեև ամբողջովին ավերված է եղել, բայց ունեցել է բազմաթիվ քանդակազարդ բեկորներ, որոնք պեղումների ժամանակ տեղափոխվել են քաղաքի թանգարան և ըստ Ն. Մառի՝ «Անիի թանգարանի լավագույն զարդերից են» (Մառ, 1934, 74-75):

30. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Ս. Առաքելոց եկեղեցու հարավային գավիթին կից: Պեղվել է 1909թ.: Ըստ Ն. Մառի՝ այս եկեղեցին ունի «հնության նշաններ... որոնք նրան մոտեցնում են 7-րդ դարի Պալատական եկեղեցուն» (Մառ, 1934, 75):

31. ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՄ - Գտնվում է նախորդ եկեղեցու մուտքից հարավ, ունեցել է քանդակազարդ քարեր (Մառ, 1934, 75):

32. (45) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.):

33. (46) ԵԿԵՂԵՑԻ («հարուստ զարդաքանդակներով եկեղեցու ավերակներ», Օրբ.):

34. (72) Ս. ՍԱՐԳԻՍ («ՍԱՐԿԱՎԱԳԻ») ԵԿԵՂԵՑԻ - Բազրատունյաց շրջանի կառույց, որը 1151 թ. նորոգել է անեցի Սարկավագ քահանան (Դիվան, Ա, 56): Ներսուն պահպանված է եղել մկրտության ավազանը (Մառ, 1934, 116)<sup>43</sup>:

35. ՄԱՏՈՒՌ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԵԶ - Հայտնաբերվել է 1913 թ. Գայլիձորի դարպասի դիմաց գտնվող մեծ մահարձանի մոտ պեղված տան մեջ: Ն. Մառը գրում է, որ Հայաստանում նման այլ դեպք իրեն հայտնի չէ. «Խորան ունեցող փոքր մատուռը գտնվում է անիական բնակելի տան մեծ սրահի մեջ» (Մառ, 1934., 115):

36. (52) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.):

37. (50) «ՇԱԽՄԱՏԱՅԻՆ» ԵԿԵՂԵՑԻ - Հավանաբար կառուցվել է ԺԳ դարում, բայց ավելի վաղ կառուցված եկեղեցու տեղում:

Պատերի շարվածքում օգտագործվել են հին եկեղեցու արձանագրությամբ քարեր, որոնք Բագրատունյաց շրջանից են: Եկեղեցուն «Շախմատային» պայմանական անունը տվել են քաղաքի հետազոտողները՝ ելնելով ճակատամասի քարերի շախմատածև շարվածքից<sup>44</sup>:

38. ԵԿԵՂԵՑԻ «ԵՐԿՈՒ ԽԱՉՔԱՐԵՐՈՎ» - Գտնվում է Ս. Փրկիչ եկեղեցուց հյուսիս-արևմուտք, պեղվել է 1913-ին: Ըստ Ն. Մառի՝ կառուցվել է Բագրատունիների օրոք, սելջուկյան ներխուժման հետևանքով վնասվել է, ապա ժԲ դարում վերականգնվել է, որի ընթացքում կառուցվել է փոքր գավիթը (Մառ, 1934, 113-114):

39. (51) Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ - 1036 թ. կառուցել է Աբլղարիք Պահլավունին (նկ. 10): Հատակագծում ութ խորանով, բլրորածև կառույց է (ունեցել է զանգակատուն և կից այլ շինություններ), ունի բազմաթիվ արձանագրություններ: Սամուել Անեցին եկեղեցին կոչում է Ամենափրկիչ և հիշատակում նրա ավերումը 1131թ. երկրաշարժի հետևանքով (Անեցի, 1893, 129): Հտ.:

40. (78 ա) ԵԿԵՂԵՑԻ

41. (51 ա) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.):

42. (82) ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ («ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ») ԵԿԵՂԵՑԻ - 1215 թ. կառուցել է անեցի մեծատուն Տիգրան Հոնենցը, ամբողջովին որմնանկարագարդ է (նկ. 19, 20, 21): Ունի գավիթ, որը կառուցվել է մի փոքր ուշ: Հտ.:

43. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌ - Գտնվել է Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու տեղում և վերջինիս կառուցման ժամանակ (ԺԳ դարի սկզբներին) քանդվել է (Դիվան, Ա, 63):

44. ՄԱՏՈՒՌ - Կառուցվել է Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու հյուսիսային պատին կից: Հտ.:

45. (90) ԲԵԽԵՆՑ ՎԱՆՔ («ավերակներ», Օրբ.) - Կառույցի ավերակները Բեխենց վանք է կոչում Թ. Թորամանյանը, թեև տեղում հավանորեն արձանագրություններ չեն եղել: Ըստ Գրիգոր Լուսավորչի («Տիգրան Հոնենցի») եկեղեցու արձանագրության՝ վանքը ժԳ դարի սկզբներին նորոգել է Տիգրան Հոնենցը (Դիվան, Ա, 63): Եղել է գրչության կենտրոն (Մաթևոսյան, 1984, 125):

46. (92) «ԿՈՒՍԱՆԱՑ ՎԱՆՔ» ՎԱՆՔ - Դատելով ճարտարապետությունից՝ ժԳ դարի կառույց է (Շինարարությունը վերագրվում է Տիգրան Հոնենցին), ունի գավիթ (նկ. 12): Հտ.:

47. (35) ԵԿԵՂԵՑԻ («ավերակներ (եկեղեցու»), Օրբ.):

48. (16) ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՆ («Գրիգոր գորենիկի բլուր», Օրբ.) - Տեղում մատուռ-տապանատուն լինելու մասին վկայում է Ն. Մառը (Մառ, 1934, 65):

49. (15) Ա. ԳՐԻԳՈՐ («ԳԱԳԿԱՇԵՆ») ԵԿԵՂԵՑԻ - Կառուցել է Գագիկ Ա Բագրատունի թագավորը՝ ըստ Զվարթնոցի ճարտարապետական ձևի: Որոշ աղբյուրների համաձայն՝ շինարարությունն ավարտվել է 1001 թ.: Յտ.:

50. (11) «ՎԻՄԱՓՈՐ» ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Ծաղկոցաձորի ափին՝ ձորեզրից դուրս ցցված ժայռի զանգվածի մեջ: Եկեղեցին թեև ամբողջովին ժայռափոր է, բայց գտնվում է քաղաքի մյուս կառույցների բարձրության վրա: Մուտքից հյուսիս պահպանվել է 1291 թ. արձանագրություն (Դիվան, Ա, 68):

51. (10) ԻԳԱՉՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ («գալարաններով եկեղեցի», Օրբ.) - Գտնվում է Սմբատաշեն պարսպի մոտ, ըստ Թ. Թորամանյանի՝ նախաբագրատունյան շրջանի կառույց է (Թորամանյան, 1942, 323):

52. (20) ԵԿԵՂԵՑԻ («մեծ տաճարի ավերակներ», Օրբ.) - Հնարավոր է, որ այս կառույցն է Անիի՝ Մարմաշենի և Հռոմոսի մի քանի արձանագրություններում հիշվող Ա. Ստեփանոս եկեղեցին, որը (ըստ Հռոմոսի արձանագրության) գտնվել է քաղաքի՝ Կարսի դարպասի մոտ:

53. (24) Ա. ԳՐԻԳՈՐ («ԽԱՉՈՒՏԻ») ԵԿԵՂԵՑԻ («Բախտաղեկի որմնանկարազարդ եկեղեցի», Օրբ.) - Ենթադրվում է, որ ժԱ դարի կառույց է, որը նորոգվել ու որմնանկարազարդվել է ԺԳ դարում (նկ. 14,15): Արձանագրություններից մեկում պահպանվել է Շահեր վարպետի (ճարտարապետի) անունը, որը սակայն հիշվում է որպես նվիրատու (Դիվան, Ա, 60-61), Յտ.:

54. (26) «ՎՐԱՑԱԿԱՆ» ԵԿԵՂԵՑԻ - Հավանորեն ժԱ դարի շինություն է, որը ԺԳ դարում անցել է Անիի քաղկեդոնական համայնքին: 1218 թ. նրա պատին ընդարձակ վրացերեն արձանագրություն է թողել վրաց Ետիփան կաթողիկոսը (նկ. 11): Յտ.:

55. (37) «ՉՈՐՍ ՍՈՒՅԹԵՐՈՎ» ԵԿԵՂԵՑԻ («նույթերով շինություն», Օրբ.) - Շատ վաղ ծագում ունեցող (նախաքրիստոնեական) կառույց է եղել, որի սկզբնական նշանակությունը պեղումների ժամանակ չի պարզվել, սակայն ինչպես Ն. Մառն է նշում, այն «վերածված է եղել եկեղեցու» (Մառ, 1934, 53):

56. (33) ԵԿԵՂԵՑԻ («եկեղեցու ավերակներ», Օրբ.):

57. (34) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ», Օրբ.):

58. (40) «ԿԱՐՄԻՐ» ԵԿԵՂԵՑԻ - Արձանագրություն չունի, բայց ըստ ճարտարապետական առանձնահատկությունների ժԱ դարի կառույց է: Եկեղեցին հանգամանորեն ուսումնասիրած Ն. Տոկարսկին այն կոչում է «եզակի հուշարձան» (Տոկարսկի, 1973, 5-21): Պեղումների շրջանում պայմանականորեն «Կարմիր» եկեղեցի է կոչվել ըստ օգտագործված քարի գույնի:

59. (47) ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Սմբատաշեն պարսպի կենտրոնական մասից ոչ հեռու:

### ՍՄԲԱՏԱՇԵՆ ՊԱՐԻՍՊԵՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏԵՎՈՂ ՏԱՐԱԾՔ

60. ՄԱՏՈՒՌ - Հայտնաբերել է Միքայել վարդապետը 1908 թ.: Կից եղել են գերեզմաններ, որոնցից մեկի վրա կա արձանագրություն. «Այս է հանգիստ Ամիր Սարգսին» (արձանագրությունը դուրս է մնացել Անիի վիմագրերի ժողովածուից)<sup>45</sup>:

61 (88) ՄԱՏՈՒՌ - Կառուցված է անմիջապես Ախուրյանի գետափին, ունի 1304 և 1328 թթ. արձանագրության հատվածներ, որոնք դուրս են մնացել Անիի վիմագրերի ժողովածուից<sup>46</sup>:

62. ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ - Գտնվում է Ախուրյանի հոսանքն ի վեր, քաղաքի պարիսպներից շուրջ 600 մ. հյուսիս-արևելք՝ փոքրիկ ձորի ափին: Համաձայն շինարարական արձանագրության՝ կառուցվել է 985 թ.: 1271-ին վանքը գնել, նորոգել ու նրան նվիրատվություններ են կատարել Ուքան Քարիմադինը, Պապքան Վախրադինը և Դապտա Խաթունը՝ այս մասին թողնելով ուշագրավ արձանագրություն (Օրբելի, 1963, 474, Թորամանյան, 1948, 161, Բասմաջյան, 1931, 86-87, Դիփշիձե, 1972, 153):

63. (8) ԵԿԵՂԵՑԻ («Եկեղեցու ավերակներ», Օրբ.) - Գտնվում է պարիսպներից մինչև «Հովվի» եկեղեցի ընկած հատվածում (Թորամանյան, 1948, 178):

64. (1) «ՀՈՎՎԻ» ԵԿԵՂԵՑԻ - Կառուցումը վերագրվում է ժԱ դարին, արձանագրություններ չունի, անունը ծագում է ժողովրդական մի ավանդությունից:

65. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է «Հովվի» եկեղեցուց հյուսիս, կից ունեցել է գեղեցիկ մահարձան (Թորամանյան, 1942, 327):

66. (6) ԵԿԵՂԵՑԻ («փոքրիկ եկեղեցու ավերակներ», Օրբ.) - Գտնվում է Իգաձորից ոչ հեռու՝ դեպի հյուսիս:

67. (5) ՄԱՏՈՒՌ («մատուռի ավերակներ», Օրբ.) - Գտնվում է Իգաձորից հյուսիս (Թորամանյան, 1948, 180):

68. (4) ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՏՈՒՌ-ՏԱՊԱՆԱՏՈՒՆ - Երկհարկանի է, ներքևում տապանատունը, վերևում՝ մատուռը: Ունի 1330 և 1348 թթ. արձանագրություններ, որոնցից երկրորդի համաձայն՝ շինությունը կառուցվել է նահատակված Կիրակոս վարդապետի համար (Դիվան, Ա, 67):

### ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՎ ՄԱՏՈՒՌՆԵՐ<sup>47</sup>

#### Ծաղկոցաձոր

69. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Միջնաբերդի հարավային ստորոտում: Ավերվել է և ժայռաբեկորի հետ գլորվել ներքև: Պահպանվել է հյուսիսային պատը 3,45 մ., երկու որմնամույթերով:

70. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է միջնաբերդից արևմուտք, Անիի մեզ հայտնի բոլոր ժայռափոր եկեղեցիների մեծագույն մասի պես միանավ է, ունի կիսաշրջան խորան (չափերը՝ 4,95x 3, 15 մ.), աչքի է ընկնում կատարման բարձր ճշգրտությամբ: Հտ. (C. I. b. A /5, Ղիփ. 26-27):

71. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցուց ցած գտնվող տարածքում, պահպանվել է միայն հյուսիս-արևելյան մասը՝ խորանով (5x2 մ.), (C. I. b. C /70 Ղիփ., 35):

72. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Սմբատաշեն պարսպի հ. 95 բուրգի ստորոտում եղած ժայռային հրվանդանի մեջ, մասամբ ավերված է, ունի կիսաշրջան խորան (C. I. b. D /7, Ղիփ., 40):

73. ՄԱՏՈՒՌ - Ներքուստ խորանի մասում պատերը եղել են ծեփածածկ, հավանաբար նաև որմնանկարազարդ (երևացել է կարմիր ներկ), բայց մոտից չի ուսումնասիրվել, քանի որ, ըստ Ղիփշիձեի, առանց հատուկ աստիճանի այն «անմատչելի է» եղել (C. I. b. D /13, Ղիփ., 41):

74. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է «Վիմափոր» եկեղեցու (հ. 50) մոտերքում, արևմտյան մասը վնասված է (չափերը՝ մոտ. 8,90x 4,45 մ.): Հտ. (C. I. b. E /7, Ղիփ., 44):

75. ԵԿԵՂԵՑԻ - Ծաղկաձորի՝ Իգաձորից Անիձոր ընկած հատվածում: Ունեցել է ժայռափոր փոքր գավիթ, ներքուստ պատերին



կան ծեփի հետքեր (չափերը՝ 2,50x 2,80 մ.)- Հտ. ( C. I. b. F/13, Ղիփ., 48):

76. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է նախորդ եկեղեցուց հյուսիս, ունի կիսաշրջան խորան: Ղիփշիծեն այն կոչում է «գեղեցիկ» մատուռ (չափերը՝ 4,50x 2,50 մ.): Հտ. ( C. I. b. F/20, Ղիփ., 49):

77. ՄԱՏՈՒՌ - Մոտ է նախորդ եկեղեցուն, խորանն ուղղանկյունաձև է (չափերը՝ 3x2 մ.), ծածկը բավական բարձր է՝ 3,50 մ. (C. I. b. F/36, Ղիփ., 51):

78. ԵԿԵՂԵՑԻ - Նախորդ մատուռների շարքում: Ունեցել է գավիթ, որն ավերվել է (չափերը՝ 3,5x 2 մ.)- (C. I. b. F/42, Ղիփ., 51):

79. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդին շատ մոտ, պահպանվել է ծեփածածկ խորանը (C. I. b. F/49, Ղիփ., 52):

80. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է արևմտյան կողմից Ծաղկոցածորին միացող Անիծորի այրերից մեկում, Կիրակոս վարդապետի մատուռ-տապանատնից (հ.68) շուրջ 300 մ. հյուսիս: Պատերը եղել են ծեփված, առանց որմնանկարի (չափերը՝ 4,50x 2,50 մ.): Հտ. (C. I. b. G/5, Ղիփ., 53-54):

81. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդ մատուռի մերձակայքում, եռանավ է, յուրաքանչյուր նավ ունի համապատասխան խորան: Պատերը ծեփածածկ են, մասամբ ավերված (C. I. b. G/9, Ղիփ., 54-55):

82. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է նախորդների մոտ, կիսավեր: Հտ. (C. I. b. G/38, Ղիփ., 57):

83. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Ծաղկոցածորի և Անիծորի միացման շրջանում, Անի գյուղի մոտ: Ունի կիսաշրջան խորան, պատերը ծեփածածկ են ( C. p. b. H/7, Ղիփ., 60):

84. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդ մատուռի մոտերքում, խորանն ուղղանկյունաձև է, ունեցել է փոքր գավիթ: Հտ. (C. p. b. H/14, Ղիփ., 60-61):

85. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդ երկու հուշարձաններից ոչ հեռու, խորանը՝ կիսաշրջան է, ունի երկու գավիթ՝ արևմուտքից և հարավից (C. p. b. H/29, Ղիփ., 62):

86. ՄԱՏՈՒՌ - Խորանը կիսաշրջանաձև (C. p. b. J/18, Ղիփ., 71):

87. ՄԱՏՈՒՌ - Գտնվում է Ծաղկոցածորի աջ ափին, Իգածորի միախառնման վայրի հանդիպակաց մասում: Խորանն ուղղանկյունաձև է, կից ունի երկու տապանատուն: Հտ. (C. p. b. L/13գ, Ղիփ., 85-86):

88. **ՏԱՊԱՆԱՏՈՒՆ (ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑԻ ՏՈՂՄԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՏՈՒՆԸ)** - Գտնվում է Ծաղկոցածորի աջ ափին, Ա. Գրիգոր (Գազկաշեն) եկեղեցու հանդիպակաց մասում, բաղկացած է մի քանի բաժանմունքից, որոնցից մեկում բավականին լավ են պահպանված որմնանկարները (Բարեխոսություն, Գաբրիել և Մկրտիչ հրեշտակապետներ), ունի ներկագիր արձանագրություններ (Ղիվան, Ա, 69): Հտ. (C. p. b. M/10, Ղիփ., 89, 94, 175, լսնկ. 37):

89. **ԵԿԵՂԵՑԻ** - Գտնվում է Տիգրան Հոնենցի տապանատան և նրան կից եղած մեկ այլ ընդարձակ տապանատան մոտ, հատակագծով մոտենում է վերգետնյա խաչածև փոքր եկեղեցիների տիպին: Ունի գեղեցիկ խոյակավոր որմնասյուներ, պատերը ծեփված են և սպիտակեցված: Հտ. (C. p. b. M/17, Ղիփ., 97, 98, 176):

90. **ՎԱՆՔ** - Գտնվում է Ծաղկածորի աջ ափին, Բազմայրի վտակի միախառնման վայրում, ընդգրկված է քարայրների բավական մեծ համալիրում: Բուն եկեղեցու չափերն են 5,25x3,50 մ., հարավային մասում ունի փոքր ավանդատուն (Բ), իսկ հյուսիսում՝ բավական մեծ գավիթ (Գ)՝ 13,80 x 8,50 մ.: Պատերին կան փորագրված խաչեր և գրադարակի խորշեր: Հտ. (C. p. b. M/4, Ղիփ., 21, 100-105):

91. **ԵԿԵՂԵՑԻ ՏԱՊԱՆԱՏՆԵՐՈՎ** - Գտնվում է Ծաղկոցածորի աջ ափին՝ միջնաբերդի հանդիպակաց մասում, ունի երկու խորան՝ արևելքից (ավելի մեծ) և արևմուտքից: Մուտքից վեր պահպանվել են կարմիր ներկով պատկերի հետքեր, պատերը ծեփածածկ են (չափերը՝ 6,15 x 2,45 մ.): Եկեղեցու հարավային կողմում կան երեք տապանատներ: Հտ. (C. p. b. O/5, Ղիփ. 111-112):

92. **ԵԿԵՂԵՑԻ** - Գտնվում է նախորդի մոտ, ունի կիսաշրջանաձև խորան 6,35 x 2,50 մ.: Հտ. (C. p. b. O/6, Ղիփ. 112-113):

93. **ՎԱՆՔ** - Գտնվում է Ծաղկածորի աջ ափին, միջնաբերդի դիմաց՝ ընդգրկելով բավական ընդարձակ ժայռափոր համալիր, որի արևելյան կողմում կիսավեր եկեղեցին է: Հարավային կողմում եղած կամարակապ առաստաղով սրահը հավանորեն ծառայել է որպես գավիթ: Եկեղեցուն և համալիրի կենտրոնական մեծ սրահում կան ծեփի հետքեր: Ըստ Ղիփշիծեի՝ մի քանի ժայռափոր սենյակներ (b,c,d,f) վանքի խցեր են, իսկ կենտրոնական մեծ սրահը (a)՝ հավանաբար սեղանատուն: Ուսումնասիրող-

ների կարծիքով վանական համալիրը եղել է երկհարկ, բայց ստորին մասն ավերվել է: Յտ. (C. p. b. O/15, Ղիփ., 118-120):

#### **Իգաձոր**

94. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Իգաձորի աջ ափին (Անիի Պարոնի պալատից հյուսիս): Ունի կիսաշրջանաձև խորան և, չնայած որ չափերով փոքր է (4,45 x 5, 15 մ.), բայց աջ և ձախ կողմերից ունի ուղղանկյուն ելուստներ, որոնցում տեղավորված են մկրտության ավազաններ: Յտ. (I. p. b. A/1, Ղիփ., 121-122):

95. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդից քսան քայլ դեպի հարավ և հատակագծով մոտ է նրան, միայն թե մկրտության ավազանով ելուստ ունի հյուսիսային կողմից: Դռան կողքերին կան փոքր փորագիր խաչեր, եղել է նաև 14 տողից կազմված խոշոր տառերով արձանագրություն, որն անընթեռնելի է եղել (չափերը՝ 4,32 x 4,71 մ.): Յտ. (I. p. b. A/2, Ղիփ., 123-126):

96. ՄԱՏՈՒՌ - Ունի կիսաշրջանաձև խորան (I. p. b. A/9, Ղիփ., 126):

97. ԵԿԵՂԵՑԻ - Մասամբ ավերված է, կիսաշրջանաձև խորանով (չափերը՝ 4,25 x 2,35 մ.), ունի երկու մուտք՝ հյուսիսից և հարավից: Արևմտյան կողմում կա մի մեծ սրահ՝ 8,90 x 3,35 մ., որը հավանորեն ծառայել է որպես գավիթ: Յտ. (I. p. b. A/33, Ղիփ., 127-128):

#### **Բազմայրի ձոր**

98. ԵԿԵՂԵՑԻ - Խորանը կիսաշրջանաձև է, ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից, պատերը՝ ծեփածածկ (չափերը՝ 4,50 x 2,36 մ.) (B. I. b. B/6, Ղիփ., 133):

99. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է նախորդի հարավային կողմում և չափերով մոտ կրկնակի անգամ գերազանցում է նրան: Ունի կիսաշրջանաձև խորան (B. I. b. B/7, Ղիփ., 133-134):

100. ԵԿԵՂԵՑԻ - Մոտ է նախորդ երկուսին, խորանը՝ կիսաշրջանաձև, հարավային կողմից ունի տապանատուն (չափերը՝ 8,20 x 4,50 մ.): Յտ. (B. I. b. C/12, Ղիփ., 134-135):

101. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է ժայռափոր համալիրի արևելյան կողմում, խորանն անկյունավոր է, ունի մուտքեր արևմուտքից և հարավից: Յտ. (B. I. b. C/22, Ղիփ., 136):

#### **Ախուրյանի կիրճ**

102. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Ախուրյանի և Անի գետակի միախառնման վայրից արևելք ընկած ձորեզերքի այրերից մեկում

(չափերը՝ 3,40 x 2,15 մ.), ունի փոքր գավիթ (X. p. b. H/30, Ղիփ., 158):

#### **Գայլիձոր**

103. ԵՐԿԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Գայլիձորի աջ ափին, Սմբատաշեն պարսպից ոչ շատ հեռու: Խորաններ ունի արևելյան և արևմտյան կողմերում: Առաջինի բուրակն ունի վեց կիսաշրջան խորշեր (ինչպիսիք կան Անիի Մայր տաճարի ավագ խորանում) (չափերը՝ 7,10 x 4,10 մ.): Յտ. (G.p. b. A/20, Ղիփ., 161-162): Այս հուշարձանը կառուցվածքի ինքնատիպության շնորհիվ արժանացել է հետազոտողների առանձնահատուկ ուշադրությանը (Թորամանյան, 1948, 18, Ջարյան, 1992, 122):

104. ԵԿԵՂԵՑԻ - Գտնվում է Գայլիձորի ձախ ափին, կիսավեր: Խորանի պատերին կան ծեփի հետքեր (G. p. b. B/22, Ղիփ., 165):

### **ԱՆԻԻ՝ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՅԻՇԱՏԱԿՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ<sup>48</sup>**

**Ա.** «ԼՈՒՄԱՎՈՐՉԱՅԻՄՆ» ԵԿԵՂԵՑԻ - Գտնվել է Ներքին բերդում (Աղջկաբերդ), հիմնադրությունը վերագրվել է Ս. Գրիգոր Լուսավորչին: Այս մասին է վկայում ԺԳ դարի սկզբին նույն տարածքում եկեղեցի կառուցած Ջաքարե ամիրսպասալարի թողած արձանագրությունը, ուր ասվում է, թե նոր եկեղեցին կառուցվել է «ի մենաստանիս մերձ առ էկեղեցե[աւն] շինեալ ի Լուսաւորչէն մերմէ Սրբոյն Գրիգ[որի]» (Դիվան, Ա, 58):

**Բ.** ՓՈՔՐ ԿԱԹՈՂԻԿԵ - Ըստ Ասողիկի Պատմության ձեռագրերից մեկում արված հավելումի՝ այս եկեղեցին կառուցել է Աբաս Բագրատունին (928-953). «Սա շինէ եւ զՓոքր Կաթողիկէն Անւոյ...» (Ասողիկ, 1885, 172):

**Գ.** Ս. ՅՈՎԻՏԱՆԵՍ - Այս անվամբ է կոչվում Անիի թագավորական տան եկեղեցին, բնագրում՝ վանքը, Աշոտ Գ Ողորմածի (953-977) դստեր՝ Յոփսիմեի՝ Ս. Նախավկայի (Մաղարդա) վանքին տրված կտակագրում (Յովսեփյան, 1951, 142)<sup>49</sup>:

**Դ.** Ս. ԱՏԵՓԱՆՈՍ - Եկեղեցին հիշատակվում է Մարմաշենի 1225 թ., Անիի Ս. Առաքելոցի 1239, 1288 թթ. և Յոռնոսի մի անթվական արձանագրություններում: Ըստ վերջին վկայության՝ այն գտնվել է քաղաքի Կարսի դարպասի մոտ: Եկեղեցին

ենթադրաբար կարելի է նույնացնել Հ. Օրբելու ուղեցույցի 20 թվահամարով նշված կառույցի հետ, որն անվանված է «մեծ տաճարի ավերակներ» (մեր ցուցակում՝ թիվ 52)<sup>50</sup>:

**Ե-Ձ.** Ս. ԳՐԻԳՈՐ ԵՎ Ս. ՍԱՐԳԻՍ - Անիի այս երկու եկեղեցիները հիշվում են Թերան Անեցու 1246թ. հիշատակարանում, ուր նա հայտնում է, որ մի Տոնական է նվիրել Ս. Գրիգորին, բայց քանի որ մատյանը ստացել է իր բարեկամ Վարթերի օգնությամբ, պատվիրում է, որպեսզի վերջինիս համար Ս. Սարգիս եկեղեցուն մատուցվելիք պատարագի օրը ձեռագիրը տարվի այդ եկեղեցին (ԺԳ, 1984, 237): Ս. Գրիգոր և Ս. Սարգիս անուններով մի քանի եկեղեցիներ կան Անիում և օժանդակ փաստերի բացակայության պատճառով անհնար է ասել, թե հատկապես որ եկեղեցիներն են նշված հիշատակարանում, կամ արդյո՞ք դրանք մեզ հայտնի եկեղեցիներն են:

**Է.** Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ - Հիշատակվում է քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցու 1050 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ, ուր Վարդի որդի Շահիկը հայտնում է, թե իրենց կառուցած տունը բակով հանդերձ նվիրել է «ի Սուրբ Փրկիչս եւ ի Սուրբ Յովհաննէսն ...» (Դիվան, Ա, 43): Հավանական է, որ վերջինը Ս. Փրկչի մոտ, նրա ենթակայությամբ գտնվող փոքր եկեղեցի կամ մատուռ էր:

**Ը.** Ս. ՍԱՐԳԻՍ (ԳՈԳՈՆՑ) - Եկեղեցին հիշվում է Խծկոնքում Շեխենց Խաչուտի և նրա կին Ավագ տիկնոջ 1221 թ. նվիրատվական արձանագրության մեջ, ուր նրանք հայտնում են, որ վանքին են նվիրել իրենց հայրենի տները՝ «որ ընդդէմ Գոգոնց Սուրբ Սարգսի է», իսկ արձանագրության վերջում ճշգրտում են՝ «տներն ի մայրաքաղաքին է՝ ի յԱնի՝ մաւտ ի Տիգրանանց՝ ի դուռն» (Սարգիսյան, 1864, 210): Հավանորեն պատկանել է «Գոգոնց» տոհմին: Արձանագրությունից դատելով՝ եկեղեցին գտնվել է քաղաքի արևմտյան անկյունամասում (որը մեծ մասամբ Տիգրան Հոնենցին էր պատկանում) և եղել է պարսպամերձ, թերևս Գայլիձորի դռան մոտ:

**Թ.** Ս. ՀՈՒՓՍԻՄՅԱՆՑ ՎԿԱՅԱՐԱՆ - Ըստ Վարդան Արևելցու՝ կառուցել է Սարգիս Ա կաթողիկոսը. «Շինեաց վկայարան Սրբոց Հռիփսիմեանց առընթեր Կաթողիկէին Անույ» (Վարդան, 1861, 123):

**Ժ.** «ԲԱՀԱՆՆԵՆՑ» ԵԿԵՂԵՑԻ - Այսպիսի լրացուցիչ անուն է ունեցել Անիի եկեղեցիներից մեկը՝ ըստ Բագնայրի նվիրատվական մի արձանագրության. «Ես Առիժս ետու զիմ տուն ի Սուրբ Ուխտիս,

որ ընդդեմ **Քահանեանց եկեղեցոյն...**» (Սարգիսյան, 1884, 182):  
Հայտնի է, որ Անիում քիչ չէին քահանայական տոհմերը,  
հնարավոր է դրանցից մեկի տնօրինած եկեղեցին «Քահանեանց» է  
կոչվել: Չի բացառվում նաև, որ այս անունն առաջացել է Քահա-  
նա անձնանունից, որպիսին հանդիպում ենք Ներքին բերդի Ս.  
Հովհաննեսի արձանագրություններից մեկում (Դիվան, Ա, 70):

**ԺԱ.** Ս. ՆՇԱՆ - Այս անվամբ անիական եկեղեցի հիշատակվում է  
միջնադարյան հայրեններից մեկում՝ «...Քո ձագն ի Անի տեսայ, ի  
Անի ու Սուրբ Նշանի ...» (ՄՄ, թիվ 627, 59բ, Մնացականյան, 1954, 65,  
ՀԺՊ, 1976, 301):

**ԺԲ.** Ս. ԳԵՎՈՐԳ - Անիի այս եկեղեցուն 1379 թ. մի Ավետարան է  
ընդօրինակել Թորոս գրիչը, որի հիշատակարանում կարդում ենք.  
«Գրեցաւ սուրբ Աւետարանս... ի քաղաքիս յԱնի, ընդ հովանեաւ  
Սրբոյն Գեորգայ զորավարի ...» (ՄՄ, թիվ 4515, 106):

**ԺԳ.** Ս. ՄԻՆԱՍ - Ն. Մառի ծոցատետրերից մեկում պահպանվել  
է այս եկեղեցու համառոտ նկարագրությունը, ըստ որի այն  
ներքուստ ունեցել է կիսով չափ սվաղով ծածկված 1013 թ. հայե-  
րեն արձանագրություն և ԺԳ դարի որմնանկարներ՝ վրացերեն մա-  
կագրություններով: Կարծում ենք, որ եկեղեցին, առանց անվան,  
նշված է Անիի հատակագծում, բայց թե որն է և ինչու է Ն. Մառն  
այն Ս. Մինաս կոչում, անհայտ է (Սուրադյան, 1977, 61-62, ծան. 91):

**ԺԴ.** Ս. ԿԱՐԱՊԵՏ - Անիում հայտնաբերված մի գրակալի  
նվիրատվական արձանագրությունը վկայում է, որ այն «Արուօի  
որդի տիրկէր Աւետիքի» հիշատակն է՝ տրված «Սբ. Կարապետ»  
եկեղեցուն: Գրակալը հավանորեն ԺԳ դարի 70-ական  
թվականների գործ է, քանի որ շատ նման է 1272 թ. պարոն  
Գրիգորի համար պատրաստված գրակալին (այս երկու աշխա-  
տանքն էլ վերագրվում են հյուսն Ավետիքին (Անի, առարկ., 1982,  
150-151): Անիում Ս. Կարապետ անվամբ եկեղեցի այլ աղբյուր-  
ներից հայտնի չէ (հնարավոր է, որ նաև այդպես է կոչվել Հովհան-  
նես Մկրտչին (Կարապետ) նվիրված Ս. Հովհաննես անունով  
եկեղեցիներից մեկը (ինչպես որ այդ տեսնում ենք Հռոմոսի Ս.  
Հովհաննեսի պարագայում):

**ԺԵ.** «ԱՆԱՊԱՏ» - Որ Անիի վանքերից մեկը նաև այս անունով է  
կոչվել երևում է Գրիգոր Լուսավորչի (Տիգրան Հոնենց) եկեղեցու  
մի արձանագրությունից, ուր հիշվում է ոմն տեր Ներսես՝ որպես  
«անապատին իպիսկոպոս» (Դիվան, Ա, 64): Իսկ Բեխենց վանքի

ծեռագրերից մեկի՝ ԺԳ դարի սկզբների հիշատակարանում նշվում է «զմիակեցն զՍիմեոն որ բնակէր **յանապատի ...**» (ՄՄ, թիվ 5554, 7ա):

Անիի եկեղեցիների սույն թվարկումն իրավամբ կարելի է լրացնել նաև Հռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի բազմաթիվ եկեղեցիների նշումով, քանի որ այդ վանքերը եկեղեցական վարչատարածքային և հոգևոր-մշակութային սերտ կապերի մեջ էին Անիի հետ և ըստ որոշ հետազոտողների՝ հանդիսանում էին քաղաքի հեռավոր արվարձանները (Թորամանյան, 1942, 328, տես նաև 1948, 180-181, Մանանդյան, 1985, 325-328, Կ.Մ., 1986, 51-55): Անիի մոտերքում պետք է գտնվեր նաև Խոռաս կրտսերի 1266թ. արձանագրության մեջ հիշատակվող **Ջրծորիկ** վանքը (Սարգիսյան, 1864, 189): Սակայն սահմանափակվենք ներկայացված ցուցակով, մանավանդ, որ քարտեզ-ուղեցույցի ընդգրկման հնարավորություններն էլ այդ են թելադրում:

#### ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՐՑԸ

Մենք արդեն ծանոթացանք Անիում մինչև մեր հարյուրամյակը կանգուն կամ ավերակ վիճակում պահպանված և կամ տարբեր սկզբնաղբյուրներում հիշատակված եկեղեցիներին՝ համոզվելով, որ քաղաքում դրանք իրոք շատ մեծ թիվ են կազմել<sup>51</sup>: Սակայն, այնուամենայնիվ, **քանի՞ եկեղեցի է եղել Անիում:**

Այս հարցը մեզ և այլ ուսումնասիրողների գուցե առանձնապես չհետաքրքրեր, եթե թե՛ հայ և թե՛ օտար միջնադարյան մի շարք հեղինակների մոտ պահպանված չլինեին քաղաքում **հազար, կամ հազար ու մեկ եկեղեցիների** գոյության մասին եղած վկայություններ: Ուսումնասիրողներից մի քանիսն այդօրինակ վկայությունները համարել են իրականության արտացոլում, մյուսներն ընդունել են որպես ճշմարտությունից հեռու ակնհայտ չափազանցություն, և վերջապես հետազոտողներից շատերն էլ եկել են այն եզրակացության, որ «հազար ու մեկ եկեղեցի» ասվածը Անիի եկեղեցիների բազմաքանակությունն արտահայտելու միջոց է եղել և կապ չունի եկեղեցիների իրական թվի հետ (այս կարծիքն առավել տարածվածն ու ընդունվածն է)<sup>52</sup>: Այնուհանդերձ, հետազոտողներից ոչ ոք ցայժմ չի զբաղվել Անիի եկեղեցիների թվի մասին պահպանված աղբյուրագիտական տեղեկությունների

համակարգմամբ, առկա նյութերի համակողմանի քննությամբ, որն անհրաժեշտ է հարցին հիմնավորված պատասխան տալու համար: Այս առումով, թերևս, ամենահետևողական հեղինակը Ղ. Ալիշանն է, սակայն, ցավոք, նրան մատչելի աղբյուրներն ու օժանդակ տվյալները սահմանափակ են եղել, որի պատճառով միանշանակ եզրակացության չի եկել (Ալիշան, 1881, 90-91):

Այժմ մեկ առ մեկ ներկայացնենք այն վկայությունները, ուր նշվում է Անիի եկեղեցիների թիվը, ապա փորձենք դրանց և հարակից տեղեկությունների քննությամբ որոշ պարզություն մտցնել Անիի պատմության այս հանելուկային խնդրի մեջ:

### ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՅԱՅԵՑԻՆ (ԺԲ դարի առաջին կես), խոսելով Ալփաւլանի զորքերի կողմից 1064 թ. Անիի պաշարման մասին, գրում է, թե քաղաքի բնակչությունը փրկության հույսով աղոթում էր առ Աստված, և այդ օրերին Անիում հազար ու մեկ եկեղեցի պատարագ էին մատուցում՝ **«...այնմ աւուր հազար ու մեկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի»** (Ուռհայեցի, 1991, 160):

2. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻՆ (ԺԳ դ.), պատմելով 1236 թ. Չարմաղանի կողմից Անիի պաշարման մասին, նշում է, որ քաղաքում բազում եկեղեցիներ կային և մինչև իսկ խոսքի մեջ երդվելիս այսպես էին ասում՝ **«Անիի հազար ու մեկ եկեղեցին վկա»**, **«Եւ եկեղեցի բազում կայր ի մնա (Անիում, Կ. Ս.), մինչ ի կարգ խօսից երդման այսպէս երդնուին՝ «Անույ հազար ու մի եկեղեցին»** (Գանձակեցի, 1961, 258):

3. ԻԶԶ ԱԼ ԴԻՆ ԻԲՆ ԱԼ ԱՍԻՐ (1160-1233) արաբ պատմիչը Ալփասլանի կողմից Անիի գրավման կապակցությամբ գրում է. **«Սա մի շեն ու բազմամարդ քաղաք էր, ուր կար հինգ հարյուրից ավելի եկեղեցի»** (Իբն ալ Ասիր, 1981, 220):

4. ԱՆԱՆՈՒՆ ՎՐԱՅ ՊԱՏՄԻՉԸ (ԺԳ դարի սկիզբ) «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» երկում, խոսելով 1161 թ. Վրաց Գեորգի թագավորի կողմից Անիի գրավման մասին, գրում է. **«ուղղվեց դեպի մեծ քաղաք Անիսին, որն անցյալում մի ժամանակ հույների թագավորների տունն ու նստոցն էր և որտեղ մինչև այժմ էլ հազար ու մի եկեղեցի կա»** (Թորոսյան, 1992, 334):



5. ՍԻԲԹ ԻԲՆ ԱԼ - ՋԱՎԶԻ արաբ պատմագիրը (ԺԳ դար), Անիի 1064 թ. գրավմանն անդրադառնալով և վկայակոչելով դեպքերին պակասատես Ալ-Քամիլ Աբուլ-Ֆավարիզին, գրում է. «Ասում են, որ քաղաքում կա ... **հազար եկեղեցի և վանք**» (ավելացնում է նաև, որ Անին ուներ 700 հազար տուն, իսկ սելջուկները գերեցին 50 հազար մարդ) (Բուռնագյան, 1980, 108-109):

6. ԱԲՈՒԼ ՖԱՐԱՃ - ԲԱՐ ՅԵՐԲԵՈՍ ասորի պատմիչը (ԺԳ դար) գրում է, թե **Անիում 1000 եկեղեցի կար** (Ալիշան, 1881, 90):

7. ՎԻՆՍԵՆՏ ԴԸ ԲՈՎԵ (1190-1264) դոմինիկյան միաբանն իր կազմած հանրագիտարանում Անիի մոնոլոլական զավթման կապակցությամբ գրում է. «**Հայաստանում կա մի հոյակապ քաղաք Անի անունով, ուր կա հազար եկեղեցի և 100 000 ընտանիք է բնակվում**» (Հակոբյան, 1934, 27, ծան. 1, Ալիշան, 1881, 90):

8. ՌԻԼՅԱՄ ՌՈՒԲՐՈՒՔ ֆրանցիսկյան միաբանը 1255 թ. Անիում գտնվելով իր ուղեգրության մեջ գրում է. «Այստեղ կան **հայերի հազար եկեղեցիներ և արաբական երկու մզկիթներ**»<sup>53</sup>:

9. ՄԱՆՏՎԻԼ (Ժան դը Մանդևիլ) անգլիացի ճանապարհորդը (ԺԴ դար) ֆրանցիսկյան միաբանությունից, նույնպես **հազար եկեղեցի է** հիշատակում Անիում (Ալիշան, 1881, 90):

10. ՂՐԻՄԱՅԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ, որ գրել են տվել Աբրահամ Պահլավունու զավակներ Տրդատն ու Աննան, 1690 թ. մի Հայսմավուրքում (ՄՍ., թիվ 7442) վկայում է. «Մեծ թագաւորանիստ քաղաքն մեր Անի իշխանաց եւ ազնուականաց էր բնակութիւն... նաեւ ի նմա **հազար ու մէկ եկեղեցիս...**» (ՄՍ, թիվ 7442, 280-283, Բժշկյան, 1830, 335-342, Միքայելյան, 1964, 26, 71):

11. «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ՅԱՆԻՈՅ» երկի անանուն կազմողը, նշելով սելջուկների կողմից քաղաքի գրավման մասին, գրում է. «Եւ աներեցաւ քաղաքն բազմաժողով, որ **Ռ (1000) եւ Ա (1) եկեղեցի** կայր ի նմա» (Մխիթար, 1983, 108)<sup>54</sup>:

12. ԱԲՐԱՅԱՍ ԿՐԵՏԱՑԻՆ մինչև կաթողիկոս դառնալը, ԺԸ դարի սկզբներին գրած «Անի քաղաքի պատմությունը» կրոնաբարոյախոսական երկում նշելով անեցիների մեղսասիրության մասին, ավելացնում է, որ քաղաքացիները մեղք էին գործում՝ «...կարծելով թէ Ռ (1000) եւ Ա(1) եկեղեցաւն Աստուած ոչ բարկանայ մեզ եւ ոչ յիշէ զմեղս մեր... **վասն զի Ռ(1000) եւ Ա(1) եկեղեցի ունէին** եւ ամեն եկեղեցւոյ Ա (1) ձիթհանք եւ Ա (1) այգի յիշատակ եղեալ էին առ ի շէն մնալն եկեղեցեացն» (Կրետացի, 1870, 104):

Ինչպես տեսնում ենք, հարուստ է վկայությունների ոչ միայն ժամանակագրությունը, այլև «աշխարհագրությունը»: Անիի եկեղեցիների առասպելական թվացող թվի մասին հայտնում են ոչ միայն հայ, այլև արաբ, ասորի, վրացի, եվրոպացի հեղինակներ: Ընդհանուր առմամբ մեզ հաջողվել է գտնել տասներկու վկայություն: Դրանցից վերջին չորսը (10, 11, 12) ուշ միջնադարից են և վաղ շրջանի հեղինակների հայտնած տեղեկությունների արձագանքը հանդիսանալով միաժամանակ ավանդապատումի ոճ ունեն: Դրանցում պետք է տեսնել Անիի գաղթականության սերունդների մեջ պահպանված ավանդության, բայց նաև իրական փաստեր ունեցող շերտեր<sup>55</sup>: Սակայն այդ չորս վկայությունները մեր քննած խնդրի տեսանկյունից առանձնապես կարևորություն չեն ներկայացնում:

ԺԲ-ԺԴ դարերի աղբյուրներում մեծ մասամբ խոսվում է հազար եկեղեցիների (4, 6, 7, 8, 9) կամ հազար ու մեկ եկեղեցու մասին (1, 2, 5): Բացառություն է կազմում Իբն ալ Ասիրը (3), ըստ որի Անիում «կար հինգ հարյուրից ավելի եկեղեցի»: Մեր կարծիքով արաբ հեղինակն այստեղ պարզապես «կիսել է» 1000 թիվը, որ գուցե նրան չափազանցություն է թվացել<sup>56</sup>:

Այսպիսով, ձեռքի տակ ունենք բավական թվով հիշատակություններ, որոնցում խոսվում է Անիի 1000 եկեղեցիների մասին, և դա չի կարող պատահականություն լինել: Ինչ խոսք, չենք կարծում, որ հիշյալ հեղինակներից որևէ մեկն անձամբ հաշվել է քաղաքի եկեղեցիները, բայց ակնհայտ է, որ **ժամանակին Անին վայելել է հազար եկեղեցի ունեցող քաղաքի հռչակ**, և այդ թիվը կասկած չի հարուցել: Համենայն դեպս մեր վկայակոչած հիշատակությունների հեղինակներն այդ տեղեկության նկատմամբ թերահավատության ակնարկներ չեն անում:

Բարեբախտաբար մեր տրամադրության տակ են ոչ միայն հիշյալ վկայությունները, այլև մի ամբողջ շարք օժանդակ փաստեր ու տեղեկություններ, որոնք էլ, մեր կարծիքով, հնարավորություն են ընձեռում պարզել Անիի 1000 եկեղեցիների առեղծվածը:

Նախ՝ ինչպես վերը տեսանք, քաղաքում իրոք բազմաթիվ էին եկեղեցիներն ու մատուռները, որոնք ոչ միայն առանձին կառույցների տեսք ունեին, այլև ժայռափոր էին, կամ տեղավորված պարսպաբուրգերի մեջ: Բայց անգամ այս ամենի հաշվառումով

դժվար է ստանալ տաս հարյուրյակ կազմող մի թիվ: Ուրեմն ինչու՞մն է գաղտնիքը:

Մեր կարծիքով, խնդրի լուծումը «եկեղեցի» հասկացության ժամանակին տրվող մեկնաբանության մեջ է: Բանն այն է, որ եկեղեցի ասելով հասկացել են ոչ միայն առանձին եկեղեցական կառույցները, այլև մեկ եկեղեցու ներսում գտնվող պատարագի սեղան ունեցող խորանը կամ խորանները: Այս բանը պարզորոշ երևում է Անիի Ս. Փրկիչ եկեղեցու մի քանի վիմագրերի քննությունից: Հատակագծում բոլորածև, բազմախորան այս եկեղեցին կառուցող Աբլղարիբ մարզպանը 1035 թ. շինարարական արձանագրության մեջ այն երբեմն եզակի թվով եկեղեցի է կոչում, երբեմն էլ հոգնակի թվով՝ եկեղեցիներ («եղի լուծ սպասաւորաց եկեղեցոյս ... եւ քահանա, որ մեռանի ի Սուրբ Փրկիչս Խ (40) մի կալցեն **յեկեղեցիքդ** եւ եթէ ոք ի քահանայից **յեկեղեցոյս...**») (Դիվան, Ա, 46): Իսկ դրանից կարճ ժամանակ անց՝ 1041թ. Ս. Փրկիչ եկեղեցուն նվիրատվություն կատարած Քրիստափորի արձանագրության մեջ որոշակիորեն խոսվում է չորս եկեղեցիների մասին. «Ես Քրիստափոր... **Ի Սուրբ Փրկիչս** ետու գիմ գանձագին հայրենիքիս... եւ **քահանայք Սուրբ Փրկչիտ յամէն ամի ի չորս եկեղեցիքս՝ յեկեղեցին Զ (6) ար ժամ առնել անխափան...**»<sup>57</sup>: Ինչպես տեսնում ենք՝ Քրիստափորը Ս. Փրկիչ ընդհանուր անվան տակ հասկանում է **չորս եկեղեցի**:

Իրողությունը վերջնականապես պարզում է մեկ այլ արձանագրություն: 1193 թ. Տրդատ քահանան նորոգելով Ս. Փրկիչ եկեղեցին՝ նաև նշում է, թե՛ «ընծայաբեր եղաք ի սա... նաեւ զգարոս սպասուց **ի քառեսին խորանս...**» (Դիվան, Ա, 47): Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Ս. Փրկիչ եկեղեցու չորս խորանները, որոնք առանձին պատարագի սեղաններ են ունեցել, երբեմն նաև որպես առանձին եկեղեցիներ են դիտվել: Տեղին է հիշել, որ այս եկեղեցին կառուցվել է այն բանից հետո, երբ Աբլղարիբ մարզպանը, որպես պատվիրակ Կոստանդնուպոլիս գնալով, այնտեղից «շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ» ձեռք է բերել Տերունական Խաչի մի մասունք, ապա վերադառնալով ձեռնարկել շինարարությունը. «...բերի մասն ի Սրբո Խաչէն եւ եկեալ կատարեցի զտաճարս զայս եւ զԵշանն լուսո կանգնեցի...» (Դիվան, Ա, 46): Հատակագծում ութ խորան ունեցող Ս. Փրկիչ եկեղեցու չորս խորանները հավանաբար խորհրդանշել են փրկագործող Խաչի

չորս թևերը և ըստ այդմ էլ դրանցում դրվել են պատարագի սեղաններ: Խորանները եկեղեցի են համարվում նաև Անիի Ս. Գրիգոր (Աբուղամրենց) եկեղեցում Վահրամ սպարապետի թողած արձանագրության մեջ: Այստեղ նա նշում է, որ որդու՝ Աբուղամրի «ոգեբաժին» դրամով գնել է երկու կուղպակ, նվիրել Ս. Գրիգորին և սպասավորներին պատվիրել, որ եղած բոլոր «եկեղեցիներում» (իմա՝ խորաններում) պատարագեն տարեկան երեք քառասունք. «ես Վահրամ... ետու զիմ որդոյն զԱպուխամրի ոգեբաժին եւ գնեցի Բ (2) կուղպակ... **ետու ի Սուրբ Գրիգորի եւ քան եկեղեցիքս, որ ունի ի տարին Գ (3) քառասունք**»(Դիվան, Ա, 32):

Ինչպես տեսնում ենք, թե՛ Ս. Փրկչի արձանագրություններում, թե՛ այստեղ, նվիրատվությունը կատարվել է եկեղեցական մեկ կառույցին, բայց պատարագի համար նշվում են «եկեղեցիները», այսինքն՝ ամեն մի եկեղեցում առկա պատարագի սեղան ունեցող խորանները: Նույն սկզբունքի ակնառու կիրառությանը հանդիպում ենք նաև այլ վայրերում, օրինակ՝ **Յովհաննավանքում, Գանձասարի** շինարարական արձանագրության մեջ, **Նորավանքում** և այլուր<sup>58</sup>: Հատկանշական է, որ Հայկազյան բառարանը «խորան» բառի դիմաց տալիս է նաև «եկեղեցի և տաճար Աստուծոյ» բացատրությունը (Նոր բառգիրք, 1836, 972):

Հարցի պարզաբանման առումով ուշագրավ են Անիի մեկ այլ եկեղեցու արձանագրությունները: Ջաքարե ամիրսպասալարը քաղաքի Ներքին բերդում կառուցած Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ նշում է, որ տեղի սպասավորներն այդուհետև մինչ Քրիստոսի գալուստը տարին բոլոր պետք է իր համար պատարագ մատուցեն ավագ խորանում. «Եւ սպասաւորք սորա փոխարէն հատուցեն մեզ **զաւագ խորանին պատարագն** յամենայն աւր յիմ անուն կատարել հանապագ, ի սկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն...» (Դիվան, Ա, 58): Բայց եկեղեցում պետք է պատարագ մատուցվեր նաև Ջաքարեի ծնողների ու քույրերի համար, ինչպես վկայվում է արձանագրության թերի ընթերցվող շարունակության մեջ՝ «...եւ յայս... տրուերն յանուն ծնողաց եւ քերց իմոց»: Այդ պատարագները պետք է մատուցվեին ավանդատների փոքր խորաններում: Այսպես, հարավարևելյան ավանդատան մուտքից վեր փորագիր խաչի շուրջը գրված արձանագրությունը տեղեկացնում է. «**Սուրբ եւ**

**մեղսաքաւիչ պատարագն որ սմա կատարի Սահակդէստո է,**  
ծնաւդի Ջաքարէա եւ Իւանէի թագաւորաց Յայոց» (Դիվան, Ա, 57):

Պատարագի սեղան ունեցող մյուս՝ հյուսիս-արևելյան ավանդատան մուտքի արձանագրութիւնը թեև թերի է, բայց պահպանված հատվածից երևում է, որ այստեղ ևս խոսքը մշտական պատարագի մասին է («փրկագին պատարագն Քրիստոս...») (Դիվան, Ա, 59): Այս արձանագրութիւնից վեր պահպանվել է մեկ այլ կարևոր գրութիւն՝ **«Սուրբ Սարգիս է անուն Սուրբ խորանիս այսմիկ»** (Դիվան, Ա, 59): Այսինքն՝ խորանը ոչ միայն պատարագի մատուցման ինքնուրույն վայր էր, այլև բուն եկեղեցու անունից (Ս. Աստվածածին) տարբեր անուն ուներ (Ս. Սարգիս):

Պատարագ խնդրող ամեն մի անեցի նվիրատու արձանագրության մեջ աշխատում էր նշել ոչ միայն մատուցվելիք պատարագների թիվը, օրը (տոնը), այլև տեղը՝ խորանը, եթե դրա անհրաժեշտութիւնը կար: Օրինակ՝ Ուքան Քարիմադինը, Պապան Վախրադինը և Դապտա Խաթունը Անիի «Քարիմադինի» եկեղեցու արձանագրության մեջ նշում են. «...փոխարէն հատուցին սպասաւորք եկեղեցոյս աւր **յերկուսին խորանին պատարագէն** զՔրիստոս ...» (Դիվան, Ա, 65): Նույն բարեգործները, նորոգելով Անիի արվարձանի Կարմիր վանքը, պատարագներ են ստացել իրենց մերձավորների համար՝ դարձյալ նշելով խորանները. «Յայր Սարգիս եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին յամենայն շաբաթն աւր **Գ (3) խորանն**՝ մեր հաւրն՝ Սարգսի եւ Սիթեւ Սարչէ...» (Օրբելի, 1963, 474, Բասմաջյան, 1931, 87): Իսկ Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ը պատերազմում զոհված եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի համար, Մարմաշենի վանքի սպասավորներին պատվիրում է. «...աւագ խորանին պատարագն յանուն նահատակին Քրիստոսի՝ Խարփին կատարել յամենայն աւր...» (Ալիշան, 1881, 151): Ջաքարե ամիրսպասալարը 1211թ. Խժկոնքի Ս. Սարգիս եկեղեցու նվիրատվական արձանագրության մեջ նշում է. «Այլ միաբանքս հաստատեցին **զՍուրբ Սարգսի զաւագ բեմն** անխափան պատարագ առնել ինձ...» (Սարգիսեան, 1864, 210):

**Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ պատարագի վայրի՝ խորանի հիշատակութիւնը ևս երբեմն կարևոր էր. պատարագի սեղաններ ունեցող խորաններն ինքնուրույն նշանակութիւն ունեին, հաճախ առանձին անուն էին կրում և կարող էին ուղղակի «եկեղեցի» կոչվել:**

Իսկ ո՞րն էր այս երևույթի պատճառը և արդյո՞ք շատ էին այդպիսի «եկեղեցի խորանները»: Պատարագներ մատուցվում էին ոչ միայն մահացածների, այլև ողջ մարդկանց հոգու փրկության և մեղքերի թողության համար: Անհում այդպիսի օրինակները բազմաթիվ են: Վերը նշված 1041 թ. արձանագրության մեջ Քրիստափոր անունով անեցին հայտնում է, որ Ս. Փրկիչ եկեղեցուն նվիրատվություն է կատարել և պատարագ ստացել **«վասն մեղաց թողութան եւ հոգւոյ փրկութան»** (Դիվան, Ա, 43):

Անեցիները «վասն փրկութան հոգւոյ» եկեղեցիներ էին նորոգում (Դիվան, Ա, 55), դրանց նվիրատվություն անում (Դիվան, Ա, 12), պարսպի բուրգ կառուցում (Դիվան, Ա, 2,5), հարկեր թողնում (Դիվան, Ա, 27), «վասն քաւութան մեղաց» խաչքար կանգնեցնում (Դիվան, Ա, 40) և այլն: Ընդունված բան էր ամեն մեկի «հոգու բաժին» (հոգու պատվաստ, հոգու պահուստ, հոգու թոշակ) կոչված գումարը, կամ ունեցվածքն այս կամ այն եկեղեցուն նվիրելն ու փոխարենը համապատասխան չափով պատարագ ստանալը<sup>59</sup>:

Նվիրատվությունների դիմաց ստացվող պատարագներն այնքան բազմաթիվ էին, որ առկա խորանները չէին բավականացնում, և անեցի ձեռներեց քահանաները հոգում էին նոր հնարավորությունների ստեղծման մասին, այն է՝ պատարագների համար օգտագործում էին եկեղեցիների ավանդատների փոքր խորանները, բազմախորան (բուլորածև) եկեղեցիների զուգադիր խորանները, եկեղեցիներին կից կամ գերեզմանոցներում կառուցել տալիս պատարագի սեղանով փոքր մատուռներ («հոգեհանգստի մատուռներ»՝ ինչպես կոչում է Թ. Թորամանյանը) որոնք նույնպես եկեղեցի էին կոչվում՝ «գերեզմանաց եկեղեցի» (Սարգիսյան, 1864, 183) և այլն: Անհում պատարագի խորանի ենք հանդիպում անգամ եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի հյուսիսային գավիթում (Մառ, 1934, 74), որը բացառիկ երևույթ է, քանի որ չի համապատասխանում գավիթի բուն կոչմանը: Նույնպիսի հազվագյուտ իրողություն է մատուռի գոյությունը Անիի մի բնակելի տան մեջ: 1913 թ. այդ տունը պեղած Ն. Մառը նշում է, որ Հայաստանում մինչ այդ նման բան չի հանդիպել (Մառ, 1934, 115):

Այսպիսով Անիում «շահաբեր» պատարագներ մատուցելու համար օգտագործվում էին բոլոր հնարավորությունները: Հարկ է նշել, որ այս երևույթը հատուկ չէր միայն Անիին, այլ տարածված

էր նաև Յայաստանի մյուս շրջաններում, Բյուզանդիայում, Արևմտյան Եվրոպայում և կարելի է ասել, որ միջնադարյան քրիստոնյա աշխարհում ընդհանուր բնույթ ունէր: Բայց առևտրական խոշոր կենտրոններում, մասնավորապես նաև Անիում, այն ավելի ընդգծված էր: Քաղաքում անգամ գոյություն ունէր հատուկ «հոգու հարկ», որն ամեն մի հանգուցյալի համար գանձվում էր նրա հարազատներից՝ կազմելով 11 դրամ (այդ հարկը 1216թ. վերացրել է Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ը (Դիվան, Ա, 14):

Շահադիտական նպատակներով պատարագի խորանների արհեստական բազմացումը այնպիսի չափերի էր հասել, որ Յայոց եկեղեցու նշանավոր գործիչներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, ստիպված էր հրապարակավ բողոքել այդ երևույթի դեմ՝ գրելով «...զի այսր գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն. զի մի ասացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցւոյ վերակացուք թէ ըստ բազմութեան թուոցն է եւ վարձն և ի պէտս արծաթսիրութեան, բազմացուցին ի մի տեղ տասն՝ աւելի կամ պակաս ծակոտեալ մատրունս խորանօք եւ սեղանովք. ըստ նմին եւ քահանայք թուոցն լցուցիչք եւ վարձսն առատացուցիչք: ...Ով աղետիցս, ով յիմարութեանս. յիսրայէլի միանգամ ի տարւոջն մի քահանայ մտանէր արեամբ օտարաւ ի սրբութիւնս եւ զամենայն ժողովուրդն քաւէր. իսկ մեք Քրիստոսի ամենայն աւուր վասն մեր պատարագելոյն յամենայն տեղիս՝ տկարացաք հաւատալ թէ քաւէ. այլ զնոյնն ի զանազան տեղիս եւ ի մի վայրն անպատուեցաք եւ մատուցաք յանձուկ եւ անպատիւ ծակոտեալ խորանսն առանց սպասաւորութեան սարկաւազի, առանց հպատակութեան դպրի, առանց անուշահոտութեան խնկի, առանց լուցման ջահի, որ ի հարցն մեր ամենայն սահմանեցաւ ի պէտս նորին եւ ի կատարումն: **Ձայսքան բարեկարգութեամբս զանց արարաք եւ միայն համարոցն ծառայք եղեալ՝** զպատարագելն եւ զհաղորդութիւն քահանայիցն ի միմեանց պառակտեցաք առանձին առանձին լինել եւ **զթիւսն աճեցուցանել...**» (Լամբրոնացի, 1847, 178-179):

Կարծում ենք, պատկերը հստակ է, իսկ Լամբրոնացու բնորոշումը՝ «ծակոտեալ մատրունս խորանօք եւ սեղանովք», հենց այն իրողության արտացոլումն է, որը տեսանք Անիի մի շարք եկեղեցիներին ու դրանց վիմագրերին ծանոթանալով: ԺԳ դարի սկզբներին Ձաքարե ամիրսպասալարի դիմումին ի

պատասխան Սսի եկեղեցական ժողովում ընդունված և Հայաստան ուղարկված կանոնական հանձնարարականի մեջ, առաջին իսկ կետում ասվում է. «Մատուցանել զպատարագն սուրբ, դպրաւ եւ սարկաւագաւ, որպէս օրէնն է» (Գանձակեցի, 1961, 169), որով հաստատվում է Լամբրոնացու ասածը նաև առանց պատշաճ սպասավորության մատուցվող պատարագների մասին: «Ասկէ կը հետեւի, - գրում է Մ. Օրմանյանը, - թէ այն բազմաթիւ խորշերու մէջ, որոնք մինչեւ այսօր եկեղեցիներու աւերակներու մէջ կը տեսնուին, յստակ պատարագի սեղաններով, առանց սպասաւորութեան պատարագներ կը մատուցանէին» (Օրմանյան, 1959, 1573): Միջնադարյան բանիբուն հեղինակին և Հայ եկեղեցու պատմաբանին լրացնում է նաև հայ եկեղեցական ճարտարապետության Անիին քաջածանոթ մասնագետը: Թ. Թորամանյանը մասնավորապէս գրում է. «Հայ կղերին՝ հոգվո փրկութեան համար պատարագներ ծախելու սովորությունը այնքան չափազանցվեր է 11-12-րդ դարերուն, որ հանձն առնված պատարագներու թիվը լիակատար իրագործելու համար բավական չէին տարվոյն օրերը, ուստի **ստիպված ամեն եկեղեցիներու մեջ ավելցուցեր են խորաններ՝** ավանդատուններու վրա. կրկնահարկ շիներ են ավանդատուններ հատկապէս այդ նպատակով: Կարծեք այդ ալ բավական չէ եղած, եկեղեցիի արևմտյան անկյուններուն վրա ալ շիներ են հաճախ 2-4 սենյակներ՝ պատարագի խորաններով և վերանորոգեր են հնադարյան արևմտյան սենյակներու սովորությունը, այս անգամ հիմերեն բոլորովին տարբեր նպատակով մը» (Թորամանյան, 1942, 215):

Այսպիսով, պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող պատմաշրջանում եկեղեցիներում ավագ խորանին զուգահեռ այլ փոքր խորաններում, ավանդատներում, կից կառուցված մատուռներում ու սենյակներում պատարագի սեղան դնելն ու պատարագ մատուցելը շատ տարածված երևույթ էր: Բնական է, որ այն պետք է ավելի ծավալվեր ու լայնորեն կիրառվեր այնտեղ, ուր շատ դրամ կար և բազմաթիվ մարդիկ, որոնք «վասն հոգւոյ փրկութեան եւ մեղաց թողութեան» պատրաստ էին նվիրատվություններ կատարել ու փոխարենը «մեղսաքաւիչ» պատարագ ստանալ: Հենց այսպիսի վայր էր Անին, որը ոչ միայն «բիւր բիւրոց» բնակչություն ուներ, ազնվականների, վաճառականների, վաշխառուների ու այլ դրամատերերի բնակավայր էր, այլև մեծաթիվ ու



ազդեցիկ քահանայական դաս ու հարյուրավոր եկեղեցիներ ունեցող քաղաք էր: Պետք է նկատի ունենալ նաև, որ նվիրատուները սովորաբար աշխատում էին պատարագ ստանալ եկեղեցական մեծ տոների օրերին (արձանագրություններում նշվում էին տոները՝ Դիվան, Ա, 12, 26, 39, 41, 52, 60), ուստի մրցակցությունն ավելի էր սրվում՝ առաջ բերելով պատարագի նոր վայրերի պատրաստման անհրաժեշտությունը:

Վերը շարադրվածն ի մի բերելով կարող ենք ասել, որ Անիի եկեղեցիների թիվն անհամեմատ մեծ կլինի, եթե հաշվի առնենք ոչ միայն առանձին եկեղեցիներն, այլև պատարագի սեղաններով «եկեղեցի-խորանները»: Այստեղ տեղին է հիշել Անիի մերձակա Յոթոմոսի նշանավոր վանքի վերաբերյալ պահպանված մի վկայություն, որը թեև ուշ միջնադարի ծնունդ է (հավելում է Վարդան Արևելցու «Աշխարհացույցի» մեջ), բայց հավանորեն հին ծագում ունի: «Ղօշավանքն Սուրբ Յովաննես եւ Սուրբ Գեորգ զարմանաշէն եւ հռչակաւոր աթոռ եւ **կան բազում եկեղեցիք Խ (40) խորան է, Խ (40) պատարագ կու լինի աւուրն»** (ՄՄ, թիվ 8100, 254 բ, Անթապյան, 1987, 108): Յոթոմոսի վանական համալիրում ընդգրկված է երեք եկեղեցի, հնագույնը՝ Ս. Շողակաթ (Ս. Մինաս կարծեցյալ), Ս. Գեորգ (Գագիկ Ա-ի կառուցածը), Ս. Յովհաննես և մի շարք մատուռներ: Բայց ահա, երբ հաշվարկը տարվել է պատարագի խորաններով, ստացվել է բավական խոշոր թիվ՝ 40:

Այժմ վերադառնանք Անիի եկեղեցիների թվի մասին պահպանված ամենավաղ վկայությանը: Մատթեոս Ուռհայեցին խոսելով Ալփասլանի կողմից պաշարված քաղաքի մասին, որոշակիորեն նշում է, որ այդ ժամանակ Անիում հազար ու մի եկեղեցի **պատարագ էր մատուցում**. «...յայնմ աւուր **հազար ու մէկ եկեղեցի պատարագի կայր ի յԱնի**»: Այսինքն խոսքն այն մասին է, որ քաղաքում **պատարագ մատուցող** հազար ու մի եկեղեցի կար: Նույն պատմիչը, երբ նկարագրում է սելջուկների կողմից Արծն քաղաքի գրավումը, գրում է, թե քաղաքում այն ժամանակ պատարագ մատուցող ութ հարյուր եկեղեցի կար՝ «Եւ կայր յայնժամ **ութ հարիւր եկեղեցի ընդ պատարագով**» (Ուռհայեցի, 1869, 112-113): Ուռհայեցու մոտեցումը հստակ է. նա նշում է պատարագ մատուցելու ունակ **«եկեղեցի-խորանների»** թիվը, որն իր ժամանակակիցների համար միանգամայն հասկանալի էր և չափազանցություն չէր: Իսկ Անիում, ինչպես վերը տեսանք,

պատարագ մատուցում էին ոչ միայն առանձին եկեղեցիներում, այլև դրանց մեջ գտնվող պատարագի սեղանով խորաններում:

Հայերեն երկրորդ կարևոր սկզբնաղբյուրը՝ Գանձակեցու պատմությունը, խնդիրը լուսաբանում է այլ տեսանկյունից: Հեղինակը գրում է, որ Անիում շատ եկեղեցիներ կան և՛ որ անգամ ժողովրդի մոտ առաջացել ու գործածվում է մի երդում՝ «Անիի հազար ու մեկ եկեղեցին վկա»: Թեև պատմիչն ինքը չի ասում, թե Անիում այդքան եկեղեցի կա (նա միայն գիտի, որ եկեղեցիներն այնտեղ բազում են), բայց նրա վկայությունը ևս շատ արժեքավոր է, քանի որ արձանագրում է յուրօրինակ երդման փաստը: Եթե եկեղեցիների այդ թիվը իրականությունն չլիներ, ապա ոչ ոք այն երդում չէր դարձնի. երդվողն ինքը կիմանար, որ ստում է (միջնադարում հավատացյալ մարդու համար գրեթե անհնարին մի բան), իսկ այն մարդը, ում առաջ երդվում էին, նույնպես կիմանար կեղծիքը: Մի խոսքով, նման երդում չէր կարող առաջանալ առանց իրական հիմքերի:

Ինչպես երևում է, Անիի հազար ու մեկ (հազարից ավելի) եկեղեցիների գոյությունը ոչ միայն իրողություն է եղել, այլև ժամանակին անեցիների հպարտության առարկան է հանդիսացել, որի մասին նրանք տեղեկացրել են քաղաք այցելած հյուրերին: Թերևս այս է պատճառը, որ Անիի հազար եկեղեցիների մասին տեղեկությունը մեզ է հասել այդքան բազմաթիվ աղբյուրներից, տարբեր ազգության պատկանող հեղինակների միջոցով: Նրանց մի մասը եղել է Անիում, մյուսները լսել են եկեղեցիների մասին, բայց լսել միանգամայն հավաստի աղբյուրներից, այդ պատճառով էլ մուծել են իրենց երկերի մեջ: Իսկ անեցիները, որոնք «Աստված վկա» ասելու պես երդվել են «Անիի հազար ու մեկ եկեղեցին վկա» խոսքերով, վստահ են եղել դրա ճշմարտացիության մեջ, հետևաբար քաղաքում իրոք կատարվել է նման մի հաշվարկ, մեր կարծիքով, ըստ «**եկեղեցի-խորանների**»:

Վերը՝ մեր կազմած «Անիի եկեղեցիների ցուցակից» արդեն տեսանք, որ քաղաքում վերգետնյա և ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները իսկապես պատկառելի թիվ են ունեցել, ընդ որում քաղաքի ու մերձակայքի ժայռափոր տարածքներն ամբողջովին չեն ուսումնասիրվել<sup>60</sup>, անավարտ են մնացել բուն քաղաքի պեղումները, իսկ ընդարձակ արվարձանները միայն մակերեսային դիտարկումների են ենթարկվել: Մինչդեռ Անիի արվարձան-

ների տարածական ընդգրկումը շատ մեծ էր: Թ. Թորամանյանն անգամ գրում է, թե՛ «Անպայման Յոռոմոսի վանքը, Բագնայր, Արջո Առիճո եւ անոնց նման 4-են մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերու հետ» (Թորամանյան, 1942, 328, տես նաև 1948, 180-181, Մանանյան, 1985, 325-328): Քաղաքի արվարձանների տեղազնությունը կատարելուց հետո հեղինակը գալիս է այն եզրակացության, որ «այժմյան մեր տեսած պարիսպներեն (Սմբատաշեն, Կ. Մ.) դուրս էր բուն Անի քաղաքը, և պարիսպը քաղաքի ամրոցն էր» (Թորամանյան, 1942, 328):

Ուրիշ ուսումնասիրողներ ևս չեն կասկածել, որ Անիի շուրջը, հատկապես հյուսիսային հարթավայրում, սփռված են եղել բազմամարդ քաղաքի արվարձանները: Բնական է, որ այստեղ ևս եկեղեցիներ ու մատուռներ կային, որոնց ավերակներն այժմ ծածկված են հողի տակ: Յուսանք, որ կգան բարի ժամանակներ, երբ Անիի ավերակներն ամբողջովին ու պատշաճ կերպով կուսումնասիրվեն և շատ գիտական հարցեր իրենց ճշգրտումը կստանան: Յավանորեն այն ժամանակ էլ վերջնականապես պարզ կդառնա Անիի հազար ու մեկ եկեղեցիների խնդիրը: Սակայն, ելնելով վերը կատարված քննություններից և առկա տեղեկությունների համադրումից, մենք գալիս ենք այն եզրակացության, որ **իր ծաղկման տարիներին Անին իրոք ունեցել է հազարից ավելի եկեղեցի ու մատուռ՝ պատարագի սեղանով խորան:** Եկեղեցական մեծ տոների օրերին կամ վտանգի պահին այս բոլոր խորաններում պատարագ էր մատուցվում: Յենց սա էլ իրավունք էր տալիս անեցիներին իրենց քաղաքը «հազար ու մեկ» եկեղեցիների քաղաք կոչել, դրանով հպարտանալ ու երդվել, իսկ մատենագիրներին՝ սերունդներին փոխանցել այդ իրողությունը:

# ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԻՈՒՄ

*«Չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի, եւ խոտան...:  
Յոյնք իմաստունք են եւ ողորմածք... Հռոմք  
զգաստունք են աղաւթից եւ հնազանդ առաջնորդաց,  
Ասորիք խոնարիք են եւ ճգնող,*

*Հայք պահողք են եւ ողորմած գերելոց եւ  
եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք՝ սրբոց  
վանորէից մեծարողք եւ անբամբաս առաջնորդաց...:*

*Ամենայն քրիստոնեայք եղբարք են...»:*

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

(Զաքարե և Իվանե Զաքարյաններին գրած թղթից)

Անի քաղաքի, նրա բնակչության, հասարակական ու հոգևոր կյանքի պատմությունն ամբողջական չի կարող լինել, եթե ըստ ամենայնի չներկայացվի այստեղ տիրող կրոնական իրավիճակը: Բանն այն է, որ Անին, լինելով միջնադարյան Հայաստանի քաղաքական ու եկեղեցական առաջատար կենտրոնը, միաժամանակ ներկայացնում էր հասարակական մի ինքնատիպ միջավայր, ուր Հայոց եկեղեցու գերակշռող համայնքին զուգահեռ երևան էին եկել կրոնական փոքրամասնություններ: 1045թ.՝ Բյուզանդիայի տիրապետության տակ անցնելուց հետո, այստեղ հաստատվեց **քաղկեդոնական** (հունական) եկեղեցին, որը ծաղկման հասավ ավելի ուշ՝ հայկրացական զինակցության շրջանում: 1064 թվականից հետո, երբ քաղաքը զավթեցին սելջուկները, այստեղ հաստատվեցին նաև **մահմեդականներ**: Պատմական վկայություններ կան այն մասին, որ ԺԳ դարի վերջերին Անիում քարոզչություն էին ծավալել Հռոմեական **կաթոլիկ** եկեղեցու ներկայացուցիչները: Իսկ այս բոլորից ավելի վաղ, դատելով որոշ հանգամանքներից, հնարավոր է, Անիում կային որոշ թվով աղանդավորներ կամ նրանց

համակիրներ: Անիում ահա այսպիսի կրոնական բազմազանություն էր տիրում, որին իրազեկ լինելը շատ կարևոր է քաղաքային կյանքի իրական պատկերը կազմելու համար: Ցավոք, Անիի պատմության նախորդ ուսումնասիրողներն այս խնդրին պատշաճ ուշադրություն չեն դարձրել:

Այլակրոն ու այլադավան համայնքների գոյակցությունը միջնադարյան Հայաստանում իհարկե նորություն չէր. բավական է հիշել Դվինը, Կարսը, Խլաթը և այլն, բայց Անիի դերն առանձնահատուկ էր, քանի որ քննվող պատմաշրջանում այն հանդիսանում էր բուն Հայաստանի եկեղեցական գլխավոր կենտրոնը, անհամեմատ ընդարձակ ու բազմամարդ քաղաք էր, ուր առավել ակնառու կերպով էին դրսևորվում քաղաքային կյանքին հատուկ երևույթներն ու միտումները:

Անիի կրոնական կյանքում տեղի ունեցած գլխավոր փոփոխությունները սովորաբար պայմանավորված են եղել քաղաքական անցքերով, մասնավորապես՝ օտար տիրապետության հաստատմամբ: Բնականաբար, այդ ընթացքում քաղաքում հակասություններ են ծագել նաև կրոնական հողի վրա: Բավական է հիշել Բյուզանդիայի ծավալած կրոնական հալածանքները կամ մահմեդականների ոտնձգությունները թե՛ հայ հավատացյալների, թե՛ հայկական եկեղեցիների նկատմամբ: Սակայն, մյուս կողմից, Անիի պատմությանը ծանոթանալով՝ ականատես ենք լինում հակադարձ երևույթին՝ **կրոնական հանդուրժողականության** հաստատմանը: Այն առաջին հերթին գալիս էր քաղաքային կյանքի, քաղաքացիության կենսակերպի առանձնահատկություններից, բոլոր համայնքների հիմնական շահերի ընդհանրությունից: Կարելի է ասել, որ **եթե կրոնական առճակատումը սովորաբար ծագում էր քաղաքական դրդապատճառներից, ապա կրոնական հանդուրժողականությունը քաղաքային հասարակության նվաճումն էր**, որի հիմքում խաղաղ, ստեղծագործ կյանքով ապրելու բնական ձգտումն ու միասնական սոցիալ-տնտեսական շահերն էին: Անիի պատմությունը վկայում է, որ քաղաքի համար բախտորոշ պահերին նրա բոլոր կրոնական համայնքները սովորաբար հանդես էին գալիս միասնաբար (Մարգարյան, 1980, 103):

Անիի պարագայում բնավ երկրորդական չէր նաև քանակապես գերակշռող համայնքի ու Հայոց եկեղեցու գրաված դիրքը, որն

աչքի էր ընկնում այն ժամանակների համար եզակի ազատականությանը: Կարելի է ենթադրել, որ Անիում ու մյուս քաղաքներում տիրապետող կրոնական հանդուրժողականության մթնոլորտն էր այն իրական միջավայրը, որի փորձը հաշվի առնելով՝ ԺԳ դարի սկզբներին Ջաքարյան եղբայրներին հղած թղթում իր առաջադիմական դրույթներն էր ձևակերպում ժամանակի ամենահեղինակավոր հայ վարդապետներից մեկը՝ Մխիթար Գոշը (Մուրադյան, 1993, 101-09): Իրատես հայ վարդապետը գիտեր, որ Հայոց և Վրաց եկեղեցիների միջև առկա դավանական ու այլ տարբերությունները և հակասությունները խորն են, դյուրությամբ չեն հարթվի («անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն»), բայց հորդորում էր առաջնային չհամարել այդ տարբերությունները, այլ որպես քրիստոնեաներ չթշնամանալ միմյանց հետ, չլինել ամբարտավան ու մեկ մեկու սրբություններն անարգող, լինել բարեկամ՝ միաժամանակ՝ յուրաքանչյուրն իր եկեղեցու կարգը պահելով (Մուրադյան, 1993, 107, «Արարատ», 1901, 126-127): Հատկանշական է, որ իր այս գաղափարը հիմնավորելիս Գոշը շեշտում է մարդկային հասարակության միաբան լինելու սկզբունքը, մարդկանց փոխհարաբերությունների անխուսափելիությունը՝ այդ առնչությամբ կարևորելով նաև քաղաքների ու այլ բազմամարդ բնակավայրերի դերը. «Այլ զայս նախ դիցուք զկանս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւոս արար զպէտս ունեալ միմեանց, եւ **յաղագս այնորիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք**» (Մուրադյան, 1993, 107): Արդարև միջնադարյան իրականության մեջ հենց քաղաքներն էին այն վայրերը, ուր ժամանակի ընթացքում բնակչությունը կենտրոնանում էր ոչ թե սոսկ կրոնական, դավանական և անգամ ոչ միայն ըստ ազգային պատկանելության, այլ ըստ տնտեսական ու սոցիալական պահանջի: Իսկ քաղաքում արդեն ձևավորվում էր միասնական աշխարհայացք ու գեղարվեստական ճաշակ (Մառ, 1934, 37-38):

Հետաքրքիր է, որ Անիում, թեև պետական ու տեղական քաղաքային հարկերը ընդհանուր էին բոլոր քաղաքացիների համար, բայց հոգուտ եկեղեցու զանձվող հարկերի առումով դավանանքով տարբերվող համայնքները միմյանցից անկախ էին, յուրաքանչյուրը ենթակա էր իր հոգևոր առաջնորդին: Այս

իրողության մասին է վկայում Վրաց Ետիփան կաթողիկոսի՝ Անիում թողած 1218թ. արձանագրությունը (Մուրադյան, 1977, 45):

Անիի կրոնական համայնքներին առանձին-առանձին անդրադառնալուց առաջ, մեկ անգամ ևս ընդգծենք, որ թեև քաղաքի բնակչությունն իրոք ժԱ դարի կեսերից սկսած դավանական առումով միատարր չէր, բայց անեցիների ճնշող մեծամասնությունը Հայոց եկեղեցու հավատացյալներ էին, ընդհուպ մինչև նրա գոյության վերջը, իսկ մյուս համայնքները կրոնական փոքրամասնություններ էին բառիս բուն իմաստով: Ստորև մենք համառոտակի կանդրադառնանք Անիի քաղկեդոնական, մահմեդական համայնքներին, կաթոլիկ քարոզիչների գործունեությանը, աղանդավորների մասին պահպանված վկայություններին: Նկատի ունենալով Անիի միջազգային կապերը, նրա առևտրատնտեսական խոշոր կենտրոն լինելու հանգամանքը՝ կարող ենք ենթադրել, որ այստեղ եղել են նաև որոշ թվով հրեաներ, ասորիներ, բայց նրանց մասին տեղեկություններ մեզ հայտնի չեն: Նշենք նաև, որ Անիի պատմության նախորդ ուսումնասիրողները քաղաքի կրոնական փոքրամասնությունների խնդիրը, որպես առանձին հարց, չեն քննարկել, ուստի մեր կատարած փորձն այդ ուղղությամբ արված առաջին քայլը լինելով՝ չի կարող սպառիչ լինել:

#### ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՆԵՐ

Անիի կրոնական փոքրամասնությունների մեջ քաղկեդոնական համայնքն առանձնակի տեղ է գրավում թե՛ վաղեմությամբ, թե՛ քաղաքի պատմության մեջ կատարած դերով: Հավանական է, որ քաղկեդոնականությունը քաղաք է մուտք գործել Անիում բյուզանդական տիրապետության ու վարչակարգի հաստատման հետ միաժամանակ՝ 1045թ.:

Հայտնի է, որ Անի-Շիրակը կայսրության իշխանության տակ անցնելուց հետո ընդգրկվեց «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմի կամ կատապանության կազմում, որը, ինչպես նշում է Զ. Բարթիկյանը, «Հայաստանի տարբեր նահանգներում կազմակերպված բյուզանդական բանակաթեմերի մեջ ամենից կարևոր... կատապանությունն էր» (հեղինակը ներկայացնում է նաև բյուզանդական 19-ամյա տիրապետության ընթացքում այդ կատապանության կառավարիչների ցանկը՝ Միքայել Իասիտես, Կատա-

կալոն Կեկավնենոս, Լևոն Թոռնիկ, Ահարոն Բուլղար, Յովհաննես Մոնաստիրիոտես, Բագարատ Վիսկացի, հանգամանորեն անդրադառնում հույների վարած վարչատնտեսական, կրոնական քաղաքականությանը և այլն: (Սկիլիցես, 1979, XLIX-LXXII, Տես նաև Յուզբաշյան, 1988, 214-215):

Քաղաքի բյուզանդական կառավարիչներից ու պաշտոնյաներից շատերն այդ շրջանում քաղկեդոնական հայեր էին (Կաթոս, 1975, 15, 31, 61, 65-66, 112, 123): Պարզ է, որ 1045-1064թթ. քաղաքում կար նաև հունական կայազոր, այստեղ բնակվում էին բյուզանդական պաշտոնյաներ, որոնք հիշյալ ժամանակաշրջանին հատուկ հայ-հունական եկեղեցական հարաբերությունների բացահայտ սրման մթնոլորտում ոչ մի դեպքում չէին հաճախի հայկական եկեղեցի և հայերի հետ միասին հաղորդություն չէին ստանա: Հետևաբար, պետք է կարծել, որ իրենց իշխանությունը հաստատելուց անմիջապես հետո, հույները հայերի ձեռքից առել են մեկ կամ մի քանի եկեղեցիներ (հավանական է միջնաբերդի եկեղեցիներից, քանի որ այն բյուզանդական կառավարչի նստավայրն էր) և ծառայեցրել իրենց եկեղեցական պահանջներին (Անիի միջնաբերդում և քաղաքի այլ մասերում հայտնաբերված մի քանի հունարեն արձանագրություններում, ինչպես և կատապանների՝ Մայր տաճարի պատին թողած հայերեն արձանագրություններում եկեղեցական հարցեր չեն արժարծվում):

Հարկ է նշել, որ բյուզանդացիների՝ Հայաստանում վարած կրոնական քաղաքականությունը տարվում էր երկու հիմնական ուղղությամբ, մեկը՝ ամեն տեսակ ճնշումների միջոցով քաղկեդոնական դավանանքի պարտադրումն էր բուն Հայոց եկեղեցուն (այս հարցում կայսրության գործադրած բոլոր ճիգերն ապարդյուն անցան՝ շնորհիվ հայ հոգևորականության, ժողովրդի ու ազնվականության և առաջին հերթին՝ Խաչիկ Անեցի կաթողիկոսի հաստատականության), մյուսը՝ նվաճված երկրի տարբեր շրջաններում քաղկեդոնական համայնքների ձևավորումն ու եպիսկոպոսությունների հիմնումը: Այս երկրորդ ուղղության մեջ հաջողության հասնելու մտադրությամբ կայսրությունը հալածանքների էր ենթարկում ոչ միայն հայ հոգևորականությանը, այլև ազնվականությանը, իսկ հույն հոգևորականության շրջանում ստեղծվում էին Հայոց եկեղեցին ու նրա դավանաքը վարկաբեկող



զանազան գրություններ, որոնք տարածվում էին Հայաստանում ու Վրաստանում (Մելիքսեթ-Քեկ, 1934, 126):

Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ բյուզանդացիները մի կողմից գաղթեցնում, երկրից դուրս էին բերում հայ ազնվականությանը, մյուս կողմից Հայաստանում բնակեցնում ոչ հայ ազնվականներ, պաշտոնյաներ, զինվորականներ՝ նրանց շնորհելով ընդարձակ կալվածքներ (Սկիլիցես, 1979, LVI): Դրանով կայսրությունը ոչ միայն քաղաքական հենարան էր ստեղծում, այլև հող նախապատրաստում քաղկեդոնականության տարածման համար: Միաժամանակ՝ «...քաղկեդոնականությունը ընդունող հայն օրենքի առջև առավելություններ ունեյր միաբնակ հայի համեմատությամբ» (Սկիլիցես, 1979, LXVIII): Նմանօրինակ միջոցներով կայսրությունը փորձում էր ստվարացնել իր կողմնակիցների շարքերը և ի հակակշիռ Հայոց եպիսկոպոսությունների, երկրում ստեղծել քաղկեդոնական եպիսկոպոսություններ (ՀԺՊ, 1976, 457, Գելցեր, 1901, 263-264, 285-286): Այդպիսիներից էր, օրինակ, Վաղարշակերտի եպիսկոպոսությունը, որի հունադավան հայ առաջնորդ Ջաքարիա եպիսկոպոսը ԺԱ դարի 20-ական թվականներին, բյուզանդա-վրացական ռազմական բախման ժամանակ, գործում էր կայսրության շահերին համապատասխան (Լաստիվերցի, 1963, 36):

Անհրաժեշտ փաստերի բացակայության պատճառով, մենք առայժմ չենք կարող որոշակիորեն ասել՝ Անիում հույները հիմնե՞լ են առանձին քաղկեդոնական եպիսկոպոսություն, կամ փորձե՞լ են այդպիսին ստեղծել: Մի բան է միայն պարզ, որ բյուզանդական կարճատև տիրապետության ընթացքում Անիում ստեղծվել էր այնպիսի ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ, որը բնավ նպաստավոր չէր Հայոց եկեղեցու համար (Անեցի, 1893, 108-109): Անի գալուց մեկ տարի անց բյուզանդացիները ոչ միայն քաղաքից հեռացրին Պետրոս Գետադարձ կաթողիկոսին (որն իրենց քաղաղական համակիրն էր), նրա տեղապահ Խաչիկ Անեցուն, այլև փաստորեն կողոպտեցին ու կազմալուծեցին Անիի կաթողիկոսարանը (Կ. Մ., 1992-1993, 120-123): Անիում բարձր պաշտոններ ստացան քաղաքացիներից նրանք, ովքեր քաղկեդոնականությունը ընդունեցին: Հավանաբար հենց այդպիսին էին կատապան Բագարատ Վիսկացու՝ Մայր տաճարի պատին գրած արձանագրության մեջ հիշատակված երեք անեցիները, որ «առին

զտանուտիրութիւնս՝ Մխիթար իպատոսն՝ Կրտին որդին, եւ Գրիգոր՝ Լապաստակա որդին սպաթարկանկիտատն եւ Սարգիս՝ Արտաւազա որդին սպաթարկանկիտատն» (Դիվան, Ա, 37):

Պատմական փաստ է, որ քաղկեդոնականությունն Անիում արմատներ է գցել ու ի վերջո վերածվել առանձին եպիսկոպոսության: Սակայն Անիի քաղկեդոնական եպիսկոպոսության մասին առկա վկայությունը վերաբերում է ավելի ուշ ժամանակի՝ ԺԳ դարի սկզբներին:

Բյուզանդական վարչակարգը Անիում չհասցրեց շատ բան անել, որովհետև վերահաս սելջուկյան արշավանքները հողս ցնդեցրին նրա փայփայած զավթողական ծրագրերը: Կայսրությունը ոչ միայն զրկվեց ողջ Հայաստանից, այլև ստիպված էր ուժերի գերլարումով պայքարել սեփական գոյությունը պահպանելու համար, իսկ հայերի նկատմամբ վարած կրոնական անհանդուրժողականության քաղաքականությունն, այդ բախտորոշ պահին, նրան զրկեց քրիստոնյա հարևան ժողովրդի հետ դաշնակցելու հնարավորությունից, որը տխուր հետևանքներ ունեցավ թե՛ հույների և թե՛ հայերի համար:

1064թ. սելջուկյան ավերումից հետո, Անիում կտրուկ փոխվեց կրոնական իրավիճակը: Այստեղ հայտնվեց մի նոր կրոնական տարր՝ մահմեդականությունը, որն ի սկզբանե անհանդուրժող էր քրիստոնյաների նկատմամբ, անկախ վերջիններիս դավանական տարբերություններից: Սակայն Բարսեղ Ա Անեցու ձեռնադրության, նրա՝ Մելիք շահի մոտ կատարած ուղևորության մանրամասները թույլ են տալիս ենթադրել, որ Շեդդադյանների օրոք Անիում Հայոց եկեղեցին համեմատաբար բարվոք վիճակում էր, իսկ սելջուկյան տերության ախոյան Բյուզանդիայի հետևորդ քաղկեդոնականներն ավելի ընկճված էին:

Քաղկեդոնականությունն Անիում կրկին վերագարթոնք պիտի ապրեր Վրաց պետության զորացմանը զուգահեռ: Հայտնի է, որ ԺԲ դարի ընթացքում վրացիները երեք անգամ գրավեցին Անին ու կարճ ժամանակով (1124-26, 1161-64, 1174-76թթ.) իշխեցին այդտեղ: Այդ իրադարձությունների ժամանակ Վրաց թագավորները համագործակցել են անեցիների, մասնավորապես նաև Հայոց եկեղեցու տեղական առաջնորդների հետ: Սկզբնաղբյուրներում ոչ մի վկայություն չունենք հիշյալ շրջանում Անիի քաղկեդոնական համայնքի գործունեության կամ ընդհանրապես


գոյության մասին: Սակայն միանգամայն հավանական է, որ այդպիսին եղել է: Քաղաքում գործել է նաև քաղկեդոնական եկեղեցի, ուր իրենց ծեսերն են կատարել վրացի զորավարները, զինվորականներն ու պաշտոնյաները, այն տարիներին, երբ Անին գտնվել է Վրաց թագավորների իշխանության տակ:

1198թ. վերջերին քաղաքը վերջնականապես ազատվեց Շեդդադյան ամիրաների տիրապետությունից և Վրաց արքունիքի կողմից տրվեց Ջաքարե ամիրսպասալարին՝ դառնալով նրա իշխանության կենտրոնը: Ջաքարեի մահից հետո (1212թ.), երբ Ջաքարյանների տան ավագությունն անցավ քաղկեդոնական Իվանեին, իսկ վերջինիս կնոջ հորդորներով շուտով քաղկեդոնականություն ընդունեց նաև Անիի տերը՝ Ջաքարեի որդի Շահնշահը («...զոր դարձոյց յաղանդն Քաղկեդոնի՝ Խօշաք՝ զուգակիցն Իւանէի», Վարդան, 1861, 183-184), քաղաքում բարենպաստ պայմաններ առաջացան քաղկեդոնական համայնքի գործունեության ու ծավալման համար:

Անիի հետագա Ջաքարյան իշխողներից ոմանք նույնպես քաղկեդոնականներ էին: Չնայած սկզբնաղբյուրները չեն նշում նրանց կողմից Անիում Հայոց եկեղեցու նկատմամբ ճնշում գործադրելու դեպքեր, բայց պարզ է, որ քաղաքի աշխարհական իշխանավորների քաղկեդոնական լինելը նպաստում էր քաղկեդոնական անեցիների զորացմանը, որն ինքնըստինքյան կաշկանդող գործոն էր դառնում Հայոց եկեղեցու համար: Հավանորեն, հենց այս շրջանում է, որ Անիում քաղկեդոնականների տնօրինության տակ են անցնում որոշ եկեղեցիներ: Կիրակոս Գանձակեցու՝ Պղնձահանքի (Ախթալա) և Քոբայրի մասին հայտնած ուշագրավ վկայությունները ցույց են տալիս, որ այդ շրջանում քաղկեդոնականություն ընդունած հայ ազնվականները, երբեմն տեր դառնալով այս կամ այն վանքին կամ եկեղեցուն, այն վերածում էին քաղկեդոնական հաստատության<sup>61</sup>: Նման բան կատարվել է նաև Անիում: Մասնավորապես, հարակից փաստերի միջոցով Պ. Մուրադյանն իրավացիորեն եզրակացնում է, որ Շահնշահ Ա-ը Անիի քաղկեդոնականներին է հանձնել Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին (Մուրադյան, 1985, 183): Հնարավոր է, որ քաղկեդոնականների ձեռքն անցնելուց հետո են որմնանկարազարդվել Անիի հին եկեղեցիներից մի քանիսը (Թորամանյան, 1942,

164-167), բայց ոչ բոլորը: Տվյալ դեպքում, որմնանկարների գոյությունը եկեղեցիների դավանական պատկանելության խնդրի որոշման ստույգ կռվան չի կարող համարվել, քանի որ բազմաթիվ են նաև մշտապես Հայոց եկեղեցուն պատկանած որմնանկարագարող եկեղեցական կառույցները (Վ. Մ., 1990, 10-14, 30-34):

Անիի ԺԳ դարի քաղկեդոնական համայնքի մասին ունենք մի քանի կարևոր փաստեր: Առաջինը Վրաց Ետիփան (Եպիփանոս) կաթողիկոսի՝ 1218թ. ընդարձակ վրացերեն արձանագրությունն է, որը հայտնաբերվել է քաղաքի «Վրացական» եկեղեցու մոտ կատարված պեղումներից: Այն բովանդակում է Անիի քաղկեդոնական հոգևորականների ու աշխարհականների պարտականություն-իրավունքները սահմանող «կարգավորության գիրը» կամ «հրամանքը», որը մի ուշագրավ վավերագիր է (հանգամանալից վերլուծությունը տես Մուրադյան, 1977, 35-48):



Վրաց Ետիփան կաթողիկոսի 1218 թ. արձանագրությունն Անիում:

Վրաց կաթողիկոսը, դիմելով Անիի քաղկեդոնականներին, նախ եկեղեցու սպասավորներին հորդորում է հավատարիմ մնալ «եկեղեցու կարգերին», խուսյա տալ չարաշահումներից ու շահամոլությունից, իսկ այնուհետև՝ դիմում է աշխարհականներին՝ խրատելով, որ հնազանդ լինեն ու առատաձեռնորեն պատշաճը

հատուցեն քահանաներին: Այստեղ խոսվում է նաև կոնկրետ հարկերի, դրանց չափի մասին, որից, ինչպես վերը նշեցինք, այն եզրակացությունն է բխում, թե Անիի կրոնական համայնքները, եկեղեցական հարկերի առումով, միմյանցից անկախ էին<sup>62</sup>: Սակայն միևնույն ժամանակ կար այդօրինակ հարկերի մոտավոր հավասարակշռություն, և եթե առաջնորդներից մեկը դրանցում փոփոխություն էր կատարում, մյուսներն ինչ-որ ձևով վերանայում էին իրենց սահմանած հարկաչափերը: Մասնավորապես, երբ Վրաց կաթողիկոսն անդրադառնում է քաղկեդոնական եկեղեցիներին տրվող մորթու (մատաղի անասունի կաշվի) խնդրին, դրանով յուրովի արձագանքում է Անիում Հայոց եկեղեցու առաջնորդի՝ Գրիգոր Ա եպիսկոպոսի մեկ տարի առաջ հրապարակած որոշմանը, որով քաղաքի Հայոց եկեղեցիներում վերացվում էր այդ հարկը (Մուրադյան, 1977, 45-46, Դիվան, Ա, 16):

Արժեքավոր է նաև արձանագրության մեջ եղած այն վկայությունը, որ Ետիփանն Անի էր եկել՝ այստեղ եկեղեցիներ օծելու համար. «Սույնը ես՝ Ետիփան կաթողիկոսս իմ ձեռքով եմ գրել, երբ **Անիում եկեղեցիներ էի օծում...**» (Մուրադյան, 1977, 43): Հիմնական եկեղեցիներ էին դրանք, որ անցել էին քաղկեդոնականներին (այդպիսին էր մասնավորապես «Վրացական» կոչված եկեղեցին), թե նորակառուցներ՝ հայտնի չէ, բայց որ քաղաքում քաղկեդոնականներին պատկանող մեկից ավելի եկեղեցիներ կային՝ կասկածից վեր է: Հավանական է, որ այդ եկեղեցիներից գլխավորը նույն «Վրացական» եկեղեցին էր (նկ. 11), տեղի առաջնորդանիստը, այդ պատճառով էլ հենց այդտեղ էր իր երկարաշունչ արձանագրությունը թողել Վրաց կաթողիկոսը: Այստեղ հատվածաբար պահպանվել են վրացերեն ևս մի քանի արձանագրություններ, որոնցից երկուսը թվակիր են՝ 1287 և 1288 թթ. (Մուրադյան, 1977, 48-54):

Ինչպես ասվեց, Անիի քաղկեդոնականներն էին տնօրինում նաև Հոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի եկեղեցին (նկ. 19): Ինքը՝ Տիգրան Հոնենցը, քաղկեդոնական չէր, սերտորեն կապված էր Հայոց եկեղեցու հետ, հայտնի էր բազում նվիրատվություններով ու բարեգործությամբ (Կ. Մ., 1993, 11-13), իսկ Ս. Գրիգոր եկեղեցին ու նրա շուրջ եղած վանքը 1215 թ. կառուցել էր իր պարոնների՝ Ջաքարյանների համար, որոնց պարտական էր իր դիրքի ու կարողության համար (Դիվան, Ա, 63):

Շահնշահի կողմից եկեղեցու հանձնումը քաղկեդոնականներին հավանորեն կատարվել է Յոնեցի մահից հետո: Այդ ժամանակ է կառուցվել եկեղեցու գավիթը: Թե՛ եկեղեցին և թե՛ նրա գավիթն ամբողջովին որմնանկարագարդված են: Հատկապես ուշագրավ է եկեղեցու արևմտյան պատին տեղ գտած պատկերաշարը, որը ներկայացնում է 16 դրվագ՝ Գրիգոր Լուսավորչի տանջանքների ու քարոզչական գործունեության պատկերներով, երկու տեսարան՝ Հռիփսիմյանների վարքից, իսկ հյուսիսային պատին պատկերված է Լուսավորչի հանրահայտ տեսիլքը՝ Ս. Էջմիածնի հիմնադրման նախապատմությունը (նկ. 20, 21): Պատկերներն ուղեկցվում են վրացերեն կարճ բացատրագրերով, որոնք, ըստ Պ. Մուրադյանի, «կատարված են ըստ Գրիգորի վարքի այժմ կորած հայերեն խմբագրության բնագրական հատվածների ոչ հմուտ վրացերեն թարգմանությամբ» (Մուրադյան, 1985, 190): Որմնանկարների ստեղծման ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Այդ հարցի քննությունը դուրս է մեր նպատակից: Սակայն անկախ նրանից, որմնանկարները ստեղծվել են եկեղեցու կառուցման ժամանակ՝ 1215-ին Հայոց եկեղեցու դավանության պատկանած անձանց, թե՛ ավելի ուշ՝ քաղկեդոնական հայերի ձեռքով, դատելով Լուսավորչի վարքի պատկերաշարից՝ այն ստեղծողները նպատակ են ունեցել փառաբանել Հայաստանում քրիստոնեության հաստատումը և ազգային պատմության այդ դրվագը ներկայացնել որպես մի կարևորագույն իրադարձություն համաքրիստոնեական պատմության մեջ:

Գրիգոր Լուսավորչի եկեղեցու ներսում կատարված են թաղումներ (մի բան, որ հատուկ է քաղկեդոնական եկեղեցուն և մերժվում է Հայոց եկեղեցու կողմից): Անիի քաղկեդոնականներին պատկանող տապանաքարերից մեկի վրա պահպանված վրացերեն արձանագրությունը հաստատում է, որ այն պատկանում է Շահնշահի տան ամիրախոր Աթաբակին (Մուրադյան, 1985, 184): ԺԴ դարի սկզբներին Շահնշահ Ա-ի թոռան՝ Շահնշահ Բ-ի կողմից եկեղեցու տնօրինությունը հանձնվել է հայ քաղկեդոնական մի ընտանիքի, որի մասին է վկայում 1301թ. հայերեն արձանագրությունը (Մուրադյան, 1985, 185, Դիվան, Ա, 64)<sup>63</sup>: Անիի մեկ այլ որմնանկարագարդ եկեղեցու՝ Ս. Մինասի մասին հիշատակող Ն. Մառը նշում է, որ որմնանկարներից մեկն ունեցել է վրացերեն մակագրություն (Մուրադյան, 1977, 61-62):

ԺԳ դարում Անիի քաղկեդոնական համայնքը գլխավորում էր տեղի քաղկեդոնական եպիսկոպոսը: Այս մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել Վրաց Ռուսուդան թագուհու և Իվանե աթաբեկի՝ 1223թ. Օնորիոս Գ պապին հասցեագրված նամակներում, որոնք շոն է հասցրել նույն ինքը՝ Անիի քաղկեդոնական եպիսկոպոս Դավիթը: Նամակների բովանդակությունից դատելով, վերջինս մեծ համարում է ունեցել Վրաց արքունիքում: Մասնավորապես, Ռուսուդանն իր նամակը եզրափակում է հետևյալ կերպ. «Սույն նամակը բերող մեր սիրելի Դավթին՝ Անիի եպիսկոպոսին, ամեն ինչում այնպես վստահեք, ինչպես մեր բերանից լսելիս լինեք»: Նույնն է կրկնում Իվանեն՝ «Խնդրում ենք սույն նամակաբերին՝ սուրբ հայր և մեր եպիսկոպոս Դավթին, ամեն ինչում, ինչ էլ մեր կողմից ասի ձեզ, հավատացեք այնպես, ինչպես մեզ» (Մուրադյան, 1977, 63): Փաստորեն Դավիթը ոչ թե սոսկ նամակատար էր, այլ Վրաց արքունիքի կողմից լիազորված էր շոնում բանակցություններ վարել:

Անիի քաղկեդոնական եպիսկոպոսի գրաված կարևոր դիրքը նաև Վրաց եկեղեցու համակարգում, հաստատվում է վրացերեն «Օրհնություն մեռնին» բնագրում պահպանված տեղեկությամբ: Այստեղ ծեսի գլխավոր մասնակիցների շարքում Կարսի քաղկեդոնական եպիսկոպոսին հատկացված է 27-րդ տեղը, Վաղարշակերտի եպիսկոպոսին՝ 25-րդը, իսկ երրորդում նշված է «Մեծ Հայքի միտրոպոլիտը»: Այս կապակցությամբ Պ. Մուրադյանն իրավացիորեն եզրակացնում է, որ բնագրի հեղինակը «Մեծ Հայքի միտրոպոլիտ» ասելով հենց Անիի քաղկեդոնականների առաջնորդին նկատի ունի, որով կարելի է վկայված համարել նրա գերագահությունը Հայաստանի երկաբնակ մյուս երկու ներկայացուցիչների համեմատությամբ» (Մուրադյան, 1977, 63):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Անին ԺԳ դարում ոչ միայն քաղկեդոնական եպիսկոպոսության աթոռանիստ էր, այլև համարվում էր Հայաստանի քաղկեդոնականների եկեղեցական-վարչական կենտրոնը: Վերը հիշատակված Դավթից բացի Անիի այլ քաղկեդոնական եպիսկոպոսների անուններ մեզ հայտնի չեն:

Անիի քաղկեդոնական համայնքի ազգային կազմին անդրադառնալով՝ պետք է նշել, որ ամեն ինչից դատելով, այն ճնշող մեծամասնությամբ կազմված էր հայերից: Սակայն քաղաքում բնակվել են նաև վրացիներ: Չպետք է մոռանալ, որ քաղաքը Ջաքարե ամիրսպասալարի նստավայր էր, իսկ վերջինս, Վրաց արքունիքում գրաված բարձր պաշտոնի բերումով, անպատճառ վրացի գործակալներ՝ ձեռնավորներ ևս կունենար իր մոտ: Հայադավան Ջաքարեից հետո, նրա քաղկեդոնականություն

ընդունած ժառանգը, բնականաբար, ավելի շատ էր կապված Վրաց իրականությանը և անկասկած նպաստեց քաղկեդոնականների դերի աճին: Այս շրջանում բազմաթիվ վրացիներ են այցելել Անի (ազնվականներ, զինվորականներ, պաշտոնյաներ, առևտրականներ, ուխտավորներ), որոնցից ոմանք գուցե բնակություն են հաստատել քաղաքում: Սակայն այս մասին եղած փաստական տվյալները շատ աղքատիկ են: Տիգրան Յոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի վրացերեն մի արձանագրության մեջ հիշվում է Աստծո ողորմածությունը հայցող Նաթել անունով վրացուհին (Մուրադյան, 1985, 187):

Հարկ է նշել նաև, որ այս շրջանի մատենագրական և այլ սկզբնաղբյուրներում երբեմն հանդիպող «վրացի» կամ «ազգալ վրացի» արտահայտությունը մեծ մասամբ վերաբերում է հիշատակվող անձանց դավանական պատկանելությանը՝ պարզապես նշանակելով «քաղկեդոնական» (Մուրադյան, 1977, 22-25, Մառ, 1934, 144):

Հայտնի է, որ Հայոց եկեղեցու և քաղկեդոնականության հակադրությունն ու պայքարը շատ վաղ ծագում ունի: Այն սրված էր նաև մեր քննած ողջ ժամանակամիջոցում: Սակայն այս ծավալուն խնդրի արծարծումը դուրս է մեր նպատակից: Ավելի պատշաճ է այստեղ երկու խոսք ասել Անիի կրոնական կացության մասին, ուր տեսնում ենք երկու եկեղեցիների ոչ այնքան առձակատում, որքան հանդուրժողականություն և գործակցություն: Դրա վառ ապացույցն է նույն Ետիփան կաթողիկոսի վրացերեն արձանագիր «կարգավորության գրի» ավարտամասում տեղ գտած հայերեն հավելումը, որը հետևյալն է՝ «...Ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս, ես՝ Վահրամ ամիրայ քաղաքիս, վկայ ենք, որ կաթողիկոսին հրամանք է զայս» (Մուրադյան, 1977, 43-45, Դիվան, Ա, 61):

Հայոց եկեղեցու և քաղկեդոնականների փոխհարաբերություններում հետագա բարդություններից խուսափելու ձգտում պետք է տեսնել Ջաքարեի ձեռնարկած Լոռիի ու Անիի եկեղեցական ժողովների հրավիրման փաստի մեջ (վերջինի գումարման վայրի ընտրությունը թերևս պատահական չէր): Եվ որքան էլ որ հոգևորականության համար՝ թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից, կարևոր էին դավանաբանական խնդիրներն ու եկեղեցական ավանդությունների պահպանությունը, բայց հասարակ ժողովրդի աչքում Ջաքարեի կատարածը երևում էր որպես մի ձեռնարկ՝ **«վասն**



**միաբանութեան Բ(2) ազգաց»** (Ստեփանոս գրիչ), (Պողարյան, 1991, 95):

Հարևան քրիստոնյա ազգերի համերաշխ գործակցության ապագայի մտահոգությամբ էր Ջաքարեի խոստովանահայր Մխիթար Գոշը դավանական հանդուրժողականությունը ջատագովող թուղթ հղում Ջաքարյան եղբայրներին և նրանց միջոցով՝ Վրաց արքունիքին ու կաթողիկոսին: Թվում է, որ Ջաքարեից ու Գոշից հետո ևս հայ հասարակության մեջ իշխող մնաց դավանական հանդուրժողականության ոգին, և այդ է պատճառը, որ Անիի պատմության մեջ չենք գտնում դավանական տարբերության հողի վրա ծագած վեճերի ու անըմբռնողությանը վերաբերող հիշատակություններ: Հայաշունչ այս քաղաքում կողք կողքի խաղաղաբար ապրում էին Հայոց եկեղեցու հավատացյալները, քաղկեդոնական հայերն ու վրացիները և անգամ այլակրոն մահմեդականները:

#### ՄԱՅՄԵԴԱԿԱՆՆԵՐ

Մինչև Անիի 1064թ. սելջուկյան զավթումը, անեցիների շփումները մահմեդական աշխարհի հետ կրել են գլխավորապես առևտրատնտեսական բնույթ: Սակայն Ալփասլանի (Ալփ Արսլան) հայտնի արշավանքից հետո դրությունը հիմնավորապես փոխվեց: Քաղաքը ոչ միայն ծանրագույն հարված ստացավ, սելջուկների կողմից ավերվեց, կողոպտվեց, իսկ բնակչությունը մեծ մասամբ կոտորվեց ու գերեվարվեց, այլև դրանից հետո աստիճանաբար վերականգնվելով՝ բնակչության կազմում այդուհետև ունացավ մի նոր համայնք՝ հանձինս մահմեդականների:

Անիի պատմության այս նոր պատմաշրջանում, որը երբեմն կոչում են «սելջուկյան» կամ «Շեդդադյան» (մենք գերադասում ենք անվանել «ամիրայական տիրապետության շրջան»), կարևոր դեր էր վերապահված քրդական ծագում ունեցող **Շեդդադյան** (Շադդադյան) ամիրայական տոհմին: Դվինից Գանձակ տեղափոխված Աբուլասվար Շեդդադյանը, որն Անիին տեր դառնալու իր հավակնությունները բացահայտել էր դեռ Գագիկ Բ-ի թագավորության ժամանակ՝ մասնակցելով Ալփասլանի դեպի Անի կատարած արշավանքին 1065թ., նրանից քաղաքը ստացավ որպես տիրույթ և հանձնեց որդուն՝ երիտասարդ Մանուչեին

(Մարգարյան, 1980, 83, 87, Տեր-Ղևոնդյան, 1965, 213-214): Դրանով Անիում սկիզբ դրվեց Շեդդադյանների տիրապետությանը, որը փոքր ընդհատումներով շարունակվեց մինչև 1198թ.

Ստորև մենք չենք անդրադառնալու այդ ուշագրավ պատմա-շրջանի քաղաքական անցքերին, սոցիալ-տնտեսական իրավիճակին կամ մշակույթին, այլ պիտի փորձենք, ըստ պահպանված նյութերի, ներկայացնել Անիի մահմեդական համայնքը: Վերջինս գլխավորում էին հենց ամիրաները, որոնք իշխեցին հետևյալ հաջորդակարգով՝ Մանուչե (Մանուչիիր իբն Շավուր) 1065-1110, Աբուլասավար 1110-1124, Փատլուն Ա 1126-1132, Խուլշեր (կարճ ժամանակ), Մահմուդ, Շադդադ (մինչև 1155թ.), Փատլուն Բ 1155-1161, Շահնշահ 1164-1174, Սուլթան 1174-1198 (Տեր-Ղևոնդյան, 1965, 206-214, Մարգարյան, 1980, 83-118, Մինորսկի, 1953, 80-100, Թորոսյան, 1992, 469):

Լինելով մահմեդականներ՝ ամիրաները բնականաբար քաղաքում նպաստավոր պայմաններ ստեղծեցին առաջին հերթին իրենց հավատակիցների համար: Սակայն, նրանք հանդուրժողական կեցվածք ընդունեցին նաև քաղաքի հայ բնակչության նկատմամբ: Դրա պատճառը նախ այն էր, որ առանց հայության Անին չէր կարող ամուր ու շահավետ քաղաք լինել, և ապա՝ այստեղ որոշ դեր ուներ նաև Մանուչեի ծագումը, որը մոր կողմից հայ էր՝ Բագրատունյաց վերջին թագավորներից մեկի՝ Աշոտ Դ-ի թոռը<sup>64</sup>:

Մանուչեի՝ Անիում իշխանության գալու վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Վարդան Արևելցին (շատ հնարավոր է, որ այդ տեղեկությունները նա քաղած լինի Մխիթար Անեցու պատմության այժմ կորած հատվածից, քանի որ Ապիրատյան տոհմի մասին մինչ այդ իր հայտնածի կապակցությամբ ուղղակիորեն մատնանշում է Անեցուն (Վարդան, 1861, 127, 131), իսկ այս դեպքում կրկին մեծարանքով խոսվում է Ապիրատյանների մասին, որոնք, ի դեպ, Մխիթարի ժամանակ գլխավորում էին Անիի եպիսկոպոսությունը): Պատմիչը գրում է. «...տեր աւեր քաղաքին զՄանուչէ... յաւելու ի պարիսպն Անույ և յամրութիւնս նորա: Եւ ած ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանս: Եւ որպէս մեծաւ հանդեսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգորն զորդին Վասակայ՝ զթոռն Ապիրատին, զոր ասեն ունել ի գլուխս ազատականացն հինգ հարիւր թագս երևելիս, զի տէր էր մեծ

զօրաց և բազում ազատաց... **Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչինչ պակաս քան զառաջինն»** (Վարդան, 1861, 138):

Հայերի նկատմամբ բարյացակամ լինելով հանդերձ, Մանուչեն, բնականաբար, առաջին հերթին հենվում էր իր ցեղակիցների, ապա և կրոնակիցների աջակցության վրա: Շեղադասանների տոհմի վերելքին հետևելով՝ կարող ենք ասել, որ նրանց հիմնական հենարանը քուրդ զինվորականությունն էր (Տեր-Ղևոնդյան, 1962, 475-486): Մանուչեն ևս իր հետ պիտի ունենար ազգակիցներից կազմված զինական ուժ: Վարդան Արևելցին հիշատակում է Մանուչեի Անիում բնակվող ազգականներից մեկին՝ Կուրտ անունով, որն այստեղ թունավորել է Գագիկ Բ-ի թռռանը՝ Աշոտին (Վարդան, 1861, 141): Սակայն դատելով ժամանակի պատմական անցքերից, քրդական զինական ուժը քաղաքում շատ մեծ չէր: Նաև այս էր պատճառը, որ Մանուչեն Անի հրավիրեց զգալի զորական ուժի տեր Ապիրատյան Գրիգորին, որն իր հերթին հավատարմաբար ծառայեց Մանուչեին և կյանքն ավարտեց պատերազմի դաշտում, ամիրային փրկելով մահվանից (Վարդան, 1861, 145):

Ամիրայական տիրապետության շրջանում քրդերից բացի Անիում բնակություն են հաստատել նաև այլ ազգության մահմեդականներ: Դրանց թվում հավանորեն եղել են արաբներ, սելջուկ թուրքեր, պարսիկներ: Աղբյուրներում այս մասին շատ քիչ են վկայությունները, սովորաբար հիշատակվում է միայն կրոնական պատկանելությունը՝ մահմեդական: Մատթեոս Ուռհայեցին, պատմելով, որ 1126թ. Շեղադասանները Վրաց թագավորից վերստանալով Անին, երդվեցին այլևս ոտնձգություն չկատարել Մայր տաճարի նկատմամբ (որը մինչ այդ մզկիթի էր վերածվել), գրում է. «...վասն զի Սուրբ Կաթողիկեն, որ էր յԱնի, հանապազ Հայոց կայցէ և մի՛ մտցէ ի նա **Տաճիկ և այլ Սսիման ազգ»** (Ուռհայեցի, 1991, 400):

Ա. Տեր-Ղևոնդյանն, անդրադառնալով մահմեդականների տիրապետության տակ հայտնված քաղաքների ներքին կյանքին, որոշ բացատրություններ է անում, որոնք կիրառելի են նաև Անիի պարագայում: Նա գրում է. «Քաղաքներում ամիրայի կողքին կար նաև կրոնական համայնքի պետը, որը ծանոթ էր կադի՝ դատավոր անվամբ և վարում էր կրոնական ու դատական, ինչպես նաև «վակֆ» (կայունացված) կոչված անշարժացած նվիրատվությունների (մզկիթապատկան կամ այլ կալվածների գործերը...): Ամիրան առաջնորդվում էր շարիաթի օրենքներով, որոնք կիրառվում էին այդ քաղաքի մահմեդական ազգաբնակչության մեջ, իսկ բուն ժողովուրդն

առաջնորդվում էր իր վաղեմի կանոններով...» (Տեր-Ղևոնդյան, 1965, 251, 255):


1064թ. Անին գրաված սելջուկների առաջին զորներից մեկը եղավ քաղաքի քրիստոնեական գլխավոր կենտրոնի՝ Մայր տաճարի բարբարոսական կողոպուտը, որից հետո այն վերածվեց մզկիթի: 1072-1092թթ. ժամանակահատվածում քաղաքում մզկիթ կառուցեց Մանուչե ամիրան: Այս մասին պահպանվել է համապատասխան արձանագրություն արաբերեն լեզվով, ուր թեև կառուցման թվականը չկա, բայց հիշատակված է 1072-1092թթ. իշխած Մելիքշահը, ուստի այդ ժամանակով էլ թվագրվում է մզկիթը (Խաչատրյան, 1987, 53-54, 169): Մանուչեի մզկիթը Անիի ամիրայական տիրապետության շրջանի առաջին կառույցն է, որը կանգուն է մինչև օրս: Բուն շենքը, ինչպես նշում են ճարտարապետության պատմաբանները, Բագրատունյաց շրջանի աշխարհիկ նշանակության կառույց է եղել, որը վերակառուցվել, վերափոխվել է մզկիթի (Չարությունյան, 1964, 79-80, Չակոբյան, 1982, 94-96), իսկ նրա հյուսիսային անկյան մոտ կառուցվել է վերասլաց մինարեն:

Ինչպես ասվեց, մզկիթի էր վերածված նաև Մայր Տաճարը, բայց այն 1124թ. քաղաքը գրաված Դավիթ Շինարար թագավորի ներկայությամբ կրկին անգամ օծվեց, հաճնվեց Անիի Չայոց համայնքին և այդուհետև մնաց նրա տրամադրության տակ: Անիում մեկ այլ մզկիթ է կառուցվել ԺԲ դարում (հավանաբար դարավերջին): Համաձայն նրա վրա պահպանված մի պարսկերեն արձանագրության՝ այն Աբու-լ-Մամրան անունն էր կրում: Բուն մզկիթը վաղ է ավերվել, բայց նրա արևմտյան կողմում կառուցված հսկայական մինարեն կանգուն է մնացել մինչև ԺԹ դար: Կործանվելուց հետո տեղում մնում էին այս վեցանկյուն աշտարակի ամբողջական խոշոր բեկորները (Մառ, 1934, 91):

1255թ. Անի այցելած Ուիլյամ Ռութերուքը հայտնում է, որ քաղաքում երկու մզկիթ կար (Չակոբյան, 1932, 23): Այս վկայությունից, ինչպես և տեղում պահպանված Մանուչեի մզկիթի և Աբու-լ-Մամրանի ավերակների գոյությունից ելնելով՝ կարող ենք ասել, որ Անիում հենց երկու մզկիթ է եղել: Այս իրողությունը մի անուղղակի փաստ է քաղաքի մահմեդական համայնքի թվի մոտավոր սահմանները որոշելու համար:

Մահմեդական իշխողների շինարարական գործունեությունն Անիում չի սահմանափակվել մզկիթների կառուցումով: Մի քանի արաբերեն արձանագրություններ վկայում են պարսպի բուրգի (Մանուչեի բուրգ), միջնաբերդի մոտ գտնվող դարպասների

(կառուցող՝ Շադդադ ամիրա) և մի բաղնիքի շինարարության մասին (Խաչատրյան, 1987, 54, 56): Պահպանվել են նաև մահմեդականների՝ արաբերեն արձանագրություններով տապանաքարեր, որոնց արձանագրությունների մեծ մասը պարունակում է քաղվածքներ Ղուրանից: Դրանցից միայն երկուսն ունեն հանգուցյալների անունները՝ իբն Ռահիմ և Նիսան իբն Յանի (Խաչատրյան, 1987, 58, 59): Իսկ Սայր Տաճարից հարավ-արևմուտք գտնվող մի գերեզմանաքար ուխտավայր է եղել տեղի մահմեդականների համար, բայց նրա արձանագրությունը թերի է, և հնարավոր չէ պարզել, թե այն ում է պատկանել (Խաչատրյան, 1987, 58):



*Սանուչեի արաբերեն արձանագրությունը Անիի պարսպաբուրգերից մեկի կառուցման մասին:*

Անեցի նշանավոր մահմեդականներից էր սելջուկ իշխանագուն **Բուրհան ադ-Դինը**: Ծնվել է Անիում 1143թ., ականատես եղել 1161թ. Վրաց Գեորգի Գ-ի կողմից քաղաքի գրավմանը, որի ժամանակ գերվել ու տարվել է Տփղիս: Ս. Բուռնազյանը գրում է, որ այդ ժամանակ, այդքան երիտասարդ տարիքում, նա Անիի ղադին էր (Բուռնազյան, 1980, 69): Տփղիսում թագավորը տեղեկանալով ու համոզվելով, որ Բուրհան ադ-Դինը տիրապետում է վրացերենին, հայերենին, ծանոթ է Աստվածաշնչին՝ նրան ազատ է արձակում: Վերջինս գնում է Իկոնիայի սուլթան Իզզ ադ-Դին Քեյքաուսի մոտ, ջերմ ընդունելություն գտնում՝ դառնալով Իկոնիայի գլխավոր դատավորը, և այս սուլթանի պատվերով էլ գրում է մի պարսկալեզու ժամանակագրություն՝ «Անիս ակ-Կուլուբ» վերնագրով (Բուռնազյան, 1980, 14):

Անիի հիմնական հայ բնակչության և այլազգի մահմեդականների միջհամայնքային հարաբերությունների մասին կարող ենք դատել միայն հարակից վկայությունների միջոցով: Բնական է, որ այստեղ շատ բան էր կախված քաղաքի ամիրայի անձնական կեցվածքից: Օրինակ, հայերի հետ լավ հարաբերություններ հաստատած Մանուչեի հաջորդած նրա Աբուլասավար որդին ոչ միայն թույլ կառավարիչ էր, այլև այնքան անհեռատես գտնվեց, որ ոտնահարելով հայերի կրոնական զգացումները՝ նրանց հանեց իր դեմ, որի վերջնական արդյունքում զրկվեց իշխանությունից ու կյանքով հատուցեց (Վարդան, 1861, 156, Ուռհայեցի, 1991, 392): Վերջինիս Փատլուն որդին ևս որոշ հակահայ քայլերի դիմեց, բայցևայնպես հայ պատմիչը նրա մասին ասում է, թե «բարիոք խնամարկեալ քաղաքին և ամենայն սահմանացն՝ արիաբար ջանացեալ՝ արար խաղաղութիւն. առ և զԴուին և զԳանձակ և եղև անուանի» (Վարդան, 1861, 158):

Բնական է, որ քաղաքական կյանքի ելևէջները, իշխողների կամայական քայլերը և այլ գործոններ ազդել են նաև քաղաքի միջհամայնքային հարաբերությունների վրա: Սակայն, մյուս կողմից, հիմքեր կան ասելու, որ քաղաքային միջավայրը խաղաղ գոյակցության ու կրոնական հանդուրժողականության նախադրյալներ էր ստեղծում:

Քաղաքում տեղի էր ունենում մշակույթների մերձեցում, որի վկան են Անիի պեղումներից գտնված նյութերը (Մառ, 1934, 35-37): Այս առումով հատկանշական է նաև Բուրհան ադ-Դինի օրինակը, որն ինչպես տեսանք, ոչ միայն գիտեր հայերեն ու վրացերեն, այլև ծանոթ էր Աստվածաշնչին: Ավելի անսովոր դեպքի մասին է վկայում Վարդան Արևելցին՝ գրելով, որ Անիի Փաղլուն Ա ամիրայի եղբայրներից մեկը, իմանալով որ իր մեծ տատը (Մանուչեի մայրը) քրիստոնյա էր, թագավորական տնից, պատանի հասակում քրիստոնեություն է ընդունում, դառնում կրոնավոր, երկար ժամանակ ճգնավորություն անում, իսկ կյանքն ավարտում է Կիլիկիայի Դրագարկի վանքում, որպես տեղի միաբան (Վարդան, 1861, 161):

Այն իրավիճակներում, երբ հարցը վերաբերում էր քաղաքի ճակատագրին, Անիի այլակրոն համայնքները հաճախ հանդես էին գալիս միասնաբար՝ ի պաշտպանություն ընդհանուր շահերի: Սույն իրողությունը պարզորոշ երևում է 1161թ. Գեորգի Գ-ի կողմից Անիի գրավման ժամանակ, երբ անեցիները միասնաբար Վրաց թագավորին դիմադրություն են ցույց տալիս, իսկ վերջինս, բռնությամբ տիրելով քաղաքին, պատժում է թե՛ քրիստոնյաներին,

թե՛ մահմեդականներին. «**Թագաւորն Վրաց... առեալ զքաղաքն բռնութեամբ... սպան մարդ հազար ընդ քրիստոնէայ և ընդ այլազգի**» (Ուռհայեցի, 1991, 474): Այս կապակցությամբ Հ. Մարգարյանը գրում է. «Անիի պատմության այս դրվագում և, ընդհանրապէս, քաղաքի ճակատագրի համար բախտորոշ վճիռներ ընդունելիս, քաղաքացիները չէին ղեկավարվում նեղ դավանական նկատառումներով: Անիի տարադավան համայնքները (միաբնակներ, երկաբնակներ, մահմեդականներ) միահամուռ էին հանդես գալիս, երբ հարցը վերաբերում էր քաղաքի ազատության և քաղաքային ինքնավարության պաշտպանությանը» (Մարգարյան, 1980, 103): Հավանորեն նույնպիսի միասնականությունն ցուցաբերեցին անեցիները նաև 1186թ. Ծառաքարի դէպքերի ժամանակ, քանի որ, փաստորեն, մահմեդական ամիրայի իշխանության տակ գտնվելով հանդերձ, անեցի հայերը արշավելով գրավեցին բերդն ու կոտորեցին տեղի մահմեդականներին, որովհետև վերջիններս ավազակությամբ էին զբաղվում (Վարդան, 1861, 174)<sup>65</sup>:

Այս ուշագրավ դեպքը տեղի ունեցավ Անիի վերջին ամիրա Սուլթանի օրոք, որը, դատելով հարակից փաստերից, լավ հարաբերությունների մեջ էր քաղաքի հայ բնակչության հետ: Պատահական չէ, որ անեցի Տրդատ քահանան 1193թ. արձանագրության մեջ նրան կոչում է «բարիանուն Սուլդան» (Դիվան Ա, 47): Վերջինս իշխանության էր եկել 1174թ., այն բանից հետո, երբ Վրաց թագավոր Գեորգին գրավել էր Անին, ձերբակալել ու Վրաստան տարել Շահնշահ ամիրային (Վարդան, 1861, 169): Ինչպէս երևում է, այս պատճառով Սուլթանը տեղափոխվել է Թալին (Ներքին Թալին) ուր նույն 1174 թվականին կառուցել է տեղի միջնաբերդը, թողնելով համապատասխան արաբերեն արձանագրություն (Խաչատրյան, 1987, 46,166): Երկու տարի անց՝ 1176-ին Անին վերադարձվեց Շեղդադյաններին և Սուլթանը հաստատվեց քաղաքում: Իսկ նրա տիրապետությունն ավարտվեց 1198-ի վերջերին, երբ, հիշատակագրի վկայությամբ՝ «...փոխեցաւ Սուլտանն յԱնույ եւ տիրեցին քրիստոսաւէր զօրավարքն Հայոց եւ Վրաց՝ Ջաքարէ եւ Իւանէ» (Պողարյան, 1990, 605): Այս արժեքավոր հիշատակարանի շնորհիվ կարող ենք եզրակացնել, որ Անին Ջաքարյաններին է անցել Սուլթան ամի-

րայի մահից անմիջապես հետո և առանց ռազմական ընդհարման (Կ. Մ., 1997, 280-283):

Անիի հայերի ու մահմեդականների հարաբերությունները, թվում է, էական փոփոխություններ չկրեցին ամիրայական տիրապետության շրջանին հաջորդած ժամանակներում, երբ նախ՝ քաղաքին ու երկրամասին տիրացան Ջաքարյանները՝ վերականգնելով քրիստոնեական իշխանապետությունը, իսկ ավելի ուշ՝ Անին ու ողջ երկիրը զավթեցին մոնղոլները: Ջաքարյանների ժամանակ Անիի մահմեդականները հալածանքների չենթարկվեցին (Իսլամի հանր., 1960, 523): Իսկ 1236թ. մոնղոլների բարբարոսությանը զոհ գնացին քաղաքի բոլոր համայնքները: Այս դարաշրջանում բազում փորձություններ բաժին հասան քաղաքին, իսկ դարավերջին մոնղոլների հարկային քաղաքականությունը բացահայտ կողոպուտի երանգներ ստացավ, որից տուժում էին Անիի բոլոր համայնքների ներկայացուցիչները:

Դրությունը չփրկեց անգամ Աբու-Սայիդ Բահադուր խանի՝ 1330թ. հատուկ Անիի համար գրված ու այստեղ՝ Մանուչեի մզկիթի վրա պարսկերենով արձանագրված հրովարտակը, որով զգալիորեն թեթևացվում էին գանձվող հարկերը, և պահանջվում էր թույլ չտալ կամայականություններ (Մուրադյան, 1977, 58-59): Ուշագրավ է, որ տեղում այդ հրովարտակի հաստատմանը վերաբերող **եռալեզու** (պարսկերեն, հայերեն, վրացերեն) արձանագրություն է թողել քաղաքի վերջին Ջաքարյան իշխողներից մեկը՝ Շահնշահ Բ-ի որդի Ջաքարիա աթաբեկը: Վերջինս, դրանից մեկ տասնամյակ առաջ Անիում մոր՝ Խուանդզեի հետ որոշ հարկեր էր թողել, իսկ այդ մասին վկայող արձանագրության մեջ դիմում է քաղաքի **երեք հիմնական համայնքներին** գրելով. «...որ և զներ աւանդս խափանել ջանայ՝ **թէ հայ լինի, կամ վրացի, կամ տաճիկ**՝ հանէ դատի և դատապարտի յԱստուծոյ և վրացին կրուլ և անիծած լիցի և տաճիկն յամենայն փառաւորեալ փեղամբարաց ամաւթով և սելերես լինի...» (Դիվան, Ա, 27, Մուրադյան, 1977, 54-60):

ԺԴ դարում Անիի դրամահատարանում արծաթե դրամներ էին հատում մոնղոլ իշխողները: Պահպանվել են անգամ ԺԵ դարում կարակոյունլու թուրքմեն առաջնորդների Անիում պատրաստված դրամներ: Ուշագրավ է, որ քաղաքում Ջաքարյանների շառավիղները ևս հատել են պղնձե դրամ, որի վրա գրված է «Յանուն Յաւր եւ Որդւոյ եւ Յոգւոյն Սրբոյ» քրիստոնեական բանաձևը՝ արաբերեն լեզվով (Մառ, 1934, 42, 44):

ԺԵ դարի սկզբներին քաղաքին տիրում էին Լանկ Թեմուրի վասալները, որոնցից Դուլադայ Բեկին ու նրա որդուն հիշատա-



կում է 1405թ. աշնանը Սամարղանդից վերադառնալիս Անի եկած Կլավիխոն՝ Իսպանիայի թագավորի պատվիրակը, որը հյուրընկալվել էր քաղաքի միջնաբերդում: Սակայն Անիի բնակչության վաղուց ի վեր սկսված արտագաղթն, ինչպես երևում է, վերաբերվել է նրա բոլոր համայնքներին, և տեղում ապահովություն ու գոյատևման պայմաններ չգտնելով, ժամանակի ընթացքում, հայերի հետ միասին քաղաքից հեռացել են նաև նրա մահմեդական բնակիչները:

#### ԿԱԹՈՒԼԻԿ ՔԱՐՈՉԻՉՆԵՐ

Պատմական որոշ վկայությունների համաձայն՝ Անիում ժԳ դարի վերջերից գործունեություն են ծավալել Հռոմի կաթոլիկ եկեղեցու քարոզիչները: Նախ, նրանց Անիում հայտնվելու մասին ուշագրավ վկայություն է պահպանվել ֆրանցիսկյան միաբան Ուիլյամ Ռուբրուքի օրագրություններում: Վերջինս, Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Թ-ի հանձնարարականով, Մոնղոլիա՝ Մանգու խանի մոտ էր ուղևորվել 1253թ., իսկ վերադարձի ճանապարհին 1255թ. մի քանի օր մնացել է Անիում, հյուրընկալվել Շահնշահ Ա-ի մոտ, միաժամանակ, քաղաքում հանդիպել հինգ կաթոլիկ քարոզիչների: Այս մասին Ռուբրուքը մասնավորապես գրում է. «Փետրվարի 2-ին ես գտնվում էի Անի կոչված քաղաքում, որը պատկանում է Շահնշահին և որի դիրքը շատ զորավոր է: Այստեղ կան հայերի հազար եկեղեցիներ և արաբական երկու մզկիթներ...: Այստեղ ինձ մոտ եկան հինգ քարոզիչ եղբայրներ: Նրանցից չորսը եկել էին Ֆրանսիայի Պրովանսից, և հինգերորդը նրանց էր միացել Սուիրիայում, և նրանք մի հիվանդոտ ծառա ունեին, որ գիտեր թուրքերեն ու մի քիչ էլ ֆրանսերեն: Նրանք նամակներ ունեին տեր Պապից ուղղված Սարդաղին, Մանկու խանին և Բուրիին... պահանջով, որ իրենց արտոնվի մնալու նրանց երկրի մեջ և (թույլ տրվի) քարոզելու Աստծո խոսքը...: Երբ ես պատմեցի նրանց ինչ որ տեսել էի և ինչպիսի ընդունելություն էի գտել, նրանք մեկնեցին դեպի Տփղիս, ուր գտնվում էին իրենց եղբայրներից ոմանք, որպեսզի խորհրդակցեն նրանց հետ: Նրանց ասացի, թե շնորհիվ այդ նամակների, եթե փափագեն, կարող են գնալ, բայց պետք է զինվեն համբերությամբ..., չունենալով ուրիշ առաքելություն, քան քարոզելը՝ նրանք պետք է ցույց տան հազվագյուտ բարեկրթություն, մասնավորապես, քանի որ իրենք թարգման չունեն: Թե ինչ արին նրանք այնուհետև, ես չգիտեմ» (Հակոբյան, 1932, 23)<sup>66</sup>:

Այս արժեքավոր վկայության շնորհիվ կարող ենք համոզված ասել, որ մինչև 1255թ. կաթոլիկներն Անիում դեռևս քարոզչություն չէին անում և չունեին հենարան ու հետևորդներ: Իսկ Ռուբրուքի հիշատակած քարոզիչները ոչ թե եկել էին Անիում հաստատվելու, այլ այստեղ էին գտնվում ժամանակավորապես: Շատ հավանական է, որ նրանք Անիից մեկնեին Տփղիս, մանավանդ, որ հայերեն իմացող քարգմանիչ էլ չունեին: Այնուամենայնիվ, բնական է ենթադրել, որ իրենց կոչմանը հավատարիմ այս քարոզիչներն առիթը բաց չեն թողել Անիին ծանոթանալու, տեղի կյանքը զննելու համար, որպեսզի հետագայում դյուրությամբ ծավալեն իրենց գործը: Այն, որ կաթոլիկները կրկին վերադարձել են և նույն դարի վերջերին արդեն քարոզչություն էին անում Անիում, երևում է Ստեփանոս Օրբելյանի հայտնած մի տեղեկությունից: 1302թ. Սյունյաց միտրոպոլիտն իր «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկում կաթոլիկ եկեղեցու ազդեցության ընդարձակման մասին ցավով գրում է. «Կիլիկիա բոլոր, որ տեղի էր մեր պարծանաց, յայս (կաթոլիկ եկեղեցու դավանանքով) վարակեալ կայ. և գլխաւոր քաղաքք, որ ի Զոռոմք՝ ի սոյն մոլորեալ են և եհաս մինչև առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն՝ ի Տփղիս, և ի **հին Տունն Բագրատունեաց՝ յԱնի**, որ ի Շիրակ, նաև ի Թավրեժ շահաստան և յայլ բազում տեղիս» (Օրբելյան, 1756, 42-43):

Այսպիսով, ԺԳ դարի վերջերին ու ԺԴ դարի սկզբներին կաթոլիկներն արդեն բացահայտ քարոզչություն էին վարում Անիում: Հռոմի պապական գերիշխանությունը հաստատելու նպատակով կատարվող այդ գործունեությունը հիշյալ պատմաշրջանում ծավալվում էր երկու ուղղությամբ. առաջինն արտահայտվում էր Կիլիկիայի Հայոց թագավորի և Հայոց կաթողիկոսի վրա գործադրվող ճնշման ու դավանաբանական զիջումների պահանջի ձևով, երկրորդը՝ անմիջականորեն կաթոլիկ քարոզիչների միջոցով, որոնք Հռոմի դիվանագիտական ու նյութական հնարավորությունների վրա հիմնվելով՝ հաստատվում էին տեղերում և համայնքներ հավաքագրում: Նրանք հայերին համարում էին հերձվածողներ և, եթե հաջողվում էր, նրանց «դարձի էին բերում» կրկնամկրտությամբ (Օրմանյան, 1959, 1955-1957, Խաչիկյան, 1973, 146-154):

Կաթոլիկների ընտրած աշխարհագրական տարածքների ու նրանց համակիրների մասին Լ. Խաչիկյանը գրում է, թե նրանք «առաջին հերթին

հայտնվում ու հենակետ էին ստեղծում միջազգային տարանցիկ առևտրի հիմնական մայրուղիների վրա գտնվող այն վայրերում, որոնք նշանակալից դեր էին կատարում որպես ապրանքափոխանակության կենտրոններ և կարավանային երթևեկի կանգառներ: Ըստ այդմ էլ՝ նրանց հարում էին հասարակական այն շերտերը, որոնք ներգրավված լինելով միջազգային առևտրի ոլորտի մեջ՝ անմիջական շահ ունեին եվրոպական երկրների հետ տնտեսական և քաղաքական կապերի հետագա ամրապնդումից» (Խաչիկյան, 1973, 149): Չենց այդպիսի վայր էր Անին, ուստի պատահական չէ, որ կաթոլիկների ուշադրության կենտրոնում էր: Սակայն դժվար է ասել, թե որքանով նրանք հաջողություն ունեցան այստեղ: Համենայն դեպս Ստեփանոս Օրբելյանի վկայությունից բացի որևէ այլ փաստ չունենք Անիում կաթոլիկների գործունեության վերաբերյալ: Այստեղ հարկ է հիշել, որ 1307թ., երբ Սսի եկեղեցական ժողովում կիլիկյան արքունիքի ու բարձրաստիճան հոգևորականության ճնշման տակ ընդունվեցին Հռոմի դավանաբանական պահանջները, Անիի պատվիրակ Վարդան եպիսկոպոսը կտրականապես դեմ հանդես եկավ: Եվ եթե անեցիներն իրենց վերաբերմունքն այս հարցում համարձակորեն արտահայտում էին Սսում, ապա հնարավոր է ենթադրել, որ կաթոլիկ քարոզչության դեմ որոշ քայլեր ձեռնարկած լինեին նաև Անիում:

Ինչևէ, կռահումները կարող են բազմաթիվ լինել, բայց փաստերը սահմանափակ են: Մի բան միայն պարզ է, որ ի տարբերություն Անիի մյուս կրոնական փոքրամասնությունների՝ քաղկեդոնականների և մահմեդականների, կաթոլիկներն Անիի մշակութային ժառանգության մեջ որևէ իրական հետք չեն թողել:

## ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ

Եղե՞լ են արդյոք Անիում աղանդավորներ:

Այս հարցին այսօր դժվար է վերջնական ու միանշանակ պատասխան տալ: Քաղաքում, ինչ խոսք, կարող էին ծայտված աղանդավորներ, մասնավորապես՝ թոնդրակեցիներ լինել, բայց կաթոլիկոսանիստ, ապա եպիսկոպոսանիստ Անին այն վայրն էր, ուր եկեղեցին, գավառների համեմատությամբ, ավելի անմիջական ու մեծ իշխանություն ունենալով՝ չէր հանդուրժի աղանդավորության ծավալումն ու բացահայտ գործունեությունը:

Սրանից չորս տասնամյակ առաջ Աս. Մնացականյանը, քննության առնելով Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ու նրա սարկավագներից մեկին հասցեագրված երկու՝ Բ և Ժ թղթերը (Մագիստրոս, 1910, 4-7, 34-36), այն եզրակացության է եկել, որ դրանցում «կան որոշակի վկայություններ Անիում Պետրոս կաթողիկոսի դեմ բռնկված թոնդրակյան մի ապստամբության վերաբերյալ» (Մնացականյան, 1954, 70): Անդրադառնալով կաթողիկոսին գրված նաև մի երրորդ նամակի, ուր խոսվում է Պետրոսի դեմ ըմբոստացած Ներսես անունով հոգևորականի մասին (Մագիստրոս, 1910, 29)<sup>67</sup>, հեղինակը գրում է. «Այսպիսով տեսնում ենք, որ թոնդրակյան շարժումը թե՛ գաղափարական պայքարի և թե՛ ապստամբության ձևով ներս է թափանցած եղել նաև միջնադարյան Հայաստանի այնպիսի խոշոր քաղաքի պարիսպներից ներս, ինչպիսին էր Անին» (Մնացականյան, 1954, 72):

Բազրատունյաց մայրաքաղաքում թոնդրակյան շարժման գոյության և Պետրոս կաթողիկոսի դեմ նրանց բարձրացրած մի ինչ-որ «ապստամբության» մասին տեսակետը, որը հիմնված է միայն վերոհիշյալ նամակների քննության վրա, տեղ է գտել նաև Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ: Այստեղ Բ. Առաքելյանը, թեև սկզբում որոշ զգուշավորությամբ է խնդրին մոտենում՝ գրելով. «...11-րդ դարում տեղի են ունեցել որոշ անցքեր ... Բազրատունյաց մայրաքաղաք Անիում, որոնց վրա կարելի է նկատել **մի կողմից քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող խմբերի ներքին երկպառակության, մյուս կողմից թոնդրակյան շարժման դրոշմը**» (ՀԺՊ, 1976, 300), բայց հետո հանգում է այն եզրակացության, թե՛ «...Թոնդրակյան շարժման ազդեցությունը Անիի անցքերի վրա ակնհայտ է» (ՀԺՊ, 1976, 302):

Այս տեսակետն, ավելի վաղ, չի ընդունել միջնադարյան աղանդների պատմությանը հանգամանորեն անդրադարձած Ե. Տեր-Մինասյանը, սակայն նա հարցը մանրամասնորեն չի քննում պարզապես գրելով, որ Աս. Մնացականյանը «երբեմն աղբյուրների տեքստերից չբխող եզրակացություններ է անում՝ ավելի բան տեսնելով այնտեղ, քան իրոք կա» (Տեր-Մինասյան, 1968, 159): Մոտավորապես նույն կարծիքին է նաև Կ. Յուզբաշյանը, ըստ որի՝ նախ՝ ոչ մի հիմք չկա Անիի ժողովրդական հուզումները թոնդրակեցիների անվան հետ կապելու համար, և երկրորդ՝ հիմք չկա ասելու, որ Մագիստրոսի հիշյալ թղթերն ուղարկվել են Անի (Յուզբաշյան, 1988, 246): Առաջին կետում կարելի է համաձայնել

հեղինակի հետ, բայց երկրորդը, հատկապես դատելով թղթերի վերնագրերից, պետք է մերժել:

4. Յուզբաշյանը գտնում է, որ Մագիստրոսի Ժ թուղթը (հասցեագրված Պետրոսի սարկավագին) պետք է կապել ԿԷ և ԿԸ թղթերի հետ (որոնք վերաբերում են թոնդրակեցիներին)՝ գրված 1050-ական թթ., երբ կաթողիկոսը Սեբաստիայում էր, ապա ենթադրում է, որ նույն ժամանակով պետք է թվագրել կաթողիկոսին գրված Բ թուղթը (Յուզբաշյան, 1988, 246): Այս վերջին նամակը վերնագրված է հետևյալ կերպ. «**Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա. բան մխիթարական և հարցունն Անանիայի գրոց Շիրակայնոյն զոր մեծ Բննիկունն անուանեն**» (Մագիստրոս, 1910, 4), որն ընդհանուր առմամբ համապատասխանում է թղթի բովանդակությանը: Այստեղ Մագիստրոսը Պետրոսին պատահածի մասին մանրամասներ չի գրում, միայն մխիթարում է նրան, այսպես էլով «Արամյան անմտութիւնը», իսկ թղթի երկրորդ մասում շատ հանգամանորեն անդրադառնում է Շիրակացու Բննիկունին և խնդրում **կաթողիկոսարանում գտնվող** այդ երկից մի ընդօրինակություն կատարել ու իրեն ուղարկել: Դժվար է կասկածել, որ վերնագրում ասվածը՝ «ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա» վերաբերում է հենց Անիին ու անեցիներին՝ քաղաքային ամբոխին, որը ոչ միայն կարող էր նման հանդգնություն հանդես բերել, այլև դժգոհության պատճառներ ուներ, եթե նկատի ունենանք Պետրոսի քաղաքական վարքն ու գործերը: Նույն պատճառաբանությամբ դժվար է տարակուսել նաև Ժ թղթի՝ Անի ուղարկված լինելու հարցում, քանի որ այն գրված է «**ի ժամանակի խազմի խուժանին ի վերայ (Պետրոսի) յարուցեալ**» (Մագիստրոս, 1910, 34):

Այս երկու նամակները միմյանց հետ ավելի մեծ կապ ունեն թե՛ ժամանակով, թե՛ վերնագրերում ակնարկված դեպքերի առումով, քան միանգամայն այլ միջավայրի հետ կապված ԿԷ և ԿԸ թղթերի հետ: Միանգամայն այլ հարց է, թե արդյո՞ք հիշյալ հուզումները պետք է առնչել թոնդրակեցիների հետ: Ժ թղթի վերջաբանն այն հիմնական կռվանն է, որի վրա հենվելով ժամանակին՝ Աս. Մնացականյանը Անիի հուզումները վերագրել է թոնդրակեցիներին: Մագիստրոսն այստեղ դիմելով Պետրոսի սարկավագին (առ ոմն սարկաւագ տեառն Պետրոսի)՝ գրում է. «Կամիմ եթէ սուղ ինչ գրեցից առ քեզ յաղագս աղետի քակման, և երկնային երանելի կրօնից մերոց ներհակք չար յուզեցեալ յանօրէն և ի չար կիւտոյ Մանինեցւոցն և յայլոց բազմաց աղանդոց խրթնացեալ և նսենացեալ միգապատ կուրութեամբ աշխարհս այս: Զվսենական սրբագ-

նութեան լուսափայլութեան ճրագն շիջուցանել կամ գրէ եթէ ակն տունջեան ի սոսա երբէք ոչ ծագեալ, զոր ոչ ժամանեմք այժմ գրել. և միայն յուսամք առ Աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական և մոլեգնեալ հաղբից և խմորեալ զանգուածոյ Սաղուկեցւոցն անհաւատութենէ աղօթիւք և բարեխօսութեամբ մեծի մերոյն Լուսաւորչի» (Մագիստրոս, 1910, 35-36): Աշխարհաբարը՝ «Կամենում եմ մի փոքր գրել քեզ սանձագերծված աղետի և մեր երկնային երանելի կրոնի դեմ չարություն հարուցող անօրեն և կախարդ Մանիքեցիների և բազում ուրիշ աղանդների մասին, որ իրենց միգապատ կուրությամբ վրդովել ու ապականել են այս աշխարհը: Վսեմ սրբազնության լուսափայլ ճրագը մարել, միևնույն է, թե նրանց վրա արեգակի աչքը երբեք չի ծագել, որի մասին սակայն առայժմ չենք գրելու, այլ միայն հույս ունենք առ Աստված, որպեսզի Նա մեզ մեր զարմով հանդերձ փրկի այսպիսի դիվական և մոլեգին որոգայթից ու Սաղուկեցիների անհավատության խմորված զանգվածից, մեր մեծ Լուսավորչի աղոթքով ու բարեխօսությամբ»:

Ինչպես տեսնում ենք, խոսքն այստեղ վերաբերում է աղանդավորականության քննադատությանը: Բայց արդյո՞ք Անիի աղանդավորների, կամ եթե այո, ապա Մագիստրոսը չի՞ փորձել կաթողիկոսի դեմ բոլոր ըմբոստացածներին աղանդավոր ու անհավատ կոչելով, պարզապես, առավելագույն չափով վարկաբեկել նրանց: Պետք է նկատի ունենալ, որ դեպքերը վերաբերում են ԺԱ դարի 30-40-ական թվականներին, երբ Անիի կյանքը խիստ լարված ու քաղաքականացած էր: Այստեղ հնարավոր էին դարձել մինչ այդ չլսված բաներ, այդ թվում՝ կաթողիկոս Պետրոսի ձերբակալությունն ու բռնի հեռացումը Աթոռից, նոր կաթողիկոսի՝ Դեոսկորոսի օծումը, ապա՝ տարի ու կես անց վերջինիս աթոռանկ արվելը, քաղաքային ամբոխի հարձակումը նրա վրա, Պետրոսի վերականգնումն ու այս ամենի հետևանքով եկեղեցու պառակտումը և այլն: Թուլական Յովհաննես Սմբատին որոշ ընդմիջումից հետո հաջորդած տասնութամյա Գագիկ Բ-ի կարճատև թագավորության շրջանում դրությունն էապես չբարելավվեց, ավելին, առկա բազում խնդիրների մեջ ծնվեց մի նոր հակասություն, այս անգամ թագավորի ու ամենագորեղ իշխաններից մեկի՝ Գրիգոր Մագիստրոսի միջև: Ի վերջո այս ամենն ավարտվեց Յայոց թագավորության անկումով, որի մեջ մեղքի բաժին ունեին Անիի

հունասերները, որոնց աջակիցն էր Պետրոս կաթողիկոսը: Հասկանալի է, որ այս ողբերգական անցքերը թելադրված էին նախ և առաջ բյուզանդական զավթողական քաղաքականությամբ, որը գործադրում էր ամեն հնարավորությունն Բագրատունիներին գահազրկելու և Անիին տեր դառնալու համար:

Կարող էին նման ճգնաժամային պայմաններում Անի ներթափանցել աղանդավորական՝ մասնավորապես թոնդրակյան գաղափարներ՝ տեղում հետևորդներ ձեռք բերելով: Իհարկե կարող էին, բայց անհավանական է, որ թոնդրակեցիները մայրաքաղաքում ապստամբեին կաթողիկոսի դեմ: Նման մի ապստամբություն անմիջապես արյան մեջ կխեղդվեր հենց թագավորական իշխանության, կամ նրա բացակայության դեպքում՝ ազնվականության կողմից, իսկ այդպիսի փաստն անարձագանք չէր մնա պատմագրության մեջ: **Մենք հակված ենք կարծելու, որ Մագիստրոսի՝ Անի ուղարկված նամակներում կաթողիկոսի դեմ բարձրացած հուզումների մասին ակնարկները վերաբերում են քաղաքական հողի վրա կատարված իրադարձություններին:**

Նկատենք, որ Մագիստրոսը, լինելով Հայոց եկեղեցու դիրքի ու դավանության նախանձախնդիր անհատ, մշտապես մտահոգ էր նաև աղանդավորության տարածման պատճառով (ի վերջո հենց ինքն էլ զենքը ձեռքին պայքարեց աղանդավորների դեմ), և իր բազմաթիվ նամակներում խոսում է այդ մասին, մատնանշում թոնդրակեցիներից եկող վտանգը: Ուստի բնավ տարօրինակ չէ, որ ընդհանրապես աղանդավորության և մասնավորապես թոնդրակեցիների քննադատությանը վերաբերող հատվածներ կան նաև կաթողիկոսին ու նրա սարկավագին (ինչպես և այլոց) ուղղված թղթերում: Այսպիսով, մենք կարծում ենք, որ Մագիստրոսի վերը նշված Բ և Ժ թղթերի հիման վրա անհնար է միանշանակ կերպով պնդել, որ ԺԱ դարի առաջին կեսին Անիում ծավալվել էր թոնդրակյան շարժում՝ հասնելով ապստամբական դրսևորումների: Միևնույն ժամանակ, չենք բացառում, որ բազմամարդ ու սոցիալապես բազմաշերտ Անիում կարող էին որոշ թվով աղանդավորներ կամ նրանց համակիրներ լինել, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հիշյալ շրջանում քաղաքի բնակչությունը կտրուկ կերպով բազմանում էր ոչ այնքան բնական աճի, որքան տարբեր տեղերից եկող վերաբնակիչների միջոցով:

# ՄԱՍՆ Ք

## ԱՆԻԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Անիի գրչության կենտրոնի գործունեությունն ու դրա արդյունքում ստեղծված ձեռագրական ժառանգությունը քաղաքի հոգևոր-եկեղեցական կյանքի անմիջական արգասիքն էին: Հիրավի, մեզ հայտնի անեցի մատենագիրները, բանաստեղծներն ու գանձասացները, գրիչներն ու ծաղկողները, առանց բացառության, եկեղեցու սպասավորներ՝ հոգևորականներ էին: Իսկ քաղաքի ու նրա մերձակայքի վանքերն ու եկեղեցիները ոչ միայն զուտ եկեղեցական-կրոնական, այլև մշակութային կյանքի գործուն կենտրոններ էին իրենց ձեռագրական հավաքածուներով, դպրոցներով, գրչատներով: Այս է պատճառը, որ Անիի հոգևոր-եկեղեցական կյանքին նվիրված մեր ուսումնասիրությունը եզրափակելով՝ որպես բնական շարունակություն ներկայացնում ենք քաղաքի գրչության կենտրոնի պատմությունը:

Բազմակի ավերածությունների ու կողոպուտների ենթարկված Անիից քիչ թվով ձեռագրեր են հասել մեզ: Սակայն, չնայած ձեռագրական հսկայական կորուստներին, Անիից ու նրա շրջակայքի գրչատներից պահպանված մատյանները, քաղաքի գրչատների հետ առնչություն ունեցած (այստեղ նկարագարով, նորոգված, լրացված) ձեռագրերը, բազմաթիվ հիշատակարանները, հարակից տեղեկությունները թույլ են տալիս որոշակիորեն ուրվագծել քաղաքի գրչության կենտրոնի գործունեությունը:

Հարկ է նշել, որ Անիի նման խոշոր կենտրոնից համեմատաբար քիչ թվով ձեռագրեր պահպանված լինելու հետևանքով որոշ ուսումնասիրողներ դիմել են գանազան ենթադրությունների՝ քաղաքին վերագրելով այլ գրչատներում ստեղծված մատյաններ: Մասնավորապես Լ. Դուրնովոն և նրա հետևողությամբ Լ. Ազարյանը ենթադրել են, որ Սանդղկավանքը, ուր ժԱ դարի կեսերին մի շարք բարձրարվեստ մատյաններ են ստեղծվել,



գտնվել է Անիում (Դուրնովո, 1957, 22): Նույն այդ ձեռագրերին անդրադարձած Տ. Իզմայլովան դրանք վերագրում է Հաղբատին (Իզմայլովա, 1979, 181): Իրականում Սանդղկավանքը գտնվում էր Արշարունիք գավառում (Մաթևոսյան, 1971, 393-398):

Թ. Հակոբյանն իր «Անիի Պատմության» մեջ, առանց սկզբնաղբյուրներին ու առկա ուսումնասիրություններին պատշաճ կերպով ծանոթանալու հետևյալն է գրում. «Անիի դպրոցում գրված կամ ընդօրինակված ձեռագրերից մեզ շատ քիչ բան է հասել: Իսկ պեղումների ընթացքում ընդհանրապես ձեռագրեր չեն հայտնաբերվել: Դրանք հավանաբար զանգվածորեն ոչնչացել են թշնամական հարձակումների հետևանքով, կամ «գերեվարվել», տարվել են այլ երկրներ... Ցավոք պիտի նշել, որ Անիում ընդօրինակված կամ գրված ձեռագրերը մեզ համար մնում են անծանոթ և, հետևապես, դրանց նկարագարողման բնույթի մասին անհնար է որևէ բան ասել» (Հակոբյան, 1980, 336, 338): Այլ հեղինակներ ևս, հայտարարելով, որ Անին անպատճառ պետք է ունենար իր գրչության կենտրոնն ու ձեռագրերը, փաստական, հիմնավորող որևէ նյութ չեն ներկայացնում:


Սակայն այժմ մատենագրական, վիմագրական և հիմնականում ձեռագրական հայտնի ու նորահայտ նյութերի ի մի բերումով, վերջին տարիներին կատարված ձեռագրագիտական ուսումնասիրությունների արդյունքների և օժանդակ փաստերի համադրմամբ, կարելի է արդեն որոշակիորեն խոսել ոչ միայն քաղաքի գրչության կենտրոնի, գրչատների, այստեղ աշխատած գրիչների ու ծաղկողների, Անիի ձեռագրերի, այլև դրանց գլուխգործոցների մասին, ինչպիսիք էին Հաղբատի, Բագնայրի, Խծկոնքի Ավետարանները: Այս ամենի շնորհիվ Անին ներկայանում է որպես միջնադարյան Հայաստանի ձեռագրական մշակույթի խոշոր կենտրոններից մեկը:

Այժմ, մինչև Անիի գրչատներին ու ձեռագրերին անդրադառնալը, ծանոթանանք այն մշակութային միջավայրին, որի ընդերքում ծավալվել է գրչության կենտրոնի գործունեությունը:

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՎԱՎԱՅՐԸ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Անիի մշակութային միջավայրը ձևավորվել է քաղաքի կազմավորման հետ միասին՝ Բագրատունիների օրոք<sup>68</sup>: Գտնվելով հնամյա մշակութային ավանդներ ունեցող Շիրակ գավառում, շրջապատված լինելով երևելի վանական, մշակութային կենտրոններով, մայրաքաղաք հռչակվելուց քիչ անց դառնալով նաև կաթողիկոսանիստ՝ Անին շատ կարճ ժամանակամիջոցում հասավ մշակութային ծաղկման: Այստեղ ի սկզբանե հարգի էր գեղարվեստը: Բնութագրական են Թ. Թորամանյանի հետևյալ խոսքերը. «Անիի մեջ ամենահասարակ տներու դռներու և օջախներու վրա փորագրված գմայլելի քանդակագործությունները ցույց կուտան, որ այստեղ իշխաններու և ազնվականներու միայն հատուկ չէր տենչը դեպի գեղարվեստը, ամեն դասի ժողովուրդ վարակված էր անոր սիրով» (Թորամանյան, 1942, 319): Յ. Օրբելին ևս նկատել է «անեցիների ձգտումն ըստ հարմարության ամեն բան գարդարել որևէ կերպ» (Օրբելի, 1911, 30):

Քաղաքի ճարտարապետական կերպարն ընդհանրացնելով Ա. Ջարյանը գրում է. «Անիում ճարտարապետական ոճը ստանում է նոր իմաստավորում: Անցյալի հետ համեմատած փոխվում է միջավայրը, դառնում քաղաքային, փոխվում է չափանիշը, այն վեր է ածվում արքայականի: Այս դեպքում քաղաքը դիտվում է որպես արվեստի գործ» (Ջարյան, 1996, 137):



*Որմնանկարիչ Սարգիս Փառշիկ (Անիի Ս. Փրկիչ եկեղեցի)*

որմնանկարում պահպանվել է նաև հայ որմնանկարչության պատմության մեջ հայտնի՝ նկարչի հնագույն ինքնանկարը:

ճարտարապետության բուն վերելքի հետ կապված քաղաքում տարածված է եղել նաև որմնանկարչության արվեստը: Որմնանկարներ են ունեցել ինչպես մի շարք եկեղեցիներ, այնպես էլ աշխարհիկ շինություններ, ինչպես օրինակ Բագրատունյաց պալատը և Պարոնի պալատը: Իսկ Ս. Փրկիչ եկեղեցու 1193 թ.

Մատթեոս ավետարանչի պատկերի մոտ նկարված է ծունկի եկարծ արվեստագետն, իսկ կից մակագրված է. «Ս(ուր)բ աւետարանիչ Ք(րիստոս)ի բարեխաւսե՛ն՝ առ Ք(րիստո)ս **Սարգսի Փառշկանս**» (Ավագյան, 1986, 114, Կ. Մ., 1990ա):

Անին հայ մշակույթի պատմությանը տվել է ոչ միայն նյութական մշակույթի անզուգական կոթողներ, այլև կարևոր ներդրում ունեցել միջնադարյան հոգևոր մշակույթի զարգացման մեջ: Կաթողիկոսարանի՝ Արգինայից Անի փոխադրվելուց հետո այստեղ հաստատվեց նաև կաթողիկոսարանին կից գործող բարձր տիպի դպրոցը՝ վարդապետարանը:

Անիի մշակութային միջավայրի ծնունդն են մի շարք հայ մատենագիրներ: Նրանցից ավագը **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն** է, որն իր «Պատմութիւն տիեզերական» վերնագրով աշխատությունն ավարտել է 1004թ. Անիում աթոռակալող Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի պատվերով: Այս պատմիչին ենք պարտական Անիի պատմության բազմաթիվ արժեքավոր փաստերի պահպանման համար, սկսած քաղաքական անցքերի արձանագրումից մինչև քաղաքաշինություն (տաղանդավոր Տրդատ ճարտարապետի գործունեությունը Անիում, Արգինայում, Կոստանդնուպոլսում) և քաղաքային կյանքին վերաբերող զանազան մանրամասների վկայաբերում: Ասողիկը սերտորեն կապված էր մայրաքաղաքի իրականությանը, մասնավորապես կաթողիկոսարանին: Իր գործի հիշատակարանում, դիմելով պատվիրատու կաթողիկոսին, նա նշում է, թե վերջինիս հանձնարարությունները կատարելով՝ շրջել է վանքերը:

Պատմիչը կաթողիկոսարանի հետ կապված էր դեռ պատանեկան տարիներից, երբ Աթոռը գտնվում էր Արգինայում: Այդ երևում է նրա պատմության մեջ եղած որոշ ակնարկներից (Ասողիկ, 1885, 178): Ուսումնասիրողներից ոմանք ենթադրել են, թե՝ «Ստեփանոս Տարոնացին իր կրթությունը ստացել է Անիում...» (Ասողիկ, 1885, ԺԴ, Մելիք-Բախշյան, 1979, 157): Բայց ավելի հավանական է, որ նա եղել է Արգինայի վարդապետարանի շրջանավարտներից, իսկ հետագայում մշտապես կապված եղել կաթողիկոսարանին: Իր պատմությունը գրելիս նա օգտագործել է ոչ միայն հայ և օտար հեղինակների աշխատություններ, որոնց մասին հիշատակում է, այլև կաթողիկոսարանի դիվանի փաստաթղթեր, մամակներ և այլն: Ասողիկը կարևոր տեղեկություններ է հաղորդում Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին, որը նույնպես Անիի կաթողիկոսարանում էր գտնվում:

ԺԲ դարի հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչներից է Անիի վարդապետարանի շրջանավարտ, Հովհաննես Սարկավագի սան **Սամուել Անեցի**՝ Անիի Մայր տաճարի ավագերեցը, որն իր ժամանակագրությունը՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» վերնագրով երկը, կազմել է կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու պատվերով: Խոսելով 1126 և 1161թթ. Անիում տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ Անեցին նշում է, որ դեպքերին ականատես է եղել, իսկ ժամանակագրության շարադրանքն ավարտում է 1163 թվականով, ինչի մասին է վկայում պատմիչի երկի մեզ հասած հնագույն ընդօրինակությունը կատարված 1176թ. Կամրջածորի վանքում Ավետիս գրչի ձեռքով (ՄՄ, թիվ 5619) (Կ. Մ. 1992թ, 156-162): Բացի ժամանակագրությունից, Սամուել Անեցին հեղինակել է նաև տոմարագիտական աշխատություն (Աբրահամյան, 1952, 30-36), եղել ժամանակի ամենագարգացած ու հեղինակավոր անձանցից մեկը:

ԺԲ դարի վերջերին և ԺԳ դարի սկզբներին Անիի Կաթողիկեի փակակալն էր **Մխիթար Անեցի** պատմիչը: Հռոմի վանահայր Գրիգոր վարդապետի պատվերով գրված նրա պատմությունից, ցավոք, մեզ է հասել միայն սկզբի հատվածը (Մխիթար, 1983, 59-104): Մխիթար Անեցուն մեծ գովեստով է հիշում Ստեփանոս Օրբելյանը՝ նրան կոչելով «սուրբ քահանա» և «ավագերեց քաղաքին» (Օրբելյան, 1910, 332), իսկ Վարդան Արևելցին վկայում է, որ Անեցին զբաղվել է նաև թարգմանություններով. «թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայն Կաթողիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի ի պարսկէ միողէ Ոճիէ անուն, զոր ասէր թարգմանեալ ի յունաց ի պարսս» (Վարդան, 1861, 137-138): Այս մասին վկայում են նաև Մխիթար Այրիվանեցին և Առաքել Դավրիժեցին: Ուշագրավ է, որ լինելով պատմիչ՝ Մխիթար Անեցին նաև ինքն է պատմագիտական երկ պատվիրել: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Սյունիքի Ստեփանոս Գ եպիսկոպոսը Մխիթարի պատվերով գրել է Բաղաց (Սյունյաց) թագավորության կործանման պատմությունը, ընդ որում, աշխատությունը գրվել է հենց Անիում: Ցավոք, Ստեփանոսի աշխատությունը չի պահպանվել, բայց ժամանակին նրանից օգտվել է Օրբելյանը (Օրբելյան, 1910, 332):

Մխիթարից բացի հիշյալ շրջանում թարգմանությամբ է զբաղվել նաև մեկ այլ գիտուն անեցի՝ **Առաքել Վառ** վարդապետը: 1222թ. նա իր երկու գործընկերների՝ **Մխիթարի** ու **Շերանի** հետ, Անիի մոտակա Մաղասբերդ

ամրոցում, արաբերենից հայերենի է թարգմանել մի երազահան (ԺԳ, 131): Առաքել Անեցու անվան հետ է կապվում նաև մեկ այլ երկի՝ միջնադարյան Հայաստանում մեծ ժողովրդականություն վայելած «Պղնձե քաղաքի պատմության» թարգմանությունը (Մկրտչյան, 1992, 29-30):

Անիի մշակութային միջավայրը նպաստել է հայ միջնադարյան գրականության վերելքին: Բնորոշ է բանաստեղծ **Վարդան** վարդապետ Անեցու մեզ հասած միակ ստեղծագործությունը՝ «Անեցի Վարդան վարդապետի երգել ի կառս» ծայրակապ (աքրոստիքոս) խորագրով ներբողը, որի ստեղծման ժամանակը ենթադրվում է Ժ- ԺԱ դդ. (Մնացականյան, 1071, 261-292): Անեցու ստեղծածն այնքան բարձրարվեստ քերթվածք է, որ ուսումնասիրողներին ստիպել է այն համեմատության մեջ դնել Ժ դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հետ: Ա. Չոպանյանը, հիացած անեցի բանաստեղծի ներբողով, նշում է. «Ուրիշ Նարեկացի մըն է, որ ունեցեր ենք այդ Վարդանին մեջ... Անիի ճարտարապետությունն է, Անիի արուեստն է, Անիի հոգին է՝ բանաստեղծական ձևին տակ, զոր առաջին անգամ ըլլալով պիտի գտնենք այդ քերթուածին մեջ» (Չոպանյան, 1912, 74): Իսկ ներբողի որոշ հատվածներում, ինչպես Աս. Մնացականյանն է նկատում, երբեմն ուղղակիորեն զգացվում է մայրաքաղաքի շինարարական և արհեստավորական եռուզեռի ստեղծագործ շունչը.

Րաբուն իմանալի մեքենայիցն ձեռքդ չորս  
Որ ունի զվեմն անկեան  
Եւ զհամատարած լարն վիճակի,  
Որով շարժէ զճախարակ բրտի  
Եւ մատամբքն ոսկի յարիմէ զպարս աստեղացն,  
Որով հիւսէ զծիրանին եւ զերկնագոյնն...

(Մնացականյան, 1971, 283):

Անիում են ստեղծագործել գանձասաց բանաստեղծներ **Սարգիս Տավկանց Անեցին և Գրիգոր Անեցին**: Ավելի շատ գանձեր են պահպանվել Սարգսից: Դրանք հոգևոր երգեր են՝ կազմված երկարաշունչ տներից, սակայն միաժամանակ «համեմված են գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով» (Քյոչկերյան, 1971, 201-209): Հավանաբար այս Սարգիսը ԺԱ դարում Գրիգոր Մագիստրոսի թղթերում հիշատակվող Սարգիս վարդապետ Անեցին է՝ Անիի կաթողիկոսարանի մատենադարանապետը:

Անիում զարգացման բարձր մակարդակի էր հասել վիճագիր գրչությունը: Քաղաքի բազմաթիվ հուշարձանների պատերին պահպանվել են հարյուրավոր գեղեցիկ ու համաչափ, անգամ զարդագիր գրչությամբ արձանագրություններ: Վիճագիր գրիչների հեղինակությունն Անիում բավական մեծ էր և արձանագրությունների տակ նրանք փորագրում էին իրենց անունները: Հայ միջնադարյան վիճագիր գրչության ասպարեզում Անիի կատարած դերի մասին Ս. Բարխուդարյանը գրում է. «Ինչպես Բագրատունյան Անին էր կուլտուրայի օջախը, որտեղից այն տարածվում էր Հայաստանի այլ վայրերը, այնպես էլ գրիչների կուլտուրան ծավալվում էր այնտեղից: ...Ըստ վայրի ամենաշատ անուններ (գրիչների, Կ. Մ.) տալիս է Անին՝ 8, Հոռոմոսը՝ 7 և Բազմայրը՝ նույնպես 7...» (Բարխուդարյան, 1963, 204): Ինչպես արդեն նշել ենք, Անին, Հոռոմոսը, Բազմայրը, Արջո Առիճը մեկ միասնական մշակութային միջավայր էին ներկայացնում, հետևաբար, ընդհանրացնելով Ս. Բարխուդարյանի եզրահանգումը՝ կարող ենք ասել, որ հայ միջնադարյան վիճագիր գրչության ասպարեզում ամենից շատ վիճագիր գրիչների անուններ թողած կենտրոնն էր Անին: Այստեղ վիճագիր գրիչներն իրենց անուններն էին գրում անգամ թագավորների, կաթողիկոսների, եպիսկոպոսների արձանագրությունների տակ՝ մի բան, որ վկայում է նրանց արհեստի ու հենց նրանց նկատմամբ եղած մեծ հարգանքի մասին: Անիի մշակութային միջավայրում աշխատած վիճագիր վարպետներից աղբյուրներում հիշվում են **Գևորգ, Թովմա** (ԺԱ դար), **Հովսեփ** (ԺԲ դար), **Մանասե, Բենե, Ռայքիկ, Մարգարե, Խոցաղեղ, Իսրայել, Սարգիս, Սիմեոն, Եղբայրոս, Անանե, Խաչատուր, Դավիթ, Մխիթար** (ԺԳ դար), **Եսու, Սիմեոն, Պտուղ, Բուբարաք** (ԺԴ դար) անուններով գրիչները (Բարխուդարյան, 1963, 119-203): Նրանց մի մասը, դատելով անուններից, աշխարհականներ էին, մյուսները՝ հոգևորականներ, ինչպիսին էր, օրինակ, Մրենուն և Բագարանուն «Վահան քահանա գծող» ստորագրությամբ հայտնի վիճագիր գրիչը (Կոստանյանց, 1913, 11, 18): Հնարավոր է, որ վիճագիր գրիչներից ոմանք զբաղվել են նաև ձեռագրերի գրչությամբ:

Հետևելով Անիի մշակութային կյանքի ընթացքին Ժ-ԺԳ դարերում, կարող ենք ասել, որ Բագրատունյաց շրջանի վերելքին հաջորդած

պետականության անկումը (1045 թ.), Բյուզանդական կայսրության դավանաբանական համառոտնձգությունները, վերջապես՝ սելջուկյան լուծը, անկարող եղան ճնշելու Անիի մշակութային անկախությունը: Դա մեծապես պայմանավորված էր վերջնականորեն ձևավորված քաղաքային դասի զորացմամբ: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, «Ֆեոդալական շրջանի երկու խոշոր դասերի՝ ազնվականության և եկեղեցականության կողքին տնտեսապես, ապա և մասնավորապես բարձրանում և դիրք է ձեռք բերում նոր դասակարգը՝ հարուստ քաղաքացիությունը, որը նույնիսկ մրցում էր ֆեոդալների հետ» (Աբեղյան, 1970, 25):

Անիի քաղաքացիության ինքնուրույնությունն արտահայտվում էր ոչ միայն նրա տնտեսական դերով, այլև քաղաքի կառավարման գործում ունեցած որոշիչ մասնակցությամբ: Դրա լավագույն վկայությունը Անիի քաղաքացիների ավագների խորհուրդն էր, որը ժԲ դարում երբեմն ուղղակիորեն տնօրինում էր քաղաքի բախտը: Սակայն Անիի ձեռներեց ու ազատասեր քաղաքացիները նաև քաղաքային ինքնատիպ մշակույթի կրողներն էին: Տնտեսական հարաբերությունների և առևտրական կապերի ընդլայնման պայմաններում նրանք հարկադրված էին հետամուտ լինել իրենց մտավոր զարգացմանը՝ մեծ տեղ հատկացնելով ուսմանը, գիր ու գրականությանը:

Անիի մշակութային կյանքի հիմնական միտումներից մեկն աշխարհիկ ուղղվածությունն էր: Քաղաքում հարգի էին գուսանների երգն ու երաժշտությունը, թատերական խաղերը: Քաղաքային խավն ուներ իր աշխարհընկալմանը և կենսակերպին համապատասխան գրականություն ու արվեստ: Այս առումով հատկապես բնորոշ են ԺԳ դարում լայն տարածում գտած հայկական առակներն ու զրույցները, որոնք բազմաթիվ հետաքրքիր դրվագներ են պարունակում սոցիալ-տնտեսական հարաբերությունների, քաղաքային կյանքի ու կենցաղի, արհեստավորների ու առևտրականների գործելակերպի ու աշխարհայացքի վերաբերյալ (Թովմասյան, 1970, 401-460): Մշակույթի ոլորտում աշխարհական միտումների երևան գալու փաստն արձանագրելիս չպետք է անտեսել Անիի բուն իրականությունը, ուր կյանքի, կենցաղի, մշակույթի բոլոր բնագավառներում եկեղեցին ու հոգևորականությունը դեռևս անհասանելի առաջատարներ էին: Վերը ներկայացնելով Անիի մշակույթի հայտնի գործիչներին՝ տեսանք, որ նրանք բոլորն էլ հոգևորականներ էին:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ԺԱ-ԺԲ դարերում, բացառությամբ սելջուկյան հարվածին հաջորդած շրջանին (ԺԱ դարի 60-70-ական թվա-

կաններ), Անին ապրել է մշակութային հաստատուն կյանքով, պահպանել իր դպրոցներն ու վարդապետարանը, Կաթողիկեի գրչատունն ու մատենադարանը:

Ընդհանուր գծերով այսպիսին էր Անիի մշակութային միջավայրը, որի հենքի վրա էլ խարսխվում էր քաղաքի ձեռագրական մշակույթը: Անին, սակայն, ոչ միայն գրչության, այլև միջնադարյան Հայաստանի **ձեռագրապահպանման** խոշոր կենտրոններից էր, ուստի նախ ծանոթանանք քաղաքի և ներծակա վանքերի ձեռագրական հավաքածուներին:

### ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԳՐՔԱՐՎԵՍՏՈՒՄ

ԺԱ-ԺԴ դդ. Անիում և նրա մոտակա վանքերում մեծ թվով ձեռագրեր են պահվել: Դրանց զգալի մասը ոչնչացել է պատերազմների, կողոպուտների ու հրդեհների հետևանքով, մի մասն էլ տարվել է այլ վայրեր և բազում փորձություններից հետո հասել մինչև մեր օրերը: Քաղաքում տարբեր ընդգրկման ձեռագրական հավաքածուներ ունեին ինչպես առանձին եկեղեցիները, այնպես էլ Բագրատունիների արքունիքը և Հայոց կաթողիկոսարանը: Բնական է, որ մատյաններ են պահվել նաև բոլոր գործող և հատկապես այն եկեղեցիներում, ուր եղել են գրչատներ, բայց քանի որ վերջիններիս անդրադառնալու ենք հանգամանորեն, այստեղ կբավարարվենք սոսկ նրանց հիշատակմամբ:

**Անիի կաթողիկոսարանի (Մայր տաճարին կից) մատենադարանը** կազմավորվել է Արգինայի կաթողիկոսարանի ձեռագրական հավաքածուի հիմքի վրա, քանի որ կաթողիկոսարանի տեղափոխության ժամանակ մայրաքաղաք պետք է բերված լինեին նաև կաթողիկոսական դիվանն ու մատենադարանի ձեռագրերը: Ստեփանոս Տարոնեցին հաղորդում է, որ դեռ Արգինայում, Խաչիկ Արշարունին բազմաթիվ նոր ձեռագրեր էր պատվիրել կաթողիկոսարանի համար. «...նորոգեց գտուն կաթողիկոսարանին... **եւ զաստուածախօս կտակս յուլվակի ստացեալ, զԳիրս Սուրբս զառաքելասացս եւ զմարգարէաքարոզ պատգամս հանդերձ ամենայն վարդապետացն ծայնիւք**» (Ասողիկ, 1885, 185):

Անիի կաթողիկոսարանի մատենադարանում էր պահվում Անանիա Շիրակացու մատյանը՝ Քննիկոնը: Այդ մասին է վկայում Գրիգոր Մագիս-



տրոսի՝ Պետրոս Գետադարձին ուղղված նամակը, որով վերջինս կաթողիկոսից խնդրում էր ձեռագրի մեկ օրինակ (Մազիստրոս, 1910, 8-9):

ԺԱ դարի վերջերին Մայր տաճարում Հովհաննես Սարկավազի գրչական գործունեության մասին վկայող մի հիշատակարանում նշվում է, որ գիտնականը ձեռքի տակ բազում օրինակներ ուներ («**ի բազմաց աւիճակաց ի ձեռն...**») (Հովսեփյան, 1951, 595):

Մայր տաճարի մատենադարանը հարստացել է նվիրատվությունների շնորհիվ, որոնցից մի քանիսի մասին են վկայում եկեղեցու վիմագիր արձանագրությունները: 1213 թ. Տիգրան Հոնենցը տաճարին է նվիրել երկու Տոնական և Ագաթանգեղոսի Պատմությունը: Արձանագրության մեջ այդ գիրքը կոչվում է «Սուրբ Գրիգոր»: «Ես Տիգրան ... ետու նուէրք ի Սուրբ Կաթողիկէս ... **ետու երկու Տաւնական եւ Սուրբ Գրիգոր մին...**» (Դիվան, Ա, 34): 1235 թ. Ջուհալ Կարըցին (Կարսեցի<sup>6</sup>) Մայր տաճարին է նվիրել մի Ավետարան. «Ես Ջուհալս Կարըցի... միաբանեցա մեծափառ Սուրբ Կաթողիկէին եւ ետու Աւետարան, Էսայի...» (Դիվան, Ա, 35): 1236 թ. Նացուալ անունով մեկը տաճարին է տվել Հովհաննես գրչի 1181 թ. Հռոմոսի վանքում ընդօրինակած Ավետարանը: Ձեռագրի հիշատակարանում գրված է. «Ես նուաստ ծառայ Աստուծոյ Նացուալս՝ տվի զսուրբ Աւետարանս ի Սուրբ Կաթողիկէն ի յիշատակ ինձ եւ ննջեցելոց իմոց, ի ձեռն աստուածայապատիւ քահանայիցն՝ Դասապետին, Գերսամին, Սարգսի սերկեւագին» (ԺԳ, 1984, 197): Անիի Մայր տաճարին կից եղել է նաև գրչատուն:

**Անիի Բագրատունի թագավորների արքունիքի գանձատանը** գանազան թանկագին զարդերի ու մեծագին արժեքների հետ մեկտեղ պահվել են նաև ձեռագիր գրքեր: Դրանք, սովորաբար, ամենաընտիր ձեռագրերն էին, որոնք գեղարվեստական հարդարանքի, ինչպես և օրինակի կատարելության առումով կարող էին իրոք գանձ համարվել:

1259 թ. Վարդան Ուռնայեցի գրիչը, հիշատակարանում, իր ընդօրինակած ձեռագրի նախօրինակի մասին գրում է. «գրեցաւ... մատենաս... **ընտիր եւ լաւ աւրիճակէ**, որ կոչի Գրիգոր Մուրղանեցւոյ գրչի ճարտարի, **որոյ առեալ էր զաւրիճակն ի գանձատանէն Գագկայ թագաւորին Հայոց**» (ԺԳ, 1984, 296): Հիշատակարանից երևում է, որ ժամանակին ճարտար գրիչ Գրիգոր Մուրղանեցին Գագիկ թագավորի գանձատանը պահվող ձեռագրից է ընդօրինակություն կատարել և հավանաբար գործն իրականացրել է հենց արքունիքում:

Անիի արքունական գանձատանը պահվող մի ձեռագրի մասին տեղեկություն է պահպանվել Սարգիս վարդապետ Անեցու գրած

հիշատակարանում: Հեղինակը նշում է, որ 1041 թ., Հովհաննես Սմբատ թագավորի մահից հետո, գանձարանից մի գիրք է վերցրել: Ուշագրավ է նաև այն պատկերավոր նկարագրությունը, որով գրասեր հիշատակարանագիրը բնութագրում է թափուր արքունիքում գտնվող՝ անուշադրության մատնված գրքի վիճակը: «Յամի յորում էր Հայ թուականս ՆՂ (1041) եւ վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովաննէս, **գտի ես Սարգիս վարդապետ զգիրքս զայս յարքունական տան գանձուն,** անգեալ յանկեան միում, անայցելու թափառեալ թաւալէր յաճին յատակին, եւ գրեթէ լայր լռելեան, **իսկ իմ հայեցեալ խնամով ի գրանոցին,** եւ ըստ սովորական մեր ախորժակացս գյոքունս բացեալ ի բանսն բերկրեի, եւ սա զատուցեալ զընկերացն կայր՝ կարաւտ ձեռին առ ինքն կարկառելոյ. զոր ապա առեալ իմ ընդ իս տարա...» (ԺԳ, 87): Այս հիշատակարանից և մի քանի հարակից փաստերից ելնելով մենք այն եզրակացությանն ենք եկել, որ Սարգիսն այդ ժամանակ կաթողիկոսարանի մատենադարանապետն էր և մատյանը արքունի գանձատնից վերցնելով տարել է կաթողիկոսարանի գրանոց (Կ. Ս. 1992, 40-41): Բագրատունիների արքունիքում եղել է նաև թարգմանական գրականություն (պահպանվել է մի «Բժշկարան հաւաքեալ հրամանաւ թագաւորին Յովհաննէսի» (ՄՄ, թիվ 453, 323) :

Անիի արքունիքի պալատական կառույցների պեղումներից գտնվել են գրակալներ (Հակոբյան, 1980, 334):

**Անիի Ս. Փրկչի եկեղեցուն** ի սկզբանե գոյություն է ունեցել ձեռագրերի հավաքածու: 1036 թ. Աբլղարիբ Պահլավունին եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է, որ Ս. Փրկչին է նվիրել Ավետարան, Տոնական և հավանաբար իր նորոգել տված Հին և Նոր Կտակարանները. «Ես Ապլղարիբ մարզպան... ետու Աւետարան եւ Տաւնական եւ նո... Հին եւ Նոր Կտակարանաւք...» (Դիվան, Ա, 44-45): Մեկ այլ արձանագրության մեջ Ապլղարիբը սպառնում է նրանց, ովքեր կփորձեն եկեղեցու գրքերը հափշտակել՝ «գրենոյս յափշտակէ» (Դիվան, Ա, 46):

**Անիի Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցին** նույնպես ձեռագրական հավաքածու է ունեցել: Այստեղ 1037 թ. գրված արձանագրության մեջ նշվում են նրանք, ովքեր որևէ պատրվակով կփորձեն տեր դառնալ եկեղեցու գրքերին. «Արդ եթէ

որ սպասուցս եւ կամ ի գրեմոյս յափշտակէ զինչ եւ իցէ պատճառաւ ... նզովեալ լիցի» (Դիվան, Ա, 48-49):

**Քաղաքի Առաքելոց եկեղեցու** մոտ 1058թ. ոմն Գրիգոր խաչքար է կանգնեցրել և եկեղեցուն նվիրել մի Ավետարան: Արձանագրության մեջ Գրիգորը նշում է, որ ձեռագիրը գնել է 400 դրամով՝ «ես Գրիգոր... կանգնեցի Սուրբ Խաչ եւ ետ ինձ Աստուած միտք եւ ստացայ զԱւետարանս յիմ հալալ եւ յարդար վաստակէ գնեցի :Ն: (400) դրամ եւ է... [տ]վի ի Սուրբ Առաքելքս...» (Դիվան, Ա, 13): 1357թ. անեցի պարոն Ասիլն ու նրա կին Ըռուզ Խաթունը նորոգել և եկեղեցուն են նվիրել կիլիկյան մի արքունական Ավետարան (ՄՍ., թիվ 7664):

Առաքելոց եկեղեցու պեղումների ժամանակ գտնվել է մի փայտյա փորագրազարդ գրակալ, որի վրա պահպանվել է պատրաստման տարեթիվը՝ 1164թ., և արձանագրություն՝ «Յիշատակ է ի դուռն Սուրբ Առ[ա]ք[ե]լոց» (Անի, առարկ., 1982, 107):

**Անիի «Շախմատային» եկեղեցուց** հայտնի միակ արձանագրությունը հատվածաբար է պահպանված, հայտնի չեն գրողը և գրության ճիշտ ժամանակը, սակայն երևում է, որ այն շինարարական արձանագրություն է («Սուրբ տաճար հիմնարկեցի...») և գրված է Բագրատունիների օրոք («ի թագաւորութեանս Յայոց»): Արձանագրության վերջաբանից պարզվում է, որ եկեղեցուն մի շարք գրքեր են նվիրված եղել. «Բերի... **Մաշտոց, Ընթերցուած եւ կցո...** ես ետու ի Գրիգոր քահանա... Արդ եթէ որ զմեր ժամն խափանէ կամ զիմ գրոցն յեկեղեցոյս հանէ իմ մեղացս պարտական է» (Դիվան, Ա, 57):

1271թ. Անիի պարիսպներից ոչ հեռու գտնվող **Կարմիր վանքը** հիմնովին նորոգած Ուքան Քարիմադինը, նրա եղբայրն ու հարսը արձանագրության մեջ նշում են նաև ձեռագրերի նվիրատվության մասին՝ «...զվանքս... զարդարեցաք սպասիւք եւ **գրեմաւք...**» (Օրբելի, 1963, 474):

1246 թ. Թերան անունով անեցին մի Տոնական (ձեռագիրը գրված է եղել 1194 թ., այժմ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում՝ թիվ 110, հմմտ. Մատենադարան, մանրաժապավեն, թիվ 876) է նվիրել քաղաքի **Ս. Գրիգոր եկեղեցուն**<sup>69</sup>:

Անիում բնականաբար ձեռագրերի համապատասխան օրինակներ են եղել նաև այն եկեղեցիներում ու մշակութային կենտրոններում, ուր մատյաններ են ընդօրինակվել, ինչպիսիք են օրինակ Բեխենց վանքը, Ներքին բերդը, Ս. Գևորգ և այլ եկեղեցիները, ինչպես նաև ընդհանրապես բոլոր գործող

**եկեղեցիները, ուր Ավետարանների ու ծիսական մատյանների առկայությունը պարտադիր անհրաժեշտություն էր:** Վերն արդեն տեսանք, թե որքան բազմաթիվ էին Անիի եկեղեցիները, ուստի և դրանցում պահված մատյանների հսկայական թվի մասին կարող ենք միայն մոտավոր կռահումներ անել:

Դատելով Ս. Փրկիչ, Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու), «Շախմատային» եկեղեցիների շինարարական արձանագրություններից՝ կարող ենք ասել, որ Անիում նորաշեն եկեղեցիներին ձեռագրեր նվիրելն ընդունված սովորություն էր, և առաջին նվիրատուները սովորաբար հենց եկեղեցաշինարարներն էին լինում:

ԺԱ-ԺԴ դարերում ձեռագրական նշանակալից հավաքածուներ են ունեցել նաև Անիի մերձակա **Հռոռնոսի**<sup>70</sup>, **Բագնայրի**<sup>71</sup>, **Արջո Առիճի**<sup>72</sup> վանքերը, որոնք վարչականորեն, հոգևոր ու մշակութային առումով, ամենասերտ կապերի մեջ էին բուն քաղաքի հետ և փաստորեն մեկ ընդհանուր մշակութային միջավայր էին կազմում: Անիի մշակութային ազդեցության ոլորտում էին անգամ պաշտպանական նշանակություն ունեցող կենտրոնները, ինչպիսին էր, օրինակ, Մաղասբերդ կամ այլ աղբյուրներում Ծառաքար անունով հայտնի ամրոցը, ուր, ինչպես վերը տեսանք, Առաքել վարդապետ Անեցին երկու գործընկերների հետ թարգմանությամբ էր զբաղվում: Այստեղ կային նաև մի քանի եկեղեցիներ<sup>73</sup>:

Այսպիսով տեսնում ենք, որ Անին միջնադարյան Հայաստանի ձեռագրապահպանման խոշոր կենտրոններից էր: Քաղաքի ու նրա մերձակա վանքերի ձեռագրական հավաքածուները տարբեր ժամանակներում հարստացել են նվիրատվությունների ու նոր ընդօրինակությունների շնորհիվ կամ աղքատացել են պատերազմների ու կողոպուտների հետևանքով: Անիից ձեռագրերի հափշտակման գերության մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Հռոռնոսում Հովհաննես գրչի ընդօրինակած մի մատյանի հետագայի հիշատակարանում՝ գրված մոնղոլական ներխուժման տարում՝ «ի թուականիս Հայոց ՈՁԵ (1236), ի դժնդակ ժամանակի...», երբ «ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, զսրբութիւնս անարգեալ եւ **զգրեանս գերի վարեալ:** Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցաւրեա, բերաւ յաշխարհ Կիլիկեցւոց...» (ԺԳ, 198): Ձեռագրական անդառնալի կորուստներ են եղել նաև դրանից առաջ ու դրանից հետո: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, Անին շարունակում էր ձեռագրական մշակույթի կենտրոն մնալ ընդհուպ մինչև ԺԵ դարի սկզբները, երբ

այնտեղ գրչությամբ էր զբաղվում քաղաքի վերջին եպիսկոպոսը՝ իր գործի անխոնջ նվիրյալ Հովհաննես Ոսկեփորիկը:

Անիի առանձին գրչատներին և առավել նշանավոր մատյաններին անդրադառնալուց առաջ համառոտակի ծանոթանանք Ժ-ԺԳ դդ. հայ ձեռագրական մշակույթի ասպարեզում տեղի ունեցած տեղաշարժերին, որոնց կայացման մեջ էական դեր ունեին քաղաքների զարգացումը, քաղաքային ինքնատիպ մշակույթի ծաղկումը, որի գլխավոր կենտրոնը հենց Անին էր:

Հինգդարյա զարգացման ուղի անցած հայ ձեռագրական մշակույթը Ժ-ԺԱ դարերի սահմանագծում զգալի փոփոխություններ կրեց և նոր ձեռքբերումներ ունեցավ՝ կապված երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային ընդհանուր վերելքի հետ: Այս շրջանում ստեղծվում էին բովանդակությամբ ավելի բազմազան մատյաններ՝ ժողովածուներ, հարուստ թարգմանական գրականություն: Ձեռագրերն աճել էին քանակապես, կատարելագործվել էր դրանց գեղարվեստական հարդարանքը: Պատվիրատուների թվում սկսել էին հանդես գալ ոչ միայն հոգևորականներն ու ազնվականները, այլև քաղաքացիներ, ժողովրդական լայն խավերի ներկայացուցիչներ: Նույն պատմաշրջանում համանման երևույթ էր ծավալվել նաև Բյուզանդական կայսրությունում (Լիխաչովա, 1981, 102):

Հայտնի է, որ ձեռագրի ստեղծման աշխատանքի տարբեր փուլերում աշխատում էին զանազան մասնագիտությունների տեր մի շարք արհեստավորներ կամ արվեստագետներ՝ գրիչ, մանրանկարիչ, կազմարար, մագաղաթ և թուղթ կոկող, թանաքներ ու ներկեր պատրաստող, տողող, ոսկող և այլն: Հիմնական դերն իհարկե պատկանում էր գրչին, որը երբեմն կատարում էր ձեռագրի ստեղծման համար անհրաժեշտ բոլոր գործերը: Իրենց մասնագիտության մեջ հմտացած գրիչներից և մանրանկարիչներից, ինչպես և կազմարարներից շատերն ունեին աշակերտներ, որոնք այս կամ այն կերպ մասնակցում էին գրքի ստեղծման գործին: Կային առանձին գործող գրիչներ և գրիչներ, որոնք համատեղ աշխատում էին գրչության արհեստանոցներում՝ գրչատներում: Վերջիններիս աշխատանքի արդյունավետությունն անհամեմատ մեծ էր, և նրանք գործի դիմաց ստացած վարձատրությամբ էին հոգում իրենց ապրուստը:

Միջնադարյան քաղաքների ծաղկման պայմաններում, գրքի պահանջարկի մեծացման հետ միասին անհրաժեշտություն առաջացավ գրչության համար օգտագործել մագաղաթից ավելի էժան գրանյութ և ավելի դյուրագիր գրչություն քան երկաթագիրն էր: Տասներորդ դարի վերջերից հայ գրչության արվեստում կիրառություն ստացավ թուղթը, և լայն տարածում գտավ մանրատառ ու հեշտ գրվող բոլորգիր գրատեսակը:

Հայերեն հնագույն մատյանը, որն ամբողջությամբ գրված է թղթի վրա և միաժամանակ բոլորգիր գրչությամբ, 981 թ. Դավիթ քահանայի կազմած ու նրա որդի Ղուկասի ձեռքով գրված ժողովածուն է (ՄՄ, թիվ 2679): Դավիթը, փաստորեն, կազմել է մատենագրական, դավանաբանական, գիտական բազմազան նյութեր ընդգրկող մի «դասագիրք» և ժառանգել որդուն, ինչպես հիշատակարանում է գրում. «Ես Դավիթ... հաւաքեցի ի գիրսս յայս... ի ժառանգութիւն որդւոյ իմոյ Ղուկասու, որ գծագրեացս իսկ զսա» (ՄՄ, թիվ 2679, 154ա), ապա դիմելով հետագա ընթերցողին՝ նշում է. «որք ընթեռնուք եւ ուսանիք...» և այլն, այսինքն՝ իր մատյանը ընթերցելու և ուսանելու համար է նախատեսված<sup>74</sup>: Ձեռագրում տեղ են գտել շուրջ 50 հայ և օտար հեղինակների երկերից քաղված մեծ ու փոքր նյութեր: Առկա նյութերի մի մասը վերցված է Հայոց կաթողիկոսարանում եղած դավանաբանական բնույթի փաստաթղթերից ու ձեռագրերից, հետևաբար բուն ժողովածուն էլ կազմվել է կաթողիկոսարանից (Արգինա, Անի) ոչ հեռու, այսինքն՝ Անիի շրջանում (Մաթևոսյան, 1982, 1-6):

Միջնադարում թղթի արտադրության Մերձավոր Արևելքի նշանավոր կենտրոններից էին Եգիպտոսը, Բաղդադ և Դամասկոս քաղաքները: Ժ դարի վերջերին Հայաստանի և մասնավորապես Անի քաղաքի առևտրական կապերն այնքան ընդարձակ էին, որ թղթի ներմուծումը հարևան արաբական երկրներից մեծ դժվարությունների հետ չէր կապված: Սակայն, ինչպես պարզվում է, այդ ժամանակ թուղթ պատրաստում էին նաև Հայաստանում: Հայերեն հնագույն թղթե ձեռագրի գրանյութի ֆիզիկաքիմիական քննության արդյունքները խոսում են այն մասին, որ թուղթն ու թանաքը պատրաստված են աշխարհագրական նույն միջավայրում այնտեղ, ուր աշխատել է գրիչը: Լ. Խաժակյանը, ելնելով ՀԳԱԱ երկրաբանության ինստիտուտի սպեկտրալ լաբորա-

տորհայում և Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի անալիտիկ լաբորատորիայում կատարված համապատասխան վերլուծություններից՝ եկել է այն եզրակացության, որ 981 թ. թուղթը, ձեռագրի կազմից հանված բամբակե թելը և թանաքը պատրաստվել են նույն աշխարհագրական շրջանում (Խաժակյան, 1984, 167-168): Եթե ձեռագրի ստեղծման համար անհրաժեշտ թուղթը ներմուծված լիներ, ապա պետք է ներմուծված լինեին նաև թելն ու թանաքը, մի բան, որ գրչության գործի բարձր զարգացման հասած երկրի համար պարզապես անհավանական է, մանավանդ, որ թանաքը սովորաբար պատրաստում էին գրչատներում, մեծ մասամբ հենց իրենք՝ գրիչները: Ավելացնենք նաև, որ 981 թ.-ից մինչև դարավերջ (1000 թ.) Հայաստանից թղթյա չորս ձեռագիր է պահպանվել<sup>75</sup>, հանգամանք, որ վկայում է այդ գրանյութի լայն կիրառության մասին: Շատ հավանական է, որ հայ միջնադարյան թղթի արտադրության անդրանիկ կենտրոնը ժամանակի խոշորագույն արհեստավորական քաղաք Անին էր<sup>76</sup>:

Ինչպես նշվեց, հայերեն հնագույն թղթյա ձեռագիրը նաև բոլորագիր գրչությամբ գրված հնագույն մատյանն է: Բոլորգիրն ստեղծվել է երկաթագրի հետ միաժամանակ, սակայն սկզբնական շրջանում օգտագործվել է առօրյա գրագրությունների համար: Վաղ միջնադարյան վիճագիր արձանագրություններում, ինչպես և հայերեն հնագույն թվակիր ձեռագրում («Լազարյան Ավետարան» 887թ. ՄՄ, թիվ 6200) երկաթագրի հարևանությամբ երբեմն հանդիպում են բոլորգրով գրված տառեր (Ղաֆադարյան, 1939, 4, 23): Ժ դարի կեսերից գրանյութի խնայողության և «դյուրատար գրքեր ունենալու պահանջը ստիպում է հետզհետե փոքրացնել խոշոր տառերը» (Աճառյան, 1984, 617): Բազմաքանակ են դառնում ուղղագիծ երկաթագրով գրված մատյանները, իսկ դարավերջին ձեռագրերի գրչության համար կիրառվում է նաև բոլորագիրը: Վերջինս ԺԳ-ԺԴ դարերում դառնում է հայ գրչության մեջ գերիշխող գրատեսակ: Հնագույն թղթյա ձեռագրում առկա են նաև փոքրաթիվ երկաթագիր տառեր, որոնք հիմնականում օգտագործվում են որպես գլխագիր՝ նոր հատվածների կամ պարբերությունների սկզբում:

Այսպիսով, Ղավիթ քահանայի կազմած ժողովածուն ոչ միայն իր գրանյութով ու գրատեսակով, այլև պարունակած հարուստ բնագրերով հայ մշակութային կյանքում ու ձեռագրական

արվեստի բնագավառում ծագած նոր միտումների ու ժամանակի պահանջների արտահայտությունն է հանդիսանում: Թղթյա ձեռագիրը հայ գրչության արվեստի ընդհանուր զարգացման արդյունքն է: Վերջինիս ստեղծումը սերտորեն կապվում է արհեստների ու առևտրի զարգացման, սոցիալ-տնտեսական բնույթի վերափոխությունների ու մշակութային վերելքի հետ, որի ամենանշանավոր բնօրրաններից էր Անի մայրաքաղաքը:

Ինչպես վերը նշվեց, թղթյա ձեռագիրը գրված էր ոչ թե որևէ մեկի պատվերով, այլ անձնական օգտագործման համար. Դավիթը ժողովել էր նյութերը, որդին՝ Ղուկասը, գրել ու ընդօրինակել էր հենց իր համար: Ուշագրավ է, որ անձնական օգտագործման համար ստեղծվող մատյանի նման սկզբունքը (թղթի ու բոլորագրի կիրառությամբ) օրինաչափ շարունակություն է ունեցել Անիի գրչության կենտրոնում: 1187 թ. Զոռնոսում աշխատող Զովհաննես գրիչն ընդօրինակելով Բարսեղ Կեսարացու ճառերը՝ հիշատակարանում նշում է, որ ինքը նաև ստացողն է. **«զՅովաննես զաշխատասիրողս և զստացողս յիշեսցիք ի Տէր»** (Պողարյան, 1972, 162): Ձեռագիրը գրված է թղթի վրա՝ բոլորգրով (Զովհաննեսի մեզ հայտնի մյուս երկու մատյանները, որոնք պատվերով են գրված, մագաղաթի վրա են՝ երկաթագիր և բոլորգիր գրչությամբ): Նույն շրջանում Մխիթար Անեցի գրիչը Զոռնոսում ընդօրինակում է Սամուել Անեցու ժամանակագրությունը, անձնական օգտագործման համար՝ հիշատակարանում նշելով. **«Ձմեղաւոր ստացաւոս և զաշխատաւորս զՄխիթար... յիշել աղաչէմ»** (Զովսեփյան, 1951, 675), դարձյալ թղթի վրա՝ բոլորգիր գրչությամբ:

Այդ ժամանակաշրջանից ի վեր, Զայաստանում դեռ երկար շարունակվեց թղթի և մագաղաթի զուգահեռ օգտագործումը (երբեմն թուղթ և մագաղաթ էր օգտագործվում մեկ ձեռագրում, ինչպես օրինակ՝ Անիի Ներքին բերդի 1298 թ. Ավետարանում), սակայն մինչև տպագրության գյուտի կիրառությունը, դեռևս չկատարելագործված թուղթ գրանյութն ի վիճակի չէր առաջնությունն ամբողջովին խլել մագաղաթից: Ինչ վերաբերում է բոլորգրին, ապա այն ԺԳ- ԺԴ դարերում դարձավ գրչության մեջ տիրապետող գրատեսակ, իսկ հետագայում նաև տպագրության գիր:



Հայ քաղաքային կյանքի ծաղկման հետ կապված՝ գրչության ասպարեզում, ձեռագրերի առք ու վաճառքի գործում նկատելի տեղաշարժեր եղան ԺԳ դարի սկզբներին: Ձաքարյանների օրոք Հայաստանի տնտեսության մեջ հանդես եկան նոր երևույթներ՝ առևտրի առարկա դարձավ ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքի մի մասը, այլև հողը, ջուրը, այգիները, ամբողջ բնակավայրեր՝ գյուղեր, ավաններ, անգամ քաղաքներ, արտադրական հաստատություններ՝ ձիթհաններ, ջրաղացներ, արհեստանոցներ, հյուրանոց-պանդոկներ, ամեն տեսակի այլ ունեցվածք (ՀԺՊ, 1976, 581): Մեծապես աճեց դրամի դերն ու դրամական շրջանառության ոլորտը:

Նման պայմաններում մասամբ նոր հիմքի վրա էր դրվում ձեռագրի ստեղծման գործը, քանի որ մի կողմից աճել էր պատվիրատուների թիվը, մեծացել գրքի պահանջարկը, մյուս կողմից՝ «գիրք պատրաստելու հետ կապված մի քանի արհեստներ դարձել էին ապրուստի միջոց...» (Առաքելյան, 1958, 351): Եթե նախկինում ձեռագրեր էին գրվում ստացողի նախնական պատվերով, ապա այժմ ստեղծվում էին գրքեր նաև առանց պատվերի՝ վաճառքի համար: Վաճառքի նպատակով ստեղծված ձեռագրի գրչությունից անմիջապես հետո հիշատակարան չէր գրվում: Երբեմն այն չէր նկարագարվում, մինչև որ գտնվեր համապատասխան գնորդ: Դրանից հետո ձեռագիրն ստեղծողների և գնորդի փոխադարձ պայմանավորվածությամբ որոշվում էր նկարագարողման ծավալը, ոսկու կիրառման չափը: Ըստ գնորդի հայեցողության, արդեն գրված մատյանը կարճ ժամանակում նկարագարվում և նրան էր հանձնվում: Հենց այդ ժամանակ էլ գրվում էր հիշատակարանը:

Վաճառքի համար նախատեսվող ձեռագրերը սովորաբար գրվում էին բուրգի գրչությամբ, որով գրելն ավելի հեշտ և արագ էր: Գրչատների աշխատանքի արդյունավետացման համար էական էր արհեստների զարգացման, առևտրական կապերի ընդլայնման դերը: Արդեն պարտադիր չէր, որ ամեն մի գրչատուն մագաղաթ, թուղթ, թանաք և գրչության համար անհրաժեշտ այլ նյութեր պատրաստեր: 1185 թ. Սաղմոսավանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Մարկոսը խնդրում է հիշել Քառասունք անունով մի կրոնավորի, որը գրքի կազմի նյութը բերել էր Տփղիսից, իսկ օղն ու կոճակը՝ Անիից. «Ձեղբայրն մեր

Քառասունքն... որ զնիւթ կազմութեան սորա եբեր ի Տփխեաց և զաւղ և կոճակ յԱնոյ... իշէք» (Յովսէփյան, 1951, 509):

Պատահում էր, որ ձեռագրի պատվիրատուն մատյանը գրել էր տալիս մի գրչատանը, իսկ նկարագարդման և կազմելու համար՝ տանում էր այլ գրչատներ (այդպես է վարվել անեցի Սահակը 1211 թ. իր պատվիրած ձեռագրի խնդրում): Քաղաքային միջավայրում ձեռագրերի գրչության ու վաճառքի գործում կատարված տեղաշարժը սուսկ հայկական երևույթ չէր (Կիսելյովա, 1978, 47): Բայց քաղաքային գրչությունը Հայաստանում ուներ իր առանձնահատկությունները (դրանց կժանոթանանք ստորև՝ Անիի Բեխենց վանքի գրչատանը նվիրված բաժնում): Ընդհանուրը սակայն այն է, որ հատկապես **ԺԳ դարում Հայաստանում աննախադեպ պահանջարկ էր վայելում ձեռագիր գիրքը, գրչությունը դարձել էր մասսայական արհեստ՝ իր հերթին զարկ տալով գրքաստեղծման գործի հարակից արհեստներին:** Այս շրջանում, զուտ վաճառքի համար նախատեսված մատյանների ի հայտ գալը պայմանավորված էր նաև նոր պատվիրատուի հանդես գալով, որն այլ ոք չէր, քան քաղաքային դասի ներկայացուցիչը:

Անիի մեզ հայտնի գրչատները գործել են գլխավորապես եկեղեցիներին կից: Իհարկե ձեռագրեր կարող էին գրվել նաև այլ վայրերում: Հայ գրչության պատմությունից հայտնի է, որ գրիչը կարող էր ձեռագիր ընդօրինակել որևէ գյուղում, քարայրում, տանը, անգամ՝ «ի վերայ ծովու՝ ի նաւարկութեան» (ԺԳ, 76) : Սակայն ոչ թե առանձին գրիչների, այլ հստակ կազմակերպված վանական գրչատների աշխատանքն է սովորաբար որոշիչ դեր կատարել թե՛ հայ և թե՛ քրիստոնեա այլ ժողովուրդների գրչության արվեստի զարգացման գործում (Լիխաչովա, 1976, 31-165, Սթենոն, 1973, 137-148):

Անիից մեր օրերը հասած ձեռագրերը ստեղծվել են քաղաքում տարբեր ժամանակաշրջաններում գործած մի քանի գրչատներում: Դրանցից են կաթողիկոսարանին կից գործող Մայր տաճարի գրչատունը, Բեխենց վանքի, ինչպես և քաղաքի արվարձանում գտնվող Հռոմոսի վանքի գրչատները: Ձեռագրեր են գրվել նաև Անիի Ներքին բերդում, Ս. Գևորգ և այլ եկեղեցիներում:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳՐՉԱՏՈՒՆԸ

Միջնադարում, որտեղ էլ որ հաստատված է եղել Հայոց կաթողիկոսարանը (Վաղարշապատ, Դվին, Անի, Յոթնկլա, Սիս), նրան կից գործել են կաթողիկոսական դիվանն ու գրչատունը: Ինչպես արդեն նշել ենք, կաթողիկոսարանն Արգինայից Անի տեղափոխվեց Սարգիս Սևանցու աթոռակալության սկզբներին, որից հետո, մինչև 1046 թ., Անիում աթոռակալեց Պետրոս Գետադարձը:

Անիի կաթողիկոսարանի գրչատան մասին խոսելիս ձեռքի տակ ընդամենը մեկ ձեռագիր ունենք, որը վերագրվում է Անիի գրչության կենտրոնին, սակայն կան նաև մի քանի մատենագրական վկայություններ, որոնք մասամբ լրացնում են այս գրչատան վերաբերյալ ունեցած մեր պատկերացումները: Անիի կաթողիկոսարանի դիվանում են կազմվել ժամանակի Հայոց եկեղեցական կյանքը կարգավորող բազում գրություններ, շրջաբերականներ և այլն: Դրանցից մեկը Սարգիս Սևանցու 1007 թ. Սյունիք ուղարկված շրջաբերականն էր, որն իր երկում ամբողջովին մեջ է բերում Ստեփանոս Օրբելյանը տեսն (ծանոթագրություն 8):

Մատթեոս Ուռհայեցին գրելով այն մասին, որ բյուզանդացիները Կոստանդնուպոլիս են կանչում Պետրոս Գետադարձին՝ կաթողիկոսի ուղեկիցների թվում հիշատակում է նաև «անպարտելի» գրիչ Թադեոսին. «Թադեոս՝ որ էր անպարտելի գրչութեամբ...» (Ուռհայեցի, 1869, 123): Անիի կաթողիկոսարանում Թադեոս հռչակավոր գրիչը, բնականաբար, հենց գրչությամբ պետք է զբաղված լիներ:

Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին հասցեագրված մի նամակից կարող ենք ենթադրել, որ Անիի կաթողիկոսարանի գրչատանն ընդօրինակվել է Անանիա Շիրակացու Քննիկոնը: Դիմելով կաթողիկոսին՝ Մագիստրոսը խնդրում է. «Զգիր Անանիայի Շիրակայնոյ... յորում և ենթակայեցեալ են ոչ միայն Քառիցն արիեստք, այլ բոլոր էակացն խոկմունս որ են այժմ ի տան տէրունեան... եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ, զնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ ենք, և դիւրին վերձանեալ հասցուք ըստ կարողութեան,

**զի մի յերկոցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան...»** (Մագիստրոս, 1910, 8-9):

Մագիստրոսն Անիում եղած ժամանակ ծանոթ է եղել Շիրակացու և դարի մատյանին՝ Քննիկոնին, որը գուցե այնքան էլ դյուրընթեռնելի չի եղել: Այդ պատճառով էլ կաթողիկոսին խնդրում է «նորագոյնն» ընդօրինակել տալ՝ «դիրին վերծանեալ», որպեսզի ընթերցելիս ստիպված չլինի տեսողութիւնն ու միտքը լարել: Մագիստրոսը շուտով ստացել է իր խնդրածը, որովհետև երկու ուրիշ նամակներում (ուղղված Սանահինի միաբաններին և իր Բարսեղ ու Եղիսե աշակերտներին) որոշակիորեն ակնարկում է Քննիկոնի պարունակած նյութերի մասին (Մագիստրոս, 1910, 105, 136-137): Այսպիսով, Անիի կաթողիկոսարանում պահվող ձեռագիրը հենց տեղում էլ ընդօրինակվել է, իսկ Գրիգոր Մագիստրոսը քաջ գիտեր կաթողիկոսի տնօրինության տակ գտնվող ոչ միայն մատյանի, այլև գրչատան մասին. դրանով կարելի է բացատրել նրա պահանջը՝ դյուրընթեռնելի ընդօրինակության համար<sup>77</sup>:

Անիից մեր օրերն հասած հայտնի ձեռագրերից վաղագույնը 1046 թ. Պետրոս Գետադարձի պատվերով գրված մատյանը պետք է համարել: Այն պահվում է Մատենադարանում 988 թվահամարի տակ, պարունակում է Զովհաննես Ոսկեբերանի ճառերը և մեկ այլ, փոքրածավալ նյութ՝ «Բարսղի թուղթ գղջման առ կուսանսն անկեալ ի կուսութենէ»: Ձեռագրի գրիչն ու կազմարարն է Գեորգը:

Մատյանը գրված է մագաղաթի վրա, ունի 285 թերթ (34,5x25,5 սմ), գրությունը՝ միասյուն, գիրը՝ ուղղագիծ երկաթագիր, տող՝ 25: Հաճախ ճառերի առաջին տողերը, ինչպես և հիշատակարաններից մի քանիսը, գրված են խոշոր երկաթագրով: Գրչության համար օգտագործված է միագույն թանաք, զարդանկարչություն չունի: Գ. Զովսեփյանը նշում է բնագրի հնագրական առանձնահատկությունները. «Հնագրական տեսակետով նշանակալի է, որ երբեմն յ և ց տառերը գրվում են երկաթագրից տարբեր ձևով, այսինքն բոլորգրի նման..., իսկ ուղղագրության մեջ է-ի փոխարեն գրվում է ե. օրինակ՝ որպես, եթե, թեպետ» (Զովսեփյան, 1951, 231):

Ձեռագրի ամբողջական պահպանված գլխավոր հիշատակարանից բերում ենք առավել կարևոր հատվածները. «Ես տէր Պետրոս, շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթաղիկոս, ցանկացող

եղեալ այսմ աստուածաճառ ճառիցս սրբոյն Յոհաննու Ոսկերբերանի, մեծ փափաքանաւք եւ յորդորամիտ կամաւք ստացա զստացուածս ի նշանաւոր եւ ճշգրիտ գաղփարե յիմաստնոյն Իտիտեէ, առն ճարտարի գրչի, ստացուած ոչ զառժամանակեայ, որ աստար է բնութեանս մերոյ. այս զստացուածն, որ կա մշտնջենաւոր, զանիբացբառնալին և առ Աստուած ճանապարհին առաջնորդ... Գրեցաւ աստուածագիծ պատգամս այս ի թուականիս Յայոց յորում ՆՂԵ (1046) էր, ինդիքտիոնին հոռոնոց յերեքտասներորդ ամին ի թագաւորութեանն Մոնոմախա կայսեր, իսկ մեր լուսաւորութեանս եւթն հարիւր եւ քառասուն եւ Դ եւ (ի) կուսածին ծագմանէն՝ հազար քառասուն եւ Ե... Գրեցաւ եւ կազմեցաւ գիրքս այս ձեռամբ իմով Գեորգայ նուաստ գրչի. որք ընթեռնոյք՝ ինձ աղաւթս արարէք եւ Աստուած զձեզ ողորմեսցի յիւրում զալստեան (ՄՄ. թիվ 988, 284բ-285ա, Ե-ԺԲ, 1988, 93-94):

Ուշագրավ է, որ հիշատակարանում նշված է ձեռագրի նախօրինակը, որը գրված է եղել Իտիտե անունով հույն «ճարտար գրչի» ձեռքով: Հետաքրքրական է նաև գրչության թվականի հայտնման եղանակը<sup>78</sup>: Բացի ընդարձակ գլխավոր հիշատակարանից ձեռագրի մի շարք էջերում կան համառոտ հիշատակագրություններ այս կամ նման բովանդակությամբ՝ «Ձտեր Պետրոս Յայոց կաթողիկոս զստացող գրոցս անհասից, յաղաւթս յիշեսջիք և դուք յիշեալ լիջիք ի Տէրն Յիսուս» (ՄՄ, թիվ 988, 136ա, 141ա, 144ա, 154ա, 160բ և այլն):

Ինչպես տեսնում ենք, ձեռագրի հիշատակարաններում չի նշված գրչության վայրը: Գ. Հովսեփյանի կարծիքով այն «հաւանօրէն Անի քաղաքը կամ շրջակայ վանքերից մէկը» պետք է լինի (Հովսեփյան, 1913, 26): Մատենադարանի ձեռագրացուցակում ևս ձեռագրի գրչության վայրը ենթադրաբար Անին է համարվում (Ցուցակ, Ա, 452): Նկատենք, որ գլխավոր հիշատակարանում ոչ միայն չի նշվում գրչության վայրը, այլև ոչ մի խոսք չի ասվում Հայաստանի աշխարհիկ տերերի և քաղաքական անցուդարձերի մասին: 1045 թ. բյուզանդացիները մի քանի չիաջողված փորձերից հետո վերջապես զավթել էին Անին: Պետրոս Գետադարձը, որն ակնհայտ բյուզանդական կողմնորոշում ուներ և իր մասնակցությունն էր բերել քաղաքը հույներին հանձնելու գործում, այդ ժամանակ գտնվում էր կաթողիկոսարանում,

այսինքն՝ Անիում: Քաղաքի առաջին օտարազգի կառավարիչը՝ Միքայել Իասիտեսը, բարյացակամորեն էր տրամադրված դեպի Հայոց կաթողիկոսը: Սակայն, շատ չանցած, Դվինի ամիրայի դեմ կատարած արշավանքում պարտություն կրելու համար Միքայելը Կոստանդին Մոնոմախ կայսեր կողմից պաշտոնանկ է արվում, և նրան փոխարինում է Կատակալոն Կեկավմենոսը: Վերջինս, բացահայտելով բյուզանդական դավանաբանական քաղաքականության իսկական դեմքը, հալածանքներ է սկսում Պետրոսի դեմ և նրան հեռացնում Անիից. «Եւ սկսանի գրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն և խաբանօք հանէ զնա (Պետրոսին, Կ.Ս.) ի քաղաքէն» (Լաստիվերցի, 1963, 63):

Միքայել Իասիտեսի արշավանքը Դվին տեղի է ունեցել 1045 թ. աշնանը (Ուռհայեցի, 1969, 114-115): Նրա պարտությունից հետո, նույն տարվա վերջին կամ հաջորդի սկզբին Անի է եկել Կեկավմենոսը: Փաստորեն Հայոց ՆՂԵ (1046) թվականին, որը ձեռագրի գրչության տարին է, Պետրոս կաթողիկոսի դեմ հալածանք էր սկսվել: Պետք է կարծել, որ կաթողիկոսի գործերի այս անհաջող ընթացքն է պատճառը, որ հիշատակարանում չեն նշվում քաղաքական անցուդարձեր և Անիի երկրամասի աշխարհիկ իշխողը (տվյալ դեպքում՝ Կեկավմենոսը): Բյուզանդասեր Պետրոսի երկարաշունչ հիշատակարանում մեծարանքի որևէ խոսք չի ուղղված Մոնոմախ կայսեր հասցեին, և վերջինիս անունը տրված է ընդամենը մեկ անգամ գրչության ժամանակը հայտնելու կապակցությամբ: Այսպիսով, ձեռագրի հիշատակարանը հատկապես բյուզանդացիների մասին պահպանած լռությամբ, արտահայտում է ստեղծված քաղաքական կացությունը: Քանի որ հիշատակարանը գրված է Գեորգ գրչի ձեռքով՝ կաթողիկոսի թելադրանքով<sup>79</sup>, ապա միանգամայն հիմնավոր է ենթադրությունը, որ Գեորգը Պետրոսի մոտ էր գտնվում: Այսինքն՝ գրիչը կաթողիկոսարանում էր, ուր և կատարել է իր գործը: Չի բացառվում, որ Մատթեոս Ուռհայեցու մոտ Թադեոս գրչից անմիջապես հետո նշված Գեորգ Քարնեղեցին («...Թադեոս՝ որ էր անպարտելի գրչութեամբ, Գեորգ Քարնեղեցին...» (Ուռհայեցի, 1869, 114) նույնպես զբաղվում էր գրչությամբ և նույնն է մեր ձեռագրի գրիչ Գեորգի հետ:

Բերված փաստարկները թույլ են տալիս 1046 թ. մատյանը համարել Անիի կաթողիկոսարանի գրչատանն ստեղծված

ձեռագիր, որի պատվիրատուն հենց Պետրոս կաթողիկոսն էր: Տեղին է նշել, որ Պետրոսն ինքը գրի և գրականության հակումներ ունեցող անձնավորություն էր, պատվիրել է մատենագրական ու դավանաբանական երկեր, գրել է բազմաթիվ շարականներ:

Քարսեղ Ա Անեցու օրոք, երբ կարճ ժամանակով վերականգնվեց Անիի կաթողիկոսական Աթոռը, այստեղ վերստին գործել սկսեց գրչատունը: Իսկ ավելի ուշ այն շարունակեց գոյություն ունենալ Մայր տաճարին կից: 1195 թ. Սաղմոսավանքի մոտ, Քարանձավի անապատում գրիչ Մարկոսի գրած հիշատակարանում խոսվում է ձեռագրի («Կոչումն ընծայութեան Կիրղի Երուսաղէմացւոյ») նախօրինակի մասին, որը գրված է եղել Անիում, Մայր տաճարի սպասավոր Սարկավագ քահանայի (Յովհաննես Սարկավագ) կողմից: Հիշատակարանի մեզ հետաքրքրող հատվածը հետևյալն է. «Գրեցի փանաք գրով, յընտիր և յազնիւ արինակէ, զոր **Սարկաւագ քահանայ՝ սպասաւոր Սուրբ Կաթողիկէի մեծի, որ յԱնի, ի բազմաց արինակաց ի ձեռն** և այլոց գիտնականաց, զաւգտակարսն առեալ հաւաքեց ի մի դիր և շարադրեաց իւրով ձեռամբ ի դիրալուր մտաց և գիտութեան...» (Յովսէփյան, 1951, 595), Ե\_ԺԲ, 282): Ցավոք, Սարկավագի՝ Անիում կազմած և ընդօրինակած մատյանը մեզ չի հասել, սակայն նրանից արտագրված ձեռագրում Մարկոսի թողած հիշատակարանը պարզորոշ վկայում է, որ Մայր տաճարի գրչատունը ԺԱ դարի վերջերին շարունակում էր գործել:

Վերևում արդեն նշել ենք, որ ԺԲ դարում Անիի կաթողիկեում էին սպասավորում Սամուել Անեցին և Մխիթար Անեցին, որոնք երկուսն էլ մատենագրական նշանակալից ժառանգություն են թողել, իսկ այն նախ և առաջ գրչական աշխատանքի արդյունք է: Այս շրջանում Մայր տաճարի գրչատունը վեր է ածվել ոչ միայն ձեռագրերի ընդօրինակման, այլև մատենագրական ինքնուրույն երկերի ստեղծման կենտրոնի:

Բերված նյութերը վկայում են, որ Անիի Մայր տաճարը ինչպես եկեղեցական հանդիսավոր արարողությունների կատարման վայր, այնպես էլ գրապահպանման և գրչության, գիտության ու լուսավորության կարևոր կենտրոն էր:

## ԲԵՒՆԵՆՑ ՎԱՆՔԻ ԳՐՉԱՏՈՒՆԸ

Հայ գրչության ու մանրանկարչության արվեստի պատմության մեջ և ընդհանրապես մշակույթի ամենատարբեր ոլորտներում ԺԳ դարը նշանավորվեց բազմաթիվ առաջնակարգ ձեռքբերումներով:

Անիի մշակութային կյանքի հիմնական միտումներից մեկն այդ շրջանում աշխարհիկ ուղղվածությունն էր: Նյութապես ապահովված և իր մտավոր զարգացմանը հետամուտ քաղաքային դասն ուներ նաև սեփական աշխարհընկալման ու կենսակերպին համապատասխան արվեստի պահանջ: Այդ ժամանակաշրջանի Անիի գրչության ու մանրանկարչության ուսումնասիրության համար հատկապես բնորոշ է քաղաքի Բեխենց վանքում ստեղծված ձեռագրերի օրինակը:

Մինչև Բեխենց վանքի գրչության կենտրոնի վերաբերյալ տեղեկությունների ի հայտ գալը, այս հուշարձանը գրեթե դուրս էր մնացել Անիի պատմությամբ զբաղվողների ուշադրությունից: Ուստի, նախ համառոտակի ծանոթանանք բուն վանքին, որը քաղաքում գտնվող ամենահետաքրքիր մշակութային կենտրոններից մեկն է եղել: 1215թ. Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Յոնենցն իր կառուցած Գրիգոր Լուսավորչի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է, որ մինչ այդ հիմնովին նորոգել և ընծաներով հարստացրել է քաղաքի Բեխենց կոչվող վանքը: Այնուհետև Յոնենցը պատվիրում է Գրիգոր Լուսավորչի եկեղեցու գործերն հոգացողին նաև Բեխենց վանքի «որպիսությունը» հոգալ (Դիվան, Ա, 62):

**Բեխենցը** հավանորեն տոհմանուն է՝ ստեղծված Անիում տարածում գտած այլ տոհմանունների սկզբունքով, ինչպես օրինակ՝ Աբուղամրենց, Խամբուշենց, Ծիլենց, Յոնենց և այլն<sup>80</sup>: Ըստ երևույթին, Անիում Բեխենց տոհմի սնանկանալու հետևանքով, նրանց տոհմական եկեղեցին անցել է Տիգրան Յոնենցին, որն էլ այն նորոգել է ԺԳ դարի սկզբներին: Հենց այս շրջանին են վերաբերում Բեխենց վանքի գրչատան գոյությունը հավաստող հիշատակությունները (ՄՄ, թիվ 5554, 6288):

Վանքի վանահայրն էր Եղբայրիկը, որի անվանը, իսկ մի դեպքում նաև դիմանկարին, հանդիպում ենք Բեխենց գրչատան ձեռագրերում: Հավանաբար նույն Եղբայրիկն է 1222 թ. պարսպի



բուրգ կառուցել Տիգրան Յոնենցի Գրիգոր Լուսավորչի եկեղեցու մոտերքում՝ թողնելով համապատասխան արձանագրություն: Հնարավոր է, որ Բեխենց վանքի վանահոր անվան հետ է կապված նաև մեկ այլ հուշարձան, որը գտնվում է Հոռոմոսում<sup>81</sup>: Ամեն դեպքում, լինելով վանքի առաջնորդ, գրչատան տնօրեն՝ Եղբայրիկը Տիգրան Յոնենցի և քաղաքային բարձր դասի հետ սերտորեն կապված մշակութային գործիչ էր, հնարավոր է՝ գրիչ և արվեստագետ:

Ինչ վերաբերում է բուն Բեխենց վանքին, ապա այն մեր դարի սկզբներն է հասել խիստ ավերակ վիճակում, առանց վիճագիր արձանագրությունների: Այդ է պատճառը, որ Ն. Մառը, Հ. Օրբելին և քաղաքի ավերակներին անդրադարձող մի շարք այլ ուսումնասիրողներ պարզապես չեն հիշատակում Բեխենց վանքը: Հուշարձանի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել միայն Թ. Թորամանյանի մոտ: Ըստ նրա՝ Բեխենց վանքը գտնվում է Անիի արևելյան մասում, Տիգրան Յոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի և Կուսանաց վանքերի միջև, ճանապարհամերձ բարձունքի վրա (Թորամանյան, 1942, 385, 1948, 50, 185, Մաթևոսյան, 1984, 122-125): Այս հուշարձանը թերևս մեծ արժեք չի ներկայացրել Անիի ճարտարապետության ուսումնասիրության առումով, բայց ահա քաղաքի գրչության ու մանրանկարչության պատմությունը շատ թերի կլիներ առանց Բեխենց գրչատան ժառանգության:

ԺԳ դարի սկզբներին, Եղբայրիկի առաջնորդության շրջանում Բեխենց վանքում ընդօրինակված ձեռագրերից է Մատենադարանի 5554 թվահամարը կրող Ավետարանը: Ձեռագիրը գրված է նուրբ մագաղաթի վրա, ունի 278 թերթ (25x18սմ), գրությունը՝ երկայուն, գրչությունը բոլորգիր, տող՝ 20: Ավետարանն ամբողջական է: Նրա գեղարվեստական հարդարանքն են կազմում ինը խորանները, չորս անվանաթերթերի կիսախորանները (Մատթոս՝ 10ա, Մարկոս՝ 85բ, Դուկաս՝ 132ա, Հովհաննես՝ 212բ), ինչպես նաև մեծաթիվ լուսանցագարդերը (նկ. 22): Ձեռագրում ավետարանիչների և տերունական պատկերներ չեն նկարվել: Մատյանի կազմը կաշեպատ տախտակ է, աստառը՝ զարդահյուս գործվածք և կանաչ մետաքս: Ձեռագրի գլխավոր հիշատակարանից իմանում ենք, որ Ավետարանի ստացողը ոմն Գրիգորն է, որն էլ այն գնել ու նվիրել է Ջարևհանի ուխտին<sup>82</sup>:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ավետարանի խորաններում սյունների, երիզների և անգամ գլխազարդերի վարդյակների մեջ եղած մակագրությունները, որոնք վերաբերում են ձեռագրի ստեղծման միջավայրին (Բեխենց վանք), գիրք պատրաստող, ձևավորող և օտարող մարդկանց: Առաջին խորանում (էջ 1բ, Եվսեբիոսի նամակը) ստորին եզրի վրա դեղին ներկով գրված է. «[Եղ]բայրիկ...»: Հիշատակագրությունը շարունակվել է հաջորդ` դիմացի էջի խորանի համապատասխան մասում, սակայն եղծված է: Նույն էջում, Եվսեբիոսի նամակի երկրորդ խորանի տակ (էջ 2ա) գրված է Վանական կազմարարի կարճ հիշատակագրությունը` «[Յիշես]ջիք եւ գՎանական կազմող»: Մեկ այլ էջում (4ա) խորանի միջնեղջիղի վրա հունատառ ծածկագիր է (առայժմ վերծանել չի հաջողվել), իսկ աջակողմյան սյան վրա, վերից վար գրված է «Տիրա[ցու]»: 6ա էջի խորանի գլխազարդի կենտրոնական ութաթև վարդյակի թևերին մեկական տառերով շրջանաձև գրված է «Սիմեոն քհ.»: Նույն էջում խորանահիմքի երիզի վրա մակագրված է. «Յիշես զի վերստին նորոգեաց Աւետարան ի ձեռն Տ[ի]րաց[ուի]»: Հաջորդ հիշատակությունը (էջ 7ա) խորանահիմքի երիզին գրված գաղտնագիր է, ուր կարդում ենք. «Ձմիակեցն զՍիմեոն, որ բնակէր յանապատի յողորմիս յիշեցէք, ամէն»: Ձեռագրի 8բ էջի խորանի հիշատակագրություններից մեկը դարձյալ վերաբերում է առաջին էջում հիշվող Եղբայրիկին և բարեբախտաբար ամբողջական է: Խորանի միջնեղջիղի վրա գրված է. **«Եղբայրիկ զհայր Բեխենց վանացն յիշեցէք յաղաթս»**, իսկ գլխազարդի վարդյակի թևերին մեկական տառերով շրջանաձև գրված է. «ԵՂԲԱ[ՅՐԻԿ]» (նկ. 25): Նույն խորանի ստորին երիզի վրա կարելի է կարդալ «[Խա]չ[ա]յտուր եղբայր մեր յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր [աղ]աչեն» (ԺԳ, 72-73):

Սրանք են ձեռագրի խորաններում եղած հիշատակությունները, ուր հանդիպում ենք հինգ անվան` հայր Եղբայրիկ, Վանական կազմող, Սիմեոն քահանա, Տիրացու, Խաչատուր: Սրանցից առավել հայտնին Բեխենց վանքի առաջնորդ Եղբայրիկն է, որի մասին նշվեց վերևում: Վանականը մատյանի առաջին կազմարարն է, սակայն նրա պատրաստած կազմը փոխարինվել է նորով 1569 թ., ձեռագրի նորոգման ժամանակ:

Նորոգման գործը ձեռնարկել է Աստվածատուր կրոնավորը, իսկ կազմը պատրաստել է Եղիա Մոնոզը: Տիրացուն հավանաբար խորանների ծաղկողն է: Մի շարք օրինակներով գիտենք, որ երբեմն խորանները գծագրվում, սակայն չէին գունազարդվում: Այդ արվում էր վաճառքից առաջ, ըստ գնորդ-ստացողի պահանջի: Տիրացուի «վերստին նորոգեաց» արտահայտությունը երևի հենց խորանների գունազարդմանն է վերաբերում: Թվարկված անուններից, ստացողի հիշատակարանում միայն Սիմեոնին ենք հանդիպում, որին Գրիգորը կոչում է «պատճառ գործոյս»: Այսինքն՝ Սիմեոնը եղել է ձեռագրի վաճառքի և մվիրատվության գործի միջնորդը (Կ. Մ., 1990թ, 125-127):

Բեխենց վանքում ստեղծված սույն մատյանը գեղարվեստական ճոխ հարդարանք չունի, սակայն նրա նկարչի արվեստն օժտված է ինքնատիպ կողմերով<sup>83</sup>: Ձեռագրի զարդարանքի էական մասն են կազմում տեքստում եղած 136 փոքր լուսանցազարդերը: Դրանք հիմնականում թույլ ոճավորված բուսական զարդեր են՝ կանաչ տերևներով և կարմիր պտուղներով, որոնցից շատերը ներկայացված են ուղղակի ծաղկամաններով (էջ 29ա, 29բ, 30ա, 96բ, 111բ, 113ա, 114ա, 115բ, 118ա և այլն): Բուսական բնույթի լուսանցազարդերին հատուկ բնականությամբ են ստեղծված մաև երկու կենդանիների լուսանցապատկերները, որոնցից մեկը թռչուն է (էջ 111ա), մյուսը՝ ձուկ (էջ 274բ) (նկ. 23): Ուշագրավ է, որ ձկան նույնանման պատկերի հանդիպում ենք Բեխենց վանքում նկարազարդված «Հաղբատի Ավետարանում»: Այնտեղ ձուկը կախված է Շերանիկ անունով երիտասարդ անեցու ուսին դրված փայտից, իսկ պատկերի մոտ նկարիչ Մարգարեն մակագրել է. «Շերանիկ քանի գաս ձուկն բեր» (նկ. 24): Եթե նկատի ունենանք Բեխենց վանքի դիրքը, որը մերձ էր Ախուրյան գետին, ապա ավելի պարզ կդառնա, թե ինչու էր այդ ձկան պատկերը նախասիրված տեղի նկարիչների կողմից: Կարելի է ասել, որ այս երկու պատկերների միջոցով մեզ է ներկայանում Անիի կենցաղային մի մանրամասը՝ կապված ձկնորսության հետ (այստեղ գործ չունենք ձկան պատկերի՝ քրիստոնեական արվեստում ընդունված խորհրդաբանական նշանակության հետ, այլապես այն չէր պատկերվի Շերանիկի փայտից կախված):

Յետաքրքրություն է ներկայացնում նաև խորանների գլխազարդերում Սիմեոն և Եղբայրիկ անունների հիշատակման ձևը: Ինչպես նշվեց, անունները գրված են վարդյակների թևերին, շրջանաձև: Անվան հիշատակման նույն սկզբունքին հանդիպում ենք Անիի ճարտարապետական կառույցներից մեկում, որը հայտնի է Սարգսի պալատ անունով: Վերջինիս շքամուտքի աստղաձև զարդասալիկներից մեկի թևերին, մեկական տառերով, շրջանաձև գրված է «ՍԱՐԳԻՍ» (Դիվան, Ա, 65): Ուսումնասիրողները Սարգսին կառուցող վարպետ կամ պալատ հյուրանոցի տեր են համարում:

Խորանների սյուների և երիզների վրա հիշատակագրություններ գրելու սովորությունը, որն առկա է այս ձեռագրում և «Հաղբատի Ավետարանում», նաև հետագայի («Թարգմանչաց Ավետարան», «Կարմիր Ավետարան» և այլն), բայց ոչ ավելի վաղ գրված հայերեն ձեռագրերում, թերևս նույնպես կապվում է Անիի ճարտարապետության հետ: Քաղաքում բազմաթիվ արձանագրություններ կան, որոնք եկեղեցիների ու գավիթների սյուների, քիվերի և մուտքերի կամարակապ ճակատների վրա են գրված:

Քննվող ձեռագիրը չի գրվել ստացողի նախնական պատվերով, այլ ստեղծվել է վաճառքի համար: Այդ երևում է և գնորդ-ստացողի հիշատակարանից (ուր ոչ մի խոսք չի ասվում գրչի, ծաղկողի, գրչության վայրի ու ժամանակի մասին) և այն բանից, որ ավարտից հետո Ավետարանում գլխավոր հիշատակարան չի գրվել, որպեսզի այդպիսին գրվի վաճառքից հետո: Գրիգոր ստացողի հիշատակարաններից մեկում (որը ցավոք թերի է) խոսվում է ձեռագրի գնի մասին (ԺԳ, 73): Իսկ մատյանի ստեղծմանը մասնակցողներն իրենց անունները նշել են խորաններում՝ այդ ձևով հիշելու համար:

Ձեռագիրը նախատեսված է եղել քաղաքային, միջին եկամուտ ունեցող բնակչի համար, ուստի թանկ նյութերով և շքեղորեն չի զարդարվել: Ցավոք, հայտնի չէ ձեռագրի գրչի անունը, սակայն չի բացառվում, որ առաջին խորանի եղծված հիշատակագրությունը, ուր միայն Եղբայրիկ անունն է պահպանվել, վերաբերվել է հենց գրչին: Գուցե Եղբայրիկի գրիչ լինելու հանգամանքն է պատճառը, որ նրա անվանը հանդիպում ենք երկու տարբեր՝ առաջին և ութերորդ էջերի խորաններում: Բացի այդ, հիշատակագրու-

թյուններում նշվում են ծաղկողը, կազմողը, վաճառքի միջնորդը, նման պայմաններում գրիչը չէր կարող անուշադրության մատնվել:

Այսպիսով, Մատենադարանի թիվ 5554 Ավետարանը որոշակիորեն հարստացնում է մեր գիտելիքները Բեխենց վանքի գրչատան վերաբերյալ՝ իր համեստ նպաստը բերելով Անիի ձեռագրական մշակույթի ուսումնասիրության գործին:

## ԳՐԻՉ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՄԱՐԳԱՐԵ

Հայ մանրանկարչության պատմության մեջ կարևոր տեղ է գրավում **նկարիչ Մարգարեի** արվեստը: Նրա պատկերազարդած և մեզ հասած միակ ձեռագիրը գեղարվեստական բարենմասնությունների հետ մեկտեղ արժեքավոր է նաև իր աշխարհիկ ուղղվածությամբ, քաղաքային կյանքի ու կենցաղի տարրերի յուրօրինակ վերարտադրմամբ:

Ձեռագիրը (ՄՄ, թիվ 6288) գրվել է 1211 թ. Հաղբատում, Հակոբ գրչի ձեռքով (հետագայում գրչության վայրի անունով կոչվել է «Հաղբատի Ավետարան»): Այն երկար ժամանակ պահվել է Արցախի Գետաշեն գյուղում: 1920-ական թվականներին ձեռագիրն էջմիածնի մատենադարան է բերել Գ. Հովսեփյանը, իսկ ավելի ուշ հանգամանալից ուսումնասիրություն նվիրել նրան (Հովսեփյան, 1935): Մատյանը նկարազարդվել և լրացվել է Անիի Բեխենց վանքում Մարգարեի կողմից, և կազմվել Հռոմոսի վանքում Աբրահամ կազմարարի ձեռքով: Ձեռագրի ստացողն է Սահակ քահանան՝ **«ազգաց և տոհմի ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ»** (ԺԳ, 71):

Սակայն Մարգարեի մասին պահպանված առաջին տեղեկությունը քաղում ենք ոչ թե «Հաղբատի Ավետարանից», այլ մեկ ուրիշ՝ չպահպանված ձեռագրի պատառիկից (ՄՄ, պատառիկ թիվ 1886), որը մի Ավետարանի վերջին թերթ է և նորոգման հիշատակարան է պարունակում: Վերջինս վկայում է, որ Հովասափ անունով մեկը **«ազգաւ և տոհմի ի մեծ գեաւղաքաղաքէն Կումիրոյ»** փրկագնել և 1209 թ. Հառիժի վանքում նորոգել ու կազմել է տվել հիշյալ ձեռագիրը: Գործն

իրականացրել է Մարգարեն, որն էլ հիշատակարանում գրում է. «եւ զմեղաւոր կազմաւղս զՄարգարէս, եւ զամենայն միաբանեալսն մեր յիշեսջիք»<sup>84</sup>: Սույն պատառիկը մեզ ծանոթացնելով Մարգարեի կյանքի ու գործունեության մի դրվագին, միաժամանակ վկայում է, որ նա իսկապես բազմաշնորհ էր, որովհետև, եթե 1211 թ. Անիի Բեխենց վանքում զբաղվում էր գրչությամբ ու մանրանկարչությամբ, ապա մինչ այդ, Հառիժում նաև կազմարարություն էր անում: Հնարավոր է, որ բազմաշնորհ Մարգարեն զբաղվել է նաև վիմագիր գրչությամբ<sup>85</sup>:

Այժմ անդրադառնանք «Հաղբատի Ավետարանին»: Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա, ունի 360 թերթ (29,5x22,3), գրությունը՝ երկսյուն, գիրը՝ երկաթագիր, տող՝ 19: Գլխավոր հիշատակարանից իմանում ենք, որ ստացող Սահակը ուսումնառությունն անց է կացրել Հաղբատի վանքում, ուր և գրել է սովել ձեռագիրը: Հիշվում են Սահակի ընտանիքի անդամները, ձեռագրի ստեղծմանը մասնակցած անձինք, նշվում է Ավետարանի՝ Արջո Առիճի ուխտին նվիրվելու հանգամանքը: Հպանցիկ խոսվում է երկրի քաղաքական բարվոք վիճակի մասին՝ Կիլիկիայում Լևոն Բ թագավորի և բուն Հայաստանում ամիրսպասալար Ջաքարեի իշխանության ներքո<sup>86</sup>:

Բացի գլխավոր հիշատակարանից, որը գրվել է հավանաբար ձեռագրի կազմվելուց հետո, Հովհաննեսի կողմից, Ավետարանի տարբեր էջերում պահպանվել են փոքր հիշատակարաններ և բազմաթիվ հիշատակագրություններ՝ գրված Հակոբ գրչի ձեռքով Հաղբատում և Մարգարեի կողմից՝ Բեխենց վանքում: Ձեռագրում կան նաև 1223, 1283, 1387, 1497 թվականների, ինչպես և անթվական հիշատակարաններ: Ուշագրավ է, որ Ավետարանի բնագիրը սրբագրվել է: Այդ մասին է վկայում 61 ա էջի ստորին լուսանցքում բոլորագրով գրված հիշատակագրությունը. «զՄխիթար Քոյրայրեցի յիշեա ի Քրիստոս, աղաչեմ, զուղղիչ»<sup>87</sup>:

«Հաղբատի Ավետարանի» ձեռագրագիտական քննությունը բացահայտում է նրա գրչության մի քանի հետաքրքրական կողմերը: Թեև Մարգարեն հայտնի է նախ և առաջ իր մանրանկարներով, սակայն ինչպես պարզվում է, մանրանկարիչը եղել է նաև հմուտ գրիչ և բացի հիշատակարաններից ձեռագրում մի շարք էջեր է գրել (Մաթևոսյան, 1984, 130-132): Պատահական չէ, որ իր մասին գրած հիշատակագրություններից առաջինում (էջ 15ա) Մարգարեն նշում է՝ «Տէր Աստուած ողորմեա Մարգարէին՝ **գրչի և նկարչի...**»<sup>18</sup>:

«Հաղբատի Ավետարանի» հիմնական արժեքը մանրանկարչության մեջ է: Մարգարեի նկարագրողունները խորապես կրում են նկարչի ստեղծագործական միջավայրի՝ Անիի քաղաքային կյանքի ու կենցաղի դրոշմը: Եվ պատահական չէ, որ ուսումնասիրողների մեծ մասը շեշտում է Մարգարեի արվեստում առկա աշխարհիկ շունչը և դրանից բխող ինքնատիպությունը: Ձեռագրի առաջին հետազոտող Գ. Հովսեփյանը հետևյալն է գրում. «Մարգարեի արվեստի առավելությունն է և գնահատելի կողմը, որ նա չի հետևում մեքենայական կերպով միայն սովորական, ընդունված ձևերին, այլ ստեղծագործում է ուրույն, անհատական և կենցաղական գծերով և արտահայտություններով և դրանով բարձրացնում յուր նկարների գեղարվեստականի հետ նաև պատմական-ազգագրական մեծ արժեքը» (Հովսեփյան, 1935, 71):

Միջնադարյան կերպարվեստի հանրահայտ մասնագետ Վ. Ն. Լազարևը ավելացնում է, որ մանրանկարներում «...վառ կերպով դրսևորվում է նկարչի կենդանի դիտողականությունը... Սուրբ Գիրք են թափանցում անմիջականորեն կյանքից վերցված մոտիվներ, որոնք խոսում են այդ գեղանկարչության դեմոկրատիզմի մասին, ամուր կապված ժողովրդական մասսաների հետ» (Լազարև, 1978, 61): Մարգարեի արվեստը բարձր են գնահատել նաև Լ. Դուրնովոն, Ս. Տեր-Ներսիսյանը, Տ. Իզմայլովան, Է. Կորխմազյանը և շատ ուրիշներ: Վերջին շրջանում Մարգարեի ստեղծագործությանն առանձին գրքույկ է նվիրել արվեստաբան Վ. Մաթևոսյանը, որն ի թիվս այլ եզրահանգումների, գրում է, թե «Հաղբատի Ավետարանի» պատկերագրողունը կոնկրետ իր ժամանակի, ինչպես և ողջ միջնադարի հայկական (ու ոչ միայն հայկական, այլև քրիստոնյա

բոլոր ժողովուրդների ստեղծած) մշակույթի ամենաաշխարհիկ, ամենաքաղաքային և ամենա «ռեալիստական» գործերից է» (Մաթևոսյան Վ., 1990, 5)<sup>89</sup>:

«Չաղբատի Ավետարանի» նկարագարումն են կազմում Եվսեբիոսի նամակի նկարագարող էջերը (էջ 6բ-7ա), համաբարբառի ութ խորանները, որոնք նկարված են համապատասխան էջերում, մագաղաթների միայն մեկ երեսի վրա (էջ 8բ-15ա): Դրանց հաջորդում են «Մուտք Երուսաղեմ» պատկերը (էջ 16բ) և ընծայական մանրանկարը (էջ 17ա): Մարգարեն նկարել է նաև Մատթեոսի և Մարկոսի ավետարանների անվանաթերթերը (էջ 175ա, 269բ), Ղուկասին ու Յովհաննեսինը նկարել էր Չակոբ գրիչը: Ձեռագրում կան չորս ավետարանիչների պատկերները պարունակող էջեր (Մատթեոս՝ էջ 18բ, Մարկոս՝ 112բ, Ղուկաս՝ 174, Յովհաննես՝ 268բ), որոնք կաշեթելով կարված են համապատասխան պրակներին: Այս մանրանկարները ոճական առումով տարբերվում են ոչ միայն Մարգարեի նկարած պատկերներից, այլ նաև իրարից: Կարելի է ենթադրել, որ ավետարանիչների պատկերներն ավելացվել են հետագայում, այլապես դրանք համապատասխան պրակների մասը կկազմեին կամ որևէ աղերս կունենային Մարգարեի մանրանկարների հետ: Այնուամենայնիվ, այդ մանրանկարները չեն դադարում հետաքրքրություն ներկայացնելուց, հնարավոր է, որ ստեղծված լինեն Անիում կամ Արջո Առիճում: Կարելի է առանձնացնել հատկապես Մատթեոս և Յովհաննես ավետարանիչների պատկերները: Առաջինը աչքի է ընկնում կատարման գունային գեղանկարչական եղանակով, հորինվածքի կուռ ամբողջականությամբ: Երկրորդ մանրանկարի խորքում տեղ է գտել շրջանաձև հիմքով եկեղեցական կառույցի պատկեր, որը հիշեցնում է Անիի շրջանի ճարտարապետական համանման հուշարձանները (նկ. 29):

Մարգարեի ստեղծած մանրանկարները գլխավորապես հարթապատկերային են, միաժամանակ ունեն հարուստ կոլորիտ, վառ գունահնչեղություն: Նկարիչն օժտված է հորինվածքի արտակարգ զգացողությամբ, պատկերի համազոր բաղադրամասերի ներդաշնակեցման բարձր վարպետությամբ: Մարգարեի արվեստին հատուկ համաչափության սկզբունքը արտահայտվում է նաև խորանների ձևավորման մեջ: Ճիշտ է, խորանն ընդհանրապես հստակ համամասնություններ ունեցող զարդային համակարգ է, բայց Մարգարեի խորանը պետք է դիտել դիմացի էջի խորանի հետ միասին, որովհետև լուսանցագարդերի ընտրությունը, դրանց ձևն ու չափը, գլխագարդերի զարդա-



պատկերներն ու գունային լուծումները այնպես են համապատասխանեցված, որ դիտողն ամբողջական տպավորություն ստանա ոչ թե առանձին էջից, այլ ձեռագրի բացվածքից՝ զուգադիր խորաններից: Հետևաբար նպատակահարմար է «Հաղբատի Ավետարանի» խորաններին անդրադառնալ ըստ զույգերի:

«Հաղբատի Ավետարանի» համաբարբառի խորանները կառուցվածքի հիմնական տարրերով նման են իրար. եռասյուն են, սյուները՝ խարիսխ խոյակներով, ունեն երկուական լուսանցազարդեր՝ նկարված ստորին և միջին երիզների արտաքին ելուստների վրա: Գլխազարդերը հարդարված են մեծ մասամբ երկրաչափական, մաև բուսական և կենդանական բազմազան զարդաձևերով, ունեն հազեցած գունային գամմա:

Ձեռագրի առաջին իսկ խորաններում (էջ 8բ-9ա) ակնհայտ է Մարգարեի նորամուծությունը: Հանդիպակաց էջերի լուսանցամասերում նկարված են չորս խոշոր մարդկային պատկերներ, որոնք ներկայացնում են երկու աշխարհականի և երկու հոգևորականի՝ իրական մարդկանց, Անիի քաղաքացիների (նկ. 24, 27): Ընդ որում այդ պատկերները կապված են ոչ թե ձեռագրի պատվիրատուի ու նրա տոհմի, այլ Ավետարանի նկարազարդման միջավայրի, նկարչի շրջապատի հետ: Մանրանկարիչն իր համաքաղաքացիների դիմանկարներից երեքի մոտ համապատասխան մակագրություններ է արել, որոնք թույլ են տալիս պարզելու նկարվածների ով լինելը<sup>90</sup>: 9ա էջի խորանի արտաքին լուսանցքի վերնամասում պատկերված է Բեխենց վանքի առաջնորդ Եղբայրիկը՝ միջներիզի ելուստի վրա դիմահայաց կանգնած (բարձրությունը 8սմ): Հագին ունի երկար, մինչև ոտնաթաթերը հասնող կապույտ կապա, վրայից՝ փիլոն: Գլխին սրածայր հայկական վեղար է, ոտքերին կարմիր կոշիկներ: Աջ ձեռքով բռնել է պարզ հովվական գավազանը, ձախով՝ մի կարմրակազմ Ավետարան: Գլուխը վերցված է լուսապսակի մեջ: Չնայած դեմքը փոքր-ինչ եղծված է, բայց նկատելի են դիմագծերը: Պատկերի աջ կողմում, նրան զուգահեռ, մեկ տողով մակագրված է. «**Հայր Եղբայրիկ առաջնորդ սբ. ուխտիս յիշ[եսջիք]**»:

Նույն խորանի արտաքին լուսանցքի ստորին մասում պատկերված է կազմարար Աբրահամը՝ խորանահիմքի երիզի ելուստին կանգնած (բարձրությունը՝ 10սմ): Հագուստը միանգամայն նման է Եղբայրիկի հագուստին: Աջ ձեռքով բռնել է մի երկարակոթ խաչ, ձախով՝ կարմրակազմ Ավետարան: Դեմքը լավ է պահպանվել:

Աբրահամն ունի վառ արտահայտված դիմագծեր, թավ հոնքերի տակից երևում են լայն բացված աչքերը, քիթը բարակ է, այտերը՝ կարմրացված, մորուքը՝ երկճյուղ: Աբրահամի դիմանկարի աջ կողմում մեկ տողով գրված հիշատակագրությունը միջնամասում եղծված է: Գ. Յովսեփյանը ժամանակին այն ընթերցել է այսպես. «Կազմիչ սորին եւ հայր... ջորդ ի սմին յիշեսջիք» (Յովսեփյան, 1935, 48): Ա. Մաթևոսյանը նշմարվող տառաբեկորներով և տառերի թվի համապատասխանեցմամբ անընթեռնելի հատվածը հետևյալ կերպ է վերականգնում. «Կազմիչ սորին եւ հայր [Աբրահամ միջնորդ ի սմին յիշեսջիք]» (Մաթևոսյան, 1984, 117-119): Աբրահամը խորաններում պատկերված մարդկանցից միակն է, որի անվանը հանդիպում ենք ձեռագրի գլխավոր հիշատակարանում («...զկազմող սորին զԱբրահամ... յիշեսջիք»): Սակայն, ինչպես տեսնում ենք, Աբրահամը ոչ միայն ձեռագրի կազմողի, այլև ստացող Սահակի և նկարիչ Մարգարեի միջև կատարված գործարքի միջնորդն է եղել և թերևս հենց դրա շնորհիվ է պատկերվել խորանում: Այս տեսակետը չի հիմնվում սոսկ «միջնորդ» բառի, թեկուզ և հավանական, վերականգնման վրա: Յայտնի է, որ ձեռագրերը կազմվում էին նկարազարդումից հետո: Իսկ մեր ձեռագրում տեսնում ենք, որ նկարազարդման ժամանակ նկարիչն արդեն գիտեր կազմողին և պատկերել է նրան: Մինչդեռ կազմողն, այլ վանքում էր աշխատում, որտեղ և ի վերջո կատարել է իր գործը («կազմեցաւ ի վանքս Յոռոմոսի...»): Ինչ վերաբերում է միջնորդության հանգամանքին, այն, ինչպես վերը տեսանք, էական էր նաև Բեխենց վանքի նախորդ ձեռագրում<sup>91</sup>:

Եղբայրիկի և Աբրահամի խորանի հանդիպակաց էջում պատկերված են աշխարհականները (էջ 8բ): Դրանցից մեկը Շերանիկ անունով երիտասարդն է՝ պատկերված խորանի արտաքին լուսանցքի ստորին մասում՝ խորանահիմքի ելուստի վրա կանգնած (բարձրությունը՝ 11սմ): Յագին ունի մուգ դեղին գույնի երկար պարեգոտ, որը կրծքի և բազուկների վերնամասում ասեղնագործված է: Յագուստը զարդարված է նաև վերևից ներքև իջնող կարմիր, լայն ժապավենազարդերով: Շերանիկի բազուկները ևս միջնամասում ժապավենազարդ ունեն: Երիտասարդ անեցին կրում է բարձր երկփեղկ գլխարկ: Այն, ինչպես և Շերանիկի հագուստի ընդհանուր կառուցվածքը, նման է Ջաքարե և Իվանե Ջաքարյան իշխանների հագուստին՝ դատելով վերջիններիս

բարձրաքանակից, որը պահպանվել է Յառիճի վանքի պատին (նկ. 13, 24): Նկարում անեցու ոտքերին երկգույն երկարաճիտ կոշիկներ են, որոնց ետնամասից երևում են կապերի ծոպավոր թելերը:

Շերանիկի դեմքը պատկերված է երեք քառորդով, գլուխը՝ փոքր-ինչ դեպի աջ հակած: Դիմագծերը համաչափ են և գեղեցիկ, դեմքն անմազ, այտերը՝ կարմրեցված: Գանգուր մազերն իջնում են մինչև ուսերը, իսկ կրծքի վրա երևում են վերից իջնող սև ժապավենի երկու ծայրեր, որով կապված են եղել Շերանիկի վարսերը ետևի կողմից: Երիտասարդը երկու ձեռքով պահում է աջ ուսին հենած կեռազլուխ կարմիր փայտ, որի կեռից կախված է մի բավական մեծ ձուկ: Պատկերի մոտ Մարգարեն երեք կարճ տողով գրել է. «Շերանիկ քանի զաս ձուկն բեր»: Ինքնատիպ տարազի ու կատարման հստակության շնորհիվ Շերանիկի դիմանկարը, մյուս պատկերների համեմատությամբ, ավելի մեծ ուշադրության է արժանացել: Հագուստից դատելով՝ Շերանիկը քաղաքային վերնախավի ներկայացուցիչ է<sup>92</sup>, որը գուցե հաճախ էր հայտնվում այն միջավայրում (և ոչ դատարկաձեռն), ուր աշխատում էր նկարիչ Մարգարեն: Հնարավոր է, որ նույն Շերանիկն է հիշվում Հռոմոսի անթվական արձանագրության նկարներից մեկում («...ես Շերանիկս զարացայ ի զինուորութեան...» (Մխիթարյանց, 1870, 31): Մարգարեն Շերանիկի դիմանկարն ստեղծել է սիրով (պատահական չէ մտերմիկ մակագրությունը), մանրակրկիտ և նուրբ աշխատանքով ընդգծելով բոլոր հնարավոր մանրամասներն ու հագուստագարդերը:

Այս խորանում պատկերված հաջորդ դիմանկարի մոտ Մարգարեն մակագրություն չի արել, ուստի պատկերվածին պայմանականորեն կանվանենք մատռվակ՝ նկատի ունենալով նրա կատարած գործն ու ընդհանուր տեսքը: Սա նույնպես երիտասարդ է՝ նկարված խորանի արտաքին լուսանցքի վերնամասում (բարձրությունը 10սմ): Մատռվակի հագին երկար, մինչև ոտնաթաթերը հասնող զարդարուն պարեգոտ է, կրծքամասի անկյունավոր բացվածքով: Բազուկներին, ինչպես Շերանիկի մոտ, ժապավենագարդեր կան: Կրում է բարձր, երկփեղկ գլխարկ, գմբեթածև երկգույն վերնամասով, ոտքերին ունի կարմիր կոշիկներ: Մատռվակի դեմքին հատկապես ընդգծված են խոշոր աչքերն ու նուրբ, կեռ հոնքերը: Հայացքը խաղաղ և անխռով է:

Եթե խորանի ստորին լուսանցապատկերում ներկայացված է Շերանիկը, որը ձուկ է բերում, ապա վերևում պատկերված մատռվակը նույնանման գործողություն է կատարում, «բերում է» սափորով ջուր կամ, ավելի հավանական է՝ գինի: Կարմիր, մեջտեղում լայն զարդերիզներով

սափորը մատուցվակը պահում է աջ ձեռքում, իսկ կոնքին հենած ձախում ասեղնագործ թաշկինակ կամ սրբիչ ունի (անեցիների կենցաղում ընդունված էր ջրամանով ու անձեռոցիկ-սրբիչով մատուցակների ներկայությունը հանդիսավոր ճաշկերույթների ժամանակ, տե՛ս Թորամանյան, 1942, 374):

Լ. Դուրնովոն գրում է, որ երկու երիտասարդները ծուկ ու սափորով գինին հավանորեն խնջույքի են տանում (Դուրնովո, 1979, 249): Իրոք, տեսարանն այնքան անմիջական տպավորություն է թողնում, որ դժվար է այլ ենթադրություն անել: Անիի աշխարհիկ կյանքից վերցված այս դրվագը մի կողմից տրամագծորեն հակադիր է խորանների նկարագարողման ընդունված կանոններին, մյուս կողմից՝ նկարչի ինքնուրույն ու անկաշկանդ ստեղծագործական աշխատանքի, աշխարհայացքի ու նախասիրությունների արտահայտությունն է: Բուն խորանները՝ հարուստ հարդարված գունավառ գլխազարդերով, այստեղ ասես կատարում են զարդապատկերային միջավայրի դեր՝ հիշյալ դիմանկարների համար:

Խորանների հաջորդ զույգը (էջ 10բ-11ա) զուտ զարդանկարչական է<sup>93</sup>: Խորանների ստորին, միջին և վերին երիզների վրա Մարգարեն սպիտակ ներկով, երբեմն էլ ոսկեգիր, սեպածև ավարտվող գծերից կազմված երկաթագրով գրել է ձեռագրի պատվիրատուի ընտանիքի անդամներին վերաբերող կարճ հիշատակագրություններ (էջ 10բ). «[Քրիստոս] Աստուած ողորմեա Առաքել[ին ամ]էն», «Տէր Աստուած գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի Քո, ամէն», «Յոգի Սուրբ Աստուած գթայ ի հոգին Իպատոսին ծառայի Քո, ամէն», (էջ 11ա) «Տէր Յիսուս ողորմեա Սա[հա]կ[ա]յ, ա[մ]էն», «Աստուած իմ Յիսուս, ողորմեա մեղուցեալ ոգոյս, ամէն» (ԺԳ, 69-70):

Խորանների մյուս զույգի (էջ 12բ-13ա) գունաշարում գերակշռում են բաց տոները<sup>94</sup>: Յարուստ հարդարանք ունեն մաև վերջին երկու խորանները (էջ 14բ-15ա): Առաջինի գլխազարդը ձևավորված է գլխավորապես երկրաչափական բազմաձև անկյունավոր զարդերով և մի քանի շրջանագծերով: Պարզ խարիսխների վրա բարձրացող զանգվածեղ սյուները պսակվում են ոճավորված խոյակներով: Լուսանցքի ստորին մասում տեղ է գտել մեծ տերևաձևով զարդի, դրանից սկիզբ առնող պտղատու ծառի և պարանոցը ծառի բնին հյուսած թռչնի պատկերներից կազմված մի լուսանցանկար: Սրանից վեր, խորանի միջներիզի ելուստի վրա, պատկերված է մի աքաղաղ՝ ուղղահայաց վեր բարձրացրած գունագեղ պոչով:

Ութերորդ` վերջին խորանը (էջ 15ա) ամենաուշագրավներից մեկն է (նկ. 28): Մարգարեն այստեղ առաջին անգամ գլխազարդը ձևավորել է նաև կենդանական (կաքավների) պատկերներով: Խորանների մեկնություններում ութերորդ խորանի չորս կաքավները ներկայացվում են «իբրև խորհուրդ պոռնիկ և օտարազգի կանանց...» (Ղազարյան, 1995, 27): Լուսանցքի ստորին մասում նկարված է մի ծառ, որը խոշոր նրբերանգ ծաղիկների և կոկոնների շնորհիվ ծաղկեփնջի տպավորություն է թողնում:

Լուսանցքի վերնամասում Մարգարեն ստեղծել է խորաններում եղած հինգերորդ մարդկային պատկերը: Ներկայացված է մի գողտրիկ տեսարան. ծառի տակ, ծոպավոր զարդարուն գորգին դրված բարձի վրա նստած է մի երիտասարդ, որը սազ է նվագում: Ծառը յոթ վառ կարմիր պտուղներով կանաչ նմենին է, որի ճյուղերից մեկին կարմրաերիզ պոչով խոշոր սև կեռնեխ է կանգնած: Երիտասարդ երաժիշտը հագել է մինչև ծնկները հասնող կապույտ բաճկոն, գլխին կրում է երկգույն բարձրադիր գլխարկ, իսկ ոտքերին` երկարաճիտ կոշիկներ: Երիտասարդը դեմքը երեք քառորդով թեքել է դեպի խորանի շքեղ գլխազարդը, ուր շրջանակվող բուսական զարդերի մեջ նկարված են զարմանալի կենդանությամբ ներկայացված չորս կաքավներ: Թվում է, որ այս կաքավների, ինչպես և ծառին կանգնած կեռնեխի և երաժշտի նվագելու ու երգելու (կաքավելու) կապը կանխամտածված է նկարչի կողմից: Ողջ պատկերն օժտված է վառ գունահնչեղությամբ և ներթափանցված է քնարական շնչով: Ինչպես նշում է Աս. Մնացականյանը «ընդհանուր տեսարանը հիշեցնում է մեր միջնադարյան պոեզիայի այն էջերը, որոնք նվիրված են սոխակների, զարնան և սիրո գովասանությանը» (Մնացականյան, 1955, 455): Սույն լուսանցապատկերն ասես եզրափակում է առաջին խորանի լուսանցանկարների «սյուժեն», և եթե այնտեղ ձուկ բերող Շերանիկի ու գինի բերող մատռվակի պատկերներով ակնարկվում է խնջույքի նախապատրաստությունը, ապա այստեղ հայտնվում է նաև երաժիշտը` մտերմիկ հավաքի մասնակից արվեստագետը<sup>95</sup>:

**«Չաղբատի Ավետարանի» խորաններում եղած մարդկային հինգ պատկերները, որոնցից երեքի մոտ նկարչի թողած մակագրությունները հաստատում են, որ դրանք իրական մարդկանց դիմանկարներ են, նորություն են հայ մանրանկարչության մեջ` հատկապես խորանների հարդարման ընդունված կանոններից շեղվելու առումով: Հիշյալ պատկերները**

չափազանց կարևոր են անհական տարազի ու կենցաղի ուսումնասիրության տեսակետից:

Խորանների հարդարանքից դատելով՝ Մարգարեն նաև վարպետ զարդանկարիչ էր՝ օժտված գույների ու երանգների, բազմազան մոտիվների ու ձևերի պատկերման, խորանին բնորոշ զարդային համակարգի կազմակերպման նուրբ արվեստով:

Պետք է նշել նաև, որ «Յաղբատի Ավետարանը» հայերեն թվակիր առաջին մատյանն է, ուր հիշատակագրություններ են գրված խորանների երիզների վրա: Ինչպես տեսանք, այդպիսիք կային նաև Բեխենց վանքից հայտնի մյուս ձեռագրերում (ՄՄ, թիվ 5554): Տարբերությունն այն է, որ Մարգարեի ձեռագրի ստացողը հայտնի էր նախապես, և խորանների հիշատակագրությունները վերաբերում են ստացողին ու նրա ազգականներին: Մինչդեռ նախորդ ձեռագրի խորաններում (որը վաճառքի համար էր նախատեսված) հիշվում են միայն Բեխենց վանքի սպասավորներն ու ձեռագրի ստեղծողները: Մարգարեի մոտ այդ նույն նպատակին են մասամբ ծառայում խորանների լուսանցամասերի դիմանկարները:

«Յաղբատի Ավետարանում» խորաններին հաջորդող առաջին պատկերը «Մուտք Երուսաղեմ» տերունական մանրանկարն է (էջ 16բ), ավետարանական թեմատիկ միակ պատկերը ձեռագրում (նկ. 17): Այն ուշադրության է արժանի իր կուռ հորինվածքով, բովանդակության աշխարհիկ շեշտով (Կ.Ս., 1982, 52-63, «Մուտք Երուսաղեմ» թեմայի պատկերագրության մասին տես Մաթևոսյան, Ավետիսյան, 1993, 46-51): Նկարի ինքնատիպությունը շեշտել է դեռ Գ. Յովսեփյանը, որը գրում է. «...ամենից ավելի ուշագրավը Յիսուսի մուտքն է Երուսաղեմ, որ ամենևին չի նմանվում ավանդական պատկերացումներին, այլ ամբողջապես նկարչի մի նոր հղացումն է անկախ ձևակերպությամբ» (Յովսեփյան, 1935, 72-73): Ավանդական պատկերագրության տարրերն այստեղ վերամեկնաբանված, արդիականացված են, - նշում է Ս. Տեր-Ներսեսյանը (Տեր-Ներսեսյան, 1979, 20): Մանրանկարն իր վրա է հրավիրել բազմաթիվ այլ ուսումնասիրողների ուշադրությունը:

«Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ավելի քան «Յաղբատի Ավետարանի» մեկ այլ պատկեր, թույլ է տալիս զգալ Մարգարեի ստեղծագործության ոչ միայն ինքնատիպ բնույթն ու աշխարհիկ ուղղվածությունը, այլև տեսնել հորինվածքի՝ որպես համազոր

մասերի կոմբինացիայի, ընկալման ու կիրառման նկարչի սկզբունքը: Նկարչի հորինվածքային վերլուծությունը, ինչպես նաև նրա բովանդակության աշխարհիկ կողմի վերհանումը բավականին հետաքրքիր նյութ են տալիս:

Առաջին հայացքից թվում է, թե «Մուտք Երուսաղեմ» մանրանկարի ընդհանուր պատկերագրական համակարգում էական շեղումներ չկան: Սակայն Սարգսրեն «...գլխավոր գործող անձանց թիվը հասցնելով նվազագույնի... ըստ էության չփոխելով գործողությունները՝ ողջ հիմնական տեսարանը վերափոխում է իրեն ժամանակակից սրտաբաց հյուրընկալության» (Դուրնովո, 1957, 31):

Մանրանկարում ավանակի վրա նստած Քրիստոսը Երուսաղեմի մուտքին է մոտենում աջից՝ երկու աշակերտների ուղեկցությամբ: Հայկական և բյուզանդական պատկերագրության մեջ սովորաբար Քրիստոսը ներկայացվում է քաղաքային մուտքին ձախ կողմից մոտենալիս: Բայց «Հաղբատի Ավետարանում», ինչպես նաև Անիի գրչության կենտրոնին վերագրվող Աբաս մանրանկարչի ձեռագրում (այս մասին կխոսվի ստորև) «Մուտք Երուսաղեմ» պատկերում Քրիստոսը քաղաքին է մոտենում աջից:

Սարգսրեի մոտ Քրիստոսին ուղեկցողներից մեկը ճերմակահեր է՝ գլխին լուսապսակ, իսկ մյուսը սևահեր է և առանց լուսապսակի: Գ. Հովսեփյանը գրում է, որ առաջինը Պետրոսն է, իսկ մյուսը՝ ժողովրդի ներկայացուցիչը (Հովսեփյան, 1935, 52): Քաղաքացիները եկողներին դիմավորում են ճանապարհին կանգնած, պատկերի ձախ կողմում բարձրացող շինության պատուհանից ու պատշգամբից: Չիթենու երկու բարձր ծառերի վրա պատկերված են չորս երիտասարդ, որոնցից երկուսը ճյուղեր են կտրում և նետում Տիրոջ ճանապարհին: Կենտրոնական կերպարը՝ Հիսուսը, պատկերված է դիմահայաց՝ ավանակի մի կողմին նստած: Նա աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախում պահել է մագաղաթափաթեթ: Հագել է մինչև մերկ ոտնաթաթերը հասնող կարմիր տունիկա, կապույտ վերնազգեստ: Մորուքը կարճ է, երկճյուղ: Ավանակի դիմաց պատկերված է կանաչ պարեգոտ հագած մի փոքրամարմին խափշիկ, որը զգեստ է փռում ճանապարհին: Նրանից ձախ նկարված է մի տարեց, ճերմակամորուս քաղաքացի՝ ձիթենու երկու ճյուղեր ձեռքերին: Հագուստը վկայում է, որ նա հասարակական վերնախավի ներկայացուցիչ է: Հագին ունի կարմիր եզրագծերով դեղնավուն խալաթանման վերնազգեստ, գլխին կրում է փաթոց (չալմա), որը Անիի

վերնախավի շրջանում ընդունված էր դեռ Բագրատունյաց ժամանակներից (հմմտ. Գագիկ Ա-ի քանդակը):

Մանրանկարի եռահարկ աշտարակաձև շինության պատուհանում պատկերված է մի տարեց կին (երևում է գոտկատեղից վեր)՝ ձեռքին ձիթենու ոստ, գլխին կարմիր գլխաշոր: Նույն շինության զարդարուն պատշգամբում նկարված են կանաչազգեստ, դարձյալ կարմիր գլխաշորերով, երկու աղջիկ՝ ձեռքները ծառի վրա գտնվող երիտասարդներին մեկնած: Ձախից առաջին երիտասարդի հագուստը միանգամայն նման է վերը հիշատակված Շերանիկի հագուստին:


«Մուտք Երուսաղեմ» մանրանկարի աչքի ընկնող բաղադրամասն է պատկերի ձախ կողմում վեր բարձրացող եռահարկ աշտարակաձև շինությունը, որը թե՛ հարկերի համաչափային բաժանմամբ, թե՛ փոքր լուսամուտներով շատ նման է Անի-Յոռոմոս ճանապարհի վրա կառուցված մուտքի կամարի աշտարակին (նկ. 16): Հավանորեն Մարգարեն մանրանկարն ստեղծելիս հենց այս հուշարձանն է ընտրել որպես քաղաքային մուտքի նախատիպ (Կ.Ս., 1982, 143-150): Նկարի վրա եղած միակ մակագրությունը գրված է շինության մուտքից վեր՝ կամարի տակ. «Ե[րուսաղե]մ քաղաք»:

Մանրանկարում Մարգարեն կիրառել է հորինվածքի այսպես կոչված **կայուն** տիպը, ուր կոմպոզիցիոն հիմնական առանցքները ուղիղ անկյան տակ փոխհատվում են ստեղծագործության երկրաչափական կենտրոնում: «Մուտք Երուսաղեմ» նկարն ունի արտակարգ կուռ հորինվածք: Պատկերի ճիշտ կենտրոնում վեր բարձրացող խոշոր ծառը երկու մասի է բաժանում ողջ նկարագարդ մակերեսը: Կոմպոզիցիայի ուղիղ կենտրոնում տեղադրված է Քրիստոսի Աջը: Նկարում գրեթե բոլոր մանրամասները տարածական և չափային համադրության դեպքում ունեն իրենց զուգակշիռը: Նկարիչն այստեղ անվերապահորեն պահպանում է կոմպոզիցիայի հիմնական սիմետրիայի և ռիթմի սկզբունքները: Կարելի է անգամ ասել, որ այս մանրանկարը, հորինվածքի կատարելությամբ, որոշ աղերսներ ունի եվրոպական Վերածննդի վարպետների նկարչական սկզբունքների հետ<sup>96</sup>:

Նկարի բուն բովանդակությունը խտացված է նրա կենտրոնում, ուր պատկերված է Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ: Ինչպես ասվեց, հորինվածքի ուղիղ կենտրոնն ընտրված է Տիրոջ օրհնող Աջի համար: Թերևս պատահական չէ նաև նկարի հենց այդ մասում ծառի բնի վրա պատկերված, ձեռքերում ոստեր պահող մարդկային կերպարը:

Այն հավանաբար կապված է հայ մանրանկարչության





հնագույն ավանդների հետ (Իզմայլովա, 1967, 206-228): Մարգարեն շատ արդյունավետ է օգտագործել նկարի համար նախատեսված մակերեսը: Հորինվածքի հիմքում խաչի նշանը դնելուց բացի կիրառել է ճշգրիտ համաչափությունների մի ամբողջ շարք: Այսպես, եռահարկ աշտարակի և պատշգամբի լայնքը միջին մասում հավասար են (3,5սմ, այս չափը պայմանականորեն անվանում ենք նկարի մոդուլը), իսկ նկարի ողջ հիմքը բաժանված է այդպիսի հինգ հավասար մասերի: Դրանցով ուղղահայացներ տանելուց հետո պարզվում է, որ հորիզոնական ուղղությամբ ևս կան նկատելի համաչափություններ: Վերևում՝ շինության խաչակիր գմբեթի բարձրությունը և ներքևում՝ դրան հավասար դռան բարձրությունը երկու հորիզոնականով նշելուց հետո ստանում ենք երեք շարքում 15 ուղղանկյուն պարունակող վանդակապատկեր, որը ոչ միայն չի խանգարում մանրանկարին, այլև մեծապես ընդգծում է նրա մանրամասները: Այստեղ յուրաքանչյուր կերպար (առաքյալները և աղջիկները՝ զույգերով) առանձնացած է իր «շրջանակում»:

Մանրանկարի անկյունագծերին տարված զուգահեռները, ինչպես և հորինվածքի կենտրոնի շուրջը 3, 5, և 7 մոդուլ տրամագծով արված շրջանագծերը նույնպես ենթարկվում են որոշակի օրինաչափությունների: Ասվածից չպետք է հետևեցնել, թե նկարիչը նախապես կատարել է հենց այն գծագրումները, որոնք մենք ենք ներկայացնում: Սակայն փաստ է, որ նկարն օժտված է վառ արտահայտված համաչափություններով, ձևերի ներդաշնակությամբ: Մանրանկարում կոմպոզիցիայի արտակարգ զգացողությամբ տեղաբաշխված առարկաները և մարդկային կերպարներից յուրաքանչյուրը ունեն ոչ միայն համապատասխան միկրոմիջավայր, այլև այնպիսի դիրք կամ ժեստ, որն անպայման փոխպայմանավորված է մյուս ֆիգուրների դիրքով, շարժումներով և նկարի ողջ հորինվածքով:

Ջննենք, օրինակ, առաջին ծառի վրայի երիտասարդների պատկերները: Նրանք մյուս բոլոր մարդկային կերպարներից տարբերվում են իրենց դիրքով. պատկերված են թեթևությամբ և ոչ ուղղահայաց: Սակայն նրանք թեքված են տարբեր կողմեր ոչ այն պատճառով, որ չէին կարող պատկերվել ուղիղ կանգնած. ասենք՝ երկրորդ ծառի վրա գտնվող երիտասարդի նման, այլ՝ որովհետև այդ դեպքում նրանք կխախտեին ծառի սեպածև սաղարթի ուրվագիծը: Իրականում, եթե անգամ առաջին երիտասարդի համար կարելի է նաև ասել, որ նրա դիրքը պայմանա-

վորված է աղջիկների հետ խոսելու հանգամանքով, ապա երկրորդ երիտասարդն իր շեղ դիրքով գալիս է ապացուցելու, որ Մարգարեն նրանց հենց այդպես՝ պատկերի անկյունագծերին զուգահեռ պիտի նկարեր, քանի որ այդպիսին է նրանց միկրոմիջավայրի՝ ծառի սաղարթի թելադրանքը: Նման օրինակները մանրանկարում քիչ չեն:

Այժմ փորձենք խորանալ «Մուտք Երուսաղեմ» նկարի բովանդակության մեջ: Նախ նշենք, որ մանրանկարիչները (և ոչ միայն հայ) «Մուտք Երուսաղեմ» թեման մեկնաբանել են տարբեր կերպ. կամ որպես ժողովրդական տոնախմբություն հիշեցնող ջերմ ընդունելություն կամ էլ կրոնական սրբազան երթ (Շչեկոտով, 1913, 30): Առաջին դեպքում գաղափարական շեշտը դրվել է նոր թագավորի գալստյան հանգամանքի վրա, իսկ երկրորդում գերիշխում է Քրիստոսին սպասվող տանջանքների և եղերնական մահվան կանխազգացումը:

Մարգարեն հայ մանրանկարչության մեջ «...առաջին անգամ (Կիլիկյան «Մուտք Երուսաղեմը» ավելի ուշ) Քրիստոսի հանդիսավոր մուտքը պատկերում է որպես ինչ- որ քաղաքացու կողմից՝ իրեն հյուր եկածին դիմավորելու բակային տեսարան» (Դուրնով, 1979, 249): Իրոք, Մարգարեի մանրանկարում չկա «չարաղետ սպասումի ոչ մի պատրանք» (Մաթևոսյան, 1972, 87), իսկ այն, որ նկարիչն ավետարանական դրվագը ներկայացնում է որպես քաղաքային կյանքի մի տեսարան՝ կապված հյուրընկալության սովորույթի հետ, նշում են այս նկարին անդրադարձող գրեթե բոլոր ուսումնասիրողները՝ սկսած Գ. Հովսեփյանից: Նա գրում է. «Հիսուսի ընդունելությանը նկարիչը տվել է տեղական կենցաղային բնույթ՝ նմանեցնելով մի բարձրաստիճան անձի, կամ թագավորի ընդունելության» (Հովսեփյան, 1935, 73):

Սակայն եթե նկարում հյուր գնացողը միանգամայն հայտնի է, ապա ո՞վ է հյուր ընդունողը: Այս հարցի պատասխանն անուղղակիորեն տվել է դեռ Մարգարեն իր գրած հիշատակարանում: Այստեղ, ինչպես վերը տեսանք, նշվում են ստացող Սահակի ընտանիքի անդամները՝ հայրը՝ Ռիմանոսը և մայրը՝ Կատան, երկու եղբայրները՝ Իպատոսը (որը մահացել էր անժամանակ) և Առաքելը, երկու քույրերը՝ Ջարհան և Հռոմը: Գլխավոր հիշատակարանում կարդում ենք նաև, որ ձեռագիրը գրվելուց հետո պահվելու էր Արջո Առիճի վանքում՝ Սահակի ծնողների կառուցած եկեղեցում: Փաստորեն գրվել էր մի

**տոհմական Ավետարան, որը պետք է հանգրվաներ տոհմական եկեղեցում:**

Այժմ դիտենք «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը (Նկ. 17): Նրա աջ մասում Քրիստոսն է՝ երկու ուղեկիցներով: Առաջին ծառի բնի վրա պատկերված է ձիթենու ոստեր պահած մի կերպար, որը կապված է պատկերագրական հին ավանդների հետ (Իզմայլովա, 1967, 206-228), իսկ խափշիկը հագուստ է փռում ճանապարհին: **Եթե անտեսենք թվարկված այս հինգ «մեկնաբանելի» կերպարների առկայությունը նկարում, ապա դրա մնացած մասում կտեսնենք անեցի Ռիմանոսի ընտանիքն՝ իր ողջ կազմով:** Տան գլխավորը՝ Ռիմանոսը պատկերված է շինության մուտքի մոտ, նրա կինը՝ Կատան, տեղ է զբաղեցրել պատուհանի մոտ, երկու դուստրերը պատշգամբում են, իսկ երեք որդիները՝ ծառերի վրա: Նշված կերպարները, ըստ տարիքի, սեռի և թվի, **լրիվ համընկնում են Ռիմանոսի ընտանիքի անդամների տվյալներին և դա չի կարող պատահականություն լինել:**

Տեղին է հիշել նկարի մասին Լ. Դուրնովոյի գրած բացատրությունը. «Չարուստ վաճառականը դուրս գալով իր շքեղ դարպասից՝ հրամայում է ծառային ինչ-որ շոր փռել Քրիստոսի ավանակի ոտքերի տակ, մինչդեռ նրա կինը դիտում է տեսարանը լուսամուտից, իսկ աղջիկները մի սիրալիր երիտասարդից կանաչ ճյուղեր են ընդունում...» (Դուրնովո, 1952, նկարների բացատրությունը): Ինչպես տեսնում ենք, մանրանկարում ճյուղեր կտրելու գործին մասնակցում են երեք երիտասարդ, այսինքն՝ երեք եղբայր: Դրանով պարզ է դառնում, թե ինչու է Մարգարեն ծառերի վրա այդքան շատ մարդ նկարել, երբ ընդհանրապես հակված էր կրճատել գործող անձանց թիվը (ասենք Քրիստոսի 12 աշակերտների փոխարեն պատկերելով միայն երկուսին):

Վերևում, երբ խոսում էինք դիմավորողների հագուստի մասին, տեսանք, որ դրանք համապատասխանում են նկարչի ապրած ժամանակի տարագին: Մինչդեռ Քրիստոսը և նրա ուղեկիցները կրում են հնաճ հագուստ, նկարված են զգալիորեն խոշոր չափերով (որով ընդգծվում էր նրանց տարբերությունը մահկանացուներից) և կանոնական ձևերով (հակադարձ հեռանկարի կիրառումը Քրիստոսի ձեռքերի նկատմամբ, աշակերտների գլուխների և թիկնալայնքերի չափերի անհամապատասխանությունը և այլն): Ծառերի վրա գտնվողները, ընդհակառակը,

նկարված են անհամեմատ իրապաշտորեն, բավական բարդ դիրքերում ու կտրուկ շարժումներ անելիս: Այս ամենը գալիս է հաստատելու, որ «Մուտք Երուսաղեմ» մանրանկարի մի մասը, իրոք, զբաղեցնում է պատվիրատուի ընտանեկան դիմանկարը<sup>97</sup>:

Կարող է հարց առաջանալ. չէ՞ որ Սահակը և Առաքելը ընծայական մանրանկարում մորուքավոր են, Իպատոսը, ինչպես նշվեց, մահացած էր, և ընդհանրապես, ինչպե՞ս կարող էր Սարգարեն տերունական մանրանկարում մի ողջ ընտանիք պատկերել: Կարծում ենք, որ նկարչի առաջ խնդիր է դրվել վերարտադրել Ռիմանոսի ընտանիքը՝ իր երբեմնի ամբողջականությամբ: Այդ մտահղացումն իրագործելու համար Ռիմանոսի և Կատայի հինգ երեխաները պատկերվել են երիտասարդ տարիքում, երբ բոլորը մի հարկի տակ էին՝ անհոգ և ուրախ: Մինչդեռ ծեռագրի գրչության ժամանակ Սահակն արդեն քահանա էր, նրա եղբայր Առաքելն ու քույր Զոռոմն ամուսնացած էին, զավակներ ունեին, իսկ եղբայրներից Իպատոսը մահացել էր: Ի դեպ, արդյո՞ք մանրանկարում աջակողմյան **կես ծառի** վրա միայնակ պատկերվածը Իպատոսը չէ, որ «**կիսաւրեա ել յաշխարհէս**» (ԺԳ, 1984, 69): Սահակն ու Առաքելն, ընդհակառակը, պատկերված են նույն՝ կենտրոնական ծառի վրա, որպես տոհմի շարունակողներ: Կարելի է կարծել, որ մանրանկարում Քրիստոսի օրհնող Աջի հետ խաչածևվող այս ծառն ունի նաև տոհմածառի խորհրդարանական նշանակություն:

«Չաղբատի Ավետարանում» նկարվել է միայն մեկ տերունական մանրանկար, և «Մուտք Երուսաղեմ» թեմայի ընտրությունը պատահական չէ: Հավանաբար հենց Սարգարեն է պատվիրատուին հուշել այն միտքը, որ եթե հնարավոր չէ նկարել իրենց ընտանիքի անդամներին ընծայական մանրանկարում, որովհետև ստացողը Սահակն է, ապա մեկ այլ նկարում հնարավոր է այդ անել: «Մուտք Երուսաղեմը» ավետարանական ամենակարևոր դրվագը չէ, բայց եթե մտովի հիշենք այն բոլոր թեմաները, որոնք մանրանկարվում էին, ակներև կդառնա, որ նման նպատակի իրագործման համար ամենահարմարը «Մուտք Երուսաղեմն» է եղել<sup>98</sup>:

Ինչ վերաբերում է կանոնական մանրանկարում իրական մարդկանց պատկերելու նկարչի համարձակությանը, ապա բավական է հիշել խորաններում եղած դիմանկարները, որոնք կապ չունեն ոչ միայն Ավետարանի նկարազարդման, այլ անգամ պատվիրատուի տոհմի հետ:

Այսպիսով, Մարգարեի ստեղծած մանրանկարն ունի երկու շերտ. մեկում Քրիստոսի մուտքն է Երուսաղեմ, իսկ մյուսում՝ Ռիմանոս անեցու ընտանիքը: Թերևս հենց այս հանգամանքն է, որ մանրանկարին այդքան ինքնատիպություն է հաղորդել և մանրանկարչին դրդել կիրառելու նման բարդ հորինվածք: Դրանով պետք է բացատրել նաև մյուսների համեմատ այս նկարի խոշոր չափերը և այն, որ մանրանկարում «կերպարներն անհատականացված են» (Տեր-Ներսեսյան, 1977, 215):

Ռիմանոս անեցու ընտանեկան դիմանկարի գոյությունը Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարում եզակի երևույթ է, բայց ոչ՝ անսպասելի: Այն Անիի քաղաքային միջավայրում ծավալված արվեստի աշխարհականացման միտումի մի ինքնատիպ դրսևորումն է գեղանկարչության մեջ:

Մարգարեի ստեղծած հաջորդ մանրանկարն ընծայականն է՝ նկարված «Մուտք Երուսաղեմի» հանդիպակաց էջում (էջ 17ա): Պատկերը վերցված է կարմիր լայն շրջանակի մեջ, որի վրա նրբագիծ ոլորագարդեր են արված: Մանրանկարի խորքը կանաչ է: Հորինվածքի կենտրոնում Քրիստոսի մեծադիր պատկերն է, որի աջ և ձախ կողմերում տեղ են զբաղեցնում կրկնակի անգամ փոքր չափերով նկարված Սահակն ու իր եղբայր Առաքելը: Գ. Հովսեփյանի բնորոշմամբ «... թե՛ ընդհանուր մանրանկարը, և թե՛ մանավանդ՝ երկու եղբայրների պատկերները տալիս են անհատական և պատմական արժեք ունեցող գծեր» (Հովսեփյան, 1935, 72):

Դիմահայաց պատկերված ստացող Սահակը ժամանակի հայ հոգևորականին հատուկ հագուստ ունի, երկու ձեռքերով՝ կարմիր թաշկինակի մեջ պահում է ոսկեզօծ կազմով Ավետարան: Թավ հոնքերի տակից երևում են խոշոր աչքերը, մորուքն ալեխառն է: Սահակի պատկերից վեր Մարգարեն բոլորգրով հետևյալ հիշատակագրությունն է գրել. «Քրիստոս Որդի Աստուծոյ, ընկալ զՔո սուրբ զԱւետարանս ի սնապարտէս Սահակայ իբրեւ զխէրեւէշն այրոյն եւ ողորմեա ին[ձ]»: Քրիստոսի պատկերից աջ նկարված է Առաքելը, որի գլխավերևում գրված է «Առաքել ծառայ Աստուծոյ»: Մանրանկարում Անիի քաղաքացին հանդերձավորված է գոտևորված կարմիր պարեգոտով, ոտքերին երկգույն անկրունկ կոշիկներ կան: Առաքելն ունի երկար երկճյուղ մորուք,

գլխաբաց է, երեք քառորդով թեքվել և ձեռքերը մեկնել է դեպի Քրիստոսը:

Մանրանկարի կառուցվածքային առանցքը Քրիստոսի պատկերն է, «գեղարվեստական մի բարձր գործ» (Յուսեփյան, 1935, 72): Դեմքի խաղաղ արտահայտությամբ, վերասլաց հասակով, ոտքերի դիրքով այն կոթողային որմնանկարի տպավորություն է թողնում: Քրիստոսն Աջով օրհնում է, իսկ ձախ ձեռքով պահում է բացված Ավետարան՝ ոսկեգիր մակագրությամբ. «Ես եմ լոյս աշխարհի...» և այլն:

Ինչպես վերը նշեցինք, Մարգարեն ձևավորել է մահ Մատթեոսի և Մարկոսի ավետարանների անվանաթերթերը: Դրանք կազմված են գլխազարդերից, խոշոր լուսանցազարդերից և զարդագիր գլխատառերից: Չարդարանքում գերիշխում են բուսական մոտիվներն ու հյուսկեն զարդերը:

Այսպիսով, «Չաղբատի Ավետարանի» մանրանկարները, հատկապես՝ խորանները, «Մուտք Երուսաղեմը» և ընծայականը ներկայացնում են անեցիների, անհական կերպարի մի ուրույն պատկերասրահ, որի արժեքն անգնահատելի է հայ միջնադարյան արվեստի և քաղաքային մշակույթի պատմության համար: Մարգարեի ստեղծագործությունն ինքնատիպ է, որովհետև նա «ԺԳ դարի վարպետի համար համարձակ փորձ է անում առօրյա կյանքի դիպվածները տեղադրել կրոնական տեսարանի, կրոնական ձևերի մեջ» (Դրամբյան, Կորխմազյան, 1976, 66): Դա մի կողմից նկարչի նախաձեռնության, մյուս կողմից Անիի մշակութային հզոր հնոցում ձևավորված նոր աշխարհայացքի ու գեղագիտական ընկալումների արդյունքն է: Չիրավի ստեղծագործական միջավայրին է պատկանում այն որոշիչ դերը, որն էլ հնարավորություն է ընձեռել շնորհաշատ Մարգարեին իր ժամանակի համար «արդիականացնել» և հարստացնել Ավետարանի նկարազարդումը բովանդակային նոր շերտերով, կյանքից վերցված կերպարների և իրավիճակների գողտրիկ պատկերներով:

Ամփոփելով խոսքը Բեխենց վանքի գրչատան մասին՝ նկատենք, որ այստեղ գրված ու ծաղկված Մատենադարանի թիվ 5554 ձեռագիրը և միայն նկարազարդված «Չաղբատի Ավետարանը» թեև զարդարվածության աստիճանով զգալիորեն տարբերվում են իրարից, որը կապված է ստացողների

հնարավորությունների ու պահանջների հետ, սակայն երկու մատյանների նկարագրողման համար էլ բնորոշ է իրական ու բնականը ներկայացնելու ձգտումը: Առաջին դեպքում դա արտահայտվում է գլխավորապես լուսանցագրողերում, իսկ «Հաղբատի Ավետարանում»՝ Մարգարեի վրձնած մանրանկարների մեծ մասում:

Հանձին Բեխենց վանքի գրչատան՝ ունենք ԺԳ դարում Անիում ձեռագրաստեղծման ուշագրավ գործունեություն ծավալած մի կենտրոն, որը պետք է կարծել՝ անեցիների շրջանում մեծ հաջողություն է ունեցել, որովհետև իր միաբանների, գրիչների, մանրանկարիչների աշխարհայացքով և արտադրանքի բնույթով հաստատապես կապված էր քաղաքային միջավայրի հետ: Այստեղ կրկին հիշենք նաև վանքի հովանավորին, որը գեղարվեստի հարզն իմացող Տիգրան Հոնենցն էր:



## ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԳՐՉԱՏՈՒՆԸ

ԱՄԻ գրչության և մանրանկարչության պատմությունն ամբողջական չի լինի, առանց Հոռոմոսի վանքի գրչատան գործունեության ուսումնասիրության, որովհետև քաղաքի ծաղկման շրջանում այս վանքը ոչ միայն եկեղեցական, վարչա-տնտեսական, մշակութային սերտ կապերով, այլև տարածքային առումով, ուղղակիորեն ընդգրկվել էր Ամիի ոլորտը<sup>99</sup>: Գ. Հովսեփյանն Իզմատիոս Հոռոմեսցուն նվիրված իր հոդվածն սկսելով Ամիից մեզ հասած ձեռագրերի փոքրաթիվ լինելու վերաբերյալ նախաբանով՝ ավելացնում է. «Ամիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից աւելի դեր է կատարել մանրանկարչական և գրչութեան արուեստների կողմից. տաճարների բազմութիւնը և արձանագրութիւնների յաճախութիւնը ժԱ դարից սկսած, բայց մանաւանդ ժԳ և նոյնիսկ ժԴ դարու առաջին կէտում, մեր ձեռքը հասած մի քանի մնացորդներն ու տեղեկութիւնները հաստատում են այդ իրողութիւնը» (Հովսեփյան, 1935, 15):

Հատկանշական է, որ ժԱ դարից սկսած Հոռոմոսը ժամանակակիցների կողմից համարվում էր Ամի քաղաքի մասը կազմող վանք: Օրինակ, Հովհաննես Սմբատ թագավորի եղբայր Աշոտ Դ-ի մահվան մասին հայտնող Ուռհայեցին գրում է. «...բերաւ Աշոտ ի քաղաքն Ամի, և թաղեցին զնա ի տապանատունն առաջին թագաւորացն Հայոց», Հովհաննես Սմբատի մասին էլ գրում է, թե մահից հետո «թաղեցին զնա ի քաղաքն Ամի ի գերեզմանն առաջին թագաւորացն Հայոց» (Ուռհայեցի, 1991, 88, 92): Իսկ ինչպես հայտնի է, հենց Հոռոմոսում էր գտնվում Ամիի Բագրատունիների տապանատունը:

Հոռոմոսի վանքը հիմնադրվել է Աբաս Բագրատունու (929-953) կառավարման տարիներին, Բյուզանդիայից եկած հայ վանականների կողմից, որոնք խուսափելով այնտեղ սկսված կրոնական հալածանքներից՝ վերադառնում էին հայրենիք, հիմնում իրենց վանքերը: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը գրում է. «Իսկ ի գաւառն Շիրակայ՝ Հոռոմոսին կոչեցեալ վանք շինեցաւ ի

**ձեռն Յովաննիսի**, որ էր զարդարեալ յողորմածութեան զարդս» (Ասողիկ, 1885, 174): Վանականների, Բյուզանդիայից՝ հռոմների երկրից եկած լինելու պատճառով էլ վանքը ժողովրդի կողմից անվանվել է **Յոռոմոսի**:

Վանական համալիրը բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված երեք եկեղեցիներից, մի շարք մատուռներից և հարակից շինություններից: Կառույցներից հնագույնը՝ բուն Յոռոմոսը, փոքր եկեղեցի է (Թորամանյան, 1942, 299-405): Ասողիկն այն կոչում է Ս. Շողակաթ, երբեմն ենթադրաբար կոչվել է Ս. Մինաս: Նշանավոր են նաև Ս.Գևորգ որմնանկարագարդ եկեղեցին՝ կառուցված Գագիկ Ա Բագրատունու կողմից և Ս. Յովհաննես գեղաշեն մեծադիր կառույցը, գավիթով հանդերձ՝ հիմնված Յովհաննես Սմբատ թագավորի կողմից 1038թ. (Յոռոմոսի վանքի ճարտարապետության և արձանագրությունների մասին տե՛ս Մխիթարյան, 1970, Թիերի, 1980):

Վանքը, որ Բագրատունյաց շրջանում ծաղկուն վիճակի էր հասել արքունական հովանավորության շնորհիվ, հետագայում ևս անեցիների համար առաջնակարգ հոգևոր կենտրոնի դեր էր խաղում: Յոռոմոսն ունեցել է անվանի ուսուցիչներով և մեծաթիվ աշակերտներով հռչակված դպրոց, հարմարավետ ուսումնական շենքեր (Մովսիսյան, 1958, 272, Խալփախյան, 1971, 121): Տեղի եկեղեցիների պատերին պահպանվել են մեծ թվով վիմագիր արձանագրություններ, որոնք վկայում են վանական ընդարձակ կալվածքների և հարուստ ինչքի մասին:

Յոռոմոսում աշխատել են մի շարք հմուտ գրիչներ, որոնցից Իգնատիոսը միջնադարյան հայ լավագույն գրիչ-մանրանկարիչներից մեկն է համարվում: Գրչությանը են զբաղվել նաև Յոռոմոսի դպրոցի աշակերտները:

ԺԲ դարում բուն Անիում ստեղծված ձեռագրեր մեզ չեն հասել, սակայն այդ նույն ժամանակաշրջանում Յոռոմոսի գրչատան գործունեության մասին կարող ենք դատել Յովհաննես գրչի և մանրանկարչի ստեղծագործությանը ծանոթանալով: «Յովաննես մեր երևելի գրիչներից է», նշում է Գ. Յովսեփյանը (Յովսեփյան, 1951, 486): Գրչի ընդօրինակած, առայժմ հայտնի ամենավաղ ձեռագիրը մի Ավետարան է՝ գրված 1181թ., պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (թիվ 961 87): Ձեռագիրն ընդօրինակված է մագաղաթի վրա, գրությունը՝ բոլորգիր, ունի 344 թերթ (15x19 սմ), տող՝ 17 (Սարգսյան, 1914, 391): Գլխավոր

հիշատակարանի սկզբի մասը չի պահպանվել, անվճար մնացած հատվածում (էջ 343ա) նշվում է. «Գրեցաւ աստուածային եւ կենարար Աւետարանս ի թուիս Յայոց ի ՈԼ (1181) ի **տիեզերահռչակ վանս Յռոռմոսի** ընդ հովանեաւ Սուրբ Յովաննիսի, ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ առաջնորդութեան ուխտիս Խաչատրոյ եւ ի հոգեւոր տեսչութեան Կարապետի ծերացելոյ իմաստիւք...» (Յովսէփյան, 1951, 483):

Յովհաննեսը ձեռագրի գրչությունն սկսել ու ավարտել է հարազատ եղբայրների՝ Վարդանի ու Գրիգորի խրախուսանքով. ինչպես հիշատակարանում է գրում՝ «հրամանաւ Վարդանայ երէց եղբաւր իմոյ և ուսուցչի, սատարութեամբ կրտսեր եղբաւր աշխարհաւարի՝ Գրիգորոյ» (Յովսէփյան, 1951, 483): Այս վերջինս, լինելով աշխարհական անձ, նաև գրիչ էր և մասնակցել է սույն ձեռագրի սկզբի հատվածի գրչությանը: Ինչպես վկայում են Յովհաննեսի հաջորդ ձեռագրերի հիշատակարանները, նա միշտ սերտորեն կապված է եղել իր եղբայրների, հատկապես ավագի՝ Վարդանի հետ, որը լինելով Յռոռմոսի միաբաններից՝ նաև մեր գրչի ուսուցիչն էր:

Յովհաննեսը ոչ միայն գրիչ, այլև մանրանկարիչ էր: Նրա ստեղծած առաջին մատյանը զարդարված է խորաններով (էջ 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ.), ավետարանիչների պատկերներով (Մարկոս՝ էջ 100բ, Ղուկաս՝ 161բ, Յովհաննես՝ 270բ), անվանաթերթերով (էջ 5ա, 101ա, 162ա, 271ա) և լուսանցազարդերով: Նկարազարդման մասին Ս. Տեր-Ներսեսյանը գրում է. «Յռոռմոսի Ավետարանը... համեստ գործ մըն է, բայց շահեկան՝ հին ձեռագրերի և ժողովրդական ավանդությունների հետ ունեցած իր կապերի համար, կապեր՝ որ տեսնում ենք մանավանդ Ղուկասի և Յովհաննեսի կենդանագրերի պատկերազարկան ոճի մեջ, մարմինը՝ հանդիպահայաց, ոտքերը՝ կողմնակի շրջած ներկայացնելու եղանակով» (Ճանաչյան, Տեր-Ներսեսյան, 1966, 3): Խորանների գլխազարդերը հարդարված են հյութեղ գույներով նկարված երկրաչափական և բուսական զարդապատկերներով: Խորանների վերին մասում պատկերված են դեպի կենտրոնական բուսազարդը ուղղված թռչուններ:

Ձեռագրում չկա միայն Մատթեոս ավետարանիչի պատկերը, իսկ մյուս երեքը տեղադրված են համապատասխան ավետարանների սկզբում<sup>100</sup>: Ս. Տեր-Ներսեսյանն աղերսներ է նկատել այս ձեռագրի մանրանկարների և Վենետիկի թիվ 196/106 Ավետարանի նկարազարդման միջև՝ ենթադրելով, որ վերջինի ծաղկող Վարդը կարող է Յովհաննեսի եղբայր Վարդանը լինել<sup>101</sup>:

1181-1182թթ. Հովհաննես գրիչը Հռոմոսում ընդօրինակել է մեկ այլ ձեռագիր՝ Մաշտոց, որն այժմ պահվում է Երուսաղեմում (թիվ 3299): Հիշատակարանում գրված է. «Ես Յովանէս Հռոմոսի վանեցի՝ եղբայր Վարդանայ, մեծ տառապանաւք աշխատեցայ ի գիւտս բանից գրոցս եւ գրեցի ըստ իմում կարի, աղաչեմ յիշեսջիք զմեզ յաղաւթս» (էջ 123ա):

Հովհաննեսի ստեղծած մեզ հայտնի երրորդ ձեռագիրը գրված է 1187թ.: Բովանդակությունն է՝ «ճառք յաղագս վեցաւրէից սրբոյն Բարսղի Կեսարու»: Ձեռագիրը պահվելիս է եղել Կեսարիայի Ս. Սարգիս հայկական եկեղեցում, այժմ գտնվում է Երուսաղեմում (թիվ 1801, ձեռագրի նույն կազմի մեջ ամփոփված է նաև Սամուել Անեցու ժամանակագրության 1198թ. մի ընդօրինակություն: Պողարյան, 1972, 161-163):

Մատյանը գրված է թղթի վրա, ունի 386 թերթ (25,5x16,5սմ), գրչությունը՝ բուրգոգիր: Հովհաննեսը ոչ միայն ձեռագրի գրիչն ու մանրանկարիչն է, այլև ստացողը, ինչպես վկայում են նրա գրած հիշատակագրությունները՝ «զՅովանէս զաշխատասիրողս և զստացողս յիշեսջիք...» (Պողարյան, 1972, 161-163): Պահպանվել է նաև ձեռագրի գլխավոր հիշատակարանը, ուր նշվում է. «...լոկ անուամբ միայն քահանայ Յովանէս գծագրեցի զսա... **ի տիեզերահռչակ ուխտիս Հռոմոսի կոչեցեալ վանք**, ընդ հովանեաւ Սուրբ Յովանիսի, ի հայրապետութեան մեծարգոյ և հռչակաւոր առնն Աստուծոյ տեառն Բարսղի... Արդ ... խնդրեմ յամենեցուն, որ աւգտիք ի սմանէ, յիշեսջիք յաղաւթս զաճիւնացեալ մեղաւք զՅովանէս և զեղբայրն իմ զՎարդան միայնաւոր, հանդերձ ծնաւղաւք մերովք և եղբարքք: Թուական Հայոց ՈԼԶ (1187): Ընդ նմին և զԳրիգոր եղբայրս յիշեսջիք ի Տէր» (Պողարյան, 1972, 162-163): Ձեռագիրը զարդարված է «թանձրաներկ» լուսանցազարդերով: Հովհաննեսն այստեղ պատկերել է նաև Բարսեղ Կեսարացու դիմանկարը, որը հորինվածքով նման է նկարչի պատկերած ավետարանիչների վերը նշված նկարներին, բայց ավելի նուրբ ու մանրակրկիտ աշխատանքի արդյունք է:

Հռոմոսի Հովհաննես և Վարդան եղբայրների մասին ուշագրավ վկայություն է պահպանվել 1199 թ. մի հիշատակարանում: Այն տեղեկացնում է, որ Ծռես գյուղից Հակոբ քահանան մի Ավետարան է բերել ու կազմել տվել Հռոմոսում, իսկ գործն իրականացրել են Հովհաննեսն ու Վարդանը. «Յակովբ երէց

բնակիչ գեղջն, որ կոչի Ծռես, ստացաւ զսուրբ Աւետարանս եւ աղաչէ յիշել զինքն եւ զծնողսն եւ **զՅովհաննէս եւ զՎարդան եղբարք**, որք կազմեն: Կազմեցաւ ի դրան Սուրբ Կարապետիս ի վանքս Զոռոմոսի...» (Պողոսյան, 1990, 605): Զակոբ քահանայի մյուս հիշատակարանից երևում է, որ այդ ժամանակ Զովհաննէսը հավանաբար Զոռոմոսի գրչատան տնօրենն էր՝ «զՅակովբ քահանայ եւ զլծակից նորա, եւ **զՅովհաննէս վերակացու հոգեւոր գործոյս** յիշեսցէք ի բարին» (Պողոսյան, 1990, 605):

Այսպիսով, վերոհիշյալ երեք ձեռագրերը և 1199թ. հիշատակարանները մեզ ծանոթացնում են ԺԲ դարի վերջերին Զոռոմոսի վանքի գրչատանն աշխատող Զովհաննէս քահանայի գրչական, մշակութային գործունեությանը: Վերջինս ձեռագրեր է ընդօրինակել թե՛ այլոց և թե՛ իր համար, գրել է երկաթագրով, բոլորգրով, միաժամանակ զբաղվել նկարազարդմամբ, կազմարարությամբ, այսինքն՝ գրչության արվեստի հմուտ վարպետ է եղել: Ուշագրավ է նաև, որ Զովհաննէսը գործում էր հարազատ եղբայրների հետ, որոնցից Վարդանն, ինչպես երևում է, Զոռոմոսի ավագ միաբաններից էր և սկզբնական շրջանում ուսուցչություն է արել Զովհաննէսին: Իսկ կրտսերը՝ Գրիգորը, թեև աշխարհական էր, բայց սերտորեն կապված էր հոգևորական եղբայրների հետ և աջակից՝ նրանց գրչական գործերին:

ԺԲ դարի վերջերին Զոռոմոսի վանքում է գրված Մատենադարանի թիվ 3613 ձեռագիրը, որը պարունակում է Սամուէլ Անեցու ժամանակագրության ամենահին օրինակներից մեկը: Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 79 թերթ (16,5x11,5սմ), գրությունը՝ միասյուն, տեղ-տեղ աղյուսակավոր, գրչությունը բոլորգիր և շղագիր, տողերի քանակը՝ 18 և 26: Ձեռագրում ժամանակագրությունը հետևյալ վերնագիրն ունի՝ «Սամուէլ քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց: Յաղագս գիւտ ժամանակաց: Անցելոյ մինչև ի ներկայս: Ծայրաքաղ: Քաղաքաւ Անեցի» (ՄՄ, թիվ 3613, էջ 1ա):

Ձեռագրի գրիչը Մխիթար Անեցի արեղան է, որը հիշատակարանում իրեն անվանում է Զոռոմոսի վանքի աշակերտ և ձեռագրի ստացող՝ «Ձմեղաւոր ստացաւղս և զաշխատաւորս զՄխիթար և ծնաւղսն մեր և եղբայրսն յիշել աղաչեմ», «...զչուառ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն արեղայ և աշակերտ բանին ի վանացն Զոռոմոսի, սնեալ առ ոտս Սուրբ Յովանիսի յիշեսցիք ի

Քրիստոս աղաչեն» (ՄՄ, թիվ 3613, էջ 35բ, 26բ): Գրչությունից որոշ ժամանակ անց ժամանակագրական աղյուսակների ազատ մասերում մեկ այլ գրիչ հավելումներ է կատարել:

Շատ հնարավոր է, որ այս ձեռագրի գրիչ, Հռոմոսի աշակերտ Մխիթար Անեցին հետագայում հռչակված պատմիչ, Անիի Մայր տաճարի փակակալ Մխիթար Անեցին է: Անունների ու ժամանակաշրջանի համապատասխանությունից բացի պետք է նշել, որ Սամուել Անեցու ժամանակագրությունը սեփական օգտագործման համար ընդօրինակողն անպատճառ պատմագիտական նախասիրություններ ունեցող մեկը պետք է լիներ, որպիսին կարող էր հենց ապագա պատմիչը լինել:

### ԳՐԻՉ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԻԳՆԱՏԻՈՍ ՀՈՌՈՍՈՍՅԻ

ԺԳ դարի ամենանշանավոր հայ գրիչ-մանրանկարիչներից է **Իգնատիոս Հռոմոսցին**: Նրա ընդօրինակած, նկարազարդած կամ լրացրած մատյանները Հռոմոսի գրչատնից և ընդհանրապես Անիի շրջանից մեր օրերը հասած ձեռագրերի մեջ նշանակալից թիվ են կազմում: Իգնատիոսի վերաբերյալ կենսագրական սակավ տեղեկություններ են պահպանվել նրա ձեռագրերի հիշատակարաններում: Հայտնի են գրչի կյանքի և ստեղծագործության երեք թվականներ՝ 1214, 1232, 1236: Իգնատիոսը հիմնականում աշխատել է Հռոմոսի վանքում, մեկ ձեռագիր է ընդօրինակել Հավուց Թառում: Ունեցել է աշակերտներ, ականատես է եղել մոնղոլական արշավանքներին, որոնց մասին թողել է հիշատակագրություններ:

Իգնատիոսից մեզ հասած ձեռագրերից երեքը և մի պատառիկ պահվում են Մատենադարանում (թիվ 1519, 6202, 9649, պատառիկ՝ 928), երկու ձեռագիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Չիկագոյի համալսարանի գրադարան, Վ. Սինոնյանի մասնավոր հավաքածու), մեկական ձեռագիր՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (թիվ 134) և Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում (թիվ 36): Իգնատիոսի գրչական ու մանրանկարչական ժառանգությանն անդրադարձել ու այն բարձր են գնահատել Գ. Հովսեփյանը, Հ. Քյուրտյանը, Ա. Երեմյանը, Ս. Տեր-Ներսեսյանը և ուրիշներ:

Իգնատիոսից պահպանված ձեռագրերից վաղագույնը 1214թ. Հավուց Թառի Ամենափրկիչ վանքում ընդօրինակված Ավետարանն է (Վենետիկ, թիվ 134): Ձեռագրի նկարազարդումն ամբողջական չէ. պահպանվել են

միայն Մարկոսի և Հովհաննեսի ավետարանների անվանաթերթերը, լուսանցագարդեր ու զարդագրեր, որոնց քննությունը, սակայն, Բ. Սարգիսյանին դրդել է գրելու՝ «...ակներեւ կը տեսնուի ծաղկողի թե՛ ճարտար արուեստը եւ թե՛ նուրբ ճաշակը միանգամայն» (Սարգիսյան, 1914, 591), իսկ Ալիշանը մատյանը կոչում է «յոժ գեղեցկագիր» (Ալիշան, 1881, 27):

Հովհաննեսի ավետարանի վերջում գետեղված է ձեռագրի գլխավոր հիշատակարանը՝ գրված Իգնատիոսի ձեռքով, ստացողներ Թադեոս և Հայրապետ եղբայրների անունից: Վերջիններս գրչի մասին հայտնում են. «Տուաք գրել և նկարել Իգնատիոս գրչի ոսկւով և երանգ երանգ խառնուածով զարդարեալ» (ԺԳ, 83): Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հիշատակարանի վերջին հատվածը. «Եւ գրեցաւ ի թուիս Հայոց ՈԿԳ (1214) ձեռամբ Իգնատիոսի մեղաւորի... **Հոռոմոսի վանացն ոսկետուփ Աւետարանն եւ այս՝ մին գրչի է գրած**» (ԺԳ, 84):

Գ. Հովսեփյանն անձամբ տեսած չլինելով մատյանը՝ գրում է. «...մեծ հիշատակարանի վերջում մի օտար ձեռք ավելացրել է. «Հոռոմոսի վանացն ոսկետուփ Աւետարանն եւ այս մին գրչի է գրած», որից և պիտի եզրակացնել, որ ՈԿԳ թվականից առաջ կամ հետո գրել է մի Ավետարան Հոռոմոսի վանքի համար, որ դրվել է ոսկետուփի մեջ և մեր ձեռքը չի հասել» (Հովսեփյան, 1935, 16): Սակայն Վենետիկում 1966թ. հրատարակված «Հայկական մանրանկարչութիւն» ալբոմում, ձեռագրի մանրամասն նկարագրության հետ մեկտեղ, հիշատակարանի վերոհիշյալ ավարտական տողի մասին կարդում ենք. «...չափազանց յայտնի է, որ նոյն ձեռքով և նոյն մելանով գրուած են իբրեւ կանոնաւոր շարունակութիւն յիշատակարանի բնագրի» (Ճանշյան, Տեր-Ներսեսյան, 1966, 57): Հետևաբար այն գրված է ոչ թե «մի օտար», այլ հենց Իգնատիոսի ձեռքով, իսկ «Հոռոմոսի ոսկետուփ Ավետարանը» գրված է եղել 1214 թվականից առաջ և ոչ հետո: Հավանաբար այդ ձեռագիրը բավական նշանավոր է եղել (ոսկեկազմ լինելուց բացի ունեցել է շքեղ գրչություն ու նկարագարդում), որ Իգնատիոսը հարկ է համարել իր գրած հաջորդ՝ Հավուց Թառի Ավետարանում, հիշատակել այն: Հոռոմոսի ոսկետուփի Ավետարանը պետք է համարել Իգնատիոսից հայտնի (ցավոք՝ չպահպանված) առաջին ձեռագիրը՝ գրված մինչև 1214թ., որը միաժամանակ վկայում է, որ Հավուց Թառում աշխատելուց առաջ գրիչն արդեն որոշակի հեղինակություն էր վայելում և առնչություն ուներ Հոռոմոսի հետ:

Մատենադարանում պահվող Իգնատիոսի ձեռագրերից ամենանշանավորը և միակ թվակիր գործը Բագնայրի մեծադիր Ավետարանն է (ՄՄ, թիվ 1519)՝ գրված Հռոմոսի վանքում, 1232թ. Ջաքարե և Իվանե Ջաքարյանների քեռորդի իշխանաց իշխան պատրոն Խոռասի պատվերով: Հիշատակարանում ձեռագրի գրչության դրդապատճառի, ստացողի ու գրչի մասին կարդում ենք. «...մեղապարտ ծառայ Քրիստոսի Խաւռասս ի մարդասիրութիւնն Աստուծոյ յուսալով ետու գրել զսուրբ Աւետարանս ի յիշատակ անդրանիկի իմոյ [Սասն]ային եւ մաւր նորին Խութլու Խաթունին եւ ինձ բազմամեղի եւ ամուսնոյ իմոյ Ջմրուխտ Խաթունին... Եւ վասն յերկար կենդանութեան սիրելի որդւոյ իմոյ Վասակայ: Եւ աւանդեցի զսա ի սուրբ մենաստանն ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի, վերայդիտող աթոռոյս Անւոյ... Եւ արդ, **գրեցաւ սա ձեռամբ Իգնատիոսի ապաշնորի եւ մեղապարտ գրչի, ի ՈՉԱ (1232) թուականի, ի մեծահռչակ ուխտս ի Հռոմվմոսի կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետիս, ի մէջ սուրբ եղբարց...**» (ԺԳ, 179):

Հիշատակարանում նշվում է, որ Խոռասի առաջին կինը՝ Խութլու Խաթունը ևս, մահացել ու թաղվել էր Բագնայրում, որդու մոտ: Հետաքրքրական է, որ Խոռասի կանայք քրիստոնեություն ընդունած օտարազգիներ էին, Խութլու Խաթունը՝ «յազգէ գոլով պարսիկ», իսկ Ջմրուխտ Խաթունը՝ «ազգաւ տաճիկ» (ԺԳ, 179): Գլխավոր հիշատակարանից բացի ձեռագրում կան երկու փոքր հիշատակագրություններ Մարկոսի և Ղուկասի ավետարանների վերջում:

«Բագնայրի Ավետարանը» գրված է ընտիր մագաղաթի վրա, ունի 299 թերթ (41,8x29սմ), երկայուն գրությամբ: Գիրը խոշոր, զեղազիր երկաթագիր է, տառերը 8-16 մմ բարձրությամբ: Տողերի քանակը՝ 17: Տնագլուխները, որպես կանոն, սկսվում են գլխագրով և ոսկեգօծ մեկ տողով: Պահպանվել են Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի ավետարանների անվանաթերթերը (էջ 29ա, 99ա, 212ա), 135 նրբաոճ լուսանցազարդեր և 145 զարդագրեր: Լուսանցազարդերը սովորաբար դրված են զարդագրերի հավասարությամբ:

Ավետարանը սկզբի մասից թերի է և այժմ սկսվում է Ժ պրակից: Բնականաբար, չեն պահպանվել խորանները, որոնք տեղադրվում էին Ավետարանների սկզբում: Սակայն Մատենադարանում 9871 թվահամարի տակ պահվում են մագաղաթյա երկու թերթ (ձեռք են բերվել 1960



թ.), չորս խորանների պատկերներով, որոնք մեր կարծիքով սկզբնապես «Բազմայրի Ավետարանի» մասն են կազմել (Կ. Մ., 1985ա, 93-97): Մագաղաթները մեջտեղից ծավալած և օգտագործված են եղել որպես պահպանակներ, որի հետևանքով պատկերներն զգալիորեն վնասվել են: Խորաններից մեկի գլխազարդի մեջ խոշոր երկաթագրով գրված է հետևյալ հնգատող հիշատակարանը. «Ջպատրոն Խառնաս եւ // զամուսին իւր Ջմրու//խտ Խաթուն, որ զոս//կին ետ գրոցս յաղ//աւթս յիշեա ով Տէր» (ԺԳ, 180) (նկ. 33): Ինչպես տեսնում ենք, հիշատակվում են Բազմայրի Ավետարանի ստացողն ու նրա կինը որպես մանրանկարչության համար ոսկի հատկացնողներ: Խորանների և Բազմայրի Ավետարանի հնագրական, մանրանկարչական, չափային համեմատության արդյունքները և ստացողների նույնության հանգամանքը հաստատում են, որ խորաններն սկզբնապես պատկանել են Ավետարանի և Իգնատիոսի ձեռքի գործն են<sup>102</sup>:

Բազմայրի Ավետարանի նկարազարդման էական մասն են կազմում շքեղ անվանաթերթերը (նկ. 32): Դրանք կազմված են ուղղանկյուն կիսախորանից (գլխազարդ), էջի աջակողմյան երկայնքով վարից վեր ձգված մեծ լուսանցազարդից, խոշոր գլխատառով սկսվող զարդագիր մեկ տողից (անվանաթերթերի մյուս տողերը ոսկեգիր են)<sup>103</sup>:

Ջարդանկարչության փայլուն նմուշներ են նաև Ավետարանի բնագրում եղած բազմաթիվ լուսանցազարդերը: Դրանց մասին Գ. Յովսեփյանը գրում է. «Լուսանցքի զարդերը ցույց են տալիս, որ Իգնատիոսի արվեստը զուտ արևելյան բնույթ ունի, ազատ բյուզանդական ազդեցությունից» (Յովսեփյան, 1935, 23):

Բազմայրի Ավետարանը աչքի է ընկնում թե՛ գեղագիր գրչությամբ, թե՛ նկարազարդման հանդիսավորությամբ ու ձևավորման բարձր արվեստով. պատահական չէ, որ այն բնութագրվել է որպես «շքեղ», «փառավոր գործ»:

Իգնատիոսի ձեռագրերի մի մասն անթվական են: Դրանցից մեկը Մատենադարանի թիվ 9649 Ավետարանն է: Ձեռագիրն սկզբից և վերջից թերի է, որի հետևանքով չի պահպանվել գլխավոր հիշատակարանը: Մատյանը գրված է նուրբ մագաղաթի վրա, ունի 333 թերթ (28,2x20,2սմ), երկաթագիր, երկայուն գրությամբ, տող՝ 18: Դուկասի ավետարանի վերջում (էջ 254բ) պահպանվել է գրչի փոքր հիշատակագրությունը՝ «գիգնատիոս մեղաւոր գրիչ յիշեա ի Տէր, աղաչեմ»:

Ցավոք, ձեռագրում չեն պահպանվել խորանները և այլ մանրանկարներ, անգամ կտրվել հանվել են անվանաթերթերը,

որոնցից միայն մեկն է մնացել՝ էջ 255ա: Ձեռագիրը զարդարում են նաև 172 լուսանցազարդեր և 183 զարդագրեր: Տնագլուխները սկսվում են զարդագրով և շարունակվում ոսկեգօծ մեկ տողով:

Յովհաննեսի ավետարանի անվանաթերթը կառուցվածքով նման է Բագնայրի ավետարանի անվանաթերթերին (նկ. 30): Կիսախորանը կարմիր եզրագծով ուղղանկյուն է, որի ներսում երկրաչափական զարդեր են և զույգ կամարներում ամփոփված բուսական մոտիվներով զարդապատկերներ: Կիսախորանի վերևում պատկերված են երկու կաքավներ, որոնք կտցահարում են կենտրոնի ճյուղավորված զարդը: Անվանաթերթի ձախ կողմում, էջի ողջ երկայնքով վեր բարձրացող «Ի» տառին հաջորդում է զարդագիր մեկ տող, իսկ մյուս տողերը ոսկեգիր են: Լուսանցազարդի վերնամասի խաչը ձևով նման է Անիի պարսպի վրա պահպանված զինանշանի խաչին (նկ. 1): Դատելով գեղարվեստական հարդարանքի մանրամասներից, ոսկու բավարար կիրառության հանգամանքից, վարպետությամբ կատարված գրչությունից՝ այս ձեռագիրն Իզմատիոսն ստեղծել է ուժերի ծաղկման շրջանում, նյութական զգալի միջոցների տեր ստացողի պատվերով:

ՄՄ թիվ 928, 1774թ. գրված ձեռագրի կազմը մագաղաթյա մի թերթ է, որի երկաթագիր գրչությունը հար և նման է Իզմատիոսի ձեռագրին: Գրությունը երկայուն է, տողերի քանակը՝ 16: Էջերից մեկի ստորին լուսանցքում մանրատառ երկաթագրով գրված է. «զԻզմատիոս և զՔրիստափոր յաղաթս յիշեսջիք» (ԺԴ, 180): Պատառիկի բնագրի, ինչպես և հիշատակության գիրը անկասկած Իզմատիոսինն է, որն այսպիսով հեղինակն է նաև մի կորած ձեռագրի, որի միայն մեկ թերթն է մեզ հասել: Պատառիկը մի հատված է պարունակում «Գործք առաքելոցից»: Ինչ վերաբերում է Քրիստափորին, ապա նա կամ Իզմատիոսի աշակերտն է եղել, կամ գործընկերը, որին միայն այստեղ ենք հանդիպում:

Իզմատիոսի անթվակիր ձեռագրերից մեկը գտնվում է Վ. Սիմոնյանի մասնավոր հավաքածուում (ԱՄՆ, Կալիֆոռնիա): Դա մի Ավետարան է՝ գրված մագաղաթի վրա, բոլորգիր գրչությամբ: Ձեռագրի ստացողը Խաչատուրն է, որի անունը պահպանվել է Մարկոսի և Ղուկասի ավետարանների վերջում, Իզմատիոսի գրած փոքր հիշատակարաններից մեկում (ԺԳ, 192): Ավետարանում բացակայում է գլխավոր հիշատակարանը, իսկ Իզմատիոսի անունը պահպանվել է Ղուկասի և Հովհաննեսի ավետարանների անվանաթերթերում կիսախորանների կամարների տակ գրված հիշատակագրություններում. «զԻզմատիոս մեղաւոր ոսկենկար սուրբ Աւետարանիս յիշեա ի սուրբ աղաւթս քո ով տէր իմ», «Ձստացող սուրբ Աւետարանիս... եւ զԻզմատիոս մեղաւոր գրիչ յիշեսջիք ի Տէր՝ աղաչեմ» (ԺԳ, 192):

Ձեռագրի ստացող Խաչատուրը հավանաբար բարձրաստիճան անձնավորություն էր, քանի որ գրիչը նրան դիմում էր «տէր իմ» արտահայտությամբ: Դա երևում է նաև ստացողի հիշատակարանի ոճից. «... յորժամ զմայլիք կենսատու Աւետարանաւս... ասիցէք, թէ Տէր Աստուած ողորմեսցի Խաչատրոյ և իւր ննջե[ցե]լոցն» (ԺԳ, 192): Ձեռագիրը բավական վատ է պահպանված, մանրանկարների մեծ մասը հանված է: Կան միայն Ղուկաս և Հովհաննես ավետարանիչների պատկերները համապատասխան անվանաթերթերով և լուսանցազարդեր: Ավետարանի նկարազարդմանն անդրադարձած Գ. Հովսեփյանը գրում է. «Լուսանցքի զարդերից շատերը հիշեցնում են Բագնայրի ավետարանը, միայն ավելի փոքր դիրքով: Նույնը կարող ենք ասել և ավետարանների սկզբնազարդերի մասին: ...Մնացած են միայն Ղուկաս և Հովհաննես իրենց սկզբնազարդերով: Պատկերագրությունը հիշեցնում է միանգամայն Նոր Ջուղայի ավետարանը. դեմքերը նուրբ և թեթև կարմրացրած այտերով» (Հովսեփյան, 1943, 64):

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում 36 համարի տակ պահվող Ավետարանը Իզմատիոսից մեզ հասած միակ ամբողջական ձեռագիրն է: Այն գրված է նուրբ մագաղաթի վրա, ունի 406 թերթ (33,5x24սմ), գրությունը՝ երկսյուն, գրչությունը՝ երկաթագիր, տող՝ 17: Ձեռագրի էջերում կան մի շարք փոքր հիշատակագրություններ՝ գրված Իզմատիոսի ձեռքով, և գլխավոր հիշատակարան՝ գրված մեկ այլ գրչի կողմից: Մատյանի ստեղծման

գործում Իզմատիոսին օգնել է նրա Յովսեփ անունով աշակերտը. «զԻզմատիոս գծող սուրբ Աւետարանիս եւ զծնողս նորայ յիշեայ, ով եղբայր, յորժամ կարդաս, ընդ մմին եւ զաշակերտ նորայ զՅովսեփ մի մոռանայցես ի բարի կամաց, եւ Աստուած զծեզ յիշէ ի բարի» (ԺԳ, 193):

Ղատելով հիշատակարաններից՝ այս ձեռագիրը գրված չի եղել ստացողի նախնական պատվերով, այլ նախատեսվել է վաճառքի համար: Յիշատակագրություններից երկուսում գրչի անվան հետ միասին նշվում է ստացող՝ սակայն առանց որոշակի անվան հիշատակության (էջ 21ա՝ «Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա եւ Իզմատիոս գրչի», էջ 200բ՝ «զԻզմատիոս մեղաւոր գրիչ եւ զստացող սորայ յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմ»): Մյուս կողմից, ձեռագրի գլխավոր հիշատակարանում ստացող-գնորդ պարոն Բռնավորն ու նրա կին Տղատիկինը, ոչ միայն ոչ մի խոսք չեն ասում մատյանը գրել տալու մասին, այլև չեն նշում անգամ Իզմատիոսին: Ստացողները գրում են. «Ստացաք զգանձս աստուածային ի մեր արդար վաստակոց...», կամ (Բռնավոր անունից)՝ «ստացայ զաստուածախաւս մատեանս զայս... ի յարդար վաստակոց իմոց»: Այսպիսով, գլխավոր հիշատակարանում նշված 1236թ. ձեռագրի վաճառքի տարին է, իսկ Իզմատիոսն ու Յովսեփը իրենց գործը կատարել են մի փոքր ավելի վաղ: Սակայն պետք է նշել, որ ձեռագիրը ձեռք բերողներն այն ստանալուց առաջ պատվիրել են իրենց դիմանկարը, որն Իզմատիոսը նկարել է Մարկոս ավետարանչի պատկերի տակ:

Բռնավորն ու Տղատիկինն անգավակ էին և ձեռագիրն ստացել են որպես իրենց հոգևոր զավակ՝ «...ոչ ունելով մարմնաւոր զաւակ, ցանկացող եղաք հոգեւոր զաւակի» (ԺԳ, 194): Ստացողներն Ավետարանը նվիրել են Անիից հարավ գտնվող Խժկոնքի վանքին և այդ մասին նշում են ոչ միայն հիշատակարանում, այլև Խժկոնքի Ս. Սարգիս եկեղեցու 1240 թ. նվիրատվական արձանագրության մեջ<sup>104</sup>: Շատ հնարավոր է, որ ձեռագրի գլխավոր հիշատակարանը գրված լինի հենց Խժկոնքում, մանավանդ, որ նրա մի մասը վերաբերում է այդ վանքի միաբաններին. հիշատակվում են Պողոս վարդապետը, Աբաս եպիսկոպոսը, միաբաններ Սարգիսն ու Գրիգորը, իսկ Բռնավորի հիշատակարանին անմիջապես հաջորդում է Աբաս եպիսկոպոսի հիշատակարանը, ուր խոսվում է նվիրատուին հատկացվելիք պատարագների մասին (ԺԳ, 194-195): Ձեռագրի գլխավոր հիշատակարանը գրված լինելով մոնղոլական խոշոր

արշավանքի տարում, Անիի գրավումից հետո՝ որոշակի արժեք է ներկայացնում նաև պատմագիտական առումով<sup>105</sup>:

Խժկոնքի Ավետարանի հիմնական արժեքը նրա ամբողջական պահպանված բարձրարվեստ նկարազարդման մեջ է: Ձեռագրի սկզբում տեղադրված են 14 տերունական մանրանկարներ (էջ 1բ, 2ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա). շարքն սկսվում է Ավետումով և ավարտվում «Չորեքկերայան աթոռ Քրիստոսի» պատկերով (Տեր-Ավետիսյան, 1970, 205-206, Տեր-Ներսեսյան, Մխիթարյան, 1986, 60-64): Մանրանկարներին հաջորդում են խորանները (էջ 15բ-20ա), իսկ համապատասխան ավետարանների սկզբում տեղադրված են ավետարանիչների պատկերները և անվանաթերթերը (Մատթեոս՝ էջ 20բ, 21ա, Մարկոս՝ 124բ, 125ա, Ղուկաս՝ 201բ, 202ա, Յովհաննես և Պրոքորոն՝ 316բ, 317ա): Մատյանը զարդարված է նաև լուսանցազարդերով:

Տերունական մանրանկարների պատկերաշարը գալիս է ամբողջացնելու Իգնատիոսի ստեղծագործական նկարագիրը: Մանրանկարների մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղված Ս. Տեր-Ներսեսյանը նշում է դրանց գեղարվեստական և պատկերագրական մի շարք առանձնահատկությունները: Իգնատիոսի մանրանկարները հաճախ ունեն զգացմունքայնության, հուզականության դրոշմ: Նրա մանրանկարներում առանձնապես վառ արտահայտչականությամբ է ներկայացվում Տիրամոր կերպարը: «Ծնունդ» մանրանկարում այն պատկերված է խոշոր չափով և իշխում է ողջ տեսարանի վրա (նկ. 34): Մարիամը գլուխը շրջել է նորածնին երկրպագելու եկած մոզերից և ընկղմվել խորհրդածությունների մեջ: Դիմագծերը նուրբ ու գեղեցիկ են, հայացքն ինքնամփոփ ու մտազբաղ: Կերպարը շրջապատված է կոնաձև ժայռապատկերներով, որոնք ընդգծում են նրա մեկուսացվածությունը: Այս մանրանկարը համեմատելով 1272 թ. Սկևռայում նկարազարդված մեկ այլ ձեռագրի համապատասխան պատկերի հետ՝ Ս. Տեր-Ներսեսյանը նկատում է, որ թեև հորինվածի տարրերը երկու դեպքում էլ նույնն են, սակայն տպավորությունն այլ է. Իգնատիոսի նկարում շեշտը դրված է զգացմունքայնության վրա (Տեր-Ներսեսյան, 1979, 21): Տերունական մյուս մանրանկարներում ևս նկարիչն Աստվածամոր կերպարին առանձնահատուկ հմայք ու դրամատիզմ է հաղորդել:

Ղազարոսի հարության տեսարանում քույրերից մեկը ծնկի եկած գրկել է պատանքի մեջ գտնվող եղբորը և այտը քնքշորեն հպել նրա այտին: Այս հուզական տեսարանը, - գրում է Ս. Տեր-

Ներսեսյանը,- բխում է ոչ այնքան ավանդական պատկերագրությունից, որքան Ավետարանի տեքստից (Տեր-Ներսեսյան, 1979, 21):

«Մուտք Երուսաղեմ» մանրանկարում Քրիստոսն ու նրա ուղեկիցները պատկերված են ավելի խոշոր չափերով, քան քաղաքացիները: Հետաքրքիր է, որ այստեղ չկան քաղաքի մուտքը խորհրդանշող շինությունների պատկերներ: «Քրիստոսի Թաղումը» մանրանկարում պատկերված են ձվաձև գերեզմանաքարը շրջապատած վեց զինվորներ, որոնք կրում են սաղավարտներ և օղագրահ, զինված են կլոր վահաններով ու նիզակներով: Զինվորներից մեկը ձեռքն առաջ է մեկնել՝ ասես փորձելով թույլ չտալ, որ գերեզմանը բացվի:

Տպավորիչ կապույտ խորքը, գունային հետաքրքիր լուծումները և ընդհանրապես կատարման բարձր վարպետությունը բնորոշ են նաև «Ավետում», «Ընծայում տաճարին», «Ուտնվա», «Խաչելություն», «Հարություն», «Համբարձում», «Հոգեգալուստ» մանրանկարներին: Պատկերագրական առումով ուշագրավ է նկարաչարի վերջին մանրանկարը, որտեղ ներկայացված գահակալ Քրիստոսի պատկերը տարբերվում է ավանդական ձևակերպումներից (նկ. 35): Կից նկարված են Քրիստոսի տանջանքները խորհրդանշող գեղարդը, խաչը, իսկ պատկերի ստորին մասում՝ աստվածաշնչային քառակերպերից սերող (հետագայում՝ ավետարանիչների խորհրդանիշ համարված) մարդը, առյուծը, եզը և արծիվը: «Այս պատկերը Քրիստոսի երկրորդ հայտնությունը ներկայացնող առաջին օրինակն է հայ մանրանկարչության մեջ, որը հետագայում իր զարգացումն ունեցավ՝ ստանալով տարբեր ձևեր...» (Տեր-Ներսեսյան, 1986, 62): Միանգամայն յուրօրինակ է նաև մարդու, առյուծի, եզան և արծվի՝ գահի պատվանդանի երկու կողմերում շարքով պատկերված լինելու հանգամանքը, քանի որ վերջիններս թե՛ հայ արվեստում, թե՛ այլ երկրների քրիստոնեական արվեստի համապատասխան պատկերներում տեղաբաշխվում են Քրիստոսի գահի կամ լուսապսակի շուրջը:

Տերունական մանրանկարներից մի քանիսում («Ուտնվա», «Ղազարոսի հարությունը», «Հոգեգալուստ») պատկերի վերին մասը ձևավորված է կամարով, որից վեր, մինչև նկարի շրջանակը, զարդապատկերներ են: Սա տերունական նկարի մանօրինակ դեկորատիվ հարդարման առայժմ հայտնի հնագույն նմուշն է հայկական մանրանկարչության մեջ (Տեր-Ներսեսյան, 1986, 62-63): Ընդհանուր

առմամբ, ձեռագրի ավետարանական նկարաշարը գեղարվեստական բարձր ճաշակի և նկարչական մեծ վարպետության արտահայտություն է: Այն իրավամբ դասվում է հայ մանրանկարչության առաջնակարգ նվաճումների շարքում:

Խորանների հարդարանքը համեմատաբար պարզ է: Ջարդապատկերները սխեմատիկ են՝ դեկորատիվ փորագրություն հիշեցնող: Գլխազարդերից վեր պատկերված են թռչուններ (հաճախ՝ կաքավներ): Թռչնապատկերներ կան նաև լուսանցքներում:

Ավետարանիչներից երկուսը (Մատթեոս, Ղուկաս) պատկերված են գրեթե համանման դիրքերով. նստած են անթիկնակ աթոռին դրված բարձի վրա, ձախ ձեռքով պահում են Ավետարանը, աջում՝ գրիչ: Մանրանկարների խորքում պարսպապատեր ու վերասլաց բուրգեր հիշեցնող քարե շինություններ են պատկերված: Հովհաննես ավետարանչի և Պրոքորոնի պատկերներով մանրանկարի վերին աջ անկյունում երևում է Աստծու Աջը՝ ճառագայթով, իսկ ձախ կողմից դեպի ավետարանիչն է թռչում մի թևատարած արծիվ: Այս վերջին մանրամասնը, նման տեսարանի համար, պատկերագրական եզակի երևույթ է (Տեր-Ներսեսյան, 1986, 62):

Իզնատիոս Հռոմոսոսցին մի ինքնատիպ պատկեր է ստեղծել ձեռագրի 124բ էջում (նկ. 36): Մանրանկարի վերին մասում պատկերված է Սարկոս ավետարանիչը, իսկ ստորին կեսում նկարված են ձեռագրի ստացողներ Բռնավորն ու նրա կին Տղատիկինը<sup>106</sup>: Ձեռագրի մանրանկարներից միայն այս մեկը ձեռքի տակ ունենալով՝ Գ. Հովսեփյանը ժամանակին գրել է. «Այս մի խմբանկարն իսկ բավական է ցույց տալու, որ հանձին Իզնատիոսի ունենք մի կարող մանրանկարիչ Հռոմոսոսի և Անիի շրջանից, որ պետք է իր արժանավոր տեղը գրավի Արևելյան Հայաստանի մանրանկարչության պատմության մեջ» (Հովսեփյան, 1935, 28): Մանրանկարում ստացողները պատկերված են գրակալի վրա դրված կարմրակազմ, խաչազարդ Ավետարանի երկու կողմերում, ծնկի եկած, ձեռքերը դեպի ձեռագիրը պարզած դիրքով: Ձախ կողմում Բռնավորն է, որն ուսերին է զցել մորթե օձիքով, սպիտակի վրա կարմիր վանդակներ ունեցող վերնազգեստ, որի տակից հագել է կանաչավուն զարդարուն գործվածքով կապա: Գլխին բոլորածև, մորթիով երիզված ցածր գլխարկ է: Բռնավորը մորուքավոր է, ականջին ոսկե մեծ օղ ունի, իսկ մատնեմատին՝ մատանի:

Տղատիկինը հագել է երկար, մինչև ոտքերի ծայրերը հասնող ճերմակ շրջազգեստ, որը ծածկված է տերևներ ու ցողուններ

հիշեցնող ոսկեգույն և կարմիր զարդերով: Թևերին ունի թևոցներ, որոնք, ինչպես նշում է Գ. Յովսեփյանը, հագուստի սովորական մաս էին Մեծ Հայքի կենտրոնական շրջանների հայ կանանց համար մինչև մեր դարասկիզբը (Յովսեփյան, 1935, 30): Տղատիկինը մատանիներ է կրում ձախ ձեռքի ճկույթի և բութ մատին: Գլխին ունի կարմիր շրջանակի մեջ առնված սպիտակ կտորից ծածկոց, որի ցած իջնող եզրերը գրկում են նրա ուսերը: Լայն դեմքի վրա հստակ ուրվագծվող կամար հոնքերի տակից երևում են լայն բացված մոխրագույն աչքերը: Շուրթերի անկյուններում արված կետիկները Տղատիկնոջ դեմքին տալիս են ժպիտի թույլ արտահայտություն:

Ստեղծելով իր ժամանակակիցների դիմանկարները՝ Իզմատիոսն աշխատել է առավելագույնս ընդգծել նրանց հագուստների մանրամասները, դիմագծերն անհատականացնել, մի բան, որ նրան հիմնականում հաջողվել է: Մանրանկարն ունի ոչ միայն գեղարվեստական, այլև պատմա-ազգագրական արժեք:

Այսպիսով, Նոր Ջուղայի թիվ 36 ձեռագիրը, իր հարուստ նկարագարում, հայ միջնադարյան գրքային գեղանկարչության լավագույն հուշարձաններից մեկն է հանդիսանում: Այն ըստ արժանվույն է գնահատվել դեռ ստեղծման ժամանակ՝ ինչպես ստացողն է հիշատակարանում գրում. «Ստացայ... մատեանս զայս պայծառ միթով եւ գեղեցիկ գրով եւ ընտիր բանիւք, ցանկալի ամենայն տեսողաց...» (ԺԳ, 194):

Իզմատիոսից մեզ հասած հաջորդ երկու գործերը ստեղծվել են մոնղոլական դաժան տիրապետության շրջանում: Դրանք գրչի ամբողջական ձեռագրերը չեն, այլ միայն համաբարբառի խորաններ՝ նկարված ավելի վաղ գրված ձեռագրերի համար: Առաջինը Չիկագոյի համալսարանի գրադարանում պահվող մի Ավետարան է, որի տերուական մանրանկարները պատկերել է Աբաս երեցը, իսկ Իզմատիոսն ու իր աշակերտ Յովսեփը նկարելով խորանները՝ 1237թ. ձեռագիրը վաճառել են արցախեցի Գրիգոր և Վարդան եղբայրներին (Յովսեփյան, 1943, 53, Կ. Ս., 1982թ., 131): Իզմատիոսը և Յովսեփը խորաններում երեք փոքր հիշատակագրություն են գրել: Դրանցից մեկը գրված է հենց խորանի ներսում (էջ 13ա) ստորին աջ անկյան մոտ, մանրատառ երկաթագրով. «Յիշեա Տէր Աստուած զԻզմատիոս և զՅովսեփ»: Յետաքրքիր է, որ եթե Նոր Ջուղայի ձեռագրում Յովսեփը հիշվում է որպես Իզմատիոսի աշակերտ, ապա այստեղ նրա աշակերտ լինելը չի նշվում: Խորանները



կառուցվածքով մոտ են Իգնատիոսի՝ այլ ձեռագրերում նկարած խորաններին, բայց զարդարվածությամբ ավելի պարզ են: Այս կապակցությամբ Գ. Յովսեփյանը գրում է. «խորանների արվեստը պակաս զեղարվեստական է, քան Իգնատիոսի գործերն են, որ պետք է հասկացվի որպես Յովսեփի աշակերտի գործ» (Գ. Յովսեփյան, 1943, 57):

Գրիչ և մանրանկարիչ Իգնատիոսից առայժմ հայտնի վերջին աշխատանքը 909թ. Կոստանդնուպոլսում Թութայել գրչի գրած մի ձեռագրի (ՄՄ, թիվ 6202) խորաններն են, որոնք նա պատկերել է ԺԳ դարի 40-ական թվականներին: Մատյանը հետագայում պահվել է Արցախի Մեծ Շեն գյուղում, ուր տեղացիներն այն կոչել են «Կարմիր Ավետարան»: Իգնատիոսը ձեռագրի սկզբում ավելացրել է մագաղաթյա վեց թերթ, որոնց վրա պատկերել է տաս խորան, Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների պատկերներով սկզբնաթերթ (էջ 7ա): Նա գրել է նաև Մատթեոսի և Սարկոսի ավետարանների առաջին էջերը:

Խորանների հորիզոնական երիզների վրա Իգնատիոսը թողել է մի շարք կարճ հիշատակագրություններ (էջ 2ա, 3ա, 3բ, 5ա, 6ա, 6բ), որոնք վկայում են ժամանակի քաղաքական ծանր կացության, նվաճող մոնղոլների դաժանության մասին (նկ. 31): Դիմելով Բարձրյալին՝ նկարիչը գրում է. «Ողորմեա Իգնատիոս նկարչի... յորժամ գայցես ի սուկալի աւուրն:... Ոհ թաթար, վայ աւուրն, որ եկիր անցուցիր զաշխարհս: Ոհ ներեցեր Աստուած անչափ արիւնահեղութիւնս...» (ԺԳ, 195): Խորանները եզրափակող վերջին էջում (6բ) նկարված է զույգ մոմակալներով մոմերի արանքում բարձրացող մի մեծ խաչ, որի տակ գրված է. «Սուրբ նշան, աւզնեա մեղաւորիս Իգնատիոսի» (ԺԳ, 195): Նկարիչը չի նշում ստացողին: Խորանների գլխազարդերում նկարիչն օգտագործում է հյուսկեն զարդեր, խոշոր վարդյակներ: Հիմնականում դիմում է զարդանկարչական վաղ ավանդների, որը «...կարող է մասամբ օրինակի ազդեցության հետևանք լինել, որ անպայման հին է...» (Գ. Յովսեփյան, 1935, 35): Պետք է կարծել, որ խորանները պատկերելու ժամանակ Իգնատիոսը բավական ծեր էր, և դատելով հիշատակագրությունների ոճից, ինչպես նաև նկարազարդման մեջ ոսկի բոլորովին չգործածելու հանգամանքից՝ գտնվում էր նյութական ոչ բարվոք վիճակում: Խորանների գունաշարում ամենուրեք գերակշռում է կարմիր գույնը, որը թերևս ժամանակի ահասարսափ տպավորությունների արդյունք է: Կարմիրի նմանօրինակ շեշտվածությունն էլ հավանաբար

պատճառ է դարձել, որպեսզի հետագայում ձեռագիրը «Կարմիր Ավետարան» կոչվի:

Այսպիսով, Իզմատիոս Յոռնոսցին ապրել է ստեղծագործական բեղմնավոր կյանքով: Նա որքան տաղանդավոր էր որպես նկարիչ, նույնքան էլ շնորհաշատ գրիչ էր: Իզմատիոսի հստակ, համաչափ և վայելչագեղ երկաթագիրը իսկույն առանձնանում է ժամանակի բազմաթիվ այլ գրիչների ձեռագրից: Մանրանկարչության ասպարեզում, հենվելով հայ ավանդական գեղանկարչության նվաճումների վրա, նկարիչը հասել է գեղարվեստական նոր որակի: «Իզմատիոսի արվեստը ներկայացնում է մի շատ կարևոր շրջան Մեծ Հայքի մանրանկարչության պատմության մեջ» (Տեր-Ներսեսյան, Մխիթարյան, 1986, 64):

Գ. Հովսեփյանի բնորոշմամբ, Յոռնոսցի նկարչի ստեղծագործությունը «... զուտ արևելյան բնույթ ունի, ազատ բյուզանդական ազդեցությունից» (Հովսեփյան, 1935, 23): Նույն տեսակետը խորացնում է Ս. Տեր-Ներսեսյանը՝ գրելով. «Իզմատիոսի ոճը ավելի զուտ հայկական և արևելյան է» (Տեր-Ներսեսյան, 1947, 271): Իզմատիոսի արվեստն Աճիի մշակութային միջավայրի ծնունդն է, ու թեև իր բնույթով Մարգարեի ստեղծագործության համեմատությամբ ավելի պահպանողական, բայց կատարման առումով ավելի մշակված է և պատկերագրությամբ հարուստ:

## ՀՈՌՈՍՈՍԻ ԳՐՉԱՏԱՆ ԱՎԱՆԴԸ

Յոռնոսի գրչատան գործունեության մասին լրացուցիչ փաստեր ենք քաղում ծանոթանալով այստեղ կատարված կազմարարական աշխատանքներին: Ինչպես վերը տեսանք, 1211թ. Յոռնոսում կազմվել է Հաղբատի Ավետարանը Աբրահամ կազմարարի ձեռքով: Դժվար է տարակուսել, որ տեղում են կազմվել նաև Հովհաննես գրչի ու Իզմատիոսի ձեռագրերից շատերը: Դրանցից մեկի՝ Բագմայրի Ավետարանի հիշատակարանում թեև կազմարարության հանգամանքները չեն նշվում, սակայն նույն ձեռագրի՝ ԺԴ դ. կեսերին գրված նորոգման հիշատակարանից երևում է, որ այն սկզբնապես արծաթից և ոսկուց պատրաստված կազմ է ունեցել: «Բարեպաշտ ոմն Պարոն անուն ի մայրաքաղաքէս Անոյ, տեսի զսուրբ Աւետարանս, որ էր գրեալ և զարդարեալ ոսկւով և արծաթով մեծ պատրոնն Խաւռաս... անցեալ էր բազում ժամանակ և արծաթն և ոսկին խախտեալ էր և

**անգեալ:** Արդ ես մեղուցեալ Պարոնս... նորոգեցի զսայ ի հալալ վաստակոց իմոց» (Հովսեփյան, 1951, 891-893):

Խախտված և ընկած ոսկին ու արծաթն անկասկած ձեռագրի կազմին պետք է պատկանեին, ինչպես ժամանակին իրավացիորեն նկատել է Գ. Հովսեփյանը՝ գրելով, որ Պարոնը «նորոգել է տվել Ավետարանի կազմը» (Հովսեփյան, 1935, 89): Ուշագրավ է, որ անեցի բարերարի պատվիրած նոր կազմը ևս ոսկուց ու արծաթից է եղել (Հովսեփյան, 1951, 891-893): Սակայն, ցավոք, ոչ այս, ոչ Իգնատիոսի «Հռոմոսի ոսկետուփ Ավետարանի» կամ Հաղբատի Ավետարանի կազմերը, որոնք ոսկերչական, կազմարարական արվեստի մեծարժեք գործեր պիտի լինեին, չեն պահպանվել:

Հռոմոսից և ընդհանրապես Անիի շրջանից մեր օրերը հասած միակ կազմը 1347 թվականից է (նկ. 42): Այն ամփոփում է 1325 թ. Ջենովայում Աստվածատուր քահանայի ընդօրինակած Ավետարանը (այժմ պահվում է Էրմիտաժում՝ Արևելք -834): Արծաթյա, ոսկեջրած և դրոշմագարդ այս կազմի մի կողմում ներկայացված է Տիրամայրը մանկան հետ, մյուսում՝ Խաչելությունը: Պահպանվել են նաև դրոշմագիր արձանագրություններ, որոնք չնայած որոշ հատվածներում թերի են, սակայն որոշակի տեղեկություններ են պարունակում կազմի պատրաստման թվականի, ոսկերիչ-կազմարարի, ձեռագրի՝ Հռոմոսին նվիրվելու, նվիրատուների և այլոց վերաբերյալ:

Արձանագրություններն առաջին անգամ հրատարակել է Գ. Հովսեփյանը: Կազմի առաջին երեսին դրվագված խաչելության տեսարանը շրջանակող արձանագրության վերին մասն ընկած է, մնացածն, ըստ Գ. Հովսեփյանի, հետևյալն է. «... մայ որդոյ Մանկայսարին եւ Ասլան խաթունին ես Ջաջռ (վերջին տառը կարելի է ս կարդալ) եւ որդի իմ Ամիր Սմպատ («նպ» տառերը կցագիր են, վերջին «տ»-ն նաև հաջորդ բառի սկզբնատառն է, Կ.Մ.) տուաք զաւետարանս սբ. ուխտիս Հռոմոսի, որք ընթեռնուք յաղաթս յիշեցէք» (Հովսեփյան, 1930, 36-37, Կ. Մ., 1986ա, 66): Կազմի լուսանկարում որոշակիորեն երևում է, որ արձանագրությունը սկսվում է «ամայ» ձևով, որը «ամ» վերջավորությամբ սեռական հոլովված անձնանվան վերջնամաս է (Վահրամայ, Վռամայ և այլն): Գ. Հովսեփյանն արձանագրության մեջ նշելով Ջաջռ կամ Ջաջս՝ շարադրանքում նվիրատու հոր անունը գրում է Ջաջուռ, որն այդպես էլ կիրառվել է հետագա ուսումնասիրողների կողմից, մինչդեռ արձա-

նագրության մեջ գրված է «ես Ջաջա», ուստի նպատակահարմար է անփոփոխ թողնել անվան բնագրային ձևը՝ Ջաջ (Կ. Մ., 1986ա, 67):

Կազմի երկրորդ երեսին՝ «Տիրամայրը մանկան հետ» դրվագապատկերի վրա եղած գրությունն է. «Ստեփանոս... [Սար]գիս կրան[աւ]որս յիշեցէք յաղաթս մք(աղաչեմք)»: Աստվածածնի պատկերից վեր նշված է կազմի պատրաստման թվականը՝ ՉՂԶ (1347), իսկ գահավորակից ներքև գրված է ոսկերչի հիշատակագրությունը՝ «Ջմեղուցեալ ոսկերիչս Գրիգոր յիշեցէք»: Հիշատակված Ստեփանոսն ամենայն հավանականությամբ Հռոմոսի վանահայրն է, որի մասին տեղեկություն կա նաև վանքի Ս. Հովհաննես եկեղեցու 1336 թ. մի վիմագիր արձանագրության մեջ (Սարգիսյան, 1864, 159):

Թվում է, որ նույն 1336թ. արձանագրությունն օգնում է պարզելու նաև կազմի առաջին արձանագրության սկզբում նշված Մանկասարի և Ասլան խաթունի որդու ով լինելը, որը հավանորեն Վահրամ անունն է կրել «[ի տիրութեան վանացս Վահր]ամայ՝ որդոյ Մանկայսարին...»<sup>107</sup>:

Գրիգոր ոսկերչի պատրաստած կազմն ուշադրության է արժանի իր արվեստով ու պատկերագրությամբ: Ներկայացված տեսարաններն ակնհայտորեն կապվում են պատկերագրական հին ավանդների հետ: Խաչելություն հորինվածքի մասին Գ. Հովսեփյանը գրում է. «Ոսկերչական գործը, թեև ԺԴ դարու կեսերին է, բայց նրա օրինակ ծառայող պատկերագրությունը շատ ավելի հին է... Մարիամի և Հովհաննու տիպերը, հրեշտակների անդրիները, խաչեցյալի մարմնի դիրքը, բոլորը մատնանշում են մեր ԺԱ դարու մանրանկարչության մեջ ընդհանրացած երևույթները, որոնց ծագումը Թ-Ժ դար կարելի է տանել» (Հովսեփյան, 1983, 178): Տ. Իզմայլովան, մասնավորեցնելով սույն դիտողությունը, կազմի խաչելության տեսարանը համեմատում է Մողնու Ավետարանի (ՄՄ, թիվ 7735) համապատասխան մանրանկարի հետ՝ շեշտելով առկա ընդհանրությունները (Իզմայլովա, 1961, 246-258, Ստեփանյան, 1971, 49-50, նկ. 153-154): Նկատենք, որ հիշյալ հորինվածքը կառուցվածքով բավական մոտ է Իզմատիոսի՝ Նոր Ջուղայում պահվող Խժկոնքի Ավետարանի խաչելության մանրանկարին, միայն այնտեղ բացակայում են հրեշտակների պատկերները:

Կազմի հաջորդ երեսին ներկայացված է օղիգիդրիայի պատկերագրական հորինվածքը, ուր ցանցագործ գահավորակին

բազմած Տիրամայրն է՝ մանուկ Յիսուսը գրկին: Դրոշմապատկերի չորս անկյուններում շրջագծերի մեջ պատկերված են չորս ավետարանիչները, վերևում՝ Մատթեոսը և Մարկոսը, ներքևում՝ Ղուկասն ու Հովհաննեսը: Մարդկային բոլոր կերպարներն ուղեկցվում են համապատասխան մակագրություններով:

Գրիգորի պատրաստած կազմն, ըստ Գ. Հովսեփյանի, «ծագմամբ Անիից պետք է համարել, որովհետև նվիրված է մերձակա Հռոմոսի վանքին» (Հովսեփյան, 1983, 178): Տ. Իզմայլովան գրում է, որ իր կատարած հետազոտությունը «թույլ է տալիս խոսել եթե ոչ կազմարարական որոշակի դպրոցի, ապա արվեստանոցի մասին, որը գտնվել է Հռոմոսի վանքի շրջանում» (Իզմայլովան, 1961, 258): Ինչպես վերը տեսանք, Անիի մերձակայքում հենց Հռոմոսն էր հայտնի իր վարպետ կազմարարներով, որոնց մոտ ձեռագիր կարող էին բերել նաև այլ տեղից, և որոնք կազմեր էին պատրաստում թանկագին մետաղներից՝ արծաթից ու ոսկուց: Մեզ հասած կազմի դրվագապատկերների պատկերագրությունը վկայում է, որ այն կազմարարական գործի հիմնավոր ավանդներ ունեցող գրչատնից է սերում: Պատահական չպետք է համարել նաև Հռոմոսի միաբանների ու վանքի հետ առնչվող անձանց (Ստեփանոս, Սարգիս կրոնավոր, Մանկասարի և Ասլան խաթունի որդի [Վահր]ամ) հիշատակումը կազմի արձանագրության մեջ: Գրիգոր ոսկերիչն այդ միջավայրին մոտ կանգնած մեկը պետք է եղած լիներ:

Այսպիսով, բերված նյութերը վկայում են, որ տևական ու արդյունավետ է եղել Հռոմոսի գրչատան գործունեությունը: Այստեղ են աշխատել գրիչներ Հովհաննեսը, Մխիթար Անեցին, Իզնատիոսն ու իր աշակերտ Հովսեփը, կազմարար Աբրահամը, հավանորեն նաև Գրիգորը: Նշանակալից է Հռոմոսի ավանդը հայ գրչության ու մանրանկարչության պատմության մեջ: Կարելի է ենթադրել, որ վանքի 1229թ. մի վիճագիր արձանագրության մեջ նշված, նվիրատվության արժանացած գրատունը, ոչ միայն Հռոմոսի ձեռագրապահոցն է, այլև գրչատունը: Վաչե Վաչուտյան իշխանը և նրա կին Մամախաթունը գրում են. «**Եւ տուաք ընծայ գրատանս** զմեր գանձագին այգին ի յԱւշական» (Մխիթարյանց, 1870, 47): Փաստորեն գործ ունենք այն ինքնատիպ երևույթի հետ, երբ գրատուն-գրչատունը տնտեսական որոշ ինքնուրույնություն ուներ վանական ընդհանուր համակարգում: Գրատանը նվիրվաբերված այգիների մասին մի շարք վիճագիր վկայություններ ունենք Սանահինում՝ արձանագրված հենց գրատան պատերին (Ղաֆադարյան, 1957, 156, 162-163):

Հոռոմոսի գրչատան մասին մեր խոսքն ավարտելուց առաջ հիշատակենք ձեռագրական մշակույթի ևս մի քանի տեղեկություններ, որոնք վերաբերում են վանքի համեմատաբար ուշ և սակավ լուսաբանված շրջանի պատմությանը: Բանն այն է, որ Հոռոմոսի վերը հիշատակված 1336թ. արձանագրությունից հետո այստեղ մի քանի հարյուրամյակների ընթացքում գրված այլ թվակիր արձանագրություններ չեն պահպանվել, ինչն էլ որոշ ուսումնասիրողների հարկադրել է ԺԴ դարի կեսերից սկսած վանքի պատմության երեք ու կես հարյուրամյակն անհայտության շրջան համարել<sup>108</sup>: Սակայն վանքը գործում էր, նաև մշակութային կյանքով ապրում: Նախ 1336թ. արձանագրությունը վկայում է Հոռոմոսի կարգավորվող տնտեսական վիճակի մասին (այստեղ Ջաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ Ա-ի թոռ Վահրամ աթաբեկը վերստին վավերացնում է իր նախնիների կողմից վանքին տրված նվիրատվությունները և ավելացնում նորերը), իսկ 1347թ. վանքին նվիրաբերված արժեքավոր մատյանի կազմի արձանագրությունը՝ վանքի հովանավորի, վանահայր Ստեփանոսի և միաբաններից ոմանց անունների հիշատակությամբ, գալիս է լրացնելու Հոռոմոսի այդ շրջանի կայուն վիճակի պատկերը:

Դրանից շուրջ հարյուր տարի անց՝ 1459թ., Աստվածատուր եպիսկոպոսը Հոռոմոսին է ընծայել Այրիվանքում Մատթեոս գրչի ընդօրինակած մի ճաշոց (ՄՄ, թիվ 6272): Հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Արդ ես՝ Աստուածատուր եպիսկոպոս շնորհեցի գսուրբ գիրքս Հոռոմոսի վանաց դրանն, Սուրբ Յովանիսի և Սուրբ Աստուածածնին դրանցն, յիշատակ ինձ և ծնողացն իմոց...» (ԺԵ. Բ, 122): Մատյանը քառորդ դար Հոռոմոսում է մնացել: Այդ է փաստում նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարան՝ գրված Հոռոմոս այցելած Սարգիս Գ (1484-1515) կաթողիկոսի կողմից 1485-ին. «Ես՝ Սարգիս կաթողիկոս և Գրիգոր վարդապետ տեսաք զՏարեգիրքս, որ Աստուածատուր եպիսկոպոսն գրել է տուել և յիշատակ դրել ի Հոռոմոսի վանքս և անիծալք փակել, որ ի Սուրբ Յովանիսի դուռս կենայ: Մեք այլ կրկին հաստատեցաք զՏարեգիրքս ի Հոռոմոսի վանքս, ի դուռս Սուրբ Յովանիսիս, ի յառաջնորդութիւն վանացս Գրիգոր եպիսկոպոսի...» (ԺԵ. Գ, 70): Այստեղ կարևոր է հատկապես Գրիգոր եպիսկոպոսի՝ վանահայր լինելու մասին նշումը:

Սարգիս Գ-ի այցելությունից ճիշտ հարյուր տարի անց՝ 1585թ., Յոթնամյա Ավետարան է ընդօրինակել տեղի վանահայր Յովհաննեսը: Մատյանն այժմ պահվում է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում (Նոր Իուղա, թիվ 59): Հիշատակարանում գրիչը նշում է. «Նկարեցաւ սուրբ առաքելագործ Աւետարանս ձեռամբ Յոհանէս Եպիսկոպոսի Յոթնոսի վանաց...», միաժամանակ մի շարք հետաքրքրական տեղեկություններ հայտնում իր կյանքի ու ազգականների վերաբերյալ (Տեր-Ավետիսյան, 1970, 134, Կ. Մ., 1993ա, 76): Յոթնոսի Յովհաննէս անունով մեկ այլ Եպիսկոպոս վանահայր հիշվում է 1653թ. Վենետիկի ձեռագրերից մեկի հիշատակարանում (Ալիշան, 1881, 96):

Այսպիսով, վերը բերված հիշատակարանների վկայությունները գրեթե ամբողջովին լցնում են Յոթնոսի վանքի պատմության երեքուկես դարյա կարծեցյալ «անհայտության» շրջանը՝ հաստատելով, որ այդ ողջ ժամանակամիջոցում վանքը թեև գտնվել է դժվարին պայմաններում, բայց գոյատևել է, ունեցել բարձրաստիճան առաջնորդներ, հետևաբար նաև միաբանություն:

Սակայն վանքն այնուամենայնիվ մի կարճ ժամանակահատված լքվել է, հավանաբար հիշված վերջին Յովհաննեսից հետո, 1660-70-ական թվականներին:

20-30 տարվա անայությունն էլ բավական էր (եթե նաև նկատի ունենանք նախընթաց շրջանի դժվարությունները), որպեսզի 1685 թ. Յոթնոսն եկած և վանքի վերականգնման գործը ձեռնարկող Դանիել վարդապետը ցավով արձանագրեր տեղի վաղուց ի վեր «աւերեալ» լինելը: Դանիել Տիգրանակերտցու թողած արժեքավոր արձանագրության մեջ մասնավորապես ասվում է. «Ի ՌՃԼԴ (1685) թուաբերութեան հայոց նորոգեալ պայծառացաւ թագաւորաշէն մեծաքանչ Յոթնոսին վանքս ձեռամբ Դանիել Տիգրանակերտցոյ... Զի ունէր ժամանակս ոչ սակաւ աւերեալ, աղբով եւ հողով լցեալ, զոր տեսեալ վերոգրեալ Դանիել վարդապետին, եռաց ի հոգի իւր եւ էարկ զանձն ի չարչարանս, ի դառն ժամանակի, յորում ազգս Հայոց յոյժ էին չքաւորեալք, եւ իշխանութեամբ եւ քանիւ լուսաւորեալ մաքրեաց զվանքս Սուրբ Յովհաննիսի ի տղմուտ եւ ի զագիր մթազգացութենէն վասն յուսոյն որ առ Աստուած» (Մխիթարյանց, 1870, 42): Ժամանակներն իրոք դժվարին էին, բայց Դանիել Տիգրանակերտցու ազգօգուտ աշխատանքով նորոգված վանքում կրկին վերահաստատվեց հոգևոր կյանքը, որն այնուհետև առանց ընդհատվելու շարունակվեց շուրջ երկուսուկես հարյուրամյակ:

Մեր օրերն է հասել ժէ դարի ավարտին՝ 1699 թ. Ամիթեցի Դահմազի կողմից Յոռոմոսի վանքին նվիրաբերված մի վարագույր (պահվում է Հայաստանի Ազգային պատկերասրահում, Արևելք-225/1010): Բուն վարագույրի վերին մասում ավելացված կարմիր կտորի վրա երկու տողով ասեղնագործված է հետևյալ հիշատակագրությունը. «Յ(հ)շ(ատա)կ է վ(ա)րագուրս Համթեցի մղտսի Դահմազին ի դ(ու)ռն Ս(ուրբ) Յովանն, թվին ՌճԽԸ (1699) ի վանքն Յոռոմոսի Ս(ր)բ(ո)յն Մկրտչի»: Վարագույրի ընծայագիրը հավաստում է, որ Դանիել վարդապետի բարեկարգումներից հետո վանքի կյանքը կրկին աշխուժացել է և այստեղ եկած ուխտավորները, ինչպիսին էր Դահմազ Համթեցին, նպաստել են այդ վերագարթոնքին:

1714թ. Կարսում գրված մի հիշատակարանում Երեմիա գրիչը նշում է Յոռոմոսի նոր վանահայր Խաչատուր վարդապետին, որը մի ժամանակ եղել է նաև Կարսի Ս. Աստվածածնի առաջնորդը՝ «...առաջնորդութեան սուրբ վանացն Յովհաննու, որ այժմ ասի Ղօշավանք, Խաչատուր վարդապետի...» (ՄՄ, թիվ 4608, էջ 114-115): Այս հիշատակության մեջ առաջին անգամ վանքի հնավանդ Յոռոմոս անվանը զուգահեռ հանդիպում է Ղօշավանք (այլուր նաև Խոշավանք) օտարահունչ անվանումը, որն առաջացել է Յոռոմոս-Անի ճանապարհին կառուցված զույգ աշտարակավոր կամարի Ղոշեր (թուրքերեն՝ զույգ) անունից<sup>109</sup>: Վանքն այդպես է կոչում նաև Սահակ Էրզրումցին՝ 1765 թվականից առաջ գրած մի չափածո ստեղծագործության մեջ. «Տաղ Ղօշավանից Սրբոյն Յոհաննու ասացեալ ի Սահակէն...»: Ինչպես երևում է վերջին քառատողից, տաղը հենց Յոռոմոսում է գրվել. «Ի հռչակաւոր սուրբ ուխտիս՝ Յոռոմոսի Ղօշավանիցս, Սահակ դպիրս ասող բանիս, Շնորհատու Սուրբ Յօհաննէս» (Տաշյան, 1895, 863):

ԺԸ դարի կեսերին Յոռոմոսում հիշվում են երկու վանահայրեր: 1751թ. հատվածաբար պահպանված մի արձանագրության մեջ նշվում է Ավետիք եպիսկոպոսը (Թիերի, 1980, 85), իսկ այլ աղբյուրներում՝ 1751-55թթ. Եղիա վարդապետ Ալաշկերտցին (Եփրիկյան, 1907, 224-225): Վանքի արձանագրություններից մեկի համաձայն՝ 1788թ. Հովհաննես Շամբեցի վարդապետը նորոգել է Ս. Հովհաննես եկեղեցու զանգակատունը, վանքի պարիսպը և այլն (Մխիթարյանց, 1870, 49): Այս շրջանում աստիճանաբար վերականգնվում են նաև վանքի մշակութային ավանդները: 1782թ.



Ակնագյուղեցի Գրիգոր արեղան Զոռոմոսուն ընդօրինակում է Առաքել Սյունեցու «Մեկնութիւն սահմանաց Ղաւթի» գործը (Երուսաղէմ, թիվ 2023): Զիշատակարանում գրիչը հայտնում է. «Եւ արդ՝ գրեցաւ աստուածային բուրաստան գրքոյս... **ի գերասքանչ Վանքն Զոռոմոսի, որ եւ ի թագաւորէն Աջօտայ կերտեալ, եւ անուն Սրբոյ Կարապետին է կառուցեալ, որ եւ այժմ իսկ անուանի Ղոշավանք,** որ եւ անդ բազում աշխատանօք եւ նեղութեանք ծրեցի ձեռանք իմով՝ Ակնա գյուղեցի Գրիգոր մեղսալից տառապեալ արեղայս, ի վայելումն անձին իմոյ» (Պողարյան, 1974, 55):

Նոտրգրով ընդօրինակված այս մատյանը Զոռոմոսուն գրված մեզ հայտնի վերջին ձեռագիրն է:

Զոռոմոսի հնամյա վանքը բարվոք վիճակում էր գտնվում նաև ժԹ դարի ընթացքում<sup>110</sup>:

## ՆԵՐՔԻՆ ԲԵՐՂԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

### ԵՎ ԱՅԼ ՁԵՌԱԳՐԵՐ

**Բ**ելխենց վանքի և Հոռոմոսի գրչատների ձեռագրական ժառանգությունից բացի պահպանվել են նաև Անիի գրչության ու մանրանկարչության այլ հուշարձաններ՝ 1298թ. քաղաքի Ներքին բերդում ստեղծված Ավետարանը, ԺԳ-ԺԴ դդ. մի շարք այլ ձեռագրեր, որոնց մի մասը գրվել է Անիում, մյուսներն՝ այլ վայրերում, բայց անեցի գրիչների ձեռքով, իսկ մի քանիսն էլ այս կամ այն կերպ առնչվում են Անիի գրչության կենտրոնին:

Ներքին բերդի Ավետարանն այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգում: Տեղի Ասիական թանգարանի կողմից այն ձեռք է բերվել 1913թ., ավելի ուշ այդ թանգարանի հավաքածուի հետ անցել է Ռուսաստանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Պետերբուրգի բաժանմունքին, ուր և գտնվում է մինչև օրս՝ պահվելով Արևելք-44 համարի տակ: Ձեռագրի ուսումնասիրությամբ զբաղվել են Կ. Յուզբաշյանը (Յուզբաշյան, 1971, 77-94), որը կատարել է պատմաբանասիրական ու ձեռագրագիտական քննություն, և Տ. Իգմայլովան (Իգմայլովա, 1971, 289-309), որն անդրադարձել է Ավետարանի նկարազարդմանը: Հենց սկզբում նշենք, որ ձեռագիրը մի ամբողջություն չէ, այլ բաղկացած է միևնույն կազմի մեջ ամփոփված երկու առանձին միավորից՝ 1-167 թերթերն Ավետարան է, իսկ 168-213 թերթերը պարունակում են աղոթքներ և ջրօրհնեքի ծիսակարգ: Կ. Յուզբաշյանը գտնում է, որ երկրորդ մասը ծագումով ավելի հին է՝ ԺԱ-ԺԲ դդ., բայց Ավետարանին է կցվել հետագայում, 1596թ. ձեռագրի նորոգման ժամանակ (Յուզբաշյան, 1971, 81-82):

Բուն Ավետարանը գրանյութի առումով միատարր չէ: Նրա հիմնական մասը գրված է մագաղաթի վրա, իսկ 119 թերթից շարունակված է թղթի վրա: Պահպանված հիշատակարանները միայն Ավետարանի էջերում են, և դրանցում նշված տվյալները (գրչության տեղն ու ժամանակը, գրիչը, նկարիչը, ստացողը և այլն) վերաբերում են Ավետարանին, իսկ ձեռագրի երկրորդ մասի

վերաբերյալ որոշակի տեղեկություններ չունենք, պարզ է միայն, որ այն գրված է ուրիշ գրչի ձեռքով և ծաղկված չէ (ամբողջովին թղթի վրա է գրված):

Ավետարանը պարունակում է 16 պրակ, 167 թերթ (23,5x15,5 սմ), գրված է բոլորգրով, երկսյուն, տողերի քանակը՝ 29: Ձեռագիրն ընդհանուր առմամբ ամբողջական է, պակասում են բնագրի մի քանի թերթեր: Հիմնականում լավ է պահպանված, սակայն մի կազմի մեջ մագաղաթի և թղթի հարևանությունից փոքր-ինչ վնասվել է երկրորդը: Մի շարք թերթերում պրակակարի ուղղությամբ, միջնամասում, թուղթը կարծես «ճաքել» է, որովհետև մատյանի սկզբնամասի գրանյութ մագաղաթն ավելի կոշտ և դիմացկուն է, և թերթման հետևանքով երկրորդ մասի դյուրաբեկ թուղթը ծալքի տեղում մաշվել ու կտրվել է:

Ձեռագրի գրիչն է Եղբայրիկ աբեղան, նկարիչը՝ Խաչատուրը, պատվիրատուն՝ անեցի Հակոբ քահանան: Գլխավոր հիշատակարանը, որը գետեղված է Ավետարանի վերջում (էջ 166ա-167ա), մանրամասն տեղեկություններ է պարունակում պատվիրատուի տոհմի, ձեռագրի գրչության շարժառիթի, նրա՝ Արջո Առիճի ուխտին նվիրվելու և այլ մանրամասների մասին: Հիշատակարանը գրված է Եղբայրիկի ձեռքով, Ավետարանի գրչությունից մի փոքր մանր բոլորգրով: Մեջ ենք բերում հիշատակարանի առավել տեղեկաշատ մի քանի հատվածները. «Արդ, **Յակովբս** այս... ետ գրել զսա վասն յիշատակի հարազատ ըստ մարմնոյ եղբար իւրոյ **Ստեփաննոսի**... փոխեալն ի Քրիստոս...»:

Արդ, որք պատահիքդ, յիշեցէք... **զՍտեփաննոս** եւ **զՅակովբ**, զբոյրն **ըզՄներն**, զհայրն իւրեանց **զԿիրակոս** եւ զմայր՝ **զԻսելաւքն**, և զտղամանուկ **ըզՍարգիս**, յոր հանգցէ Քրիստոս ի հոգիս նոցա, նաև որ կենաւք են յաշխարհիս քւերորդիք սոցա զանդրանիկն **Գրիգոր**, որ տարաշխարհիկ գնաց, զոր Աջն անեղ խնամեսցէ ուր և է, և զմիւս եղբայրն **ըզՇահն**, որ այժմն զամենոյ ունի խնամակալութիւն...: Իսկ ես նուաստ եւ զանարդիս... **Յակովբ**, **ի մայրաքաղաքէս** Անոյ, հանդերձ աստուածագութ եղբարք իմ **Ստեփաննոսի**, **ի մանկութենէ վարժեալ ի սուրբ ուխտիս Արջևառևոյ**, **ի դրանս Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Գրիգորո**, **քրիստոսազար Սուրբ Նշանիս** հովանեաւ տաղաւարեալ եւ յայսմ տեղւոջ ընկալեալ զաւծումն քահանայութեան՝ պարգևաւք եւ ոչ ըստ արժանեաց, և քանզի ոչ ունէի այլ ինչ փոխարէն յաստուածակոյս կողմն հատուցանել եղբարն իմ **Ստեփաննոսի**, բայց միայն զկենսունակս զայս Աւետարան, զոր աւանդեցի և ընծայեցի ի բնական տեղիս մեր, ի սուրբ ուխտս **Արջևառևոս**, ի յիշատակ ինձ և եղբարն իմ և

վերասացել հաւր և մար և քեր և ամենայն արեան մերձաւորաց իմոց...:

**Արդ գրեցաւ սա ի քաղաքիս Անո, ի բերդս Ներքի կոչեցեալ, ձեռամբ Եղբայրիկ արեղայի, ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննիսի, յաշխարհակալութեան Ելղան Ղազանիմ, ի թագաւորութեան Յայոց Սմբատա, ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի, ի Վրաց թագաւորութեան Վաղթանգիմ, ի պարոնութեան ամիրսպասաւար Շահնշահի և եպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի, ի տէրութեան Արջևառճո Մագիստրոսենց տէր Յոհաննիսի և Ամիրիմ որդո Փախրադիմիմ:**

Արդ էր ի թիւ Յայոց Չիւտ (1298)» (ԺԳ, 816-818):

Ավարտվող գլխավոր հիշատակարանի հաջորդ էջում (167բ) պահպանվել է խաչատուր մանրանկարչի փոքր հիշատակարանը՝ գրված հենց նրա ձեռքով, մուգ կարմիր թանաքով. «Եւ զիս, զեղկելի նկարողս թերևս յամարէք արժանի յիշել ի Տէր և ի Տեառնէ խնդրել թողութիւն մեղաց, զի բազմադէմ են մեղք իմ, մի թէ ներեսցէ Տէր և ազատեսցէ ի կապից մեղաց, և Քրիստոս Աստուած յիշողքդ յիշէ յաւիտենից արքայութիւնն:

Բայց Գ (3) ժամ առնեն. միմն՝ **Աւետեցն**, միմն՝ **Տիկնոջն**, միմն՝ **Արքայիմ**, և Տէր կատարէ զխնդրուածս կատարողաց բանիմ, ամէն» (ԺԳ, 818): Յետաքրքրական է, որ նկարիչն այստեղ չի տալիս իր անունը: Այն գրված է Եվսեբիոսի մամակի խորանի (էջ 7ա) գլխազարդի փոքր կամարի տակ՝ կարմիր ներկով. **«գլխաչատուր նկարողս յիշեա ի Տէր, աղաչեմ»** (ԺԳ, 818): Ձեռագրում պահպանվել է նաև 1596թ. նրա նորոգմանը և Աստապատի վանքին նվիրվելու մասին մի հիշատակարան (էջ 168ա-169ա):

Ավետարանի գլխավոր հիշատակարանում թեև ժամանակի քաղաքական անցքերի մասին չի խոսվում, սակայն հիշատակվում են մի շարք քաղաքական ու հոգևոր գործիչներ՝ իրենց տիտղոսներով: Դրանք են մոնղոլ Ղազան խանը (Ելղան), (1295-1304), որի ընդարձակ տերության կազմում էր Յայաստանը, Կիլիկիայի Յայոց թագավոր Սմբատը (1296-1299), Յայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցիմ (1293-1307), Վրաց թագավոր Վախթանգ Բ-ն (1289-1292), ապա Անիի և Արջո Առիճի աշխարհիկ ու հոգևոր տերերը՝ Ջաքարեի որդի Շահնշահ Ա-ի թոռ

Շահնշահ Բ-ը, Անիի եպիսկոպոս Յովհաննեսը, Արջո Առիճից՝ Յովհաննես Մագիստրոսենցը և Փախրադինի որդի Ամիրը:

Հիշատակարանն արժեքավոր է Արջո Առիճի դպրոցի մասին պահպանած տեղեկությամբ: Հակոբ և Ստեփանոս անեցիները այստեղ են ուսանել վաղ հասակից՝ «ի մանկութենէ վարժեալ», և այստեղ էլ արժանացել քահանայական ձեռնադրության: Հակոբը հիշատակարանում նշում է նաև իր և եղբոր մտերիմ Ներսես քահանային. «յիշեսջիք և զհոգեւոր եղբայրն մեր զՆերսես կուսակրան քահանայ, որ էր մեր սննդակից և ցաւակից յամենայն իրս» (ԺԳ, 817): Հավանաբար Ներսեսը ևս Արջո Առիճում է ուսանել, այստեղ էլ եղել Հակոբի և Ստեփանոսի «սննդակիցը»: Անիի մերձակա Արջո Առիճի ուսումնական կենտրոն լինելու վերաբերյալ վկայություն կա նաև վանքի աշակերտ Աստվածատուրի հիշատակարանում՝ գրված ԺԳ դարի առաջին կեսին: Աստվածատուրն իրեն կոչում է «...աշակերտ եւ [սպասաւոր] ուխտիս Արջուառճո, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ...» (ԺԳ, 197):

Եղբայրիկի գրած ձեռագրի և հիշատակարանի ուսումնասիրության հետ է կապվում Անի քաղաքի տեղագրական կարևոր հարցերից մեկի ճշտումը: Գրչության տեղի որոշակի նշումը՝ «գրեցաւ սա ի քաղաքիս Անո, ի բերդս Ներքի կոչեցեալ», առիթ է հանդիսացել, որպեսզի պարզվի Անիում Ներքին բերդ անունը կրող վայրի ճիշտ տեղը: Կ. Յուզբաշյանն առկա նյութերի համոզիչ վերլուծությամբ ցույց է տալիս, որ մատենագրական մի շարք աղբյուրներում, ինչպես և վերը բերված հիշատակարանում նշվող **Անիի Ներքին բերդը հետագայում քաղաքի Աղջկաբերդ կոչված մասն է** (Յուզբաշյան, 1971, 88-93): Վերջին անվանումը ուշ շրջանի ժողովրդական ավանդության ծնունդ է (Ղանալանյան, 1969, 208-209), իսկ միջնադարյան հայ պատմիչներ Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին և Վարդան Արևելցին քաղաքի այդ հատվածը կոչում են Ներքին բերդ (Կ.Մ., 1984 ա, 110-115): Ներքին բերդում գտնվող Ս. Աստվածածին և Ս. Յովհաննես եկեղեցիների ԺԳ դ. վերջերի և ԺԴ դ. սկզբների մի շարք արձանագրությունները (Դիվան, Ա, 58-70), ինչպես և 1298թ. Ավետարանը վկայում են, որ հիշյալ ժամանակաշրջանում այստեղ հոգևոր ու մշակութային կյանքի որոշ աշխուժացում էր սկսվել:

Ներքին բերդի Ավետարանի գրիչ Եղբայրիկը հմուտ էր գրչության արվեստի մեջ: Հավասարապես տիրապետում էր երկաթագիր և բոլորգիր գրչությանը: Ավետարանի տնագլուխներն սկսում է կարմրագիր գլխատառով: Ցրվացանկերը և հիշատակարանը գրել է մանր բոլորգրով: Ինչպես ստորև կտեսնենք, Եղբայրիկը նաև վարպետ զարդանկարիչ էր:

Ամբողջական և ինքնատիպ է Ավետարանի գեղարվեստական հարդարանքը: Ձեռագրի սկզբում Եվսեբիոսի նամակն է Կարպիանոսին (էջ 2բ-3ա), որին հաջորդում են ութ խորանները (էջ 3բ-7ա): Տերունական մանրանկարները պատկերված են երկու հանդիպակաց էջերի վրա (էջ 7բ-8ա), պահպանվել են նաև չորս ավետարանիչների պատկերները՝ համապատասխան անվանաթերթերով (Մատթեոս, էջ 8բ, 9ա, Մարկոս՝ 49բ, 50ա, Ղուկաս՝ 75բ, 76ա, Հովհաննես՝ 125բ, 126ա): Ձեռագրի էջերում կան բազմաթիվ լուսանցազարդեր, որոնց մի մասը գծագրված են մանուշակագույնով, սակայն չեն գունազարդված:

Խորանների զարդանկարչությունը բավական պարզ է: Բացակայում են ուղղանկյուն գլխազարդերը, իսկ դրանց փոխարեն խորանների վերնամասերում պատկերված են երկկամար կամ եռակամար հորինվածքներ՝ թռչունների, բուսական մոտիվների և քառակուսի հիմքի վրա դրված խաչի պատկերներով:

Տերունական տեսարանները զետեղված են էջերի վերին և ստորին մասերում և ներկայացնում են ավետարանական հինգ դրվագ: Առաջին մանրանկարի (էջ 7բ) վերնամասում պատկերված է Ավետումը, ներքևում՝ Մարիամի այցը Եղիսաբեթին, երկրորդում՝ (էջ 8ա) վերևում ներկայացված է Ծնունդը և Սոգերի երկրպագությունը, ներքևում՝ Մկրտությունը և Հարսանիքը Կանայում: Մեկ էջի վրա մի քանի տեսարանների այսօրինակ մատուցումը կապվում է պատկերագրական հին ավանդների հետ:

Տերունական պատկերներն ունեն պարզ ձևակերպում, զուրկ են գունային խորքից: Մարիամի այցը Եղիսաբեթին մանրանկարում տեղ է գտել նաև այս տեսարանին նախորդող դրվագը՝ Մարիամը նստած է ջորու վրա, իսկ նրա դիմաց, ցածր աթոռակին նստած Հովսեփը ձախ ձեռքով բռնել է ջորու սանձը: Գետնին սփռված են ծաղիկներ, որոնց վրայով անցնում է ջորին: Ավետարանիչները պատկերված են թիկնավոր աթոռներին նստած, միայն Հովհաննեսն է կանգնած դիրքով, աջ ձեռքին երկար գավազան ունի: Նրա դիմաց, գահ հիշեցնող աթոռին նստած է Պրոքորոն աշակերտը, որը և գրում է ավետարանչի թելադրածը: Բոլոր չորս պատկերների վերին մասը ծածկված է պարուրվող ոլորազարդերով:

Տերունական և ավետարանիչների պատկերներից կատարման եղանակով նկատելիորեն տարբերվում են անվանաթերթերը: Դրանք ավելի նուրբ ու մանրակրկիտ աշխատանքի արդյունք են: Անվանաթերթերը կազմված են խոշոր գլխազարդերից, էջի աջ կողմում բարձրացող լուսանցազարդերից: Շարադրանքն սկսվում է մեծ զարդագիր տառով (Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի ավետարաններում՝ կենդանագիր) և երկաթագիր 3-4 տողով, ապա շարունակվում է բոլորգրով՝ երկայուն գրությամբ: Գլխազարդերի վերին մասերում պատկերված են ավետարանիչների համապատասխան խորհրդանշանները (մարդ՝ [հուշկապարիկ], առյուծ, եգ, արծիվ) գույգերով:

Ձեռագիր խորանները տերունական մանրանկարներն ու ավետարանիչների պատկերները Տ. Իզմայլովան համեմատել է 1303թ. Արճեշում ստեղծված մի Ավետարանի (ՄՄ, թիվ 4052) նկարազարդման հետ, և ցույց տալով դրանց ակնհայտ ընդհանրությունները, իրավացիորեն եզրակացրել, որ Խաչատուր նկարիչը հայ մանրանկարչության Վասպուրականի դպրոցի ներկայացուցիչ է (Իզմայլովա, 1971, 290-293): Ճիշտ է, կան հորինվածքային լուծումների տարբերություններ, բայց պատկերագրությամբ և կատարման եղանակով այս ձեռագրերի մանրանկարները նման են իրար: Խաչատուրին Վասպուրականի մանրանկարիչ է համարում նաև Յ. Հակոբյանը (Հակոբյան, 1976, 163):

Ներքին բերդի Ավետարանի նկարազարդման հանգամանքներին վերաբերող տվյալները (գրչի և մանրանկարչի հիշատակարանների համեմատությունը, մանրանկարների և անվանաթերթերի հարդարանքի որոշ տարբերությունը) տարակուսանք են հարուցում այն առումով, թե արդյո՞ք պատվիրատու Հակոբ անեցին է ձեռագիրը նկարազարդելու տվել, թե այդ արել են այլ անձինք: Նախ գրիչ Եղբայրիկը գլխավոր հիշատակարանում չի տալիս նկարչի անունը, իսկ Խաչատուրն իր հերթին չի նշում Եղբայրիկին կամ Հակոբին ու նրա ազգականներից որևէ մեկին: Խաչատուրը հիշատակարանում գրում է երեք պատարագների մասին, որ պետք է կատարվեին ոմն Ավետեացի, Տիկնոջ և Արքայի համար՝ «Բայց Գ (3) ժամ առնեն՝ մին Աւետեցն, մին Տիկնոջն, մին Արքային և Տէր կատարէ զխնդրուածս կատարողաց բանիս» (ԺԳ, 818): Այս երեք անուններից ոչ մեկին չենք հանդիպում Հակոբի ընդարձակ հիշատակարանում: Սյուս կողմից, ձեռագրի անվանաթերթերի զարդանկարչական ձևավորումը տարբերվում է

խորաններից, տերունական և ավետարանիչների պարզ պատկերներից: Անվանաթերթերն ավելի «հարուստ են զարդարված» (Իզմայլովա, 1971, 290), գունավառ են ու շքեղ: Ուշագրավ է, որ անվանաթերթերի հարդարանքում օգտագործված է ոսկի, իսկ հանդիպակաց էջերում՝ ավետարանիչների պատկերներում, նաև խորաններում ու տերունական նկարներում, ոսկի բոլորովին չի գործածված:

Թվարկված հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ Հակոբի պատվերով Եղբայրիկ գրիչը Ներքին բերդում ավարտել է ձեռագրի գրչությունը, միաժամանակ նկարել անվանաթերթերը, մանուշակագույնով գծագրել խորանների աղյուսակներն ու լուսանցազարդերը, ապա գրել գլխավոր հիշատակարան, ուր բնականաբար չի նշում որևէ նկարչի անուն: Դրանից հետո, թերևս, երբ մատյանն արդեն Արջո Առիճում էր, այն նկարագարողվելու է տրվում Խաչատուր մանրանկարչին՝ Ավետյացի, Տիկնոջ և Արքայի կողմից: Խաչատուրը նկարում է տերունական պատկերները, ավետարանիչների նկարները, ձևավորում ու գունագարդում Եղբայրիկի գծագրած խորանները, գունավորում լուսանցազարդերի մի մասը, այնուհետև գրում է հիշատակագրություն՝ խորաններից մեկի գլխագարդի կամարի տակ (էջ 3ա) ու հիշատակարան (էջ 167բ), ուր նշում է միայն իր գործի պատվիրատուներին: Ձեռագրում Եղբայրիկի կազմած պրակները 8 և 12 թերթանի են, միայն առաջին պրակը, թվում է Խաչատուրի միջամտության հետևանքով, կազմված է 10 թերթից:

Խաչատուրի անեցի նկարիչ չլինելն այսպիսով հաստատվում է թե՛ մանրանկարչական ոճական, թե՛ ձեռագրագիտական վերլուծության տվյալներով, և հասկանալի է դառնում, թե ինչու Ներքին բերդի ձեռագրի մանրանկարներն աղերսներ չունեն, ասենք Մարգարեի կամ Իզնատիոսի մատյանների նկարագարողությունների հետ: Եղբայրիկի ընդօրինակած ձեռագիրը նկարագարողված պետք է լինի 1298թ. մի փոքր ուշ, հավանաբար հաջորդող դարի առաջին տասնամյակին:

Ինչ վերաբերում է անեցի գրիչ Եղբայրիկին, ապա ինչպես տեսնում ենք, նա նաև հմուտ զարդանկարիչ է եղել: Չի բացառվում, որ այս գրիչը նույնն է այժմ Նոր Ջուղայում պահվող 1305թ. ստեղծված մի Ավետարանի գրիչ Եղբայրիկի հետ, որը նույնպես արեղա էր, գրում էր բոլորգրով, տների գլխատառերը՝



կարմիր թանաքով, այսինքն՝ այնպես, ինչպես Ներքին բերդում աշխատող Եղբայրիկ արեղան (Տեր-Ավետիսյան, 1970, 59): (Ցավոք, ձեռագրերի գրչության ու հարդարանքի համեմատության հնարավորությունը չունենք):

*Այժմ անդրադառնանք ևս մի քանի ձեռագրերի*, որոնք գրչության սկզբունքներով կամ նկարազարդման բնույթով ու ոճով առնչվում են Անիի ձեռագրական մշակույթի հուշարձաններին և կամ քաղաքում են գրված միայն մասամբ:

Ձեռագրերից առաջինն Ավետարան է (ՄՄ, թիվ 7635): Գրչության վայրն ու ժամանակն անհայտ են: Գրչության ժամանակը Մատենադարանի գրացուցակում ենթադրաբար նշվում է ԺԱ դ.: Գ. Գովսեփյանը գրում է՝ ԺԱ-ԺԲ դդ., իսկ Տ. Իզմայլովան՝ ԺԲ դ. վերջ, ԺԳ դ. սկիզբ (Ցուցակ, Բ, 575, Գովսեփյան, 1951, 1006, Իզմայլովա, 1984, 191):

Ձեռագրի սկզբում նկարված են ութ խորաններ, որոնք գծագրված են մանուշակագույնով, բայց չեն գունազարդված: Պահպանվել են նաև չորս անվանաթերթերը, ավետարանիչների և տերունական մանրանկարներ չեն նկարվել: Ձեռագրի ստեղծման ժամանակին վերաբերող միակ հիշատակագրությունը գրված է վերջին խորանի ստորին երիզի վրա. «**Ձմեղապարտ եւ զանարժան գրիչ Սոսթենէս յիշեսցիք ի Տէր**» (ՄՄ, թիվ 7635, էջ 5բ) (նկ. 26): Ավետարանի վերջում գլխավոր հիշատակարանի գրության համար ազատ տեղ է թողնված (էջ 266բ), բայց չի լրացված: Թվական ունեցող առաջին հիշատակարանը զետեղված է հաջորդ՝ 267ա էջում, գրված է ձեռագրի բուն գրչությունից տարբերվող, խոշոր, համեմատաբար անկանոն գրով: Այն վկայում է, որ 1249թ. Ավետարանը Հռոմոսի վանքին է նվիրել Խաչեղբայրի որդի Ավետյացը. «Աւետարանս Հռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս յԱւետեացս, որդոյ Խաչեղբաւրն... ի ՈՂԸ (1249) թուին» (ԺԳ, 252):

Հիշատակարանում ձեռագրի ստեղծման հետ կապված ոչ մի հանգամանք չի նշվում, քանի որ Ավետյացն այն հավանորեն գնել էր: Որ ձեռագիրն իրոք նախատեսված է եղել վաճառքի համար, երևում է այն բանից, որ խորանները չեն գունազարդված (այդ պետք է արվեր վաճառքի նախօրյակին և անդրադառնար գնի վրա), չկա գլխավոր հիշատակարան, որը ևս պետք է գրվեր վաճառքի ժամանակ, ընդ որում գնորդը կարող էր չնշել Սոսթենեսին, ուստի նա իր անունը գրել է խորանի երիզի վրա: Փաստորեն այս մատյանը, ստեղծման նպատակով, Բեխենց վանքի վերը քննված ձեռագրի (ՄՄ, թիվ 5554) բախտակիցն է: Այս երկու

մատյանները շատ նման են նաև չափերով և հարդարանքի տարրերով (Կ.Ս., 1990, 127-129): Իսկ ո՞րն է Սոսթենեսի ձեռագրի ստեղծման մոտավոր շրջանը: Տ. Իզմայլովան, ձեռագրի խորանների ու անվանաթերթերի ոճական վերլուծություններից ելնելով, դրանց և Իզմատիոսի ստեղծագործությունների միջև եղած զուգահեռները մատնանշելով, ենթադրում է, որ ձեռագիրը ստեղծվել է Զոռոմոսի վանքում կամ շրջակա գրչատներից որևէ մեկում (Իզմայլովա, 1984, 191-193): Ուսումնասիրողը մանրամկարչական նույն ուղղության և ստեղծման շրջանի հետ է կապում նաև Մատենադարանի թիվ 2952 Ավետարանը:

Արժեքավոր ձեռագրական հուշարձան է Չիկագոյի համալսարանի գրադարանում պահվող, մեզ արդեն ծանոթ Ավետարանը, որի խորանները նկարել էին Իզմատիոսն ու Զովսեփը: Ձեռագրի մանրամասն ուսումնասիրությամբ զբաղվել է Գ. Զովսեփյանը (Զովսեփյան, 1943, 45-59): Ավետարանում եղած առաջին թվակիր հիշատակարանը գրված է 1237 թ. ստացողներ Գրիգոր և Վարդան եղբայրների անունից, սակայն հիշատակարանում չեն նշված գրիչը, նկարիչը, ձեռագրի ստեղծմանը մասնակցած այլ անձինք (ԺԳ, 199): Ուստի միանգամայն իրավացի է Գ. Զովսեփյանը, երբ նկատում է, որ Գրիգորն ու Վարդանը ձեռագիրը «ստացել են միայն և ոչ՝ նոր գրել տվել» (Զովսեփյան, 1943, 59): Գիտնականը ելնելով հնագրական, մանրամկարչական տվյալներից և հենվելով խորաններում ու մյուս մանրամկարների մոտ եղած հիշատակագրությունների վրա՝ գրում է. «Ձեռագիրը մի ամբողջություն չէ. այստեղ տեսնում ենք առնվազն երեք ձեռքերի և ժամանակների աշխատանք: Բնագիրն ամենից հինն է, որի սկզբնագրերն ու լուսանցքի զարդերը տարբեր արվեստ ու ոճ ունեն, քան տերունական պատկերներինն է, որի մանրամկարիչն է «Աբաս նկարիչ տրուպ երեց»։ Բայց այս երկուսից տարբեր է նաև խորանների արվեստը, որի ծագումը կապված է մեզ իր շատ գործերով հայտնի Իզմատիոս նկարչի և նրա աշակերտ Զովսեփի անվան հետ» (Զովսեփյան, 1943, 53):

Հատկապես ուշագրավ են Աբաս նկարչի մանրամկարները, որոնք աղերսներ ունեն «Հաղբատի Ավետարանի» նկարազարդման հետ: Ձեռագրի սկզբում տեղադրված յոթ մագաղաթյա թերթերի վրա նկարված են նույնքան տերունական պատկերներ (էջ 1բ Ավետում, 2ա Ծնունդ, 3բ Սկրտություն, 4ա Պայծառակերպություն, 5ա Մուտք Երուսաղեմ, 6բ Խաչելություն, 7բ Համբարձում. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի

մանրաժապավենը՝ թիվ 942): Դրանցում առկա են պատկերագրական ինքնատիպ հորինվածքներ, անգամ պարականոն ավետարանների հիման վրա ստեղծված հատված, բայց ավելի հաճախ, նկարչի դիտողականության արդյունքը հանդիսացող մանրամասներ, հատկապես շինությունների պատկերման և կերպարների հագուստավորման մեջ:

Ավետում մանրանկարում հրեշտակի և Մարիամի պատկերները մի սրածայր կամարով առանձնացված են ճարտարապետական ֆոնից: Աստվածամոր լուսապսակը կարմիր է: Նկարի խորքում, աջից երևում է արտաքին սյունաշարով, ութ կամարներով երկհարկ շինություն, իսկ ծախից՝ ԺԳ դարի հայկական եկեղեցիներին բնորոշ բարձրադիր թմբուկով գմբեթ:

Ծնունդը ներկայացված է երեք դրվագով: Այստեղ ևս հիմնական տեսարաններն առանձնացված են սրածայր կամարով, որից վեր պատկերված են փառաբանող վեց հրեշտակներ: Առաջին տեսարանում պատկերված են պառկած մայրն ու նորածինը: Երկրորդ շարքում զույգ հրեշտակների ուղեկցությամբ երկրպագության եկած մոզերն են, որոնք ականատես են լինում մանկան լոզանքին: Այս հատվածի մասին Գ. Յովսեփյանը գրում է. «...տարօրինակ է, որ նրանք (մոզերը) հանդիպում են մանկան լոզանքի ժամանակ Սոլոմեի ձեռքով, ըստ անվավեր ավետարանի: Ուշադրության արժանի են նրանց գլխարկները, կոշիկները, հագուստն առհասարակ, որ Ջաքարյանց շրջանի զգեստն էր...» (Յովսեփյան, 1943, 45): Երրորդ՝ ստորին շարքում, գլխներին փաթթոց ունեցող հովիվներն են՝ իրենց ոչխարներով, այծերով և հոտը պահպանող շան հետ:

Ուշագրավ է «Մուտք Երուսաղեմ» տեսարանը, ուր Քրիստոսը քաղաքային մուտքին է մոտենում աջից (հմմտ. «Չաղբատի Ավետարանի» համանուն պատկերը)՝ երեք աշակերտների ուղեկցությամբ: Գմբեթակիր աշտարակով մուտքի մոտ եկողներին դիմավորում են երկու քաղաքացի, իսկ երկու պատանիներ հագուստ են փռում ճանապարհին: Մանրանկարի վերին աջ անկյունամասում երևում են ձիթենու բարձր ծառի ճյուղերը, որոնց միջև պատկերված է ոստեր կտրատող մի երիտասարդ: Մանրանկարի մեծ մասն զբաղեցնում է հզոր, երկհարկ ատամնավոր պարսպի պատկերը: Տեսարանի հիմնական գործողությունները ծավալվում են հենց պարսպի խորքի վրա: Առաջին պարսպի ատամնաշարքի հավասարությամբ մեկ ընդ մեջ պատկերված են Տիրոջ «մուտքին» հետևող հինգ դեմքեր: Իսկ երկրորդ՝ բարձրադիր

պարսպից երկու հոգի տոնական շեփորներ են հնչեցնում: Վերջիններս պատկերված են «ուշադրության արժանի գլխարկներով, նման «Հաղբատի Ավետարանին» (Հովսեփյան, 1943, 47): Տեսարանը ներթափանցված է անկաշկանդ ու անբռնազբոս տրամադրությամբ, ժողովրդական արվեստին հատուկ պարզությամբ և անմիջականությամբ:

Աբաս մանրանկարիչն է ստեղծել նաև չորս ավետարանիչների պատկերները (Մատթեոս՝ էջ 16բ, Մարկոս՝ 84բ, Ղուկաս՝ 139բ, Հովհաննես՝ 237բ): Մանրանկարները կազմված են երկու հիմնական մասից՝ նկարադաշտի երկու երրորդը զբաղեցնում են ավետարանիչների պատկերները, իսկ վերևում (մանրանկարի 1/3 մասում) նրանց խորհրդանշաններն են՝ ինքնատիպ ձևակերպմամբ ու զուգադրությամբ: Ուշագրավ է, որ բոլոր պատկերներում գրակալ-սեղան է դրված ոչ թե ավետարանիչների առջև, այլ՝ նրանց թիկունքի կողմում: Բայց առավել հետաքրքրական են ավետարանիչների խորհրդանշանները: Մատթեոսի պատկերից վեր նկարված են աթոռների վրա դեմ դիմաց նստած, աջ ձեռքերն առաջ պարզած երկու երիտասարդ, որոնց միջև տեղ է գտել մի վեցթևյան սերովբեի պատկեր: Երիտասարդները ներկայացված են «ԺԲ դարի վերջերի և ԺԳ-ի սկզբների մեզ հայտնի իշխանական զգեստով, նման Հաղբատի Ավետարանին» (Հովսեփյան, 1943, 48): Աջակողմյան երիտասարդը ձախ ձեռքին մերկացած սուր ունի, ձախակողմյանը՝ նիզակ: Երկու պատկերների մոտ էլ աջից գրված է «մարդ ըստ Մատթեոսի»: Մակագրություն կա նաև սերովբեի պատկերից վեր, որն անընթեռնելի է:

Մարկոսի պատկերից վեր նկարված է ծալապատիկ նստած մի երիտասարդ (հագուստը նման է նախորդներին), որն աջ ձեռքին ունի ուսին հենած կարճ պոչով նիզակ, իսկ առաջ պարզած ձախում՝ խնձորներով լի սկահակ հիշեցնող անոթ: Երիտասարդի դիմաց պատկերված է ետևի ոտքերի վրա նստած և առաջի թաթերը վեր բարձրացրած առյուծ, որն ասես պատրաստվում է վերցնել անոթը: Ղուկասի և Հովհաննեսի մանրանկարների վերնամասերում համապատասխանաբար նկարված են դեմ դիմաց կանգնած զույգ եզներ և զույգ արծիվներ՝ գլուխներն միմյանց կողմ շրջած: **Ավետարանիչների խորհրդանշանների պատկերումը զույգերով հազվադեպ հանդիպող երևույթ է:** Սակայն, ինչպես վերը տեսանք, Անիի Ներքին բերդի Ավետարանի

անվանաթերթերում եղբայրիկ գրիչը ճիշտ նույն սկզբունքն է կիրառել (նկ. 37, 38):

Ղուկաս ավետարանչի պատկերի տակ պահպանվել է նկարչի կարճ հիշատակարանը. «**Յիշեա զԱբաս նկարիչ տրուպ երէց**», որը կրկնված է նաև հունարեն ու վրացերեն լեզուներով: Նման մի հիշատակարան էլ նկարիչը գրել է Պայծառակերպություն մանրանկարի շրջանակի ստորին երիզի վրա:

Գ. Յովսեփյանն, ընդգծելով «Աբասի ազգագրական նկարների մերձավորությունը Հաղբատի նշանավոր ավետարանի հետ», եզրակացնում է. «Աբաս երեցի պատկերներն էլ նույն շրջանի և ժամանակի գործ ենք համարում» (Յովսեփյան, 1943, 59): Մենք նույնպես կարծում ենք, որ ձեռագիրն անիական միջավայրի ծնունդ է հանդիսանում: Նկարիչ Աբասն ավետարանական տեսարանների ներկայացման ու մեկնաբանման գործում ուրույն մոտեցում է ցուցաբերում: Նրա արվեստում բազմաթիվ են աշխարհիկ կերպարվեստի տարրերը, որոնց ի հայտ գալն անխզելիորեն կապվում է քաղաքային միջավայրի ներգործության հետ: Ավետարանի նկարազարդման մեջ իշխում է գրեթե նույն ոգին, ինչն առկա է «Հաղբատի Ավետարանում»:

Յարկ է ավելացնել, որ բացի տերունական և ավետարանիչների պատկերներից, այս ձեռագրի անվանաթերթերը և բնագրում եղած թեմատիկ լուսանցապատկերները (որոնք Գ. Յովսեփյանն այլ նկարչի գործ է համարում) նույնպես ուշագրավ դրվագներ ունեն: Մարկոսի ավետարանի անվանաթերթի գլխազարդում տեղ է գտել Բարեխոսություն (դեխոս) հորինվածքը: Նշելի է նաև 179ա էջի լուսանցքում նկարված, մանգաղով հացահատիկի բերք քաղող հնձվորի իրապատում պատկերը (նկ. 39):

Ձեռագրի ստեղծման վայրի որոշման հարցում օժանդակ փաստ է այն, որ խորանները նկարել են Իզմատիոսն ու Յովսեփը, որոնք աշխատում էին Հռոմոսում: Ավետարանի նկարազարդման ժամանակը կարելի է որոշել միայն ենթադրաբար: Ինչպես ասվեց, ստեղծողներ Գրիգորի և Վարդանի հիշատակարանում նշված 1237 թվականը մատյանի վաճառքի տարին է: Չի բացառվում, որ Աբասը տերունական և ավետարանիչների նկարները, իսկ Իզմատիոսն ու Յովսեփը՝ խորանները նկարել են հենց այդ կամ նախորդ թվականին և ակնհայտորեն ավելի վաղ գրված ձեռագիրը հարմարեցնելով ժամանակի պահանջներին՝ վաճառել են այն: Բայց քանի որ՝ ա) Աբասի, ապա Իզմատիոսի ու Յովսեփի հիշատակագրությունները տարբեր տեղերում են, և նրանք

իրար չեն հիշատակում, բ) Իզմատիոսի կիրառած գույները տարբեր են Աբասի օգտագործածից, գ) Իզմատիոսն ու Յովսեփը վարպետ նկարիչներ էին և մեկ այլ նկարչի կարիքը չէին զգա տերունական պատկերներ նկարելու համար, ապա՝ հակված ենք կարծելու, որ 1237թ. խորանները նկարելով՝ ձեռագիրը վաճառել են Իզմատիոսը և Յովսեփը, իսկ Աբասն իր մանրանկարներն ստեղծել է ավելի վաղ, հավանաբար դարասկզբին: Թերևս պատահական չէ, որ Աբասի հիշատակարանները եռալեզու են (մանրանկարների վրա եղած բոլոր մակագրությունները միայն հայերեն են): ԺԳ դարի սկզբներին Ջաքարյանների տիրապետության տակ գտնվող Անիում միանգամայն հնարավոր էր հայերենին զուգահեռ հունարենի ու վրացերենի օգտագործումը: Արդեն նշել ենք, որ Բեխենց վանքում ստեղծված ՄՍ, թիվ 5554 ձեռագրում հունարեն ծածկագիր կա, ավելացնենք, որ «Հաղբատի Ավետարանի» մի հիշատակարան էլ ավարտվում է հայերեն և հունարեն «ամեն»-ով (Յովսեփյան, 1951, 748): Ինչևէ, կրկնենք վաստակաշատ Գ. Յովսեփյանի խոսքերը՝ «Մեզ համար կարևորն այն է այժմ, որ... ավետարանի մի քանի ազգագրական պատկերները տարագի նկատմամբ մեծ նմանություն ունեն Հաղբատի ավետարանի հետ» (Յովսեփյան, 1943, 59): Յենց այս հանգամանքն էլ թույլ է տալիս մերժեցնել այս երկու ձեռագրերը թե՛ նկարագարդման վայրով, թե՛ ժամանակով:

Մատենադարանում 1342 թվահամարի տակ պահվող ձեռագրի (Իզմատիոս. Մեկնութիւն ււետարանին Ղուկասու) գրչությունն սկսվել է Երզնկայում և ավարտվել Անիում 1292թ.: Ամբողջական է գլխավոր հիշատակարանը, որը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ մատյանի ստեղծման անսովոր հանգամանքներին: Ձեռագրի հիմնական մասը, որի գրիչն անհայտ է, ընդօրինակվել է Երզնկայում, սակայն մահմեդականների կողմից քաղաքի գրավման հետևանքով, ձեռագրի պատվիրատու Ահարոն վարդապետը (մականունը՝ Գրիգոր) հեռացել է հայրենի քաղաքից, ապաստանել Անիում՝ իր հետ վերցնելով անավարտ մատյանը: Անեցի Սարկավազ քահանայից ձեռք բերելով «Մեկնության» մեկ այլ օրինակ՝ Ահարոնն ինքն է լրացրել ձեռագրի պակասող հատվածը՝ գրելով 246բ-261ա էջերը: Հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ ի մայրաքաղաքն Երզնկա, բայց ի կատարումն ոչ էլ, զի այլազգիք մահմետականք ասպատակեցին ի գաւառն... և բազում քրիստոնէայս... նահատակեցին և յանխնա և անողորմ սրակոտոր արարին և զայլսն գերի վարեցին... և որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանս, նոյնպես և մենք մազապուրծ

եղեալ բազում տառապանաւք և աշխատութեամբ դիմեալ յարևելից կողմն և խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդեալ հասոյց զմեզ յԱնի քաղաքս, և աստ եղև կատարումն գրոցս... ի թուականին Հայոց ՉԽԱ (1292), ի մարտի Ժ (10) և ի հոկտեմբեր ԺԳ (13), ձեռամբ մեղապարտ և անարժան վարդապետի Ահարոնի, մականուն Գրիգոր կոչեցեալ, ոչ բովանդակ գիրքս, այլ սակաւ թղթերն ի վերջին, որ այբն միագիծ է և այլ նշանագրեր կան, վասն որոյ աղաչեմ զընթերցողստ անմեղադիր լինել...» (ԺԳ, 672-673): Հիշատակարանի վերջում Ահարոնը նշում է իրեն աջակցութիւն ցույց տված անեցիներին:

Ձեռագրում կան կիսախորաններ և լուսանցագարդեր, որոնց հեղինակը հավանաբար ձեռագրի բուն գրիչն է: Պահպանվել է նաև Ղուկաս ավետարանչի պատկերը (էջ 5բ), բայց ներկը մեծ մասամբ թափված է: Ավետարանչի պատկերի վերին մասում մի բավական մեծ աքաղաղ է նկարված: Կարելի է կարծել, որ Ղուկասի պատկերը նկարվել է Անիում, քանի որ, սովորաբար, ձեռագրերի թեմատիկ մանրանկարներն ու ավետարանիչների պատկերներն ստեղծվում էին գրչության ավարտից հետո:

Անիի ձեռագրական մշակույթի հետ է կապվում քաղաքից 6 կմ. հարավ-արևմուտք ընկած Մաղասբերդ ամրոցում 1222թ. թարգմանված երազահանը: Ցավոք, ձեռագրի բնօրինակը չի պահպանվել, սակայն հետագա ընդօրինակություններում (ՄՄ, թիվ 695, գրված 1664թ. Չեյթունում, գրիչ և ստացող՝ Եփրեմ Տաթևացի, Վիեննա, թիվ 88, գրված **ԺԷ** դարի կեսերին Տրապիզոնում, գրիչ՝ Ամիրաս) արտագրվել է ձեռագրի հիշատակարանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ձայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ **Առաքել իմաստասէր արեղայն, որ մականունն Վառ ասեմն**, և Մխիթար Կլեկանց և Շերանն, ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ և անունն Մաղասբերդ և բերդին անունն Ծարքար: Ի յայն բերդին զընտանն մեծ մարդ մի կայր տաճկաց, և այս գիրս ի հետ յայն զընտանին և յայս Գ(3) հոգիս փոխել են ՈՅԱ (1222) թվին ի հայ լեզու...» (ԺԳ, 131): Վիեննայում պահվող ձեռագրում թարգմանիչների անունները փոքր-ինչ այլ կերպ են հիշատակվում (Տաշյան, 1895, 348), բայց կարծում ենք, որ առաջին դեպքում հիշատակարանն ավելի անաղարտ է: Ուշագրավ է Մաղասբերդի հիշատակության ձևը՝ ամրոց-բնակավայրը բնորոշվում է որպես «Անիի դռան վրա» գտնվող բերդ: Ինչպես տեսնում ենք, այս՝ զուտ

ռազմական նշանակություն ունեցող կենտրոնը ևս դուրս չի մնացել Անիի մշակութային ոլորտից և դարձել է թարգմանության ու գրչության վայր:

Մոնղոլական արշավանքի անմիջական տպավորության տակ, Անիի շրջանում է գրված Վենետիկի թիվ 99 Ավետարանի հիշատակարանը: Գրչի անունը չի պահպանվել, սակայն նա, նշելով ասպատակողների կատարած ավերածությունների մասին, գրում է, որ նրանք դաժանաբար էին գործում Արարատյան գավառում, առավել ևս՝ Անիում, որ ինքն անձամբ է տեսել («յոր իմ է տեսեալ»): Գրիչը հայտնում է նաև, որ իր ծնողներն ու ազգականները նահատակվել են այդ ժամանակ՝ «...սպանան սրով և ողորմելի մահուամբ ելին յաշխարհէս» (ԺԳ, 196): Ականատես հեղինակն ամենայն մանրամասներով նկարագրում է մոնղոլներին՝ սկսած տեսքից մինչև վայրենաբարո վարքը: Հիշատակարանում Անիի ողբերգության մասին ասվում է. «... թուականին ՈՁԵ (1236)... յարեաւ ազգ մի գազանաբարոյ... եւ այնչափ անողորմ էր, որ թէ հրեղէն լեզու ստանամ՝ ոչ կարեմ պատմել զանցս չարչարանացն, որ ետ ըմպել զբաժակն բարկութեան Այրարատեան գաւառին, և Անոյ՝ ևս առաւել, յոր իմ է տեսեալ զանհնարին ողբն և զաղետս տարակուսանացն...»: Ձեռագրի մի քանի էջերը գրել ու այն կազմել է Վարդան արեղան (ԺԳ, 196):

Այսպիսով, վերը նշված ձեռագրերն ու հիշատակարաններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվելով Անիի ձեռագրական մշակույթին՝ իրենց նպաստն են բերում քաղաքի գրչության և մանրանկարչության, ինչպես և մշակութային ընդհանուր ժառանգության ուսումնասիրության գործին:



## ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՔԱՂԱՔԻ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

**Մ**ոնղոլների ներխուժման հետևանքով դեռևս ԺԳ դարի կեսերին Անհի բնակչության մի ստվար հատվածը թողեց հայրենի քաղաքը և բռնեց արտագաղթի ուղին: ԺԳ դարում Անին գտնվում էր մոնղոլների տիրապետության տակ, թեև մինչև դարի կեսերը անմիջականորեն ենթարկվում էր Ջաքարյանների տոհմի ներկայացուցիչներին: Այդ շրջանում քաղաքը մեծապես տուժում էր իշխողների հարկային ծանր քաղաքականությունից: Քանի որ երկրում հստակ կարգ ու կանոն չկար, հարկահավաքներն ապօրինաբար մեծացնում էին գանձվող հարկի չափը, որը բնակչության համար դառնում էր անտանելի: Աբու-Սայիդ խանի՝ Անիում թողած 1330թ. պարսկերեն արձանագրությունը վառ կերպով վկայում է, որ քաղաքից կատարվող զանգվածային արտագաղթը սպառնալից բնույթ էր կրում<sup>111</sup>:

Եթե դարասկզբին Անիում տիրող իրավիճակը բնորոշվում է հիշյալ արձանագրությամբ (հմմտ. նաև Աղբուղայի 1301թ. արձանագրությունը, Դիվան, Ա, 28), ապա դարավերջի իրականության համար հատկանշական է 1398թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում ներկայացված պատկերը. «...զոմանց զտուն այրեցին, զոմանց զվաստակ կերան և զպահուստն զամեն գտան և զանառիկ ամրոց **Անին առին և զայն որ խնայեցին, յետո հարկապահանջութեամբ արարին իբր զկողպուտ**» (ԺԴ, 621):

Չայտնի է, որ աղբյուրագիտական նյութերը սակավ են Անիի հատկապես ԺԴ դարի պատմության վերաբերյալ: Բավական է նշել, որ այդ պատմաշրջանում գրեթե չունենք որևէ հայ պատմիչի երկ, ուր հիշատակվեր նախկին մեծահռչակ մայրաքաղաքը: Այս պայմաններում որպես սկզբնաղբյուրներ առաջնակարգ նշանակություն են ստանում վիճագիր արձանագրություններն ու ձեռագրերի հիշատակարանները:

Անիի գրչության կենտրոնի պատմության ուսումնասիրության տեսակետից առավել կարևոր են այն հիշատակարանները, որոնք գրվել են բուն քաղաքում, սակայն որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև անեցի գրիչների կողմից՝ այլ վայրերում

գրված ձեռագրերն ու հիշատակարանները: Ընդհանրապես, պետք է նշել, որ քաղաքի անկման շրջանի գրչության արվեստի նմուշները խիստ սահմանափակ են, և դա բնական է թվում, երբ նկատի ենք ունենում Անիի քաղաքական ու տնտեսական չափազանց ծանր կացությունը: Սակայն միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ չնայած բոլոր դժվարություններին, Անիի գրչության կենտրոնը բավական կենսունակ է գտնվել, և դրա շնորհիվ այժմ կարող ենք խոսել ոչ միայն քաղաքի գոյամարտի, այլև նրա մշակութային կյանքի երկարակեցության մասին:

Նախ համառոտակի անդրադառնանք արտագաղթողներին: Դրանց թվում քիչ չէին մտավորականության ներկայացուցիչները, որոնք քայքայված քաղաքում չգտնելով ապրուստի միջոց՝ հեռանում էին այնպիսի վայրեր, ուր համեմատաբար նպաստավոր պայմաններ կային: Չպետք է մոռանալ նաև, որ այդ շրջանում մահմեդականություն ընդունած մոնղոլները կրոնական հալածանքներ էին սկսել հատկապես հայ եկեղեցու սպասավորների նկատմամբ, իսկ գրչությամբ զբաղվողները՝ գրիչներն ու մանրանկարիչները, հիմնականում աշխատում էին վանքերին ու եկեղեցիներին կից եղած գրչատներում: Նրանց համար այլևս ապահով հանգրվան չէր Անի քաղաքը:

Գրչության արվեստի հնուտ վարպետ էր Պարսկաստանի Սուլթանիա քաղաքում հաստատված գրիչ, մանրանկարիչ և կազմարար Մխիթար Անեցին: Հայտնի են գրչի չորս ձեռագրեր՝ գրված 1321 (Ժողովածու, ՄՄ, թիվ 2961), 1334 (Ավետարան, Երուսաղեմ, թիվ 1941), 1338 (Աստվածաշունչ, ՄՄ, թիվ 4429) և 1356-1357 (Ավետարան, ՄՄ, թիվ 7740) թվականներին: Ձեռագրերից առաջինի հիշատակարանում չի նշվում գրչության վայրը, իսկ ժամանակը նկարագրվում է մռայլ գույներով «...յայսմ նեղ և ի նսեմ, դառն և ի դժնեա աւուրքս գրեցի, որ էր սով սաստիկ և սրածութիւն և սասանութիւն և չարիս պէս պէս և զանազան...» (ԺԴ, 171): Հաջորդ երկու ձեռագրերում հիշատակվում է գրչության վայրը՝ Սուլթանիան, իսկ ժամանակը չի բնութագրվում «պէս պէս և զանազան» դժվարություններով: Արդյո՞ք առաջին մատյանի գրչության ժամանակ Մխիթարն Անիում չէր...

Սուլթանիայում այս շրջանում բազմամարդ հայ համայնք կար, որի հոգևոր առաջնորդներն էին Գրիգոր Եպիսկոպոսը և Սարգիս քորեպիսկոպոսը: Ինչպես հիշատակարաններն են վկայում,

Մխիթար Անեցին բարեկամական ջերմ հարաբերությունների մեջ էր 1326 թվականից մի փոքր առաջ Անիից Սուլթանիա եկած Գրիգոր քահանայի ընտանիքի հետ: Վերջինիս՝ Սուլթանիայում Կարապետ գրչին պատվիրած ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...Եւ ունէր սա (Գրիգորը, Կ. Մ.) զբնակութիւն իւր ի մեծ մայրաքաղաքին Անի: Արդ վասն աւերման աշխարհին իւրեանց, եւս առաւել վասն մայրաքաղաքին Անոյ, եկեալ բնակէր ի տեղիս յայս» (Պողարյան, 1967, 420): Հիշատակարանի վերջում նշվում են Գրիգորի որդի Պարոնը՝ «զորդեակն իւր զՊարոն» և Մխիթար Անեցին՝ «զհոգեւոր եղբայրն մեր զՄխիթար Անեցի, զերախտաւորն մեր...» (Պողարյան, 1967, 420): Այսինքն՝ 1326թ. Մխիթար Անեցին արդեն Սուլթանիայում էր գտնվում: Իր հերթին, 1338թ. հիշատակարանում Մխիթարը Գրիգորի ու նրա որդի Պարոնի մասին գրում է.

«Յիշման առնել միշտ արժանիս, ....

Մեղաւորիս գաւառակցիս՝

Գըրիգորու քահանային,

Սընընդակցին իմ Պարոնին...» (ԺԳ, 309):

Չափածո հիշատակարանի շարունակության մեջ հայրենիքից տարագիր Մխիթարը գրում է.

«[Յ] իշեմ զգաւառն իմ հայրենին,

Ձմայրաքաղաք ամուրն Անին...»,

այնուհետև նշում է իր ծնողներին, եղբայրներին (ԺԳ, 310):

1334թ. հիշատակարանում Մխիթարը Գրիգոր Անեցուն հիշատակում է երեք անգամ և շեշտում, որ նա իր հոգևոր հայրն է՝ «...բազմերախտ հոգեւոր հայրն մեր, ստոյգ քարտուղարն եւ անհաս ընթերցողն Գրիգոր երեց Անեցի»: Կարելի է ենթադրել, որ Գրիգորի և Մխիթարի բարեկամությունը սկզբնավորվել է դեռ Անիում, իսկ Պարոնը մեր գրչի պատանեկան տարիների ընկերն (սննդակիցն) է եղել:

Մխիթարը ոչ միայն գրիչ, այլև վարպետ նկարիչ ու կազմարար էր, սակայն երբեմն աշխատել է այլ արվեստագետների ընկերակցությամբ: Այսպես, 1334թ. Ավետարանի և 1338թ. Աստվածաշնչի տերունական մանրանկարներն ստեղծել է ժամանակի նշանավոր մանրանկարիչ Ավագը:

Մխիթար Անեցուց հայտնի վերջին ձեռագիրը ստեղծվել է 1356-1357 թվականների ընթացքում, երբ գրիչն արդեն բավական ծեր

եր. «...աղաչեմ զամենեսեան առհասարակ, աննեղադիր լինել սխալանաց և խոշորութեան գրիս, վասն զի կարի յոյժ իմն ծեր անձամբ աշխատեցայ ի գրելն սորայ» (ԺԴ, 428): Բազմավաստակ գրչին օգնել է նրա Ներսես անունով աշակերտը:

Մխիթարի մանրանկարները կատարված են ինքնատիպ ոճով: Նկարիչը հայ մանրանկարչության ավանդական ձևակերպումները զուգորդում է արևելյան արվեստին հատուկ զարդանկարչական տարրերի հետ: Ընդհանուր առմամբ նրա մանրանկարները գծանկարային են, բայց միաժամանակ հազեցած բազմերանգ գույներով և ներդաշնակ ու նուրբ զարդաձևերով: Անեցի իր նախորդների պես Մխիթարը հիշատակարաններ է գրել խորանների ու անվանաթերթերի գլխագարդերի ներսում (ՄՄ, թիվ 2961, էջ 231ա, Երուսաղեմ, թիվ 1941, էջ 10բ-11ա,):

1321թ. ձեռագրում պահպանվել է մի հետաքրքրական մանրանկար (էջ 1բ): Պատկերի ծախ կողմում ուսուցիչն է և նրա դիմաց՝ երկու աշակերտներ, իսկ նկարի կենտրոնում, ուսուցչի և աշակերտների միջև տեղադրված է տարբեր չափի ու գույնի խորանարդիկներից պատրաստված մի շինության մանրակերտ (նկ. 40): Միջնադարյան հայ դպրոցի պատմության ուսումնասիրող Ա. Մովսիսյանը ենթադրել է, թե այստեղ «ճարտարապետական, կառուցողական գիտելիքների ուսուցման դասատվությունն է պատկերված» (Մովսիսյան, 1958, 249): Մանրանկարը համապատասխանում է նյութին (Իմաստութիւն Սիրաքայ), որին կցված է, այսինքն՝ այնտեղ իրոք դասավանդման պահ է ներկայացված: Ինչ վերաբերում է մանրակերտի միջոցով ճարտարապետության ուսուցմանը, ապա այս դրույթը լրացուցիչ փաստարկների կարիք է զգում:

Մխիթար Անեցու ձեռագրական արժեքավոր ժառանգությունը թեև ուղղակիորեն չի պատկանում Անիի գրչության կենտրոնին, բայց իրավամբ այդ կենտրոնի մի շառավիղն է:

Չնայած Անիից կատարվող զանգվածային արտագաղթին, ԺԴ դարը քաղաքի վերջնական ամայացման ժամանակաշրջանը չէր: Հատկապես դարի առաջին կեսին քաղաքում դեռ կատարվում էին որոշ շինարարական աշխատանքներ: Ջարմանալիորեն տևական է եղել նաև քաղաքի դրամահատարանի գործունեությունը, ուր մոնղոլական տիրակալների համար դրամներ են հատվել ԺԴ

դարում, իսկ կարա կոյունլու իշխողների համար՝ ժե դարի սկզբներին<sup>112</sup>:

Անիի և նրա շրջանի ձեռագրական մշակույթի ընծեռած նյութերը, ինչպես վերը տեսանք Յոռոմոսի օրինակով, ավելի են հարստացնում մեր գիտելիքները քաղաքի այս քիչ ուսումնասիրված ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ: 1313թ. Յակոբոս գրչի՝ Շիրակի Մագվոյս կոչվող բնակավայրում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանից երևում է, որ այդ ժամանակ քաղաքում կացությունը համեմատաբար բարվոք էր. «...գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ... Յակոբոսի...: Եւ էր թուականն Յայոց ՉԿԲ (1313)... **ի հայրապետութեանն մայրաքաղաքիս Անոյ տեառն Յոհաննիսի մեծի, որ է քահ վառեալ ի մէջ եկեղեցւոյ** և ի յազգէ Լուսաւորչին Յայաստանեայց: Բայց գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Շիրակայ, ի գիւղս քաղաքիս որ կոչի **Մագւոյս**, ընդ հովանեաւ սուրբ և սքանչելագործ Նշանիս: Եւ ի տերութեան տեղոյս մեծի և **Փահլաւունի** քաջ և ընտիր պատերազմողի, կայսերակերպի որոյ անունն **Ջաքարիա** յորջորջի, և է հեջուպ և առաջնորդ տանս մեծի աթապակ ամիրսպասալար Շահնշահի...»<sup>113</sup>: Այս հիշատակարանը միակ աղբյուրն է, ուր տեղեկություն է պահպանվել Ջաքարյան Շահնշահ Բ-ի զինակից և նրա տան հեջուբ Ջաքարիա Պահլավունու մասին, միաժամանակ կարևոր է Անիի եպիսկոպոս Յովհաննես Պահլավունու եռանդուն գործունեության մասին այստեղ եղած ակնարկը:

Յայտնի է, որ 1340-42թթ. ժամանակամիջոցին Անիում լինելով այստեղից որոշ տոմարական աղյուսակներ է երզնկա տարել Յովհաննես Երզնկացի վարդապետը (չշփոթել Յովհաննես Երզնկացի Պլուզի (1230-1293) կամ Յովհաննես Երզնկացի Ծործորեցու (1270-1338) հետ)<sup>114</sup>:

ԺԴ դարում Անիում գրված ձեռագրերից մեզ է հասել միայն մեկը՝ գրված 1342թ., իսկ 1379թ. ստեղծված մատյանի սոսկ հիշատակարանն է պահպանվել: Առաջինն անեցի Կիրակոս Երեցի պատվերով գրված ճաշոց է: (1940-ական թվականներին ձեռագիրը պահվել է Թբիլիսիում, պրոֆեսոր Դ. Պ. Գորդեևի հավաքածուում, այժմ գտնվում է Վրաստանի ԳԱ հին ձեռագրերի ինստիտուտում, թիվ 251 (ԺԴ, 353, Ռենու, 1989, 50, 106): Գրչի հիշատակարանը չի պահպանվել, բայց, ինչպես երևում է առաջին

իսկ բառերից, հենց դրա շարունակությունն է կազմել ստացողի հիշատակարանը, որը հետևյալն է. «Ընդ նմին յիշեսցիք գյետի ստացաւդ գրոց զԿիրակոս եր[էց] և զամուսին իմ զԳայիանէ յաղաւթս ծեր և Աստուած յիշողացո ողորմեսցի յիւրում գալստեան: **Բայց գրեցաւ սայ ի յԱնի, ի թվ. 27Ա (1342), ի հալալ արդեանց իմոց,** յիշատակ ինձ և իրիցկնոջն և ծնողաց իմոց՝ հաւր իմոյ Շահպատին և մաւր իմոյ Նուրայ խաթունին և եղբարց իմոց՝ Սիմէոնին և Ստեփաննոսին և Աստուածատրին և քուրոջն՝ Թանկ Ազիզին:

Ի թւ. 27Զ (1347) ի յեզընկան եկի խաղաղութեամբ և եղև մահ տարածամ, և Քրիստոսի փառք յաւ[իտեան]» (ԺԴ, և 353): Ձեռագրում հիշատակարաններ կան նաև 1634 և 1663թթ.-ից:

Հիշատակարանի սկզբում հավանորեն «գյետի» բառն օգտագործված է ոչ թե հետագայի իմաստով, այլ միայն որպես ինքնախարազանման սովորական դարձած ածական: Այդպես կարելի է մտածել հետևելով հիշատակարանի հետագա շարադրանքին, երբ պատվիրատու Կիրակոսը գրում է. «Բայց գրեցաւ սայ ի յԱնի ի թվ. 27Ա ի հալալ արդեանց իմոց», այսինքն՝ իր «հալալ արդեամբ» գրել է տվել և ստացել ձեռագիրը, այլ ոչ թե միայն հիշատակարանը: Ձեռագրի և հիշատակարանի գրչության տարին առաջին թվականն է՝ 1342, իսկ երկրորդ թվականը՝ 1347, վերաբերում է մահտարածամին (համաճարակ):

1357թ. Անիում գրվել է մի ծավալուն հիշատակարան, որը պատմագրական որոշակի արժեք ունի: Ավետարանը, որի մեջ գետեղված է Հիշատակարանը (ՄՄ, թիվ 6764) գրվել ու շքեղորեն զարդարվել էր 1283թ. Սկևռայում, Ստեփանոս գրչի կողմից, Կիլիկիայի Հայոց Կեռան թագուհու պատվերով, նրա որդու՝ Հեթումի ձիավարության աստիճանի (ասպետության) արժանանալու առթիվ (ԺԳ, 538, Կ. Ս., 1991թ, 46-49): Դրանից շուրջ յոթ տասնամյակ անց Կիլիկյան արքունական մատյանը հայտնվել է Անիում, ուր այն ձեռք են բերել անեցի մեծատուն Ասլին ու նրա կին Ըռուզ խաթունը, նորոգել տվել և ընծայել քաղաքի Ս. Առաքելոց եկեղեցուն: Նոր ստացողների անունից անեցի Ներսես գրչի ձեռքով գրված հիշատակարանում տրված է քաղաքի կացության համառոտ նկարագիրը. 1350-ական թթ. կեսերին մոնղոլների կողմից Անիի գրավումն ու ավերումը, քաղաքի իրավական տիրոջ՝ Ջաքարյան Շահնշահ Գ-ի մագապուրծ փախուստը և այլն փաստեր են, որոնք պատմագրությանը հայտնի են միայն այս հիշատակարանի շնորհիվ: Այդ է պատճառը, որ տարբեր տարիների հիշատակարանից հատվածներ են

հրատարակել Ղ. Ալիշանը, Գ. Հովսեփյանը, Հ. Մանանդյանը, Լ. Խաչիկյանը (ՀԺՊ, 1972, 18-19): Ամբողջովին այն հրատարակվել է 1985-ին (Կ. Ս., 1985, 111-113):

Ուշագրավ է, որ վերը նշված ավերիչ արշավանքից հետո Ասիլը չի հետևել իր պատրոնին՝ Շահնշահ Գ-ին, այլ մնացել է Անիում, ձեռագիր նվիրել Առաքելոց եկեղեցուն, որը կոչում է իր «սեփիական հայրենի եկեղեցին»: Կարևոր է նաև Ասիլի ծավալած շինարարական գործունեության մասին եղած վկայությունը: Հիշատակարանը զբաղեցնում է ձեռագրի երեք էջ (264ա-265ա), գրված է կանոնավոր բոլորգրով<sup>115</sup>: Նշենք, որ սույն հիշատակարանից բացի Ասիլի շինարարական գործունեության և բարձր պաշտոնյա լինելու վերաբերյալ նաև այլ հետաքրքրական փաստեր են պահպանվել<sup>116</sup>:

Ղ. Փիրղալենյանի անտիպ աշխատության մեջ («Նշխարք պատմութեան Հայոց», ՄՍ, թիվ 4515) պահպանվել է մի հիշատակարան, որը պատկանում է 1379թ. Անիում գրված մի Ավետարանի: Այժմ մատյանի գտնվելու վայրն անհայտ է, իսկ հիշատակարանը Փիրղալենյանի կողմից արտագրվել է 1870թ. Վասպուրականում (հնարավոր է, որ ձեռագիրը ոչնչացել է առաջին աշխարհամարտի տարիներին): Ձեռագիրը գրված է եղել անեցի թորոս գրչի ձեռքով: Հիշատակարանը հետևյալն է. «**Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՊԻԸ (1379) ի քաղաքիս յԱնի, ընդ հովանեաւ Սրբոյն Գեորգայ զօրավարի:** Արդ, որք հանդիպիք սուրբ Աւետարանիս կարդալով... յիշեցէք մեղապարտ գծողս թորոս» (ՄՍ, թիվ 4519, 106): Նշված Ս. Գևորգ եկեղեցին այլ սկզբնաղբյուրներում չի հիշատակվում:

Թորոս գրչի հիշատակարանն ակնհայտորեն վկայում է, որ ԺԴ դարի վերջերին քաղաքում չէր մարել մշակութային կյանքը:

## ԳՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԵՓՈՐԻԿ

Անիից մեզ հայտնի վերջին գրիչը եպիսկոպոս Հովհաննեսն է, որը քաղաքական ծանր կացության հետևանքով կյանքի զգալի մասն անց է կացրել հարազատ քաղաքից հեռու, բայց մինչ այդ ձեռագրեր է ընդօրինակել նաև Անիում: Հովհաննեսը եղել է զարգացած և բազմաշնորհ անձնավորություն, որի համար ժամանակակիցների կողմից «**Ոսկեփորիկ**» մականունն է ստացել: Անիի եպիսկոպոսը հմուտ գրիչ և գրչության ուսուցիչ էր: Դատելով պահպանված հիշատակարաններից՝ Հովհաննես

Ոսկեփորիկը բազմաթիվ ձեռագրեր է ընդօրինակել, սակայն այժմ հայտնի են նրա գրած միայն երեք մատյանները, որոնք պահվում են Երևանում, Երուսաղեմում, Վիեննայում (ՄՄ, թիվ 1587, Երուսաղեմ, թիվ 1534 (Պողոսյան, 1971, 288-190), Վիեննա, թիվ 55 (Տաշյան, 1895, 253-260):

Չովհաննեսի ընդօրինակած ձեռագրերի հակիրճ հիշատակարաններից բացի, նրա մասին տեղեկություններ են պահպանվել նաև այլ ձեռագրերում: 1418թ. գրիչ Սկրտիչը Վրաստանի Օթայ գյուղում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում խնդրում է հիշել իր ուսուցչին՝ «...զվարպետն իմ գտեր Յովհաննես, որ մականունն կոչի Ոսկեփոր» (ԺԵ. Ա, 222): 1442թ. գրիչ Օհաննէ Թմոքեցին Սերկևիլի գյուղում (գտնվում է Չովհաննավանքի և Սաղմոսավանքի միջև) գրած Տոնականի հիշատակարանում, ի թիվս այլոց, խնդրում է հիշել գրչության իր ուսուցչին. «...աղաչեմ յիշել ի տեր Յովանես եպիսկոպոս՝ մականունն Ոսկեփոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոց» (ԺԵ. Ա, 534): 1447թ. Մաթևոս գրիչն Այրիվանքում ընդօրինակած Շարակնոցի հիշատակարանում ձեռագրի նախօրինակի մասին գրում է. «Արդ, գրեցաւ սա... ի լաւ և յընդիր աւրինակէ առաջին իմաստնոց և վարժապետացն Սիսոյ, զոր էր գրեալ ձեռամբ Յովհաննես եպիսկոպոսի Անոյ, մականունն Ոսկեփոր վերածայնելոյ...» (ԺԵ. Ա, 604): Խոսքը հավանորեն Չովհաննեսի՝ 1426թ. գրած Շարակնոցի մասին է, որի հիշատակարանում Անեցին նշում է. «Գրեցաւ... ի լաւ եւ յընտիր աւրինակէն մեծ եւ քաջ քարտուղարին Սիսոյ Գրիգոր դարի՝ մականունն Խուլ կոչեցելոյ» (Պողոսյան, 1971, 289):

Չովհաննես Ոսկեփորիկն իր գրած ձեռագրի հիշատակարաններում խիստ սակավախոս է և ոչ մի կենսագրական մանրամասն չի հաղորդում: Ինչպես ստորև կտեսնենք, նա ձեռագրեր է ընդօրինակել ԺԴ դարի վերջերին, հաջորդ դարի սկզբներին, 1423 և 1426 թվականներին: Կարելի է ենթադրել, որ Օհաննէ Թմոքեցու հիշատակարանի գրության ժամանակ (1442) Անեցին դեռ ողջ էր («...Յովանես... որ է ուսուցիչ մեր այսմ գործոց...» (ԺԵ. Ա, 534)):

Չովհաննեսից հայտնի առաջին ձեռագիրը մի Աստվածաշունչ է, որի միայն անթվական հիշատակարանն է պահպանվել. «Ձստացող սուրբ գրոցս զՍիմեօն րաբունի զաշակերտ մեծին Գրիգորի, և զանիմաստ ծրող սորին՝ **զՅովհաննես եպիսկոպոս Անոյ**, աղաչեմ զձեզ դասք լուսերամից յիշման առնել զմեզ արժանի...» (ԺԵ. Ա, 355): Փորձենք մոտավորապես



որոշել ձեռագրի և հիշատակարանի գրչության ժամանակը: Աստվածաշնչի ստացող Սիմեոն րաբունին սովորել է Յերմոնի համալսարանում՝ նշանավոր Գրիգոր րաբունու մոտ, ապա ղեկավարել Մոկաց Սարի Ս. Պետրոս վանքի դպրոցը: Սիմեոնը ծնվել է 1317թ., 1377թ. գրած ձեռագրի հիշատակարանում իրեն կոչում է «տկար և ծերացեալ, վաթսնամեներին»: Ինչպես նշում է Ա. Մաթևոսյանը. «Սիմեոն վարդապետը վերջին անգամ հիշվում է 1386 թվականին Հակոբ Ռշտունեցու կողմից, իսկ 1390 թվականին նա Սարի վանքում այլևս չի հիշատակվում: Հետևաբար վախճանվել էր արդեն» (Մաթևոսյան, 1962, 211): Սիմեոն րաբունու վերաբերյալ պահպանված այս տեղեկությունները թույլ են տալիս նրա համար Հովհաննես Ոսկեփորիկի գրած ձեռագիրն առնվազն ԺԴ դարի վերջին տասնամյակների գործ համարել: Դրանով իսկ այդ ձեռագիրը Հովհաննես Անեցուց հայտնի ամենավաղ ձեռագիրն է, որի գտնվելու տեղը, ցավոք, առայժմ անհայտ է (ԺԹ դարի վերջերին ձեռագիրը սեփականությունն է եղել ոմն Տեր-Սարգսյանցի, պահվել է Արցախի Դոդ (Տոդ) ավանում (Բարխուդարյանց, 1895, 78): 1890-ական թթ. ձեռագիրը տեսած Ս. Բարխուդարյանցն այն անվանում է «մի ընտիր ձեռագիր Աստուածաշունչ, որի մէջ նախադրութիւններ կայ բոլոր գրոց համար առանձին առանձին հատուածներով»՝ ավելացնելով նաև, որ մատյանն «անխնամ» է պահված, պակասող թերթերի հետ կորած է եղել գլխավոր հիշատակարանը (Բարխուդարյանց, 1895, 78):

Հովհաննես Ոսկեփորիկի ձեռքով գրված և մեզ հասած ձեռագրերից է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում 55 թվահամարի տակ պահվող Աստվածաշունչը, որի հանգամանակից նկարագրությունը տեղ է գտել Հ. Տաշյանի կազմած ձեռագրացուցակում, իսկ մանրանկարներին անդրադարձել են Հայդե և Հելմուտ Բուշհաուզենները (Տաշյան, 1895, 253-260, Բուշհաուզեն, 1976, 64-68, նկ. 41-42): Ձեռագիրը բավականին լավ է պահպանված, գրված է նուրբ թղթի վրա, ունի 588 թերթ (28x18,5սմ), գրությունը՝ երկայուն, տողերի քանակը՝ 47, գրատեսակը՝ Հ. Տաշյանի բնութագրմամբ՝ «բոլորգիր մանր, մաքուր, կանոնաւոր եւ գեղեցիկ»: Բնագիրը քաղված է բավական հին և ընտիր օրինակից: Տնագլուխները գրված են ոսկեգօծ տողով կամ կարմրագիր: Ձեռագիրը հարուստ գեղարվեստական հարդարանք ունի: Զգալի թիվ են կազմում տերունական մանրանկարները, ավետարանիչների և այլ սրբերի պատկերները, նրբաոճ զարդագրերը, գլխազարդերն ու լուսանցազարդերը:

Ձեռագրի մանրանկարիչն է Մելքիսեդեկ քահանան, ստացողը՝ Արարատյան նահանգի և Բջնո դիտապետ եպիսկոպոս Մանուելը:

Գրիչ Յովհաննես Անեցին ձեռագրի էջերում մի շարք կարճ հիշատակարաններ է թողել, որոնցում խնդրում է հիշել ստացողին և իրեն, բայց չի նշում գրչության տարին ու որոշակի վայրը: Ահա հիշատակարաններից մի քանիսը. (էջ 51բ)՝ «Ձստացաւ սուրբ գրոցս զարհի եւ երջանիկ դիտապետն Բջնոյ մեծ նահանգին զտէր Մանուէլ աղաչեմ յիշել ի Տէր: Ընդ նմին եւ զանպէտ գրիչս զՅովհաննէս եպիսկոպոս Անոյ վիճակիս, եւ Աստուած զձեզ յիշեսցէ», (էջ 529բ) «Ձեղկելի ծրողս զՅովհաննէս եպիսկոպոս Անոյ աղաչեմ յիշել ի Տէր», (էջ 365ա) «...զՅովհաննէս եպիսկոպոս անպէտ գրիչ Անոյ նահանգիս» (Տաշյան, 1895, 259):

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը հավանաբար ընկած է: Գրչի փոքր հիշատակարաններից բացի ձեռագրում պահպանվել են հետագայի հիշատակարաններ և մասնավորապես մանրանկարչի հիշատակարանները, որոնք մի շարք կարևոր տեղեկություններ են պարունակում՝ ամբողջացնելով ձեռագրի ստեղծման պատմությունը: Նախ՝ այստեղ նշվում է Մելքիսեդեկի կողմից կատարված նկարազարդումների ավարտման տարին, խոսվում այն մասին, որ ձեռագրի գրչությունից հետո պատվիրատու Մանուելը մահացել է, իսկ Աստվածաշունչը մնացել է առանց նկարազարդման և ընկել օտարների ձեռքը: Որոշ ժամանակ անց, երիտասարդ կրոնավոր Յովհաննեսը փրկագնել է այն և տվել ծաղկելու. «...զստացօղ գրոցս զտէր Մանուէլ, որ ստացաւ զսայ հալալ յարդեանց... եւ ի կատարել գրոցս գրելով ինքն փոխեցաւ առ Քրիստոս եւ մնաց Աստուածաշունչս ծաղկելի... տէր Յովհաննէս, մանուկ գոլով հասակաւ... բազում աշխատանօք եւ ընչիւք ազատեաց զգիրքս ի ձեռաց անօրինաց եւ ետ ծաղկել զսա...» (Տաշյան, 1895, 259):

Այսպիսով, մատյանի նկարազարդումը տեղի է ունեցել գրչությունից բավական ժամանակ անց: Մելքիսեդեկն իր հիշատակարանում չի նշում գրչի՝ Յովհաննես եպիսկոպոսի անունը: Տեսնենք, թե երբ է մանրանկարիչը երկրորդ ստացող Յովհաննեսի պատվերով նկարազարդել ձեռագիրը: Այդ մասին Մելքիսեդեկի գրած չափածո հիշատակարանը հետևյալն է.

«զՄելքիսեդեկ վատթարս մեղօք ի լի

Որ եմ ծաղկող այսմ տառի:

Նայ եւս էր թիւն տումարին

Ըճ հայկեան ազգին

Տինայ է ժ յաւելուածին

Այլ եւս եաւթն շարամանին» (Տաշյան, 1895, 259):

Ըստ այս հիշատակարանի Յ. Տաշյանը որոշում է նկարագարողման տարին. «= 1368, եթէ «Է.Ժ» կարդանք՝ 1375»: Լ. Խաչիկյանը հիշատակարանը դնում է 1368 թ. տակ՝ ծանոթագրելով. «Եթէ «տասն»-ից առաջ եղող «Է»-ն թիվ համարենք, որ քիչ հավանական է, ապա կստանանք ոչ թե 1368, այլ 1375 ( $800+17+7+551=1375$ ) թվականը» (Տաշյան, 1895, 259, ԺԴ, 485, Աբրահամյան, 1978, 243): Այս թվականը, սակայն, տարակուսանք է առաջացրել դեռևս Յ. Տաշյանի մոտ, որը նկատում է, թե ԺԴ դարում Մանուէլ անվամբ Բջնիի մեծ նահանգի դիտապետ չի հիշատակվում. «Միտ դրուի որ այս միջոցին Բջնոյ Մանուէլ եպիսկոպոս մը չենք գտներ նոյն տեղոյ եպիսկոպոսաց ցանկին մէջ» (Տաշյան, 1895, 260): Բջնիի նահանգի դիտապետ Մանուէլ եպիսկոպոսը բազմիցս հիշատակվում է 1405 -1414 թվականներին (ԺԵ. Ա, 51, 162, 731, ԺԵ.Գ, 316), մինչդեռ ըստ Մելքիսեդեկի հիշատակարանի՝ նա պետք է 1368 կամ 1375 թվականներից առաջ մահացած լիներ: Մյուս կողմից՝ Յովհաննէս Ոսկեփորիկն էլ, ինչպես տեսանք, հիշվում է հիմնականում ԺԵ դարում և դժվար է ենթադրել, թե նա այնքան երկարակյաց է եղել, որ եպիսկոպոսի պաշտոնում գտնվելով ստեղծագործել է ԺԴ դարի վաթսուհանգան և հաջորդ դարի 20-30-ական թվականներին:

Բայց կրկին անդրադառնանք Մելքիսեդեկի հիշատակարանին: Այստեղ հեղինակը նկարագարողման տարին հայտնելու համար հիշատակում է երեք թվական՝ հարյուրավոր, տասնավոր, միավոր: Ընդ որում, 800 գրելու համար ոչ թե պարզապես Պ (800) է նշում, այլ Ըճ ( $8 \times 100 = 800$ ): Կարծում ենք, որ նա նույն սկզբունքով է գրում նաև տասնավորը՝ ԷԺ ( $7 \times 10 = 70$ ) և այդ նույն պատճառով միավորը նշելիս ոչ թե Է (7), այլ «Եաւթն» է գրում: Հիշատակարանի թվականը նման մեկնաբանությամբ այսպիսին է.  $Ըճ (8 \times 100 = 800) + ԷԺ (7 \times 10 = 70) + 7 + 551 = 1428$ թ.:

Այսինքն՝ հիշատակարանը պետք է կարդալ.

«Նայ եւս էր թիւն տումարին

Ութհարիւրին հայկեան ազգին

Տինայ եաւթն տասն յաւելուածին

Այլ եւս եաւթն շարամանին»:

Հավանորեն սա է հարցի ճիշտ լուծումը: Տրամաբանական է, որ Մելքիսեդեկը հենց այդպես հիշեր թվականը՝ 800+70+7 և ոչ թե 800+7+10+7: **1428** թվականն արդեն միանգամայն համապատասխանում է Հովհաննես Անեցու ապրած և Մանուել դիտապետի նոր վախճանված լինելու ժամանակին: Այդ թվականը, ինչպես ասվեց, ձեռագրի նկարագարողման տարին է<sup>117</sup>, իսկ Հովհաննես Ոսկեփորիկն այն գրել էր դրանից առաջ, հավանաբար 1410-ական թվականներին, այսինքն՝ Մանուելի կենդանության օրոք:

Ձեռագրի գրչության տեղի վերաբերյալ Հ. Տաշյանի և Լ. Խաչիկյանի հայտնած կարծիքների համաձայն, այն, որոշ վերապահությամբ, Անին է («(անշուշտ) Անի (Բջնի°)» (Տաշյան, 1895, 253), «Անի°» (ԺԴ, 484): Դրա օգտին են խոսում Հովհաննես Ոսկեփորիկի գրած մանր հիշատակարանները: Ինչպես ստորև կտեսնենք, 1423 և 1426թթ. Սանահինում ու Թմոզվիում գրած ձեռագրերում գրիչն իրեն կոչում է «Յովաննես եպիսկոպոս Անոյ» կամ «Անոյ եպիսկոպոս տէր Յովաննես»: Վիեննայի ձեռագրում իր պաշտոնը նշելիս նա նաև տեղագրական ակնարկ ունի՝ **«Յովաննես եպիսկոպոս Անոյ վիճակիս»**, իսկ մեկ այլ տեղում ուղղակի հայտնում է գրչությամբ զբաղվելու վայրը. **«Յովաննես եպիսկոպոս, անպետ գրիչ Անոյ նահանգիս»** (Տաշյան, 1895, 259): Այս վերջին հիշատակագրությունը, կարծում ենք, թույլ է տալիս ձեռագրի գրչության ստույգ վայր համարել Անին: Լինելով Անիի եպիսկոպոսը, Հովհաննեսը պետք է որ առժամանակ ապրած լիներ իրեն վստահված եպիսկոպոսության կենտրոնում՝ եպիսկոպոսանիստ Անիում: Շիրակն այդ շրջանում թե՛ քաղաքական ու տնտեսական, թե՛ հոգևոր ու մշակութային առումով կորցրել էր իր նախկին առաջատար դերը, նվազել էր նրա գրչությամբ զբաղվողների թիվը, և Հովհաննեսն իրեն համարելով «գրիչ Անոյ նահանգիս»՝ ակնարկում է Անիում ու նրա «նահանգում» իր՝ գրչությամբ զբաղվելը:

Այսպիսով, ըստ բերված փաստարկների, հիշյալ Աստվածաշունչը, որը Վիեննայի հայերեն ձեռագրերի մեջ «ամենէն ընտիրներէն է» (Տաշյան, 1895, 253), Հովհաննես Ոսկեփորիկի կողմից գրվել է Անիում ժե դարի սկզբներին և քաղաքից մեզ հասած առայժմ հայտնի վերջին մատյանն է: Պետք է կարծել, որ ԺԴ դարի վերջերին Սիմեոն րաբունու համար ընդօրինակված, վերը հիշատակված Աստվածաշունչը ևս Հովհաննեսն Անիում է գրել:

Հովհաննես Ոսկեփորիկից հայտնի հաջորդ ձեռագիրը Շարակնոցն է (ՄՄ, թիվ 1587)՝ գրված 1423թ. Սանահինի վանքում, Հովհաննես

Սանահնեցու պատվերով: Ձեռագիրը փոքրածավալ է, գրված մագաղաթի վրա, ունի 344 թերթ (12,2x8սմ), գրությունը՝ միասյուն, գրչությունը՝ բոլորգիր, տողերի քանակը՝ 21: Բնագիրն աչքի է ընկնում հստակ, ընտիր գրչությամբ, խազագրված է (նկ. 41): Ստացող և մանրանկարիչ Յովհաննես Սանահնեցին ծաղկող Մելքիսեդեկի գործակցությամբ, ելնելով Շարակնոցի չափերից, մանրանկարչական մեծ վարպետությամբ նկարել է բազմաթիվ գլխազարդեր, թեմատիկ լուսանցազարդեր և տերունական երկու տեսարան (էջ 131բ)<sup>118</sup>: Ձեռագրի էջերն աչքի են ընկնում խազագրված բնագրի և գեղարվեստական հարդարանքի ներդաշնակությամբ:

Շարակնոցում պահպանվել են գրչի և ստացող-մանրանկարչի հիշատակարանները: «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուաբերութեանս Յայոց ՊՅԲ (1423) ձեռամբ ախմար և փցուն գրչի Յով[աննէ] եպիսկոպոսի Անոյ... յիշեսջիք ի Քրիստոս ստացող սորին՝ զՅոհ[աննէ]ս գլուսակրան քահանայն... և զիս... զժող սորին» (ԺԵ. Ա, 302): Յետաքրքրական է, որ եթե գրիչը հիշատակարանում նվաստացուցիչ մակդիրներ է կցում իր անվանը, ապա ստացողն արդեն իր հիշատակարանում փառաբանում է նրան. «Ես... Յոհ[աննէ]ս մեղապարտ ոգի... ետու գրել Յով[հաննէ]ս արքիեպիսկոպոսի, մականունն Ոսկեփորիկ վերածայնելոյ՝ շնորհազարդի և ճարտար գրչի, որոյ յիշատակ նորին արհմութեամբ եղիցի» (ԺԵ. Ա, 303):

Դրանից հետո Յովհաննես Անեցուն հանդիպում ենք 1426 թ. Վրաստանի սահմանամերձ Թմոք (Թմոզվի, Թմկաբերդ) անառիկ ամրոցում, մեկ այլ Շարակնոց ընդօրինակելիս (Երուսաղեմ, թիվ 1534): Սա ևս փոքրածավալ ձեռագիր է, գրված թղթի վրա, ունի 355 թերթ (14x9սմ), գրությունը միասյուն, գրչությունը՝ բոլորգիր, տողերի քանակը՝ 21: Մանրանկարիչն է Յովհաննես կրոնավորը, ստացողը՝ Աստվածատուրը: Շարակնոցը հարուստ նկարազարդում ունի: Հիշատակարանում հայտնվում է. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեանս Յայոց ՊՅԵ (1426) ի հռչակաւոր եւ յանառիկ դղեակս Թմոք, ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս, ձեռամբ մեղապարտ գրչի Անոյ եպիսկոպոսի տէր Յովանիսի... ի լաւ եւ յընտիր արինակէն...» (Պողոսյան, 1971, 289):

Ինչպես այս, այնպես էլ Յովհաննես Ոսկեփորիկի նախորդ ձեռագրերը, աչքի են ընկնում գեղեցիկ գրչությամբ, որը պայմանավորված է ոչ միայն կանոնավոր ու հստակ գրով, այլև

կարմրագիր և ոսկեգիր տողերի ու տառերի կիրառությամբ, բուլորգրի և երկաթագրի սկզբնատողերի համադրությամբ, զարդագրերի ու լուսանցազարդերի ներդաշնակ տեղադրությամբ և ընդհանրապես՝ ձեռագրի էջի մակերեսի նպատակահարմար և կուռ կազմակերպմամբ: Անիի եպիսկոպոսը զբաղվել է միայն գրչությամբ, և դատելով քննված երեք մատյաններից, ձեռք չի զարկել ծաղկողի արվեստին, սակայն իր գործում՝ գրչության արվեստի մեջ, հասել է բարձր արդյունքի:

Անիի եպիսկոպոսին վիճակված չէր անխռով կյանքով ապրել: Հայրենի ամայացող քաղաքից տարագիր, նրան տեսնում ենք մեկ Սանահինում, մեկ Թմոքում ապաստանած: Սակայն անեցին անընկճելի էր և ուր որ հանգրվան էր գտնում՝ շարունակում էր իր գործը, ոչ միայն գրում, այլև գրչության արվեստ էր ուսուցանում երիտասարդներին:

Յովհաննես Ոսկեփորիկի գործունեությանը ծանոթանալով՝ տեսնում ենք, որ Անի քաղաքի գրչության կենտրոնի պատմությունը հասնում է մինչև ԺԵ դարի սկզբները: Դա քաղաքի պատմության ամենաողբերգական ժամանակն էր, երբ երբեմնի գեղաշեն ու բազմամարդ, կենսալի ու ծաղկուն մայրաքաղաքը վեր էր ածվում անմարդաբնակ ավերակների թագավորության: Անին՝ նյութական ու հոգևոր մշակույթի, ճարտարապետության, գիտության, գրականության, գեղարվեստի, գրի ու գրչության կենտրոնը, զոհ դարձավ բարբարոսությանն ու բռնությանը, իսկ շինարար ու ստեղծագործ անեցիները սփռվեցին աշխարհով մեկ... Սակայն մշակութային այն ահռելի ժառանգությունը, որ մեզ է հասել Շիրակի փառավոր ոստանից, նաև անիական անանց ոգու կրողն է, և պատահական չէ, որ Անին հայ ժողովրդի համար ոչ միայն անցյալ է, այլև ներկա ու ապագա:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բագրատունյաց առաջին մայրաքաղաքների խնդրին անդրադառնալով՝ Ռ. Ի. Մաթևոսյանը գրում է. «Պետության վարչական կենտրոնի այդպիսի հաճախակի փոփոխումները պայմանավորված էին ժամանակին բնորոշ հողատիրության բնույթով: Յուրաքանչյուր թագավոր, միաժամանակ լինելով խոշոր հայրենատեր-հողատեր, ուներ իր տիրույթների վարչական կենտրոնը՝ աթոռանիստը: Վերջինս նրա սեփականատերերի թագավորության տարիներին դառնում էր գահանիստ և կատարում մայրաքաղաքի դեր, իսկ նախորդ թագավորի նստավայրը կորցնում էր այդ դերը և մնում որպես տվյալ իշխանության կենտրոն: Այդ առումով էլ Բագարանն ու Երազավորսը, սկզբնական շրջանում նաև Կարսը, դեռ իսկական իմաստով մայրաքաղաքներ չէին, այլ գահակալների դղյակ-նստավայրեր, որոնք գահանիստի դեր էին կատարում» (*Մաթևոսյան, 1990, 140*): Հայաստանում մեծ կացություն էր նաև Է դարում, երբ Հայոց իշխանի տիտղոսը ստացող նախարարների նստավայրերը (Աղթամար, Արուն, Դարոյնք, Թալին) դառնում էին երկրի վարչական կենտրոն (*Կ. Մ., 1987, 16-17*):

2. Ուռնայեցին գրում է. «Յայսմ ամի (961թ.) ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական զունդան քառասուն և հինգ հազար արանց քաջաց, զատ ի յարքունական զնդէն. և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց Տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօժունն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օժման հարցն իւրոց, վասն զի չես եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան Տանն Հայոց և ոչ էր եղեալ թագ ի վերայ գլխոյ իւրոյ:

Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զտէր Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ մեա. և մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից... Եւ յայնմ աւուր եղև ժողով ահագին և մեծ ի քաղաքն յԱնի, որ եղև այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց: Եւ յայսմ ամի օժաւ որդի Աշոտի Գագիկ արքայ յօժունն հարց իւրոց և նստաւ ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց ազգիս, և լինէր ուրախութիւն մեծ ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն: Եւս առաւել լինէին ուրախ յաղագս քաջութեանն Գագկայ, վասն զի էր կորովի և այր պատերազմող: Եւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց... Եւ լուեալ զայս ամենայն շուրջակայք և ամենայն թագաւորք ազգաց՝ Ափսազաց և Յունաց, Բաբելացոց և Պարսից, տուրս և սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեանն» (Ուռնայեցի, 1991, 8, 484):

3. Հայոց կաթողիկոսական Աթոռը Դվինից Վասպուրական էր տեղափոխվել դեռ Հովհաննէս Դրասխանակերտցու (898-929) աթոռակալության վերջին տարիներին, երբ նա արաբական ճնշումներից խուսափելով՝ ապահով հանգրվան գտավ Գագիկ Արծրունի թագավորի մոտ (Դրասխանակերտցի, 1912, 357-358, Վարդանյան, 1969, 102-103): Ցավոք հայտնի չէ, թե Անանիա Մոկացին կոնկրետ որ թվականին վերջնականապես թողեց Վասպուրականն ու Աղթամարը, ուր աթոռակալել էին իր երեք նախորդները, և հաստատվեց Բագրատունիների մոտ, բայց որոշակի է, որ այդ տեղի ունեցավ, երբ կաթողիկոսը որոշեց վերջ տալ Աղվանից և Սյունյաց աթոռների՝ Հայոց կաթողիկոսական Աթոռի նկատմամբ ցուցաբերած անհնազանդությանը (Մոկացու բնորոշմամբ՝ «ապստամբությանը»): Ստանալով ինչպես Արծրունյաց թագավորների, այնպես էլ Աբաս

Բագրատունու և Աշոտ Ողորմածի բարոյական աջակցությունը՝ կաթողիկոսն այդ դժվարին գործն իրականացրեց 941-958թթ. ժամանակամիջոցում (Մոկացի, 1897, 140): Հավանաբար դեռ Աբասի ժամանակ Արգինան տոսկ «ժամանակավոր նստավայր» էր (ՀԺՊ, 1976, 55), բայց հետո, հատկապես Խաչիկ Ա Արշարունու (973-992) ժամանակ, օժտվեց հայրապետական աթոռանիստին վայել շուքով:

4. Արծանագրությունը հետևյալն է. «Ով հռչակաւոր դու եւ մեծանունդ ի վկայս սուրբ Գէորգիոս, աւզնեա բարեխաւսութեամբ Գազկայ Շահայնշահի շինողի զվկայարանս գայս, քոյով անուանակոչութեամբ ի քոյդ յուսակնեալ բարեխաւսութիւն զի ընկալցի զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաք հասանել լուսոյ փառաց Որդւոյն Աստուծոյ ի վերջնում զիշերին, ի ծագել մեծի եւ աներեկ առաւոտին այցելութիւն գտանել առաջի ահաւոր բեմին եւ անաչառ դատաւորին, աղաչեմք» (Սարգիսյան, 1864, 165):

5. Նախորդ շրջանի գրականությունը պրպտելով և որևէ կոնկրետ բացատրություն չգտնելով՝ Թ. Հակոբյանն այս կառույցի մասին գրում է. «...հիմնադրման ժամանակն ու որպիսությունը նյութերի ու փաստերի բացակայության պատճառով չի պարզաբանված... ճիշտ է ասում Լեոն, այդ զույգ աշտարակները մնում են իբրև առեղծված» (Հակոբյան, 1980, 275, 277, Մխիթարյանց, 1902, 22): Աշտարակներից մեկի ներսում պահպանվել է կարճ հիշատակագրություն՝ 1102 թվականով («ՇԾԱ եւ Խաչատուրս գրեցի», տե՛ս Ալիշան, 1881, 18), ուստի պետք է կարծել, որ այն կառուցվել է ավելի վաղ, ամենայն հավանականությամբ Բագրատունիների օրոք (Կ. Մ., 1982, 143-149):

6. Անիի Բագրատունյաց թագավորության անկումը, ապա և քաղաքի սելջուկյան, մոնղոլական և այլ ավերումները միջնադարում ընկալվել են որպես նրա բնակչության գործած զանազան մեղքերի դիմաց նրանց հասած աստվածային պատիժ: Ընդ որում, դա ոչ թե հոգևորական մատենագիրների կարծիքն է եղել, այլ գիտակցվել է հենց անեցիների կողմից: Հատկանշական է Դեոսկորոս Սանահնեցու հետ կապված դեպքը, երբ նա հանի-րավի քաղաքացիների անարգանքին արժանացավ, բայց անեցիները հետագայում զգացին իրենց մեղքը և մտածելով, որ հենց այդ պատճառով են քաղաքին բազում դժբախտություններ պատահում, զղջացին ու խորհեցին ապաշխարելու մասին (Գանձակեցի, 1964, 90-91):

Մեղքի, մեղքերը քավելու և աստվածային պատժի մասին անեցիների ունեցած պատկերացումների վերաբերյալ ուշագրավ նյութ են պարունակում քաղաքի և մերձակա վանքերի վիմագիր արծանագրությունները: Այստեղ նվիրատվական, կանոնակարգիչ և այլ արծանագրությունների վերջում տեղ գտած այսպես կոչված «անեծքի բանաձևը» հաճախ հետևյալ միտքն է պարունակում՝ «ով որ գրիս հակառակի՝ յիմ մեղացն տէր է»: Ամեն մարդ իր մեղքերն ուներ, որոնց համար պիտի պատասխան տար դատաստանի օրը, իսկ մեկ ուրիշի մեղքերին էլ տեր լինելն արդեն սարսափելի անեծք էր: Հետաքրքիր է, որ Անիում այդ ձևակերպումն են օգտագործում թագավորից սկսած մինչև հասարակ քաղաքացին: Գազկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու մի արծանագրության վերջում Գազիկ Ա Բագրատունին գրում է. «Ով այս գրոյս հակառակ կայ՝ նզովեալ լիցի յԱստուծոյ... եւ **իմ մեղացս պարտական**» (Դիվան, Ա, 42): Ս. Աստվածածին (համբուշենց) եկեղեցուն նվիրատվություն է կատարել ու պատարագ ստացել Սողոմոնի որդի Հովհաննեսը, իսկ արծանագրության վերջում եկեղեցու սպասավորը հավաստում է. «Արդ եթէ ես Մովսէս...



զայս ժամն խափանեն՝ տէրն եղիցիմ մեղացն Յովաննիսի» (Դիվան Ա, 51, տես նաև՝ 36, 43, 50 և այլն):

Երբեմն նվիրատուները ոչ միայն իրենց, այլև ազգականների մեղքերն են հիշում: Ա. Առաքելոցի արձանագրություններից մեկում ոմն Գեորգ գրում է. «Եթե ոք զարձանագրեալդ խափանէ՝ **մեր մեղաց եւ մեր ազգի մեղացն տէր է**» (Դիվան, Ա, 13): Օրինախախտներին ոչ միայն իրենց, այլև տոհմակիցների մեղքերով են սպառնում Կատրամիդե թագուհին՝ Տեկորի և Գագիկ Բ թագավորը՝ Մրենի արձանագրություններում:

Ի վերջո անհատների մեղքերը զույմարվում ու դառնում են ընդհանրական մեղք՝ **քաղաքի մեղքեր**: Այս առումով ուշագրավ է Մխիթար Տեղեցի եպիսկոպոսի արձանագրությունը, ուր վերջինս «ի ցասմանէ շարժի աւուրքս...» արգելում է կիրակի օրը քաղաքի փողոցներում առևտուր անելը, իսկ վերջում գրում. «Որ այս գրիս հակառակ կայ՝ թէ մեծ, թէ փոքր՝ **քաղաքիս մեղացն տէր է**» (Դիվան, Ա, 24): Իսկ ընդհանուր մեղքերն արդեն պատճառ են համընդհանուր դժբախտությունների: Այս մասին են ասում ժամանակի պատմիչները (Լաստիվերցի, 1964, 133-136, Անեցի, 1893, 110, Ուռհայեցի, 1991, 75-81, 161), այդ մասին է ասում Սարգիս Անեցի վարդապետը՝ Գրիգոր Մագիստրոսին գրած թղթում «...պատճառ աւերածոյ աշխարհիս մերոյ ըստ մեղաց մերոց պատահեաց մեզ, քանզի մեղաք Տեառն Աստուծոյ մերոյ» (Մագիստրոս, 1910, 64):

Ինչ վերաբերում է Աբրահամ Կրետացու երկին, ապա այն հանդիսանում է Անիի կործանումը քրիստոնեական աշխարհայացքի տեսակետից՝ որպես գործված մեղքերի հատուցում ներկայացնող ուշագրավ մի գործ, որի գաղափարաբանական արձանները հասնում են ԺԱ դար (Արիստակես Լաստիվերցի, Յովհաննես Կոզեմ): Այս երկի բովանդակությանը, աղբյուրներին և գաղափարաբանությանը հանգամանորեն անդրադառնալով (ՀՀ ԳԱԱ «Նպատակ» թերթ, 1994, թիվ 18, 19, 21) այն հրատարակել ենք աշխարհաբար թարգմանությամբ ու ծանոթագրություններով («Անի քաղաքի պատմությունը, որ գրել է Թրակիայի առաջնորդ և բանի սպասավոր Աբրահամ րաբունապետը Կաֆայում», «Գարուն», 1992, թիվ 9, էջ 84-87):

7. Նման ենթադրությունն անուղղակիորեն հաստատվում է Ասողիկի հայտնած մի տեղեկությամբ: 998թ., երբ հայկական ու վրացական զորքը մեկնել էր Մամլան ամիրայի դեմ պատերազմելու, Գագիկն ու, հավանաբար, Կարսի Աբաս թագավորը եկեղեցում աղոթում էին «հանդերձ հայրապետաւ» Աստծուց հաղթություն խնդրելով. «**Եւ թագաւորքն... զցայզսն՝ պաշտօն սաղմոսանուազ երգոց ուխտն սրբութեան հանդերձ հայրապետաւն կատարէին**» (Ասողիկ, 1885, 271): Այսինքն՝ Սարգիս կաթողիկոսն Անիում էր և տեղի գլխավոր եկեղեցում արարողություն էր կատարում թագավորների ներկայությամբ (ի վերջո քրիստոնյա զորքը մահմեդականների նկատմամբ փայլուն հաղթանակ է տանում Ծմբոյի ճակատամարտում):

8. Ստորև բերում ենք Սարգիս կաթողիկոսի շրջաբերականը՝ բաց թողնելով միայն միջնամասում Սյունյաց վիճակի տարածքի նկարագրության հատվածը.

«Շնորհօք ամենակալին Աստուծոյ Հօր, եւ գթութեամբ միածնի Որդւոյ նորա, եւ նախախնամութեամբ ազատիչ Սուրբ Հոգւոյն, այս գիր հրամանի եւ օրհնութեան է իմ նուաստ ծառայի Աստուծոյ Տէր Սարգսի, եւ ողորմութեամբ Նորին կաթողիկոսի ամենայն Հայոց, զոր զրեցաք նամակ շրջագայական առ նախագահ եւ յաստուածամեծար տունդ Սիւնեաց, յաստուածապսակ թագաւորդ Վասակ եւ յաստուածապահ իշխանսդ Սեւադայ եւ Աշոտ եւ առ այլ ազատսդ եւ յընդհանուր ժողովրդականսդ ըստ երկոտասան կարգեալ

գաւազանացոյ: Որոց նախ օրհնութիւն եւ պահպանութիւն ժամանեցէ ի սուրբ Գրիգորի աթոռոյս եւ յաստուածաներկ եւ յայլ աստուածագունար սրբոցս եւ ի մէնջ. որովք փրկեալք լիջիք յամենայն պատահարաց եւ ի տարածամ դիպուածոց:

Գիտութիւն ձեզ հոգեւոր որդիք մեր՝ որ թելտ յառաջ քան զմեզ ի կաթողիկոսացն ի Տէր Թեոդորոս եւ ի Տէր Անանիայէ վասն իրիք ինչ պատճառի խախտեալ էր առաքելադիր աթոռդ Սիւնեաց. եւ օժտեալ եւ բաժանեալ վիճակ գաւազանիդ այդորիկ. այլ մեք ի գալ ընտրեալ առնս Աստուծոյ Յովհաննիսի՝ ձեռնադրեցաք զսա ըստ առաջին աթոռակալացն մետրապօլիտ Սիւնեաց. եւ հաստատեցաք վերստին զնոյն վիճակ երկոտասան գաւազանին յաթոռդ նախագահ եւ ի տունդ Սիսական ի Տաթեւ ի ձեռն աստուածարեալ եւ բազմերջանիկ սուրբ եպիսկոպոսիս եւ ընտրեալ մետրապօլիտիս ձեր Տէր Յովհաննիսի. եւ վերստին աւանդեցաք դմա զնախնական պատիւն իւրեանց՝ զխաչն եւ զբազմականն: Եւ այս ոչ եթէ մերով ձեռներեց իշխանութեամբ. այլ զի եբեր առ մեզ զմեծափառ նամակս եւ զվճիռ պայմանի գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Յայոց, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ եւ յորդուց եւ ի թռանց իւրոց, որոց նամակն մինչ ի սուրբն Սահակ յունարէն գրով էր գրեալ. եւ իւրաքանչիւր մատանի կապարեայ կնքով եղեալ ի վերայ. եւ անտի հայերէն գրով մինչ յԱնանիա. եւ յետ Անանիայի գրեալ մինչեւ ի մեզ բայց միայն յԱնանիայէ:

Եւ սա էր գրեալ վասն Վահանայ եպիսկոպոսի. բայց ոչ ըստ այլոցն կարգի. եւ էր բովանդակն 55 նամակ շրջագայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով. եւ այն երկար բանիւք եւ հրահոսան նզովիւք գրեալ, զի մի՛ ոք իշխեսցէ պակասեցուցանել ի սահմանադրեալ վիճակէ սոցա եւ կամ նուաստացուցանել եւ բառնալ ի պատուոյ եւ յաստիճանէ սոցա: Վասն որոյ եւ մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ եւ պատկառեալ ի ձերացեալ, բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա. եւ վերստին հաստատեցաք զեղեալ պատիւ նոցա՝ զխաչն, զբազմականն եւ զգաւազանն... Եւ արդ դուք գաւառքդ Սիսական՝ ամենայն մտերմութեամբ հնազանդ լերուք Սիւնեաց աթոռոյն, եւ ընկալարուք զառաքեալդ ի մէնջ զեպիսկոպոսդ ձեր զՏէր Յովհաննէս որպէս զիրեշտակ Աստուծոյ եւ զառաքելական այր. եւ ամենայն հպատակութեամբ ծառայեցէք դմա որպէս Աստուծոյ. եւ թէ ոք հակառակել կամի այդմ աթոռոյ եւ կամ խանգարման պատճառ լինի այդմ հայրապետադիր սահմանի պատուոյ եւ վիճակի եւ ժառանգութեանց եկեղեցւոյն՝ զանբաւ հրահոսան անձն ժառանգեցէ՛ որ յառաջին սուրբ հայրապետացն կարգեալ էր եւ կրկնապատիկ ի մէնջ իսկ: Իսկ կատարիչք հրամանիս օրհնին յԱստուծոյ ամենակալէ եւ ի սուրբ հայրապետացն եւ ի մէնջ եւ ի սրբոյն Գրիգորոյ աթոռոյս: Եւ արդ գրեցաւ զիր հրամանիս մերոյ մերով ձեռամբ ի թուականիս Յայոց 455. եւ վասն առաւել հաստատութեան կնքեցաք մերով սովորական մատանեալս ի փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն» (Օրբէյան, 1910, 308-311):

9. Արգինայի վարդապետարանը ժամանակին շատ հռչակված էր (Մովսիսյան, 1958, 273): Այստեղ ուսանում էին նաև ազնվագարն ազնվականներ, ինչպիսին էր, օրինակ, Բագրևանդի իշխան Ներսեսը (Ատրնետսի): Պահպանվել է վերջինիս՝ Կարսի Մուշեղ թագավորին հասցեագրված դավանաբանական մի գրությունը (Անանյան, 1987, 7-52): Այն հրատարակած Պ. Անանյանը վկայակոչելով Մատթեոս Ուռհայեցու՝ Ներսեսին տված բնութագրումը՝ «այր կորովի եւ յոյժ համճարեղ, բանիբուն իմաստասէր, **ուսեալ ի մեծն Արգինա...**»՝ ավելացնում է, թե իշխանը «կ'արդարացնէ իւր յատկութիւնները ներկայ

գրութեամբ եւ կը պանծացնէ Արգինայի վարդապետարանը եւ անոր ուսուցիչները, որոնց աշակերտած էր» (Անանյան, 1987, 14):

Ինչպէս երևում է Վրաց մատենագրութեան ժԱ դարի մի երկից («Հակաճառութիւն ընդդէմ Սոսթենէ Յայոց վարդապետի»), Արգինայի վարդապետարանը Հայոց եկեղեցու դավանանքի պահպանման անգիջում կենտրոնի համարում ուներ (Մելիքսեթ-Քեկ, 1934, 107):

**10. Թ.** Թորամանյանի վկայութեամբ. «Կաթողիկէին շուրջը... բացի արևելյան կողմէն, ուր մեկէն ավելի մատուռներ կան... հարավային կողմին վրա կերկին դարձյալ ուրիշ հին շինութեանց մնացորդներ ալ» (Թորամանյան, 1942, 153): Իսկ անցյալ դարի կեսերին քաղաք այցելած Ն. Սարգիսյանը գրում է. «Քարակոյտք աներակաց բազում են շուրջ եկեղեցան, որք թերեւս բնակարանք էին եկեղեցականաց **հանդերձ հայրապետանոցաւ**» (Սարգիսյան, 1864, 114): Քաղաքի հատակագծի զննումը թույլ է տալիս ենթադրել, որ կաթողիկոսարանը կարող էր Մայր տաճարից արևմուտք՝ հենց նրա դիմաց կառուցված լինել:

**11. Թեև** Ուռնայեցու վկայությունից երևում է, թե Պետրոս կաթողիկոսին Հովհաննէս Սմբատի հրամանով կալանել են Անի մտնելուն պես («եւ եղև յորժամ մտանէր ի քաղաքն Անի, հրամանաւ թագաւորին Յովհաննէսի արգելական արարին գտեր Պետրոս...», Ուռնայեցի, 1869, 87-88), այդպէս էլ ընդունվել է պատմագրութեան մեջ (ՀԺՊ, 1976, 148, Մահե, 1993, 527), բայց երկու վիճազներ թույլ են տալիս ասել, որ կաթողիկոսը փոքր-ինչ ավելի վաղ է եկել: Համենայն դեպս, մինչ արգելափակումը, 1036-ին նա Անիում էր: Այսպէս, նա այդ թվականին Ս. Փրկիչ եկեղեցուն թողել է նվիրատվական արձանագրություն, որի սկզբուն փառաբանական խոսքեր է ձոնել Հովհաննէս Սմբատին՝ «Ի ՆՁԵ(1036) թուականիս Հայոց եւ ի մեծափառ թագաւորութեանս հզաւր եւ տիեզերակալ Սմբատա, որդո Քազկայ Հայոց եւ Վրաց շահայնչաի...» (Դիվան, Ա, 48): Նույն 1036թ. Հռոմոսում Հովհաննէս Սմբատը Ս. Գևորգ եկեղեցուն նվիրատվություն է կատարել «վկայութեամբ տեսան Պետրոսի Հայոց կաթողիկոսի» (Սարգիսյան, 1864, 166): Ուրեմն 1036-ին Պետրոսն Անիում էր, և նրա գծությունը թագավորի հետ ծագել է առնվազն այդ տարվա վերջերին: 1037թ. Անիում կաթողիկոս է ձեռնադրվել Դեոսկորոսը, իսկ 1038թ. Հռոմոսում Հովհաննէս Սմբատն իր կառուցած Ս. Հովհաննէս եկեղեցու շինարարական արձանագրութեան մեջ դարձյալ հիշում է Պետրոսին որպէս կաթողիկոս:

**12. Դեոսկորոսը** որպէս կաթողիկոս արձանագրություններում հիշվում է մեկ անգամ՝ Թալինում. «ի հայրապետութեան տեսան Թեոսկորոսի Հայոց կաթողիկոսի...» (Կոստանյանց, 1913, 21), ինչպէս նաև Եվարգրիս գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում. «Գրեցաւ ...ի թուականութեանս Հայոց ՆՁԵ(1038) ի հայրապետութեան տեսան Պետրոսի: Եւ զկնի նորա կենդանութեան նստաւ այդ հայրապետ, որ կոչի անուն նորա Դեոսկորոս...» (Ե-ԺԲ, 86): Կ. Ղաֆաղարյանը գրում է. «Դիոսկորոսը, վերադառնալով Սանահին, մինչև իր մահն էլ իրեն հայրապետ էր համարում և նրա անունով Սանահինում պահպանված երկու արձանագրությունները (1061 և 1063թթ. Կ.Ս.) կաթողիկոսական հրամանի բնույթ ունեն» (Ղաֆաղարյան, 1957, 48): Թերևս ճիշտ կլինի ասել՝ կաթողիկոսական արձանագրութեան ոճ ունեն, մանավանդ նկատի ունենալով 1063թ. արձանագրությունը՝ «ի ՇԺԲ թուին Հայոց ի հայրապետութեանն տեսան Դեոսկորոսի, ի թագաւորութեանն Կիրիկէի...» (Ղաֆաղարյան, 1957, 187):

**13.** Սեբաստիայում Պետրոսն իր բուն անցյալը վերաարժևորելու, անցավորի ու հավերժականի մասին խորհելու շատ ժամանակ ուներ: Շարականների «Ննջեցելոց» շարքում նա արտահայտում է համընդհանուր գաղափարներ, բայց անկասկած նաև սեփական կենսափորձը նկատի ունի: «Մերձեցայ ես ի դուռն գերեզմանի» սկզբնատողով շարականում, դիմելով Աստծուն, խնդրում է.

«Բժիշկ իմաստուն եւ ճարտարապետ  
Բժշկեա զհոգոյ իմ զհիւանդութիւն...  
Բըղխեսցեն առ իս զգութ մարդասիրութեանդ  
Եւ յաղբերդ կենաց լուսացես զմեզս անձին իմոյ»:

Մեկ այլ տեղում գրում է.

«Ոսկի եղեալս՝ անպիտանացայ,  
Գեղեցկայարմար շինուածիս քակտումն,  
Իմաստունս՝ յիմարացայ,

Ի յալեաց մեղաց, յոր ընկղմեցայ» և այլն (Հակոբյան, 1980ա, 187-203):

Պետրոս Գետադարձի գործունեության գնահատումը հայ մատենագրության և պատմագրության մեջ աչքի է ընկնում բազմազանությամբ ու հակադրությամբ՝ սկսած չափազանց փառաբանությունից (Սեբաստացի, 1974, 33, 36-40), մինչև ամենատուր քննադատությունը (Լեո, 1967, 651-654, 680): Անցյալ դարի վերջերին Կ. Կոստանյանցը փորձել է մի անկողմնակալ քննություն կատարել (Կոստանյանց, 1897), սակայն սպառիչ արդյունքի չի հասել: Ն. Գարսոյանը Պետրոս կաթողիկոսին կոչում է «հանելուկային կերպար» (Հայոց պատմություն, 1982, 227):

**14.** Մ. Օրմանյանը և նրա հետևողությամբ Ե. Պետրոսյանը կարծում են, թե Ստեփանոսի եղբայրն աթոռանկ է արվել, քանի որ նրա ձեռնադրության մասին տեղյակ չի եղել Բարսեղ Անեցին (Օրմանյան, 1959, 1327, Պետրոսյան, 1990, 85): Մինչդեռ այս դեպքի մասին տեղեկացնող միակ սկզբնաղբյուրը՝ Մատթեոս Ուռհայեցին, նման բան չի հայտնում, ընդհակառակը, Աղվանքի նոր կաթողիկոսի ընտրության ժողովը գումարվել է հենց Բարսեղի նախաձեռնությամբ, որը դրա համար մի եպիսկոպոս է ուղարկել Աղվանք (Ուռհայեցի, 1991, 321): Իսկ երբ նորընտիր կաթողիկոսը թերացել է վարքի մեջ, բանադրել է նրան ու զրկել աթոռից և Հայոց կաթողիկոսի վճիռն անվերապահորեն իրականացվել է:

**15.** Ա. Աբրահամյանը գրում է. «Հովհաննեսը Հաղբատում կրթություն ստանալուց հետո եկել է Անի և այնտեղ դպրոց հիմնել» (Աբրահամյան, 1956, 25): Ըստ Կ. Միրումյանի՝ Սարկավազը եղել է «Անիի դպրոցի (գուցե Անիի դպրոցներից մեկի) ղեկավար», որը ձեռք է բերել «աշխարհիկ բնույթ» (Միրումյան, 1984, 29): Թ. Հակոբյանի կարծիքով Սարկավազի գլխավորած դպրոցն «իր բնույթով հիմնականում աշխարհիկ էր, իմաստասիրական» (Հակոբյան, 1982, 114): Իսկ Ա. Մովսիսյանը մոռանում է նաև դպրոցի գործունեության ժամանակը և գրում. «Անիի դպրոցը միանգամայն աշխարհիկ պահանջներին համապատասխան էր կառուցված և ամբողջովին գտնվում էր արքունիքի հովանավորության ներքո» (Մովսիսյան, 1958, 243):

**16.** Հայսմավուրք մուծված մի բնագրի համաձայն, որը ուշ շրջանի խմբագրության նշաններ ունի, Բարսեղն ինչ որ ժամանակ ապաստանել է Աղթամարում (Հովսեփյան, 1951, 420), բայց այդ տեղեկությունն այլ

աղբյուրներով չի հաստատվում: Խմբագրողն, ինչպես երևում է, Աղթամարի կաթողիկոսության համակիրը լինելով, փորձել է Բարսեղի անունը ևս կապել Աղթամարի հետ, մանավանդ, որ հետագա շարադրանքում ասում է, թե իբր Անեցին Աղթամարում է թողել Գրիգոր Լուսավորչի Աջը, որն այդտեղ էր մինչև հակաթոռ Դավիթ Աղթամարցու ձեռնադրությունը և այլն:

17. 974թ. երբ Բյուզանդական կայսր Դովհաննես Զմշկիկը մեծ զորքով Արևելք է գալիս՝ Աշոտ Գ-ի ցուցումով նրա հետ բանակցելու են մեկնում իշխան Ստատ (Եվստատ) Թռռնեցին, Դայոց Ղևոնդ (Լևոն) վարդապետը, նաև «այլ եպիսկոպոսք և վարդապետք» (Ուռհայեցի, 1991, 22-23): Իսկ երբ փոխադարձ համաձայնության կայացումից հետո հայերը կայսրին 10 000 զորք են տրամադրում, ըստ Սմբատ Սպարապետի՝ մարտական գործողությունների մեկնող այդ զորախմբի հետ Աշոտն ուղարկում է նույն Ղևոնդին ու **Սարգսի եպիսկոպոսին** (Սմբատ, 1956, 9): Թե՛ Ղևոնդը և թե՛ Սարգիսը, որպես թագավորի կողմից լիազորված անձինք, պետք է որ սերտ կապ ունենային արքունիքի հետ: Դետագայում Ղևոնդ վարդապետի Կոստանդնուպոլիս գնալու մասին հայտնելով Ուռհայեցին գրում է թե՛ նա վերադառնալով «գնաց մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Դայոց, ի մեծ Տունն Շիրակայ» (Ուռհայեցի, 1991, 34), այսինքն՝ Աշոտի մոտ, Անի (Մաթևոսյան, 1990, 198): Իսկ Սարգիսը, եթե նույնը չէ՛ 969թ. Անիի առաջին եկեղեցական ժողովի մասնակից «Դոռոմոսի վանաց վանական» Սարգսի հետ, ապա գուցե արքունի եպիսկոպոսն է եղել: Չի բացառվում, որ նա համատեղել է Դոռոմոսի վանահայրությունն ու նորահաստատ մայրաքաղաքի արքունիքի եպիսկոպոսի պաշտոնները: Նման ենթադրության օգտին խոսող կռվան կարող է համարվել այն, որ Դոռոմոսի այս վանահայրը 979թ. հիմնադրել է Անիի մերձակա Ս. Գրիգոր եկեղեցին (Կարմիր վանք), այսինքն՝ ծանրակշիռ գործունեություն է ծավալել բուն Դոռոմոսից դուրս: Դատկանշական է նաև, որ Սարգսի մահից հետո՝ 980թ., Դոռոմոսի վանահայրությունն անցել է նրա որդի Սողոմոնին, որն էլ 985-ին ավարտին է հասցրել Ս. Գրիգոր եկեղեցու շինարարությունը (Մանուչարյան, 1967, 154-155):

18. Շիրակի եպիսկոպոսության պատմության վաղ շրջանի մասին գրեթե փաստեր չկան: Միայն Ս. Գրիգորի հունարեն վարքում Լուսավորչի ձեռքով Դայաստանում եպիսկոպոսական ձեռնադրություն ստացած անձանց մեջ հիշվում է Արուկես անունով Շիրակի եպիսկոպոսը (Պետրոսյան, 1990, 21): Դետագա դարերում գումարված բազմաթիվ եկեղեցական ժողովների մասնակիցների ցուցակներում Շիրակի եպիսկոպոս չի հիշատակվում: Սակայն դրա պատճառն այն է, որ որոշ եպիսկոպոսական աթոռներ գործում էին հայտնի նախարարական տներին զուգահեռ (նրանց տիրույթում) և կոչվում այդ տների անուններով, ինչպես օրինակ, Մամիկոնյան տան եպիսկոպոս, Ամատունյաց եպիսկոպոս և այլն: Շիրակը Կամսարականների տիրույթն էր և բնականաբար գտնվում էր Կամսարական տան եպիսկոպոսի եկեղեցական վերակացության ներքո: Կամսարական եպիսկոպոսները տարբեր ժողովական ցուցակներում կոչվում են նաև Արշարունիքի եպիսկոպոս: Եպիսկոպոսական Աթոռ ուներ նաև Բագրատունյաց նախարարական տունը:

19. Անիի Տիգրան Դոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի եկեղեցու հյուսիսային պատի քարերից մեկի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Տէր Ներսէս ամապատին իպիսկոպոս ՈՅ (1156) թուին» (Դիվան, Ա, 1966, 64): Քանի որ եկեղեցին կառուցվել է 1215-ին, պետք է ենթադրել, որ արձանագրության քարը պատկանել է ավելի վաղ ստեղծված կառույցի (հավանաբար Ս. Աստվածածին մատուռին, որի տեղում է իր

եկեղեցին կառուցել Հոնենցը, համաձայն շինարարական արձանագրության): Ներսեսն, ինչպես տեսնում ենք, կոչվում է «անապատի եպիսկոպոս»: Որ Անիի կամ նրա մերձակայքի վանքերից մեկը նաև անապատ է կոչվել, երևում է ԺԳ դարի սկզբներին քաղաքի Բեխենց վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանից, ուր հիշվում է «զմիակեցն գՄիմեռն, որ բնակէր յանապատի...» (ԺԳ, 73): Հնարավոր է, որ այդ նույն անապատի առաջնորդն էր Ներսեսը, սակայն որոշ տարակուսանք է առաջացնում նրա ունեցած բավական բարձր՝ եպիսկոպոսական կոչումը: Արդյո՞ք մինչև հիշյալ անապատ տեղափոխվելը Ներսեսն Անիի եպիսկոպոսը չի եղել: Ցավոք լրացուցիչ փաստերի բացակայությունը թույլ չի տալիս այս հարցում որոշակի եզրակացության հանգել: Ստույգ է միայն, որ Անիի եպիսկոպոս Բարսեղ Բ-ն առաջին անգամ հիշվում է 1160-ին, իսկ Ներսեսը եպիսկոպոս էր 1156թ. և այդ ժամանակ տնօրինում էր միայն իր անապատը:

**20.** Ջաքարեի հրավիրած Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների կոնկրետ թվականն աղբյուրները չեն նշում, այդ պատճառով էլ ուսումնասիրողներն առաջարկում են տարբեր թվականներ: Ըստ Մ. Օրմանյանի՝ Լոռիի ժողովը գումարվել է 1208թ., Անիինը՝ նույն տարվա դեկտեմբերի վերջերին: Այսպիսի թվագրման համար Օրմանյանն ունի զորեղ կռված, այն, որ Լևոն Բ-ի նախածեռնությամբ Ստու 1207-ին աթոռակալած Դավիթ կաթողիկոսը ևս Ջաքարեին բարեփոխումներ կատարելու լիազորություն տվողներից էր (Օրմանյան, 1959, 1568), հետևաբար, ժողովները պետք է կայանային դրանից հետո:

Բ. Ուլուբաբյանն այս հարցին անդրադարձել է Հաղբատի Հովհաննես վանահոր գործունեությունը քննելիս և եկել այն եզրակացության, որ Լոռիի ժողովը գումարվել է 1205թ. կամ ամենաուշը՝ 1206-ին, բայց ոչ երբեք 1208թ. (Ուլուբաբյան, 1975, 255): Պ. Մուրադյանը Լոռիի ժողովը թվագրում է 1204/5թ., իսկ Անիինը՝ «1207թ. Ծննդյան տոնի նախօրեին» (Մուրադյան, 1993, 102): Կարծում ենք, որ երկու ժողովների միջև ընկած ժամանակահատվածը մեծ չի եղել, որովհետև Ջաքարեն ինքը շահագրգռված էր Լոռիում կիսատ թողածը հնարավորին չափ շուտ լրացնել: Անիի ժողովի համար առավել ընդունելի թվական ենք համարում 1207-ը, մասնավորապես որ այդ թվականը, որպես ժողովի գումարման ստույգ տարեթիվ, տեղ է գտել նաև մանր ժամանակագրություններից մեկում (Սեթուլյան, 1983, 59, Մխիթարյանց, 1874, 121):

**21.** Կիրակոս Գանձակեցին, Անիի ժողովի մասնակիցների մասին նշելիս, գրում է, թե հիմնականում Լոռիի ժողովի մասնակիցներն էին, որոնցից նշանավորներին արդեն թվարկել էր իր տեղում: Նրանք էին՝ «Մխիթար, որ Գոշն կոչիր..., Իգնատիոս, Վարդան, Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս՝ հայր Սանահնին..., Տուրքիկն ի Թեղենեաց..., Եղիայ ի Հաւուց Թառոյ, Գրիգոր Դունացին, Սարգիս միակեացն ի Սեւանայ...» (Գանձակեցի, 1961, 171-172): Լոռիի ժողովի մասնակից Կեչառիսի վանահայր, մահացած Գրիգոր Մանուկիկն Անիում փոխարինել է նոր վանահայր Ներսես վարդապետը (Գանձակեցի, 1961, 176): Ժողովի օրերին Անիում էր նաև Մխիթար Գոշի աշակերտ, հետագայում հռչակված Վանական վարդապետը, որն ականատեսի իրավունքով իր պատմության մեջ հանգամանորեն գրել է այդ դեպքի մասին, և որից օգտվել է Գանձակեցին (Գանձակեցի, 1961, 178), բայց Վանականի գործը, ցավոք, կորել է:

**22.** ԺԴ դարի 20-40-ական թվականներին Անիում Գրիգոր Խուցես անունով մեկը հիշվում է որպես «առաջնորդ և հիմն քաղաքիս», իսկ որոշ ժամանակ անց նրա պաշտոնը ժառանգած որդին՝ Ասիլը, կոչվում է «...առաջնորդ և հիմն

**քաղաքի Անոյ**, իրաւարար և արդարադատ ամենայն քաղաքին» (Հովսեփյան, 1951, 892): Վերջինս 1357թ. կիլիկյան արքունական մի Ավետարան է ձեռք բերել ու նվիրել Անիի Ս. Առաքելոցին, որը հիշատակարանում անվանում է իրենց «սեփիական հայրենի եկեղեցին» (Կ. Մ., 1985, 113):

**23.** «Կամաւք բարերարին Աստուծոյ այս մեր արծան անջնջելի եւ յիշատակ մշտնջենաւոր տեամն Գրիգորոյ արհիեպիսկոպոսի... որ ետու նուէր յիմ հաւրեղբարն յաստուածապատիւ տեամն Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ սուրբ ուխտս Լմբատ, զնորին զանձագին զեղս մերձ ի յԱրդիք, որ կոչի յանուն Հայրենեաց Թաղք, ընծայեցի զսա Սուրբ Ստեփանոսի հայրենիք մինչ ի կատարած յաւիտենիս, յաղագս յիշատակի մերոյ եւ յարեւշատութիւն եղբար մերոյ Ղարփին եւ հայր Գրիգորի եւ Բարսղի՝ ստացողի սոցա եւ ծնողաց մերոց: Եւ եղի լուծ սպասաւորաց սոցա ի տարին Ձ(6) պատարագս փոխարէն հատուցանելոյ ի տաւնս Ղազարու. զերկուսն տէր Բարսղի եւ զերկուսն իմ հաւր, զերկուսն իմ մաւր՝ Մահմլքին...» (Ալիշան, 1881, 165, Եղիազարյան, 1960, 56):

**24.** Այս շրջանում եկեղեցուն կանոնական պահանջների խախտումների ու զանազան անօրինականությունների մասին վկայություններ կան ակնարկներ կան թե՛ մատենագիրների մոտ, թե՛ վիճաբաններում: Բերենք մի բնորոշ օրինակ. 1228թ. Հռոմոսի վանքի պարոնների՝ «տերանց» արձանագրության մեջ ասվում է. «...հաստատեցաք արձանագրով. **պարոն ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց, ով կաշառաւք հայր դնէ, այնպիսին նզովս առջէ** զՅուդային զաստուածաճառին եւ զԿաննին զեղբայրասպանին, **եւ հայր և այլ գործաւորք որ կաշառք տան յայտնի կամ ի ծածուկ՝** յերկնաւոր Հարէն... անիծեալ եղիցի...» (Սարգիսյան, 1964, 152): Անիում եկեղեցաշինարարներից շատերն արձանագրություններում զգուշացնում էին, որ տեղի եկեղեցականները չհափշտակեն եկեղեցու սպասքն, ինչքն ու ձեռագրերը և եկեղեցու եկամուտները չթաքցնեն («Եթէ ոք ի քահանայից եկեղեցոյս... յիմ սպասուցս եւ կամ ի գրենոյս յափշտակէ կամ ծախելով կամ զինչ եւ իցէ պատճառաւ եւ կամ զագահութեան զհետ երթաւ եւ զեկեղեցոյս **մուտքս խորէ**... նզովեալ լիցի...» (Դիվան, Ա, 46):

Ինչ վերաբերում է Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի 1245թ. Հայաստան ուղարկված՝ զգոնության կոչող շրջաբերականին, ապա այն անհրաժեշտ արդյունք չի ունեցել, դատելով նույն կաթողիկոսի 1251թ. դարձյալ Վարդան վարդապետի ձեռքով ուղարկված մեկ այլ թղթից՝ «Խրատական թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի», բաղկացած 18 կետից: Նախաբանում կաթողիկոսը հիշելով իր նախորդ գրությունը, ցավով արձանագրում է, որ հայաստանցիներն իր խրատներին ունկնդիր չեն եղել, այլ բազմապատկել են մեղքերը. «...ական ունէաք... բարի համբաւ լսել զձէնջ, մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանացս մեր եւ չէք արարեալ, եւ բազմապատկեալ են եւ շատացեալ ամենայն չարիք եւ մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք» (Խաչիկյան, 1995, 168):

**25.** Եթե հնարավոր լիներ ճշտել, որ Լանկ Թեմուրի Հայաստան կատարած երկրորդ՝ 1394-1395թթ. արշավանքի նկարագրության մեջ Թովմա Մեծփեցու հիշատակած **«բերդ Բագրատունուոյ»** արտահայտությունը վերաբերում է Անիին, ապա կարող էինք ասել, որ այդ շրջանում քաղաքում աթոռակալել է Մկրտիչ անունով եպիսկոպոսը: Հիշատակությունը հետևյալն է. «...Եկն ի վերայ գաւառին Արարատեան, աւերեաց զաշխարհն ամենայն կողոպտելով յընչից, **նստաւ ի**

**վերայ բերդին Բագրատունոյ.** էառ զնա եւ բաժանեաց 300 Տաճիկս եւ 300 Քրիստոնէյս ի միմեանց: Ասէին. զՔրիստոնէայս սպանանենք եւ զՏաճիկսն ազատենք: Եւ էին երկու եղբարք եպիսկոպոսի քաղաքին **Սկրտիչ** անուն՝ երթեալ խառնեցան ի գունդս Տաճկացն: Եւ սուր եղին ի վերայ եւ սպանին զՏաճիկս եւ զհաւատացեալսն ազատեցին... Եւ սուգ մեծ եղեւ եպիսկոպոսին...» Մեծօփեցի, 1861, 46): Ըստ Թ. Յակոբյանի՝ «Բերդ Բագրատունոյ» ասելով պատմագիրն անկասկած նկատի է ունեցել միայն և միայն երբեմնի հռչակավոր Անի մայրաքաղաքը, որն այժմ կորցրել էր իր նախկին արտակարգ նշանակությունը և այդ պատճառով կարող էր համարվել նաև սոսկ ամուր բերդ» (Յակոբյան, 1982, 334): Նկատենք, որ բնակավայրի բերդ կոչվելն էական չէ, քանի որ մի քանի տող անց Մեծօփեցին Սկրտիչին կոչում է «եպիսկոպոս քաղաքին»: Սակայն Մ. Օրմանյանը և այլ ուսումնասիրողներ հիշատակված բերդն ու քաղաքը նույնացնում են Կարսի հետ: (Օրմանյան, 1960, 2003, ՅԺՊ, 1972, 28): Նման ենթադրությունն ավելի հավանական է թվում, երբ ըստ նույն Մեծօփեցու նկարագրության հետևում ենք Թեմուրի երթուղուն, որը եկել է Երզնկայի կողմից, գրավել «Բագրատունու բերդը», անցել Բասեն, ապա Կողբ, Սուրմառու: Ցավոք Կարսի եպիսկոպոսների մասին եղած տեղեկությունները ևս քիչ են, այլապես Սկրտիչի անվան միջոցով հնարավոր կլիներ վերջնականապես պարզել Մեծօփեցու նշած բերդի անունը:

Անիի եպիսկոպոսական աթոռի պատմության վերջին շրջանի առնչությամբ հարկ է հիշատակել նաև Յովհաննավանքում եղած մի խաչարձանի արձանագրությունը: Ցավոք բուն արձանագրությունը չի պահպանվել, բայց նրա բովանդակությունը մեզ է հասել Ջաքարիա Սարկավազի ընդօրինակությամբ, որը հետևյալն է. «զՎասիլ հայր Յովհաննու վանից **առաջնորդ Շիրակայ** և ամենայն Անբերդու՝ յիշեցէք ի Քրիստոս: թուին ԶԿ(1311)» (Ղաֆադարյան, 1948, 116, Ալիշան, 1890, 156, 172): Յովհաննավանքի վանահայրերն այս շրջանում եպիսկոպոսական աստիճան ունեին և հնարավոր է, որ նրանցից մեկը՝ Վասիլը (հոգևորականության շրջանում այնքան էլ տարածված անուն չէ) որոշ ժամանակ եղած լինի նաև Շիրակի առաջնորդ, ինչպես վկայված է արձանագրության մեջ: Սակայն հիշենք, որ Անիի եպիսկոպոսն այդ շրջանում (1311) Յովհաննես Ա-ն էր, որը դեռ 1308թ. մի հիշատակարանում նշվում է որպես եպիսկոպոս «Շիրակ գաւառիս»: Չի բացառվում, որ Վասիլի արձանագրության թվականը սխալ է ընդօրինակվել: Նկատենք նաև, որ Յովհաննավանքի Վասիլ առաջնորդի անունն այլ աղբյուրներում չի պահպանվել, միաժամանակ հիշատակարաններում և արձանագրություններում 1310, 1318 և 1350 թվականներին որպես Յովհաննավանքի առաջնորդ է հիշատակվում Ներսես եպիսկոպոսը (ԺԴ, 65, 129, Ղաֆադարյան, 1948, 92):

**26.** Զգուշացնելով ժամանակի քահանաներին Շնորհալին գրում է. « Չլինի թե մնանվեք **քաղաքարնակ մի շարք աներկյուղ քահանաների**, որոնց մասին, ինչպես լսում ենք, առավոտից մինչև պատարագի ժամը քաղաքի վաճառափողոցներով են շրջում և առևտրով զբաղվում, ուր անպատշաճ բաներ տեսնելով, լսելով, խոսելով ու գործելով բազմաթիվ նետեր, զգայարանների միջոցով ներս թափանցելով, խոցոտում են նրանց հոգիները և այնտեղից վերադառնալով, հանդգնում են եկեղեցի մտնել և ուրիշ քահանաների պատրաստած նշխարով, առանց սաղմոսի և աղոթքի, պատարագ մատուցել» (Շնորհալի, 1991, 86):



27. Ուռնայեցու ժամանակագրության աշխարհաբար թարգմանության մեջ կաթողիկոսարանի հոգևորականությանը վերաբերող հեղինակի խոսքի վերջին հատվածը սխալ է հասկացվել՝ «հայրապետի վեհարանում մշտապես լինում էին տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթսուն երեց, ինչպես և հինգ հարյուր աշխարհական» (Ուռնայեցի, 1973, 101, Ուռնայեցի, 1991, 167): Բայց իրականում պատմիչը նշում է վաթսուն կուսակրոն և հինգ հարյուր աշխարհական (ամուսնացյալ) երեցների մասին, որոնք հենց այդ կերպ էլ հիշվում են ժամանակի եկեղեցական սպասավորության համակարգում, մասնավորապես Մխիթար Գոշի Դատաստանագրքում՝ «աշխարհական քահանա» (Գոշ, 1975, 381) և Անիի շրջանի արձանագրություններում՝ «աշխարհական արեղա» (Սարգիսյան, 1864, 183, 191): Պատմիչի խոսքը տվյալ հատվածում կաթողիկոսարանի հոգևոր դասի և ոչ թե ընդհանրապես պաշտոնեության մասին է: Մեկ այլ տեղում նա հիշատակում է նաև կաթողիկոսարանի աշխարհական անձնակազմին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք վաթսուն կուսակրոն և հինգ հարյուր ամուսնացյալ քահանաների ներկայությունը կաթողիկոսարանում չափազանցված թիվ չէ, ապա մեզ թվում է, որ հատկապես աշխարհական երեցները ոչ թե օրնիբուն կաթողիկոսարանում էին լինում, այլ կազմում էին Անիի քահանայական դասը, սպասավորում քաղաքի բազմաթիվ եկեղեցիներում, բայց միաժամանակ, ցանկացած պահի կարող էին հավաքվել կաթողիկոսարանում:

28. Սարգիս վարդապետ Անեցիի ժամանակի նշանավոր եկեղեցական գործիչներից էր և լինելով կաթողիկոսարանի գրատան տնօրենը՝ միաժամանակ սերտ կապերի մեջ էր Բագրատունյաց արքունիքի հետ: Սարգիսի կենսագրության, ունեցած հեղինակության, գիտական ու ուսումնական հմտության վերաբերյալ կարևոր նյութեր են պարունակում Գրիգոր Մագիստրոսի նրան ուղարկված հինգ թղթերը (ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ): Դրանք վկայում են Մագիստրոսի և Սարգիսի հին բարեկամության և ժամանակին «ուսումնակիցներ» եղած լինելու մասին (Մագիստրոս, 1910, 65): Գրիգոր Մագիստրոսը շատ բարձր է գնահատել անեցի վարդապետին, նրան դիմելիս գրում է «հզոր հռետոր և աստուածայինը տէլէտիս... հզոր ես ի պուլտիկոսական մատենագրութեան և սիրելի ինձ» կամ «ո՛վ մակացու բոլոր մակացութեան և ինձ տռփելի... գերակատար բոլոր ճեմարանի Արամեան ազգի» և այլն: Եթե անտեսենք Մագիստրոսի ոճին բնորոշ գովաբանական չափազանցությունը, որը թերևս ժամանակի մամակագրությունների համար ընդունված ոճ էր, միևնույն է, մնում է մի ծանրակշիռ գնահատական, որին Սարգիս վարդապետն ըստ ամենայնի արժանի է եղել:

Կ. Կոստանյանցը ժամանակագրական ճիշտ հերթականությամբ է ներկայացրել հիշյալ մամակները, բայց թվագրման հարցում այնքան էլ ստույգ չէ: Ըստ նրա՝ թղթերից առաջին երեքը «գրված են 1042, 1044թթ., իսկ չորրորդը մոտավորապես 1051 թ.»: Հինգերորդ մամակը, որ նրա կարծիքով հասցեագրված է այլ Սարգիսի՝ Սևանեցուն, գրված է համարում «1044 թվից հետո» (Մագիստրոս, 1910, 296):

Առաջին երեք թղթերը (ԺԸ, ԺԹ, Ի) բովանդակության համաձայն գրվել են Գագիկ Բ-ի և Գրիգոր Մագիստրոսի գժտության շրջանում: Հայտնի է, որ Գագիկի գահակալության սկզբում Մագիստրոսը նրա կողմնակիցներից էր և 1042-1043թթ. գլխավորել է թագավորական բանակը «թուրքաց զօրաց» դեմ կռվում ու հաղթություն տարել Հրազդան գետի ափին: Ուստի ենթադրելի գժտությունը տեղի է ունեցել դրանից հետո՝ հավանորեն 1044թ., մանավանդ որ՝ հենց այդ ժամանակ առավել ակնհայտորեն դրսևորվեցին

Բյուզանդական կայսրության նկրտումները, իսկ Մագիստրոսը համարվում էր հունասեր խմբակցությանը հարող իշխան: Հիշյալ երեք նամակները, մեր կարծիքով, գրվել են այդ թվականին:

Հաջորդ երկու՝ ԻԱ և ԻԲ թղթերը գրվել են, երբ Գագիկն արդեն գահագուրկ, արգելափակված էր Բյուզանդիայում, իսկ Գրիգոր Մագիստրոսը կայսեր հրամանով դարձել էր Միջագետքի և Տարոնի կուսակալը: Այդ պաշտոնը նա ստանձնել է 1048թ., հետևաբար վերջին երկու նամակները գրել է այդ թվականից հետո: Բայց ԻԱ թղթում խոսում է արդեն իսկ կատարած շատ գործերի մասին, ուստի նամակները գրել է 1050-ական թթ. սկզբներին:

Հայրենի Բջնիից քաղաքամայր Անի Սարգիս վարդապետին ուղարկած առաջին երկու նամակներում Մագիստրոսն անկեղծորեն «գրուցում է» բարեկամի հետ, մի կողմից թագավորի շրջապատում եղողներին մեղադրելով իր դեմ սկսած հալածանքի համար, մյուս կողմից՝ հավաստելով իր հայրենասիրությունն ու տիրասիրությունը: Գիտակցելով Սարգսի՝ արքունիքում ունեցած համարումը, իշխանը ենթատեքստում նաև նրա աջակցությունն էր հայցում: Եվ իրոք, շուտով Մագիստրոսի հետ հաշտվելու համար Գագիկը նրա մոտ բանակցելու է ուղարկում հենց Սարգսին:

Համառոտակի ծանոթանա՞նք Գրիգոր Մագիստրոսի՝ Սարգսին հասցեագրված նամակներին:

**Թուղթ ԺԸ.** «Առ վարդապետն Սարգիս ի ժամանակի հալածանաց գրեաց ի մայրաքաղաքն Անի»:

Նամակն ամբողջովին՝ վշտացած իշխանի բողոքն է իր հալածիչներից: Ըստ հեղինակի՝ ինքը ոչ մի առիթ չի տվել նման վերաբերմունքի համար և զրպարտված է հանիրավի: Սկզբում Մագիստրոսը գրում է, թե տեղյակ է, որ կրած մեղություններն անհանգստացնում են իր բարեկամ Սարգսին, ուստի հարկ է համարում հանգամանորեն տեղեկացնել գործի բուն իրողությանը: Այնուհետև իշխանը գրում է, որ փրկության հույսը միայն Աստծո վրա է դրել, թշնամիները խարդավանքներ են նյութում, իր մահը կանենում, անգամ արքունի դռանը հավաքված ծաղրել են իրեն, իսկ նա ոչինչ չի պատասխանել: Ապա Մագիստրոսը նշում է, որ անցյալում ևս հաճախ արժանավորները հալածական են դարձել ու օրինակներ բերում: Դրանից հետո հեղինակը որոշ ակնարկներ է անում, որտեղ երևում է նրան ներկայացված մեղադրանքը՝ հայրենի սահմանը (ցանկը) քանդելու (խրամատելու) մասին, ինչն ինքը կտրականապես ժխտում է և հակառակը պնդում: Վրդովված իշխանը գրում է, թե հայրենի սահմանը քանդողին թող օձը խայթի, իսկ ինքը ոչ թե պառակտել, այլ փորձել է ամրացնել (ցանկակարկատ լինել), եղածը խնամել (Մագիստրոս, 1910, 55):

**Թուղթ ԺԹ.** «Պատասխանի Սարգիս վարդապետի և ողբ ի վերայ Արամեանս նահանգի»:

Սկզբում Մագիստրոսը գրում է, որ վարդապետի պատասխան գրությունն ընթերցելով ավելի է տրտմել, նաև մեղադրական ակնարկներ նկատել, միաժամանակ դժգոհում է, որ նա իր բոլոր նամակներին չի պատասխանել: Ինչպես երևում է, Սարգիսը փորձել է միջնորդել Գագիկի առաջ, բայց վերջինս նրան չի լսել:

Կարելի է ենթադրել, որ այս դեպքի մասին է գրում Մագիստրոսը Գագիկ Բ-ին հասցեագրած նամակում (ՀԲ), ուր վարդապետի անունը չի տալիս, բայց նյութի տրամաբանությունից դատելով հենց Սարգսին նկատի ունի (Մագիստրոս, 1910, 209): ԺԹ

թղթում նախաբանից հետո Մագիստրոսը զանազան համեմատություններով ու անուղղակի ակնարկներով հանդիմանում է Գագիկին ու նրա արքունիքում տիրող բարքերը, ապա, ասես համառոտելով Հայոց պետականության պատմությունը, թվարկում է հզոր նախնիներին ու նրանց բարեմասնությունները: Կրկնելով «ո՞ւր են» հարցը՝ նա շարահյուսում է մի երկար անվանացանկ նշելով ինը տասնյակ անձնանուն կամ տոհմանուն: Վերջում Մագիստրոսը գրում է, որ թեև նշվածներից ու չթվարկվածներից ոմանք առանձնապես զորեղ չեն եղել, բայց իշխել են երկրում պահպանելով թագավորական գահը: Դիմելով Սարգսին, Մագիստրոսը խորհուրդ է տալիս Գագիկին ետ պահել տղայամիտ անխոհեմությունից: ԺԹ թղթի սկզբում եղած ակնարկներից երևում է, որ Սարգիս վարդապետը, Մագիստրոսի բարեկամն ու համակիրը լինելով, բոլոր հարցերում չէ, որ համամիտ է եղել նրա հետ: Այդ ավելի ակնհայտորեն է երևում հաջորդ թղթում: Գրիգոր Մագիստրոսը ոչ միայն փայլուն գիտնական ու խոշոր մտածող, այլև քաղաքական գործիչ էր, որոշակի քաղաքական շահեր ու հայացքներ ունեցող իշխան, և նրա նամակների միջոցով ներկայանում են հենց այդ հայացքները: Չենք կարծում, որ Գագիկի վարքն այսպանելիս նա շատ է խտացրել գույները, սակայն անձնական հակակրանքը իշխանին թույլ չի տվել որևէ դրական բան ասել երիտասարդ արքայի մասին: Պատմիչ Սամուել Անեցու վկայությամբ Գագիկն «ի մանկութենէ ընդ դպրութիւն գրոց վարժեալ էր, ի նոսին զբօսմոյր...» (Անեցի, 1893, 108), Մաթևոս Ուռհայեցին գրում է «Մանուկս այս Գագիկ էր յոյժ իմաստուն և ...աստուածասէր», իսկ նրա հասուն տարիքի գործունեությունը նկատի ունենալով ավելի է մեծարում ու համեմատում երևելի վարդապետների հետ (Ուռհայեցի, 1869, 101, 215է216): Եթե Մագիստրոսն ամեն առիթով շեշտում է արքայի անփորձությունն ու թերությունները, ապա Սարգիս վարդապետը, ոչ պակաս լավատեղյակ լինելով, բոլոր մեղքերը Գագիկի վրա չի բարդում՝ մի բան, որ երևում է հատկապես հաջորդ Ի թղթից:

**Թուղթ Ի.** «Պատասխանի Սարգսի վարդապետին»:

Սա Մագիստրոսի գրած ամենակարճ նամակներից մեկն է: Նրանից երևում է, որ Գագիկ Բ-ի հանձնարարությամբ Սարգիս վարդապետը Մագիստրոսի հետ բանակցելու համար եկել է Ամբերդ, այդտեղից թուղթ հղել իշխանին և ստացել սույն պատասխանը: Թուղթն առանձնահատուկ է, քանի որ նրա մեծ մասը քաղված է հենց Սարգսի նամակից: Սկզբում Մագիստրոսը նրանից մի բառացի մեջբերում է անուն, այնուհետև վերաշարադրում է Սարգսի խոսքը Գագիկի ու Հայաստանին հասած դժբախտությունների մասին, իսկ վերջում նոր միայն իր կարծիքներն է հայտնում իրողության վերաբերյալ: Քանի որ այս թուղթը շատ ուշագրավ է որպես Սարգիս վարդապետի գրավոր ժառանգության մի հատված պարունակող գրություն, ամփոփում է նրա տեսակետը ժամանակի իրադարձությունների շուրջ, մյուս կողմից, ինչպես կտեսնենք, ուսումնասիրողների կողմից հաճախ ճիշտ չի հասկացվել՝ այն բերում ենք ամբողջությամբ՝ աշխարհաբար թարգմանությամբ՝ ընդգծելով այն տողերը, որ քաղված են Սարգսի նամակից:

«Սրբազան վարդապետ, ստացա քո գրությունը, որն այսպիսի խոսքեր էր պարունակում, թե՛ **փափագում էի տեսնել քեզ և եկա Ամբերդ՝ առաքված լինելով մանկամիտ արքայի կողմից: Մանուկ ասելով՝ Սուրբ Հոգին է խոսում իմաստունի շուրթերով. «Վա՛յ քեզ քաղաք, քանզի թագավորդ մանուկ է».** բավական է այս խոսքը:

Գրել ես, թե մեր արքան սկզբի անելիքը վերջում է անում և ապաշխարանքով զալիս դեպի լավը, այդպես վարվելով ո՛չ պատանեկան անփորձության կամ անիմաստության պատճառով, քանի որ դաստիարակվել է հռետորական կրթությամբ: Իսկ մեր աշխարհի ավերման պատճառն ըստ մեր մեղքերի պատահեց մեզ, որովհետև մեղանչեցինք մեր Տեր Աստծու առաջ:

Սակայն իմացիր, որ տարակուսանքների տազնապը, նրա (արքայի) կողմից ատելության և բազում կորուստների նյութումը, այլ բան չի բերել, եթե ոչ Տեր Աստծու ցասումը, և որ բոլորից ավելի վաղ ես ստացա բազմաթիվ հարվածներ ու քարկոծություն, և հիմա կիսամահ ու տկար հայացքս հառել եմ Աստծու ողորմությանը: Ողջ եղիր» (Մագիստրոս, 1910, 64):

Ինչպես տեսնում ենք, այս թուղթը որոշակիորեն երկու տեսակետ է պարունակում: Սարգիս վարդապետն ընդունելով արքայի սխալները, որ սկզբում անելիքը վերջում է անում և այլն՝ միաժամանակ դեմ է երիտասարդ տարիքի պատճառով նրան հանդիմանելուն, քանի որ լավ դաստիարակություն է ստացել, ընդունակ է ապաշխարության: Իսկ Հայոց աշխարհին պատահած դժբախտությունները նա պատճառաբանում է միջնադարյան պատմագրության համար հատկանշական բանաձևմամբ՝ «ըստ մեղաց մերոց պատահեաց»:

Իր հերթին Մագիստրոսը, որն ինչպես տեսանք, նախորդ նամակներում (նաև ուրիշ թղթերում) շարունակ մեղադրում է Գագիկին, հենց նրա վարքն ու գործունեությունն է Աստծու ցասման պատճառ համարում: Նամակի բովանդակության այս նրբերանգի անտեսումը երբեմն ուսումնասիրողներին մղել է Սարգիս վարդապետի տեսակետը Մագիստրոսին վերագրելուն (Մագիստրոս, 1910, ԼԷ, Խաչերյան, 1987, 112, 131-132): Սարգիս վարդապետը մեջբերում է կատարել Աստվածաշնչի Ժողովողի գրքից (Ժողովող, Ժ. 16), բայց արդյո՞ք նրա նամակում չի եղել նաև աստվածաշնչյան քաղվածքի շարունակությունը՝ «Վա՛յ քեզ քաղաք, որոյ թագաւոր քո մանուկ է, եւ իշխանք ընդ առաւօտս ուտեն: Երանի՛ քեզ երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է, եւ իշխանք քո ի ժամու ուտեն զօրութեամբ եւ ոչ ամաչեսցեն»։ Դժբախտություն են և՛ թագավորի մանուկ լինելը և՛ իշխանների ընչաքաղցությունը: Մյուս կողմից՝ անառարկելի էր Գագիկի ազնվագարն թագավորական ծագումը, որն ըստ նույն քաղվածքի՝ երկրին երանի տալու պատճառ կարող է լինել: Թվում է, որ Մագիստրոսը Սարգսի նամակից մեջբերում կատարելով՝ այն ավարտել է իրեն ձեռնտու տեղում գրելով «բավական է այս խօսքդ», այսինքն, այս խոսքով («Վա՛յ քեզ քաղաք, վասնզի թագավոր քո մանուկ է») արդեն ամեն ինչ ասված է: Մինչդեռ Սարգսի որդեգրած տեսակետի տրամաբանությունը հուշում է, որ նա փորձել է թեթևացնել թագավորի «մանուկ» լինելու «մեղքը» նրա թագավորական ծագման «կռվանով»:

Մագիստրոսի Ի թուղթը Սարգիս վարդապետին ներկայացնում է որպես լայնախոհ գործչի, հաշտության պատգամաբերի, որը երկրի համար ճակատագրական պահին փորձել է հաղթել Գագիկ թագավորի ու Գրիգոր իշխանի գժտությունը՝ ի շահ հայրենիքի բարօրության:

Թե ինչով է ավարտվել Սարգսի առաքելությունը Ամբերդ գալուց հետո, դժվար է ասել: Հայտնի է, որ դրանից որոշ ժամանակ անց, երբ Գագիկը կանչվում է Կոստանդնուպոլիս և

այնտեղ փաստորեն կալանվում, Մագիստրոսը շտապում է կայսրության մայրաքաղաք՝ փորձելով բարեխոսել ու ետ բերել Գագիկին, բայց արդյունքի չհասնելով՝ իր հայրենի Բջնին ևս հանձնում է կայսրությանը՝ այլ վայրում կալվածքներ ստանալով: 1048 թ. նրան շնորհվում է Միջագետքի, Տարոնի ու հարակից որոշ շրջանների կուսակալության բարձր պաշտոնը:

Այս շրջանում շարունակվել է Մագիստրոսի ու Սարգիս վարդապետի նամակագրությունը: Իր նոր նստավայր Տարոնից իշխանը երկու թուղթ է գրել նրան:

**Թուղթ ԻԱ.** «Առ վարդապետն Սարգիս»:

Ինչպես երևում է, Գագիկի աթոռանկ արվելն ու Անիի թագավորության կորուստը ծանր են անդրադարձել Սարգիս վրա, որոշ սառնություն մտցրել նրա և Մագիստրոսի փոխհարաբերություններում: Նամակի սկզբում հեղինակը հանդիմանում է վարդապետին իրեն մոռանալու համար՝ հիշեցնելով մանավանդ հին բարեկամությունն ու ուսումնակցությունը և երկուսին միավորող առ Աստված ունեցած անաղարտ սերը: Ապա նշում է, թե ինչ որ իր հետ կատարվել է՝ եղել է Աստծո կամքով, որը զորացնում է երբեմնի տկարներին: Նույն ոգով շարունակելով Մագիստրոսը դժգոհում է, թե ինչու Սարգիսը չի հարցնում նոր տիրույթներում իր կատարած բազում գործերի, հարավային սելջուկյան ասպատակությունները կասեցնելու, Միջագետքի և այլնի մասին:

Այդքանով ամձնական հարցերն ավարտված համարելով՝ Մագիստրոսն անցնում է գործնական խոսակցության, կտրուկ փոխում տոնը և վարդապետին հարցնում թոնդրակեցիների մասին: Համառոտ անդրադառնալով աղանդավորներին, Մագիստրոսն այնուհետև խնդրում է, որ Սարգիսն իմաստասիրական իր հմտությամբ շտապով գրի նրանց դեմ, և տեղեկացնում է, որ իր հերթին ինքն էլ երբեք չի դադարեցրել թարգմանություններով զբաղվելը:

Մագիստրոսը թվարկում է այն գրքերը, որոնք հայերենով չի գտել ու թարգմանել է, խոսում է նաև հնուց թարգմանված և նոր միայն իրեն հասու եղած գրքերի մասին, իսկ վերջում գրում, որ եթե երկար ապրի՝ կշարունակի հունարենից ու ասորերենից թարգմանություններ անել: Իշխանն ընդգծում է, որ թարգմանություններ կատարելիս շատ է զգում Սարգիս վարդապետի օգնության կարիքը, բայց եթե նա չի կարող գալ, թող աղոթքներով սատար լինի իրեն: Այստեղից պարզվում է, որ Սարգիս վարդապետը հմուտ ու փորձառու է եղել թարգմանական գործում, հավանաբար տիրապետել հունարենին ու ասորերենին: Միաժամանակ կարելի է ենթադրել, որ Մագիստրոսն ու Սարգիսն ինչ-որ ժամանակ, գուցե ուսումնասիրության շրջանում, համատեղ թարգմանությամբ են զբաղվել:

ԻԱ թղթի սկիզբն ու վերջն ասես միմյանց հակապատկերը լինեն, առաջինում նկատվում է անբավականության ենթատեքստ՝ թերևս երկուսի քաղաքական հայացքների տարբերությունից բխող, իսկ հետո, երբ խոսք է բացվում աղանդավորության դեմ պայքարի, մշակույթի ու գիտության հարցերի շուրջ, թղթակիցները դառնում են սրտակից հոգևոր եղբայրներ, նույն մտածումներով ապրող համախոհներ:

Մագիստրոսի՝ Սարգիսն հասցեագրված վերջին ԻԲ թուղթն ուղարկված է Սևան:

**Թուղթ ԻԲ.** «Առ վարդապետն Սարգիս, առաջնորդ ուխտին Սեւանայ, քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթէ եկեսցես առ իս և ի միասին գրոց պարապեսցուք»:

Նամակի բովանդակությունը վկայում է, որ Սարգիսը Մագիստրոսից բժշկական խորհուրդներ է հարցրել՝ կապված Գագիկին պատուհասած սեռական հիվանդության

ախտաբանության հետ, ինչին իշխանը պատասխանում է բավական հանգամանակից՝ երբեմն-երբեմն կծու հեզմանքը չթաքցնելով: Նամակի սկզբում Մագիստրոսը մեծարում է Սարգսին, ապա անցնում բուն նյութին, Գագիկին շարունակում է մանուկ կոչել, թեպետ այդ ժամանակ նա շուրջ 30 տարեկան էր, նշում է, որ Գագիկի գրածի համաձայն՝ ծանոթ է նրան հասած հիվանդությանը, ենթադրություններ է անում հիվանդության պատճառների շուրջ, հանգամանորեն խոսում բուժման անցյալի նշանավոր բժիշկների դրույթների մասին, որոշ դատողություններ անում, բայց ապաքինման որոշակի ճար չի մատնանշում:

Նամակն ավարտելով՝ Մագիստրոսը Սարգիս վարդապետին սիրով հրավիրում է Գագիկի մոտ զնալուց առաջ նախ իր մոտ գալ, որպեսզի ողջագուրվեն և բարեկամաբար բանավիճեն. «Այլ դու եթե կամիցիս, առ մեզ նախ զուղևորութեանդ քո մաքրափայլ ընթացս արասցես, զի թերևս զիղծ տենչանաց փափակման յօժարութեան որ առ միմեանս սիրովն Աստուծոյ ողջունենք և առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպենք իմաստասիրել, ողջ լեր» (Մագիստրոս, 1910, 69):

Նամակի այս վերջաբանը ևս մի ապացույց է հին բարեկամների՝ Գրիգոր Մագիստրոսի ու Սարգիս վարդապետի նաև հին ընդդիմախոսներ լինելու իրողության, որը հավասարապես ընդգծում է երկուսի արժանավորությունը:

Նամակը ստանալուց հետո Սարգիսը եկել է Մագիստրոսի մոտ թէ ոչ հայտնի չէ, բայց, կարծում ենք, տիրասեր վարդապետն անպայման ուղևորվել է Բյուզանդիա՝ Գագիկի մոտ, և իր բժշկական կարողության սահմաններում փորձել է օգնել նրան: Այդ տեղի է ունեցել 1050-ական թվականների սկզբներին և դրանից հետո այլևս Սարգսի անվանը չենք հանդիպում:

Գրիգոր Մագիստրոսի նամակները վկայում են Սարգսի մեծ հեղինակության, իմացական ու գիտական բարձր մակարդակի, քաղաքական կենտրոնաձիգ դիրքորոշման մասին:

**29.** Մխիթար Գոշի հայտնած տեղեկությունը վկայաբերելով՝ Գ. Մարգարյանն այն տեսակետն է առաջ քաշում, թե՛ «Գեորգի Գ-ը եկել էր գրավելու Անին՝ քաղաքացիների մի մասի հրավերով, որոնց գլխավորել են Հասանյան տոհմին պատկանող Բարսեղ արքեպիսկոպոսը և նրա եղբայրները, սակայն քաղաքում գործում էր Հասանյաններին ընդդիմադիր այլ խմբակցություն ևս, որը և հաղթող հանդիսացավ և չէր կամենում հանձնել Անին Գեորգիին» (Մարգարյան, 1980, 102): Մինչդեռ այլ ուսումնասիրողներ գտնում են, որ հենց Բարսեղն ու իր եղբայրներն են իրենց մտադրությունը փոխել (Նույն տեղում, ծան. 60, Մանանդյան, 1977, 126): Մենք համամիտ ենք այս երկրորդ տեսակետին, քանի որ այն բխում է Գոշի բնագրից: Գեորգին ընդդիմացողներին պատժելիս աշխարհականների հետ անարգանքի է ենթարկել նաև հոգևորականների՝ «զքահանայս եւ զկրօնաւորս», որոնք, բնականաբար, չէին կարող հանդես գալ որպես ընդդիմություն՝ քաղաքի եպիսկոպոսի նկատմամբ (այդ դեպքում նրանք անմիջապես կարգալույծ կարվեին): Հետևաբար Վրաց թագավորին դիմակայելով՝ նրանք կատարել են հենց իրենց հոգևոր պետի և քաղաքի ողջ բնակչության միասնական կամքը: Անիի բնակչության կարծեցյալ երկփեղկվածության մասին ոչ մի ակնարկ չունի նաև նույն դեպքը նկարագրող Գրիգոր երեցը, ըստ որի՝ Գեորգին գրավեց «զքաղաքն բռնութեամբ եւ սպան մարդ հազար ընդ քրիստոնեայ եւ ընդ այլազգի» (Ուռհայեցի, 1869, 474):

**30.** Ժամանակին Բ. Առաքելյանը և Ս. Ավագյանը հիմնավորապես ապացուցել են, որ Ն. Մառն ու նրան հետևելով Յ. Օրբելին սխալվել են Անիի մի շարք արձանագրություններում նշվող **«երեցանին»** նույնացնելով քաղաքի ավագանու հետ (Առաքելյան, 1964, 155-173, Ավագյան, 1970, 105-109): Այս իրողությանն ամտեղյակ է Թ. Հակոբյանը, որն իր «Անիի պատմության» մեջ երեցանին **ավագանի** է համարում (Հակոբյան, 1982, 118): Վերջինս քաղաքային ինքնավարության մարմին էր, որը գոյություն ուներ նաև Բագրատունյաց շրջանում «գլխաւորք քաղաքին» անվանումով, իսկ հետագայում ավելի մեծ դեր էր խաղում կազմված լինելով աշխարհիկ ու հոգևոր բարձրաստիճան, հեղինակավոր գործիչներից: Մինչդեռ երեցանին Անիի քահանայական դասն էր, որի գլուխ կանգնած էր եպիսկոպոսը:

**31.** Լ. Խաչիկյանը կարծում է, որ Ահարոն (Գրիգոր) վարդապետն «ամենայն հավանականությամբ» 1280թ. Երզնկայում ստեղծված «եղբայրության» (ամուրի երիտասարդների կազմակերպություն) ղեկավար Գրիգոր Սանահնեցին է (Խաչիկյան, 1995, 210): Դժվար է ասել, թե ինչի վրա է հիմնվում ենթադրության «հավանականությունը», մանավանդ, որ ինչպես նույն տեղում նշում է հեղինակը, 1280-ին Սանահնեցի Գրիգորը «ծերունի վարդապետ» էր, իսկ Գրիգոր **մականունով** Ահարոն վարդապետը «վախճանվել է 1316թ. օգոստոսի 18-ին» (Խաչիկյան, 1995, 210-211): Ինչևէ, երկու Գրիգորներին նույնացնելով Լ. Խաչիկյանը գտնում է, որ 1292-ին Անի գալով Երզնկացի վարդապետը հավանորեն հյուրընկալվել է այստեղ գտնվող համանման «եղբայրության» անդամների կողմից: Նա մասնավորապես գրում է. «Հակված ենք կարծելու, որ Երզնկայի 1292թ. աղետից փրկված Գրիգոր-Ահարոն վարդապետն Անիում հեշտությամբ գտնում էր թե՛ օթևան, թե՛ «խնամք ու գթութիւն», թե՛ գիրք ու մտերմություն, որովհետև Անի քաղաքում ևս կար Երզնկայի «եղբայրություն» կազմակերպության նման մի կազմակերպություն, որի անդամների պարտավորությունների մեջ ևս հյուրընկալությունն ու օտարականներին պատվելը առաջին տեղերից էր գրավում» (Խաչիկյան, 1995, 211): Կարծում ենք ընդունելի չէ Գրիգոր Սանահնեցու և Ահարոն-Գրիգոր Երզնկացի վարդապետների նույնացումը, նրանց տարիքի վերաբերյալ աղբյուրներում առկա տվյալների անհամապատասխանության պատճառով:

**32.** Համազասպ Անեցին առաջին անգամ որպես Հաղբատի առաջնորդ հիշվում է 1242թ. մի արձանագրության մեջ: 1245-ին նա կառուցել է Հաղբատի նշանավոր զանգակատունը, իսկ 1257-ին մի ընդարձակ ժամատուն, որը ճարտարապետության պատմաբանները հաճախ կոչում են «Համազասպի շենք»: 1261թ. Համազասպ Անեցին և վանքի փակակալ Գրիգորը Վարդան Արևելցուն պատվիրել ու ստացել են «Մեկնութիւն հնգամատենին» աշխատությունը: Վարդանն Անեցու պատվերով գրել է նաև մի քանի ներքող՝ նվիրված Աստվածածնին, Ս. Գրիգոր Լուսավորչին, Ս. Հովհաննես Օծնեցուն: Համազասպի եղբայր անեցի Գրիգորը մի շարք նվիրատվություններ է կատարել Հաղբատի վանքին, աջակցել առաջնորդ եղբորը (Ղաֆադարյան, 1963, 177-178, 226-227, 275-276):

**33.** Անիում Ախուրյանի ծորեգերքին գտնվող վանքը գրականության մեջ ամենուր անվանվում է «Կուսանաց» վանք, բայց ոչ մի բացատրություն չի տրվում այդ անվան ծագմանը, իսկ վանական համալիրում ու նրա զեղաշեն եկեղեցում ոչ մի արձանագրություն չի պահպանվել: Կիրակոս Գանձակեցին գրելով 1236թ. մոնղոլների կողմից

Անիի գրավման մասին և նշելով նրանց կատարած չարագործությունները՝ նաև գրում է. «...**կուսանք սուրբք, որք ուխտեալ էին Աստուծոյ սրբութեամբ պահել զմարմինս և անախտ զհոգիս,** պղծեալք և ապականեալք...» (Գանձակեցի, 1961, 259): Մի կողմից թվում է, թե սա ուղղակի վկայություն է Անիում կույսերի ու կուսանոցի գոյության մասին, սակայն մյուս կողմից, երբ պատմության հիշյալ հատվածն ընթերցում ենք ամբողջությամբ, առանց մեջբերված տողերը ենթատեքստից անջատելու, տեսնում ենք, որ պատմիչն այստեղ ավելի շուտ հռետորական, բարոյախրատական խոսք է ասում, քան թե փաստագրական:

Անիի Ս. Առաքելոց եկեղեցու մոտ պահպանված մի տապանաքարի արձանագրությունը հետևյալ բովանդակությունն ունի. «Այս հանգիստ Մամին, որ անուն էր սորայ Ազիզ տիկին, դուստր Աղվորշահին, **որ բազուլթույն աշխատութեամբ ծառաեց Սուրբ Առաքելոցս...**» (Դիվան, Ա, 30): Արդյո՞ք Մամ վերանվանված Ազիզ տիկինը, որ բազում աշխատությամբ ծառայել է այս եկեղեցուն, նրա սարկավագուհիներից մեկը չի եղել: Ընդհանրապես, եթե նկատի ունենանք, որ սարկավագուհիների գոյությունը միջնադարյան Հայաստանում ընդունված էր (այդ մասին են վկայում Մխիթար Գոշը, Սմբատ Սպարապետը, Ստեփանոս Օրբելյանն ու այլ հեղինակներ, կային նաև բազմաթիվ միանձնուհիներ, անգամ արքայական ընտանիքներից (Աբել, 1991, 21-25, Վարդան, 1861, 160), ապա բնավ անհավանական չպետք է համարենք նրանց գոյությունն Անիում: Այստեղ տեղին է հիշել, որ Անիի կանայք միջնադարյան իրականության պայմաններում բավական մեծ իրավունքներ ունեին: Ն. Մառը գրում է, թե Անիի կանայք տղամարդկանց հետ հավասար քաղաքացիական իրավունքներ էին վայելում (Մառ, 1934, 41): Հիշենք նաև 1224-26թթ. Անիի իրադարձությունների Այծյան (Այծենմիկ) անունով հերոսուհուն, որն ականատես պատմիչի վկայությամբ «առնացի ստացեալ սիրտ» ցած էր գլորում քաղաքի պարիսպները մագլցող թշնամիներին՝ «ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ» (Անեցի, 1893, 126-127):

Այնուամենայնիվ, առայժմ առկա փաստերի հիման վրա հնարավոր չէ ոչ հաստատապես պնդել, ոչ էլ մերժել, որ Անիում կուսանոց է եղել և կամ որ քաղաքի եկեղեցիներն ունեցել են սարկավագուհիներ:

**34.** Արուճն է դարում Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661-685) տիրապետության շրջանում Հայաստանի վարչական կենտրոնն էր: Բագրատունյաց շրջանում բնակավայրը սերտորեն կապված էր քաղաքամայր Անիի հետ, իսկ ԺԲ-ԺԳ դարերում գտնվում էր նրա տնտեսական ոլորտում: Անիի, Հռոմոսի, Մարմաշենի վիմագիր արձանագրություններում նշվում են տեղի եկեղեցիներին նվիրաբերված արուճյան 14 այգիներ՝ իրենց հատուկ անուններով: Արուճով էր անցնում Անին Դվինի ու երկրի արևելյան շրջանների հետ կապող գլխավոր քարավանային ուղին, որի շնորհիվ բնակավայրը մասնակցում էր տարանցիկ առևտրին: Այստեղ կար քարավանատուն, վաճառահանման շուկա, իսկ բնակչության մեջ կային նաև ազատներ (Վ. Մ., 1987, 16-35):

**35.** Անիի վիմագրերի ժողովածուի անվանացանկում Քահանան անձնանուն չի համարված, բայց հավանորեն արձանագրության հեղինակն այստեղ իր անունն է տալիս՝ գրելով. «Ով սրբասնեալ քահանայք, աղաչեն զձեզ... թողութիւն շնորհեցէք ինձ, սուտանուն մեղաւոր Քահանայիս...» (Դիվան, Ա, 70, 135): ԺԲ-ԺԳ դարերում շատ ավելի տարածված էր Սարկավագ անձնանունը, որը տրվել է ոչ միայն հոգևորականներին, այլև աշխարհականներին, ինչպիսին էր, օրինակ,



1261թ. Հաղբատում հիշատակվող «Սարկավագ վաճառականը» (Ղաֆադարյան, 1963, 166), իսկ ԺԳ դարի մի վիճակագիր պահպանել է «Քահանայապետ» անձնանունը (Կոստանյանց, 1913, 48):

**36.** Վիճագրերի նվիրատվական բնույթի տեղեկությունները որքան էլ բազմաթիվ են, սակայն ամբողջական չեն: Օրինակ՝ հռչակավոր Մայր տաճարին կատարված նվիրատվությունների ցանկն, ըստ վիճագրերի, սկսվում է 1213 թվականից, երբ Տիգրան Յոնենցը նվիրել է մի կուղպակ, 3 ձեռագիր մատյան, 2 արծաթյա սկիհ (Դիվան, Ա, 34): Մինչդեռ, բնական է, որ կառուցումից և Կատրամիղե թագուհու տված առաջին ընծաներից հետո («զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք»), Բագրատունյաց շրջանում եկեղեցին բազմաթիվ այլ նվիրատվություններ է ստացել:

Մայր տաճարին նվերներ են տվել նաև Ջուհալ Կարըցին (1235թ. Ավետարան, շուրջառ, վաճ՝ դաստառակ), Դավթի որդի Ռուբենը (1286թ. ձիթհանք), Մխիթարն ու իր կին Դիմեթը (1273թ.՝ պարտեզ, շուրջառ) և ուրիշներ (Դիվան, Ա, 34-40):

Անեցիները հիմնականում եկեղեցիներին նվիրաբերում էին տներ, կուղպակներ, այգիներ, եկեղեցական սպասք, ձեռագրեր, խաչեր, դրամ, ավելի ունևորները՝ գյուղեր, ջրաղացներ, ձիթհանքեր և այլն:

**37.** Հետաքրքիր է, որ հաջորդ Բագրատունիները ևս անտարբեր չեն եղել Ջվարթնոցի ճակատագրի նկատմամբ: Տաճարը կործանվել է Աբասի մահից հետո, 970-973 թթ. ժամանակահատվածում տեղի ունեցած հուժկու երկրաշարժի հետևանքով (Փիրուզյան, Մաթևոսյան, 1984, 189-194): Աշոտ Ողորմածի որդի Գագիկ Ա-ը (990-1020) եկեղեցին տեսել է մինչև նրա կործանումը և թագավոր դառնալուց հետո մայրաքաղաք Անիում վերակերտել է Ջվարթնոցը՝ կառուցելով Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին:

**38.** Եկեղեցու մուտքից վեր եղած, անցյալ դարի կեսերին անհետացած ճակատակալ քարի վրա եղել է զույգ հեծյալների պատկերով մի քանդակ (հեծյալներից մեկը նիզակահարում է վիշապին, մյուսը ևս նիզակավոր է): Այս քանդակի շուրջն էլ հյուսվել են եկեղեցու ենթադրյալ անունները: Ղ. Ալիշանը գրում է. «Ըստ ոճանց՝ յաւանդութենէ կոչին Սուրբ Գեորգ եւ Ս. Սարգիս» (Ալիշան, 1881, 58): Ն. Մառը եկեղեցին կոչում է Ս. Սարգիս (Մառ, 1934, 53), Պ. Կունեոն և Ժ-Մ. Թիերին կոչում են «Ս. Թորոս և Սարգիս», հայերեն թարգմանության մեջ՝ «Ս. Թադեոսի և Սարգսի» եկեղեցի (Անի, 1984, 6, 85, 99):

Թեև քանդակը որոշակի կռվան է, բայց այժմ դժվար է ստույգ ասել, թե այն երբ է հայտնվել եկեղեցու վրա: Դատելով նրա պահպանված գծապատկերից (Ալիշան, 1881, 57, Մառ, 1934, նկ. 40)՝ քանդակն ուշ շրջանի արվեստի դրոշմ ունի: Մեր կարծիքով «Պալատական» եկեղեցու անունը չի կարելի բացառապես այս քանդակի հետ կապել:

**39.** Արձանագրությունը թերի վերծանած Կ. Բասմաջյանն այստեղ կարդացել է Եղիա բառը («...էղըիս ...» (Բասմաջյան, 1931, 112, թիվ 109), որի պատճառով որոշ ուսումնասիրողներ եկեղեցին սխալմամբ կոչել են Ս. Եղիա (Անի, 1984, 86, Ուլուհոջյան, 1992, 412):

**40.** Անիի Մայր տաճարի շինարարության ավարտի թվականի շուրջ կան տարբեր կարծիքներ: Սամուել Անեցու մի վկայությունից երևում է, որ Կատրամիղեի ժամանակ կառուցվել է միայն եկեղեցու ծածկը կամ գմբեթը (Անեցի, 1893, 104-105): Եկեղեցու կառուցման ավարտի թվականի կապակցությամբ բազմաթիվ ուսումնասիրողներ (Ն. Մառ, Ն. Ակինյան, Ա. Աբրահամյան, Ա. Մանուչարյան, Ս. Ավագյան) անդրադարձել են նրա

շինարարական արձանագրությանը (այս մասին տես Ավագյան, 1986, 16-26): Յետաքրքրական է, որ արձանագրության սկզբում թվականը նշված է տոմարական երեք հաշվարկով՝ ՆԾ թուին Յայոց 1 1001, ՄԺԹ թուին հոռոմոց 1 1001, ՅՂ ամին (հագարացո՞յ, գե՞բր) 1 1000 (Ավագյան, 1986, 21, 24): Իսկ արձանագրության վերջում տոմարական երեք այլ հաշվարկով նշվում է 1010 թվականը, որից Ս. Ավագյանը եզրակացնում է, թե «Կատրանիդե թագուհին Սմբատ Տիեզերակալի հիմնադրած տաճարի շինարարական աշխատանքները վերսկսել է 1001թ. և ավարտել տասը տարի անց՝ 1010թ.» (Ավագյան, 1986, 25):

Սակայն կա մի հանգամանք, որը մենք չենք ուզում մոռացության տալ: Վերը նշված ուսումնասիրողներն արձանագրության և եկեղեցու կառուցման թվականի հարցում տարբեր եզրակացությունների գալով՝ գրեթե բոլորն էլ ընդունում են, որ արձանագրության սկզբում նշված է երեք թվական ըստ հայկական, բյուզանդական և մահմեդական տարեթվերի, սակայն անտեսում են Ն. Մառի դիտողությունը, որն արձանագրությունը համարում է ԺԲ-ԺԳ դարերի ընդօրինակություն (Մառ, 1934, 121): Մեր կարծիքով Մառի տեսակետն արժանի է ավելի լուրջ վերաբերմունքի: Խոսելով Մայր տաճարի ԺԲ դարի վերջերին կամ ԺԳ դարի սկզբներին հիմնավորապես նորոգված լինելու մասին՝ նա մասնավորապես ավելացնում է. «Տաճարը 1000թ. կառուցվելու մասին հարավային պատին փորագրված արձանագրությունը, դատելով նրա հնագրական առանձնահատկություններից, 12-13-րդ դարերի պատճեն է. բացի դրանից, նրանում վկայված է վրացական տարեթիվ, որը դժվար համատեղելի է թագավորների ժամանակաշրջանի Անիի համար» (Մառ, 1934, 121):

Առարկելով հեղինակին Ս. Ավագյանը գրում է, որ Մառը չի վկայակոչում իր համար հինք հանդիսացած հնագրական առանձնահատկությունները, և որ «ամհիմն է **հոռոմոց** տարեթիվն անվերապահորեն վրացական համարելը» (Ավագյան, 1986, 20): Իսկ ինչո՞վ բացատրել արձանագրության մեջ նաև մահմեդական հիջրայի թվականի նշումը (որի մասին Մառը չգիտեր, քանի որ այն գրված է փակագրով): Մեր կարծիքով Ն. Մառն իր տեսակետի հաստատման համար այնքան ծանրակշիռ է համարել **հոռոմոց** թվականի գոյության փաստը (որը կարելի է նաև վրացական կոչել, քանի որ խոսքն ըստ էության **քաղկեդոնականների** օգտագործած տոմարի մասին է), որ այլ փաստարկներ չի վկայակոչել: Կարծում ենք, հարցը քննելիս հարկ է նկատի ունենալ նաև բուն եկեղեցու պատմությունը:

Յայտնի է, որ 1064-1124թթ. սելջուկները եկեղեցին մզկիթի էին վերածել: Պարզ է, որ այդ անելով նրանք չէին բավարարվելու եկեղեցու խաչը ներքև գլորելով, այլ պետք է ուրիշ փոփոխություններ էլ կատարեին: Դժվար թե մզկիթի վերածված եկեղեցու նոր տները նրա պատին հանդուրժեին քրիստոնյա թագուհու ու Յայոց կաթողիկոսի անունով, **կառույցի եկեղեցի լինելը մատնանշող** մեծադիր արձանագրության գոյությունը: Կարծում ենք, որ Մայր տաճարի բուն շինարարական արձանագրությունը մասամբ կամ ամբողջովին, ոչնչացվել է հենց այդ ժամանակ, իսկ ավելի ուշ, երբ եկեղեցին կրկին անցել է քրիստոնյաներին, հիմնովին նորոգվել (հավանաբար Ջաքարյանների ժամանակ), նրա պատին շարադրվել է հին արձանագրության բովանդակությունը: Թերևս նաև այս է պատճառը, որ վիմագրի գրիչն այն կոչում է «**յիշատակարան**» (վիմագրերում հազվադեպ հանդիպող բառ), իսկ իր անունն էլ գրում այնպիսի ձևակերպմամբ, որն անհարիր է ԺԱ դարի ոճին՝ «**Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ՝ Բենէ**» (Դիվան, Ա, 35): Դժվար թե

այսպիսի տողով ավարտվելը թագավորական և կաթողիկոսական արձանագրությունը, մինչդեռ ընդօրինակության կամ վերապատմունի դեպքում միանգամայն հասկանալի են դառնում ինչպես շարադրվածի բնութագրումը որպես հիշատակարան (յպատմություն) (Ե-ԺԲ, գ-է), այնպես էլ Բենե գրչի ինքնավստահ ոճը:

Ուշագրավ է նաև այն, որ Կատրամիդե թագուհու ժամանակակիցը՝ պատմիչ Ասողիկը, և Կաթողիկեի ավագերեց Սամուել Անեցիին թագուհու անունը գիտեին **Կատրամիդե** (Ասողիկ, 1885, 256, Անեցի, 1893, 105), մինչդեռ Մայր տաճարի արձանագրությունն ունի **Կատրամիդե** հնչյունափոխված ձևը: Տարակուսանք է առաջացնում նաև արձանագրության մեջ տաճարին տրված բնութագրի «...**ՃՆՈՒՆՂ ԽՈՅԵՆՈՐ ԵՆ ԱՐԺԱՆ ՄՆՆՈՋԵՆԱՆՈՐ**» հատվածում եղած տառախալը և «արձան մշտնջենաւոր» ձևակերպումը, որը չի հանդիպում Ժ-ԺԱ դդ. արձանագրություններում, սակայն օգտագործվում է ԺԳ դարի սկզբներին Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ի և Իվանե Զաքարյանի Յաղարծիմում թողած արձանագրություններում: Գրության ուշ շրջան (ԺԳ դար) են մատնանշում նաև հնագրական տվյալները, հատկապես Շ, Չ, Ծ տառերի գրության կերպը:

Ինչ վերաբերում է շինարարական արձանագրության սկզբում տարեթիվը երեք տոմարական հաշվով ներկայացնելու հարցին, ապա մեր կարծիքով, արձանագրության պատճենը կամ վերաշարադրանքը կազմողներն այդ արել են Մայր տաճարի համաքաղաքային առաջատար դերը շեշտելու համար՝ թվականը գրելով **ԱՆԻԻ ԵՐԵՅ ԻԽՄԱՆԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՏՐԱՄԻԴԵ** համար ընդունելի տոմարական հաշվով (այս մասին տես սույն գրքի «Անիի կրոնական փոքրամասնությունները» բաժնում):

Տաճարի շինարարության ավարտի թվականի հարցը մնում է վիճելի հիմնականում արձանագրության վերջում եղած 1010 թվականի գոյության պատճառով: Սակայն չպետք է մոռանալ, որ իր «պատմության» շարադրանքը 1004թ. ավարտած Ասողիկը տաճարը նկարագրում է որպես ավարտուն կառույց՝ «բարձրաբերձ կամարօք գմբեթաւորեալ» և եկեղեցական հարուստ սպասքով զարդարված (Ասողիկ, 1885, 256):

**41.** Այս կառույցի առնչությամբ Թ. Թորամանյանը գրում է. «Յ. Օրբելին Անիի Կաթողիկեին հարավ-արևելյան կողմը փլած ութանկյուն մատուռը հատկապես մկրտարան անվաներ է. արդյոք ինչի՞ հիման վրա ենթադրեր է հեղինակը, լավ կլիներ, որ բացատրեր... հաստատուն փաստ է հարկավոր այդ փլատակը մկրտարան համարելու: Վարդան Բարձրաբերդցին Անիի կաթողիկեին մոտ կիիշատակե Ս. Յոհնիսիմեի մը վկայարանին շինությունը Սարգիս կաթողիկոսի օրով... կարող է պատահել, որ այդ վկայարանը եղած լինի Յ. Օրբելիի մկրտարան կարծածը» (Թորամանյան, 1942, 153):

**42.** Բուն եկեղեցին խաչաձև գմբեթավոր կառույց է, որն ըստ վերակազմության, սկզբնապես ունեցել է նաև չորս փոքր գմբեթներ: Եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցը գավիթներ է ունեցել ինչպես արևմուտքից, այնպես էլ հարավից ու հյուսիսից: Վերջինս, համաձայն Ն. Մառի, հնագույնն է՝ կառուցված ԺԱ դարի առաջին կեսից ոչ ուշ, իսկ հարավայինը համարվում է ամենից ուշ կառուցվածը (ԺԳ դար, համեմատաբար լավ է պահպանվել): Յյուսիսային գավիթն ունեցել է պատարագի խորան (Մառ, 1934, 74), որը նման կառույցի համար բացառիկ երևույթ է: Արևմտյան գավիթում եղել է Բարսեղ Բ Անեցու կանգնեցրած խաչքարը:

**43.** Գ. Ուլուհոջյանը Անիի Ս. Սարգիս (Սիթի Պահլավունու) և Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցիները նույնացնում է, մինչդեռ դրանք քաղաքի տարբեր մասերում գտնվող միանգամայն տարբեր կառույցներ են (Ուլուհոջյան, 1991, 412):

**44.** Ն. Մառը և Յ. Օրբելին «Շախմատային» եկեղեցին նշում են 50 համարի տակ, բայց Մառի գրքում գետեղված քաղաքի հատակագծում (որն ավելի շատ է հայտնի գիտական շրջաններին) 50 համարի նշումը չկա: Այս պատահական վրիպման պատճառով Թ. Հակոբյանն իր կազմած հատակագծում եկեղեցու տեղը սխալ է նշել, իսկ Գ. Ուլուհոջյանն այդ հատակագիծը (ի թիվս այլ հատակագծերի) կցել է իր հոդվածին (Ուլուհոջյան, 1991, 417): Բարեբախտաբար Յ. Օրբելու ուղեցույցի վերջում եղած հատակագծում կա 50 թվահամարը, որը գտնվում է իր տրամաբանական տեղում՝ 49 և 51 համարներով նշված կառույցների միջև:

**45.** Թ. Թորամանյանը գրելով Ախուրյանի՝ քաղաղաքի հանդիպակաց ափին եղած հնությունների մասին, նշում է. «Կամուրջին անմիջապես արևելյան կողմը անկեց 50, 60 քայլ հեռավորության վրա գետափին, բարձրավանդակ հարմար տեղի մը վրա կառուցված է եղեր փոքր մատուռ և քահանայից բնակարան, որոնց հետքերը կը նշնարվին: 1908 թ. հայր Միքայել երևան համեց այս ավերակը և մեջը գտավ գերեզմանաքար, կարմիր քարե, օրորոցած և քանդակված, արձանագրված...» (Թորամանյան, 1948, 183):

**46.** Այս մատուռի մասին Թորամանյանը գրում է. «Կուսանաց վանքեն դեպի արևելք, ուղիղ գետափին շինված ... փոքրիկ շինություններն ... երկրորդը... փոքրիկ մատուռ է, որուն արևելյան կողմի անկյան քարին վրա գրված է (Ես Յովանես ծառայ [Աստուծոյ] ... ներքևը կա՝ ԶԾԳ, դիմացը գրած ԶՅԷ )» (Թորամանյան, 1948, 185):

**47.** Ն. Մառի համեմարարությամբ Անիի հարակից ծորերի քարայրներն ուսումնասիրել է Դ. Ղիփշիձեն 1915 թ.: 1916-ին այս գործը ցավոք ընդհատվել է, բայց արշավախմբի մասնակիցներից Ն. Տոկարսկին, այնուամենայնիվ, որոշ աշխատանքներ կատարել է: Վաղամեռիկ Դ. Ղիփշիձեի և իր ուսումնասիրությունների համադրումով Ն. Տոկարսկին 1972 թ. հրատարակել է «Անիի քարայրները» (ռուսերեն) գիրքը (Դ. Ղիփշիձեի հեղինակությամբ և իր խմբագրությամբ ու ծանոթագրություններով): Գրքում առկա հանգամանակից ցուցակում նշված են բոլոր տեսակի այրերը, այդ թվում՝ ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները: Ղիփշիձեն համարակալումը կատարել է համառոտագրված՝ ըստ ծորերի (C-Ծաղկոցածոր, G-Գայլիծոր, I-Իգածոր, X-Ախուրյան), դրանց ափերի (I.b-ձախ ափ, p.b-աջ ափ) և ըստ լատինատառ նշված տեղամասերի, որին հետևում է հուշարձանի թվային համարը: Օրինակ՝ C.I. b. A./19, որը նշանակում է՝ Ծաղկոցածոր, ձախ ափ, Ա տեղամաս, համար 19 քարայր: Ամեն մի եկեղեցու պարագայում մենք նույնությամբ վկայաբերում ենք Ղիփշիձեի համարակալումը:

Հարկ է սակայն նշել, որ որոշ դեպքերում դժվար է անսխալ կերպով որոշել եկեղեցու ճշգրիտ տեղը, քանի որ Ղիփշիձեի ու Տոկարսկու քարտեզում արձանագրված են միայն բավական մեծ տարածք ընդգրկող տեղամասերը, բայց ոչ այրերի համարները: Այստեղ որոշ չափով օգնության են գալիս հուշարձանների նկարագրության մեջ առկա այրերի դիրքը մատնանշող օժանդակ տվյալները (որոնք մշտապես հաշվի ենք առել), բայց այնուհանդերձ, ժայռափոր եկեղեցիների տեղանշումներում անխուսափելիորեն կարող են լինել փոքր շեղումներ:

Անիի ժայռափոր եկեղեցիների ու մատուռների վերաբերյալ անհամեմատ ավելի քիչ բան է հայտնի քան վերգետնյա կառույցների մասին, ուստի մեր ցուցակում աշխատել ենք հնարավորին չափ շատ տեղեկություններ ներմուծել (այդ թվում՝ նշելով չափերը, եթե դրանք հայտնի են):

**48.** Գրավոր սկզբնաղբյուրներում հիշատակված եկեղեցիներից մի քանիսը հնարավոր է, որ նշված են նաև քարտեզում, բայց անհնար է այդ ճշտել: Օրինակ՝ մի Ավետարանի հիշատակարանում ասվում է, թե այն գրվել է Անիի Ս. Գևորգ եկեղեցում: Անիում այդ անունով եկեղեցի հայտնի չէ, բայց Յ. Օրբելին քաղաքի հատակագծում նշում է տասնյակ եկեղեցիների ավերակներ, որոնց անունները չզիտենք: Շատ հնարավոր է, որ դրանցից մեկը հենց Ս. Գևորգն է: Սակայն չի բացառվում նաև, որ Ս. Գևորգի ավերակները դեռևս չեն հայտնաբերված: Նույնպիսին է վիճակը նաև Փոքր Կաթողիկեի և մի քանի այլ եկեղեցիների դեպքում:

Կան երկու եկեղեցիներ, որոնք հայտնի են միայն գրավոր աղբյուրներից, բայց որոնք նշել ենք քարտեզում՝ ելնելով տեղի որոշակիությունից: Մեկը Ս. Աստվածածին մատուռն է, որի տեղում 1215 թ. եկեղեցի է կառուցել Տիգրան Յոնենցը՝ այդ մասին հայտնելով արձանագրության մեջ: Փոքր-ինչ այլ է Բեխենց վանքի պարագան, որի տեղը Ա. Մաթևոսյանը որոշել է ըստ Թ. Թորամանյանի մոտ պահպանված նկարագրությունների (Մաթևոսյան, 1984, 125): Մենք հիմք ընդունելով այդ տեղորոշումը՝ քարտեզում համապատասխան նշում ենք կատարել և կրկնությունից խուսափելու համար Բեխենց վանքը չենք հիշատակում ցուցակի «գրավոր աղբյուրների» եկեղեցիների բաժնում:

**49.** Ըստ կտակագրի, որի ստուգությունը ստուգելի է Յոնիսիմես արքայադուստրը, որը հիվանդ էր, զալիս է Մաղարդավանք՝ սրբություններից բժշկություն գտնելու համար: Մեկ ամիս այստեղ մնալուց հետո փորձում է վերադառնալ («...ելի դառնալ ի յաւանսն մեր ի քաղաքն Անի»), բայց չի կարողանում («հասեալք ի գեւղն Աստապատ անկայ ի մահիճս հիւանդութեան»): Մահից առաջ գրում է հիշյալ կտակը, որով Աստապատ գյուղը, որպես «յիշատակ հողւոյ», նվիրում է Ս. Նախավկայի վանքին, միաժամանակ նամակով դիմում է հորը՝ խնդրելով այդ նվիրատվության փաստն արձանագրել «ի վերայ վիմի միոջ... **զանգակատան վանից մերոց Սրբոյց Յովհաննէսին...**»:

Ցավոք, եթե անգամ եղել է ման կտակ, այն հետագայում անհարկի միջամտությունների է ենթարկվել: Գիշտ չէ կտակագրի թվականը՝ 981, քանի որ Աշոտը մահացել է 977-ին: Սակայն չորս անգամ գրված թվականը մի դեպքում հետևյալն է՝ «ի թուին Փրկչին ԹԾ եւ Յէ (977)»: Անիում Ս. Յովհաննես անունով երկու եկեղեցի է հայտնի, մեկը Ներքին բերդում (9), մյուսը՝ միջնաբերդում (4): Եղել են նաև ուրիշները (տես ներկա ցուցակը՝ է): Խոսքը կարող էր վերաբերվել նաև Յոռոմոսի Ս. Յովհաննէսին (մանավանդ, որ այն իրոք **Վանք** է), բայց Յոռոմոսի այս անունը կրող եկեղեցին կառուցվել է շատ ավելի ուշ, Աշոտի թոռան կողմից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ուշ շրջանի մի սկզբնաղբյուրում Ակնագյուղեցի Գրիգոր արքեպիսկոպոստոս 1782թ. Յոռոմոսում գրած հիշատակարանում, Աշոտը համարվում է Յոռոմոսի հիմնադիր. «**Վանքն Յոռոմոսի, որ եւ ի թագաւորն Աշոտայ կերտեալ, եւ անուն Սրբոյ Կարապետին է կառուցեալ...**» (Պողարյան, 1974, 55):

**50.** Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին չպետք է շփոթել Աբլղարիք մարզպանի 1040թ. կառուցած երկու մատուռներից (Ս. Ստեփանոս, Ս. Քրիստափոր) մեկի հետ, ինչպես այդ արված է վիճագրերի ժողովածուում (Դիվան, Ա, 137): Աբլղարիքը տոհմական եկեղեցուն կից կառուցել էր հանգստարան (դամբարան)

իր ծնողների, եղբոր ու քրոջ համար (Դիվան, Ա, 33), մինչդեռ Ս. Ստեփանոս եկեղեցին առանձին համայնք ունեցող խոշոր հաստատություն էր: Նրա վերաբերյալ առաջին վկայությունը պահպանվել է Մարմաշենի 1225թ. արձանագրության մեջ: Այստեղ Անիի Գրիգոր Ա եպիսկոպոսն ու նրա եղբայր Ղարիբը, գրելով Մարմաշենի նորոգման ու իրենց կատարած բազում նվիրատվությունների մասին նշում են, որ վանքին են տվել նաև Ս. Ստեփանոսը համայնքով հանդերձ «Եւ ի քաղաքիս զմեր պապէնի հայրենիք եկեղեցին զՍուրբ Ստեփանոս բոլոր ամենայն ժողովրդեամբն...» (Ալիշան, 1881, 150): 1239-ին այս նվիրատվությունն Անիի Ս. Առաքելոցի պատին գրված արձանագրությամբ վավերացնում է Անիի նոր եպիսկոպոս Բարսեղ Գ-ը՝ «Հաստատեցաք ի մեր սեփական ժառանգութենէս զՍուրբ Ստեփանոս՝ հայրենիք Սուրբ ուխտին Մարմաշինոյ վանիցն... Արդ եթէ որ ի մեծամեծաց կամ փոքունց զՍուրբ Ստեփանոս կամ յիւր ժողովրդոցն ի Սուրբ ուխտն՝ ի Մարմաշինոյ շորթել ջանա՝ ՅժԸ-իցն նգովեալ եղիցին...» (Դիվան, Ա, 17):

Սակայն շուտով իրավիճակը փոխվել է, և 1288թ. Շապաղինը վճարելով 700 սպիտակ (արծաթ) Ս. Ստեփանոս եկեղեցին վերադարձրել է Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոցի անմիջական ենթակայությանը՝ «Ես Շապաղինս, որդի Յովանիսի **ետու ընծա առ Սուրբ Առաքեալքս՝ Սուրբ Ստեփանոս իւր ժողովրդովն, իւր կալերովն, զոր յառաջն շորթել էին...**» (Դիվան, Ա, 29): Այստեղից պարզվում է, որ մինչև Մարմաշենին հանձնվելը Ս. Ստեփանոսը գտնվել է Անիի Ս. Առաքելոցի ենթակայության ներքո: Հետաքրքրական է, որ եթե Բարսեղ Գ եպիսկոպոսը նգովքով է սպառնում բոլոր նրանց, ովքեր կփորձեն եկեղեցին «շորթել» Մարմաշենից, ապա Շապաղինը գրում է, որ ավելի վաղ Ս. Ստեփանոսը «շորթել» են Ս. Առաքելոցից, որով ասես հիմնավորում է իր արարքը: Ուշագրավ է, որ նշված բոլոր արձանագրություններում շեշտվում է Ս. Ստեփանոս եկեղեցու համայնքը (ժողովուրդը), որը, պետք է կարծել, բավական բազմամարդ է եղել, ուստի եկեղեցին էլ՝ եկամտաբեր: Վերջին դեպքում հիշատակվում են նաև եկեղեցապատկան կալերը: Այս փաստը ենթադրել է տալիս, որ եկեղեցու համայնքի անդամների մի մասը զբաղվել է գյուղատնտեսությամբ, իսկ բուն եկեղեցին էլ գտնվել է քաղաքի արվարձանում կամ պարսպամերձ մասում:

Անիի Ս. Ստեփանոսի տեղագրությունը ճշտելուն մեծապես օգնում է Հռոռնոսի մի անթվակիր արձանագրություն, ուր նշվում է այդ վանքի՝ Անիում ունեցած սեփականությունը: Թվարկումը սկսվում է Գեորգ ծեր երեցի հայրենի տներից, որոնք գտնվելիս են եղել քաղաքի Կարուց դռան (Կարսի դարպասի) մոտ՝ Ս. Ստեփանոս եկեղեցու դեմ հանդիման. «Հռոռնոսին վանացս հայրենիք, որ ի քաղաքին, այս են Գեորգ ծեր երեց վանացս ետ **հայրենի տներն՝ մաւտ ի Կարուց դռան, Սուրբ Ստեփանոս ընդդէմ...**» (Սարգիսյան, 1864, 155): Այսպիսով, հայտնի է դառնում, որ հիշյալ տներն Անիի Կարուց դռան մոտ էին և ընդդէմ Ս. Ստեփանոս եկեղեցու: Անիի հատակագծի վրա երևում է, որ Կարսի դարպասի մերձակա քաղաքամասում կան երկու եկեղեցիներ, մեկը՝ դռնից դեպի հարավ՝ մոտ 120մ հեռավորության վրա գտնվող Ս. Գրիգոր (հաչուտի) եկեղեցին է, իսկ մյուսը նրանից արևելք՝ Կարսի դռնից շուրջ 150մ հարավ-արևելք ընկած ավերակ, որը Հ. Օրբելին իր կազմած «Անի քաղաքի համառոտ ուղեցույցում» կոչում է «**մեծ տաճարի ավերակներ**»:

Մեր կարծիքով հենց սա է Անիի Ս. Ստեփանոս եկեղեցին, նախ որովհետև Կարսի դռան մոտերքում այլ եկեղեցու ավերակներ չկան, երկրորդ՝ Օրբելին եթե մյուս համանման կառույցները սովորաբար կոչում է «եկեղեցու ավերակներ», ապա այստեղ հարկ է համարել ընդգծել եկեղեցու մեծությունը՝ «մեծ տաճարի ավերակներ»: Վերը բերված արձանագրություններից արդեն տեսանք, որ Ս. Ստեփանոսը նշանավոր էր հատկապես իր մեծ համայնքով, իսկ մեծ համայնքին մեծ եկեղեցի էր պատշաճում: Հավանաբար պարսպամերձ եկեղեցուց ոչ հեռու, պարսպից դուրս գտնվում էին եկեղեցապատկան կալերը: Կառույցի ավերակների պեղումներն անկասկած նոր մանրամասներ կավելացնեն Անիի այս ուշագրավ եկեղեցու պատմությանը:

**51.** Մեր կազմած ցուցակը, բնականաբար, չի կարող ամբողջական լինել, քանի որ նախ Անիի պեղումներն անավարտ մնացին, երկրորդ՝ դեռևս հետազոտման շրջանում քաղաքի ոչ բոլոր հուշարձաններն են գրանցվել: Մասնավորապես, մատուռները մեծ մասամբ դուրս են մնացել Հ. Օրբելու ուղեցույցից: Օրինակ՝ մի առիթով Թ. Թորամանյանը գրում է, որ միայն նոր քաղաքի տարածքում կարելի է հարյուրից ավելի եկեղեցի ու մատուռ հաշվել («Առաքելոց եկեղեցիի արևմտյան կողմի ձորեզրեն սկսյալ մինչև Լուսավորչի (Տիգրան Հոնենցի՝ Կ. Ս.) եկեղեցի և Գլիծորի եզերքները... շքեղ արվեստագործությամբ կանգնված քանդակագարդ տաճարներու և ապարանքներու համախմբում մը կներկայացնե, **հարյուրե շատ ավելի կարելի է համրել այս տարածության վրա եկեղեցիներու և մատուռներու մնացորդներ...**») (Թորամանյան, 1948, 50): Մինչդեռ Օրբելու ուղեցույցին հետևելով՝ հիշյալ տարածքում այդ թիվը հազիվ երկու տասնյակ է կազմում:

Ամբողջովին չեն ուսումնասիրվել նաև Անիի ժայռափոր եկեղեցիներն ու մատուռները: Վերջին տարիներին Անիի մոտ, Ախուրյանի ձախ ափին մի քանի ժայռափոր մատուռներ է հայտնաբերել անձավագետ Արմեն Գևորգյանը:

**52.** Վերոհիշյալ կարծիքների մի մասի վերաբերյալ տե՛ս Թ. Հակոբյանի աշխատությունը (Հակոբյան, 1982, 226-230): Այստեղ, ցավոք, ճիշտ չի ներկայացված Ղ. Ալիշանի տեսակետը: Ըստ Թ. Հակոբյանի՝ Ալիշանը եկել է այն եզրակացության, որ «թիւդ 1001 արդարեւ առակօրէն ասացուած է ի նշանակ բազմութեան» (Ալիշան, 1881, 90): Մինչդեռ հենց Ալիշանն է այն հեղինակը, որը հանգամանորեն անդրադարձել է սույն խնդրին, պատճառաբանել եկեղեցիների բազմաքանակությունը (Անիի եկեղեցիների մեծ մասը չափերով մեծ չէին. եկեղեցիներ կային նաև ստորգետնյա քաղաքում, պարսպաբուրգերի մեջ, եկեղեցի էին համարվում պատարագի սեղան ունեցող խորանները և այլն), ապա եզրակացրել՝ «Արդ, զայս ամենայն եւ որ այլ սոցին նմին փաստս զմտաւ ածեալ, թէ ոչ աներկբայ զառակ 1001 եկեղեցեացն, այլ եւ ոչ հեռի ի ճշմարտութենէ» (Ալիշան, 1881, 91):

**53.** Հակոբյան, 1934, 23: Ըստ Ղ. Ալիշանի՝ Ռուբրուքը նշում է 100 եկեղեցի: Հ. Հակոբյանն ու Ղ. Ալիշանն օգտվել են Ռուբրուքի երկի տարբեր հրատարակություններից: Առաջինն օգտագործել է լատիներեն բնագիրը և անգլերեն թարգմանությունը (ուստի մեզ ավելի արժանահավատ է թվում), երկրորդը՝ ֆրանսերեն թարգմանությունը (Ալիշան, 1881, 90):

**54.** Ուլուխոջյանն այս վկայությունը սխալմամբ վերագրում է Մխիթար Անեցուն (Ուլուխոջյան, 1991, 393), մինչդեռ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» բնագիրն Անեցու երկի հետ հրատարակվել է որպես հավելված՝ Հ. Մարգարյանի

պատշաճ մեկնաբանությամբ: Ըստ Գ. Տեր-Վարդանյանի ենթադրության՝ բանաքաղություն հանդիսացող այս երկը կազմել է Մինաս Յամթեցին (1630-1704) 1698 թ. Կոստանդնուպոլսում (Վարդանյան, 1985, 221-225):

*Կայքի լրացում՝ Կ.Մ. - Երեմիա Չելեպիի 1691 թվականի քարտեզում նշված է. «Անի քաղաք, **ասեն Ռ (1000) եւ մի եկեղեցի** Յայոց շինեալ» (Ուլուհոջյան, 2000, 83, 85):*

**55.** Հետաքրքրական է Աբրահամ Կրետացու այն վկայությունը, որ անեցիները եկեղեցիներին ձիթհանք ու այգի էին նվիրում: Միջնադարյան հեղինակներից ոչ մեկը նման հիշատակություն չունի, որից նա օգտված լիներ: Այդ շրջանում չէին ուսումնասիրվել նաև Անիի վիմագրերը (ուր կան այդօրինակ նվիրատվությունների մասին տեղեկություններ): Մնում է ենթադրել, որ այդ տեղեկությունը, որպես Անիի կյանքի իրական փաստ, պահպանվել է անեցիների սերունդների մոտ՝ նրանց ավանդազույցների մասնիկ կազմելով:

**56.** Իբն ալ Ասիրը բավական հանգամանորեն է գրում Անիի 1064 թ. դեպքերի մասին, ուստի հիմնավոր աղբյուրներ ուներ: Միևնույն ժամանակ, ինչպես վկայում են նաև նրա աշխատության մյուս հատվածները, հեղինակին խորթ չէր «կրոնական մոլեռանդությունը» (Իբն ալ Ասիր, 1981, 21-22), որը որոշակի ներգործություն էր ունենում նրա հայտնած տեղեկությունների վրա: Կարծում ենք, որ Անիի եկեղեցիների թվի հարցում այն ևս դեր է խաղացել: Հնարավոր է, որ Իբն ալ Ասիրի սկզբնաղբյուրն Անին «չեն ու բազմամարդ» քաղաք ներկայացնելու հետ մեկտեղ արձանագրել է եկեղեցիների 1000 կամ 1001 հիշարժան թիվը, բայց հեղինակը կրոնական նկատառումներից, թե պարզապես թերահավատությունից դրոժված՝ իր երկում նշել է այդ թվի կեսը, բայց, այնուամենայնիվ, վարանել է (միգուցե մտածելով, որ փոխում է հայտնի փաստը) և գրել, որ Անիում «**հինգ հարյուրից ավելի** եկեղեցի կար»:

**57.** Դիվան, Ա, 43: Վիմագրերի ժողովածուում արձանագրության թվականը սխալմամբ նշված է ՆՂԹ (1050), բայց իրականում գրված է «Ի: ՆՂ (1041) թ[ուիմ] ի թագաւորութեանն Սմբատա, որդո Գագկա Շահանշահի...»:

**58.** Հովհաննավանքի Կաթողիկեի 1216թ. արձանագրության մեջ Եղբայրիկի որդի Վահրամը և նրա կին Թաիկը նշում են, որ եկեղեցու կառուցման համար նվիրատվություններ են կատարել, տվել նաև «գրպրեվանաց այգին» (արդյո՞ք շիրակացիներ չեն) և փոխարենը ստացել պատարագ «Գ(3) աւր զնոր եկեղեցիս...», իսկ արձանագրության վերջում, ուր անեծքի բանաձևն է, նշում են «որք խափանեն **զԹ(9) եկեղեցիս**՝ դատին յԱստուծոյ» (Ղաֆադարյան, 1948, 84-85): Նույն եկեղեցուն նվիրատվություն կատարծ Առաքել երեցը մեկ այլ արձանագրության մեջ գրում է. «...սպասաւորք սորա մատուցին ինձ զաւր յիշատակի սրբոց քառասնիցն յամենայն ամի պատարագել **զՄոր զհնո եկեղեցիքս** յանուն ինձ» (Ղաֆադարյան, 1948, 87): Թե ինչ ինչ եկեղեցիների մասին է խոսքը, պարզվում է Կոստանդին կաթողիկոսի 1243թ. արձանագրությունից, ուր նա խոսելով Հովհաննավանքին կատարված մեծածավալ հատկացումների մասին վանահայր Մկրտիչ եպիսկոպոսից ու մյուս միաբաններից ակնկալում է «...կատարել գլխատակ... Բ(2) քառասունք... Սուրբ Կաթողիկէն **Թ(9) խորանաւ**՝ յամենայն ամի պատարագել զՔրիստոս» (Ղաֆադարյան, 1948, 95): Այստեղից ակներև է դառնում, որ Հովհաննավանքի կաթողիկեն (նոր եկեղեցի) պատարագի մատուցման **ինը խորան** ուներ, որոնք էլ նախորդ նվիրատուներ Վահրամն ու Առաքելը պարզապես **ինը եկեղեցի** են կոչում:



Գանձասարի 1240թ. շինարարական արձանագրության մեջ Հասան-Ջալալ Դուլան երկու անգամ շեշտում է, որ տարին բոլոր իրենն են լինելու «ավագ սեղանի» պատարագները (որոնց մի մասը հատկացնում է նաև իր պապին, կնոջը, եղբայրներից երկուսին ու քրոջը), իսկ մնացած «բոլոր եկեղեցիներում», որոնք անկասկած եկեղեցու չորս անկյունների երկհարկ խորաններն են (որովհետև նա այդտեղ այլ եկեղեցի չի կառուցել), պատարագ են մատուցելու իր հոր, մոր և Ջաքարե եղբոր համար. «...գրեցաք ժամ **զաւագ սեղանն բոլոր տարին մեզ, եւ զայլ ամէն եկեղեցիք**` ... իմ հաւրն... իմ մաւրն... իմ եղբաւրն Ջաքարէի, աւագ սեղանն, որ իմ է` յԱստուածածնէն մինչ ի Խաչն` իմ պապին... ի Խաչէն մինչ յիսնակամուտն ինձ` Հասանայ...» (Դիվան, Ե, 39-40):

Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցուն 1221թ. նվիրատվություններ կատարած Լիպարիտ Օրբելյանն արձանագրության մեջ նշում է, որ վանահայրն ու միաբաններն իր համար սահմանել են «...զԱւագ խորանն Գ(3) աւր ժամ», իսկ իր կնոջ համար` «Տեառնընդառաջ աւրն` **զամէն եկեղեցիքս**»: Այդ «եկեղեցիներն» Ավագ խորանի աջ ու ձախ կողմերում եղած ավանդատուն-խորաններն են, որոնց մուտքերի ճակատին եղած արձանագրությունները վկայում են, որ այդտեղ պատարագ է մատուցվել (Դիվան, Գ, 211-213):

59. Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու մի անթվակիր արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Արքա ետու զիմ **ոգո բաժին** Ժ(10) դահեկան ի Սուրբ Աստուածածինս ի Սարգիս երեց, որ զԱրքո Խաչի պատարագն...»: Նույն եկեղեցու մեկ այլ արձանագրություն տեղեկացնում է. «Ես Վարդս ... **վասն փրկութեան հոգո իմո** եւ զուզակից իմ ճոխին... տվաք զմեր **հոգո պատաստո** ի յերկրորդ շէնս Աստուածածնիս. դաւկատ Խ (40) եւ պարտին սպասաւորք սորա ամի Զ (6) աւր ժամ առնեն ...» (Դիվան, Ա, 50): Անիի մեկ այլ եկեղեցուն պահպանված արձանագրությունը վկայում է. «Գրեցաւ յիշատակարանս Ապուխանմ իշխանի, որ տուեալ է **զհոգո թոշակ** ի սուրբ եկեղեցիս եւ պարտիս իդեալ շաբաթնաւոր պատարագս ...» (Դիվան, Ա, 34, 32):

60. 1915 թ. սկսված Անիի ժայռափոր տարածքների ուսումնասիրությունը 1916-ին ընդհատվել է Գ. Չուբինաշվիլու (Չուբինով) ցուցումով, որը ժամանակավորապես փոխարինում էր գիտարշավի մեկնած Ն. Մառին: Այս մասին ցավով է գրում դեպքերի մասնակից Ն. Տոկարսկին (Դիփշիձե, 1972, 170):

61. Գանձակեցին, նշելով Իվանե աթաբեկի մահվան մասին, գրում է. «Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Ջաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցոյն, զոր շինեաց ինքն, **առեալ ի Հայոց վրացի վանս հաստատեաց**», իսկ Ջաքարեի որդի Շահնշահի թաղման մասին գրում է. «Եւ տարեալ թաղեցին զնա ի Քոբայրն, **որ առ կինն նորա ի Հայոց**» (Գանձակեցի, 1961, 222, 393): Պղնձահանքը և Քոբայրը հայկական վանքեր են եղել, որոնք ԺԳ դարում քաղկեդոնականներին են անցել մի դեպքում Իվանեի, մյուս դեպքում Շահնշահ Ա-ի կնոջ միջոցով: Այդ վանքերում հաստատվել են հայ քաղկեդոնական վանականներ:

62. Վրաց կաթողիկոսի արձանագրությունը, Պ. Սուրադյանի թարգմանությամբ, հետևյալն է. «Աստվածային ձայնն ասում է. «Ձրի առէք` ձրի տուրք», այսինքն անմահն Աստված ձեզ ասում է. «Տվե՞լ եք ինձ ինչ որ բան հանուն այն շնորհի, որ ինձնից ստացաք: Մինչդեռ ծախում եք դուք մեծն շնորհը` ինձնից անծախ տրված: Եթե ես անվճար եմ տվել, ապա ոչ էլ ձեզ է պատշաճ աղոթքը

ծախել ժողովրդի վրա»: Արդ, հուսալիք իմ անեցի երեցներ, մի՛ եղեք գայթակղիչ աստվածային խոսքերի և ոչ էլ անցեք առաքելոց խրատից՝ զուրի ու անցողականի համար: Ամենևին անօրեն է և ձեր կողմից՝ պսակադրության համար հարյուր դրամ (դահեկան) առնել, այլ միայն (հիստ<sup>ո</sup>ւն) է պատշաճ և թե կարող է՝ հաց ուտեցնի: Այդպես էլ հանգուցյալի համար, որը հոգա..., առավել հոգածություն է պետք հոգու համար, այդքան էլ հարյուր տփիլուրիից (տփիլիսյան դրամից) թող տրվի և, թե կարող է՝ հաց ուտեցնի, ուրիշ (բաժին) առնել՝ ըստ կարողության: Ամենայն տուրք քահանաներին թող տրվի ձեզ (քահանաներից) անարգել: Այս քաղաքի բնակիչ վրացիներ, (եղեք) ինչպես առաջ էիք մեծապես պատիվ տալիս: Քահանաներից ձեզ պարտ է աղոթք և պատարագ, մի՛ դժկամացեք ըստ կարողության նրանց տալիքից: Ավելի ուրախությամբ տվեք՝ առանց հարկադրանքի, «քանզի գտուրս զուարթառատ սիրէ Աստուած»: Եվ սիրեցեք դուք (նրանց) որպես հոգևոր հայրերի և սիրվեք նրանցից՝ որպես հոգևոր որդիք: Հաղոթս ոչ դուք (հոգևորականները) պակասեք և ոչ դուք՝ (աշխարհականները) ամենայն ինչից առավել՝ միմյանց հանդեպ աստվածային սեր վաստակեք և սրանով հատուցեք ցանկալին աստվածային պատվիրաններին:

Սույնը ես՝ Ետիփան կաթողիկոսս, իմ ձեռքով եմ գրել, երբ Ամիուն եկեղեցիներ էի օժուճ. տփիլուրի (տփիլիսյան) հարյուր դրամը թող մնա, (բայց) երեքից մեկ դանգ տրվի, իսկ կովի կաշին, որ մինչև այժմ (հոգևորականները) ամբողջությամբ էք վերցրել, արդ պատարագի համար, իսկ (աշխարհականները) մեկական կաշեծող-շերտ տվեք: Եվ մենք եկեղեցական կարգերն ինչո՞ւ փոխենք: Ով իմ այս կարգավորությունը փոխի՝ չի՞ փոխի նա հրամանն Աստծո և նրա սրբերի: Քրոնիկոնի 43(8)» (Մուրադյան, 1977, 42-43):

**63.** Արծանագրությունը սկսվում է հետևյալ կերպ. «Թվին 20Թ (1301) աթապագի ամիրսպասալար Շահանշահի. մծիկնաբարթուխուցես Մաթես եւ իմ կենայկիցս Թէնի եւ իմ եղբէր Մարկոս յայս ժամս որ պարոն ողորմեցաւ զվանքս մեզ էրետ...»: Այնուհետև նշվում է, որ Հոնենցի կառուցած վանք եկող ջրատարը խափանված է եղել և իրենք վերաշինել են (Դիվան, Ա, 64):

**64.** Մանուչէի՝ մոր կողմից հայկական ծագում ունենալու մասին հարցը ծանոթագրման կարիք ունի: Հայտնի տվյալները հետևյալն են. Լաստիվերցին մի առիթով գրում է, որ Դվինի ամիրա Աբուլասվարը «էր փեսայ թագաւորին Հայոց Աշոտոյ» (Լաստիվերցի, 1963, 96): Նույն պատմիչը երբ խոսում է Գագիկ Բ-ի Կոստանդնուպոլսում արգելափակվելու և Ամիի ավազների՝ քաղաքն այս կամ այն տիրակալին հանձնելու շուրջ մտորելու մասին, գրում է. «Իսկ քաղաքացի զխաւորքն, որ նստէին յԱմի, իբրև տեսին թէ արգելաւ Գագիկ ի Յոյնս, խորհեցան երբեմն ի Դաթի (Դավիթ Անհողիմին, Կ.Ս.) տալ քաղաքն, երբեմն ի Դունացին (Աբուլասվարին, Կ.Ս.), քանզի քոյրն (Գագկայ) կին էր նորա...» (այստեղ բնագրական կարևոր ճշտում է կատարել Գ. Մանուկյանը, տես Մանուկյան, 1977, 168-173): Այսինքն՝ Գագիկ Բ-ի քույրն Աբուլասվարի կինն էր: Ուշագրավ է, որ Աբուլասվարի որդիներից մեկը մորական պապի անունն էր կրում՝ Աշոտ (Տեր-Ղևոնդյան, 1965, 268):

Աշոտ Դ-ի դստեր, Գագիկ Բ-ի քրոջ և Մանուչէի մոր անունը հավանորեն Կատա է եղել, ինչպես կարելի է եզրակացնել Վարդան Արևելցու մի վկայությունից: Նա գրում է, որ Մանուչէի Աբուլասվար որդու զավակներից մեկը քրիստոնեություն ընդունեց իմանալով այն մասին, որ իր տատը՝ Կատան, քրիստոնյա էր, Բագրատունյաց թագավորական տնից

(«լուեալ եթէ հան նորա՝ Կատայ, ի տանէ Բագրատունի՝ քրիստոնեայ էր, յազգէ թագաւորացն...», Վարդան, 1861, 161): Ահա այս փաստերն են հայտնի Մանուչեի հայկական ծագման վերաբերյալ: Սակայն վերջին վկայությունից ելնելով երբեմն ենթադրվել է, թե Մանուչեի կինն էր Կատան (Ալիշան, 1881, 98, ՅՍՀ, 1981, հ. 7, 257): Կարծում ենք, որ երբ Վարդանը շեշտում է նրա ոչ միայն «ի տանէ Բագրատունի», այլև «յազգէ թագաւորացն» լինելը, անպատճառ նկատի ունի Աշոտ Դ թագավորի դստերը: Վերջինս Մանուչեի թոռան մեծ տատն էր (տատի մայրը), որին և նկատի ունի պատմիչը, երբ գրում է «հան նորա՝ Կատայ»: Բացի այդ, Կատա էր Աշոտ Դ-ի մոր անունը (Գագիկ Ա-ի կին Կատրամիդե թագուհին հայտնի է նաև Կատա անունով, ինչպես որ կոչվում է իր մեկ այլ թոռնուհու՝ Մարիամի Մարմաշենում թողած արձանագրության մեջ (Ալիշան, 1881, 149), ուստի միանգամայն բնական է, որ Աշոտի դուստրը կրում էր իր տատի անունը:

Անդրադառնալով Շեղդադյանների՝ Բագրատունիների հետ ունեցած խնամիական կապին Դ. Մանանդյանը գրում է. «Լինելով հայ Բագրատունիների ազգական Մանուչեի սերունդն իրեն, հավանորեն, հաջորդ էր համարում այս վերջինների և իրավական ժառանգ՝ Շիրակի ու Անի քաղաքի» (Մանանդյան, 1977, 87): Ուշագրավ է, որ հետագայում հիշյալ շրջանները Շեղդադյաններից ազատագրող Ջաքարյանները սկսեցին իրենց Բագրատունիների տոհմից համարել (Դիվան Զ, 22):

**65.** Ծառաքարի դեպքերի մասին մանրամասներ է հաղորդում Վարդան Արևելցին, որի խոսքում առկա տեղական նշանակության մանրամասներից դատելով՝ կարող ենք ենթադրել, որ դրանք քաղել է իրադարձությունների ժամանակակից Մխիթար Անեցուց (Վարդան, 1961, 171, 174-175): Ծառաքարի մահմեդականների գործած չարագործությունների թվում էր նաև յոթ նշանավոր հայ կրոնավորների դաժան սպանությունը: Այս նահատակները, որպես Քրիստոսի վկաներ, Անիում արժանանում են հատուկ հիշատակի, որը միացվում է Ս. Գրիգորի տոնին: Ոճրագործներին պատժելու համար անեցիները գրավում են բերդը և կոտորում բոլորին, բացի կանանցից ու երեխաներից: Պատմիչը հայտնում է, որ Դվինի Ալիշեր ամիրան, իմանալով Ծառաքարի անկումը, ուր գտնվում էին նաև իր կինն ու որդիները, դառնադի ողբում է նրանց կորուստը, բայց հետո իմանալով, որ հայերը ձեռք չեն տվել կանանց ու երեխաներին՝ «...փառալուրեր Սուրբ Երրորդութիւնն»:

**66.** Դ. Հակոբյանը, հավանաբար ելնելով այն փաստից, որ 1240 թվականից Տփղիսում հաստատվել էին դոմինիկյանները, իսկ Անիում գտնվողները պետք է մեկնեին այնտեղ «իրենց եղբայրների» հետ խորհրդակցելու, սրանց ևս համարում է դոմինիկյան միաբանությունից (Հակոբյան, 1932, 27), թեև չի բացառվում, որ ֆրանցիսկյաններ լինեին (Խաչիկյան, 1973, 149):

**67.** Ներսեսի մասին, որի անունը հայտնի է սոսկ Մագիստրոսի թղթից, միանգամայն անհիմն ու անհեթեթ տեղեկություն է սպրդել հայկական հանրագիտարանում, ուր ասվում է. «...Շիրակում մահապատժի է ենթարկվել թոմարական քարոզիչ Ներսեսը» (ՅՍՀ, 1978, հ. 4, 199): Նախ Մագիստրոսի նամակից չի կարելի անվերապահորեն հետևեցնել, թե նա թոմարակեցի էր, ավելի շուտ Պետրոսի ու Մագիստրոսի քաղաքական հակառակորդներից մեկն էր, բարձրաստիճան հոգևորական՝ հավանաբար եպիսկոպոս (Մագիստրոս, 1910, 286): Ինչ վերաբերում է Ներսեսի վախճանին, ապա Մագիստրոսն այդ մասին ոչինչ չի ասում, պարզապես մեծ զայրույթով ու ատելությամբ է նրա մասին գրում:

**68.** Անիի վաղ՝ նախաբագրատունյան շրջանի մշակութային կյանքի վերաբերյալ շատ քիչ բան է հայտնի: Հնարավոր է, որ Շիրակի հենց Անի

բնակավայրից էր **Է** դարի հայ խոշորագույն մտածող, մաթեմատիկոս և մանկավարժ Անանիա Շիրակացին: Վերջինս 661թ. գրած հիշատակարանում իրեն կոչում է «Անանիե Շիրակացի ի գեղջէ Անենից...» (ՄՄ, թիվ 4066, էջ 10բ): Ժ դարի սկզբներին Յովհաննես Դրասխանակերտցին Շիրակացուն անվանում է «**Անանիա Անեցի**», ընդ որում, այդ ժամանակ Անին մայրաքաղաք ու մեծահամբավ բնակավայր չէր, ուստի պատմիչը Շիրակացու անունն արիեստականորեն Անիի հետ կապելու որևէ պատճառ չուներ (Դրասխանակերտցի, 1912, 92): Շիրակացուն անեցի է համարում Ն. Մառը (Մառ, 1934, 20):

Անանիա Շիրակացին Տրապիզոնում ուսանելուց հետո Հայաստան գալով իր գիտամանկավարժական գործունեությունն անց է կացրել ծննդավայրում (նա հավանորեն ազնվական ծագում ուներ, այլապես չէր կարող սեփական ցանկությամբ Բյուզանդիա ուսանելու մեկնել, հորը հիշատակելիս էլ օգտագործում է բարձր խավին հատուկ ձևակերպում «Անանիայ որդի **Յովհաննիսի Շիրակայնույ**»), այստեղ է հիմնել դպրոց, որն ուսուցանվող նյութերի հարստության ու բազմազանության առումով ժամանակի հայ իրականության մեջ ամենաբարձրակարգ դպրոցն էր, ուր ուսուցումն իրականացվում էր հենց ուսուցչի կազմած Քննիկոն բազմաբովանդակ դասագրքով (Մաթևոսյան, 1974, 66-84, 1981, 223-239, Ե-ԺԲ, 17-21):

Զաքարիա Սարկավազ Քանաքեռցու միջոցով մի վկայություն է պահպանվել Մանկիկ մականունով **Գեորգ Անեցի** գրչի մասին, որը հիշատակարանի համաձայն ձեռագիր է ընդօրինակել 573թ. Յովհաննավանքի վանահայր դարձած Աշոտ Դվնեցու համար (Ե-ԺԲ, 10-11): Նախնական հիշատակարանն, ինչպես երևում է ոճից, կամ Զաքարիայի ձեռքով (ԺԷ դար), կամ էլ ավելի վաղ, խմբագրվել, վերաշարադրվել է: Կարծում ենք, այս է պատճառը, որ ի թիվս այլ նորամուտ ձևակերպումների Գեորգի ծննդավայրը հիշատակարանում «մայրաքաղաք» է կոչվում «Գեորգ կոչեցելոյ՝ մականուամբ Մանկիկ, ի տիս համբերութեան ի մայրաքաղաքէն յԱնույ եկեալ և պանդխտացեալ ի դրան Սրբոյ Կարապետիս» (Ե-ԺԲ, 10): Որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ սկզբնապես Անիի փոխարեն Դվին է գրված եղել, մանավանդ որ ստացող Աշոտն էլ ծագում էր «ի հռչակեալ մայրաքաղաքէն Դունայ», սակայն վերջինիս համար չի ասվում «եկեալ և պանդխտացեալ»: Կարծում ենք Գեորգի պարագայում միայն «մայրաքաղաքէն» բառն է հետագայի հավելում:

**69.** Որոշակի հայտնի չէ, թե որ Ս. Գրիգոր եկեղեցուն է ընծայվել մատյանը, քանի որ Անիում այդ անվամբ մի քանի եկեղեցի կար: Տոնականի հիշատակարանը հետաքրքրական է նաև թերանի անեցի լինելու հանգամանքի հիշատակման ձևով: Հայտնի է, որ գրաբարուն բառասկզբի «յ»-ն արտասանվում է «հ»: Հիշատակագիրը հենց այդպես էլ գրում է՝ «հանեցի», փոխանակ՝ «յԱնեցի», ինչպես որ հիշատակարանի վերջում գրում է «հաստ», փոխանակ՝ «յաստ»: Թերանի հիշատակարանը հետևյալն է. «Ես թերանս հԱնեցի, որ գնեցի ի յիմ յաշխատանաց զխանձելիս Պատմայգիրքս Վարթերին աւզնականութեամբ՝ յիշատակ ինձ և ծնաւղաց ինոց և Վարթերին և ծնաւղաց իւրոց, և դրի ի Սուրբ Գրիգոր: Եվ տվի զՍուրբ Սարգիս զաւուրն զպատարագն Վարթի, որ իսկի չխափանի: Ու երէց, որ ի Սուրբ Գրիգոր կենայ և զգիր անփութ արիմէ, նայ ինքն ջնջեսցի ի դպրութենէ կենաց և նզովի ի հայրապետացն և ի մարտիրոսացն և ի առաքելոց և ի քառասնից:

Գրեցի թվիս Հայոց ՈՂԵ (1246) հաստ» (ԺԳ, 237):

Ինչպես տեսնում ենք, նվիրատուն նշում է, որ ձեռագիրը գնել է Վարթերի օգնությամբ և տվել Ս. Գրիգորին: Բայց Վարթերի համար տրվող պատարագի ժամանակ ձեռագիրը տարվել է վերջինիս միաբանած եկեղեցին՝ Ս. Սարգիս (քաղաքում այդ անվամբ երկու եկեղեցի է հայտնի): Դրանից հետո մատյանը կրկին բերվել է Ս. Գրիգոր, որի երեցին նվիրատուն պատվիրում է հոգատար լինել ձեռագրի նկատմամբ: Ուշագրավ է հիշատակարանի վերջաբանը, որը շատ նման է նվիրատվական բնույթի վիճագիր արձանագրությունների վերջում տեղ գտնող անեծքի բանաձևին:

**70.** Հռոմոսի վանքը միջնադարում հռչակված էր իր գրչատնով, որտեղ գրված ու նկարազարդված բազմաթիվ ձեռագրեր են մեզ հասել: Պահպանվել են նաև հիշատակություններ վանքին նվիրաբերված մատյանների մասին: Մատենադարանի թիվ 7635 ձեռագրի 1249թ. հիշատակարանում Խաչեղբայրի որդի Ավետիսը նշում է, որ մատյանը նվիրում է Հռոմոսի Ս. Հովհաննես եկեղեցուն. «Աւետարանս Հռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս՝ յԱւետեացս, որդոյ Խաչեղբարն, աղաչեմ յիշել յաղաւթս: Ի ՈՂԸ (1249) թվին» (ԺԳ, 252): Ավետիսի ու նրա հոր անվանը հանդիպում ենք նաև Հռոմոսի վանքի 1201թ. մի արձանագրության մեջ, ուր տեղեկացվում է այլ նվիրատվությունների մասին (Սարգիսյան, 1864, 151):

Հռոմոսում ժամանակին պահպանված մի ոսկեկազմ Ավետարանի մասին հիշատակված է Իգնատիոս Հռոմոսցի գրչի 1214թ. Հավուց Թառում գրած ձեռագրի հիշատակարանում (ԺԳ, 84): Վանքի վիճագիր արձանագրություններում վկայություններ կան երկու այլ ձեռագրերի նվիրատվության մասին: 1246թ. Աշոտ Դսեղեցին այլ նվիրատվությունների շարքում հիշատակում է մի արժեքավոր Ավետարան. «Ես Աշոտ Դսեղեցի... միաբանեցայ Սուրբ Յովանիսի, ի նեղ եւ չար ժամանակիս... ետու զամենագով Աւետարան...» (Սարգիսյան, 1864, 154): Իսկ 1251թ. արձանագրության մեջ Հովհաննես Ցխիկը հիշատակում է վանքին նվիրաբերած Հայսմավուրքի մասին, որը հենց ինքն էր գրել տվել. «Ես Յովանէս Ցխիկ միաբանեցա Սուրբ Ուխտիս... ետու զիմ Մարտիրողոք, որ իմ հալալ արդեամբք գրեալ էր» (Սարգիսյան, 1864, 156):

Հռոմոսին մի Ավետարան է նվիրաբերվել 1347թ., որի մասին հիշատակվում է նրա կազմի արձանագրության մեջ (Կ. Ս., 1986ա, 66-67): 1459թ. Աստվածատուր եպիսկոպոսը Հռոմոսին է ընծայել Այրիվանքում Մատթեոս գրչի ընդօրինակած ճաշոցը, որն այժմ պահվում է Մատենադարանում (թիվ 6272):

**71.** 1012թ. Բազմայրի հիմնադրման մասին Սամուել Անեցու վկայությունից երևում է, որ արդեն այդ ժամանակ վանքը նշանավոր է եղել իր միաբանությամբ: «Սմբատ Մագիստրոսն շինեաց զիրեշտակաբնակ և զփափագատենչ վանքն, որ Բազմայր յորջորջիւր՝ **ժողովեալ աստուածայնոց արանց**» (Անեցի, 1893, 105):

Բազմայրի զխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերված ձեռագրերից ամենանշանավորը 1232թ. Իգնատիոս գրչի Հռոմոսում պարոն Խոռասի պատվերով գրած մեծադիր Ավետարանն է, որը հայտնի է «Բազմայրի Ավետարան» անունով (ՄՄ, թիվ 1519): Նվիրատվությունից որոշ ժամանակ անց մատյանը գերեվարվել է, բայց 1308թ. այն 600 արծաթով փրկագնել ու վանք են վերադարձրել Գեորգ Ներսիսանցի որդիները (այս մասին հիշատակարանը գրել է Գելանի որդի Ստեփանոսը): ԺԴ դարի կեսերին

Ավետարանը նորոգել ու կազմել է տվել Անիի քաղաքացի Պարոնը (ԺԳ, 179, Հովսեփյան, 1951, 891-893):

Բագնայրի վիմագիր արձանագրություններում նշվում է ևս երեք ձեռագրերի նվիրատվության մասին: «ՉԺԱ (1262) Գարեգոյն էրեց, որդի Մանգիկ իրիցու եւ ամուսին իմ Մարեն միաբանեցաք ի Սուրբ Աստուածածինս եւ ետու ... **մի Տաւնական մակաղաք, մի Աւետարան ոսկետուփ**՝ իմ գանձով գնած» (Սարգիսյան, 1864, 187): ԺԳ դարի մեկ այլ, անթվակիր արձանագրության մեջ նշված է. «Ես Թագոհի զուգակից Շարափշահին ետու խաչ մեծածախ եւ Աւետարան» (Սարգիսյան, 1864, 186):

Բագնայրում պահվող ձեռագրերի թվում էր Ներսես Շնորհալու՝ Մատթեոսի մեկնության օրինակներից մեկը, ուր 1278թ. հիշատակարան է գրել Գեորգ վարդապետը՝ «Նուսատ վարդապետս Գեորգ, յետին ստացի... ի հրեշտակաբնակ ուխտիս՝ Բագնայրս գրեցի, ուր էր հանգիստ մեր...» (ԺԳ, 488):

**72.** Անիի մերձակա Արջո Առիճի վանքին նվիրաբերված մեզ հայտնի ձեռագրերից երկուսն անեցիների պատվերով են գրվել: Առաջինը 1211թ. նշանավոր «Հաղբատի Ավետարանն» է, որը ստացող Սահակ Անեցին ընծայել է Արջո Առիճում իրենց տոհմի կառուցած նորաշեն եկեղեցուն («...աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մենջ ի վանս Արջուառճի»), իսկ երկրորդը 1298թ. Հակոբ Անեցու պատվերով գրվել է Անիի Ներքին բերդում ու նվիրաբերվել վանքին, ուր ժամանակին նա ուսանել է եղբոր՝ Ստեփանոսի հետ (ԺԳ, 71, 817):

Մոնղոլական արշավանքին (1236թ.) հաջորդած շրջանում Արջո Առիճին նվիրաբերվել է մեկ այլ Ավետարան վանքի աշակերտ Աստվածատուրի կողմից (ԺԳ, 197): Թվարկված ձեռագրերի հիշատակարանները, ինչպես և վանքի վիմագիր արձանագրությունները վկայում են, որ այստեղ ժամանակին գործել է անեցիների շրջանում հարգի հոգևոր դպրոց (Կ. Մ., 1984, 67-69):

**73.** Մաղաքբերդում կամ Ծառաքարում, Սամուել Անեցին հիշատակում է երեք եկեղեցի՝ վաղագույն Ս. Գևորգ «խորանարդ» տաճարը և «յարակից գմբեթաւոր» Ս. Հովհաննես ու Ս. Սեբենոս եկեղեցիները՝ կառուցված 1029թ. Վեստ Սարգսի կողմից (Անեցի, 1893, 106): Անցյալ դարի կեսերին Մաղաքբերդ այցելած Ն. Սարգիսյանը նշում է, որ բերդում կային «աւերակք երից փոքր մատրանց» (Սարգիսյան, 1864, 125): ԺԲ դարում ամրոցը պատկանել է Ապիրատյաններին և հանդիսացել Անիի արքեպիսկոպոս Բարսեղ Բ-ի ժառանգական սեփականությունը:

**74.** Այժմ թղթե ձեռագիրն ունի 360 թերթ (19,5 x 28,5 սմ), բավական թվով թերթեր են պակասում, հիշատակարանների մի մասն է միայն պահպանվել: Ձեռագիրը բաղկացած է նույն կազմի մեջ ամփոփված երկու միավորից. առաջինը (թերթ 1-155) գրված է 981 թ. և կոչվում է «Գիրք շարադրութեան տոմարաց», երկրորդը (թերթ 156- 360)՝ ստեղծվել է մի փոքր ուշ, վերնագրված է «Ծաղիկք հաւատոյ», սակայն երկուսի կազմողն էլ Դավիթն է, գրիչը՝ Ղուկասը: Ժողովածուները մի կազմի մեջ են դրվել 1225 թ. Գիշի որդի Հովհաննեսի կողմից:

**75.** Դավթի և Ղուկասի երկու ժողովածուից բացի հայտնի են 999թ. Սիմեոն Հաղբատեցու՝ Վասպուրականի Ելենի վանքում և Թադեոսի՝ Բագրևանդում ընդօրինակած ձեռագրերը, որոնց գրանյութը նույնպես թուղթն է, գրատեսակը բոլորգիրը: Այս երկու ձեռագրերը ևս դրվել են մի կազմի մեջ և այդպես էլ հասել մեր օրերը (Վեներտիկ, թիվ 953): Պահպանված հիշատակարաններից մեկի համաձայն 1041թ. արդեն մի կազմի մեջ

ամփոփված մատյանը պահվելիս է եղել Աճիի արքունական գանձատանը, որտեղից այն վերցրել ու հավանորեն կաթողիկոսարանի մատենադարան է տեղափոխել Սարգիս Անեցի վարդապետը: Հետագայում ձեռագիրը պատկանել է Գրիգոր վարդապետ Տուղետրդուն, որն այն կազմել է 1154թ. Հովհաննավանքում (Ե-ԺԲ, 87, 173):

**76.** 981թ. թուղթը պատրաստված է բուսական հումքից, կտավատի ծղոտից, իսկ Շիրակը և Աճին միջնադարում հանրահայտ էին կտավատի մշակությամբ, որից ձեթ էին ստանում: Բավական է նշել, որ խիտ բնակեցված բուն քաղաքում 19 ձիթհանքի ավերակներ են հայտնաբերվել (Առաքելյան, 1958, 54, Հակոբյան, 1980, 94-96):

**77.** Գաղափար օրինակի անփոփոխ պահպանումը կարևորագույն պայման էր միջնադարյան գրչության արվեստում: Մագիստրոսը, բնականաբար, ենթադրելով, որ իրեն կուղարկվի **Է** դարի երկաթագիր մատյանի ժիշտ պատճենը, խնդրում է ընդօրինակելիս «ըստ կարողության» օգտագործել ժամանակակից, հեշտ ընթերցվող գիր՝ հավանաբար՝ բոլորգիր:

**78.** Գրչության քվականը հայտնվում է տոմարական հաշվի չորս եղանակներով՝ Հայկական քվական ՆՂԵ (495Չ551]1046), Հռոմեական Ինդիկտիոնի՝ 313 քվականից սկսվող 15- ական տարիների՝ 49-րդ շրջանի 13-րդ տարին՝ 313Չ(15x48]720)Չ13]1046, Հայաստանում քրիստոնեության ընդունման քվականից հաշված՝ 744-րդ տարին. 301Չ744]1045 և Քրիստոսի ծննդից հաշված՝ 1045թ. (Հովսեփյան, 1951, 232, Աբրահամյան, 1973, 131):

**79.** «Ես տեր Պետրոս, շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս, ցանկացող եղեալ այսմ աստուածածառ ճառիցս... որով միայն ճոխանամ, քան զի ... առնեն զսա ամենայն կենաց հաղորդ եւ խորհրդակից բարի եւ խաւսակից եւ առաջնորդ վերին ճանապարհի... յայս ինձ թափեցաւ սիրելութիւն Աստուծոյ: Արժան անմահ կանգնեսցի [ի] յիշատակ հոգւոյ իմոյ»: Հիշատակարանի այս և նման հատվածների ոճը վկայում է, որ այն թելադրվել է գրչին ինչպես մի պաշտոնական գրություն կամ կոնդակ:

**80.** Վարդան Արևելցու մոտ պահպանվել է Աճիի պատմության մի դրվագ, ուր հիշվում է Բեխ անունով մի համարձակ մարդ: Պատմիչը գրում է, որ 1090 թ. «... եղել ի պատճառս մարախոյ և երաշտոյ սով սաստիկ և ի յԱճի քաղաք կարի ինն նեղութիւն. ուստի զմեռեալս թաղել ոչ կարէին և ոչ օրինաց հաղորդել. որ և այր մի ասեն քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց անձինս վեց հազար, **Բէխ** անուն էր նորա» (Վարդան, 1861, 144): Հնարավոր է, որ հենց այս Բեխն է եղել Աճիի Բեխենց տոհմի հիմնադիրը:

Բեխենց անվանը հանդիպում ենք նաև Աճիի Ս. Փրկիչ եկեղեցու պատին Տրդատ քահանայի 1193թ. գրած արձանագրության մեջ, ուր հիշատակվում է «մեծ արտ Բեխենցն» որպես հանդամաս Արուճում (Դիվան, Ա, 47, 136, տես նաև Կ. Մ., 1987, 31-34):

**81.** Աճիում Եղբայրիկի թողած արձանագրության քարը գտնվել է Սմբատաշեն պարսպի թիվ 63 բուրգի մոտ: Արձանագրության մեջ ասվում է. «...ես Եղբայրիկս, ծառայ տեսառն իմոյ Տիգրանա, նորին ողորմութեամբն շինեցի զարձանս, յիշատակ մ[եզ] եւ ծնողաց եւ զաւակ[աց մերոց]» (Դիվան, Ա, 7):

Հռոմոսի վանական համալիրում կանգնած է եղել մի մեծ խաչքար, որի մարդահասակ պատվանդանն է միայն հասել ժժ դար: Պատվանդանի ճակատին քանդակված են վեց սյունազարդ կամարներ՝ շրջապատված երկրաչափական զարդաքանդակներով: Կամարների ներսում երեքական տառերով գրված է. «ԵՂԲ ԱՅՐ ԻԿՆ ԿԱՐՈ ՂԽԱ ԶԻՍ», այսինքն՝ «Եղբայրիկ նկարող խաչիս»

(Սարգիսյան, 1864, 29): Ս. Բարխուդարյանը Եղբայրիկի՝ Բեխենց վանքի առաջնորդ լինելու հանգամանքին ծանոթ չլինելով՝ նրան համարում է Տիգրան Յոնենցի ճարտարապետը (Բարխուդարյան, 1963, 142, տե՛ս նաև Հակոբյան, 1982, 233):

Հետաքրքրական է, որ **Եղբայրիկ** անձնանվանն առաջին անգամ հանդիպում ենք Անիում, ուր, հատկապես ժԳ դարում, այն բավական տարածված է եղել: Բեխենց վանքի վանահորից բացի Անիում հիշվում են 1298թ. Ներքին բերդում Ավետարան ընդօրինակած Եղբայրիկ արեղան (Կ. Մ., 1984ա, 113-114), մեկ այլ անեցի Եղբայրիկ (հայրը՝ Մխիթար Խոթենցի)՝ պարսպաբուրգերից մեկի արձանագրության մեջ (Դիվան, Ա, 4), չորրորդը՝ Արջո Առիճում (Սարգիսյան, 1864, 192), իսկ 1218թ. Հռոմոսում հիշատակվում է Եղբայրոս անունով վիճագիր գրիչը:

**82.** «Գրիգոր ստացող սուրբ Աւետարանիս և ամուսին նորին և որդիս նոցին յիշեսցիք ի Քրիստոս: Ընդ նոսին և գՍիմեոն կրաւ[նա]ւոր պատճառ գործոյս, և զառաջնորդք սուրբ ուխտիս Ջար[ե]ւհանի գեղիսէ հայր և զՎարոս փակակալ և զՍաչատուր գործակից... և զայլ համաւրէն միաբանք Սուրբ Նշանիս, որում սուրբ Աւետարանս է խայրի և ընծայ աւանդեալ ի վերագրելոյս» (ՄՄ, թիվ 5554, էջ 278ա, հմմտ. ժԳ 73): Սույն հիշատակարանի հիման վրա Ավետարանի գրչության վայր է համարվել Ջարևհանի ուխտը (Ցուցակ, Բ, 132): Սակայն դա ոչ թե գրչության վայրն է, այլ այն վանքը, որին ձեռագիրը նվիրվել է՝ «...որում սուրբ Աւետարանս է խայրի և ընծայ աւանդեալ...»: Ձեռագրի խորաններում եղած հիշատակագրությունները վկայում են, որ գրչության վայրը Անիի Բեխենց վանքն է (տե՛ս Մաթևոսյան, 1984, 122-128): Ձեռագրի էջերում կան նաև այլ փոքր հիշատակագրություններ (էջ 42բ, 132ա), ուր նշվում է Գրիգորի կողակից Շահումը:

**83.** Ավետարանի ինը խորաններից երկուսը հատկացված են Եվսեբիոսի մամակին: Մնացած յոթը համարաբառի խորաններն են՝ բաժանված երկուական տեքստայուների: Խորանները կառուցվածքով պարզ են և չեն ծանրաբեռնված օժանդակ զարդերով: Խորանն այստեղ չունի ճարտարապետական բաղադրամասեր՝ սյուները զուրկ են խարիսխ խոյակներից, չկան լուսանցազարդեր: Ջարդային համակարգը հյուսվում է հիմնականում գլխազարդի մեջ, բայց վերջինիս հագեցվածությունը, այնուամենայնիվ, կարողանում է խորանին հանդիսավոր տեսք հաղորդել: Ծաղկողը նկարազարդման համար օգտագործել է անխառն կարմիր, կապույտ, կանաչ, դեղին գույները և երբեմն թխամանուշակագույն երանգ: Ոսկի բոլորովին չի գործածել:

Խորանների գլխազարդերը հարդարված են երկրաչափական ձևերի (եռանկյուն, շրջանագիծ, կորագիծ) մեջ առնված բուսական ոլորազարդերով, օգտագործված են խոշոր վարդյակներ և կիսավարդյակներ:

Ավետարանում պահպանված բոլոր չորս անվանաթերթերը կազմությամբ նման են, բաղկացած կիսախորանից (գլխազարդ), խոշոր գլխազարդից և մեկ զարդագիր տողից, որին հաջորդում են երկաթագիր տողեր: Կիսախորաններն ուղղանկյուն են, բացառությամբ Դուկասի Ավետարանի անվանաթերթի, ուր այն անկյունավոր տեսք ունի: Էջի զարդարվածության ներդաշնակ կազմակերպմամբ աչքի է ընկնում հատկապես Մատթեոսի ավետարանի անվանաթերթը:

**84.** Պատառիկը մագաղաթյա թերթ է (20x27սմ), գրչությունը երկայուն, երկաթագիր: Բնագիրը հավանաբար Թ-ԺԱ դարերից է: Ստացող Հովասափի բնակության վայրի և



ծագման մասին հիշատակության ձևը համեմատելի է «Հաղբատի Ավետարանում» Սահակի մասին պահպանված հիշատակության հետ՝ «ազգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ»։ Այստեղ Մարգարեն իրեն կոչում է կազմող, բայց քանի որ հիշատակարանում այլ արհեստավորներ չի նշում, պետք է կարծել, որ նա նաև ծաղկել է մատյանը, որովհետև Հովասափը հայտնում է, թե՛ «[ետու դարծ]եալ նշանագրել ծաղկել] եւ կազմել, եւ **արծաթով փառագարդել**» (ԺԳ, 65\_66)։ Մարգարեի այս հիշատակարանը կարևոր արժեք ունի Գյումրիի (Կումիրի, Կումայր) պատմության համար։

**85.** Միջնադարյան հայ արվեստագետներից շատերը տիրապետել են մի շարք մասնագիտությունների, եղել հիրավի բազմաշնորհ (հատկանշական է Մոմիկի օրինակը)։ Ինչպես տեսանք, Մարգարեն գրիչ, ծաղկող, կազմարար էր։ Դատելով Բազմայրի մի վիմագիր արձանագրությունից՝ կարելի է ենթադրել, որ նա զբաղվել է նաև վիմագիր գրչությամբ։

1215թ. Բազմայրի Ս. Աստվածածին եկեղեցու պատին Գրիգոր Ա եպիսկոպոսի կանոնակարգիչ արձանագրության տակ փորագրողն արձանագրել է իր անունը՝ Մարգարե։ Սակայն հետաքրքրական է, որ այն գրված է ճիշտ նույն ձևակերպմամբ, ինչպես Մարգարեն գրում է «Հաղբատի Ավետարանի» հիշատակագրություններից մեկում.

«Հաղբատի Ավետարան», 1211թ.

Տէր Աստուած ողորմեա

Մարգարէին ... ամէն

(ԺԳ, 70)

Բազմայր, 1215թ.

Տէր Աստուած ողորմեա

Մարգարէին ամէն

(Սարգիսյան, 1864, 183)

Բազմայրում բավական շատ արձանագրություններ կան, որոնց մի մասում պահպանվել են վիմագիր գրիչների անվան հիշատակությունները, սակայն դրանցից ոչ մեկը նման չէ Մարգարեի կիրառած ձևակերպմանը («զՅովսեփ գրիչ, Տէր յիշեա», «զՍիմէոն գրիչ յիշեցէք աղաչեմ», «Մանասէ գրիչ»)։ Անիի շրջանի արձանագրություններից ոչ մեկում չենք հանդիպում Մարգարեի օգտագործած ձևակերպման կրկնությանը։

Ճիշտ է, հիշատակարանի ու արձանագրության շարադրման նույնակերպությունը նկատի ունենալով չենք կարող անվերապահորեն պնդել, որ վիմագրի գրիչը նկարիչ Մարգարեն է, սակայն կասկած չի կարող, որ Անիի ու նրա շրջակա վանքերի գրագետ, գեղեցիկ ու վարպետորեն գրված մեծաքանակ արձանագրությունների գրիչներից ոմանք զբաղվել են նաև ձեռագրերի գրչությամբ։ Եվ շատ հնարավոր է, որ այդպիսին էր նաև բազմաշնորհ Մարգարեն։

**86.** Հիշատակարանում կարդում ենք. «...տրուպ սպասաւորի տան Աստուծոյ՝ Սահակ կրանաւորի և ետին քահանայի, որ էի աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ, ազգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ, սմեալ ի սրբարան ուխտիս ի Հաղբատ, ստացայ զսուրբ Աւետարանս իմովք արդեամբք առ ի յիշատակ ապագայից ինձ՝ նուաստիս Սահակայ և ծնողացն իմոց Ռովմանոսին և Կատային և երկուց հարազատ եղբարցն իմոց՝ Իպատոսին և Առաքելին և իւրեանցն զաւակաց և քերցն մեր և զաւակացն նոցուն... Եւ ետու զծագրել զսա և կազմել ներքոյ և արտաքոյ յաւրինուածով ըստ իմուն կարի, յուսով և կատարեալ սիրով։

...Եւ արդ գրեցաւ սա և ծաղկեալ կազմեցաւ յամի յորում էր թիւ համարոյ թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից և նոյնքանեաց տասունց (600Ձ60Ձ551՝1211)... Ի

սուրբ ուխտիս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ, յառաջնորդութեան տեառն Յոհաննիսի սրբասիրի, ի թագաւորութեանն Հայոց արևմտայինն կողման Լեւոնի քրիստոսասէր և յաղթող թագաւորի և մերոց կողմանցս և Վրաց Գեորգեայ թագաւորի և ի սպարապետութեան Ջաքարիայ շահնշահի, յորոց աւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աստուած յաղթութիւն ի բազում տեղիս, զորմէ այլք պատմեսցեն զայլ ինչ: Եւ մեզ վասնզի խնդիր է առ սրբութիւնդ ձեր մատուցանել մաղթանս... ով լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արջուառճի, առ որ գոյս հաւատոյ մեր եղեալ զբովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց՝ ծախեցաք և շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արջուառճի... Հրամանաւ հաւր Մխիթարայ կազմեցաւ ի վանքս Հռոռոնոսի, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած: Ձկազմող սորին զԱբրահամ և զԱկարիչ սորին՝ զՄարգարէն և զողորմութիւն խնդրող զՅովհաննէս յիշեսցիք յաղաւթս վասն Տեառն, աղաչեմք» (ՄՄ, թիվ 6288, էջ 348ա-351ա, հմմտ. ԺԳ, 71-72):

**87. Մխիթար Քոյրայրեցի**ն հայերեն ձեռագրերուն հանդիպող առայժմ հայտնի առաջին սրբագրիչն է: Սովորաբար այս հիշատակութեանն անդրադարձողները սրբագրողի անունը սրբագրում են **Մխիթար Քոյրայրեցի** (Հովսէփյան, 1951, 747, Առաքելյան, 1958, 315, Մաթևոսյան, 1984, 116, ԺԳ, 68): Սակայն կարծում ենք, որ չի բացառվում Քոյրայր (Քույր-այր) տեղանվան գոյությունը, որտեղից՝ Քոյրայրեցի մականվան ծագումը: Ամեն դեպքում, պետք է անփոփոխ թողնել Մխիթար Քոյրայրեցու անվան բնագրային ձևը, քանի որ մի ձեռագրի սրբագրիչը դժվար թե իր իսկ մականունը սխալ գրեր: «Քոբայր» տեղանվան ստուգաբանությունը տես Մուրադյան, 1977, 165:

**88.** Մատթեոսի ավետարանի անվանաթերթը նկարելու համար Մարգարեն հանել է ավետարանի առաջին թերթը և մուծել երկու թերթ: Առաջինի մի էջի վրա նկարել է անվանաթերթը, իսկ հաջորդ երեք էջերին խոշոր երկաթագրով գրել հանված թերթի պարունակած հատվածը (Մաթևոսյան, 1984, 109, նկ.1): Որպեսզի անվանաթերթ նկարի Մարկոսի ավետարանի համար, Մարգարեն անջատել է (և) պրակը, որի առաջին չորս թերթերը Մատթեոսի ավետարանի վերջամասը, իսկ մյուս չորսը՝ Մարկոսի ավետարանի սկիզբն են պարունակում: Հակոբ գրչի գրած պրակի հանված թերթերն օգտագործելով որպես պահպանակ՝ Մարգարեն նորից է ընդօրինակել պրակը, նկարել է համապատասխան անվանաթերթը, իսկ Մատթեոսի ավետարանի վերջում ազատ մնացած էջի վրա հետևյալ հիշատակարանը գրել. «Սուրբ առաքեալ եւ ավետարանիչ բանին Հաւր, ի քոյդ ապաւինեալ բարեխաւսութիւն աղքատս եւ մեղաւոր արեղայս Մարգարէս՝ նկարող սորին, որպէսզի ողորմեսցի ինձ, նաև Սահակայ ստացողի...» (ՄՄ, թիվ 6288, 111, հմմտ. ԺԳ 69): Հովհաննեսի ավետարանում Հակոբը վրիպել էր ԳԻԹ հատվածից մի քանի տուն, որը ևս լրացրել է Մարգարեն մեկ թերթ ավելացնելով (ՄՄ, թիվ 6288, 338): Դրա հետ մեկտեղ նկարիչը գրել է ձեռագրի համաբարբառները, Եփեսիոսի նամակի տեքստը, բազմաթիվ հիշատակագրություններ, հատկապես՝ խորանների երիզների վրա և լուսանցքներում: Այսպիսով, համոզվում ենք, որ «Հաղբատի Ավետարանում» Մարգարեն իրոք հանդես է գալիս նաև որպես գրիչ: Գրչության արվեստին քաջատեղյակ լինելով՝ նա կիրառում է տարբեր գրատեսակներ, ըստ անհրաժեշտության մեծացնում կամ փոքրացնում տողերի ու տառերի չափն ու ձևը: Այս կապակցությամբ Ա. Մաթևոսյանը գրում է. «խորանների մեջ համաբարբառների, խորանների երիզների վրա և լուսանցքներում՝ հիշատակագրու-

թյունների, լրացված թերթերի վրա բնագրային գրությունները, որ Մարգարեն կատարել է մանր և մեծ, ուղիղ և թեք գրչագրով, գեղեցիկ երկաթգրով և բոլորգրով, ցույց են տալիս, որ Մարգարե արեղան ոչ միայն վարպետ նկարիչ է, այլև վարժ և հմուտ գրիչ» (Մաթևոսյան, 1984, 131):

**89.** Վ. Մաթևոսյանի գիրքը թեև հրատարակվել է 1990-ին, բայց գրված է եղել ավելի վաղ, թերևս այդ պատճառով այնտեղ հաշվի չեն առնված 1980-ական թթ. Անիի Բեխենց վանքի և Մարգարեի մասին հայտնի դարձած նոր տվյալները, ինչպես նաև «Հաղբատի Ավետարանի» առանձին պատկերների վերլուծությանը վերաբերող նյութերը (տես մեր գրախոսությունը՝ «Գրական թերթ», 22. 02, 1991): Հեղինակը, ինչպես նշում է նախաբանում, հիմնականում ուշադրություն է դարձրել Մարգարեի մանրանկարների «բուն նկարչական (գունապլաստիկական-ծևաբանական) կողմերի քննությանը» և գիրքը գրել ձեռագրի «պատկերագրողման մեջ ընդգրկված թեմատիկ-սոցալոգիական ու սյուժետային նյութի, արծարծված գաղափարախոսական, բարոյահոգեբանական, էսթետիկական ըմբռումների և կիրառված գծերի, ձևերի, գույների աշխարհում ամփոփված Մարգարե նկարչի արտիստական անհատականությունը գտնելու-լուսաբանելու միտումով» (Մաթևոսյան Վ., 1990, 13, 19):

**90.** Դիմանկար բառն օգտագործում ենք որոշ վերապահությամբ, քանի որ նշված պատկերները բառիս բուն իմաստով դիմանկարչական ժանրի գործեր չեն: Գրականության մեջ դրանք հաճախ բնորոշվել են միայն որպես «աշխարհիկ ոգով ներթափանցված... մարդկային ֆիգուրներ» (Դրամբյան, Կորխմազյան, 1976, 66, Իզմայլովա, Այվազյան, 1962, 97): Սակայն դրանք դեկորատիվ ֆիգուրներ չեն, այլ իրական մարդկանց պատկերներ (Վ. Մ., 1984գ):

**91.** Հայ գրչության արվեստի պատմության մեջ, ձեռագրերի գրչության ու վաճառքի, կամ նկարագրողման գործի միջնորդի առաջին անգամ հանդիպում ենք Բեխենց վանքի ձեռագրերում: Պատահական չէ, որ այս ուշագրավ երևույթը կապվում է Անիի քաղաքային գրչատան հետ, որովհետև հենց այստեղ էր առավել չափով մեծացել գրքի պահանջարկը, որն իր հերթին վաճառքի պայմանների արդյունավետություն ու նորացում էր պահանջում: Միջնադարյան Հայաստանում ձեռագրերի առք ու վաճառքի գործում միջնորդների երևան գալն ինքնատիպ և ուշագրավ երևույթ է, որի ամենաբազմազան դրսևորումներին հանդիպում ենք նաև հետագա շրջանի ձեռագրերի հիշատակարաններում: Ահավասիկ մի քանի հատկանշական օրինակ: 1332թ. Ներսես Տարոնացի վարդապետը Գլաձորում մատյան ընդօրինակել տալու համար դիմում է Հովհաննես Մշեցու միջնորդությանը հիշատակարանում այդ մասին հայտնելով. «...զնացի... ի Գայլիձորն և **կալայ միջնորդ զՅոհաննես Մշեցին** զեղբայրն իմ հոգեւոր, **որ առնէր միջնորդութիւն ընդ իս և ընդ երկու գրագիր, ընդ Եփրեմ և ընդ Դավիթ**» (ԺԴ, 246): 1352թ. Սուրխաթում գրված Աստվածաշնչի հիշատակարանում գրիչ Ստեփանոսը նշում է իր և ստացող Քրիստոսատուրի միջնորդ Մելքիսեդեկին. «Յիշեսցիք ի Քրիստոս և զՄելքիսեդեկ միայնակյացն, **որ քազում աշխատութեամբ և քանի միջնորդ եղև բանիս և յաւժարեցոյց զՔրիստոսատուրն և զմեզ**» (ԺԴ, 298): Ինչպես տեսնում ենք սակարկող կողմերին «հոժարեցնելու», համաձայնության բերելու միջնորդի գործն այնքան էլ դյուրին չի եղել: Հիշատակարաններում միջնորդությունն արձանագրվում է նաև այլ ձևակերպումներով՝ «...զնա եղև պատճառ գրելո սուրբ գրոցս» (ԺԵ. Գ, 37), «...բարի պատճառ եղև զսուրբ տառիս...» (ԺԵ. Գ, 902), «...եղև առիթ առ ի ստացում մատենիս» (ԺԵ. Գ, 855), «առիթ և կամակից»

(ԺԳ, 173), «յորդորիչ և միջնորդ» (ԺԵ. Բ, 407) և այլն: Ձեռագրերի գրչության ու վաճառքի ժամանակ միջնորդների առկայության տասնյակ դեպքեր են հիշատակված Աղթամարի բազմարդյուն գրչատանը ստեղծված մատյանների հիշատակարաններում (ԺԴ, 260, 527, 554, ԺԵ. Ա, 306, 525, ԺԵ. Բ, 67, 163, 185, 199, 305, 407, ԺԵ. Գ, 285): Այս ամենի մասին հանգամանորեն տես Կ. Մ., 1990թ, 121-131:

**92. Վ. Խեչումյանը** Շերանիկին նույնացնում է 1222թ. Մաղասաբերդում արաբերենից կատարված մի երազահանի թարգմանությանը մասնակցած Շերանի հետ: Ստ. Մնացականյանն անեցուն կոչում է «երիտասարդ իշխան», իսկ Ա. Գևորգյանը՝ «ծկնորս» (Խեչումյան, 1978, 353, Մնացականյան, 1976, 105, Գևորգյան, 1973, պատկ. 11): Իհարկե Շերանիկը կարող էր ծուկ բերել բոլորովին էլ ձկնորս չլինելով: Կարծում ենք, նրան պարզապես պետք է կոչել Անիի քաղաքացի:

**93. Խորանները** կառուցվածքով, զարդապատկերներով նման են իրար, անգամ լուսանցազարդերը կրկնվում են համարյա նույնությամբ (մի բան, որ բնորոշ չէ խորանների մյուս երեք զույգերին): Բոլոր վեց սյուներն ունեն հյուսկեն խարիսխներ և խոյակներ, միջնամասում շրջանաձև զարդ: Գլխազարդերը ձևավորված են տարբեր չափերի, երբեմն բազմաշրջան վարդյակներով և կիսաշրջաններով: Գերակշռում են մուգ տոները:

Ստորին լուսանցազարդերը ներկայացնում են խորանահիմքի ելուստից վեր բարձրացող երկուական առանձին ծառեր, որոնց բները միահյուսվում են և կազմում մեկ սաղարթ: Այդ նույն ծառերի բներին, երկու կողմից կանգնած են երկարավիզ, կարմրակտուց թռչուններ, որոնք իրենց ճկուն պարանոցներով նրբորեն միահյուսվել են ծառերին: Արտաքին լուսանցքի վերին մասում, միջներիզի ելուստի վրա նկարված են, մի էջից մյուսը, իրար նայող սիրամարգեր, որոնք կորագծով վեր են բարձրացրել բազմերանգ, շքեղ պոչերը և կարծես երկու կողմից շրջանակում են խորանների գլխազարդերը:

**94. Խորանների սյուները** կանգնած են եռաստիճան խարիսխների վրա, ունեն դեկորատիվ փորագրություն հիշեցնող ականթազարդեր և ավարտվում են բարդ՝ «երկհարկ» խոյակներով: Գլխազարդերը ծածկված են միջին մեծության օղակաձև զարդերով, որոնք դասավորված են ուղղանկյուն շրջանակի երկայնքով և կենտրոնական կամարի շուրջը: Գլխազարդերի վերին մասում պատկերված են կաքավներ, որոնք կտցահարում են կենտրոնի ոճավորված նռնենու ճյուղերը:

Լուսանցազարդերից մեկը (էջ 12բ) բավական մեծ կանաչ ծառ է, որին, բնից մինչև սաղարթի կենտրոնը, գալարահյուս փաթաթված է մի վիշապ: Վերջինս սպառնում է ճյուղին կանգնած թռչնածագերին: Նշելի է, որ համաչափության պահպանման նկատառումով, նկարիչը ոչ միայն օձի ճկուն մարմինը, այլև ծառի բունն է ոլորած և պատկերել՝ ստեղծելով պարզ հյուսածո զարդի պատրանք: Նույն խորանի վերին լուսանցամասում պատկերված է մեկ ոտքի վրա կանգնած մարդագլուխ, թռչնամարմին հուշկապարիկ՝ գլխին սրածայր գլխարկ:

Հանդիպակաց էջի խորանի (էջ 13ա) միջներիզի ելուստի վրա նկարված է եռոտն աշտանակ՝ մի մեծ վառվող կերոն վրան: Ստորին լուսանցամասում պատկերված է թռչնածև կախիչ, որից բուռվառ է կախված:

**95. Երևի պատահական չէ**, որ երաժիշտ արվեստագետ անեցուն ներկայացնող հենց այս խորանի ներքևում, խորանահիմքի երիզի տակ է իր մասին առաջին հիշատակությունը գրել նկարիչ Մարգարեն. «Տեր Աստուած, ողորմես

Մարգարեին, գրչի եւ նկարչի...»: Արդյո՞ք հանձին երաժիշտ արվեստագետի Մարգարեն նկատի չի ունեցել իրեն...: Այս ենթադրությունն, իհարկե, անհավանական է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ համաձայն հիշատակարանի Մարգարեն արեղա էր: Բայց հետաքրքրական է, որ հայերեն նկարազարդ ձեռագրերում նվագարանով պատկերվում է Դավիթ թագավորը, իսկ կից մակագրվում է **«Դավիթ մարգարե»**: Մեր խորանում միայն հիշատակագրված է նկարչի անունը՝ **Մարգարե**: Դիտելի է նաև, որ Մարգարեն խորաններում պատկերելով իր համաքաղաքացի գործընկերներին՝ «Մուտք Երուսաղեմ» տերունական պատկեր է մուծել պատվիրատու Սահակ անեցու ընտանեկան դիմանկարը՝ ծնողների, քույրերի ու եղբայրների պատկերներով: Նման պայմաններում չպետք է բացառել, որ անեցի նկարիչը, թեկուզ խորհրդանշական իմաստով, կարող էր վերջին խորանի մարդկային պատկերում նկատի ունենալ հենց իրեն:

**96.** Մ. Ալպատովը Վերածննդի շրջանում նկարի կառուցվածքի ընդհանուր օրինաչափությունների մասին գրում է. «Նկարի ստորին հատվածը նրա ամենակայուն մասն է. դա նրա գետինն է, անկախ այն բանից՝ նկարված է այն, թե ոչ: Նկարի կողային մասերը կազմում են անցում դեպի եզրապատող գոտին և այդ պատճառով այստեղ սովորաբար դրվում են միջին խումբը շրջանակող ուղղահայաց մարմիններ: Վերջապես նկարի վերին մասը նրա երկինքն է, ամենաթեթև մասը և դրա համար նրան հաճախ տալիս էին զնդակերպ ձև: Նկարի ամենահիմնական մասը գտնվում է նրա կենտրոնում, որն ամենակարևոր առարկաների տեղն է: Ելնելով նկարի կառուցվածքի նման պատկերացումից, Վերածննդի վարպետները ջանում էին բուն պատկերը հնարավորին չափ համաձայնեցնել նրա հետ» (Ալպատով, 1940, 50): Դառնալով Մարգարեի ստեղծագործությանը՝ տեսնում ենք, որ «Մուտք Երուսաղեմ» մանրանկարի կառուցվածքի հիմքում ընկած են գրեթե նույն սկզբունքները:

**97.** Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարին նվիրված մեր հոդվածի կապակցությամբ (ՀՍՄ ԳԱ «Լրաբեր», 1982, թիվ 9) մեզ հասցեագրած նամակում Ս. Տեր-Ներսեսյանը գրում է. «Ձեր յօդուածի բերած կարևոր նորութիւնը Մուտք Երուսաղեմ նկարի բացատրութիւնն է, ուր համոզիչ կերպով ցոյց կու տաք, որ Յիսուսը դիմաւորողները Ռիմանոսը և իր կիցն են: Կը վարանիմ սակայն ընդունելու, որ ծառի վրայի երեք երեխաները Ռիմանոսի որդիքն են, և երկու աղջիկները՝ դուստրերը...» (20 դեկտեմբեր, 1983, Փարիզ):

**98.** Ս. Տեր-Ներսեսյանը մեզ ուղարկած նամակում (տե՛ս նախորդ ծանոթագրությունը) այս կապակցությամբ գրում է. «Ձեր տուած բացատրութիւններով հիմա հասկնալի է, թէ ինչու իբր տէրունական միակ նկար Մուտք Երուսաղեմը ընտրուած է: Ինչպէս գիտէք, բիւզանդական և կիլիկեան արուեստի մէջ երբ մի Աւետարանի համար Յիսուսի կեանքէն տեսարան մը կը նկարուի, այդ երբեք Մուտք Երուսաղեմը չըլլար»:

**99.** Ուսումնասիրելով Անիի արվարձանները՝ Թ. Թորամանյանը եկել է այն եզրակացության, որ պարիսպներից դուրս՝ հյուսիս արևելքում քաղաքը հասնում էր մինչև Հռոմոսի վանքը (Թորամանյան, 1942, 327-328): Անիի մայրաքաղաք դառնալուց հետո, Բագրատունյաց շրջանում, Հռոմոսը գտնվում էր արքունիքի ամնիջական հովանավորության տակ և մեծ հռչակ էր վայելում, պատահական չէ, որ աղբյուրներում

բազմիցս նրա անվանը կցվում են «հռչականուն», «մեծահռչակ», «տիեզերահռչակ» մակդիրները:

Հոռոմոսի ու Անիի փոխադարձ սերտ կապն այնքան ակնհայտ է, որ անգամ մեր դարասկզբին քաղաքի ավերակներն այցելած Լեոն գրում է. «Անի գնացողներին են խորհուրդ կտան նախ այցելել Հոռոմոսը: Սա նախադուռն է: Անին այստեղից է սկսվում...», ապա ավելացնում է. «Այստեղ միայն մի վանք չէ, այլ մի ամբողջ վանական աշխարհ, զանազան շինություններով, մատուռներով: Գեղեցկություն ≠ ահա այդ աշխարհի անունը մի բառով» (Լեո, 1963, 104-105):

**100.** Ավետարանիչները նկարված են զույգ սյուների վրա հանգչող զարդարուն կամարների տակ, դիմահայաց կանգնած դիրքով՝ ձախ ձեռքերին գրքեր: Ոճական առունով, ավետարանիչների դիրքով, ձեռքերի ու ոտքերի շարժումով ու հագուստներով, իրար նման են Ղուկասի և Հովհաննեսի պատկերները: Դրանք, ինչպես նկատում է Մ. Ճանաչյանը, ընդհանրություններ ունեն ժԱ դարի մեկ այլ ձեռագրի համապատասխան պատկերների հետ (Ճանաչյան, Տեր-Ներսեսյան, 1966, 49): Մարկոս ավետարանիչի պատկերն առանձնանում է մյուսներից, հավանաբար ավելացվել է հետագայում ԺԳ.: Սակայն նշելի է, որ երկրորդ նկարիչը, նկարագրողնաճը հարազատ մնալու ձգտումով, հորինվածքի տարրերով նախորդ պատկերներին միանգամայն համահնչուն լուծում է ընտրել, պարզապես նրա ոճն ու օգտագործած գունաշարն է փոքր-ինչ տարբեր:

**101.** Մ. Ճանաչյանն առարկում է այս կարծիքին՝ վկայակոչելով Վարդի և Հովհաննեսի օգտագործած գույների, ինչպես նաև Վարդ-Վարդան անունների տարբերությունները (Ճանաչյան, Տեր-Ներսեսյան, 1966, 51): Մեր կարծիքով նման առարկությունը հիմնավոր չէ, քանի որ, ինչպես երևում է «Հայկական մանրանկարչություն» ալբոմում արտատպված Հովհաննեսի և Վարդի մանրանկարներից, երկու նկարիչներն էլ թե ձևատեղծման սկզբունքներով, թե անխառն գույների առատ օգտագործմամբ, շատ մոտ են իրար: Յետևաբար, այստեղ էականը նկարելաեղանակի մերձությունն է և ոչ թե առանձին ձեռագրերում օգտագործված գույների ոչ մեծ տարբերությունը, որը բնական է: Այնպես որ, եթե անգամ Վարդը Վարդանը չէ, միևնույն է, նրա կատարած նկարագրողուններն առնչություններ ունեն Հովհաննեսի արվեստի հետ:

**102.** Առաջին խորանի (էջ 1ա) լուսանցքում բուսական մոտիվով երկու ոչ մեծ լուսանցագրողեր են պատկերված: Գլխազարդի վերևում նկարված են երկու թռչուն, որոնք կտցահարում են կենտրոնական զարդը: Խորանի գլխազարդը հարդարված է կամարածև կենտրոնի շուրջ հյուսված ղլորագարդերով: Խորքը ոսկեգօծ է:

Հաջորդ երկու խորանները (1բ-2ա բացվածք) հիմնականում միանման կառուցվածք ունեն: Գլխազարդերը կազմված են մեկական լայնաթռիչք կամարից, որի ներսը դատարկ է թողնված, իսկ վերին մասը զբաղեցնում են երկրաչափական և բուսական զարդածևերի բարդ հյուսվածքները: Գլխազարդերից վեր պատկերված են կենտրոնական զարդը կտցահարող թռչուններ: Խորաններից մեկի լուսանցքում (էջ 2ա) շղագրով գրված է եղել հետագայի հիշատակարան, որից այժմ ընթեռնելի է՝ «թվին ՌՃՁ (1657)»:

Վերջին խորանը (էջ 2բ) զգալիորեն տարբերվում է նախորդներից: Վերնամասում չկան թռչունների պատկերներ, իսկ գլխազարդի ողջ մակերեսը զբաղեցնում է Խոռասի և Ջմրուխտ Խաթունի հիշատակագրությունը: Այն գրված է կապույտ խորքի վրա, կարմրագիծ տողերի միջև, ոսկեգիր խոշոր տառերով: Գլխազարդը երեք կողմից շրջա-

նակված է քառաթև ծաղիկների շարքով՝ կապույտ, կանաչ, մանուշակագույն, կարմիր հերթականությամբ:

Խորանների համաբարբառները, ինչպես և Բագնայրի Ավետարանի էջերի ստորին լուսանցքներում եղած ցրվացանկերը գրված են ուղղագիծ երկաթագրով, տառերը երկու դեպքում էլ նույնաձև ու նույնաչափ են: Գրչության մնանությունը հատկապես ակնառու է դառնում, երբ հետևում ենք զծագրական համեմատաբար բարդ կառուցվածք ունեցող Ձ, Ծ, Թ, Խ, ինչպես և Դ, Մ տառերին, որոնք նույնական են: Գլխազարդում եղած, Խոռասի երկաթագիր հիշատակագրության տառերը ևս միանգամայն մնան են Իզմատիոսի գրին: Ավելացնենք նաև, որ հիշատակագրությունն ավարտվում է վերջակետով (զույգ կետ տողի վերևում), որը լայնորեն կիրառված է նաև Բագնայրի Ավետարանում (ժամանակի բոլոր գրիչները չէ, որ օգտագործում էին վերջակետը):

Մանրանկարչական համեմատության համար անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն Բագնայրի Ավետարանը, որի նկարազարդումն ամբողջական չէ, այլև Իզմատիոսի մյուս ստեղծագործությունները, մասնավորապես այն ձեռագրերը, որոնցում պահպանվել են խորանները: Մանրանկարչի ստեղծած խորաններն առկա են Մատենադարանի թիվ 6202, Նոր Զուղայի թիվ 36 ձեռագրերում և Չիկագոյի համալսարանում պահվող Ավետարանում: Դրանք որոշակի պատկերացում են տալիս Իզմատիոս նկարչի՝ խորաններ պատկերելու սկզբունքների մասին: Մանրանկարիչը նախընտրում է գլխազարդերը հարդարել բազմապիսի զարդաձևերով՝ վարդյակներով կամ կամարակապ կենտրոնի շուրջ հյուսված ոլորազարդերով: Նա չի հետևում որևէ անփոփոխ ձևի: Չարդանկարչական ավանդական մոտիվները հաճախ ստեղծագործաբար վերամշակում և հարստացնում է: Ուշագրավ է, որ **մեզ հայտնի բոլոր խորաններում Իզմատիոսը, որպես կանոն, մի սյան խարիսխն ու խոյակը նկարում է միևնույն ձևով ու չափով:** Նույն կերպ են պատկերված նաև մեզ հետաքրքրող չորս խորանների բոլոր 12 սյուները: Խորաններում և Բագնայրի Ավետարանի անվանաթերթերի կիսախորաններում առկա են պարուրվող եռատերևներով միանման զարդեր, որոնցում կապույտ գծերը, մեծ մասամբ, երկտակված են սպիտակ նուրբ գծիկներով:

Ուշադրության է արժանի Խոռասի հիշատակագրությունը պարունակող գլխազարդի՝ քառաթև ծաղիկների շարքից բաղկացած շրջանակ երիզը: Բագնայրի Ավետարանի Մարկոսի ավետարանի անվանաթերթի (էջ 29ա) կիսախորանը չորս կողմից շրջանակված է ճիշտ նույնպիսի քառաթև ծաղիկների շարքով (նկ. 32, 33), միայն գույները՝ կապույտ, կանաչ, կարմիր հերթականությամբ: Շրջանակի լայնքը երկու դեպքում էլ նույնն է՝ 1,1սմ: Խոռասի հիշատակագրությունը միակ դեպքը չէ, երբ Իզմատիոսը խոշորատառ հիշատակագրություն է գրում գլխազարդի կամ կիսախորանի ողջ մակերեսի վրա: Նոր Իուղայի ձեռագրում, Մատթեոսի ավետարանի անվանաթերթի կիսախորանի մեջ, նա երկաթագիր երեք տողով գրել է. «Տէր Աստուած ողորմեա //ստացողի սորա// և Իզմատիոս գրչի» (Տեր-Ավետիսյան, 1970, 206): Բնորոշ է, որ այստեղ ևս հիշատակագրություն պարունակող կիսախորանի շրջանակը կազմված է քառաթև ծաղիկների շարքից:

Խորանների և Բագնայրի Ավետարանի նկարազարդման համար օգտագործված գույները համեմատելուց հետո պարզ դարձավ, որ երկուսում էլ կիրառված է բացարձակապես նույն գունաշարը: Բագնայրի Ավետարանի թերթերի և խորանների մագաղաթների ընդհանուր չափերը տարբեր են, քանի որ վերջիններս եզրերից կտրտված են (կարի կողմից, բավական խորքից): Ըստ չափերի հնարավոր է համադրել նկարադաշտը և մի

քանի այլ մանրամասներ: Ավետարանի բնագրի սյունակները և տողերը մագաղաթի վրա դրոշմված են ճնշմամբ: Դրանց ուրվագիծը պարզորոշ երևում է մինչև օրս: Սյունակի լայնքն է 7,6սմ: Իսկ եռասյուն խորաններում սյունից սյուն ընկած հատվածը կազմում է ճիշտ 7,6սմ:

Ավետարանի անվանաթերթերը և խորանները նույնպես ակնհայտորեն մոտ են չափերով:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ հիշյալ խորանները սկզբնապես կազմել են Բագնայրի Ավետարանի մի մասը, հետևաբար նկարվել են Իզմատիոսի ձեռքով, 1232թ., Յոռնոսի վանքում: Խորանները ձեռագրից հանվել և մեկ այլ մատյանի պահպանակների են վերածվել հավանաբար ժ. դ. վերջերին (Կ. Ս., 1985ա, 96 -97):

**103.** Սարկոսի ավետարանի անվանաթերթի կիսախորանը զարդարված է չորս փոքր և մեկ մեծ, կենտրոնական վարդակով, որը մեջտեղում ունի ութաթև աստղ: Կապույտ խորքի, ինչպես և կարմիրի, կանաչի և ոսկու համադրությամբ նկարիչը հասել է նրբափայլու զարդերի ներդաշնակ ամբողջության:

Ղուկասի ավետարանի անվանաթերթի կիսախորանի կենտրոնում պատկերված է հավասար կողերով խոշոր եռանկյունի, որի ոսկե խորքի վրա տեղաբաշխված են բուսական մոտիվներով արված զարդեր: Առանձնակի թեթևությամբ է կատարված այս անվանաթերթի լուսանցազարդը, որը սկիզբ առնելով բուսական հիմքից՝ վեր է ձգվում սլացիկ ցողունով և ավարտվում թևերին տերևների ու փոքր պտուղների պատկերներ ունեցող խաչով: Հաջորդ անվանաթերթի զարդերը կազմված են միմյանց հյուսված շրջանակներից, իսկ լուսանցազարդը, ըստ Ա. Մնացականյանի, «առավել խիստ ոճավորված կենաց ծառի համապատասխան օրինակներից է» (Մնացականյան, 1955, 183-184):

**104.** Հիշատակարանում ձեռագրի նվիրատվության մասին խոռասը գրում է. «Աւանդեցի զսա ի հրեշտակաբնակ ուխտն Խծկանս, որ Տեկորայ վանք կոչի, ի Սուրբ Սարգիս եւ Սուրբ Գրիգոր եւ Սուրբ Յակոբ...» (ԺԳ, 194): Իսկ արձանագրության մեջ ասվում է. «Թուխ ՈՁԹ (1240) ...ես Բռնաւորս... եւ ամուսին իմ Տղատիկին... միաբանեցաք սուրբ ուխտիս Խծկանից եւ ընծայեցաք ի սմա զմեր զանձագին այգին, որ ի Սրէն... եւ Աւետարան մեծագին» (Տեղեկագիր, 1978, 108): Ն. Սարգիսյանի կողմից արձանագրության վերջին բառերը ճիշտ չեն հասկացվել (Սարգիսյան, 1864, 211, հմմտ. Ալիշան, 1881, 129):

**105.** «...Գրեցաւ սայ ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում ամի առաւ մայրաքաղաքն Անի, արենգուփն կորուստն անթիւ հոգւոց: Ո՞ր բերան կամ լեզու կարէ պատմել զանողորմիցն ողորմնն ի յանաւրեն թաթարէն, ի թուխ ՈՁԵ (1236): ...Ձաստուածասաստ բարկութիւնն, որ եկն ի վերայ ամենայն աշխարհաց Հայոց եւ Վրաց եւ Տաճկաց ի մարդադէմ զազանաց զտաթարէն, պատմեսցուք զդառնութիւն եւ զչարչարանս զժամանակիս. քանզի ոչ բաւեն միտք եւ լեզու զարիւնհեղութիւն եւ կոտորումն ամենեցուն... Անթիւ էր աւերումն քաղաքաց եւ զաւառաց մինչեւ ի մերս սահմանս, որ էր թուականիս ՈՁԵ (1236)» (ԺԳ, 193- 194) :

**106.** Տերունական և ավետարանիչների բոլոր մանրանկարների վերին մասում Իզմատիոսը խոշոր երկաթագրով, կարմիր ներկով գրել է պատկերի անվանումը: Ստացողների պատկերից վեր սև թանաքով և բոլորգրով գրված է. «Կարապետն և զեսուականն ստացող աւետարանիս յիշեսջիք»: Վերջիններս ձեռագրի 14 էջում թողած հիշատակարանի համաձայն մատյանը ձեռք են բերել 1321թ.: Հենց այդ ժամանակ էլ,



պետք է կարծել, նրանք ջնջել են մանրանկարից վեր դրված Բռնավորի և Տղատիկնոջ անունները և իրենցը գրել: Այնուամենայնիվ, այս կեղծիքը թյուրիմացության պատճառ է դարձել, և Նոր Ջուղայի ձեռագրացուցակը կազմող Ս. Տեր-Ավետիսյանը ձեռագրի մախնական ստացողներ է համարել Կարապետին ու նրա կնոջը (Տեր-Ավետիսյան, 1970, 205-206): Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, Բռնավորը մատյանն ստացել է Կարապետից շուրջ 90 տարի առաջ՝ 1236թ.:

**107.** Գոռնոսի 1336թ. արձանագրությունը, ուր խոսվում է Ջաքարյան Վահրամ աթաբեկի կողմից՝ վանքից խլված ունեցվածքի վերականգնման մասին, սկսվում է հետևյալ կերպ. «...Ես Վահրամ աթապակ պարոնաց պատրոն, որդի Իւանի, թոռն մեծին Շահնշայի որդի ամիրսպասալար Ջաքարիայի...» և ավարտվում է՝ «սպասաւորք Սուրբ Յովանիսի հատուցին ամէն ամի Ժ աւր պատարագ՝ :Ե: ինձ, :Ե: իմ նախնեացն. **ի տէրութեան Վարիամա...** յառաջնորդութեան հաւր Ստեփանոսի» (Սարգիսյան, 1864, 158-159): Կարծում ենք, որ այստեղ հիշատակվում են երկու տարբեր Վահրամ (Վարիամ), որոնցից առաջինը Ջաքարյան Վահրամ աթաբեկն է, իսկ երկրորդը՝ Գոռնոսի շրջանի անմիջական տերը, կամ վանքի հովանավորը: Գոռնոսի մեկ այլ, անթվական արձանագրության մեջ, օրինակ, հանդիպում ենք «ի հայրապետութեան տէր Սարգսի եւ ի տէրութեան վանացս Գրիգորոյ, Սմբատայ, Վարիամայ...» (Սարգիսյան, 1864, 159): Կարելի է ենթադրել, որ 1336թ. արձանագրության երկրորդ Վահրամը նույն վանահայր Ստեփանոսի հետ 1347թ. կազմի արձանագրության մեջ հիշված Մանկասարի ու Ասլան խաթունի որդին է՝ «[ի տէրութեան վանացս Վահր]ամայ որդոյ Մանկասարին եւ Ասլան խաթունին եւ Ջաջա...»: Գիրավի, արձանագրության սկզբում հիշատակվող կարևոր անձնավորություն պետք է եղած լիներ, որպեսզի նվիրատու Ջաջը նշեր նաև նրա ծնողներին, այն դեպքում, երբ անգամ իր ծնողներին չի հիշատակում:

**10 8.** Լեոն Գոռնոսի արձանագրություններին ծանոթանալուց հետո գրում է. «Գոռնոսի կյանքը ներկայացնող արձանագրությունները ընդհատվում են 1336 թվականին... **այնուհետև սև անհայտություն է գալիս հռչակավոր վանքի վրա**, որ շատ հասկանալի կլինի, եթե չնոռանանք, որ շրջականերն էլ քարուքանդ, ավերակ երկիր էին դարձել: **Երեք հարյուր հիսուն տարուց հետո մի արձանագրություն է երևում, որ կարող է այդ երկար ժամանակամիջոցի պատմությունը համարվել**» (Լեոն, 1963, 122): Իր կարծիքի ձևակերպման մեջ Թ. Թորամանյանն ավելի հեռատես է. «1336 թվականին հետո **349 տարի վանքին վիճակը անստույգ** է, եթե բոլորովին ամայացած չէր, գոնե անտերունջ վիճակի մատնված էր մինչև 1685 թվականը, երբ Դանիել վարդապետ նորոգեց և վերստին շենցուցեց էր» (Թորամանյան, 1942, 302): Համապատասխան վիճաբերի բացակայության պատճառով, նշված երեք ու կես դարը վանքի պատմության մեջ անհայտության ժամանակաշրջան է համարում նաև Ժ. Ս. Թիերին (Թիերի, 1980, 5) :

**109.** Գոռնոս-Անի ճանապարհին գտնվող կամարին անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ (տես Կ. Մ., 1982, 143-147): Ղոշավանքի և Թիֆլիսի Փաշա վանքի անունների միջև փորձել է զուգահեռ գտնել Լ. Մելիքսեթ Բեկը՝ այն կապելով ԺԴ դարի կեսերի Անիի գաղթականության հետ: Պ. Մուրադյանն այս ենթադրությունն իրավացիորեն մերժում է (Մուրադյան, 1988, 50-52): Մեր կողմից ավելացնենք, որ Ղոշավանք անունը ԺԴ դարի Անիում ընդհանրապես չէր կարող գոյություն ունենալ: Գոռնոսն այս անվամբ հիշվում է դրանից առնվազն երեք ու կես դար հետո:

**110.** Այս շրջանում Հռոմոսի վանքը ենթարկվել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանին, ընդգրկվել Կարսի թեմի կազմում: Ուշագրավ է, որ 1804-1807թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին Հռոմոսում են ապաստանել Էջմիածնի վանքի միաբանները (Մխիթարյանց, 1870, 18-19): Աղբյուրներում հիշվում են հիշյալ ժամանակաշրջանի վանահայրեր Ստեփանոս Եպիսկոպոս Չախալյանը (1825), Պետրոս վարդապետը (1851), նորոգման աշխատանքներ կատարած Գրիգորիս վարդապետը (1868-1871): 1852-ին Հռոմոսում նորոգում է կատարել նաև Կարսի առաջնորդ Վարդան վարդապետ Օձնեցին (Եփրիկյան, 1907, 224-225, Մխիթարյանց, 1870, 53): Այս տարիներին Հռոմոսում են հյուրընկալվել Անիի ավերակներն այցելած բազմաթիվ ճանապարհորդներ ու գիտնականներ, քանի որ այն քաղաքին ամենից մոտ գտնվող բնակավայրն էր (Հակոբյան, 1934, 784-750): Վանքին կից գոյացել էր մի քանի տներով փոքրիկ գյուղ:

**111.** Արձանագրության մեջ մասնավորապես ասվում է. «...թող բացի թանգայից և արդար մաքսից ուրիշ ոչինչ չառնեն և թող ոչ ոքից դալանի, նեմարի և թարհի ու այլ պատրվակով ոչինչ չպահանջեն. որովհետև սրանից առաջ Անի քաղաքում... դալանի, նեմարի ապօրինի հատկացումների ու թարհի պատրվակով անօրինական տուրք էին առնում և բռնություն էին գործադրում. և երկիրը սկսեց անայանալ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղավ, և քաղաքի ու գավառի տանուտերերը դալանի ու դռնագրի պատճառով թողեցին իրենց անշարժ ու շարժական գույքը, տունն ու տեղը թողեցին հեռացան» (Բարտուղ, 1911, 6-7, Մուրադյան, 1977, 58-59):

**112.** Ինչպես նշում է դրամագետ Խ. Մուշեղյանը, «1300-1301թթ. մինչև 1377-1378թթ., ավելի քան 77 տարի անընդմեջ, Անին արծաթե դրամներ է թողարկել ոչ միայն նրան տիրած Հուլաղույան, այլև վերջիններիս հաջորդած Ջելայիրյան խաների անուններով: Արծաթե դրամներից բացի, որոնք թողարկվում էին մասսայաբար, Անիում երբեմն թողարկվում էին նաև ոսկե ու պղնձե դրամներ...: Անի քաղաքի վերջին դրամագիտական վկայությունը ժեղ. դրվագված ոսկե դրամն է... այդ դրամը վերաբերում է 1407-1420թթ.» (Մուշեղյան, 1988, 79):

**113.** Ձեռագիրը պատկանել է թիֆլիսաբնակ Ա. Էֆենճյանին: Հիշատակարանը պահպանվել է Մ. Տեր-Մովսիսյանի անտիպ ցուցակում և Ղ. Փիրղալեմյանի մոտ (ՄՄ, թիվ 4515, էջ 69): Վերջինում այն ավելի ամբողջական է:

Սույն հիշատակարանի վրա հիմնվելով Հ. Մանանդյանը գրում է. «Աղբյուրների մեջ հիշատակված է ամիրսպասալար Ջաքարեի որդի Շահնշահի տան հեջուրը... Ջաքարեի «Պահլավունին» (Մանանդյան, 1977, 1982): Բայց վերջինս ոչ թե Ջաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ Ա-ի, այլ սրա թոռան Շահնշահ Բ-ի (մահացել է 1320թ.) ժամանակ է ապրել, քանի որ հիշատակվում է 1313թ.:

**114.** Հովհաննես Երզնկացի Պլուզի կյանքին ու գործին նվիրված հանգամանակից ուսումնասիրության մեջ Ա. Սրապյանը գրում է. «Հովհաննես Պլուզ, Հովհաննես Ծործորեցի և Կիրակոս Երզնկացու եղբորորդի ու գործընկեր Հովհաննեսներից բացի, համբավավոր էր և մի չորրորդ Հովհաննես Երզնկացի րաբունապետ, որի հետ 1340-1350-ական թվականներին գործուն գիտական կապերի մեջ էր Կիրակոս Երզնկացին և որի խնդրանքով ու պատվերով մեկնում էր Եվագր Պոնտացու գործերը: Այս Հովհաննեսի անձը, կյանքն ու գործը մինչև այժմ մնում են չուսումնասիրված» (Սրապյան, 1993, 214): Դեռևս այս վերջին Հովհաննեսն է, մեր կարծիքով, եղել Անիում:

Ինչ վերաբերում է նրա՝ Անիից տարած աղյուսակներին, ապա այդ մասին ուշագրավ հիշատակարան է պահպանվել Մատենադարանի թիվ 1973 ձեռագրում: Այդ մասին Ա. Աբրահամյանը գրում է. «Ուշադրության արժանի է, որ տոմարական որոշ աղյուսակներ, ըստ հիշատակարանում պահպանված տեղեկության, բերվել են Անիից. «Այս բոլորքս են Դժ.ան, յԱնդրեասեն են հանած. զայսոքիկք յԱնոյ մեզ Արմաղան եբեր մեր սուրբ վարդապետն, ճրագն ճշմարիտ և արեգակն լուսաւորիչ խաւարեալ ոգւոց մերոց Յովհաննէս» (Աբրահամյան, 1956, 91): Ա. Աբրահամյանը մեջբերման մեջ **արմաղանը** համարել է հատուկ անուն և կարծել, թե աղյուսակները կարծեցյալ Արմաղանն է Անիից բերել Երզնկա՝ Յովհաննէս Երզնկացուն (Աբրահամյան, 1956, 91): Մինչդեռ բնագրում հիշատակագիրը պարզորոշ նշում է, որ հենց Յովհաննէս սուրբ վարդապետն է Անիից իրենց նվեր (արմաղան) բերել այդ աղյուսակները՝ «զայսոքիկք յԱնոյ մեզ արմաղան եբեր մեր սուրբ վարդապետն... Յովհաննէս»:

Նույն մատյանի կապակցությամբ (գրիչ՝ Գրիգոր՝ աշակերտ Յովհ. Երզնկացու, ստացող՝ Աբրահամ) Ա. Աբրահամյանը մեկ այլ ենթադրություն է անում, թե Յովհաննէս Երզնկացին (չի ճշտում, թե որ Յովհաննէսին նկատի ունի, բայց, ինչպես երևում է, նա գիտի միայն մեկ Յովհաննէս Երզնկացու (Աբրահամյան, 1956, 91, 109, 115) ) մասնակցել է ձեռագրի գրչությանը և թողել փոքր հիշատակարան՝ «Աղաչեմ զքեզ Տէր, յիշեա զիս, զմեղաւոր գրչիկս զՅովհաննէս» (Աբրահամյան, 1956, 91): Թեև այս հիշատակագրի անունը Յովհաննէս է, բայց մեր կարծիքով նա չէր կարող լինել Գրիգորի ուսուցիչ և նրա կողմից այդքան շայլորեն մեծարված վարդապետը, այլ պարզապես գրչի օգնականն էր՝ «գրչիկ», ինչպես ինքն է իրեն կոչում:

Ինչևէ, ուշագրավն այստեղ այն է, որ ԺԴ դարի կեսերին Անիում դեռևս պահվում էին արժեքավոր բնագրեր, որոնք տարվելով այլ վայրեր՝ ընդօրինակության նյութ էին դառնում:

**115.** Բերում ենք հիշատակարանի առավել կարևոր հատվածները. «Արդ, նորոգեցաւ հրաշափառ Աւետարան այս հրամանաւ և արդեամբք... պարոն **Ասիլին** և ամենաաւրինեալ անուսնոյ իւրոյ **Ըռուզ Խաթունին**... յայս դըժընդակ և յանբարի ժամանակիս, որ իբրև ըզնաւաբեկ կամք սրտաբեկ թէ զինչ լինելոց ենք: Որ զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին **զաւառն քաղաքին Անոյ**: Եւ զաղետս և զոր ինչ արարին ի վանս և ի զեաւոս և ի զաւառնիս ո՞ր բերան պատմէ կամ ո՞ր լեզու խօսի, քանզի անխնայապէս զործեցին զիւրեանց չարիս ի հաւատացեալս Սուրբ Երրորդութեանն: Սատակեցին առաջի ծնողաց զտղայսն և առաջի տղայոց զծնողսն: Եւ զորս ըմբռնեալ տանէին գերիս՝ բանդից և տանջանաց մատնեալ: ...Որոց զլուխ աթապակ և մեծ սպասալար **Շահնշահ**, որ հազիւ կարաց զերծանիլ ի ձեռաց թշնամեացն: Վասն որոյ Տէր Աստուած արասցէ զնայ ընդ յերկայն աւուրս, զի վերստին կանգնեսցէ զանկեալ ազգս քրիստոնեից և լուսաւորեսցէ զխաւարեալ եկեղեցիքս»:

Արդ, յայս դառնութեան ժամանակիս... **Ասիլս** և բարի լծակիցն իւր **Ըռուզ Խաթունն** բարեպաշտութեամբ իւրեանցն լցին **զՏուն Շիրակա** և **մայրաքաղաքին Անոյ** շինուածօք և արդար դատաստանօք և տրօք տնանկաց և այլ **ամենայն ընծախք զվանս և զեկեղեցիս զարդարեցին որպէս օրէն է աստուածասէր քրիստոնէից**: Մանաւանդ ևս առաւել ստացան զհրաշափառ և զսուրբ Աւետարանս... Եւ ուրախ արասցէ տէր Աստուած զստացող սորայ զպարոն **Ասիլն**, զի բազում վիշտ և տրտմութիւնս կրեաց վասն աւերման մայրաքաղաքին **Անոյ**: Քանզի իբրև զտղայս ծնողաբար սնուցեալ էր զնոսայ և հաւատարիմ կացեալ ի

վերայ տանն պատրոն աթապակ **Շահնշահին** և ամենայն կազմության տան իշխանութեան նորայ...

Արդ, մեք՝... **Ասիլս** և ամուսին իմ **Ըռուզ Խաթունս**... ստացաք զսուրբ Աւետարանս և տուաք զսայ ի մեր սեփական հայրենի եկեղեցին՝ ի **յԱնոյ Սուրբ Առաքեալքն**՝ յիշատակ մեզ և ծնողաց մերոց և զաւակաց մերոց **Բեսուճիմին, Խութլուպուղին, Թայիկին, Էսլունին** և այլ ամենայն արեան մերձակայից՝ կենդանեաց և մեջեցելոց:

Գրեցաւ յիշատակարանս ի թվ. ՊԶ (1357), ձեռամբ անիմաստ գրչի և ստոյք մեղաւորին Ներսէս փանաքի քարտուղարի, յիշելի աղաչեմ» (ՄՄ, թիվ 6764, էջ 264ա-265ա, Կ. Մ., 1985, 112-113):

**116.** Անիում հայտնաբերված շինարարական բնույթի վերջին արձանագրությունը գրվել է 1342թ. Ս. Փրկչի եկեղեցու պատին: Այստեղ ասվում է, որ աթաբեկ Վահրամ Զաքարյանը հրամայել է նորոգել եկեղեցու զմբեթը, իսկ գործն իրականացրել է Գրիգորի որդի Ասիլը (Պիվան Ա, 44): Իսկ Բազմայրի Ավետարանի ԺԴ դ. կեսերին գրված նորոգման հիշատակարանում Անիի քաղաքի Պարոնը նշում է իր հորը՝ Գրիգոր Խուցեսին, «որ էր առաջնորդ և հիմն քաղաքիս», և վերջինիս պաշտոնը ժառանգած եղբորը՝ Ասիլին. «Յիշեցէք և զկենդանիս Պարոնին՝ զբարեպաշտ և զաստուածատէր զեղբայրն զԱսիլն, որ է առաջնորդ և հիմն քաղաքիս Անոյ, իրաւարար և արդարադատ ամենայն քաղաքին...» (Յովսեփյան, 1951, 891-893): Հիշատակարանում նշվում են նաև Ասիլի կինը՝ Ըռուզ Խաթունն, ու ավագ որդին՝ Բեսուջիմը: Իսկ Ասիլի 1357թ. հիշատակարանը (տե՛ս նախորդ ծանոթագրությունը) ավելի հանգամանակից տեղեկություններ է պարունակում Գրիգոր Խուցեսի որդի Ասիլի, նրա գրված դիրքի ու կատարած գործերի մասին: Ասիլի օրինակը պարզորոշ կերպով ցույց է տալիս, թե ինչպէս են վիճազրական և մատենազրական մասնավորապէս հիշատակարանների նյութերը, համադրվելով ու իրար լրացնելով, անհրաժեշտ աղբյուր դառնում Անիի նշված ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար:

**117.** Ինչ վերաբերում է նկարագարդման տեղին և ծաղկողին, ապա նկատենք, որ 1423թ. Հովհաննես Ոսկեփորիկի՝ Սանահինում գրած Շարակնոցի հիշատակարանում նշվում է մի «Մելքիսեթեկ ծաղկող»: Սակայն հիշյալ Շարակնոցը նկարագարդել է Հովհաննես Սանահնեցին, իսկ Մելքիսեղեկը նրան միայն օգնել է, ուստի դժվար է այս և Վիեննայի թիվ 55 ձեռագրի նկարագարդման համեմատությամբ որոշել երկու Մելքիսեղեկների նույնության հարցը: Հնարավոր է, որ Մելքիսեղեկն աշխատում էր հենց Բջնիում:

**118.** Տերունական պատկերներով էջի վերին մասում ներկայացված է «Հրեշտակների հայտնությունը յուղաբեր կանանց», իսկ ներքևում՝ «Դժոխքի ավերումը» հորինվածքը: Առաջին տեսարանում, յուղաբեր կանանց մոտ պատկերելով մի վեղարավոր երիտասարդի, Հովհաննես Սանահնեցին հավանորեն նկատի է ունեցել իրեն: Դրա օգտին է խոսում վեղարավորի դիմագծերի անհատականացված լինելը, ինչպէս և նկարչի թողած կարճ հիշատակարանը պատկերի տակ (Կ. Մ., 1984ե, 91-93):

**KAREN MATEVOSSIAN**

**A N I**

**(Religious-ecclesiastical life and manuscriptural inheritance)**

**SUMMARY**

**T**his work is dedicated to the history of Armenian medieval famous capital Ani and till now least studied religious ecclesiastical inheritance and remarkable manuscripts. For the first time this work presents the role of Ani in the history of the Armenian Church. Separate chapters are devoted to the Armenian catholicosate (patriarchate) in the epoch of Ani, the episcopacy, clergy, churches and religious minorities. The work is also dedicated to Ani's one of the religious-cultural important aspects, i.e. the inheritance of the manuscripts created in the city's libraries, their scribes and miniaturists.

In the history of Armenian Apostolic Church the medieval Armenian capital Ani has played a significant role as patriarchal and episcopal seat, center of religious-ecclesiastical life and quarter for national-ecclesiastical councils. In the history of Armenia Ani had the most churches and clergy in number. Nearby Ani many monasteries like Arghina, Horomos, Baghnairi, Ardjo Aridj and Khetzgonk had flourished by becoming religious and cultural advanced centers. In the city, as well as in the neighboring monasteries, the Armenian Christian culture sprouted; there were functioning schools, chronicled scrolls were created by religious historians and various manuscripts were copied by manuscriptologists. Besides the dominant Armenian church community, in the eleventh century, came forth religious minorities. Generally, Ani lived a unique and interesting religious-ecclesiastical life; however, those historians who studied the historical aspects of Ani have touched upon those aspects very slightly. Presumably, one of the reasons that historians did not pay adequate attention to the religious life of Ani was that, at the end of preceding century, well known philologist N. Marr and other historians developed scientific research and were interested more in architectural-cultural remains rather than religious-ecclesiastical inheritance. Parallel to the political, social-economical history of Ani, the development of the city, the architecture, the stone-carving and crafts have been studied as well. Those scholars, who were more interested in Ani's cultural inheritance, had the target of their studies all the aspects of Ani's secular professions. The legacy of the ecclesiastical life and religious culture of Ani was overshadowed; thus, the

present work is called to illumine the shadowy treasures of the city. The work consists of introduction and two parts.

In the introduction it is presented the argumentation for studying and the aim for composing this work. Meanwhile, through appropriate sources, aforementioned study introduces the important religious role that Ani played after being declared as the capital of the history of Armenia (961), and particularly as the Mother See of the Armenian catholicosate (992). Evidently, Ani was not only political but also religious capital. In order to emphasize the religious importance of the city, at the turn of the tenth century, Catholicos Sarkis I Sevantsi removed some of the relics of Sts. Hripsimants from the Holy See of Vagharshapat to Ani aiming to build a church upon the remains of the Saints. Traditionally, the founder of the church of the Nerkin Berd at the oldest part of the city is known to be St. Gregory the Illuminator. Seemingly, above mentioned and other factors had in mind twelfth century eminent Catholicos St. Nerses Shnorhali when he made a connection between the name Ani, which is comprised of three letters, and the mystery of the Holy Trinity.

